ՓՈՐՁ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ԵՌԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ.

№ I.

ՏՓԽԻՍ

1876.

ЛИТ. ТОМСОНА.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երեսս

I. ԴՕՆ ԿԱՐԼՈՍ. գործ Շիլլերի—Թարգմ. Գ. Բարխուդարեանց . . 1
II. ԿԱՐԱՊԵՏ ԱՐՔԵՊԻՍԿՊՈՍ. կենսագրութիւն. Ց. Գեղամեանց. 162
III. ՋԻՈՒԶԷՊՊԷ ՄԱԶԶԻՆԻ. գործ Լ. Ասսինգ. 207
IV. ՑՈՑՍ. բանաստեղծութիւն, Գ. Բարխուդարեանց 227
V. ՖՐԱՆԿԼԻՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ. հրապարակախօսութիւն Է. Լաբուլէի. 229
VI. ՍԿԶԲՈՒՆՔ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ըստ Հերբարտի. Ս. Մանդինեանց 248
VII. ՊԱՐՍԿԱՍՏԱՆ. Մէլիքզադէ 279
VIII. ԼԱ ԲԱԲԻՍՏԱ. վէպ Պաուլ Հէյզէի Թարգ. Գ. Բարխուդարեանց 310
IX. ԻՄ ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ՑԻՇՈՂՈՒԹԻՒՆԻՑ. Գ. Չմշկեանց . . . 331
X. ՎԱՐԴՈՒՀԻ (հեղինակութիւն). Տ. Սրբուհի Երիցեանց 352
XI. ԵՐԿՈՒ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ ՄԻԻԼԼԷՐԻՑ ԵՒ ՈՒԼԱՆԴԻՑ Թարգմ. Գ. Բարխուդարեանց 364
XII. ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՀԱՑՈՑ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ ԵՒ ՆՈՑԱ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ. պատմական տեսութիւն. Ա. Երիցեանց . . . 367
XIII. ԵՒՐՈՊԱՑՈՑ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԻԼԻԿԻԱՑԻ ՀԵՏ. Ս. Պալասանեանց 394

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

XIV. Հայոց Ազգը և իւր Եկեղեցին 414
XV. Քանի մի առաջարկութիւն 422
XVI. Նամակ Ախալցխայից 426

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

XVII. Տաճկաստանի ապստամբութիւնները 446
XVIII. Նուբար Փաշա և Եգիպտոս. գործ Շլէզինգէրի 460

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

XIX. M. Миансаровъ. Bibliographia Caucasica et Transcaucasica. . 470
XX. Հոֆֆման. Յակոբ Էրլիխ. Թարգմ. Քալանթարեանի. 482
XXI. Ցայտարարութիւններ 484

ՄԱՐՏԻՐՈՍԸ ԱԽՆԱԶԱՐՈՎԸ
Մ. Յ. ՀԱԽՆԱԶԱՐԵԱՆՑ
Գ. ԹԻՖԼԻՍԸ.

ԴՈՆ ԿԱՐԼՈՍ

ՍՊԱՆԻԱՅԻ ԹԱԳԱԺԱՌԱՆԳԸ

ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

ՃԻԼԼԷՐԻ

ԱՆՁԻՆՔ

ՓԻԼԻՊՊՈՍ Բ. *Սպանիայի թագաւորը.*
ԷԼԻՍԱԲԷԹ ՎԱԼՈՒԱ, *նորա ամուսինը.*
ԴՈՆ ԿԱՐԼՈՍ, *թագաժառանգ*
ԱԼԷՔՍԱՆԴՐ ՖԱՐՆԷԶԷ, *Պարմայի իշխանը, թագաւորի քրոջ որդին.*
ԻՆՖԱՆՏԻՆԱ ԿԼԱՐԱ ԵՒԳԷՆԻԱ, *երեք տարեկան երեխայ.*
ԴՔՍՈՒՀԻ ՕԼԻՎԱՐԷՑ, *մեծ սենեկապետուհի.*
ՄԱՐԿԻԶՈՒՀԻ ՄՈՆԴԷԿԱՐ ..... } *Թագուհու*
ԻՇԽԱՆՈՒՀԻ ԷԲՕԼԻ,..... } *հաժիշտները.*
ԿՈՄՍՈՒՀԻ ՖՈՒԷՆՏԷՍ, ... }
ՄԱՐԿԻԶ ՊՈԶԱ, *Մալտացի ասպետ* ..... } *Սպանիական*
ԴՈՒՔՍ ԱԼԲԱ. ..... } *իշխաններ*
ԿՈՄՍ ԼԷՐՄԱ, *Թիկնապահների մեծը,* ..... } *(գրանդեր)*
ԴՈՒՔՍ ՖԷՐԻԱ, *ասպետ Ոսկէ-գեղման* ..... }
ԴՈՒՔՍ ՄԷԴԻՆԱ ՍԻԴՕՆԻԱ, *ծովապետ* ..... }
ԴՕՆ ԲԱՅՄՈՆԴ ՏԱՔՍԻՍ, *սուրհանդակապետ* ..... }
ԴՕՄԻՆԳՕ, *թագաւորի խոստովանահայրը*
ՏԷՐՈՒԹԵԱՆ ՄԵԾ ԻՆԿՈՒԻԶԻՏՕՐԸ.
ՎԱՆԱՀԱՅՐ *մի կարթէզիական վանքի.*
ՄԱՆԿԱՒԻԿ *թագուհու*
ԴՕՆ ԼՈՒԴՕՎԻԿ ՄԵՐԿԱԴՕ, *թագուհու բժիշկը.*
Շատ տիկիններ, իշխաններ, մանկաւիկներ, օֆիցերներ թիկնապահներ և զանազան անխօս անձինք.

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

թագաւորական պարտէզը արանչուէցում

ԱՌԱՋԻՆ ԵՐԵՒՈՑԹ

ԿԱՐԼՈՍ, ԴՕՄԻՆԳՕ

ԴՕՄԻՆԳՕ

Ահա գեղեցիկ օրերը անցան
Արանջուէցում։ Բայց դուք, իմ իշխան,
Դարձեալ այստեղից տխուր էք գնում։
Ձուր էինք այստեղ։ Այդ խորհրդաւոր
Ձեր լռութեանը վերջ տուէք, իշխան,
Բացէք ձեր սիրտը հօր սրտի առաջ։
Իւր միակ որդու հանգստութեանը
Չի խնայի արքան զոհիլ ոչ ինչ բան—

(Կարլոսը նայում է գեսնին և լռում է)։

Մնաց արդեօք մի իրձ, որ չէ կատարել
Իւր սիրած որդու համար երկինքը։
Ես ներկայ էի, երբ Տօլէդոյում
Երդումն ընդունեց ազնիւ Կարլոսը.
Այնտեղ ժողովված մեծ իշխանները
Համբուրում էին կարգով նրա ձեռը,
Եւ վեց տէրութիւն մի հատ վայրկենում
Նորա ոտի տակն էին խոնարհում։—
Ես տեսայ, ինչպէս նորա այտերը
Մատաղ արիւնը կարմիր էր ներկում,
Եւ արքայական որոշումները
Ինչպէս նորա կուրծքը ալեկոծում,
Եւ զմայլած աչքը լի երջանկութեամբ
Ժողովքում թռչում ու պտտում էր—

Այդ աչքը յայտնի խոստովանում էր.
Ես կուշտ եմ։

(Կարլոսը երեսը դարձնում է։)

Իշխան, այդ հինգկ վիշտը,
Որ մենք ութ ամիս արդէն կարդում ենք
Ձեր հայեացքներում, որ ողջ պալատին
Անմեկնելի է և երկիւղալի
Տէրութեան համար, նորին մեծութեան
Շատ է պատճառել անքուն գիշերներ
Եւ արտասուքներ ձեր մօրը։

ԿԱՐԼՈՍ

(շուտով դառնում է նորա կողմը)

Մօրս։
Ո՛վ երկինք, ոյժ տուր, ներեմ այն մարդուն,
Որի շնորհով նա իմ մայրն է։

ԴՕՄԻՆԳՕ

Իշխան։

ԿԱՐԼՈՍ

(ուշքի գալով ձեռով չփոփում է ճակատը։)
Գերապատիւ տէր, ես շատ անբաղդ եմ
Մայրերիս կողմից։ Երբ աշխարհ եկայ,
Առաջին գործս էր մայրասպանութիւն։

ԴՕՄԻՆԳՕ

Մի՞թէ կարող է, ողորմած իշխան,
Այդ մեղադրանքը ձեր խիղճը ճնշել։

ԿԱՐԼՈՍ

[illegible]ր մայրը—չըզլխի՞ց արդէն
[illegible]սիրուց։ Հաղիւ թէ երբէք
[illegible]իրել է։ Իմ ողջ արժէքս էր
[illegible]ոիկ զաւակ լինելս։
[illegible] մի դուստր։— Ո՞վ գիտէ,
[illegible] պահում իւր ծոցում։

ԴՕՄԻՆԳՕ

[illegible]մբողջ Սպանի ան
[illegible] է իւր թագուհուն։

Միթէ դո՞ւք միայն ատում էք Նորան։
Նորան տեսնելիս ձեր խելքին լսում։
Ամենասիրուն կինը աշխարհում,
Թագուհի — այլ և ձեր հարսը երբեմն։
Անկարելի՞ է։ Անհաւատալի՞։
Միայն կարլոսը կարող չէ ատել,
Երբ որ ամենքը Նորան սիրում են.
Այդ զարմանալի հակասութիւն է։
Զգուշացէ՛ք, իշխան, որ նա չիմանայ,
Թէ որքան որդուն ատելի է նա,
Թէ չէ կրցաւ։

ԿԱՐԼՈՍ

Միթէ։

ԴՕՄԻՆԳՕ

Եթէ որ

Կարող է յիշել ձեր մեծութիւնը
Սարագոսայի վերջին տուրնիրը,
Ուր թեթև խածեց արքայի կուռը
Մի նիզակի շեղ — պալատի միջին
Ամբիոնի վրայ Թագուհին նստած
Իւր նաժիշտներով նայում էր խաղին։
Յանկարծ ձայն եկաւ «Արքան վէրք ստացաւ»—
Ծագեց սաստիկ շփոթ, խուլ շշնջոցը
Լսեց Թագուհին։ «Իշխանը», կանչեց,
Եւ ամբիոնից ուզում էր թռչել։—
«Ո՛չ, Թագաւորը», պատասխանում են։—
«Բժիշկ բերէք ուրեմն», իսկոյն ասաց
Նոր շունչ առնելով։

(Կարճ լռութենից յետ

Ստածմունք

ԿԱՐԼՈՍ

Ես զարմանում եմ արքայ
Խոստովանահօր վրայ, որ
Պատմութիւններին այ

(ծանր և մռայլ կերպով։)

Բայց միշտ լսել եմ, որ լրտեսները
Աւելի շատ են ճնասել աշխարհին,
Քան մարդասպանի թոյնն ու դաշնակը։
Զո՛ւր էք աշխատել, տէ՛ր։ Թէ սպասում էք
Շնորհակալութեան, գնացէ՛ք իմ հօր մօտ։

ԴՕՄԻՆԳՕ

Շատ լաւ էք անում, որ զգոյշ էք վարվում
Մարդկանց հետ, իշխա՛ն — միայն ոչ անխտիր։
Կեղծաւորի հետ մի՛ քշէք ձեզնից
Եւ բարեկամին։ Ձեր լաւն եմ ուզում։

ԿԱՐԼՈՍ

Զգո՛յշ, որ այդ բանը հայրս չիմանայ,
Թէ չէ Ծիրանին դուք էլ չէք ստանայ։

ԴՕՄԻՆԳՕ (զարմացած)

Ի՞նչպէս։

ԿԱՐԼՈՍ

Չէ՞ որ, նա խոստացել է ձեզ
Կարդինալութիւն։

ԴՕՄԻՆԳՕ

Ծաղը էք անում ինձ։

ԿԱՐԼՈՍ

Աստուած ո՛չ անէ, որ ես ծաղը անեմ
Այն զարհուրելի մարդուն, որ հօրս
Կարող է փրկել և դատապարտել։

ԴՕՄԻՆԳՕ

Ես չեմ յանդգնի, իշխա՛ն, ձեր սրտի
Գաղտնիքը բռնի դուրս քաշել ձեզնից.
Միայն խնդրում եմ ես ձեր մեծութեան
Զլմոռանալ, որ սուրբ եկեղեցին
Վրդովված խղճի համար ունի մի
Ապաստանարան, որի բանալին
Ոչ մի թագաւոր կարող չէ ձեզ տալ,
Ուր մինչև անգամ չարագործութիւնն

Խորհուրդի դրոշմի տակը պահվում է։—
Դուք գիտէք, իշխան, թէ ինչ եմ ասում։
Ես պարզ խօսեցի։

ԿԱՐԼՈՍ

Ո՛չ, դրոշմապանին
Այդ փորձութեան մէջ չեմ ուզում ձգել։

ԴՕՄԻՆԳՕ

Իշխան, ի՞նչ կասկած։—Դուք չէք ճանաչում
Ձեր հաւատարիմ ծառային։

ԿԱՐԼՈՍ

(բռնում է նորա ձեռը)

Լաւ է
Ուրեմն ինձնից ձեռը վեր առնէք։
Դուք մի սուրբ մարդ էք, ողջ աշխարհ գիտէ—
Բայց ուղիղն ասեմ—արդէն բաւական
Ծանրաբեռնած էք։ Այդ ճանապարհով,
Գերապատիւ հայր, դուք չէք բարձրանայ
Պետրոսի գահը։ Շատ գիտենալը
Ձեզ կրծանրացնէ։ Ցայտնեցէք այսպէս
Թագաւորին, որ ձեզ ուղարկել է։

ԴՕՄԻՆԳՕ

Ինձ ուղարկե՞լ է։—

ԿԱՐԼՈՍ

Այդպէս ասացի։
Ո՛հ, շատ լաւ գիտեմ, որ ես այս դռանը
Դաւաճանուած եմ—գիտեմ, որ հարիւր
Աչքեր վարձուած են ինձ վրայ հսկելու.
Գիտեմ, ծախել է փիլիպպոս արքան
Իւր միակ որդուն իւր ստրուկներից
Ամենավատին, և ամեն մի վանկ
Իմ բերնից թռցրած, բերողին այնպէս
Առատ վարձատրում, ինչպէս որ երբէք
Ոչ մի բարի գործ դեռ չէ վարձատրել։
Եւ գիտեմ։—Ո՛հ, ո՛չ, էլ բան չեմ ասում։

Սիրտս լցուել է. առանց դորան էլ
Շատ բան տասցի։

ԴՈՄԻՆԳՈ

Արքան միտք ունի
Մուրթը չըկոխած Մադրիդում լինել։
Բոլոր պալատը արդէն պատրաստ է.
Պատիւ ունիմ ձեզ, իշխան—

ԿԱՐԼՈՍ

Լաւ, կըգամ։

(Դոմինգոն գնում է. կարճ լռութենից յետոյ։)

Թշուառ Փիլիպպոս, թշուառ և որդիդ։—
Արդէն կասկածը վիրաւորում է
Հոգիդ թունաւոր իւր ատամներով։
Քո այդ տարաբաղդ հետաքրքրութեամբ
Մի սարսափելի կանես յայտնութիւն,
Եւ կըկատաղես, երբ որ կիմանաս։

ԵՐԿՐՈՐԴ ԵՐԵՒՈՒԹ

ԿԱՐԼՈՍ, ՄԱՐԿԻԶ ՊՕԶԱ

ԿԱՐԼՈՍ

Այս ո՞վ է։ Ո՞ւմն եմ տեսնում, ո՞վ երկինք։
Բոդրի՛գո։

ՄԱՐԿԻԶ

Կարլո՛ս։

ԿԱՐԼՈՍ

Ո՜հ, մի՞թէ իրաւ
Ճշմարիտ է այս։ Դո՞ւ ես։ Հա՛, դու ես։
Ահա իմ կուրծքին սխմում եմ ես քեզ
Եւ սրտիդ ուժեղ զարկն էլ զգում եմ։
Ո՜հ, այժմ ամեն բան նորից լաւացաւ։

Այս գրկածութեան մէջ առողջացաւ
Իմ հիւանդ սիրտը։ Ես Բոդրիգոիս
Վգին փարուած եմ։

ՄԱՐԿԻԶ

Ձեր հիւանդ սիրտը։
Եւ ի՞նչ բան արդեօք նորից լաւացաւ։
Կամ ի՞նչ բան կար, որ պէտք է լաւանար։
Ես զարմանում եմ։

ԿԱՐԼՈՍ

Ի՞նչը քեզ յանկարծ
Բերեց Բրիւսսէլ։ Այս ուրախութիւնն
Ո՞ւմն եմ պարտական։ Ո՞ւմ, հարցնո՞ւմ եմ ես։
Ների՛ր դու, ով վեհ Նախախնամութիւն,
Այս հայհոյանքը ուրախութենից
Յափշտակուածին։ Ո՞ւմ, եթէ ոչ քեզ,
Ամենաբարի՛։ Գիտէիր չունէր
Կարլոսը հրեշտակ, և ուղարկեցիր
Սորան ինձ համար. իսկ ես հարցնո՞ւմ եմ։

ՄԱՐԿԻԶ

Ներեցէք ինձ, իմ թանգագին իշխան,
Եթէ որ ես ձեր այդ ջերմ՝ցնծութեան
Զարմանքով միայն պատասխանում եմ։
Դոն Փիլիպպոսի որդուն ես այդպէս
Չէի սպասում տեսնել։ Անբնական մի դոյն
Վառվում է գունատ ձեր այտերի վրայ,
Եւ դողդողում են ձեր շրթունքները։
Արդեօք ի՞նչ կարծեմ, թանգագին իշխան։—
Սա առիւծասիրտ այն պատանին չէ,
Որի մօտ ճնշուած մի քաջ ժողովուրդ
Ինձ ուղարկում է։— Այժմ ես այստեղ
Կանգնած եմ ոչ թէ իբրև Բոդրիգո,
Եւ ոչ թէ իբրև փոքրիկ Կարլոսի
Խաղընկերը— այլ իբրև նուիրակ
Ամբողջ մարդկութեան գրկում եմ ես ձեզ—
Ինձնով Ֆլանդրիան ձեր պարանոցին

Կախուած լալիս է և աղերսում է
Ձեզնից փրկութիւն։ Կորած է անշուշտ
Ձեր այդ պատուական երկիրը, կորած,
Եթէ որ Ալբան, անսիրտ դահիճը
Մոլեռանդութեան, կրգնայ Բրիւսսէլ։
Կայսր Կարլոսի թոռան վրայ է դնում
Ազնիւ Ֆլանդրիան իւր վերջին յոյսը,
Որ կոչնչանայ, թէ նորա սիրտը
Դադրել է զարկել մարդկութեան համար։

ԿԱՐԼՈՍ

Թող ոչնչանայ։

ՄԱՐԿԻԶ

Վա՛յ, ի՞նչ եմ լսում։

ԿԱՐԼՈՍ

Այն օրերն անցան։ Ես էլ երբեմն
Երազում էի մի Կարլի մասին,
Որի այտերը բորբոքվում էին,
Երբ ազատութեան վրայ խօսք էր լինում—
Բայց նա վաղուց է, ինչ որ թաղուած է։
Սա, որ առաջդ է, այն Կարլոսը չէ,
Որ Ակալայում քեզնից բաժանուեց,
Որ ցնորքներին անձնատուր եղած,
Կարծում էր ստեղծել մի նոր ոսկէդար
Սպանիայի մէջ։— Ո՛հ, այդ ցնորքը
Տղայական էր, բայց հրաշալի նոյնպէս։
Անցան դնացին այդ երազները։—

ՄԱՐԿԻԶ

Երազնե՞ր, իշխա՛ն։— Ուրեմն այդ լոկ
Երազնե՞ր էին։

ԿԱՐԼՈՍ

Թող լամ, թող թափեմ
Քաղցր արտասուքներ կուրծքիդ վրայ, ո՛վ իմ
Մէկ հատ բարեկամ։ Ես ոչ ոք չունիմ
Այս լայնատարած աշխարհի վերայ—

Ոչ ոք — մինչև ուր հասնում է իմ հոր
Իշխանությունը ծով ու ցամաքում,
Չկայ մեկ հոգի — մեկը — մեկը, որ
Արտասուքներիս թեթևություն տար,
Բացի քեզանից։ Ո՛վ իմ Բոդրիգո,
Երդվեցնում եմ քեզ հանդերձեալ կեանքի
Երանությամբը, թող ինձ մնամ այստեղ։

ՄԱՐԿԻԶ

(սաստիկ շարժած խոնարհում է նորա վրայ)

ԿԱՐԼՈՍ

Երևակայիր, թէ ես մի որբ եմ,
Որին խղճալով վերցրիր դահի մօտ։
Ի՞նչ է հայր, չգիտեմ — միայն գիտեմ, որ
Աքքայորդի եմ։ — Ո՛հ, թէ իմ սիրտը
Ուղիղ է ասում, թէ միլիոններից
Ընտրուած ես դու ինձ հասկանալու,
Եթէ արարիչ բնությունը իրաւ
Քեզ և ինձ միմեանց նման է ստեղծել,
Երկուսիս հոգու բարակ թելերը
Մեր ծնած ժամին նոյնահանգ լարել։
Թէ մեկ արտասուք, ինձ թեթևացնող,
Քեզ համար թանգ է, քան հօրս շնորհը —

ՄԱՐԿԻԶ

Ո՛հ, աւելի թանգ, քան համայն աշխարհ։

ԿԱՐԼՈՍ

Այնքան ստոր ընկայ — այնքան աղքատ եմ,
Որ մեր մանկութեան օրերը պէտք է
Ես քեզ յիշեցնեմ — պէտք է քեզ խնդրեմ
Վճարել ինձ քո մոռացած պարտքը,
Որ դու արել ես իբրև երեխայ —
Երբ որ դու և ես, երկու աշխոյժ տղայ,
Մեկտեղ մեծացանք իբրև եղբայրներ,
Իմ միակ ցաւս էր հանձարիդ առաջ
Ինձ նսեմանալ — և ես վերջապէս

Հաստատ վճռեցի նուիրել քեզ իմ
Անսահման սէրը, որովհետև ես
ինձ թոյլ էի զգում հաւասարուել քեզ։
Այնուհետև քեզ սկսեցի տանջել
Անվերջ քնքշութեամբ և եղբայրական
Հարազատ սիրով. բայց դու, մեծասի՛րտ,
Ցետ էիր դարձնում սէրս սառնութեամբ։
Շատ անգամ մօտդ կանգնած էի լինում,
—Բայց դու այդ երբէք չէիր նկատում—
Արտասուքներով աչքերս լցվում,
Երբ ինձ թողնելով, հասարակ տղերանց
Գիրկդ էիր առնում։ Է՞ր միայն դոցա,
Կանչում էի ես վշտալից ձայնով.
Միթէ ես էլ քեզ սիրում չե՞մ սրտով—
Բայց դու սառնութեամբ ծունկ խոնարհելով
Ասումէիր ինձ. արքայի որդուն
Այս է վայելում։

ՄԱՐԿԻԶ

Ո՛հ, թողէք, իշխա՛ն,
Այդ տղայական պատմութիւնները,
Որոնք ամօթով ներկում են դէմքս։

ԿԱՐԼՈՍ

Արժանի չէի քեզնից այդ բանին։
Դու կարող էիր սիրտս արհամարհել
Եւ խոցել, բայց ոչ քեզնից հեռացնել։
Դու երեք անգամ ինձ արտաքսեցիր,
Եւ երեք անգամ եկայ ես կրկին
Իբրև աղերսող, սէրդ խնդրելով
Եւ իմը բռնի քեզ նուիրելով։
Մի դիպուած արեց, ինչ որ Կարլոսը
Երբէք չէր կարող։ Անգամ խաղալիս
Գնդակդ դիպաւ իմ հօրաքրոջ,
Բօհէմիայի թագուհու աչքին.
Նա կարծում էր, թէ գիտութեամբ եղաւ

Եւ արտասուելով դանդտուեց արքային։
Պալատի բոլոր տղերքը կանչուեցան,
Որ յանցաւորը իմացուի։ Արքան
Երդվում է պատժել սոսկալի կերպով
Այդ նենգութիւնը, թէկուզ անողը
Լինէր իւր որդին։—Ես տեսայ ինչպէս
Դու դողդղալով հեռու կանգնած ես,
Եւ իսկոյն, իսկոյն գնացի և ընկայ
Ես իմ հօր առաջ։ Ե՛ս արի, ա՛ր քայ,
Կանչեցի, վրէժդ թափէ՛ որդուդ վրայ։

ՄԱՐԿԻԶ

Ա՛խ, իշխան, ինչե՞ր էք միտս բերում։

ԿԱՐԼՈՍ

Եւ քո Կարլոսը կրեց պատիժը
Սարկաբար բոլոր պալատի առաջ,
Որ ցաւակցելով կանգնած էր այնտեղ։
Ես նայում էի քեզ և չէի լալիս։
Ցաւը սխմում էր իմ ատամները.
Ես չէի լալիս։ Ազնիւ արիւնս
Վազում էր անգութ հարուածների տակ.
Ես նայում էի քեզ և չէի լալիս։—
Ողբալով եկար ընկար առաջս.
Հա՛, կանչեցիր դու, յաղթուած է այժմ իմ
Մեծամտութիւնը։ Ես կը վճարեմ
Քեզ այդ, երբ որ դու կրթագաւորես։

ՄԱՐԿԻԶ

(տալիս է Նորան իւր ձեռը։)

Հա՛, կրվճարեմ, Կարլո՛ս։ Իբրև այր
Նորոգում եմ այժմ տղայական ուխտս։
Ես կրվճարեմ։ Իմ ժամն էլ կրգայ։

ԿԱՐԼՈՍ

Ա՛յժմ, այժմ—ո՛հ, էլ մի՛ ուշացնիր—
Ժամանակն հասաւ, երբ դու կարող ես
Ուխտդ կատարել։ Ինձ սէր է պէտք այժմ—.

Սոսկալի գաղտնիք այրում է կուրծքս։
Պէտք է դուրս հանեմ։ Գունատ դէմքիդ վրայ
Թող կարդամ մահուան դատավճիռս։
Լսի՛ր և — ապշի՛ր — բայց բան մի՛ ասիր —
Մօրս սիրում եմ —

ՄԱՐԿԻԶ

Վա՛յ, Աստուած։

ԿԱՐԼՈՍ

Ո՛չ, ո՛չ.

Մի խնայիր ինձ։ Ասա՛, որ չկայ
Ինձ նման թշուառ ամբողջ երկրի վրայ —
Ասա՛ — միտքդ արդէն ես գուշակում եմ։
Որդին սիրում է մօրը։ Աշխարհի
Սովորութիւնը, բնութեան կանոնը,
Հռովմի օրէնքը դատապարտում են
Այս կիրքը։ Գիտեմ, խիստ հակառակ է
Պահանջս իմ հօր իրաւունքներին։
Գիտեմ այդ, բայց ես էլի սիրում եմ։
Այս ճանապարհով անշուշտ կը հասնեմ
Խելագարութեան կամ պատժարանին։
Ես սիրում եմ, հա՛ — սիրում յուսահատ
Եւ մոլի սիրով — ահ ու սարսափով —
Կեանքի վտանգով — այդ աշխարհայ է.
Բայց էլի, էլի սիրում եմ, սիրում.

ՄԱՐԿԻԶ

Գիտէ՞ թագուհին ձեր այդ զգացմունքը։

ԿԱՐԼՈՍ

Ի՞նչպէս բացուէի։ Նա Փիլիպպոսի
կինն է, թագուհի, հողն էլ Սպանիա։
Մի կողմից իմ հօր սաստիկ կասկածը,
Միւս կողմից դռան սովորութիւնը,
Մի՞թէ հնար էր առանց վկայի
Մօտենալ նորան։ Ահա՛ ութ ամիս
Լի տանջանքներով անցան, ինչ որ ինձ

Արքան բերել է տուել ճեմարանից,
Ինչոր ամեն օր ստիպուած եմ նորան
Տեսնել և լռել ինչպէս դերեզման։
Ուրիշը դառն ամիս, ո՛վ իմ Բոդրիգո,
Այրում է կուրծքս սոսկալի կրակը,
Եւ սարսափելի խոստովանութիւնն
Շրթունքներիս վրայ էր հազար անգամ.
Բայց հէգ և երկչոտ սողում էր կրկին
Սրտիս խորերը։ Ո՛վ իմ Բոդրիգո—
Մի քանի վարկեան մ ե ն ա կ նորա հետ—

ՄԱՐԿԻԶ

Ա՛խ, բայց ձեր հայրը, իշխա՛ն—

ԿԱՐԼՈՍ

Տարաբա՛ղդ,
Մի՛ յիշեր նորան։ Ցիշե՛ր ինձ խղճի
Արհաւիրքները, բայց ոչ իմ հօրը։

ՄԱՐԿԻԶ

Դուք ատո՞ւմ էք ձեր հօրը.

ԿԱՐԼՈՍ

Ո՛չ, ա՛խ, ո՛չ։
Հօրս չեմ ատում—բայց սարսափում եմ
Ինչպէս չարագործ, երբ որ լսում եմ
Այդ զարհուրելի անունը։ Միթէ
Մեղաւո՞ր եմ ես, որ մի սարկական
Կրթութիւն արդէն մատաղ սրտիս մէջ
Զորցրել է սիրոյ քնքուշ բողբոջը։
Ես վեց տարեկան տղայ էի, երբ որ
Այն զարհուրելի մարդը, որ, ինչպէս
Ասացին, հայրս էր, առաջին անգամ
Ինձ երևեցաւ։ Մի առաւօտ էր,
Երբ նա ոտի վրայ կանգնած ստորագրեց
Զորս մահուան վճիռ։ Ցետոյ ես նորան
Տեսնում էի միայն, երբ պէտքէ յայտնէր
Պատիժ որ և է սխալանքիս համար—

Ո՛Հ, Աստուած, լեզուս սկսում է խոցել—
Ե՛կ, եկ հեռանանք շուտով այստեղից։

ՄԱՐԿԻԶ

Ո՛չ, ոչ, դուք պէտք է բացուէք։ Խօսքերով
Կը թեթեւանայ ծանրացած կուրծքը։

ԿԱՐԼՈՍ

Ցաճախ ինքս ինձ հետ պատերազմել եմ,
Եւ կէս գիշերին, երբ քնած էին
Պահապաններս, ջերմ արտասուքով
Ընկել տիրամօր պատկերի առաջ,
Խնդրելով տալ ինձ որդիական սիրտ—
Բայց իմ աղօթքը երբէք չէր լսվում։
Բօդրի՛գօ, մեկնի՛ր ինձ զարմանալի
Այս հանելուկը Նախախնամութեան—
Է՞ր հազարաւոր հայրերից իսկ այս
Հայրը տուեց ինձ, և հազարաւոր
Լաւ զաւակներից, նրան էլ այս որդին։
Բնութիւնն իւր բոլոր տարածութեան մէջ
Զունի սորա նման հակադրութիւններ։
Եւ ի՞նչպէս արդեօք մարդկային սեռի
Վերջնակէտերը—ինձ ու նրան—այսպէս
Սրբազան կապով նա միաւորեց։
Զարհուրելի՜ բաղդ։ Ինչի՞ այս եղաւ։
Ինչի՞ երկու մարդ, որոնք միմեանցից
Միշտ հեռանում են, մէկ ցանկութեան մէջ
Սոսկալի կերպով իրար հանդիպում։
Ա՜հա, Բօդրի՛գօ, իրար թշնամի
Երկու լուսաւոր, որոնք անվախճան
Ժամանակներում մէկ անգամ միայն
Իրանց հակառակ շրջանների մէջ
Սաստիկ զօրութեամբ միմեանց են դիպչում,
Յետոյ յաւիտեան միմեանցից փախչում։

ՄԱՐԿԻԶ

Ես զուշակում եմ մի կորստաբեր
Վայրկեան։

ԿԱՐԼՈՍ

Ես ինքս։ Ինչպէս չար դևեր
Հալածումեն ինձ ահեղ երազներ,
Հոգիս կասկածով միշտ մնքառում է
Սարսափեցուցիչ խորհուրդների հետ.
Իմաստակութեան լաբիւրինթոսում
Սողում է թշուառ սրամտութիւնս,
Մինչև որ ապշած յանկարծ կանգնում է
Մի խոր անդունդի բաց բերանի մօտ։—
Ո՛վ իմ Բոդրիգո, թէ այդ մարդու մէջ
Կարողանայի հօրս մոռանալ—
Բոդրի՛գո— ահա՛, քո մեռելագոյն
Դէմքն ինձ հասկացաւ— թէ որ նորա մէջ
Հօրս մոռանամ, արքան ի՞նչ փոյթս է։

ՄԱՐԿԻԶ

(կարճ լռութենից յետոյ)

ԿսրոՂ եմ արդեօք ես իմ Կարլոսին
Մի խնդիրք ուղղել։ Ինչ որ կամք ունիք
Անել, խնդրում եմ, խոստացէ՛ք ոչինչ
Զլսկսել առանց ձեր բարեկամի։
Խոստացէ՛ք ինձ այս։

ԿԱՐԼՈՍ

Ամենը, ինչ որ
Սէրդ պահանջէ։ Ես բոլորովին
Քո գիրկն եմ ընկնում։

ՄԱՐԿԻԶ

Ինչպէս ասում են,
Արքան ուզում է քաղաք յետ դառնալ։
Ժամանակ քիչ կայ։ Թէ կամենում էք
Դուք թագուհու հետ ծածուկ տեսնուիլ
Արանջուէցից լաւ տեղ չէք գտնի։
Տեղն անվրդով հանդարտութիւնը—
Գիւղական կեանքի ազատութիւնը
Ցար մարեն —

ԿԱՐԼՈՍ

Ես էլ այդ յուսով էի.
Բայց աւաղ, ի զո՛ւր։

ՄԱՐԿԻԶ

Ոչ բոլորովին։
Ես իսկոյն ահա գնում եմ թագուհուն
Ներկայանալու։ Թէ Սպանիայում
Նա նոյնն է, ինչ որ Հէյնրիխի դուռանն էր,
Ապա կը գտնեմ ես անկեղծութիւն։
Թէ որ նշմարեմ նորա հայեացքում
Կարլոսի յոյսը. թէ նա յօժար է
Զեզ հետ տեսութեան — թէ կարելի է
Կանանց հեռացնել —

ԿԱՐԼՈՍ

Շատը իմ կողմն են —
Իսկ Մօնդէկարը աւելի ևս,
Որին գրաւել եմ իւր որդու ձեռով,
Իմ մանկլաւիկով։ —

ՄԱՐԿԻԶ

Այդ աւելի լաւ։
Ուրեմն, իշխան, մօտիկ կը մնաք,
Որ երբ նշան տամ, իսկոյն երևաք։

ԿԱՐԼՈՍ

Լաւ — լաւ, գնա՛, շտապի՛ր։

ՄԱՐԿԻԶ

Բոպէ չեմ կորցնի։
Ուրեմն այնտեղ, իշխան, կը տեսնուինք։
(դուրս են գնում զանազան կողմերից)։

թագուհու քնակարանը

Պարզ գիւղական տեսարան, կտրուած մի ճեմելիքով և սահմանափակուած թագուհու անով։

ԵՐՐՈՐԴ ԵՐԵՒՈՑԹ

ԹԱԳՈՒՀԻ, ԴՔՍՈՒՀԻ ՕԼԻՎԱՐԷՑ, ԻՇԽԱՆՈՒՀԻ ԷԲՕԼԻ ՄԱՐԿԻԶՈՒՀԻ ՄՕՆԴԷԿԱՐ *գալիս են ճեմելիքով։*

ԹԱԳՈՒՀԻ (*մարկիզուհուն*)

Ձեզ կամենում եմ մնաս ունենալ։
Ամբողջ առաւօտ արդէն տանջում են
ինձ իշխանուհու աշխոյժ աչքերը։
Ինչպէս ուրախ է, տեսէք, որ գիւղից
Պիտի հեռանայ։

ԷԲՕԼԻ

Խոստովանում եմ,
Թագուհի, որ շատ ուրախ եմ Մադրիդ
Վերադառնալուս։

ՄՕՆԴԷԿԱՐ

Բայց դուք, Թագուհի,
Մի՞թէ ուրախ չէք։ Մի՞թէ ակամայ
Հեռանում էք դուք Արանջուէցից.

ԹԱԳՈՒՀԻ

Այս սիրուն տեղից — այո՛, ակամայ։
Այստեղ ես զգում եմ ինձ իմ աշխարհում։
Ես շատ սիրեցի այս փոքրիկ տեղը,
Ուր իմ մանկութեան լաւ բարեկամը,
Գիւղական բնութիւնն, ինձ ողջունում է.
Ուր իմ մանկական խաղերը կրկին
Գտնում եմ և ուր Ֆրանսիայիս անոյշ
Հովերը փչում են։ Զը դատապարտէք,
Հայրենիքը միշտ իրան է քաշում։

ԷԲՕԼԻ

Բայց ինչպէս դատարկ, ինչպէս մեռած է

Եւ տխուր այստեղ։ Կարծես Լա Տրապպէ
Վանքի մէջ լինինք։

ԹԱԳՈՒՀԻ

Ընդհակառակը,
Մադրիդը միայն մեռած է թվում—
Տեսնենք դքսուհին ի՞նչպէս է կարծում։

ՕԼԻՎԱՐԷՑ

Իմ կարծիքն այս է, Ձերդ Մեծութիւն.
Այն օրից, ինչ որ Սպանիայի մէջ
Թագաւորներ կան, սովորութիւն է
Մէկ ամիս այստեղ, միւսը Պարդոյում
Անցկացնել, ձմեռը Մայրաքաղաքում։

ԹԱԳՈՒՀԻ

Այո՛, դքսուհի՛, դուք այդ լաւ գիտէք,
Ձեզ հետ վիճելուց ես հրաժարվում եմ։

ՄՕՆԴԷԿԱՐ

Եւ այս օրերում ինչպէս Մադրիդը
Կլկենդանանայ. Պլացա Մայօրում
Շուտով կըլինի մի ցուլակռիւ,
Եւ նմանապէս մի սուտօ դա Ֆէ
Խոստացել են մեզ—

ԹԱԳՈՒՀԻ

Խոստացե՞լ են մեզ։
Մի՞թէ բարեսիրտ իմ Մօնդէկարից
Լսում եմ ես այդ։

ՄՕՆԴԷԿԱՐ

Ինչի՞ չէ։ Չէ՞ որ
Հերձուածողներ են, որոնց այրում են։

ԹԱԳՈՒՀԻ

Ցուսով եմ, ուրիշ կերպ է մտածում
Իմ Էբօլին։

ԷԲՕԼԻ

Ես, Ձերդ Մեծութիւն.

Ես ձեզ խնդրում եմ, չըհամարել ինձ
Պակաս ջերմեռանդ քրիստոնեայ, քան թէ
Մարկիզուհին է։

ԹԱԳՈՒՀԻ

Ա՛խ, մոռանում եմ,
Թէ ես ինչ տեղ եմ— Ուրիշ բան խօսենք—
Գիւղի մասին էր կարծեմ մեր խօսքը։
Զարմանալի շուտ անցաւ ամիսը։
Ուրախութիւններ շատ էի սպասում
Այստեղի կեանքից. չըգտայ, ինչ որ
Ես յոյս ունէի։ Մի՞թէ ամեն յոյս
Այս վախճանն ունի։ Զկատարուած իղձս
Ես էլ չեմ գտնի։

ՕԼԻՎԱՐԷՑ

Էբօլի՛, ոչինչ
Դեռ չէք ասել մեզ։ Արդեօք գօմէցը
Կարո՞ղ է յուսալ։ Արդեօք կարո՞ղ ենք
Շնորհաւորել ձեզ իբրև նորա հարս։

ԹԱԳՈՒՀԻ

Իրա՛ւ, դքսուհի՛, լաւ միտս բերիք։

(Ի՛չխանութիւն)

Ինձ խնդրում են, որ ձեզ մօտ միջնորդեմ.
Բայց ի՞նչպէս անեմ։ Արժանաւորին
Միայն կը պարգևեմ ես իմ Էբօլին։

ՕԼԻՎԱՐԷՑ

Ձերդ մեծութիւն, արժանաւոր է։
Մի ազնիւ տղամարդ, որին ինքն արքան.
Ինչպէս յայտնի է, իւր արքայական
Շնորհով պատվում է։

ԹԱԳՈՒՀԻ

Այդ ի հարկէ նրան
Կը բաղդաւորէ։— Մենք կամենում ենք
Իմանալ, արդեօք կարո՞ղ է սիրել

Նա և սէր ստանալ — Էբօլի՛, տուէք
Հարցիս պատասխան։

ԷԲՕԼԻ

(կանգնած է լուռ և չփոթուած, աչքերը դեռնին ուղղած. վերջապէս ընկնում է թագուհու ոտները)։

Ո՛վ վեհ թագուհի,
Ողորմեցէք ինձ։ Մի՛ թոյլ տաք — ո՛հ, մի՛,
Ի սէր Աստուծոյ — մի՛ թոյլ տաք, որ ինձ
Զոհեն — մի՛ թոյլ տաք։

ԹԱԳՈՒՀԻ

Զոհե՞լ։ Այդ արդէն
Ինձ բաւական է։ Վեր կացէք։ Այո՛,
Ծանր վիճակ է զոհուած լինելը։
Ես հաւատում եմ։ Վեր կացէք — Քանի՞
Ժամանակ է, ինչ կոմսին մերժել էք։

ԷԲՕԼԻ (վեր կենալով)

Ո՛հ, շատ ամիսներ արդէն։ Դեռ ևս
Կարլոս իշխանը ճեմարանումն էր։

ԹԱԳՈՒՀԻ

(զարմանում է և քննող աչքով նայումէ նորան)

Արդեօք չէ՞ք քննել, թէ ի՞նչ պատճառով —

ԷԲՕԼԻ

(փոքր ինչ սաստկութեամբ)

Երբէք, թագուհի՛, երբէք այդ բանը
Չի լինի. երբէք, հազար պատճառով.

ԹԱԳՈՒՀԻ

(շատ ծանր կերպով)

Մէկն էլ հերիք է։ Մի խօսքով, նորան
Չէք կարող սիրել — Այդ բաւական է։
Էլ այսուհետև ոչ ինչ այդ մասին։

(միւս տիկիններին)

Այսօր դեռ տեսել չեմ ինֆանտինան.
Մօնդէկար, գնացէք և բերէք նորան։

ՕԼԻՎԱՐԷՑ

(Նայումէ ժամացուցին)

Դեռ ժամանակ չէ, Ձերդ Մեծութիւն:

ԹԱԳՈՒՀԻ

Դեռ ժամանակ չէ՞, որ ես մայր լինիմ
Իրաւ, վատ բան է: Բայց չըմոռանաք
Ասել ինձ, երբ որ ժամանակը դայ:

(դալիս է մի մանկլաւիկ և կամաց խօսում է սենեկապետուհու հետ, որ յետոյ դառնում է Թագուհուն)

ՕԼԻՎԱՐԷՑ

Ձերդ Մեծութիւն, Մարկիզ Պօզա—

ԹԱԳՈՒՀԻ

Պօզա:

ՕԼԻՎԱՐԷՑ

Նա նոր է եկել Ֆրանսիայից և
Նիդերլանդիայից և շնորհ է խնդրում,
Թագուհի մօրից յանձնել ձեզ նամակ:

ԹԱԳՈՒՀԻ

Այդ թո՞ղ է տուած:

ՕԼԻՎԱՐԷՑ (տարակուսած)

Հրամանագրիս մէջ
Ցիշուած չէ դէպքը, երբ Կաստիլիայի
Որ և է իշխան օտար պալատից
Նամակ է բերել, որ Սպանիացոց
Թագուհուն յանձնէ նորա պարտիզում:

ԹԱԳՈՒՀԻ

Լաւ, թող ես լինիմ պատասխանատուն:

ՕԼԻՎԱՐԷՑ

Բայց այդ միջոցում, Ձերդ Մեծութիւն,
Խնդրում եմ թոյլ տաք, որ ես հեռանամ:

ԹԱԳՈՒՀԻ

Այդ ձեր կամքին եմ թողնում, դքսուհի:

(Սենեկապետուհին դուրս է գնում և Թագուհին մի նշան է տալիս մանկլաւիկին, որ իսկոյն դուրս է գնում):

ՉՈՐՐՈՐԴ ԵՐԵԻՈԹԹ

ԹԱԳՈՒՀԻ, ԻՇԽԱՆՈՒՀԻ ԷԲՕԼԻ, ՄԱՐԿԻԶՈՒՀԻ ՄՈՆԴԷԿԱՐ, ՄԱՐԿԻԶ ՊՕԶԱ.

ԹԱԳՈՒՀԻ

Ասպետ, բարով էք եկել Սպանիա:

ՄԱՐԿԻԶ

Որ իրաւացի պարծանքով հիմա
Ես անուանում եմ իմ հայրենիքը:—

ԹԱԳՈՒՀԻ (*կանանցը*)

Մարկիզ Պոզա, որ Բէյմնի տուրնիրում
Հօրս հետ մրցեց և երեք անգամ
Յաղթութիւն տուեց իմ ընտրած գոյնին—
Առաջինն եղաւ, որ Սպանիացոց
Թագուհի լինելու փառքն ինձ զգացրեց:
(*դառնալով մարկիզի կողմը*)
Երբ որ Լուվրի մէջ, ասպետ, ահմնուեցանք
Մենք վերջին անգամ, դուք այն ժամանակ
Ի հարկէ, չէիք երևակայում,
Որ հիւր կը լինիք ինձ Կաստիլիայում:

ՄԱՐԿԻԶ

Ո՛չ, մե՛ծ Թագուհի,— երազել անգամ
Ես չէի կարող, թէ կը զգուի
Ֆրանսիան մեզ համար սոյն եզականից,
Որի համար մենք նախանձում էինք:

ԹԱԳՈՒՀԻ

Հպարտ Սպանիացի: Ի՞նչ: Եզականը—
Վալուայի տան աղջկան այդ բառը:

ՄԱՐԿԻԶ

Ձերդ Մեծութիւն, այժմ կարող եմ
Այդ ասել— Զէ՞ որ այժմ դուք մերն էք:

ԹԱԳՈՒՀԻ

Ես լսել եմ, որ ձեր ճանապարհը

Ֆրանսիայի վրայ էր — ի՞նչ լուր էք բերում
Ինձ համար դուք իմ թանգագին մորից,
Այլ և սիրելի իմ եղբայրներից։

ՄԱՐԿԻԶ (յանձնում է նորան նամակները)

Թագուհի մորը ես հիւանդ գտայ.
Նորա մի հատիկ ուրախութիւնն է,
Որ Սպանիայի գահի վրայ լինի
Իւր արքայական դուստրը բաղդաւոր։

ԹԱԳՈՒՀԻ

Ինչպէս բաղդաւոր չըլինի անգին
Ազգականների քնքուշ սիրովը,
Քաղցր յիշատակով — Ձեր ճանապարհին
Այցելել էք շատ պալատներ, ասպետ,
Տեսել աշխարհներ, մարդիկ և նոցա
Սովորութիւններ — Այժմ ասում են,
Թէ մոռացիր էք ձեր հայրենիքում
Ձեզ ու ձեզ ապրել։ Ձեր խաղաղ տան մէջ
Լինել մեծ, քան թէ փիլիպպոս արքան
Իւր գահի վերայ — Իբրև աղատ մարդ,
Մի փիլիսոփայ — Ես կասկածում եմ,
Թէ դուք Մադրիդը հաւանէք։ Այնտեղ
Շատ շատ հանդարտ է։

ՄԱՐԿԻԶ

Այդ իսկ է ահա,
Որին կարօտ է մնացած Եւրոպան։

ԹԱԳՈՒՀԻ

Այդպէս եմ լսում։ Բայց ես հեռու եմ
Աշխարհի ամեն տեսակ գործերից.
Նոյն իսկ անցեալը ես մոռացել եմ։

(դառնալով դէպի իշխանուհի Էբոլին)

Այնտեղ տեսնում եմ բացուած նուռնուշխար—
Խնդրում եմ, գնաք բերէք ինձ համար։
(իշխանուհին գնում է այն կողմը. Թագուհին փոքր ինչ կամաց մարկիզին)

Ասպետ, ձեր գալով, եթէ չեմ սխալվում,
Շատ ուրախացաւ մէկն այս պալատում.

ՄԱՐԿԻԶ

Ես այստեղ գտայ մի վշտահարի—
Որին աշխարհիս երեսին մի բան
Միայն կարող է մխիթարութիւն —
(Իշխանուհին վերադառնում է ծաղիկը ձեռքին)

ԷՔՕԼԻ

Այնքան երկիրներ տեսնելով, անշուշտ
Շատ հետաքրքիր բաներ կարող է
Պատմել ասպետը:

ՄԱՐԿԻԶ

Այո՛, ի հարկէ:
Ասպետի պարտքն է արկածներ պտռել,
Սրբազնագոյնը — կանանց պաշտպանել:

ՄՕՆԴԷԿԱՐ

Հսկաների դէմ: Այժմ էլ չըկան:

ՄԱՐԿԻԶ

Տկարի համար բռնութիւնը միշտ
Հսկայ է, տիկին:

ԹԱԳՈՒՀԻ

Իրաւ է ասում
Մարկիզը: Այո՛, դեռ կան հսկաներ,
Բայց ոչ ասպետներ:

ՄԱՐԿԻԶ

Շատ ժամանակ չէ,
Նէապոլիսից վերադառնալիս,
Վկայ էի մի ցաւալի անցքի,
Որ իբրև աւանդ բարեկամութեան,
Ես համարում եմ իմ սեփականը—
Թէ չըվախենամ, որ Ձեր Մեծութեան
Գուցէ ձանձրացնէ իմ պատմութիւնը—

ԹԱԳՈՒՀԻ

Իմ կամքն էք հարցնում: Մեր իշխանուհու
Հետաքրքրութեան անկարելի է

կատարում չըտալ։ Սկսեցէք։ Ես էլ
Պատմութիւններ շատ եմ սիրում լսել։

ՄԱՐԿԻԶ

Երկու ազնիւ տուն Միրանդոլայում
Ձանձրացած սաստիկ թշնամութեամբ, որ
Դարերով արդէն ժառանգել էին
Ջիբելիններից և Գուելֆներից,
Ազգականութեան քնքուշ կապերով
Վճռեցին կապել հաստատ հաշտութիւն։
Եւ այդ գեղեցիկ կապը կապելու
Ընտրուած էին հզօր Պիէտրոի
Քեռորդին Ֆէրնանդ և Կոլոննայի
Հրեշտականման դուստրը Մաթիլդան։
Երբէք բնութիւնը դեռ չէ ըստեղծել
Երկու աւելի գեղեցիկ արտեր—
Երբէք աշխարհը ոչ մի ընտրութիւն
Այդպէս բաղդաւոր դեռ չէ համարել։
Դեռ իւր գեղեցիկ հարսին պաշտում էր
Ֆէրնանդոն միայն կենդանագրի մէջ—
Ո՛հ, ինչպէս նորա սիրտը դողում էր,
Ինչպէս անհամբեր ուզում էր սուզել,
Որ այդ պատկերը նորան չէ խաբել։
Պադուայի մէջ, ուր Ֆէրնանդոն
Անցկացնում էր իւր ուսման ընթացքը,
Սպասում էր նա այն ուրախ վայրկենին,
Երբ որ վերջապէս կըկարողանար
Իւր Մաթիլդայի առաջը չոքած
Սիրոյ առաջին ուխտը թոթովել։

(Թագուհին հետաքրքրվում է, կարճ լռութենից յետոյ մարկիզը շարունակում է իւր պատմութիւնը, որքան թագուհու ներկայութիւնը ներում է, աւելի ուղղելով իւր խօսքը դէպի իշխանուհի Էբօլին)

Բայց այդ միջոցին այրիանում է
Պիէտրոն — ինչպէս աշխոյժ պատանի,
Ծերը լսում է համբաւի ձայնը,

Որ Մաթիլդային գովասանում է։
Գնում է — տեսնում է — սիրահարվում է։
Կիրքը խեղդում է բնութեան հեզ ձայնը,
Քեռին քեռորդու հարսին ուզում է,
Եւ այդ յանցանքը սեղանի առաջ
Սրբագործում է։

ԹԱԳՈՒՀԻ

Ցետոյ Ֆէրնանդօն

ՄԱՐԿԻԶ

Դեռ այդ սոսկալի փոփոխութենից
Անտեղեակ, սիրոյ թեւերի վերայ
Շտապում է զմայլած դէպ՝ Միրանդօլա։
Եւ մինչ վառվում են աստղեր երկնքում,
Արագ ձիու վրայ նա տուն է հասնում —
Երաժշտութեան ուրախ ձայներով
Թնդումէ պալատը լուսաւորուած։
Նա ահ ու դողով աստիճաններով
Վերև է գնում և չըճանաչուած
Հարսնիքի ուրախ դահլիճը մտնում։
Եւ հիւրերի մէջ Պիէտրօին տեսնում —
Մի հրեշտակ կողքին, հրեշտակ աննման,
Որ Ֆէրնանդօին ծանօթ է, որ նրան
Այդպէս լուսափայլ երազի մէջ էլ
Դեռ ոչ մի անգամ չէր երևացել։
Մի հայեացք ցոյց տուեց, թէ նա ինչ ունէր,
Եւ ինչ յաւիտեան արդէն կորցրել էր։

ԷՔՕԼԻ

Ո՛հ, խե՛ղճ Ֆէրնանդօ։

ԹԱԳՈՒՀԻ

Ձեր պատմութիւնը
Վերջացաւ, ասպե՛տ, այնպէս չէ՞ — պէտք է
Վերջացած լինի։

ՄԱՐԿԻԶ

Ո՛չ բոլորովին։

ԹԱԳՈՒՀԻ

Զասացիք դուք, որ ձեր բարեկամն էր
Ֆէրնանդօն։

ՄԱՐԿԻԶ

Այո՛, նրանից Թանգագին
Բարեկամ չունիմ։

ԷԲՕԼԻ

Շարունակեցէք
Ձեր պատմութիւնը։

ՄԱՐԿԻԶ

Վերջը տխուր է —
Եւ յիշատակը վիշտս նորոգում։
Թոյլ տուէք չասեմ նորա վախճանը —
(ընդհանուր լռութիւն)

ԹԱԳՈՒՀԻ

(դառնալով դէպի իշխանուհի Էբօլին)
Այժմ կարծում եմ, որ Թոյլ կըտրուի
Վերջապէս գրկել ինձ իմ աղջկան.
Էբօլի՛, գնացէք և բերէք նորան։

(Իշխանուհին հեռանում է։ Մարկիզը նշանով կանչում է մի մանկլաւիկի, որ երևում է բեմի ետևի կողմում և իսկոյն անյայտանում է։ Թագուհին բաց է անում նամակները, որոնց մարկիզը տուել է և երևում է զարմացած։ Այդ միջոցին մարկիզը ծածուկ և խորհրդաւոր կերպով խօսում է մարկիզուհի Մօնդէկարի հետ։ Թագուհին կարդալով նամակները, դառնում է մարկիզին, ձգելով նորա վրայ մի քննողական հայեացք)։

Դուք Մաթիլդայի մասին մեզ ոչինչ
Զասացիք։ Գուցէ նորան յայտնի չէ,
Ինչպէս Ֆէրնանդօն սաստիկ տանջվում է։

ՄԱՐԿԻԶ

Դեռ Մաթիլդայի սիրտը քննել չեն —
Բայց վերհանձն հոգիք լուռ համբերում են։

ԹԱԳՈՒՀԻ

Ի՞նչ էք այս և այն կողմը դուք նայում։
Ձեր աչքերն ո՞ւմն են այստեղ որոնում։

ՄԱՐԿԻԶ

Մտածում եմ, թէ որքան բաղդաւոր

Կրլենէր մէկը, որի անունը
Չեմ կարող ասել, եթէ նա հիմա
Իմ տեղը լինէր։

ԹԱԳՈՒՀԻ

Ո՞վ է մեղաւոր,
Որ բաղդաւոր չէ։

ՄԱՐԿԻԶ

Կարո՞ղ եմ արդեօք
Իմ ուղածի պէս մեկնել ձեր խօսքը։
Արդեօք կը ստանա՞յ նա ներողութիւն,
Եթէ հիմայ դայ։

ԹԱԳՈՒՀԻ (վախեցած)

Ինչ՞, Մարկի՛զ, հիմա՞։
Այդ ի՞նչ էք ասում։

ՄԱՐԿԻԶ

Արդեօք կարո՞ղ է
Նա յոյս ունենալ—

ԹԱԳՈՒՀԻ (աւելի վախեցած)

Վախեցնում էք ինձ,
Մարկի՛զ— մի՞թէ նա—

ՄԱՐԿԻԶ

Արդէն այստեղ է։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԵՐԵԻՈՑԹ

ԹԱԳՈՒՀԻ, ԿԱՐԼՈՍ

(Մարկիզ Պօզան և մարկիզուհի Մօնդէկարը հեռանում են բեմի ետևի կողմը)։

ԿԱՐԼՈՍ

(ընկնելով թագուհու առաջ)

Վերջապէս հասա՛ւ ցանկալի րոպէն,
Եւ այս թանգագին ձեռը կարող է
Բռնել կարլոսը։

ԹԱԳՈՒՀԻ

Այդ ի՞նչ էք անում—
Ի՛նչ յանդգնութիւն։ Վե՛ր կացէք։ Տեսան,
Կանայքս հեռու չեն։

ԿԱՐԼՈՍ

Ո՛չ, չեմ վեր կենայ—
Այստեղ յաւիտեան չոքած կրնամ։
Այստեղ կախարդուած թող ես քարանամ—

ԹԱԳՈՒՀԻ

Խելագար։ Ո՞րքան համարձակութիւն
Տալիս է ձեզ իմ շնորհը։ Ի՞նչ։ Գիտէ՞ք,
Որ այդ յանդուգն խօսքերն ուղղում էք
Դուք ձեր թագուհուն, ձեր մօրը։ Գիտէ՞ք
Որ ես — ես ինքս այս յարձակմանից
Արքային—

ԿԱՐԼՈՍ

Եւ որ ես մահ կրստանամ։
Թող ինձ այստեղից քաշեն մորթելու։
Մի հատիկ վայրկեան դրախտի մէջ ապրել
Թանգ չեմ համարում մահով վճարել։

ԹԱԳՈՒՀԻ

Բայց ձեր թագուհի՞ն—

ԿԱՐԼՈՍ

Աստուած իմ, Աստուած,
Ահա գնում եմ— Ես ձեզ թողնում եմ—
Պէտք է գնամ, երբ որ դուք պահանջում էք։
Մայր, մայր, ո՛հ, ի՞նչպէս սոսկալի կերպով
Ինձ հետ խաղում էք։ Մի թեթև նշան,
Մի հայեացք, մի լոկ հնչիւն ձեր բերնից
Լինել ու չքանալ հրամայում է ինձ։
Ի՞նչ էք ուզում, որ էլի պատահի։
Կա՞յ արդեօք մի բան լոյս արևի տակ,
Ոչ ես պատրաստ չեմ զոհել, երբ որ դուք
Ցանկանում էք այդ։

ԹԱԳՈՒՀԻ

Փախի՛ք։

ԿԱՐԼՈՍ

Ո՛հ, Աստուած։

ԹԱԳՈՒՀԻ

Միայն մի բան, Կարլո՛ս, ես ձեզ խնդրում եմ

Լացող աչքերով — փախէք — ո՛հ, փախէք,
Որ նաժիշտներս, բանտապետներս,
Ձեզ և ինձ այսաեղ մէկտեղ չըտեսնեն,
Եւ այդ մեծ լուրը չըտանեն հասցնեն
Ձեր հօր ականջին։

ԿԱՐԼՈՍ

Այստեղ կըսպասեմ
Իմ ճակատագրին — կեանք լինի, թէ մահ։
Ի՞նչ։ Դորա՞ համար յոյսս դրել էի
Այս վայրկենի վրայ, որ ձեզ վերջապէս
Պարգևում է ինձ առանց վկայի,
Որ սուտ երկիւղով խաբուիմ, հասնելով
Իմ նպատակին։ Ո՛չ, Թագուհի՛, ո՛չ։
Հարիւր ու հազար անգամ կը դառնայ
Աշխարհը դուցէ բևեռների վրայ,
Քան թէ կը կրկնէ բաղդն այս շնորհը։

ԹԱԳՈՒՀԻ

Այո՛, յաւիտեան նա այդ չի կրկնի։
Տարաբա՛ղդ, ի՞նչ էք ուզում ինձանից։

ԿԱՐԼՈՍ

Ո՛հ, Թագուհի՛, որ ես մաքառել եմ,
Մաքառել, ինչպէս մի մահկանացու
Դեռ չէ մաքառել, վկաս Աստուած է —
Թագուհի, ի զո՛ւր։ Ես էլ ոյժ չունիմ։
Ես թուլացել եմ։

ԹԱԳՈՒՀԻ

Հերի՞ք է, լռեցէ՛ք —
Մի՛ վրդովէք իմ խաղաղութիւնը։—

ԿԱՐԼՈՍ

Ի՛մն էիք — բոլոր աշխարհի առաջ
Ինձ նշանակուած երկու տէրութեան
Դաշնադրութեամբը։ Իմը ճանաչուած
Երկնքից նոյնպէս և բնութենից.
Եւ Փիլիպպոսը խլեց ձեզ ինձնից։

ԹԱԳՈՒՀԻ

Նա ձեր հայրն է։

ԿԱՐԼՈՍ

Եւ ձեր ամուսինը։

ԹԱԳՈՒՀԻ

Որից ամենից մեծ տէրութիւնը
Աշխարհիս վերայ դուք կը ժառանգէք։

ԿԱՐԼՈՍ

Եւ ձեզ էլ ինձ մայր։

ԹԱԳՈՒՀԻ

Աստուած իմ, Աստուած —
Դուք կատաղում էք։

ԿԱՐԼՈՍ

Արդեօք գիտէ՞ նա,
Որքան հարուստ է։ Ունի՞ սիրտ ձերը
Գնահատելու։ Ո՛չ, չեմ գանգատի։
Ես կը մոռանամ, ինչպէս բաղդաւոր
Կապրէի ձեզ հետ — եթէ միայն նա
Բաղդաւոր լինէր։ Նա բաղդաւոր չէ —
Ահա՛, այս է, այս դժոխային տանջանք։
Նա բաղդաւոր չէ և չէ լինելու։
Դու միայն ինձնից առար երկինքս,
Որ Փիլիպպոսի ծոցում փչացնես։

ԹԱԳՈՒՀԻ

Ի՞նչ գարշելի միտք։

ԿԱՐԼՈՍ

Ո՛հ, գիտեմ ով էր
Այս ամուսնութեան կապողը — գիտեմ,
Թէ Փիլիպպոսը ինչպէս է սիրում,
Եւ թէ ինչպէս է նա հարսնախօսել։
Արդեօք ո՞վ էք դուք այս տէրութեան մէջ.
Թագուհի՞։ Երբէ՞ք։ Թէ Թագուհի էք,
Ի՞նչպէս են անում Ալբաներն այսքան
Գաղանութիւններ։ Ինչի՞ Ֆլանդրիան
Արիւն է թափում հաւատի համար։

Կամ կարելի է թէ Փիլիպպոսի
Կինն էք դուք։ Ո՛չ, ո՛չ, անկարելի է։
Ես չեմ հաւատում։ Այր մարդու սիրտը
Կնոջն է պատկանում. Փիլիպպոսինն ոչ մ։
Եւ փայփայանքը, որ նա երբեմն
Ձեզ ընծայում է, պիտի չըմուրայ
Իւր գայիսոնից և ալիքներից։

ԹԱԳՈՒՀԻ

Ձեզ ո՞վ է ասել, թէ իմ վիճակը
Փիլիպպոսի հետ արտասուելի է։

ԿԱՐԼՈՍ

Իմ սիրտը, որ ջերմ զգում է, թէ ինչպէս
Ինձ հետ կը լինէր նա նախանձելի։

ԹԱԳՈՒՀԻ

Ինքնահաւան դու։ Եթէ իմը ինձ
Հակառակն ասէ։ Եթէ Փիլիպպի
Մեծարողական քնքուշութիւնը
Եւ նորա սիրոյ մինչև նշանը
Աւելի լինի շարժում ինձ, քան թէ
Նորա մեծամիտ որդու յանդուգն
Պերճախօսութիւնն։ Եթէ ծերունու
Ցարդանքը —

ԿԱՐԼՈՍ

Այո՛։ Այդ ուրիշ բան է —
Այո՛ — ի հարկէ — խնդրում եմ — ներէք —
Ես չը գիտէի — Այդ չը գիտէի,
Որ թագաւորին այդքան սիրում էք։

ԹԱԳՈՒՀԻ

Ես բոլոր սրտով յարգում եմ նորան։

ԿԱՐԼՈՍ

Ձէ՞ք սիրել երբէք։

ԹԱԳՈՒՀԻ

Զարմանալի՞ հարց։

ԿԱՐԼՈՍ

Ձէ՞ք սիրել երբէք։

ԹԱԳՈՒՀԻ

— Այժմ էլ չեմ սիրում։

ԿԱՐԼՈՍ

Որովհետև ձեզ ձեր սիրտն ու ուխտը
Արգելումեն այդ։

ԹԱԳՈՒՀԻ

Հեռացէք, իշխան,
Եւ ուրիշ անգամ չը գաք այդ մասին
Ինձ հետ խօսելու։

ԿԱՐԼՈՍ

Որովհետև ձեզ
Ձեր սիրտն ու ուխտը արգելումեն այդ։

ԹԱԳՈՒՀԻ

Պարտքս — Տարաբաղդ, ի՞նչ հարկաւոր է
Քննել մեզ բաղդի որոշումները,
Որոնց դուք և ես պիտի հնազանդուինք։

ԿԱՐԼՈՍ

Պիտի հնազանդի՞նք, պիտի հնազանդի՞նք։

ԹԱԳՈՒՀԻ

Ի՞նչ էք կամենում դորանով ասել։

ԿԱՐԼՈՍ

Այն, որ Կարլոսը էլ չի հնազանդի,
Երբ որ կարող է իւր ուզածն անել։
Այն, որ Կարլոսը էլ չէ կամենում
Ամենադժբաղդ մնալ այս երկրում,
Երբ միայն պէտք է նրան օրէնքը քանդել,
Որ նա ամենից բաղդաւոր լինի։

ԹԱԳՈՒՀԻ

Արդեօք հասկացայ։ Դուք դեռ յոյս ունիք,
Երբ որ ամեն բան արդէն կորած է։

ԿԱՐԼՈՍ

Մեռելներն եմ միայն կորած համարում:

ԹԱԳՈՒՀԻ

Ինձ վրա՞յ, ձեր մոր վրա՞յ էք դուք այս դնում:

(Նա ձգում է նորա վրայ երկար, թափանցող հայեացք — յետոյ վսեմ և ծանր կերպով)

Այո՛, ինչի՞ չէ: Նորընտիր արքան
Շատ բան կարող է — կարող է կրակին
Տալ հանգուցեալի դրած օրէնքները,
Ոտի տակ առնել նորա պատկերը:
Կարող է նոյնպէս — արդեւոնն ո՞վ է —
Նա էսկուրիալի լուռ կամարներից
Նորա զմրսած դիակը հանել,
Ցոյց տալ արեւին, քամուն տալ նորա
Անարգուած փոշին: Ցետոյ վերջապէս
Գործը լրացնելով փառաւորապէս —

ԿԱՐԼՈՍ

Ի սէր Աստուծոյ, մի՛, մի՛ ասէք այդ:

ԹԱԳՈՒՀԻ

Ցետոյ վերջապէս մոր հետ պսակուիլ:

ԿԱՐԼՈՍ

Անիծա՛ծ որդի:

(Մի վայրկենի չափ մնում է քարացած և լուռ)

Այո՛, վերջացաւ:
Այժմ վերջացաւ: — Ես պարզ տեսնում եմ,
Ինչ որ յաւիտեան պիտի մութ մնար:
Դուք այսուհետև չըկաք ինձ համար —
Չը կաք — էլ չըկաք — Բաղդը որոշեց,
Եւ դուք ինձ համար անդարձ կորած էք —
Ո՛հ, այս զգացմունքը դժոխք է ամփոփում —
Բայց դժոխք կայ նոյնպէս և ձեզ սիրելում —
Վա՛յ ինձ, չեմ կարող ես այս ըմբռնել.
Զղերս կարծես թէ կտրատվում են:

ԹԱԳՈՒՀԻ

Անբաղդ, թանգագին Կարլոս։ Ես զգում եմ —
Զգում բոլորովին այդ անասելի
Տանջանքը, որ ձեր կուրծքը մաշում է։
Ձեր ցաւն անչափ է, ինչպէս և սէրը,
Բայց նրան յաղթելու փառքն էլ անչափ է.
Ստացէք այդ փառքը, պատանի՛ դիւցազն,
Վարձն արժանի է վեհ մարտնչողին,
Արժանի է այն երիտասարդին,
Որի սրտի մէջ դեռ վառ է այնքան
Անմահ պապերի առաքինութիւնն։
Քաջալերուեցէք, իմ ազնիւ իշխան։
Մեծն Կարլոսի թոռը սկսում է
Վստահ մաքառել, երբ որ այլ մարդկանց
Երկչոտ որդիքը թուլասրտվում են։

ԿԱՐԼՈՍ

Ո՛հ, արդէն ուշ է, Աստուած իմ, ուշ է։

ԹԱԳՈՒՀԻ

Ա՞յր լինել։ Կարլոս, որքան մեծ է մեր
Առաքինութիւնն, երբ կոտրվում է
Նրա տակ մեր սիրտը։ Ձեզ բարձր է դրել
Երկինքը, իշխան — շատ բարձր, քան թէ
Ձեր եղբայրներից բիւրաւորներին։
Կողմնապահութեամբ նա իւր սիրածին
Տուել է այն, ինչ որ խլել է միւսներից։
Եւ միլիոնաւոր մարդիկ հարցնում են.
Մի՞թէ նա արդէն իւր մօր արգանդում
Արժանի էր միւս հողեղէններից
Նախադասուելու։ Իշխան, երկնքի
Կամքն արդարացրէք։ Արժանացէք գնալ
Մարդկութեան առաջ։ Զոհեցէք, ինչ որ.
Ոչ ոք զոհել չէ։

ԿԱՐԼՈՍ

Ես այդ կարող եմ —

Ձեզ ըստանալու հսկայական ոյժ
Ունիմ. կորցնելու, ամենևին ոչ:

ԹԱԳՈՒՀԻ

Խոստովանեցէք, Կարլոս — նախանձը,
Ցամառութիւնն ու հպարտութիւնը
Բորբոքումեն ձեր կիրքը մեր համար:
Այդ սէրն ու սիրտը, որ դուք շռայլաբար
Ինձ զոհ էք բերում, պատկանումեն այն
Տէրութիւններին, որոնց երբեմն
Կըկառավարէք: Մի՛ վատնէք դուք ձեր
Սաների կայքը: Սէրը սրբազան
Պարտք է ձեզ համար: Մինչև այժմ նա
Մօր կողմն էր շեղվում — Տուէ՛ք, ո՛հ, տուէ՛ք
Այն ձեր ապագայ տէրութիւններին,
Եւ զգայէք խղճի սրերի փոխանակ
Աստուած լինելու երանութիւնը:
Էլիսաբէթն էր ձեր սէրն անդրանիկ,
Ձեր երկրորդ սէրը լինի Սպանիան:
Ի՞նչ ուրախութեամբ ես յետ կը քաշուեմ,
Կարլոս, ձեր աղնիւ սիրուհու առաջ:

ԿԱՐԼՈՍ

(սաստիկ շարժած ընկնում է նորա առաջ)

Ո՛հ, որքան մեծ էք, երկնայի՞ն էակ —
Այո՛, բոլորը, բոլորը, ինչ որ
Դուք պահանջում էք, ես կը կատարեմ —

(վեր է կենում)

Ամենակալի առաջը կանգնած
Երդվում եմ, երդվում յաւիտենական —
Ո՛հ, երկինք, ո՛չ, ո՛չ, յաւիտենական
Միայն լռութիւն, ո՛չ մոռացութիւն:

ԹԱԳՈՒՀԻ

Ի՞նչպէս պահանջեմ Կարլոսից, ինչ որ
Ինքս էլ կարող չեմ:

ՄԱՐԿԻԶ

(չտապով դուրս դալով ճեմելիքից)

Արքա՛ն։

ԹԱԳՈՒՀԻ

Աստուա՛ծ իմ։

ՄԱՐԿԻԶ

Իշխա՛ն, հեռացէ՛ք շուտով այստեղից։

ԹԱԳՈՒՀԻ

Նորա կասկածը սարսափելի է,
եթէ տեսնէ ձեզ —

ԿԱՐԼՈՍ

Այստեղ կըմնա՛մ։

ԹԱԳՈՒՀԻ

Բայց ո՞վ կըզոհուի

ԿԱՐԼՈՍ (բռնելով մարկիզի ձեռից)

Գնա՛նք, գնա՛նք, Օդրի՛գո։

(նա գնում է և էլի յետ է դառնում)

Ի՞նչ տանեմ հետս։

ԹԱԳՈՒՀԻ

Տարէ՛ք մեր անկեղծ
Բարեկամութի՛ւն

ԿԱՐԼՈՍ

Բարեկամութի՛ւն
Մայր

ԹԱԳՈՒՀԻ

Եւ Ֆլանդրիայի այս արտասուքը։

(Ցալիս է նորան մի քանի նամակներ։ Կարլոսը և մարկիզը դուրս են գնում։ Թագուհին անհանգիստ նայում է իւր չորս կողմը, որոնելով իւր նաժիշտներին, որոնք ոչ մի տեղ չեն երևում։ Այն ինչ նա ուզում է հեռանալ քեմի ետևի կողմը, մտնում է Թագաւորը)

ՎԵՑԵՐՈՐԴ ԵՐԵԽՈՑԹ

ՓԻԼԻՊՊՈՍ ԹԱԳԱՒՈՐ, ԴՈՒՔՍ ԱԼԲԱ, ԿՈՄՍ ԼԷՐՄԱ, ԴՕՄԻՆԳՕ. *մի քանի տիկիններ և իշխաններ, որոնք մնում են մի փոքր հեռու,*

ԹԱԳԱՒՈՐ

(զարմացած նայում է իւր չորս կողմը և կարճ ժամանակ լռում է)

Այդպէս մենա՞կ էք, տիկի՛ն, և մի կին
Զուն՞էք ձեզ ընկեր։ Ես զարմանում եմ—
Ո՞ւր են գնացել ձեր նաժիշտները։

ԹԱԳՈՒՀԻ

Իմ տէր ամուսին—

ԹԱԳԱՒՈՐ

Ինչ՞ մենակ էք

(իւր հետևորդներին)

Այս աննկարելի սխալանքի մասին
Ճիշդ հաշիւ տալ ինձ։ Ո՞վ է հերթակալ,
Այսօր թագուհուն ո՞վ է ծառայում։

ԹԱԳՈՒՀԻ

Ո՛հ, մի՛ բարկանաք, իմ ամուսին — ես
Ես եմ մեղաւոր — — իմ հրամանովն է
Հեռացել Եբօլի իշխանուհին։

ԹԱԳԱՒՈՐ

Ձեր հրամանո՞վն է —

ԹԱԳՈՒՀԻ

Կանչել դայեակին.
Սիրտս կարօտեց Ինֆանտինային։

ԹԱԳԱՒՈՐ

Եւ դորա համար ձեր նաժիշտներին
Հեռացրի՞ք։ Բայց այդ առաջինին միայն
Արդարացնում է։ Ո՞ւր էր երկրորդը։

ՄՕՆԴԷԿԱՐ

(որ այդ միջոցին վերադառնալով խառնուել է միւս տիկիններին հետ, առաջ է գալիս)

Տէր արքայ, զգում եմ, որ յանցաւոր եմ։

ԹԱԳԱՒՈՐ

Դորա համար ձեզ տալիս եմ տասը
Տարի ժամանակ Մադրիդից հեռու
Մտածել այդ մասին։

(Մարկիզուհին լալով յետ է դնում։ Ընդհանուր լռութիւն։ Բոլոր ներկայ եղող անձինք տարակուսած նայում են թագուհու վերայ)

ԹԱԳՈՒՀԻ

Ո՞ւմ համար էք դուք
Լալիս, Մօնդէկար։

(Թագաւորին)

Տէր իմ, եթէ որ
Ես յանցաւոր եմ, պէտք է այս թագը,
Որ ես կրումեմ և որ ձեռք բերել
Երբէք չեմ ձգտել, ինձ կարմրելուց
Գոնէ պաշտպանէր։ Արդեօք կա՞յ օրէնք
Այս տէրութեան մէջ, որ դատի կանչէ
Մի ինքնակալն աղջկան։ Միթէ
Բանութիւնն է միայն Սպանիայի մէջ
Կանանց պաշտպանը և ոչ թէ նոցա
Անվնասութիւնը։ Այժմ ներեցէք
Ինձ, իմ ամուսին — Ես սովորած չեմ
Արտասուք աչքում արձակել ինձնից,
Որոնք ջերմեռանդ ծառայել են ինձ —
Մօնդէկար, եկէք։

(առնում է իւր գօտին և տալիս է մարկիզուհուն)

Դուք թագաւորին
Բարկացրիք — ոչ ինձ — ընդունեցէք այս
Իբրև յիշատակ իմ համակրութեան,
Եւ ներկայ ժամիս — գնացէք այս երկրից —
Դուք Սպանիայում միայն մեղանչել էք,
Իմ Ֆրանսիայում սիրով կըսրբեն
Ձեր արտասուքը — Ո՛հ, միշտ պիտ՝ յիշեմ։

(Նա գլուխը թեքում է մեծ սենեկապետուհու կուրծքին և ծածկում է երեսը)

Աւա՜ղ, այսպէս չէր իմ Ֆրանսիայում։

ԹԱԳԱՒՈՐ

Միթէ ցաւեցրե՞ց ձեր սիրտն իմ սիրոյ
Ցանդիմանութիւնն — մի բառ, որ դրեց
Շրթունքներիս վրայ ամենաքնքուշ
Հոգացողութիւնն.

(դառնալով իշխաններին)

Այստեղ կանգնած են
Իմ իշխանները։ Արդեօք իջնե՞լ է
Քունն աչքերիս վրայ, մինչև չեմ հաշուել
Ամեն երեկոյ ժողովուրդներիս
Սրտերի զարկը — Մի՞թէ աւելի
Պիտի վախենամ ես գահիս համար,
Քան թէ իմ սրտի ամուսնու համար —
Հպատակներիս համար իմ սուրն է
Ինձ երաշխաւոր և — Ալլա դուքսը.
Ամուսնուս սիրոյ համար — այս աչքը։

ԹԱԳՈՒՀԻ

Տէր իմ, եթէ ձեզ վերաւորեցի՝—

ԹԱԳԱՒՈՐ

Ամենահարուստ մարդն եմ համարվում
Քրիստոնէական ամբողջ աշխարհում։
Երբէք արեգակը մայր չէ մտնում
Իմ տէրութեան մէջ — Բայց այս բոլորը
Ուրիշն էլ ունէր. ինձանից յետոյ
Էլի շատերը կունենան։ Այս է
Իմ սեփականը։ Բաղդինն է, ինչ որ
Թագաւորն ունի — փիլիպպոսինը
Էլիսաբէթն է։ Ահա՛ այստեղ ես
Մահկանացու եմ։

ԹԱԳՈՒՀԻ

Տէր, վախենո՞ւմ էք

ԹԱԳԱՒՈՐ

Այս ալեքներից։ Երբ որ վախենալ
Սկսեմ, իմացէք, որ վախենալուց
Ես դադարել եմ։ —
(Իշխաններին)
Իմ իշխանները
Այս տեղն — չըկայ միայն առաջինը։
Ո՞ւր է Դօն Կարլոս։
(ոչ ոք չէ պատասխանում)
Այդ տղան իմ սրտում
Երկիւղ է ձգում։ Ինչ որ եկել է
Նա Ալկալայից, միշտ փախչում է իմ
Ներկայութենից։ Նորա արիւնը
Տաք է, ի՞նչ այդպէս սառն է հայեացքը,
Հանդիսաւոր և չափած շարժուածքը։
Արթուն եղէք. ձեզ եմ յանձնում Նորան։

ԱԼԲԱ

Արթուն եմ։ Քանի որ այս զրահի տակ
Մի սիրտ է զարկում, Դօն Փիլիպպոսը
Կարող է հանգիստ քուն մտնել։ Ինչպէս
Աստուծոյ քերովբէն դրախտի դռանը,
Դուքս Ալբան գահին է պահապանը։

ԼԷՐՄԱ

Կարո՞ղ եմ արդեօք ամենիմաստուն
Արքային յայտնել նուաստ կարծիքս —
Իմ թագաւորի մեծութիւնը ես
Այնչափ պաշտում եմ, որ Նորա որդուն
Չեմ կարող այդպէս շուտ և խիստ դատել։
Ես վախենում եմ Կարլոս իշխանի
Տաք արիւնից, բայց ոչ Նորա սրտից։

ԹԱԳԱՒՈՐ

Կոմս Լէրմա, այդպէս սիրուն խօսքերով
Դուք կամենում էք կաշառել հօրը։
Նեցուկս դուքսն է — էլ բան մի՛ ասէք։ —
(դառնալով իւր հետևորդներին)

Այժմ շտապում եմ Մադրիդ։ Սրբազան
Պարտքս կանչում է։ Հերձուածն ամեն տեղ
Վարակում է իմ հպատակներին։
Նիդերլանդիս մէջ խռովութիւնն աճում։
Իսկ ժամանակն է։ Մի սարսափելի
Օրինակ պէտք է մոլորուածներին
Դարձնելու համար։ Ես կրկատարեմ
Վաղը քրիստոնէայ թագաւորների
Մեծ և սուրբ ուխտը։ Այս դատաստանը
Շատ խիստ կրլինի և անօրինակ։
Բոլոր պալատս արդէն կանչուած է։
(դուրս է տանում թագուհուն. միւսները հետևում են)

ԵՕԹՆԵՐՈՐԴ ԵՐԵԻՈՑԹ

ԴՕՆ ԿԱՐԼՈՍ, ձեռին նամակներ. ՄԱՐԿԻԶ ՊՕԶԱ, գալիս են հակառակ կողմից.

ԿԱՐԼՈՍ

Արդէն վճռել եմ։ Ֆլանդրիան թող փրկուի։
Նա կամենում է — Այդ ինձ հերիք է։

ՄԱՐԿԻԶ

Եւ էլ կորցնելու ժամանակ չըկայ։
Դուքս Ալբան արդէն նշանակուած է
Այնտեղ կուսակալ։

ԿԱՐԼՈՍ

Էգուց ես հօրս
Կըներկայանամ, և ինձ համար մի
Պաշտօն կրխնդրեմ։ Սա իմ առաջին
Խնդիրքն է, որ ես ուղղում եմ նորան։
Կարող չէ մերժել։ Վաղուց է, որ նա
Ակամայ է ինձ տեսնում Մադրիդում։
Ի՞նչ լաւ միջոց է ինձ հեռացնելու։
Եւ — խոստովանիմ, Բոդրի՛գօ, ուրիշ

Շատ յոյսեր ունիմ — գուցէ յաջողի,
Երես առ երես հետը խօսելով,
Գրաւել նորա համակրութիւնը։
Երբէք լսել չէ նա բնութեան ձայնը —
Արի կըփորձեմ, տեսնենք որքան ոյժ
Կունենայ նա իմ շրթունքների վրայ։

ՄԱՐԿԻԶ

Ահա՛ վերջապէս խօսեց Կարլոսս։
Այժմ ես կրկին ճանաչեցի ձեզ։

ՈՒԹԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՑԹ

ԱՌԱՋԻՆՆԵՐԸ, ԿՈՄՍ ԼԷՐՄԱ։

ԼԷՐՄԱ

Նոր թողեց արքան Արանջուէցը։
Ես հրաման ունիմ —

ԿԱՐԼՈՍ

Շատ լաւ, Կոմս Լէրմա։
Ես յետ չեմ մնայ։

ՄԱՐԿԻԶ

(ուզում է գնալ. պաշտօնական ձևով)
Էլի բան ունի՞ք
Ինձ հրամայելու, ողորմած իշխան։

ԿԱՐԼՈՍ

Էլ ոչ ինչ, Մարկիզ։ Ես ցանկանում եմ
Որ յաջողութեամբ հասնէք դուք Մադրիդ։
Այնտեղ ինձ էլի շատ բան կը պատմէք
Ֆլանդրիայի մասին։
(Կոմս Լէրմային, որ դեռ սպասում է)
Իսկոյն գալիս եմ։
(Կոմս Լէրման դուրս է գնում)

ԻՆՆԵՐՈՐԴ ԵՐԵԻՈՑԹ

ԴՈՆ ԿԱՐԼՈՍ, ՄԱՐԿԻԶ ՊՈԶԱ.

ԿԱՐԼՈՍ

Ես քեզ հասկացայ, և շնորհակալ եմ:
Բայց այս ստիպմունքը արդարացնում է
Մի երրորդ անձի ներկայութիւնը:
Միթէ եղբայր չէ՞նք — Աստիճանների
Կատակախաղը հեռու մեր միջից:
Երևակայիր, թէ մենք երկուսս
Դիմակաւորուած եկել ենք հանդէս.
Դու սորկի շորով, իսկ ես հաճոյքից
Թագաւորի պէս զարդարել եմ ինձ:
Քանի հանդէսը շարունակվում է,
Հաւատարիմ ենք մենք մեր դերերին,
Եւ ծիծաղելի ծանրութեամբ խաղում,
Որ ուրախակից լինինք ամբոխին.
Բայց քեզ Կարլոսդ նշան է տալիս
Դիմակի տակից, և դու անցնելիս
Սխմում ես ձեռս: Իրար հասկացանք:

ՄԱՐԿԻԶ

Աքանչելի՛ երաշ, եթէ միշտ տևէ:
Այդքան վստա՞հ է Կարլոսս դիմնալ
Ինքնակալութեան հրապոյրների դէմ,
Դեռ մէկ մեծ օր կայ ձեր առաջ — մէկ օր —
Ես կը յիշեցնեմ — երբ դիւցազնական
Այդ ոգին կընկնի ծանր փորձի տակ:
Դոն Փիլիպպոսը փչում է հոգին.
Քրիստոնէութեան առաջին դահը
Ստանում Կարլոսը — Մի ահագին վիհ
Բաժնում է նրան միւս հողեղէններից:
Եւ աստուած է նա, ով երեկ մարդ էր.
Այնուհետև նա անսխալական է,

Յաւիտենական պարտքերը լռում են.
Եւ մարդկութիւնը — այսօր դեռ սուրբ բառ
Նորա ականջին — ինքն իրան ծախած,
Նուաստ սողում է իւր կուռքի առաջ:
Յաւի հետ անցնում ցաւակցութիւնը:
Փափուկ, զեղխ կեանքը խեղդում է նորա
Առաքինութիւնն: Պէրուն նրա անմիտ
Ծախսերի համար տալիս է ոսկի:
Նորա ախտերին բուրվառ է ձգում
Նորա պալատը: Նա անոյշ քնում է
Իւր նենգ ստրուկներից ստեղծած երկնքում:
Երազ է նորա աստուածութիւնը —
Վա՛յ խելագարին, որ նրան զարթեցնէ:
Բայց ձեր Բոդրի՞գօն — Բարեկամութիւնն
Ճշմարտախօս է և միշտ համարձակ.
Թոյլ մեծութիւնը կարող չէ տանել
Նրա ճառագայթին: Դուք չէք համբերի
Մի քաղաքացու յանդգնութեանը,
Իսկ ես — իշխանի հպարտութեանը:

ԿԱՐԼՈՍ

Շատ ճշմարիտ է և զարհուրելի
Նկարագիրդ մի ինքնակալի:
Հաւատում եմ քեզ — բայց փափկութիւնն է
Մատնում նրա սիրտը մոլութիւններին:
Ես դեռ մաքուր եմ. քսաներեք տարիս
Նոր է լրացել: Ինչ որ ուրիշներն
Անխնայ փչացրել են անառակութեան
Գարշելի ծոցում, հոգու լաւ կէսը,
Այրական ոյժը, ես այդ պահել եմ
Իշխանի համար: Ո՞վ կարող է մեզ
Միմեանցից բաժնել, եթէ ոչ կանայք:

ՄԱՐԿԻԶ

Ես ինքս: Ի՞նչպէս սիրեմ ձեզ, կարլոս,
Երբ որ ձեզանից պիտի վախենամ:

ԿԱՐԼՈՍ

Այդ լինելու չէ։ Կարո՞ղ ես դու ինձ։
Միթէ քո սրտում կա՞ն գահի առաջ
Մուրացող կրքեր։ Ոսկի՞ ես ուզում։
Իբրև հպատակ դու շատ հարուստ ես,
Քան թէ կը լինիմ ես իբրև արքայ—
Պատի՞ւ ես ուզում։ Իբրև պատանի
Արդէն սպառել ես դու նորա չափը
Եւ—դէն ես ձգել։ Ուրեմն ո՞վ է
Մեզնից լինելու միւսին պարտական—
Դու լուռ ես։ Ինքդ—ինքդ դողում ես
Փորձութեան առաջ։ Քեզ վրայ վստահ չես։

ՄԱՐԿԻԶ

Լա՛ւ։ Ես յաղթուած եմ։ Ահա իմ ձեռը։

ԿԱՐԼՈՍ

Ուրեմն ի՞մն ես։

ՄԱՐԿԻԶ

Այո՛, յաւիտեան։

ԿԱՐԼՈՍ

Ինչպէս որ հիմա հաւատարիմ ես
Իշխանին, յետոյ արքայի՞ն նոյնպէս։

ՄԱՐԿԻԶ

Երդվում եմ ձեզ այդ։

ԿԱՐԼՈՍ

Եւ այն ժամանակ,
Երբ սիրտս մտնի շողոքորթութեան
Որդունքը—երբ որ աչքս մոռանայ
Արտասուք թափել—ականջս խփուի
Աղերսանքներին, արթուն պահապան
Կը լինի՞ս դու իմ առաքինութեան,
Պինդ կը ցնցի՞ս ինձ, կը կանչե՞ս ոգիս
Իւր մեծ անունով։

ՄԱՐԿԻԶ

Այո՛։

ԿԱՐԼՈՍ

Լա՛ւ։ Հիմա

Էլի մի խնդիրք։ Ինձ միշտ «դու» ասա։
Միշտ նախանձել եմ քեզ նմանների
Բարեկամական այդ իրաւունքին։
Այդ «դուն» խաբում է սիրտս ու ականջս
Հաւասարութեան քաղցր զգացմունքով —
Մի՛ հակառակիր — ես գիտեմ, ինչ որ
Ուզում ես ասել։ Քեզ համար, գիտեմ,
Դա ոչինչ բան է, բայց ինձ համար, շատ.
Ուզո՞ւմ ես լինիլ դու իմ եղբայրը։

ՄԱՐԿԻԶ

Եղբայրդ եմ.

ԿԱՐԼՈՍ

Հիմա կերթամ հօրս մօտ։
Էլ չեմ վախենում։ Քեզ հետ միասին
Անվախ կը կանչեմ դարս ասպարէզ։
(դուրս են գնում)

ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

թագաւորական պալատը Մադրիդում

ԱՌԱՋԻՆ ԵՐԵՒՈՅԹ

ՓԻԼԻՊՊՈՍ ԹԱԳԱՒՈՐ, *գահի վերայ.* ԴՈՒՔՍ ԱԼԲԱ, *թագաւորից մի փոքր հեռու, գլուխը ծածկած.* ԿԱՐԼՈՍ.

ԿԱՐԼՈՍ

Պետութիւնը միշտ նախապատիւ է.
Առաջին քայլը նախարարինն է:
Նա Սպանիայի համար է խօսում —
Ես տան որդի եմ:

(գլուխ է տալիս և յետ է կանգնում)

ՓԻԼԻՊՊՈՍ

Դուքսը կրմնայ,
Իշխանը խօսի:

ԿԱՐԼՈՍ (*դառնալով Ալբային*)

Ուրեմն ես ձեր
Վեհանձնութենից, դուքս, պէտք է խնդրեմ
Արքան ինձ պարգև: Որդին — գիտէք որ —
Շատ բան կարող է խօսել իւր հօր հետ,
Ինչ որ երրորդին պէտք չէ իմանալ:
Արքան ձեզ կրմնայ — Ես միայն իմ հօր հետ
Մի կարճ ժամանակ ուզում եմ մնալ:

ՓԻԼԻՊՊՈՍ

Նա բարեկամն է:

ԿԱՐԼՈՍ

Բայց արժանի՞ եմ

Արդեօք համարել դքսին և իմը։

ՓԻԼԻՊՊՈՍ

Եւ կարժանանա՞ս։—Հաւանելի չեն
Ինձ այն որդիքը, որոնք անում են
Լաւ ընտրութիւններ, քան թէ հայրերը։

ԿԱՐԼՈՍ

Եւ այս կարող է լսել Ալբայի
Ազնվութի՞ւնը։ Արևս վկայ,
Երբէք չէի խաղայ այն մարդու դերը,
Որ չէ ամաչում անկոչ խառնուել
Հօր ու որդու մէջ. որ զգալով իւր
Ոչնչութիւնը, այդպէս կանդնում է—
Զէ, Աստուած վկայ, թէ և վաստակս
Լինէր և մի թագ—

ՓԻԼԻՊՊՈՍ

(Թողնում է իւր տեղը, մի սպառնալի հայեացք ձգելով իշխանի վերայ)
Հեռացէ՛ք, դո՛ւքս։
(սա գնում է դէպի ետեի դուռը, որով մտել է Կարլոսը, թագաւորը նշանով ցոյց է տալիս միւս դուռը)
Ո՛չ,
Առանձնարանս. մինչև ձեզ կանչեմ։

ԵՐԿՐՈՐԴ ԵՐԵԽՈՑԹ

ՓԻԼԻՊՊՈՍ ԹԱԳԱՒՈՐ, ԴՕՆ ԿԱՐԼՈՍ

ԿԱՐԼՈՍ

(հենց որ դուքսը թողնում է սենեակը, մօտենում է թագաւորին և սաստիկ շարժած, ընկնում է նորա առաջ)

Ահա այժմ կրկին իմ հայրն էք—Իմը,
Եւ ամենաջերմ շնորհակալութիւն
Այս շնորհի համար։—Հա՛յր իմ, ձեր ձեռը—
Ո՛հ, երջանի՞կ օր։—Այս քաղցր համբոյրից
Վաղուց զրկուած էր ձեր որդին։ Ինչի՞

Այսքան ժամանակ հեռացնում էիք,
Հայր, ինձ ձեր սրտից։ Ես ի՞նչ եմ արել։

ՓԻԼԻՊՊՈՍ

Իշխան, քո սիրտը այդ հնարքներին
Ծանոթ չէ. թող մնան։ Ես չեմ կամենում։

ԿԱՐԼՈՍ

Ես այդ գիտէի։ Այդ ձեր պալատի
Մարդկանց կարծիքն է։— Հայր իմ, հայր, լաւ չէ,
Չէ, Աստուած վկայ, բոլորը լաւ չէ,
Ինչ որ աբեղան ասում է, ինչ որ
Ասում են նորա արբանեակները։
Ես վատ չեմ, հայր իմ։ — Այս տաք արիւնն է
Իմ չարութիւնը, և իմ յանցանքն է
Իմ մանկութիւնը։ Ես վատ չեմ, վատ չեմ,
Հաւատացէ՛ք ինձ, թէ և շատ անգամ
Սաստիկ յուզմունքներ ամբաստանում են
Իմ բարի սիրտը։—

ՓԻԼԻՊՊՈՍ

Սիրտդ մաքուր է,
Ինչպէս աղօթքդ. այդ ինձ յայտնի է։

ԿՈՐԼՈՍ

Ա՛յժմ, կամ երբէք — Հայր, մենք մենակ ենք։
Պալատածիսի պինդ անջրպետով
Էլ բաժանուած չէ որդին իւր հօրից։
Ա՛յժմ, կամ երբէք։ Մի արևափայլ
Ճառագայթ յուսոյ լուսաւորում է
Հոգիս և մի քաղցր նախազգացութիւն
Ցնցում է սիրտս — Բոլոր երկինքը
Իւր հրեշտակների զուարթ խմբերով
Եւ ամենասուրբ Էակը բարձրից
Ահա՛ զմայլում են վսեմ և գեղեցիկ
Այս տեսարանով։— Հայր իմ, հաշտութիւն։

(ընկնում է նորա ոտները)

ՓԻԼԻՊՊՈՍ

Թող ինձ և վեր կաց։

ԿԱՐԼՈՍ

Հայր իմ, հաշտութիւն։

ՓԻԼԻՊՊՈՍ

(կամենում է նորանից խլուել)

Ինձ շատ յանդուգն է թվում այս խաղը։—

ԿԱՐԼՈՍ

Ցանդուգն է թվում զաւակիդ սէրը։

ՓԻԼԻՊՊՈՍ

Արտասուք։ Ո՛հ, ի՞նչ զզուելի տեսիլ—
Հեռու իմ աչքից։

ԿԱՐԼՈՍ

Ա՛յժմ, կամ երբէք —
Հայր իմ, հաշտութիւն։

ՓԻԼԻՊՊՈՍ

Հեռու իմ աչքից։
Ամօթով ծածկուած յետ դառիր
Դու իմ պատերազմներից, զիրկս կը բանամ
Քեզ ընդունելու — Այդտէս մերժում եմ—
Երկչոտ յանցանքը միայն կը լուացուի
Այդ ամօթալի աղբիւրի ջրով։
Ով չէ կարմրում զղջալուց, երբէք
Չի փախչի նրանից։

ԿԱՐԼՈՍ

Արդեօք ո՞վ է սա.
Ո՞ր սխալմամբ է այս օտարականը
Խառնուել մարդկանց մէջ— Ցաւիտենական
Վկայութիւնը մարդկութեան չէ՞ որ
Արտասուքներն են։ Սորա աչքերը
Ցամաք են, սա մի կնոջ ծնունդ չէ—
Ո՛հ, թող վաղօրօք երբէք չըթրջուած
Աչքերդ սովրին արտասուք թափել։

Թէ չէ, գուցէ դուք մի ծանր ժամում
Անցեալի համար ևս արտասուիք:

ՓԻԼԻՊՊՈՍ

Միթէ կարծում ես սիրուն խոսքերով
Կարող ես խախտել հօրդ կասկածը:

ԿԱՐԼՈՍ

Ես կոչնչացնեմ, հայր, այդ կասկածը —
Ես պինդ կը կպչեմ հայրական սրտին,
Սաստիկ կը քաշեմ, մինչև այդ սրտից
Ես վեր կը ձգեմ այդ ծանր կասկածի
Քարէ կեղևը: — Ովքե՞ր են, որոնք
Ինձ իմ արքայի շնորհից զրկում են:
Ի՞նչ առաջարկեց աբեղան հօրը
Որդու փոխարէն: Ի՞նչ տրիտուր պիտի
Ալքան նորան տայ անզաւակ վատնած
Կեանքի փոխարէն: Դուք ուզում էք սէր —
Ահա այս կուրծքում բղխում է նորա
Աղբիւրն աւելի զով և ջերմ, քան թէ
Պղտոր ու ցեխոտ հորերում, որոնց
Դեռ փիլիպպոսի ոսկին պիտի բանայ:

ՓԻԼԻՊՊՈՍ

Լռի՛ր դու, յանդո՛ւգն — Այդ մարդիկ, որոնց
Դու հայհոյում ես, իմ հաւատարիմ
Ծառաներն են և դու պիտի նոցա
Ցարդես:

ԿԱՐԼՈՍ

Ո՛չ երբէք: Ես ինձ լաւ գիտեմ:
Ձեր Ալքայի չափ կարող է գործել
Եւ ձեր Կարլոսը, աւելի ևս:
Ի՞նչ փոյթ վարձկանին տէրութիւնը, որ
Երբէք չի լինի նորան սեփական: —
Նորան ի՞նչ հոգս է, թէ փիլիպպոսի
Գլխի մազերը կընկերուին սպիտակ:
Ձեզ ձեր Կարլոսը կարող է սիրել —

Սարսափելի է մեն մենակ լինել
Աթոռի վերայ։

ՓԻԼԻՊՊՈՍ

(Նորա խօսքերից շարժուած կանգնած է խոր մտածմունքի մէջ։ Կարճ լռութենից յետոյ)

Այո՛, մենակ եմ։

ԿԱՐԼՈՍ

(աչխուժով և ջերմեռանդութեամբ առաջ գնալով)

Դուք մենակ էիք։ Եվ մի՛ ատէք ինձ.
Ես ձեզ կըսիրեմ ջերմ և կաթոգին,
Միայն մի՛ ատէք ինձ։ — Ի՞նչպէս սքանչելի,
Ի՞նչպէս քաղցր է զգալ մի ազնիւ սրտում
Մեզ փառաւորուած. գիտենալ, որ մեր
Ուրախութիւնը կարմրեցնում է
Օտար այտերը, որ մեր երկիւղը
Դող է պատճառում օտար սրտի մէջ,
Որ մեր ցաւերը արտասունքով թրջում
Օտար աչքերը։ — Ի՞նչպէս գեղեցիկ
Եւ հրաշալի է, թեև թեւի տուած
Անգին որդու հետ, կրկին անց կենալ
Վարդերով ցանած մանկութեան ուղին,
Կրկին երազել կեանքի երազը։
Ի՞նչպէս վսեմ է իւր որդու փառքով
Անմահ և անջինջ բարերար մնալ
Դարերի համար։ — Ի՞նչ գեղեցիկ է
Ցանել, որ հնձէ սիրելի որդին,
Ժողվել, ինչ որ նա պիտի շահեցնէ,
Եւ այժմն ըզգալ նորա ջերմեռանդ
Շնորհակալութիւնն։ — Հայր իմ, հայր, ահա
Այս երջանկութեան մասին գիտութեամբ
Լուռ մնացին ձեր աբեղաները։

ՓԻԼԻՊՊՈՍ

(բաւական շարժուած)

Ո՛հ, որդեակ, որդեակ, ինքդ ես քեզ դատում։

Շատ հիանալի նկարագրում ես
Այն բաղդը, որից ինձ միշտ զրկել ես։

ԿԱՐԼՈՍ

Այդ Աստուած դատէ։ — Դուք ինձ հեռացրիք
Ինչպէս հայրական սրտից, նոյնպէս և
Ձեր իշխանութեան մասնակցութենից։
Մինչև այժմ — ո՛հ, մի՞թէ այդ լաւ էր,
Մի՞թէ արդար էր — մինչև այս օրը
Ես Սպանիայի թագաժառանգը
Սպանիայի մէջ իբր օտար էի.
Ես գերի էի այստեղ, ուր երբեմն
Տէր պիտի լինիմ։ Մի՞թէ արդար էր
Այդ, մի՞թէ լաւ էր — ո՛հ, քանի՞ անգամ
Ամօթից նայել եմ դէպի խոնարհ,
Երբ որ ես օտար դեսպաններից
Կամ լրագիրներից իմանում էի
Արանջուէցի նորութիւնները։

ՓԻԼԻՊՊՈՍ

Արիւնդ սաստիկ եռ է գալիս քո
Երակների մէջ։ Դու կը քանդէիր։

ԿԱՐԼՈՍ

Թողէք քանդեմ, հա՛յր։ — Երակներիս մէջ
Խի՛ստ է եռ գալիս — Քսաներեք տարի՛,
Եւ անմահութեանս համար դեռ ոչ ինչ —
Ես զարթեցեմ, ես ինձ ճանաչեցի —
Իմ արքայական կոչումը ինչպէս
Պարտատէր քնից վեր է թռցնում ինձ,
Եւ իմ մանկութեան կորցրած ժամերը
Ցիշեցնում են իմ պատուի պարտքերը։
Ահա՛ այն վսեմ, գեղեցիկ բոպէն,
Որ պահանջում է ինձնից սրբազան
Աւանդի շահը։ Հանդէս է կանչում
Ինձ պատմութիւնը, պապերիս փառքը
Եւ որոտաձայն փողը համբաւի։

Ժամանակն հասաւ բանալ իմ առաջ
Փառքի ասպարէզ։ — Տէր արքայ, արդեօք
Կարո՞ղ եմ յայտնել խնդիրքս, որ ինձ
Բերել է ձեզ մօտ։

ՓԻԼԻՊՊՈՍ

Դարձեալ մի խնդի՞րք։
Ասա, իմանամ։

ԿԱՐԼՈՍ

Բրաբանտ նահանգում
Սաստիկ աճում է ապստամբութիւնն։
Ապստամբների յամառութիւնը
Ազգու և խոհեմ պէտք է դիմադրել։
Մոլեռանդների կատաղութիւնը
Զսպելու համար, պէտք է դուքս Ալբան
Զօրք տանէ Ֆլանդրիա, և արքան նորան
Պիտի անսահման իշխանութիւն տայ։
Ո՛րքան պատուաւոր է այդ պաշտօնը,
Ո՛րքան յարմար է ձեր որդուն տանել
Փառքի տաճարը — ինձ, տէր արքայ, ինձ
Ցանձնեցէք զօրքը։ Նիդերլանդացիք
Ինձ շատ են սիրում։ Ես յանդգնում եմ
Երաշխաւորել արիւնով նոցա
Հաւատարմութիւնն։

ՓԻԼԻՊՊՈՍ

Երազն մէ՞ջ ես։
Այր է հարկաւոր այդ պաշտօնին և
Ոչ թէ պատանի —

ԿԱՐԼՈՍ

Մարդ է հարկաւոր,
Հա՛յր իմ, միայն մարդ, և այդ է ահա,
Ինչ որ դուքս Ալբան երբէք չէ եղել։

ՓԻԼԻՊՊՈՍ

Երկիւղը միայն կարող է զսպել
Ապստամբութիւնն։ Խնայելը այստեղ

Անմտութիւն է։ — Քո սիրտը, որդեակ,
Փափուկ է. դքսից շատ են վախենում —
Ցե՛տ առ խնդիրքդ։

ԿԱՐԼՈՍ

Ուղարկեցէ՛ք ինձ
Զօրքով Ֆլանդրիա, վստահացէ՛ք, հայր,
Փափուկ սրտիս վրայ։ Արդէն արքայի
Որդու անունը, որ դրոշակներիս
Առաջ կը թռչի, իսկոյն կընուաճէ,
Ուր դուքս Ալբայի դահիճները միայն
Պիտի աւերեն։ Ահա ծնկաչոք
Աղաչում եմ ձեզ։ Կեանքիս առաջին
Խնդիրքն է այս։ — Հայր, հաւատացէ՛ք ինձ
Ֆլանդրիան —

ՓԻԼԻՊՊՈՍ

(Թափանցող հայեացքով զննելով իշխանին)

Նոյնպէս ընտիր զօրքս քո
Փառասիրութեա՞ն։ Դանակը ի՞նքս
Ցամ ինձ սպանողին։

ԿԱՐԼՈՍ

Ո՛հ, Աստուա՛ծ, այ՞ս է,
Ա՞յս է պտուղը, որ ակն ունէի
Ես այս մեծ ժամից։

(կարճ մտածմունքից յետոյ մեղմ ծանրութեամբ)

Պատասխանեցէ՛ք
Մեղմութեամբ։ Այդպէս մի՛ արձակէ՛ք ինձ։
Ես չէի կամենայ արձակուած լինիլ
Ձեզնից այդպիսի վատ պատասխանով,
Արձակուած լինիլ այս ծանր սրտով։
Վարուեցէ՛ք ինձ հետ ողորմածաբար։
Դա իմ անհրաժեշտ կարիքն է, վերջին
Յուսահատ փորձս է — Ձեմ կարողանում
Ես այդ ըմբռնել, տանել իբրև այր,
Որ դուք ամեն բան, ամեն բան այդպէս

Բայց էք ասում ինձ և արձակում էք։
Խնդիրքս մերժուած, հաղարաւոր քաղցր
Ցոյսերից խաբուած, գնում եմ ձեր աչքից։ —
Առօք և փառօք կը բազմին Ալբան
Եւ ձեր Դոմինգօն, ուր ձեր զաւակը
Այժմ լալիս էր գետնի վրայ ընկած։
Պալատի բոլոր սպասաւորները,
Այնքան իշխաններ, աբեղաների
Խումբը վկայ էր, որ դուք շնորհեցիք
Ինձ հանդիսաւոր ընդունելութիւն։
Մի ամաչեցնէք ինձ։ Հայր, մի՛ խոցէք
Սիրտս մահուշչափ պալատի մարդկանց
Ցանդուգն ծաղրին լի նախատինքով
Ինձ զոհ բերելով, որ օտարները
Ձեր շնորհով լցուած, իսկ ձեր Կարլոսը
Ոչինչ կարող չէ խնդրել ձեզանից։
Իբրև գրաւական, որ դուք ուզում էք
Իմ անձը պատուել, ուղարկեցէք ինձ
Զօրքով Ֆլանդրիա։

ՓԻԼԻՊՊՈՍ

Էլ այդ չը կրկնես,
Թէ չէ կը շարժես իմ բարկութիւնը։

ԿԱՐԼՈՍ

Թող Թագաւորս բարկանայ ինձ վրայ,
Էլի խնդրում եմ ես վերջին անգամ —
Հաւատացէք ինձ, տէր իմ, Ֆլանդրիան։
Ինձ Սպանիայից պէտք է հեռանալ։
Այստեղ մնալս նոյն է շունչ քաշել
Դահճի կացնի տակ։— Ծանր դրուած է
Մադրիդում ինձ վրայ երկինքը ինչպէս
Մահացու յանցանք։ Միայն անյապաղ
Տեղափոխութիւնն ինձ կառողջացնէ։
Եթէ ինձ փրկել կամենում էք, հայր —
Ուղարկեցէք ինձ զօրքով Ֆլանդրիա։

ՓԻԼԻՊՊՈՍ

Քեզ պէս հիւանդը, որդեակ, բժշկի
Աչքի տակ պիտ՝ մնայ։ Դու Սպանիայում
կը մնաս, դուքսը կերթայ Ֆլանդրիա։

ԿԱՐԼՈՍ

(սաստիկ վրդովված)

Այժմ ինձ պատեցէ՛ք, բարի՛ ոգիներ։

ՓԻԼԻՊՊՈՍ

(մի քայլ յետ քաշուելով)

Կա՛ց, ի՞նչ ես ուզում ասել դորանով։

ԿԱՐԼՈՍ

(դողդոջուն ձայնով)

Հա՛յր, անփոփոխ է ձեր որոշումը։

ՓԻԼԻՊՊՈՍ

Արքայի խօսք է։

ԿԱՐԼՈՍ

Գործս վերջացաւ։

(դուրս է վազում սաստիկ վրդովված)։

ԵՐՐՈՐԴ ԵՐԵԻՈՑԹ

ՓԻԼԻՊՊՈՍ բաւական ժամանակ կանգնած է տխուր մտածմունքների մէջ ընկղմած, վերջապէս սկսում է յետ ու առաջ քայլել. ԱԼԲԱՆ մօտենում է այլայլուած.

ՓԻԼԻՊՊՈՍ

Միշտ պատրաստ կացէ՛ք Բրիւսել երթալու
Հրամանն ընդունել։

ԱԼԲԱ

Պատրաստ եմ, արքայ։

ՓԻԼԻՊՊՈՍ

Ձեր հրովարտակը արդէն սենեակումս
կնքուած դրած է։ Գնացէ՛ք թագուհուց
Արձակուրդ առէք և ձեր հրաժեշտը
տուէ՛ք իշխանին։

ԱԼԲԱ

Իսկոյն տեսայ Նրան,
Կատաղածի պէս գնաց այս դահլիճից,
Եւ նմանապէս Ձեր Մեծութիւնը
Շատ վրդովված էք երևում։— Գուցէ
Ձեր խօսակցութեան նիւթն էր —

ՓԻԼԻՊՊՈՍ

(մի քանի քայլ անելով)

Դուքս Ալբան։

(Թագաւորը կանգնում է և անակնթարթ նայում է Նորան մռայլ կերպով)

Ուրախ եմ լսել, որ Կարլոսը իմ
Պաշտօնեաներին ատում է. սակայն
Անբաւական եմ տեսնել, որ նոցա
Արհամարհում է։

ԱԼԲԱ

(երեսի գոյնը թռչում է և ուզում է տաքանալ)։

ՓԻԼԻՊՊՈՍ

Ոչինչ մի՛ ասէք։
Ես ձեզ տալիս եմ իրաւունք հաշտուել
Իշխանի հետ։

ԱԼԲԱ

Տէ՛ր։

ՓԻԼԻՊՊՈՍ

Ասացէք, ո՞վ էր
Որ ըզգուշացրեց առաջին անգամ
Ինձ իմ որդու չար մտադրութենից։
Այն ժամանակ ես միայն ձեզ լսեցի,
Բայց ոչ և Նորան։ Պէտք է փորձ անեմ,
Դուքս։ Այսուհետև Կարլոսն իմ գահին
Պիտի աւելի մօտ լինի։ Գնացէք։

(Թագաւորը մտնում է իւր սենեակը։ Դուքսը հեռանում է ուրիշ դռնով)

ՉՈՐՐՈՐԴ ԵՐԵԻՈՑԹ

թագուհու նախասենեակը

ԴՕՆ ԿԱՐԼՈՍ մտնում է միջին դռնով խօսելով մի ՄԱՆԿԼԱՒԻԿԻ հետ։ Նախասենեակում գտնուող պալատի սպասաւորները նորան տեսնելով, հեռանում են կլոց սենեակները։

ԿԱՐԼՈՍ

Ինձ նամա՞կ։— Բայց այս ի՞նչ բանալիք է։
Եւ ինչի՞ այսպէս ծածուկ եմ ստանում։
Մօտ եկ։— Ո՞վ տուեց։

ՄԱՆԿԼԱՒԻԿ

(խորհրդաւոր կերպով)

Ինչպէս նկատեց
Ինձ այն տիկինը, լաւ է գուշակուի
Այդ բանը, քան թէ նկարագրուի։—

ԿԱՐԼՈՍ

(մի քայլ յետ դառնալով)

Տիկի՞նը։

(ուշադրութեամբ զննելով մանկլաւիկին)

Ի՞նչպէս։— Ո՞վ ես դու։

ՄԱՆԿԼԱՒԻԿ

Թագուհու
Մանկլաւիկն եմ ես։—

ԿԱՐԼՈՍ

(վախեցած վրայ է վազում և ձեռով ծածկում է նորա բերանը)

Վա՛յ քեզ։ Կա՛ց։ Գիտեմ։

(Շտապով քանդում է կնիքը և հեռանում է դահլիճի ծայրը նամակը կարդալու համար։ Այդ միջոցին գալիս է դուքս Ալբան և, իշխանից չընկատուած, անց է կենում նորա մօտով և մտնում է թագուհու սենեակը։ Կարլոսը սկսում է սաստիկ դողալ և փոփոխակի դեղնում ու կարմրում է։ Նամակը կարդալուց յետոյ երկար միջոց կանգնած է անխօս, աչքերը նամակի վրայ ձգած։ Վերջապէս դառնում է մանկլաւիկին)։

Նա ի՞նքը տուեց քեզ այս նամակը։

ՄԱՆԿԱՒԻԿ

Այո՛, իւր ձեռով։

ԿԱՐԼՈՍ

Նա ինքը տուեց—
Ո՛հ, մի՛ ծաղրիր ինձ։ Դեռ չեմ կարդացել
Նորա գրած մի բան։ Կը հաւատամ քեզ,
Եթէ որ երդուես։ Թէ սուտ է, անկեղծ
Խոստովանի՛ր ինձ և հետս կատակ
Մի՛ անիր։

ՄԱՆԿԱՒԻԿ

Ո՞ւմ հետ։

ԿԱՐԼՈՍ

(Կրկին նայում է նամակի մէջ և կասկածելով զննում է մանկաւիկին։ Մի քանի քայլ անելով դահլիճի մէջ)։

Ծնողքդ դեռ կա՞ն։

Հա՛։ Ես քո հայրը Թագաւորի մօտ
Պաշտօնի մէ՞ջ է։ Սպանիացի՞ է։

ՄԱՆԿԱՒԻԿ

Իմ հայրը ընկաւ ճակատամարտում
Սէնտ Կէնտինի մօտ։ Նա գնդապետ էր
Սավոյի դքսի հեծելազօրքում.
Անունն Ալֆոնցո կոմս դէ Հէնարէց։

ԿԱՐԼՈՍ

(բռնում է նորա ձեռը և սուր նայում է նորա աչքերում)։
Նամակը տուեց քեզ Թագաւո՞րը։

ՄԱՆԿԱՒԻԿ (վիրաւորուած)

Ողորմա՛ծ իշխան, արժանի՞ եմ ես
Ձեր այդ կասկածին։

ԿԱՐԼՈՍ (կարդում է նամակը)

„Այս բանալիքով
„Բացվում են յետին սենեակները
„Թագուհու բաժնում։ Վերջին սենեակը
„Կից է մի փոքր առանձնարանի,
„Ուր դեռ չէ մտել երբէք մի լոտես։

„Այնտեղ կարող է սէրը համարձակ
„Խոստովանել այն, ինչ որ մինչև այժմ
„Արտայայտում էր միայն հայեացքներով,
„Կըլսուի խնդիրքը ամօթխածի
„Եւ գեղեցիկ վարձ կըստանայ սիրոյ
„Հեզ նահատակը:

(կարծես թէ թմրութենից զարթեցաւ)

Երազի մէջ չեմ—
Խելագարուած չեմ— Այս իմ աջ կուռն է—
Այս էլ իմ սուրն է — Գրուած տողեր են—
Այս իսկութիւն է: Նա ինձ սիրում է—
Սիրում է — այո՛ — Նա ինձ սիրում է:

(յափշտակուած ուզում է դուրս վազել սենեակից ձեռները դէպի վեր տարածած)։

ՄԱՆԿԱՒԻԿ

Ուրեմն եկէք տանեմ ձեզ, իշխա՛ն:

ԿԱՐԼՈՍ

Թո՛ղ դեռ ուշքի գամ:— Սիրտս դողում է
Երջանկութենից: Այդ բարձր յոյսը
Ե՞րբ եմ ունեցել: Երբ եմ յանդգնել
Այդ բանն երազել: Ինչպէս մարդս շուտ
Աստուած լինելուն ընտելանում է—
Ո՞վ էի առաջ և այժմ ո՞վ եմ:
Այս այլ երկինք է, ուրիշ արև է,
Իմ տեսածը չէ — Նա ինձ սիրում է:

ՄԱՆԿԱՒԻԿ

(ուզում է տանել Նորան)

Իշխա՛ն, իմ իշխա՛ն, այս տեղ տեղը չէ—
Դուք մոռանում էք:

ԿԱՐԼՈՍ (յանկարծ սառելով)

Արքայինն, հօրս:

(վեր է թողնում ձեռները, երկիւղալի նայում է իւր չորս կողմը և սկսում է ինքն իրան ժողովել)։

Սարսափելի է. — Այո՛, բարեկամ,
Ուղիղ ասացիր: Ես շնորհակալ եմ:
Ուշքս թռել էր: — Բայց որ պիտի լռեմ,
Այս երջանկութիւնն կուրծքիս մէջ փակեմ —
Ահա՛, ահա՛, այս սարսափելի է —

(բռնում է մանկլաւիկի ձեռը և տանում է մի կողմը)

Ինչ որ դու այստեղ տեսար, չը տեսար —
Լսո՞ւմ ես — պէտք է գերեզմանի պէս
Պահէ քո սիրտը: Հիմա հեռացի՛ր:
Ես մենակ կերթամ: Գնա՛, մեզ չը տեսնեն
Այստեղ միասին: Գնա՛: —

ՄԱՆԿԼԱՒԻԿ (ուզում է գնալ)

ԿԱՐԼՈՍ

Բայց կա՛ց, լսի՛ր,: —

(Մանկլաւիկը յետ է դառնում: Կարլոսը գնում է մէկ ձեռը նորա ուսին և ծանր ու հանդիսաւոր կերպով նայում է նորա երեսին)

Հետդ տանում ես սոսկալի գաղտնիք,
Որ նման է այն սաստիկ թոյներին,
Որոնք պատռում են իրանց ամանը —
Լաւ իշխիր քեզ վրայ: Երբէք չիմանայ
Գլուխդ այն, ինչ որ կուրծքդ պահում է:
Նմանիր անշունչ ձայնատար փողին,
Որ ընդունում է հնչիւնն ու կրկնում,
Ինքը չէ լսում: Դու մի տղայ ես —
Միշտ տղայ մնա և շարունակիր
Անհոգս կեանք վարել — Լաւ դիտացել է
Սորա իմաստուն գրողը սիրոյ
Սուրհանդակ ընտրել: Թագաւորն այստեղ
Որոնելու չէ իւր սև օձերը:

ՄԱՆԿԼԱՒԻԿ

Եւ ես, իմ իշխա՛ն, ես շատ հպարտ եմ,
Որ ես մի գաղտնիք աւելի գիտեմ,
Քան թէ ինքն արքան: —

ԿԱՐԼՈՍ

Անմի՛տ պատանի,
Այդ բանից պէտք է աւելի դողաս։—
Հասարակութեան մէջ թէ պատահենք,
Պէտք է երկիւղով և խոնարհութեամբ
Մօտենաս դու ինձ։ Մեծամտութեամբ
Երբէք ցոյց չըտաս այնպիսի ձևեր,
Որ իմացուի, թէ վայելում ես դու
Իշխանի շնորհը։ Շատ կըմեղանչես,
Որդեակ, իմ առաջ, եթէ աշխատես
Ինձ հաճոյանալ։— Թէ այսուհետև
Ցանձնարարութիւն ունենաս ինձ մօտ,
Բառերով չասես և չըհաւատաս
Քո շըթունքներին։ Քո ասելիքը
Երբէք չը յայտնես ինձ սովորական
Եղանակներով։ Դու պիտի խօսիս
Ինձ հետ աչքերով, քո ցուցամատով,
Ես էլ կըլսեմ քեզ իմ աչքերով։
Օդը և լոյսը մեր շուրջ Փիլիպպի
Հլու ստրուկներն են։ Համբ պատերը
Նրա վարձկաններն են։— Մարդ է գալիս—

(բացվում է Թագուհու սենեակը և դուրս է գալի դուքս Ալբան),

Գնա։

Մնաս բարով։

ՄԱՆԿԱՒԻԿ

Իշխան, միայն չը մոռանաք

Սենեակը։

(գնում է)

ԿԱՐԼՈՍ

Դուքսն է— Ո՛չ, ո՛չ, կը գանեմ։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԵՐԵԻՈՑԹ

ԴՈՆ ԿԱՐԼՈՍ, ԴՈՒՔՍ ԱԼԲԱ.

ԱԼԲԱ.

(կտրելով նորա ճանապարհը)

Երկու խօսք ունիմ ողորմած իշխան:

ԿԱՐԼՈՍ

Լա՛ւ — ուրի՛շ անգամ:

(ուզում է գնալ)

ԱԼԲԱ.

Ի հարկէ, տեղը
Յարմար չէ: Գուցէ կը բարեհաճիք
Ձեր Մեծութիւնը ինձ ձեր սենեակում
Ունկնդրութիւն տալ:

ԿԱՐԼՈՍ

Ի՞նչ հարկաւոր է:
Ես ձեզ այստեղ էլ կարող եմ լսել —
Միայն շո՛ւտ արէք, մի՛ երկարացնէք:

ԱԼԲԱ.

Ես եկայ յայտնել, ողորմած իշխան,
Ամենախոնարհ շնորհակալութիւնս
Մի գործի համար:—

ԿԱՐԼՈՍ

Շնորհակալութի՞ւն:
Ի՞նչ բանի համար — Շնորհակալութիւն
Ինձ դուքս Ալբայից:

ԱԼԲԱ.

Հաղիւ դուրս եկաք
Արքայի մօտից, որ հրաման սաացայ
Բրիւսսէլ երթալու:

ԿԱՐԼՈՍ

Բրիւսսէլ: Հա՛: Իրաւ:

ԱԼԲԱ.

Էլ ո՞ւմ կարող եմ այդ վերաբերել,
Իշխան, եթէ ոչ միայն ձեր ողորմած
Միջնորդութեանը արքայի մօտ: —

ԿԱՐԼՈՍ

Ի՞նձ։

Ամենևին ոչ — հաւատացէք, ոչ։—
Գնացէք, տէր ընդ ձեզ։

ԱԼԲԱ

Եվ ուրիշ ոչի՞նչ։
Ես զարմանում եմ։— Մի՞թէ ինձ ոչինչ
Ցանձնարարութիւն չէ՞ք տայ Ֆլանդրիա։

ԿԱՐԼՈՍ

Ի՞նչ. ի՞նչ կայ այնտեղ։

ԱԼԲԱ

Բայց փոքր ինչ առաջ,
Կարծեմ, այդ երկրի ներկայ վիճակը
Պահանջում էր նոյն իսկ Դոն Կարլոսի
Ներկայութիւնը։

ԿԱՐԼՈՍ

Ի՞նչպէս։ Հա՛, իրա՛ւ —
Բայց այդ առաջ էր — Այսպէս էլ լաւէ—
Աւելի լաւ է—

ԱԼԲԱ

Շատ զարմանում եմ—

ԿԱՐԼՈՍ

Դուք երևելի զօրապետ էք, դո՛ւքս—
Այդ ո՞վ չըգիտէ — Նախանձն էլ պէտք է
Այդ խոստովանի։ Ես ո՞վ եմ— ես մի
Երիտասարդ եմ— Այդ կարծիքն ունի
Եւ Թագաւորը։ Եւ Թագաւորը
Իրաւունք ունի։ Այդ բանը ինքս
Այժմ տեսնում եմ, և ես ուրախ եմ։
Ուրեմն այդ մասին հերիք է խօսել։
Ցանկանում եմ ձեզ բարի ճանապարհ։
Այժմ չեմ կարող, ինչպէս տեսնում էք,
Տարաբաղդաբար — ես շատ զբաղուած եմ—
Մնացածը վաղը, կամ Թէ ուզում էք,

ցետոյ, և կամ թէ, երբ որ Բրիւսսէլից
կը վերադառնաք:—

ԱԼԲԱ

Ի՞նչպէս:

ԿԱՐԼՈՍ

(կարճ լռութենից յետոյ, տեսնելով, որ դուքսը դեռ կանգնած է)

Դուք շատ լաւ
ժամանակ էք դնում: — Ձեր ճանապարհը
կանցնի Միլանով, Լոթարինգիայով,
Բուրգունդիայով և Գերմանիայով:—
Գերմանիա — Հա, Գերմանիայում
Ձեզ ճանաչում են: — Այժմ ապրիլն է,
Մայիս և յունիս — յուլիսի վերջում,
Կամ օգոստոսի սկզբում անպատճառ
Կը լինիք Բրիւսսէլ: Ես չեմ կասկածում,
Որ շուտով մենք ձեր յաղթութիւնների
Լուրը կը լսենք: Դուք կաշխատէք մեր
Ամենողորմած վստահութեանը
Արժանի գտնուել:

ԱԼԲԱ

Միթէ կարող եմ
Ես այդ, ըզգալով ոչնչութիւնս:

ԿԱՐԼՈՍ

(կարճ լռութենից յետոյ ջերմութեամբ և հպարտութեամբ)

Շուտ էք վշտանում — և իրաւունքով:
Խոստովանում եմ, անգթութիւն էր
Իմ կողմից ձեր դէմ գործ դնել մի զէնք,
Որով չէք կարող ինձ պատասխանել:

ԱԼԲԱ

Չե՞մ կարող: —

ԿԱՐԼՈՍ

(ժպտելով տալիս է նորան իւր ձեռը)

Ափսոս, ժամանակ չունիմ
Այժմ Ալբային տալ արժանաւոր
Բաւականութիւն: Մի ուրիշ անգամ: —

ԱԼԲԱ

Իշխան, երկուսս էլ մենք սխալվում ենք
Այլ և այլ կերպով։ Դուք, զոր օրինակ,
Ձեզ քսան տարով յետոյ էք տեսնում,
Ես ձեզ նոյնքանով տեսնում եմ առաջ։

ԿԱՐԼՈՍ

Յետոյ, դուքս Ալբա։

ԱԼԲԱ

Եւ նոյն ժամանակ
Միտքս է ընկնում, թէ քանի գիշեր
Արքայն պատրաստ էր Պօրտուգալիացի
Սիրուն ամուսնու, ձեր մօր մօտ զոհել
Իւր թագի համար գնելու մի կուռ,
Ինչպէս որ սա է։ Նորան, կարծում եմ,
Յայտնի կը լինէր, որքան հեշտ բան է
Արքաներ ծնել, քան պետութիւններ —
Թէ որքան հեշտ է աշխարհի համար
Արքաներ ճարել, քան թէ մի աշխարհ
Արքայի համար։

ԿԱՐԼՈՍ

Շատ ճշմարիտ է,
Դո՛ւքս Ալբա, յետոյ։ —

ԱԼԲԱ

Եւ որքան արիւն
Պէտք է որ թափէր ձեր ժողովուրդը,
Մինչև որ նորա երկու կաթիլը
Ձեզ արքայ արին։

ԿԱՐԼՈՍ

Ատուած վկայ է,
Շատ ճշմարիտ է — և երկու խօսքում
Բոլորն ամփոփուած, ինչ որ վաստակի
Հպարտութիւնը կարող է բաղդի
Հոյարտութեանը դէմ դնել։ — Հիմա,
Դո՛ւքս Ալբա, դուրա վերաբերութիւնն։

ԱԼԲԱ

Վա՛յ արքայական մեծութեան քնքուշ
Երեխային, որ ծիծաղում է իւր
Դայեակի վերայ։ Ինչպէս՝ քաղցր է մեր
Յաղթութիւնների կակուղ բարձի վրայ
Քընել։ Ի հարկէ, թագի վրայ միայն
Ակներն են փայլում և ոչ վերքերը,
Որոնցով պէտք էր այդ թագը ստանալ —
Այս սուրը օտար ազգերի համար
Օրէնքներ էր գրում։ Սա խաչելութեան
Առաջ փայլում էր և Եւրոպայում
Հաւատի սերմի համար արիւնոտ
Ակոսներ փորում։ Վերև, երկնքում
Աստուած էր դատում, ես երկրի վերայ —

ԿԱՐԼՈՍ

Աստուած, ատտանայ, նոյն է։ Դուք նորա
Աչ ձեռն էիք միշտ։ Գիտեմ, — ուրեմն
Լռենք այդ մասին։ Կայ մի քանի բան,
Որոնց այժմ յիշել, ես զգուշանում եմ —
Ես յարգում եմ իմ հօր ընտրութիւնը։
Հօրս մի Ալբա շատ հարկաւոր է.
Բայց դորա համար չեմ նախանձում նրան։
Դուք մի մեծ մարդ էք։ — Գուցէ այդպէս է։
Ես համարեա թէ հաւատում եմ այդ։
Միայն ափսոս, որ մի քանի հաղար
Տարով առաջէք դուք աշխարհ եկել։
Իմ կարծիքն այս է. Ալբան այն մարդն է,
Որ պիտի յայտնուէր աշխարհի վերջին։
Երբ որ մոլութեան յանդգնութիւնը
Կը սպառէ երկնից համբերութիւնը,
Երբ առատ հունձը չարագործութեան
Կանգնած կը լինի լեզը հասկերով
Եւ անօրինակ հնձող պահանջէ.
Ահա՛ ձեր տեղը — Ո՛հ, Աստուած, իմ դրախտ,
Աշնի՛ւ Ֆլանդրիա — Բայց ի՞նչ կարող եմ։

Լաւ է չը խօսիմ։ Ասումեն, թէ դուք
Ձեզ հետ տանումէք արդէն ստորագրուած
Մահուան վճիռներ։ Այդ զգուշութիւնը
Շատ գովելի է։ Այդպէսով ոչինչ
Հալածանքներից պէտք չէ վախենալ —
Ո՛վ իմ հայր, ինչպէս վատ հասկացայ քեզ։
Ես քեզ խստասիրտ էի համարում.
Որ չը յանձնեցիր դու ինձ այն գործը,
Որով միայն Ալբան կարող է փայլել —
Այդ օրից դու ինձ սկսեցիր յարգել։

ԱԼԲԱ

Իշխա՜ն, այդ խօսքը պահանջումէ։ —

ԿԱՐԼՈՍ (տաքանալով)

Ի՞նչ։

ԱԼԲԱ

Բայց ափսոս, որ դուք արքայորդի էք։

ԿԱՐԼՈՍ

(սուրը մերկացնելով)

Այդ պահանջումէ արիւն — Մերկացրէք,
Դո՛ւքս Ալբա, սո՛ւրը։

ԱԼԲԱ (սառնութեամբ)

Ո՞ւմ դէմ։

ԿԱՐԼՈՍ

Մերկացրէք,
Թէ չէ կը սպանեմ։

ԱԼԲԱ

Եթէ այդպէս է —

(մենամարտում են)

ՎԵՑԵՐՈՐԴ ԵՐԵԻՈՑԹ

ԹԱԳՈՒՀԻ, ԴՈՆ ԿԱՐԼՈՍ, ԴՈՒՔՍ ԱԼԲԱ.

ԹԱԳՈՒՀԻ

(վախեցած դուրս է գալիս սենեակից)

Մերկ սուրեր:

(իշխանին բարկացած և հրամայելով)

Կարլոս:

ԿԱՐԼՈՍ

(թագուհուն տեսնելով քաջությունն չփոթվում է, վեր է թողնում կուռը, կանգնած է անշարժ և անզգայ, յետոյ վազում է դքսի վերայ և համբուրում է նորան)

Հաշտություն, մոռանանք

Դուքս:

(անխօս ընկնում է թագուհու առաջ, յետոյ շուտով վեր է կենում և դուրս է վազում)

ԱԼԲԱ

Ատուած վկայ, զարմանալի է: —

ԹԱԳՈՒՀԻ

(մի քանի վայրկեան կանգնած է անհանդիստ և երկմտութեան մէջ, յետոյ կամաց գնում է դէպի իր սենեակը, դռան մօտ կանգնում է և շուռ է գալիս)

Դուքս Ալբա:

(դուքսը նորա ետևից մտնում է սենեակը)

Էքօլի իշխանուհու առանձնարանը

ԵՕԹՆԵՐՈՐԴ ԵՐԵԻՈՑԹ

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ նստած ճաշակով և գեղեցիկ, բայց պարզ հագնուած նստած է վալի վերայ։ Մտնում է թագուհու ՄԱՆԿԼԱՒԻԿԸ.

ԻՇԽԱՆՈՒՀԻ (շուտ վեր է թռչում)

Կը գա՞յ

ՄԱՆԿԼԱՒԻԿ (շտապով)

Մենա՞կ էք: Ես շատ
Զարմանում եմ, որ դեռ այստեղ չէ նա.
Բայց այս րոպէին պէտք է որ նա գայ:

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Պ՞տք է։ Ուրեմն և կամենումէ —
Բանը վճռած է —

ՄԱՆԿԱՒԻԿ

Իսկոյն կը մնանի.
Ո՛վ իշխանուհի, նա ձեզ սիրումէ —
Սիրումէ, սիրում։ Ուրիշն այդպէս
կարող չէ սիրել, և ոչ ոք ձեզ պէս
երբէք չէ սիրուել։

ԻՇԽԱՆՈՒՀԻ

(անհամբերութեամբ քաշում է նորան իւր մօտ)

Շո՛ւտ արա, պատմի՛ր։
Խօսեցա՞ր հետը։ Ի՞նչ ասաց նա քեզ։
Ի՞նչպէս ընդունեց։ Ի՞նչ խօսքեր խօսեց։
Տարակուսեցա՞ւ, զարմացա՞ւ արդեօք։
Իմացա՞ւ ով է ուղարկել նորան
Բանալին։ Դէ՛հ, շո՛ւտ — կամ թէ չիմացա՞ւ,
Սխա՞լ իմացաւ։ — Շո՛ւտ պատասխան տուր։
Ի՞նչ ես պապանձուել։ Ո՛հ, ամ՞թ, ամ՞թ։
Այդպէս անշնորհք և անտանելի
Դանդաղ չէս եղել ոչ մի ժամանակ։

ՄԱՆԿԱՒԻԿ

Թողնո՞ւմէք խօսիմ, տիրուհի։ Ես նորան
Տուի թագուհու նախասենեակում
Բանալին և ձեր գրած տոմսակը։
Սաստիկ զարմացաւ և նայեց ինձ վրայ,
Երբ իմ բերանից թռաւ այս խօսքը,
Թէ ուղարկուած եմ ես մի կնոջից։

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Զարմացա՞ւ։ Շա՛տ լաւ։ Ապրի՛ս. բայց յետո՞յ,
Դէ՛հ, շարունակի՛ր։

ՄԱՆԿԱՒԻԿ

Ես ուզում էի
Աւելի խօսիլ, բայց նա գունատուեց,
Խլեց նամակը և ըսպառնալով

Նայելով ինձ վրայ, ասաց, թէ գիտէ
Արդէն ամէն բան։ Զարմանքով կարդաց
Նամակն ու յանկարծ ըսկսեց դողալ։

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Ամէն բան գիտէ՞։ Այդպէ՞ս ասաց նա։

ՄԱՆԿԼԱՒԻԿ

Ցեռոյ հարցրեց երեք չորս անգամ,
Արդեօք իրաւ դո՞ւք, դուք ի՞նքդ էք տուել
Ինձ այն նամակը։

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Արդեօք ես ի՞նքս։
Ուրեմն ասա՞ց նա իմ անունը։

ՄԱՆԿԼԱՒԻԿ

Ձեր անո՞ւնը — ո՛չ, անունը չասաց —
Ասաց. կարող են ըտեսներ լինիլ
Այնտեղ թագ կացած, և թագաւորին
Կարող են յայտնել։

ԻՇԽԱՆՈՒՀԻ՝ (զարմացած)

Այդպէ՞ս ասաց նա։

ՄԱՆԿԼԱՒԻԿ

Ասաց. արքայի համար շատ և շատ
Նշանաւոր է և շատ ցանկալի
Նամակի մասին մի բան իմանալ։

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Արքայի համա՞ր։ Ուղի՞ղ լսեցիր։
Արքայի համա՞ր։ Ա՞յդ էր նրա խօսքը։

ՄԱՆԿԼԱՒԻԿ

Այո՛։ Նա ասաց, թէ վտանգաւոր
Մի գաղտնիք է այդ, և ըզգուշացրեց,
Որ ես զգոյշ լինիմ թէ իմ խօսքերի,
Թէ ձևերի մէջ, որ թագաւորը
Կասկած չըտանէ։

ԻՇԽԱՆՈՒՀԻ

(կարճ մտածմունքից յետոյ լի զարմանքով)

Բոլորն այնպէս է —
Այնպէս — Ուրիշ կերպ անկարելի է —
Նա իմացել է իմ պատմութիւնը —
Զարմալի է։ Արդեօք ո՞վ պիտի
Յայտնած լինի նրան — Ո՞վ, հարցնում եմ ես —
Ո՞վ է այնպէս սուր և այնպէս խորը
Տեսնում, ուրիշ ո՞վ, եթէ ոչ սիրոյ
Սրատես աչքը։ Բայց շարունակի՛ր,
Կարդա՛ց տոմսակը —

ՄԱՆԿԼԱՒԻԿ

Տոմսակը, ասաց,
Բովանդակում է այնպիսի մի բաղդ,
Որ նորա վերայ սարսափ է բերում.
Որ նա երաղել չէ վատահացել։
Տարաբաղդաբար դուքսը ներս մտաւ,
Եւ մենք ստիպուեցանք —

ԻՇԽԱՆՈՒՀԻ (տհաճութեամբ)

Բայց, ի սէր Աստծոյ,
Դուքսն ի՞նչ գործ ունի այնտեղ։ Բայց ո՞ւր է։
Ի՞նչտեղ մնաց նա։ Ի՞նչ է ուշանում։
Ինչի՞ չէ գալիս։ — Տեսնո՞ւմ ես, ինչպէս
Սխալ ես իմացել։ Որքան բաղդաւոր
Կը լինէր արդէն այնքան միջոցում,
Որ դու գործ դրիր պատմելու համար,
Թէ նա ուզում է բաղդաւոր լինել։

ՄԱՆԿԼԱՒԻԿ

Ես վախենում եմ, մի՞ գուցէ դուքսը —

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Դարձեա՛լ այն դուքսը։ Այստեղ նրան ի՞նչ կայ։
Ի՞նչ գործ ունի այն քաջ տղամարդը
Արդեօք իմ հանդարտ երջանկութեան հետ։
Կարողէր դքսին նա այնտեղ թողնել,

կամ թէ հեռացնել — Ո՛հ, իրաւ, տղայ,
Իշխանդ սիրել լաւ չէ իմանում,
Ինչպէս և կանանց սիրտը ճանաչել։
Նա չըգիտէ, թէ ի՞նչ են բոպէներ —
Սս, մարդ է գալիս։ Գնա, այդ իշխանն է։
(մանկաւիկը շտապով դուրս է գնում)
Գընա, շո՛ւտ գընա։ — Ո՞ւր գրի վինս։
Թող նա ինձ գտնէ որպէս անպատրաստ —
Իմ երգը լինի նորան առաջնորդ։ —

ՈՒԹԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ, փոքրինչ յետոյ ԴՈՆ ԿԱՐԼՈՍ.

ԻՇԽԱՆՈՒՀԻ

(մի տաճկական քաղմոցի վրայ թեք ընկած նուագում է)

ԿԱՐԼՈՍ

(ներս է ընկնում։ Նա ճանաչում է իշխանուհուն և քարացածի պէս մնում է կանգնած)

Աստուած, ի՞նչ տեղ եմ։

ԻՇԽԱՆՈՒՀԻ

(վեր է դնում վինը և դէմ է գնում նորան)։
Ա՛հ, Կարլոս իշխան։

ԿԱՐԼՈՍ

Այս ի՞նչ տեղ եմ ես։ Թշուառա՛ սխալմունք—
Այն սենեակը չէ։

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Ինչպէս Կարլոսը
Լաւ իմանում է այն սենեակները
Նկատել, ինչտեղ կանայք մենակ են։

ԿԱՐԼՈՍ

Ո՛հ, իշխանուհի — Ներեցէ՛ք ինձ — ես
Նախասենեակի դուռը բաց գտայ։

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Մի՞թէ։ Բայց միտս է, որ ես կողպեցի։

ԿԱՐԼՈՍ

Ձեզ այդպէս է թվում, այդպէս — Բայց ես ձեզ
Հաւատացնում եմ, որ դուք սխալվում էք.
Դուք ուզում էիք կողպել, այդպէս է,
Ես ընդունում եմ — Բայց չը կողպեցիք։
Հաւատացէ՛ք, ոչ։ Ես անց կենալիս
Լսում եմ մէկը վէն է նուագում —
Արդեօք վէն չէ՞ր այն։
(կասկածելով նայում է իւր շուրջը)
Իրա՛ւ, չեմ սխալուել —
Ահա՛ և վէնը — Աստծուն յայտնի է,
Որ ես չափազանց սիրում եմ լսել
Այդ նուագարանը։ Կանգնում լսում եմ,
Ցափշտակվում եմ և ներս եմ վազում
Քաղցր նուագողի, որ հիանալի
Շարժեց իմ սիրտը, որ ինձ կախարդեց,
Տեսնել աննման սիրուն աչքերը։

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Մի շատ ցանկալի հետաքրքրութիւն,
Որ կատարեցիք, ի հարկէ, իսկոյն,
Ինչպէս կարող եմ ապացուցանել։
(կարճ լռութենից յետոյ ծանրութեամբ)
Ո՛հ, ես յարգում եմ համեստ այր մարդուն,
Որ նա, մի կնոջ չամաչեցնելու,
Սկսում է հնարել այդպիսի ստեր։

ԿԱՐԼՈՍ (անկեղծութեամբ)

Ո՛վ իշխանուհի, ինքս ըզգում եմ,
Որ կամենալով սխալ ուղղել,
Աւելի կոպիտ սխալներ եմ անում։
Մի՛ տաք ինձ մի դեր, որի համար ես
Անընդունակ եմ։ Դուք այս սենեակում
Ապաստանարան էիք որոնում։

Դուք ուզում էիք մարդկանցից հեռու
Ապրել ձեր սրտի հանդարտ խղճերով:
Ես, անբաղդությեան զաւակս, եկայ,
Եւ ոչնչացաւ ձեր քաղցր երազը—
Եւ այդ պատճառով ահա ես իսկոյն—
(ուզում է գնալ

ԻՇԽԱՆՈՒՀԻ

(սաստիկ չփոթվում և զարմանում է, բայց իսկոյն էլի ժողովումէ իրան)

Ո՛հ, դուք անդութ էք:

ԿԱՐԼՈՍ

Ես հասկանում եմ,
Թէ այս սենեակում այդ հայեացքը ի՞նչ
Է նշանակում, և ես պաշտում եմ
Այդ ազնուամիտ շփոթութիւնը:
Վա՛յ այն տղամարդուն, որ կնոջ կարմրելուց
Քաջասրտվումէ: Ես վհատում եմ,
Երբ որ իմ առաջ կանայք դողում են:

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Մի՞թէ այդպէս է.—Մի անօրինակ
Խղճմտանք է դա մի երիտասարդ
Մարդու, մանաւանդ իշխանի համար:
Հա՛, իշխան—հիմա պէտք է դուք մնաք,
Այժմ ես ինքս եմ խնդրում այդ բանը:
Ամեն մի աղջկայ երկիւղը կանցնի,
Ցեմնելով այդչափ առաքինութիւն:
Բայց գիտէ՞ք, իշխան, յանկարծ մոռնելով
Ընդմիջեցիք իմ սիրելի երգը:
(նա տանում է նորան բազմոցի մօտ և կրկին վեր է առնում վինը)

Ես պէտք է կրկնեմ: Թող ձեր պատիժը
Լինի ինձ լսել:

ԿԱՐԼՈՍ

Մի պատիժ, նոյնքան
Ցանկալի, որքան և իմ յանցանքը—
Եւ ուղիղն ասեմ. ձեր երգի միտքը,

Այնքան հաճելի, այնքան սքանչելի
Գեղեցիկ էր, որ երբորդ անգամ էլ
Կարող եմ լսել։

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Մի՞թէ լսել էք,
Իշխան, այդ լաւ չէ — կարծեմ որ խօսքը
Սիրոյ վերայ էր։

ԿԱՐԼՈՍ

Եւ, թէ չեմ սխալվում,
Բաղդաւոր սիրոյ վերայ էր խօսքը —
Մի շատ գեղեցիկ նիւթ այս աննման
Բերանի համար. միայն ոչ այնքան
Ճշմարիտ ասուած, որքան գեղեցիկ։

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Ո՞չ, ճշմարիտ չէ՞ — կասկածո՞ւմ էք դուք։

ԿԱՐԼՈՍ (ծանրութեամբ)

Ես կասկածում եմ, արդեօք Կարլոսը
Եւ Իշխանուհի Էբօլին միմեանց
Երբէք կհասկանա՞ն, երբ որ առարկան
Սիրոյ վերայ է։

(Իշխանուհին շփոթվում է։ Նա նկատում է այդ բանը և շարունակում է թեթև հաճոյականութեամբ)

Որովհետև ո՞վ,
Ո՞վ կը հաւատայ այդ վարդ այտերին,
Որ այդ կուրծքն երբէք մաշել է կիրքը։
Սիրել գիտէ նա, ով բոլորովին
Անյոյս է սիրում։

ԻՇԽԱՆՈՒՀԻ

(բոլորովին իւր առաջուայ աշխուժով)

Ո՛հ, մի՛ ասէք, այդ։
Սարսափելի է — Եւ երևում է,
Որ այդ վիճակը միմիայն ձեզ է,
Եւ այն էլ այսօր — այսօր հալածում։

(բռնում է նորա ձեռը, փաղաքշող կարեկցութեամբ)

Տխուր էք, իշխան։ — Դուք տանջվում էք — Հա՛,
Աստուած վկայ է, դուք շատ էք տանջվում։
Բայց ինչի՞ տանջուիլ, երբ ձեզ համար է
Աշխարհի բոլոր վայելչութիւնը,
Ձեզ համար բնութեան շռայլ պարգևները,
Ձեզ համար կեանքի ուրախութիւնը։
Դուք, իշխան — մի մեծ արքայի որդի,
Աւելի ևս։ Արդէն օրրոցում
Ստացել էք ձիրքեր, որոնք ձեր կոչման
Փայլունը անգամ խաւարեցնում են։
Նա — որ կաշառել է բոլոր կանանց,
Այն կանանց, որոնք անսխալ որոշել
Գիտեն այր մարդկանց արժէքն ու փառքը,
Նա, որ նուաճում է մի լոկ հայեացքով,
Նա, որ վառում է, երբ ինքը սառն է,
Իսկ երբ բորբոքուիլ կամենայ, պէտք է
Եղեմներ ստեղծէ և երկնային բաղդ
Ցանէ չորս կողմը։ — Նա, որին բնութիւնն
Բիւրաւորների և մի քանի սի
Բաղդաւորութեան համար այդպիսի
Ձիրքեր է շնորհել, միթէ կարող է
Ինքն ամբաղդ լինել։ — Ո՛վ երկինք, դու որ
Նորան ամեն բան, ամեն բան տուիր,
Ինչի՞ միմիայն աչքեր չըտուիր,
Որով նա տեսնէր իւր յաղթանակը։

ԿԱՐԼՈՍ

(որ այդ բոլոր միջոցին ընկղմած էր խորին անմտադրութեան մէջ, իշխա-
(նուհու լռութեամբ յանկարծ սթափում է և վեր է կենում)

Շատ գեղեցիկ է, հիանալի է։
Խնդրում եմ մէկ էլ երդէք այդ տեղը։

ԻՇԽԱՆՈՒՀԻ

(զարմացած նայում է նորան)

Կարլոս, ո՞ւր էիք դուք այդ միջոցում։

ԿԱՐԼՈՍ (վեր թռչելով)

Հա՛, Աստուած վկայ, լաւ միտս բերիք —
Ես պէտք է, պէտք է շուտով հեռանամ։

ԻՇԽԱՆՈՒՀԻ (*բռնում է նորան*)

Ո՞ւր։

ԿԱՐԼՈՍ (*սաստիկ երկիւղով*)

Դուրսը, բաց օդը։ — Թողէք ինձ գնամ —
Ինձ թվում է, թէ աշխարհն իմ ետև
Հրդեհ է ընկել։

ԻՇԽԱՆՈՒՀԻ (*բռնութեամբ պահում է նորան*)

Ի՞նչ պատահեց ձեզ,
Ի՞նչ անբնական վարմունք է, իշխան։

(*Կարլոսը մնում է կանգնած և ընկնում է խոր մտածմունքի մէջ։ Իշխանուհին օգուտ է քաղում այդ վայրկենից, նորան իւր մօտ նստեցնելու բազմոցի վերայ*)

Ձեզ պէտք է հանգիստ, սիրելի Կարլոս —
Այժմ վրդովված է ձեր արիւնը —
Նստեցէք ինձ մօտ — հեռացրէք ձեզնից
Այդ ցնորքները — հարցրէք ձեզ անկեղծ,
Գիտէ՞ այս գլուխը այս սրտի ցաւը.
Եւ եթէ գիտէ — մի՞թէ պալատի
Թէ ասպետներից, թէ տիկիններից
Զրկայ ոչ մէկը, որ կարողանար
Ձեզ առողջացնել, որ ձեզ հասկանար —
Մի՞թէ արժանի չէ և ոչ մէկը —

ԿԱՐԼՈՍ (*առանց մտածելու*)

Գուցէ էրօլի իշխանուհին է —

ԻՇԽԱՆՈՒՀԻ (*ուրախացած, շտապով*)

Իրա՞ւ։

ԿԱՐԼՈՍ

Տուէք ինձ մի աղերսագիր —
Ցանձնարարական մի գիր հօրս վրայ.
Տուէք։ Ասում են ձեր խօսքը կանցնի։

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Այդ ո՞վ է ասում։ (Ուրեմն լեզուդ
Կասկածն էր կապում)։

ԿԱՐԼՈՍ

Երևի արդէն
Դուք էլ լսել էք։ Ցանկարծ ուզ՛զի
Ես Բրաբանտ գնալ, որ — մի գործ շինեմ։
Հայրս չէ ուզում։—Իմ բարի հայրը
Շատ անհանգիստ է, որ եթէ սկսեմ
Զօրք կառավարել — դա իմ երգելուն
Կարող է վնասել։

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Կարլոս, խաբում էք։
Խոստովանեցէք, որ դուք ուզում էք
Խորամանկութեամբ իմ ձեռից պրծնել։
Այստեղ նայեցէք, կեղծաւոր, այստեղ։
Ով ասպետական գործերի վրայ է
Միայն մտածում — մի՞թէ, ասացէք,
Նա այն աստիճան կըստորանայ, որ
Կանանց վայր ձգած ժապաւէնները
Ծածուկ վեր թռցնէ. և — ներեցէք ինձ —
(թեթևութեամբ և արագութեամբ մատով բաց է անում նորա շապկի կուրծքը
և հանում է մի երիզակապ, որ այնտեղ թաղցրած էր)
Այսպէս թանդ պահէ։

ԿԱՐԼՈՍ

(զարմանքով յետ քաշուելով)
Իշխանուհի։ Ոչ.
Այդ չափից անցաւ։ Ես տեսնում եմ, որ
Դաւաճանուած եմ։ — Ձեզ ո՞վ կըխաբէ։
Դուք ոգիների և դևերի հետ
Միախորհուրդ էք։

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Եւ այդ բանի վրայ
Զարմանում էք դուք։ Գրազն ի՞նչ է, իշխա՛ն,
Ձեր միտը բերեմ մի քանի անցքեր —
Փորձեցէք, հարցրէք։ Եթէ որ նոյն իսկ
Հաճոյքի խաղը, օդում թռցրած
Թեթև հնչիւնը, իսկոյն թաղցրած

Գողտուկ ժպիտը և մինչև անգամ
Նշաններ, ձեռ՝ր, ինչտեղ ձեր հոգին
Հեռու էր, ոչինչ, ոչինչ ինձանից
Ծածուկ չէ մնացել, ապա դատեցէք,
Հասկացե՞լ եմ ես արդեօք, թէ ի՞նչ տեղ
Կամենում էիք, որ ձեզ հասկանան։

ԿԱՐԼՈՍ

Իրաւ որ այդ մեծ վստահութիւն է —
Գրաղն ընդունում եմ ես, իշխանուհի։
Դուք խոստանում էք այնպիսի գիւտեր
Անել իմ սրտում, որոնց մասին ես
Ոչինչ չը գիտեմ։

ԻՇԽԱՆՈՒՀԻ

(փոքր ինչ վերաւորուած և ծանրութեամբ)

Չը գիտէ՞ք, իշխան։
Լա՛ւ մտածեցէք։ Նայեցէք ձեր շուրջ.
Այժմ թագուհու սենեակներում չէք,
Որ ձեզ պէտք լինի դիմակաւորուիլ —
Դուք շփոթվում էք, յանկարծ կարմրեցաք —
Այո՛, ի հարկէ, ո՞վ է լինելու
Այնքան հեռատես, յանդուգն և պարապ,
Կարլոս իշխանին լրտեսել, երբ որ
Նա կարծում է, թէ նորա ետևից
Ոչ ոք չէ նայում։—Արդեօք ո՞վ տեսաւ,
Ինչպէս նա վերջին պարահանդիսում
Իւր պարընկերին, թագուհուն, կանգնած
Թողեց և գնաց իւր ձեռն էբօլի
Իշխանուհուն տուեց։ Մի սխալմունք, իշխա՛ն,
Որ մինչև անգամ արքան նկատեց,
Որ այդ բոպէին դահլիճը մտաւ։

ԿԱՐԼՈՍ (հեգնական ժպտով)

Նա էլ նկատեց։ Այո՛, տիրուհի՛,
Այդ բանն իսկապէս նորա համար չէր։

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Նոյնպէս այն անցքը պալատի մատռում,
Որ հիմա դուցէ և մոռացել էք։
Դուք ընկած էիք Սուրբ Կուսի առաջ
Ջերմ աղօթքի մէջ, յանկարծ ձեր ետև —
Դուք մեղաւոր չէք — կանանց շորերի
Խշխշոց լսուեց, և Դօն Փիլիպպի
Քաջասիրտ որդին դողդղաց, ինչպէս
Մի հերետիկոս, սուրբ պատարագի
Խորհրդի առաջ։ Նորա դունաթափ
Շրթունքների վրայ թունաւորուելով
Մեռաւ աղօթքը — կրքով բորբոքուած —
Ի՛նչ ծիծաղալի, սրտաշարժ բան էր —
Բռնեց Տիրամօր սուրբ և պաղ ձեռը
Եւ ջերմ համբոյրներ ըսկսեց դրոշմել
Մարմարիոնի վրայ։

ԿԱՐԼՈՍ

Դուք զբսպարտում էք
Ինձ, իշխանուհի։ Դա ուրիշ բան չէր,
Եթէ ոչ միայն ջերմեռանդութիւն։

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Այդ ուրիշ բան է, իշխան։ — Ի հարկէ
Այն էլ տարվելու երկիւղն էր, երբ որ
Կարլոս իշխանը, թագուհին և ես
Միասին նստած թուղթ էինք խաղում,
Եւ զարմանալի յաջողակութեամբ
Նա այս ձեռնոցը գողացաւ ինձնից —
(Կարլոսը այլայլած վեր է թռչում)
Թէև նա այնքան քաղաքավար էր,
Որ մի թղթի տեղ յետ տուեց իսկոյն։

ԿԱՐԼՈՍ

Ո՛հ, Աստուած — Աստուած, այդ ի՞նչ եմ արել։

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Ցուսով եմ, ոչինչ, որ այժմ ուրանաք։
Ինչպէս իմ սիրտը ուրախ դողդղաց,

Երբ անակնկալ ընկաւ իմ ձեռը
Մի փոքրիկ նամակ, որ պահել էիք
Դուք ձեռնոցի մէջ։ Մի շատ սրտաշարժ
Երգ էր այն, իշխան—

ԿԱՐԼՈՍ

(շուտով նորա խօսքը կտրելով)

Բանաստեղծութիւն—

Աւելի ոչինչ — Երբեմն ուղեղս
Շատ զարմանալի բշտիկներ է ծնում,
Որոնք շուտ իսկոյն ոչնչանում են,
Այն էլ այդպիսի մի բան էր։ Լաւ է,
Լռենք այդ մասին։

ԻՇԽԱՆՈՒՀԻ

(սաստիկ զարմացած հեռանում է նորանից և մի քանի ժամանակ հեռուից նայում է նորան)։

Ես յոգնեցայ, բայց
Այս մարդու վերայ ոչինչ չէ ազդում։

(նա մի քանի վայրկեան լռում է)

Բայց ի՞նչ։ — Գուցէ այս հպարտութիւնն է,
Որ զուարճանալու համար երեսին
Բթամտութեան դիմակ է դրել—
Այո՛, այդպէս է։

(նա նորից մօտենում է իշխանին և կասկածելով նայում է նորան)

Իշխան, վերջապէս
Մի խորհուրդ տուէք — Մնացել եմ կանգնած
Մի կախարդական դարանի առաջ,
Եւ ոչ մէկը իմ բանալիներից
Չէ յարմարում նրան։

ԿԱՐԼՈՍ

Այդպէս էլ ես եմ
Կանգնած ձեր առաջ

ԻՇԽԱՆՈՒՀԻ

(շուտ հեռանում է նորանից, մի քանի անգամ լուռ քայլում է սենեակի մէջ յետ ու առաջ և ինչպէս երևում է մեծ մտածմունքի մէջ է։ Վերջապէս երկար լռութենից յետոյ ծանր և հանդիսաւոր կերպով)։

Ինչ կուզէ լինի—

Վերջապէս պէտք է ես վճռեմ խօսիլ։
Ես ձեզ ընտրում եմ ինձ վրայ դատաւոր։
Դուք ազնիւ մարդ էք—դուք տղամարդ էք,
Իշխան, և ասպետ։ Ես ինձ ձգում եմ
Ձեր կուրծքի վերայ։ Դուք պիտի փրկէք
Ինձ, իշխան, իսկ թէ փրկութիւն չը կայ,
Մի արտասուքով կարեկից եղէք։

(Իշխանը զարմացած մօտենում է Նորան և մեծ հետաքրքրութեամբ և կարեկցութեամբ լսում Նորան)

Արքայի յանդուգն սիրելիներից
Մէկը—Բուի գօմէց կոմս Սիլվա—Վաղուց
Խնդրում է ձեռս։ Արքան յօժար է,
Արդէն վերջացած է առուտուրը.
Ես վաճառուած եմ այն անասունին։

ԿԱՐԼՈՍ (սաստիկ շարժած)

Վաճառուած, դարձեալ, դարձեալ վաճառուած
Հարաւի այն մեծ վաճառականից։

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Այդ բոլորը չէ։ Բաւական չէ, որ
Ինձ քաղաքական նպատակներին
Զոհում են, այլ և անմեղութեանս
Թակարդ են դնում։—Ահա այս թուղթը
Կարող է այն սուրը մարդու երեսից
Դիմակը խլել։

(Կարլոսը առնում է թուղթը, բայց սաստիկ հետաքրքրուած լինելով Նորա պատմութեամբ, ժամանակ չունի կարդալու)

Էլ ի՞նչ տեղ գտնեմ
Փրկութիւն, իշխան։ Մինչև այժմ իմ
Առաքինութեան միակ պաշտպանն էր
Հպարտութիւնս. սակայն վերջապէս—

ԿԱՐԼՈՍ

Վերջապէս ընկաք, ընկաք, հա։ Ո՛չ, ո՛չ,
Ի սէր Աստուծոյ։

ԻՇԽԱՆՈՒՀԻ

(հպարտությամբ և ազնվությամբ)

ընկաց. ուժ ձեռով։

Ո՛վ ողորմելի խմաստակություն։
Որքան սխալվում են այն խելքները,
Կանանց շնորհը և սիրոյ բաղդը
Ապրանք կարծելով. որ կարելի է
Վաճառել, գնել։ Դա միակ բանն է
Ամբողջ երկրի վրայ, որ չէ վաճառվում։
Սէրն է սիրոյ գին։ Դա այն գոհարն է,
Որին գին չը կայ, որ ես կընծայեմ
Կամ թէ յաւիտեան գետնում կը թաղեմ,—
Ինչպէս որ այն մեծ վաճառականը,
Որ Բիալտոի ոսկով չը գրավված,
Թագաւորներին ամաչեցնելու,
Իւր մարգարիտը կրկին ծովը ձգեց,
Զրկամենալով պակաս գնով տալ։

ԿԱՐԼՈՍ

(Իրաւ — այս կինը շատ գեղեցիկ է)

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Թող ասեն, թէ այս կամապաշտություն —
Հպարտություն է. ինձ համար մէկ է։
Ես չեմ բաժանի ուրախությունս։
Բոլորը կըտամ միմիայն մէկին,
Որին ընտրել եմ։ Միայն մէկ անգամ
Կընծայեմ սէրս, բայց և յաւիտեան։
Միմիայն մէկին կը բազդաւորէ
Իմ սէրը — մէկին — Բայց և այդ մէկին
Աստուած կը շինէ։ Սրտերի թովիչ
Ներդաշնակությունն — մի քաղցր համբոյր —
Սիրոյ անժուժկալ վայելչությունը
Եւ գեղեցկությեան վսեմ, երկնային
Կախարդությունը մի ճառագայթի
Գոյներ են միայն, մի շքեղ ծաղկի

Ինքուշ թերթիկներ։ Եւ ես, անմիտս,
Պէտք է այդ ծաղկի սիրուն բաժակից
Մի կտրած թերթիկ ընծայեմ մէկին։
Ինքս կին մարդու վսեմութիւնը,
Ինքս արարչի մեծ ձեռագործը
Պիտի աւերե՞մ, ինչ է քաղցրացնեմ
Մի զեղեց և մոլի մարդու երեկոն։

ԿԱՐԼՈՍ

(Անկարելի է. այսպիսի աղջիկ
Ունէր Մադրիդը, և ես — ես այսօր
Առաջին անգամն եմ այդ իմանում)։

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Վաղուց պալատից կը հեռանայի,
Կը հեռանայի ես այս աշխարհից,
Սուրբ պատերի մէջ ինձ կը թաղէի։
Բայց կայ դեռ մի կապ, մի կապ, որով ես
Ամուր կապուած եմ այս աշխարհի հետ։
Ա՛խ, դուցէ մի ցնորք, բայց սրտիս շատ թանգ։
Ես սիրում եմ և — ինքս սիրվում չեմ։

ԿԱՐԼՈՍ

(ոգևորուած՝ առաջ գնալով)

Սիրվում էք, սիրվում։ Հա՛, Աստուած վկայ.
Ահա՛ երդվում եմ, որ դուք սիրվում էք,
Եւ անպատմելի։

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Հրեշտակս խօսեց։ Ի հարկէ, Կարլոս,
Երբ դուք երդվում էք, ես հաւատում եմ։

ԿԱՐԼՈՍ

(քնքշութեամբ առնում է նորան իւր գիրկը)

Քաղցրի՛կ, աննման, հրաշալի՛ աղջիկ,
Երկրապագութեան արժանի՛ էակ,
Ականջս — աչքս — սիրտս քեզանով
Ցափշտակեցիր։— Ո՛վ այս աշխարհում,

Ո՞վ քեզ տեսնելով կարող է ասել—
Թէ նա չէ սիրել—Բայց այստեղ, այստեղ,
Գեղեցի՛կ հրեշտակ, ի՞նչ ես ուզում դու
Այստեղ, Փիլիպպոս արքայի դռանը,
Տէրտէրների մէջ։ Այս օդը քեզ պէս
Ծաղկի համար չէ։—Հա՛, նոքա կուզեն,
Կուզեն այս քնքուշ ծաղիկը կտրել—
Ես հաւատում եմ—Բայց ո՛չ, ո՛չ երբէք,
Արևս վկայ—Ես կըփաթաթեմ
Կուռս քո մէջքին, թևերիս վերայ
Ես քեզ կանցկացնեմ դևերով լեցը
Դժոխքի միջով։ Հա՛—թո՛ղ պահապան
Հրեշտակդ լինիմ—

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Ո՛հ, կարլո՛ս, կարլո՛ս,
Ո՛րքան քիչ էի ես ձեզ ճանաչում.
Բայց որքա՛ն առատ, որքա՛ն չափազանց
Վարձատրում է ձեր գեղեցիկ սիրտը
Ձեզ հասկանալու դժուարութիւնը։

(բռնում է նորա ձեռը և ուզում է համբուրել)

ԿԱՐԼՈՍ (ձեռը յետ քաշելով)

Այդ ի՞նչ էք անում։

ԻՇԽԱՆՈՒՀԻ

(քնքշութեամբ ու նաղով և միևնոյն ժամանակ անթարթ աչքով նայում է նորա ձեռի վերայ)

Ի՛նչ գեղեցիկ է,
Որքա՛ն հարուստ է այս ձեռը։—Իշխա՛ն,
Այս ձեռը էլի ունի բաժնելու
Երկու թանդաղին պարգև—մի թագ և
Կարլոսի սիրտը—գուցէ երկուսն էլ
Մի մահկանացուի կը լինին բաժին—
Մեծ և երկնային պարգև—Համարեա
Մի մահկանացուի համար անչափ մեծ—
Իշխա՛ն, եթէ դուք բաժնել ուզէիք։

Թագուհիները սիրել չը գիտեն —
Մի կին, որ գիտէ սիրել, չը գիտէ
Թագի արժէքը: Ուրեմն, իշխան,
Աւելի լաւ է իսկոյն բաժանէք —
Բայց գուցէ արդէ՞ն — Այդ աւելի լաւ.
Եւ ո՞վ է արդօեք այդ բաղդաւորը:

ԿԱՐԼՈՍ

Քեզ, անգի՛ն աղջիկ, կը բանամ սիրտս —
Քո անմեղութեան, մաքուր, անարատ
Բնութեան կը յայտնեմ սրտիս խորհուրդը:
Այս պալատի մէջ դու ես ամենից
Արժանաւորը, դու ես մէկ հատը,
Դու առաջինը, որ բոլորովին
Հասկացաւ հոգիս: — Քեզ սուտ չեմ ասի —
Այո՛, սիրում եմ.

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Անգո՛ւթ: Քեզ համար
Այդքան դժուա՞ր է խոստովանիլը:
Ես նախանձելի կը համարեմ ինձ,
Եթէ քո սրտին սիրելի եմ ես:

ԿԱՐԼՈՍ (զարմացած)

Այդ ի՞նչ էք ասում:

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Այդպէս խաղ խաղա՞լ
Ինձ հետ: Ո՛հ, իրաւ, իշխա՛ն, այդ լաւ չէր:
Բանալին անգամ ուրանում էք դուք,

ԿԱՐԼՈՍ

Բանալի՞ն —

(ծանր մտածմունքից յետոյ)

Ա՛խ, հա՛ — Հիմա հասկացայ —
Ո՛հ, Աստուա՛ծ:

(Նորա ծնկները դողում են. նա բռնում է մի աթոռ, որ վայր չընկնի, և ծածկում է երեսը։ Երկար լռութիւն երկու կողմից: Իշխանուհին աղաղակում է և վայր է ընկնում)

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Վա՛յ ինձ։ Այս ի՞նչ արի ես։

ԿԱՐԼՈՍ

(բարձրանալով սաստիկ յուսահատութեան մէջ)

Ցանկարծ երկնքից այսպէս ցած գլորուի՞լ։
Սարսափելի է։

ԻՇԽԱՆՈՒՀԻ

(երեսը բարձի մէջ ծածկելով)

Ո՛հ, տէ՛ր Աստուած իմ,
Այս ի՞նչ իմացայ։

ԿԱՐԼՈՍ (ծունկ չոքելով նորա առաջ)

Ո՛հ, իշխանուհի՛,
Ես մեղաւոր չեմ — կի՛րք — Անբա՛ղդ սխալ —
Աստուած վկայ է, ես մեղաւոր չեմ։

ԻՇԽԱՆՈՒՀԻ (իրանից հեռացնելով)

Հեռացէ՛ք աչքիցս, ի սէ՛ր Աստուծոյ։

ԿԱՐԼՈՍ

Ձեզ այս դրութեան մէ՞ջ թողնեմ։ Ո՛չ երբէ՛ք։

ԻՇԽԱՆՈՒՀԻ

(նորան բռնութեամբ իրանից մղելով)

Վերհանձն եղէք, ողորմած եղէք.
Հեռո՛ւ իմ աչքից — Ուզում է՞ք սպանե՞լ։
Ես ձեզ ատում եմ։

(Կարլոսը ուզում է գնալ)

Նամակս տուէ՛ք,
Բանալին նոյնպէս։ Միւս նամակն ո՞ւր է։

ԿԱՐԼՈՍ

Մի՞ւսը։ Այդ ո՞ր է։

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Արքայի գրածը.

ԿԱՐԼՈՍ (սարսափելով)

Ո՞ւմ գրածը։

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Այն, որ ինձանից ստացաք։

ԿԱՐԼՈՍ

Արքայից նամակ, և ձեր անունո՞վ։

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Ո՛վ երկինք, այս ինչ յաւի մէջ ընկայ։
Տուէ՛ք նամակը, տուէ՛ք, ինձ պէտք է։

ԿԱՐԼՈՍ

Արքայից նամակ և ձեր անունո՞վ։

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Տուէ՛ք նամակը, ի սէր Աստուծոյ։

ԿԱՐԼՈՍ

Որ մէկի դէմքից կարող է խլել
Դիմա՞կը — այս է։

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Ես կը մեռնիմ — Տուէ՛ք։

ԿԱՐԼՈՍ

Այս նամակը դուք —

ԻՇԽԱՆՈՒՀԻ

(յուսահատութեամբ ձեռները կոտրտելով)
Ինչ փորձանքի մէջ
Զգեցի անձս։

ԿԱՐԼՈՍ

Այս նամակը դուք
Արքայի՞ց ստացաք — Հա՛, իշխանուհի՛,
Բանը փոխուեցաւ —
(Նամակը ուրախ ուրախ ձեռի մէջ բարձրացնելով)
Սա մի թանգագին։
Մի ծանրակշիռ նամակ է։ Սորան
Թափելու համար ո՞չինչ են բոլոր
Փայլուն թագերը Փիլիպպ արքայի —
Այս նամակը ես ինձ մօտ կը պահեմ
(դուրս է գնում)

ԻՇԽԱՆՈՒՀԻ (նորա ճանապարհը կտրելով)
Աստուա՛ծ, ես կորա՛յ։

ԻՆՆԵՐՈՐԴ ԵՐԵԻՈՑԹ

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ (մենակ)

Իշխան, միհատ խօսք։

Իշխան, լսեցէ՛ք։ — Գնա՛ց։ Ո՛հ, նա ինձ
Արհամարհում է։— Ահա՛ մընացի
Ես սարսափելի միայնութեան մէջ —
Արտաքսուած — մերժուած—
(Նա ընկնում է բազմոցի վերայ, կարճ լռութենից յետոյ)
Ո՛չ, միայն, զըկուած,
Զրկուած ոսոխից։ Էլ կասկած չը կայ,
Որ նա սիրում է։ Նա խոստովանեց։
Բայց ո՞վ է արդեօք այդ բաղդաւորը։—
Այսքանը պարզ է — որ նա սիրում է
Անիրաւացի։— Նա վախենում է,
Այդ բանն իմացուի։ Նա թագցնում է
Իւր կիրքն արքայից։— Բայց ինչի՞, երբ այդ
Նորա սրտովն է։— Գուցէ հօրից չէ՞
Վախենում հօր մէջ։ Ի՜նչ ուրախացաւ.
Ի՜նչպէս ցնծաց նա բաղդաւորի պէս,
Երբ որ իմացաւ արքայի մոլի
Մտադրութիւնը .... Ինչի՞ նորա խիստ
Առաքինութիւնն այստեղ պապանձեց։—
Նորան ի՞նչ օգուտ, եթէ որ արքան
Թագուհուն —
(Ցանկարծ խօսքը կտրում է մի բան միտն ընկնելով։ Միևնոյն ժամանակ խլում է իւր կուրծքից Կարլոսի տուած երիզակապը, կարճ միջոց զննում է և ճանաչում է)
Հիմա։ Ո՛հ, ես անմիտս
Հիմա հասկացայ։—Ո՞ւր էր իմ խելքը։
Նոր բացուեց աչքս։— Վաղուց է նոքա
Սիրում են միմեանց։ Դեռ թագաւորը
Չէր ընարել նորան։ Առանց թագուհուն
Իշխանն ինձ երբէք մենակ տեսել չէ։—
Ուրեմն նրա տեղ ես էի կարծում
Ինձ այնպէս անչափ, ջերմ, անկեղծ պաշտուած։

Ո՛Հ, այս չըլսուած խաբէութիւն է։
Եւ ես թագուհուն ինքս մատնեցի
Իմ թուլութիւնը —
(լռութիւն)
Ի՞նչպէս հաւատամ,
Թէ բոլորովին անյոյս է սիրում
Կարլոս Իշխանը։ — Անյոյս սէրը այդ
Մրցման չի դիմնայ։ Սիրով կշտանա՞լ,
Երբ ամենամեծ արքան աշխարհի
Ի զուր տանջվում է։ — Ո՛չ. անյոյս սէրը
Երբէք չի բերի այդպիսի զոհեր։
Ինչ ջերմ համբոյր էր։ Ինչպէս պինդ սխմեց
Նա ինձ իւր սրտին։ — Այդ փորձն, համարեա,
Այնչափ յանդուգն էր այն ասպետական
Հաւատարմութեան համար, որ պիտի
Զըհատուցանուի։ Նա ընդունում է
Բանալին, որպէս թէ թագուհին է
Ուղարկել նորան։ Նա հաւատում է
Սիրոյ համարձակ այդ որոշմանը —
Եւ նա գալիս է, իրաւ գալիս է։
Նա հաւատում է Փիլիպպի կնոջ
Այդ խելացնոր մտադրութեանը։ —
Ի՞նչպէս կարող էր, եթէ նա փորձով
Քաջալերուած չէր։ Պարզ երևում է,
Որ թագուհին էլ նորան սիրում է։
Հա՛, այդ սրբուհին նոյնպէս ըզգում է։
Ի՛նչ խորամանկ է . . . . Ես դողում էի,
Ես ինքս այդ մեծ առաքինութեան
Պատկերի առաջ։ Մի վսեմ էակ
Թվում էր նա ինձ։ Ես կորչում էի
Նորա շուքի մէջ։ Նրա գեղեցկութեան
Զէ՞ի հաւատում ես այն անվրդով
Խաղաղութիւնը, որ հակառակ է
Հողեղէն բնութեան։ Եւ այդ արտաքին
Երևոյթ էր միայն. Նա ուզեցել է

Երկու սեղանի վրայ էլ շռայլանալ։
Առաքինութեան դիմակն երեսին,
Համարձակուել է հետն էլ մոլութեան
Դաղտնի հրճուանքով իրան քաղցրացնել։
Համարձակուե՞լ է։ Եւ այդ անպատիժ
Պէտք է յաջողի՞ այն միմոսուհուն,
Ինչ է, չէ յայտնվում ոչ ոք վրիժահան։ —
Չէ՛, Աստուած վկայ. ես մինչև այսօր
Պաշտում էի նրան։ — Բայց հիմա վրէ՛ժ, վրէ՛ժ։
Արքան թող լսէ խաբէութիւնը —
Արքա՞ն։

(կարճ մտածմունքից յետոյ)

Հա՛, իրա՛։ — Այս լաւ միջոց է։

(դուրս է գնում)

Մի սենեակ թագաւորական պալատում

ՏԱՍՆԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՑԹ

ԳՈՒՔՍ ԱԼԲԱ, ՊԱՏԵՐ ԴՕՄԻՆԳՕ.

ԴՕՄԻՆԳՕ

Ի՞նչ էք կամենում ասել, Դուքս Ալբա։

ԱԼԲԱ

Այսօր արել եմ մի նշանաւոր
Գիւտ, որի մասին ես կամենում եմ
Մեկնութիւն ստանալ։

ԴՕՄԻՆԳՕ

Ի՞նչ գիւտ։ Ի՞նչ բան է։

ԱԼԲԱ

Այսօր թագուհու նախասենեակում
Ես պատահեցայ Կարլոս իշխանին։
Նա ինձ անպատուեց։ Խօսք խօսքի եղանք։
Վէճը սաստկացաւ։ Սուրեր մերկացրինք։

Այդ ազմուկի վրայ յանկարծ թագուհին
Դուռը բաց արեց և ընկաւ մեր մէջ,
Իշխանի վերայ խիստ, բայց մտերիմ
Հայեացք ձգելով։ — Միայն մի հայեացք —
Իշխանի կուռը կարծես քարացաւ —
Նա վազեց ինձ վրայ, գրկեց։ — Ես զգացի
Մի շատ ջերմ համբոյր — և Նա էլ չըկար։

ԴՕՄԻՆԳՕ

Դուքս, այդ բանը շատ կասկածելի է —
Մի բան միտս ընկաւ։ — Այսպիսի մտքեր,
Խոստովանում եմ, վաղուց ծլում են
Եւ իմ կուրծքի մէջ։ — Այդ երազներից
Ես փախչում եմ և մարդու չեմ ասել
Երկայրի սրեր են կասկածելի
Բարեկամները։ — Ես վախենում եմ
Այդպիսիներից։ Դժուար է քննել
Մարդկանց, աւելի դժուար հասկանալ։
Թռցրած բառերը են վերաւորուած
Խորհրդակիցներ — Եւ այդ պատճառով
Ես իմ գաղտնիքը պահեցի մինչև
Ժամանակն ինքը լոյս աշխարհ հանեց։
Կայ ծառայութիւն, որ լաւ չէ անել
Թագաւորներին — Ցանդուգն ձեռով
Արձակած նետը, եթէ չըհասնի
Որսին, կրդառնայ արձակողի վրայ —
Խօսքս երդումով պատրաստ եմ կնքել
Սուրբ Նշխարի վրայ — Բայց ականատես
Մարդու ցուցմունքը, բերանից խլած
Մի բառ աւելի ծանրակշիռ են,
Քան համոզմունքս։ — Է՛հ, ափսոս, որ մենք
Սպանիայումն ենք։

ԱԼԲԱ

Բայց ինչի՞։

ԴՕՄԻՆԻԳՕ

Ուրիշ

Պալատների մէջ կիրքը կարող է
Իրան մոռանալ. իսկ այստեղ Նորան
Խիստ օրէնքներով ըզգուշացնում են։
Սպանիայի մէջ թագուհիներին
Հեշտ չէ մեղանչել։ — Ես հաւատում եմ —
Բայց աւելի վատ, եթէ յաջողէր
Մեզ այստեղ նոցա մի բանում բռնել։

ԱԼԲԱ

Լսեցէք։ — Այսօր արքան ընդունեց
Կարլոս իշխանին ամբողջ ժամի չափ։
Իշխանը խնդրեց, որ իրան յանձնուի
Նիդերլանդիայի կառավարութիւնն։
Շատ և շատ խնդրեց։ Ես կից սենեակում
Ականջ էի դնում։ Լացից աչքերը
Կարմրել էին, երբ պատահեցայ
Նորան դռան մէջ։ Ցետոյ, կէսօրին
Տեսնում եմ Նորան. դէմքը փայլում է
Ուրախութենից։ Նա ըզմայլած է,
Որ թագաւորն ինձ նախադասել է.
Եւ շնորհակալ է։ Հանգամանքները
Այլ են, ասում է, և աւելի լաւ։
Նա կեղծաւորուիլ երբէք չըգիտէր։
Ի՞նչպէս հասկանամ ուրեմն ես այս
Հակասութիւնը։ Իշխանն ուրախ է,
Որ անպատուած է, և թագաւորը
Ինձ շնորհ է տալիս սաստիկ բարկութեամբ —
Արդեօք ի՞նչ կարծեմ։ Այս նոր պատիւը
Կարծես աքսոր է և ոչ թէ շնորհ։

ԴՕՄԻՆԳՕ

Բանն այդ տեղ հասաւ, այդ տեղ։ Եւ մի հատ
Բոպէն կործանեց, ինչ որ շինեցինք
Մենք տարիներով։ Եւ դուք, դուք այդպէս
Հանգի՞ստ, անտարբե՞ր։ — Ճանաչո՞ւմ էք այդ
Երիտասարդին։ — Գուշակո՞ւմ էք, թէ
Մեզ ի՞նչ է սպասում, երբ նա զօրանայ։ —

Իշխանը — նորան ես թշնամի չեմ։
Ուրիշ հոգսեր են մաշում իմ սիրտը,
Հոգսեր աթոռի, Աստուծոյ և սուրբ
Հաւատի համար։ Իշխանը (նորան
Ես ճանաչում եմ — գիտեմ նրա հոգին)
Մի զարհուրելի միտք է յղացել —
Տօլէդօ — մի միտք. թագաւոր դառնալ
Եւ մեր սուրբ կրօնը ուրանալ։ — Մի նոր
Առաքինութեամբ վառուել է սիրտը,
Որով նա հպարտ, ապահով և գոհ,
Չէ ուզում մուրալ ոչ մի կրօնից։ —
Նա մտածում է։ Նորա ուղեղը
Բորբոքուել է մի անսովոր ցնորքով —
Ցարգել մարդկանցը — Դուքս, կարող է նա
Մեր արքան լինել։

ԱԼԲԱ

Երաշ, գուցէ և
Պատանեկական մեծամտութիւն,
Որ կամենում է դեր խաղալ։ — Բայց նա
Շատ շուտ կըփոխուի, երբ հրամայելու
Կարգն իրան հասնի։

ԴՕՄԻՆԳՕ

Ես կասկածում եմ։ —
Նա շատ հպարտ է իւր ազատութեամբ,
Նա սովորած չէ բռնութեան, որ և
Ինքը բռնանայ — Արդեօք յարմա՞ր է
Մեր գահի համար։ Նորա համարձակ
Ոգին կը քանդէ մեր քաղաքական
Նպատակները։ Զուր աշխատեցի
Ես այդ յամառին տանջել ներկայի
Մոլութիւններով։ Դիմացաւ փորձին —
Սարսափելի է նրա մէջ այդ ոգին —
Եւ փիլիպպոսը վախսունի մէջ է։

ԱԼԲԱ

Շատ հեռատես էք։

ԴՈՄԻՆԳՈ

Նա և թագուհին

Միախորհուրդ են։ Արդէն սողում է,
թէև ծածկաբար, երկուսի մէջ էլ
Նորութեան թոյնը, բայց շուտով յայտնի
Նա կըներգործէ, երբ գահին տիրէ։
Ես ճանաչում եմ այդ վալուային —
Պէտք է վախենանք այդ թշնամուհուց,
եթէ նա իշխէ Փիլիպպոսի վրայ։
Դեռ ևս բաղդը մեզ ողորմած է.
Առաջը կտրենք։ — Մի թակարդի մէջ
Զգենք երկուսին — Հիմա արքային
Մի նշան կըտանք. հաստատ, անհաստատ, —
Բաւական է որ կասկածաւորուի։
Մենք չենք կասկածում։ Եւ համոզուածին
Հեշտ է համոզել նոյնպէս ուրիշին։
Անշուշտ դեռ ևս շատ բան կըբանանք,
Երբ հաւաստի ենք, որ պիտի բանանք։

ԱԼԲԱ

Բայց ահա հիմա գլխաւոր հարցը.
Ո՞վ պիտի յայտնէ այդ բանն արքային։

ԴՈՄԻՆԳՈ

Ոչ դուք և ոչ ես։ Լսեցէք, ծածուկ
Ինչ եմ պատրաստել մեր նպատակին
Հասնելու համար։ Մեր դաշնակցութեան
Պակաս է երրորդ, գլխաւոր անձը։ —
Արքան Էբոլի իշխանուհու վրայ
Սիրահարուած է։ Ես սնդում եմ
Այդ կիրքը, որ ինձ շատ օգտակար է։
Ես եմ միջնորդը — Այդ օրիորդին
Մեր նպատակի համար եմ կրթում —
Եթէ յաջողի, պէտք է նորա մէջ
Մի դաշնակցուհի, պէտք է թագուհի
Ծաղկի մեզ համար։ Նա ինքն է այստեղ

Այժմ ինձ կանչել։ Ես մեծ յոյս ունիմ,
Վալուայի տան այն շուշաններըը
Մի Սպանիացի աղջիկ կըկոխէ
Գուցէ մի գիշեր։

ԱԼԲԱ

Այս ի՞նչ եմ լսում։
Իրաւ այդպէ՞ս է — երկինքը վկայ,
Ես չէի սպասում։ Այդ լաւ հարուած է։
Դու զարմացնում ես ինձ, դոմինիկեան։
Հիմա մենք տարանք։

ԴՈՄԻՆԳՈ

Սա։ Ո՞վ է դալիս։
Նա է, նա ինքը։

ԱԼԲԱ

Կից սենեակումն եմ,
Եթէ որ —

ԴՈՄԻՆԳՈ

Շատ լաւ։ Ես ձեզ կըկանչեմ։
(Ալբան դուրս է գնում)

ՏԱՍՆԵՒՄԷԿԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՑԹ

ԻՇԽԱՆՈՒՀԻ, ԴՈՄԻՆԳՈ.

ԴՈՄԻՆԳՈ

Ի՞նչ կըհրամայէք, տիրուհի՛

ԻՇԽԱՆՈՒՀԻ

(հեռաքրքրութեամբ նայելով դքսի ետեւից)

Մթէ

Մենակ չէ՞նք այստեղ։ Ինչպէս տեսնում եմ,
Դուք մի վկայ էլ բերել էք ձեզ հետ։

ԴՈՄԻՆԳՈ

Ի՞նչպէս։

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Այն ո՞վ էր, որ իսկոյն գնաց։

ԴՈՄԻՆԳՈ

Այդ դուքս Ալբան էր, որ շնորհ է խնդրում
Ինձանից յետոյ ձեզ ներկայանալ:

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Դուքս Ա՞լբան: Արդեօք ի՞նչ է կամենում:
Ըզգիտէ՞ք դուք:

ԴՈՄԻՆԳՈ

Ե՞ս, և առաջ քան թէ
Կիմանամ, թէ ինչ նշանաւոր դէպք
Վաղուց չունեցած բաղդին ինձ կրկին
Արժանացնում է տեսնուիլ Էբօլի
Իշխանուհու հետ:

(լռութիւն, որի միջոցին նա սպասում է նորա պատասխանին)

Արդեօք վերջապէս
Հանդամանքները բարեյաջող են
Մեր թագաւորի ցանկութիւններին:
Արդեօք իմ յոյսը հիմնաւոր էր, թէ
Լաւ մտածելով կընդունէք դուք մի
Առաջարկութիւն, որ մերժում էիք
Ինքնահաճութեամբ: Ես մեծ յուսով եմ:—

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Տարա՞ք արքային վերջին պատասխանս:

ԴՈՄԻՆԳՈ

Ո՛չ, ես չուզեցի այդպէս մահու չափ
Խոցել նրա սիրտը: Դեռ, իմ տիրուհի,
Դեռ ժամանակ կայ: Ձեզնից է կախուած
Կրկին մեղմացնել ձեր պատասխանը:

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Գնացէ՛ք, յայտնեցէ՛ք արքային, որ ես
Նորան սպասում եմ:

ԴՈՄԻՆԳՈ

Իրա՞ւ, դեղեցիկ
Իմ իշխանուհի:

ԻՇԽԱՆՈՒՀԻ

կատակ չեմ անում։

Աստուած վկայ, դուք, ինձ վախեցնում էք։—
Արդեօք ի՞նչ արի, որ մինչև անգամ—
Մինչև անգամ դուք դունաթափուեցաք։

ԴՕՄԻՆԳՕ

Իշխանուհի՛, այս ուրախութիւնը—
Ո՛հ, ես ըմբռնել անգամ չեմ կարող։

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Գերապատիւ տէր, հարկաւոր էլ չէ։
Բոլոր աշխարհը տան ինձ, չէի ուզի։
Որ դուք ըմբռնէք։ Բաւականացէք,
Որ այդ այդպէս է։ Զուր մի՛ աշխատէք
Իմանալ, թէ ո՞ւմ պերճախօսութեան
Պարտական էք այդ փոփոխութիւնը։
Մխիթարուեցէք, որ այդ մեղքի մէջ
Դուք մանակից չէք, անմասն է նոյնպէս
Եւ եկեղեցին, թէև դուք արդէն
Ինձ ապացուցիք, որ եկեղեցին
Երբեմն իւր աղջկանց մարմիններն անգամ
Զոհում է բարձր նպատակներին։
Ոչ էլ այդ բանը։ — Տէր, այդ բարեպաշտ
Սկզբունքները շատ բարձր են ինձ համար։

ԴՕՄԻՆԳՕ

Մեծ ուրախութեամբ յետ կառնեմ, եթէ
Աւելորդ էին։

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Խնդրում եմ ասէք
Արքային, որ նա սխալ չըմեկնէ
Իմ արարմունքը։ Ես էլի նոյնն եմ,
Ինչ առաջ էի։ Հանգամանքները
Միայն փոխուել են։ Երբ ես բարկութեամբ
Մերժեցի նորա առաջարկութիւնն,
Կարծում էի, թէ նա բ ա ղ դ ա ւ ո ր է

Ամենասիրուն իւր ամուսնու հետ —
Ես կարծումէի, որ հաւատարիմ
Ամուսնու համար արժէ ինձ զոհուիլ.
Բայց այդ առաջէր — առաջ։ Իսկ հիմա,
Հիմա, ի հարկէ, ուղիղը գիտեմ։

ԴՕՄԻՆԳՕ

Շարունակեցէ՛ք, շարունակեցէ՛ք,
Իշխանուհի՛, մենք մեզ հասկանումենք։

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Այսքան հերիք է, որ նա բռնուած է.
Ես էլ աւելի չեմ խնայի նորան։
Նենդաւոր գողը արդէն բռնուած է։
Թէ թագաւորը, թէ ողջ Սպանիան,
Թէ ես խաբուած ենք։ Ես հիմա գիտեմ,
Որ նա սիրումէ։ Ես ապացոյցներ
Ունիմ, որոնք նրան կըսարսափեցնեն։
Արքան խաբուած է — Բայց, Աստուած վկայ,
Անպատիժ չի մնայ նորան խաբողը։
Վսեմ, գերբնական առաքինութեան
Դիմակը նորա դէմքից կըխլեմ,
Որ ողջ աշխարհը տեսնէ յանցաւոր
Կնոջ ճակատը։ Այդ բանն ինձ համար
Անչափ թանգ արժէ — Բայց ահա՛ ինչ է
Իմ ցնծութիւնը, իմ յաղթանակը —
Որ նորա համար աւելի թանգ է։

ԴՕՄԻՆԳՕ

Հիմա ամեն ինչ լաւ է։ Թոյլ տուէք,
Դքսին ներս կանչեմ։

(Նա դուրս է գնում)

ԻՇԽԱՆՈՒՀԻ (զարմացած)

Արդեօք այս ի՞նչ է։

ՅԱՕՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԵՐԵԻՈՑԹ

ԻՇԽԱՆՈՒՀԻ, ԴՈՒՔՍ ԱԼԲԱ, ԴՕՄԻՆԳՕ.

ԴՕՄԻՆԳՕ

(Ներս է բերում դքսին)

Մեր համբաւը, դո՛ւքս, այստեղ ուշ հասաւ։
Իշխանուհին մեզ ինքը յայտնում է,
Մի գաղտնիք, որ նա պիտի մեզանից
Իսկոյն իմանար։

ԱԼԲԱ

Ուրեմն նորան
Շատ չի զարմացնի այցելութիւնս։
Ես իմ աչքերին շատ չեմ հաւատում,
Այստեղ կնոջ սուր աչք է հարկաւոր։

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Ի՞նչ էք իմացել։ —

ԱԼԲԱ

Մենք ցանկանում ենք,
Տիրուհի՛, լսել, ի՞նչ տեղ և կամ ե՞րբ
Կարող էք դուք մեզ —

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Շատ լաւ։ Ուրեմն
Վաղը առաւօտ կրսպասեմ ես ձեզ։
Ես պատճառ ունիմ էլ չըպահել այս
Դատապարտելի գաղտնիքը ծածուկ —
Պէտք է անյապաղ յայտնել արքային։

ԱԼԲԱ

Դորա համար իսկ եկել ենք ձեզ մօտ։
Արքան այդ իսկոյն պէտք է իմանայ,
Պէտք է ձեզանից լսէ, տիրուհի՛։
Ո՞ւմ աւելի հեշտ կրհաւատայ նա,
Ո՞ւմ, եթէ ոչ իւր ամուսնու արթուն
Ընկերակցուհուն։

ԴՈՄԻՆԳՈ

Ո՞ւմ, եթէ ոչ ձեզ,
Որ թէ կամենաք, կարող էք Նրա վրայ
Անսահման իշխել։

ԱԼԲԱ

Կարլոս իշխանի
Թշնամին եմ ես։

ԴՈՄԻՆԳՈ

Նոյնը կարծում են
Ամենքն իմ մասին։ Իսկ իշխանուհին
Ազատ է։ Ինչտեղ մենք պիտի լռենք,
Ձեզ ձեր պաշտօնը ստիպում է խօսել։
Արքան մեր ձեռից կարող չէ փախչել,
Երբ ձեր խօսքերը կազդեն նորա վրայ։
Ցետոյ մենք արդէն բանը կըշինենք։

ԱԼԲԱ

Բայց պէտք է շտապել։ Վայրկեանը թանգ է։
Ես ամեն րոպէ կարող եմ հրաման
Ստանալ երթալու —

ԴՈՄԻՆԳՈ

(կարճ մտածմունքից յետոյ դառնալով իշխանուհուն)
Արդեօք չե՞նք կարող
Նամակները գտնել։ Մեծ զարկ կըտային
Գործին, եթէ որ իշխանից գրած
Նամակներ բռնենք։— Բայց կա՛ց — հա՛, իրա՛ւ —
Դուք և թագուհին քնում էք — կարծեմ —
Մէկ սենեակի մէջ

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Ո՛չ, ես քնում եմ
Կից սենեակի մէջ։— Բայց այդտեղ ի՞նչ կայ։

ԴՈՄԻՆԳՈ

Վատ չէր ձեռք բերել բանալիները։—
Արդեօք չէ՞ք տեսել, ի՞նչ տեղ է պահում
Նա սովորաբար արկղի բանալին։

ԻՇԽԱՆՈՒՀԻ (մտածելով)

Այդպէս գուցէ թէ։— Հա՛, ես կարող եմ
Գտնել բանալին։ —

ԴՈՄԻՆԳՈ

Նամակին պէտք է
Տանող և բերող — — Շատ են Թագուհու
Հետևորդները — — Արդեօք չե՞նք կարող
Մենք մի հեռք գտնել — — Ի հարկէ, փողը
Շատ բան կարող է։ —

ԱԼԲԱ

Արդեօք իշխանին
Ո՞վ է մտերիմ։

ԴՈՄԻՆԳՈ

Եւ ոչ մի հոգի
Ամբողջ Մադրիդում։

ԱԼԲԱ

Զարմանալի է։

ԴՈՄԻՆԳՈ

Ինձ հաւատացէք։ Ես փորձով գիտեմ,
Որ ողջ պալատը արհամարհում է։

ԱԼԲԱ

Բայց կա՛ց։ Հա՛, հիմա նոր միտս ընկաւ։
Երբ ես դուրս եկայ Թագուհու մօտից
Նախասենեակը, այնտեղ իշխանը
Մանկաւիկներից մէկի հետ ծաՃուկ
Ինչ որ խօսում էր։

ԻՇԽԱՆՈՒՀԻ

(շուտ խօսքի մէջ ընկնելով)

Ո՛չ, ո՛չ, այդ ուրիշ —
Այդ ուրիշ բան էր։

ԴՈՄԻՆԳՈ

Կարելի չէ՞ մեզ

Արդեօք իմանալ։— Այս հանգամանքը
Կասկածելի է։—

(դէպ ին)

Ճանաչո՞ւմ է.ք դուք
Այն մանկաւիկին։

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Այդ դատարկ բան է։
Ոչինչ է։ Գիտեմ։— Դեռ ես չը խօսած
Թագաւորի հետ, մենք կը տեսնուինք—
Իսկ այդ միջոցին շատ բան կը յայտնուի.

ԴՕՄԻՆԳՕ

(նորան մի կողմը տանելով)

Եւ Թագաւորը կարո՞ղ է յուսալ,
Կարո՞ղ եմ նորան յայտնել։ Հա՞։ Հաստա՞տ։
Եւ ո՞րն է արդեօք դեղեցիկ ժամը,
Որում վերջապէս նորա իղձերը
Պիտի կատարուին։

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Այս մօտ օրերում
Կը հիւանդանամ։ Ինձ կը հեռացնեն
Թագուհու մօտից։ Այսպէս է կարգը
Մեր պալատի մէջ։ Եւ այն ժամանակ
Ես իմ սենեակում կը մնամ մենակ։

ԴՕՄԻՆԳՕ

Բաղդը մեր կողմն է։ Էլ չենք վախենում
Թագուհիներից։—

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Ահա՛ Թագուհին
Ինձ պահանջում է, կրկին սեսուԹիւն.

(շտապով դուրս է գնում)

ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՑԹ

ԱԼԲԱ, ԴՈՄԻՆԳՈ·

ԴՈՄԻՆԳՈ

(կարճ լռութենից յետոյ, որի միջոցին նա աչքերով հետևել էր Իշխանուհուն)

Դուք այս վարդերը և ձեր մարտերը —

ԱԼԲԱ

Եւ քո Աստուածը — Այդպէս կըսպասեմ
Կայծակին, որ մեզ պիտի խորտակէ:

(Նոքա դուրս են գնում)

Վանքի մէջ:

ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՑԹ

ԴՈՆ ԿԱՐԼՈՍ, ՎԱՆԱՀԱՅՐ

ԿԱՐԼՈՍ

(վանահօրը, այն ինչ ներս է մտնում)

Արդէն այստեղ էր: — Շատ ափսոսում եմ.

ՎԱՆԱՀԱՅՐ

Առաւօտուանից նա երեք անգամ
Արդէն եկել է: Դեռ մի ժամ չկայ,
Ինչ որ գնացել է: —

ԿԱՐԼՈՍ

Բայց էլի կըգայ:
Զասա՞ց, որ կըգայ:

ՎԱՆԱՀԱՅՐ

Կէսօրից առաջ
Խոստացաւ նա գալ:

ԿԱՐԼՈՍ

(մօտ գնալով պատուհանին և դուրս նայելով)

Ձեր մենաստանը

Հեռու է կանգնած ճանապարհներից—
Ահա այն կողմը, տեսէք, Մադրիդի
Աշտարակները — Այնտեղ հոսում է
Մանսարանէսը — Այս տեսարանը
Իմ ցանկացածն է — Այստեղ ամեն բան
Անձայն և լուռ է, ինչպէս մի դաղտնիք:

ՎԱՆԱՀԱՅՐ

Ասացէք. ինչպէս միւս կեանքի մուտքը:

ԿԱՐԼՈՍ

Ձեր ազնվութեան, գերապատիւ տէր,
Հաւատացել եմ, ինչ որ ինձ համար
Ամենից թանգ է, ամենից սուրբ է:
Ոչ ոք չիմանայ և կամ դուշակէ
Թէ ում հետ այստեղ ծածուկ խօսել եմ:
Շատ երևելի պատճառներ ունիմ
Բոլոր աշխարհի առաջ ուրանալ
Այն մարդուն, որին այստեղ սպասում եմ:
Եւ դորա համար այս վանքն ընտրեցի:
Դաւաճաններից և յարձակմունքից
Ցուսով եմ այստեղ մենք ապահով ենք:
Ցիշեցէ՛ք, ինչ որ ինձ խոստացել էք:

ՎԱՆԱՀԱՅՐ

Հաւատացէ՛ք մեզ, ողորմած տէր իմ,
Թագաւորների կասկածը ոչինչ
Որոնելու չէ գերեզմաններում:
Հետաքրքրութեան ականջը միայն
Բաղդի և կրքի դռան վերայ է:
Այս պարիսպներից դուրս է աշխարհը:

ԿԱՐԼՈՍ

Գուցէ կարծում էք, թէ այս զգուշութեան,
Այս երկիւղի տակ մեղքով ծանրացած
Մի խիղճ է սողում:

ՎԱՆԱՀԱՅՐ

Ոչինչ չեմ կարծում:

ԿԱՐԼՈՍ

Դուք սխալվում էք, ով բարեպաշտ հայր,
Իրաւ սխալվում էք: Գաղտնիքս մարդկանց
Առաջն է դողում, բայց ոչ Աստուծոյ:

ՎԱՆԱՀԱՑՐ

Որդեակ, մեզ համար այդ հարկաւոր չէ:
Ապաստանութեան այս տունը բաց է
Թէ յանցանքին և թէ անմեղութեան:
Արդեօք այն, ինչ որ դու մոռադրել ես
Բարի է, թէ չար, ազնիւ, անազնիւ —
Այդ թող որոշէ սեփական սիրտդ:

ԿԱՐԼՈՍ (ջերմութեամբ)

Մեր գաղտնիքը, հայր, ոչինչ նախատինք
Չէ ձեր Աստծուն: Նորա սեփական,
Գեղեցիկ գործն է — կարող եմ ասել ;
Ձեզ մինչև անգամ:

ՎԱՆԱՀԱՑՐ

Ի՞նչ հարկաւոր է:
Ազատեցէ՛ք ինձ, իշխան, այդ բանից:
Վաղուց կնքել եմ, թողել եմ աշխարհն
Եւ իւր գործերը, հեռու ճանապարհ
Գնալու պատրաստուած: Ի՞նչ հարկաւոր է
Քանդել կնիքը այս կարճ միջոցում
Հրաժեշտից առաջ — Շատ քիչ բան է պէտք
Մեր երջանկութեան — Ահա հնչում է
Ժամի զանգակը: — Գընամ աղօթեմ:
(վանահայրը դուրս է գնում)

ՅԱՍՆԵՒՀԻՆԳԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՑԹ

ԴՈՆ ԿԱՐԼՈՍ, ՄԱՐԿԻԶ ՊՕԶԱ ներս է մտնում

ԿԱՐԼՈՍ

Ահա վերջապէս ես քեզ տեսնում եմ:

ՄԱՐԿԻԶ

Ո՛Հ, որքան ծանր է մի բարեկամի
Անհամբերութեան համար այս փորձը։
Արեգակն երկու անգամ ծագել է
Եւ երկու անգամ մայր մտել, ինչ որ
Կարլոսիս վիճակը որոշել է։
Եւ ես միայն հիմա պիտի իմանամ։ —
Ասա, հաշտուեցաք։

ԿԱՐԼՈՍ

Ո՞վ։

ՄԱՐԿԻԶ

Դու և արքան։
Եւ Ֆլանդրիայի գործն էլ վճռած է։

ԿԱՐԼՈՍ

Որ դուքսը վաղը պիտի գնայ այնտեղ —
Այդ վճռած է, հա։

ՄԱՐԿԻԶ

Անկարելի է։
Ո՛չ, ո՛չ, այդպէս չէ։ Միթէ խաբուած է
Ամբողջ Մադրիդը։ Դու ընդունուեցար
Արքայից, և նա —

ԿԱՐԼՈՍ

Մնաց անսասան։

ՄԱՐԿԻԶ

Չե՞ս գնայ Ֆլանդրիա։

ԿՈՐԼՈՍ

Ո՛չ, ո՛չ։

ՄԱՐԿԻԶ

Ո՛Հ, իմ յոյս։

ԿԱՐԼՈՍ

Բայց այդ թող մնայ։ Ո՛վ իմ Բոդրիգո,
Ինչ որ բաժնուեցանք միմեանցից, ինչեր

Զանցան իմ գլխին։ Բայց նախ խորհուրդ տուր։
Ինձ հարկաւոր է տեսնել թագուհուն։

ՄԱՐԿԻԶ

Մ՞որդ — Ո՛չ — ինչի՞։

ԿԱՐԼՈՍ

Ես մեծ յոյս ունիմ։ —
Դու գուշակում ես։ Ո՛չ, հանդարտ եղիր։
Ես պէտք է, պէտք է բաղդաւոր լինիմ։ —
Բայց դորա մասին յետոյ։ Այժմ ասա.
Ի՞նչպէս տեսնեմ նրան։

ՄԱՐԿԻԶ

Ի՞նչ բան է, կարլոս։
Ի՞նչ հիմք ունի քո այդ նոր երազը։

ԿԱՐԼՈՍ

Երազ չէ, եղբայր, Աստուած վկայ, ո՛չ։
Սա իսկութիւն է, այո՛, իսկութիւն,
(հանելով թագաւորի գրած նամակը Էբոլի իշխանուհուն)
Որ սորա մէջն է։ Հիմա թագուհին
Ազատ է, ազատ թէ մարդկանց և թէ
Երկնքի առաջ։ Ահա՛. ՝ա՛ռ, կարդա՛,
Եվ չես զարմանայ։

ՄԱՐԿԻԶ (նամակը բանալով)

Այս ի՞նչ եմ տեսնում։
Արքայի գիրն է։
(կարդալուց յետոյ)
Այս ո՞ւմն է գրուած։

ԿԱՐԼՈՍ

Էբոլի իշխանուհուն։ — թագուհու
Մանկլաւիկներից մէկը անցեալ օր
Տուեց ինձ մի նամակ և մի բանալի,
Ուղարկուած ինձ մի անծանօթ անձից։
Այն նամակի մէջ նշանակուած էր
Մի առանձնարան թագուհու բաժնում,

Ուր ինձ սպասում էր մի կին, որին ես
Վաղուց սիրում եմ։ Իսկոյն զընացի —

ՄԱՐԿԻԶ

Գընացի՞ր, անմի՞տ։

ԿԱՐԼՈՍ

Գիրն ինձ ծանօթ չէ —
Բայց կինը ծանօթ։ Բացի նորանից
Ուրիշ ո՞վ պէտք է իրան համարէ
Կարլոսից պաշտուած։ Ես յափշտակուած
Վազում եմ այնտեղ։ Իմ առաջնորդն է
Մի հրաշալի երգ սենեակի ներսից —
Ես բաց եմ անում դուռը և մտնում —
Բայց ո՞ւմն եմ գտնում — Ո՛վ սարսափ։

ՄԱՐԿԻԶ

Արդէն
Գուշակում եմ ես։

ԿԱՐԼՈՍ

Ես կորած էի,
Բօդրի՛գօ, կորած, եթէ հրեշտակի
Ձեռը չընկնէի։ Ի՛նչ անբաղդ դիպուած։
Խաբուած անզգոյշ իմ հայեացքներից,
Նա ենթարկվում է քաղցր պատրանքին,
Իրան կարծելով պաշտուած նոցանից։
Կարեկից հոգոյս ծածուկ վշտերին,
Նրա փափուկ սիրտը վերհանձնաբար, բայց
Զըմտածելով, համոզվում է սէր
Առաջարկել ինձ։ Պատկառանքը ինձ
Ստիպում է լռել։ Նա ընդհատում է
Իմ լռութիւնը — և բաց դրուած է
Առաջս նորա գեղեցիկ սիրտը։—

ՄԱՐԿԻԶ

Եւ այդպէս հանդարտ պատմում ես դու այդ—
Իշխանուհին քո սիրտը թափանցեց։
Էլ կասկած չկայ, որ նա իմացաւ

Սիրոյդ ամենաճաճուկ գաղանիքը։
Դու անպատուել ես նորան չափազանց։
Նա թագաւորի վերայ իշխում է։

ԿԱՐԼՈՍ

Նա շատ ազնիւ է և առաքինի։

ՄԱՐԿԻԶ

Իւր սիրոյ օգտի համար է այդպէս —
Ճանաչում եմ այդ առաքինութիւնն.
Ես վախենում եմ սաստիկ դորանից —
Որքան ստոր է դա այն գաղափարից,
Որ հոգու նոյն իսկ մայրական ծոցից
Հպարտ, գեղեցիկ շքով բողբոջած,
Ազատ ծլում է և շքեղ ծաղկում,
Առանց օգնութեան մի պարտիզպանի։
Դա օտար ճիւղ է հարաւայինին
Նմանեցրած, մի կոշտ կլիմայում բուսած.
Կրթութիւն ասա, համոզմունք, ինչպէս
Կուզես անուանիր։ Դա մի ստացական
Անմեղութիւն է բորբոքուած արնից
Խորամանկութեամբ, խիստ մրցմամբ խլած,
Ճշտութեամբ գրուած երկնքի հաշվում,
Որ պահանջում է այդ և վարձատրում։
Ի՞նքդ մտածիր. նա այդ կրնե՞ր
Երբէք թագուհուն, որ մի տղամարդ
Նորա սեփական, դժուար ձեռք բերած
Առաքինութեան վրայ անուշադիր,
Զուր այրուի անյոյս սիրոյ բոցերում
Դոն Փիլիպպոսի ամուսնու համար։

ԿԱՐԼՈՍ

Այդպէս լաւ գիտե՞ս դու իշխանուհուն։

ՄԱՐԿԻԶ

Ի հարկէ որ չէ։ Հաղիւ տեսել եմ
Նրան երկու անգամ։ Բայց թոյլ տուր ասեմ
Քեզ էլի մի խօսք։ Ինձ թվում է, որ

Նա ծածկում էր իւր թուլութիւնները,
Նա լաւ գիտէր իւր առաքինութիւնն։
Ցեռոյ թագու հուն տեսայ։ Ո՛հ, Կարլոս,
Ի՜նչ տարբերութիւն։ Ինածին, հանդարտ
Վսեմութեամբ, անհոգս թեթեւմտութեան,
Մարդավարութեան սերտած ձեւերին
Իսպառ անծանօթ, հաւասար հեռու
Ցանդգնութենից 'ւ երկչոտութենից,
Հաստատ քայլերով, ինչպէս դիցուհի,
Ման է գալիս նա պատշաճ՝ի անձուկ
Միջին շաւիղով, չընկատելով,
Որ հարկադրում է պաշտել իւր անձը
Նոյն իսկ այնտեղ, ուր նա երազել չէ
Հաւանել իրան։ Արդեօք Կարլոսս
Եւ այստեղ, և այս հայելու մէջ էլ,
Այժմ էլ ճանաչում է իւր էբօլին։—
Նա անսասան էր, քանի սիրում էր.
Սէրն էր միայն նորա առաքինութիւնն.
Զրվարձատրեցիր նորան — նա կընկնի։

ԿԱՐԼՈՍ

(փոքր ինչ սաստկութեամբ)

Ո՛չ, ո՛չ, չի ընկնի։

(մի քանի քայլ յետ ու առաջ անելուց յետոյ)

Ոչ, ասում եմ քեզ —
Ո՛հ, թէ գիտենար Բոդրիգոն, ինչպէս
Վայելում է նրան խլել իւր Կարլոսից
Նորա երկնային երջանկութիւնը,
Նորա հաւատը մարդկային բնութեան
Վսեմութեան վերայ։

ՄԱՐԿԻԶ

Արժանի՞ եմ այդ
Ցանդիմանութեան։—Ես այդ չեմ ուզում,
Հոգոյս սիրական, Աստուած վկայ, ո՛չ։
Ո՛հ, այդ էբօլին — թող հրեշտակ լինէր,

Եւ մեծ յարգանքով ես էլ կընկնէի
Նորա վսեմութեան առաջ, ինչպէս դու.
Միայն թէ չիմանար նա քո գաղտնիքը:

ԿԱՐԼՈՍ

Տես, որքան անհիմն է քո երկիւղը:
Արդեօք ունի՞ նա այլ ապացոյցներ,
Բացի նոցանից, որոնցից ինքը
Պիտի ամաչի: Կրկամենայ նա
Գընել վըրէժը իւր պատուի դնով:

ՄԱՐԿԻԶ

Արդէն շատերը, որ չը կարմրին,
Զոհել են իրանց նշաւակութեան:

ԿԱՐԼՈՍ

(սաստկութեամբ տեղից վեր կենալով)

Ո՛չ, այդ քո կողմից անզթութիւն է:
Նա շատ հպարտ է, նա շատ ազնիւ է:
Ես ճանաչում եմ և չեմ վախենում:
Զուր ես աշխատում յոյսս վախեցնել,
Պէտք է անպատճառ խօսիմ մօրս հետ:

ՄԱՐԿԻԶ

Հիմա՞. բայց ինչի՞:

ԿԱՐԼՈՍ

Էլ ոչինչ բանի

Հիմա չեմ նայի — պէտք է որոշուած
Տեսնեմ վիճակս: Աշխատի՛ր, որ ես
Խօսիմ նորա հետ:

ՄԱՐԿԻԶ

Եւ այդ նամակը
Ուզում ես ցոյց տալ: Իրաւ ուզում ես:

ԿԱՐԼՈՍ

Այդ մասին ոչինչ մի՛ հարցնիր: Միայն
Հնար ցոյց տուր, որ ես խօսիմ նորա հետ:

ՄԱՐԿԻԶ (ծանրութեամբ)

Զասացիր, որ դու սիրում ես մորդ—
Ուզում ես ցոյց տալ նրան այդ նամակը:

(Կարլոսը նայում է դեռնին և լռում է)

Կարլոս, դէմքիդ վրայ կարդում եմ մի բան,
Որ բոլորովին նոր է ինձ համար,
Որ բոլորովին անծանօթ էր ինձ
Մինչև այս րոպէն: Դու քո երեսը
Դարձնում ես ինձնից: Ուրեմն ուղիղ է.
Տուր տեսնեմ, արդեօք ուղիղ կարդացի:—

(Կարլոսը տալիս է նորան նամակը: Մարկիզը պատռտում է)

ԿԱՐԼՈՍ

Այդ ի՞նչ ես անում, խելագարուի՞լ ես:

(մեղմանալով)

Ճշմարիտ—ես քեզ խոստովանում եմ,
Այդ նամակը շատ թանդ էր ինձ համար:

ՄԱՐԿԻԶ

Այդպէս էր թվում: Դորա համար իսկ
Պատռտեցի ես:

(Մարկիզը ձգում է մի սուր թափանցող հայեացք իշխանի վերայ, որ երկմտութեամբ նայում է նորան: Երկար լռութիւն)

Հօրդ անկողնի
Անպատվութիւնը ի՞նչ գործ ունի քո
Սիրոյ հետ, Կարլոս: Վատանդաւո՞ր էր
Քեզ Փիլիպպոսը: Ի՞նչ կապ կարող է
Ամուսնու դժրաձ պարտքերը կապել
Քո յոյսերի հետ: Մեղանչե՞լ է նա,
Ասա՛ ինձ, ինչ տեղ որ դու սիրում ես:
Նոր եմ ըսկսում ես քեզ ճանաչել:
Ո՛հ, մինչև հիմա որքա՜ն վատ եմ ես
Հասկացել սէրդ:

ԿԱՐԼՈՍ

Ի՞նչպէս, Բոդրիգո.
Դու ի՞նչ ես կարծում:

ՄԱՐԿԻԶ

Ո՛Հ, ես տեսնում եմ,
Թէ ինչ բանից ես պիտի յետ սովրիմ։
Հա՛, մի ժամանակ այդպէս չէիր դու.
Երբեմն դու շատ, շատ հարուստ էիր։
Քո սիրտը տաք էր, ամբողջ աշխարհը
Տեղաւորվում էր արձակ կուրծքիդ մէջ.
Այժմ այդ չըկայ։ Կիրքը և ընչին
Ինքնասիրութիւնն այժմ այդ բոլորը
Ոչնչացրել են։ Եվ քո աչքերը
Արտասուք չունին խեղճ նահանջների
Այն անտանելի վիճակի համար.
Հա՛, չունին մէկ հատ արտասուք անգամ։
Ո՛Հ, Կարլոս, որքա՜ն, որքա՜ն աղքատ ես,
Ինչ որ ոչ ոքին էլ չես սիրում դու,
Բացի քեզանից։

ԿԱՐԼՈՍ

(ընկնում է մէկ աթոռի վերայ։—Կարճ լռութենից յետոյ հազիւ լացը պահելով)

Ես գիտեմ, որ դու
Ինձ էլ չես յարգում։

ՄԱՐԿԻԶ

Այդպէս չէ, Կարլոս։
Ես ճանաչում եմ այդ վրդովմունքը։
Դա մի գովելի զգացման սխալմունք է.
Քեզ էր պատկանում թագուհին, արքան
Իլեց քեզանից — Բայց մինչև հիմա
Դու համեստութեամբ չէիր հաւատում
Քո իրաւունքին։ Դուցէ Փիլիպպոսն
Արժանի էր նրան։ Դու վստահ չէիր
Քո կարծիքի վրայ։ Նամակը վճռեց։
Տեսար, դու էիր արժանաւորը։
Ցնծալով տեսար բռնութեան վիճակն
Արդէն որոշուած։ Շատ ուրախացար,
Որ դու զրկուած ես. որովհետև միշտ

Զրկանք կրելը շողոքորթումէ.
Ազնիւ սրտերին։ Բայց այստեղ միայն
Դու մոլորուեցար։ Հպարտութիւնդ
Բաւականութիւն ըզգաց — սիրտդ յոյս։
Հիմա տեսնում ես. ես լաւ գիտէի,
Որ դու այս անգամ չես հասկացել քեզ։

ԿԱՐԼՈՍ (շարժուած)

Սխալ ես, Բոդրիգո։ Ես այդքան ազնիւ
Չէի մտածում, ամենևին ոչ,
Ինչպէս ուզում ես ինձ հաւատացնել։

ՄԱՐԿԻԶ

Ուրեմն այդպէս ես ճանաչում դու ինձ։
Տես, Կարլոս, երբ որ դու սխալվում ես,
Ես միշտ ուզում եմ գտնել մի ազնիւ
Շարժառիթ, որին տամ քո սխալը։
Բայց հիմա, որ մենք միմեանց հասկացանք,
Հիմա դու պէտք է տեսնես թագուհուն—

ԿԱՐԼՈՍ

(փաթաթուելով նորա վզին)

Բոդրիգո, ինչպէս ամաչում եմ ես։

ՄԱՐԿԻԶ

Ես քեզ խօսք տուի։ Մնացածն ես գիտեմ։
Վայրենի, յանդուգն, բաղդաւոր մի միտք
Ծնաւ ուղեղս։ — Դու մի գեղեցիկ
Բերանից պէտք է լսես իմ միտքը։
Ես կրմօտենամ թագուհուն։ Գուցէ
Արդէն վաղը իսկ որոշուի բանը։
Մինչև այդ, Կարլոս, չըմոռանաս, որ՝
Մի մտադրութիւն, որ թելադրուած է
Իմաստութենից, մարդկութեան ծանր
Ցաւը սփիռումէ ձեռից չըթողնել,
Թէև չաջողէր և հաղար անգամ։ —
Լսո՞ւմես, Կարլոս, յիշէր Ֆլանդրիան։

ԿԱՐԼՈՍ

Այո՛, բոլորը պատրաստ եմ անել,
Ինչ որ պատուիրէք ինձ դու և վսեմ
Առաքինութիւնն:

ՄԱՐԿԻԶ

Ժամանակն անցաւ:
Արդէն գալիս են հետևորդներդ:
(Նոքա գրկում են միմեանց)
Հիմա դու կրկին թագաժառանգ ես,
Ես մի հպատակ:

ԿԱՐԼՈՍ

Այժմ ուղղակի
Քաղաքն ես գնում:

ՄԱՐԿԻԶ

Այո՛:

ԿԱՐԼՈՍ

Կա՛յ: Մի խօսք:
Փոքր մնայ, որ մոռանում էի:—
Երևելի լուր: — «Բրաբանտ ուղարկուաղ
Բոլոր գրերը կարդում է արքան»:
Զգոյշ կաց, Բոդրիգո: Նամակատունը,
Ես գիտեմ, ծածուկ հրաման է ստացել:

ՄԱՐԿԻԶ

Ի՞նչպէս իմացար,

ԿԱՐԼՈՍ

Դոն Բայմոնդ Տակսիսն
Իմ բարեկամն է:

ՄԱՐԿԻԶ

(կարճ լռութենից յետոյ)
Այդպէ՞ս: Ուրեմն
Հիմա կուղարկենք Գերմանիայով:
(Նոքա դուրս են գնում զանազան կողմերից)

ԵՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

թագաւորի ննջարանը

ԱՌԱՋԻՆ ԵՐԵՒՈՑԹ

Մի սեղանի վերայ երկու վառած մոմ։ Սենեակի ետևի կողմը մի քանի մանկլաւիկներ քնած են ծունկ չոքած։ ԹԱԳԱՒՈՐԸ, վրայի շորը հանած, կանգնած է սեղանի առաջ հատ կուռը աթոռի վերայ կախուած. նա մտածմունքի մէջ է. նորա առաջ ընկած են մէկ մէդալիօն և թղթեր։

ԹԱԳԱՒՈՐ

Որ նա ցնորասէր մի կին է եղել,
Այդ ո՞վ կուրանայ։ Երբէք չէի կարող
Ես սէր տալ նորան։ — Բայց ե՞րբ ցոյց տուեց
Թէ զգում է նորա պակասութիւնը։
Ուրեմն հաստատ է — նա խաբեբայ է։

(այստեղ նա անում է մի շարժողութիւն, որով զգաստանում է և զարմանալով վեր է կենում)

Ի՞նչ տեղ էի ես։ Բացի արքայից
Ոչ ոք արթուն չէ՞ — Ահա մոմերը
Արդէն հանգչում են. դեռ լուսացել չէ՞։ —
Քունս կորցրել եմ։ Բնութիւն, համբեր
Քեզ հանգստացած։ Արքան քնելու
Ժամանակ չունի։ Ես արթուն եմ, և
Որ պիտի լինի. —

(նա հանգցնում է մոմերը և բաց է անում պատուհանի վարագոյրը։—Յետու առաջ քայլելով նա նկատում է քնած տղերանցը և մի քանի ժամանակ լուռ կանգնում է նոցա առաջ. յետոյ քաշում է զանգակը)

Արդեօք քնա՞ծ են
Նմանապէս և իմ նախասենեակում։

ԵՐԿՐՈՐԴ ԵՐԵԽՈՅԹ

ԹԱԳԱՒՈՐ, ԿՈՄՍ ԼԷՐՄԱ.

ԼԷՐՄԱ

(սաստիկ զարմանում է Թագաւորին տեսնելով)

Ձերդ Մեծութիւն, լաւ չէ՞ք ըզգում ձեզ։

ԹԱԳԱՒՈՐ

Կրակ կար պալատի ձախ թևում, Լէրմա։
Միթէ աղմուկը դուք չըլսեցի՞ք։

ԼԷՐՄԱ

Ոչինչ չեմ լսել, Ձերդ Մեծութիւն։

ԹԱԳԱՒՈՐ

Ոչի՞նչ։ Ուրեմն երազո՞ւմն էի։
Առանց պատճառի այդ չի պատահի։
Արդեօք թագուհին չէ՞ քնում այնտեղ։

ԼԷՐՄԱ

Այո՛, տէր արքայ։

ԹԱԳԱՒՈՐ

Այս երազը ինձ
Վախեցրեց։ Պէտք է պահապանների
Թիւը շատացնել այնտեղ, լսո՞ւմ էք,
Երբ որ կըմթնի — Բայց բոլորովին
Ծածուկ, որ ոչ ոք — ես չեմ ուզում, որ —
Ի՞նչ էք աչքերով ինձ այդպէս քննում։

ԼԷՐՄԱ

Ես տեսնում եմ մի բորբոքուած հայեացք,
Որ քուն է խնդրում։ Ես յանդգնում եմ
Ձեր Մեծութեանը յիշեցնել մի կեանք,
Որ թանդագին է. ժողովուրդները
Ցիշեցնել, որոնք անքուն լուսացրած
Գիշերի հետքը պէտք է երկիւղով
Կարդան ձեր դէմքին։ — Միայն երկու ժամ
Առաւօտեան քուն —

ԹԱԳԱՒՈՐ (*խառնուած աչքերով*)

Ես քուն կը գտնեմ
Էսկուրիալի մէջ։ — Քանի որ արքան
Քնած է, կը կորցնէ իւր թագը, այրը—
Իւր կնոջ սիրտը։ — Ո՛չ, ո՛չ, այս միայն
Զրպարտութիւն է։ — Չէ՞ որ մի կին է,
Որ իմ ականջին ասաց այդ բանը։
Կնոջ անունը զրպարտութիւն է։
Չէ, չեմ հաւատայ ես այդ յանցանքին,
Մինչև մի այր մարդ ինձ չը հաստատէ։
(*մանկաւիկներին, որոնք այդ միջոցին զարթել են*)
Դուքս Ալբան թող գայ։

(*մանկաւիկները դուրս են գնում*)

Առաջ եկէք, կոմս։
Ճշմարիտ է, հա՞։
(*Նա կանգնում է կոմսի առաջ և աչքերով զննում է նորան*)
Ո՛հ, մի ակնթարթ
Եւ ըստուգութիւն — երդուեցէք, իրաւ
Ճշմարի՞տ է, հա՞։ Խաբուա՞ծ եմ, խաբուա՞ծ։
Իրա՞ւ։

ԼԷՐՄԱ

Տէ՛ր արքայ։

ԹԱԳԱՒՈՐ (*յետ գնալով*)

Արքայ, արքայ միայն,
Եւ դարձեալ արքայ — Ոչինչ աւելի
Մի լաւ պատասխան։ Ահա՛ զարկումեմ
Այս ապառաժին, ուզումեմ ջուր, ջուր,
Այրող ծարաւս հանդարտեցնելու —
Նա ինձ տալիս է բորբոքուած ոսկի։

ԼԷՐՄԱ

Ի՞նչն է ճշմարիտ, տէր արքայ։

ԹԱԳԱՒՈՐ

Ոչինչ։
Թողէ՛ք ինձ, գնացէ՛ք։
(*կոմսը ուզում է հեռանալ. նա կրկին յետ է կանչում նորան*)

Ամուսնացած էք։
Դուք հայր էք, կոմս, հա՞։

ԼԷՐՄԱ

Այո՛, վերհափառ։

ԹԱԳԱՒՈՐ

Ամուսնացած էք և չէ՞ք վախենում
Մի գիշեր մնալ ձեր տիրոջ դռանը։
Ձեր գլուխը ինչպէս արծաթ սպիտակ է,
Եւ չէ՞ք ամաչում հաւատալ ձեր կնոջ
Աղնվութեանը։ Ո՛հ, գնացէ՛ք ձեր տուն։
Այնտեղ կըգտնէք նորան ձեր որդու
Բնութիւնը պղծող գրկածութեան մէջ։
Հաւատացէ՛ք ձեր արքային, գնացէ՛ք—
Դուք զարմանո՞ւմ էք— Ապշած նայո՞ւմ էք
Դուք իմ երեսին — որովհետև ես
Ինքս ծածկուած եմ սպիտակ մազերով։
Ո՛վ թշուառական, լա՛ւ մտածեցէք,
Թագուհիները իրանց անունը
Չեն բծաւորում։ Ձեզ մահ է սպասում,
Թէ կասկածումէք։ —

ԼԷՐՄԱ

Այդ ո՞վ կարող է։
Ո՞վ կը յանդգնի արքային բոլոր
Երկիրների մէջ այն հրեշտակային
Առաքինութեան նայել կասկածի
Թունաւոր աչքով. այն ամենալաւ
Թագուհուն այդպէս—

ԹԱԳԱՒՈՐ

Ամենալաւը,
Ուրեմն և ձեր ամենալաւը։
Նա իմ շուրջ ունի լաւ բարեկամներ։
Այդ շատ թանգ պիտի արժած լինի նրան,
Շատ աւելի թանգ, քան թէ, կարծումեմ,
Կարող էր նա տալ։ Դուք արձակուած էք։
Կանչեցէք դքսին։

ԼԷՐՄԱ

Արդէն լսում եմ
Նախասենեակում նորա քայլերը։

ԹԱԳԱՒՈՐ (աւելի մեղմ եղանակով)

Կո՛մս, ճշմարիտ է, ինչ որ փոքր առաջ
Դուք նկատեցիք։ Անքնութենից
Գլուխս այրվում է։ Մոռացէ՛ք, ինչ որ
Արթուն երազում ասացի ես ձեզ։
Լսո՞ւմ էք, Լէ՛րմա։ Մոռացէ՛ք։ Ես ձեր
Ողորմած տէրն եմ։

(Նա մեկնում է Նորան իւր ձեռը համբուրելու։ Լէրման գնում է և բաց է անում դուռը դուքս Ալբայլին)

ԵՐՐՈՐԴ ԵՐԵՒՈՑԹ

ԹԱԳԱՒՈՐ, ԴՈՒՔՍ ԱԼԲԱ.

ԱԼԲԱ

(մօտենում է թագաւորին տարակուսանքով)

Այս անակնկալ
Հրամանը, արքա՛յ, — այն էլ այսպիսի
Անսովոր ժամում։

(Նա զարմանում է, երբ որ լաւ նկատում է թագաւորին)

Այս տեսարանը —

ԹԱԳԱՒՈՐ

(այդ միջոցին նստել է և սեղանից վեր է առել մէդալիոնը։ Նա երկար ժամանակ լուռ նայում է դքսին)

Ուրեմն իրա՞ւ է։ Էլ հաւատարիմ
Ծառայ չունի՞մ ես։

ԱԼԲԱ (կանգնած է ապշած և լուռ)

Ի՞նչպէս

ԹԱԳԱՒՈՐ

Մահուչափ
Անպատուած եմ ես — գիտէ՛ք, և ոչ ոք

ինձ չէ զգուշացնում,

ԱԼԲԱ (սաստիկ զարմացած)

Մի անպատվութիւն,

Որ իմ արքային է վերաբերում,

Եւ ես չըգիտեմ.

ԹԱԳԱՒՈՐ

(ցոյց տալով Նորան նամակները)

Ճանաչո՞ւմ էք դուք

Այս գիրը:

ԱԼԲԱ

Այո՛: Դօն Կարլոսինն է —

ԹԱԳԱՒՈՐ

(լռութիւն, որի միջոցին թագաւորը սուր քննում է դքսին)

Դեռ ևս ոչինչ չէ՞ք գուշակում դուք:

Դուք զգուշացրիք ինձ Նորա փառասէր

Նպատակներից: Արդեօք այդ էր միայն,

Որի առաջ ես պիտի դողայի:

ԱԼԲԱ

Փառասիրութիւնն ընդարձակ բառ է,

Նորա մէջ շատ բան է պարունակուած:

ԹԱԳԱՒՈՐ

Եվ ուրիշ ոչինչ չունի՞ք յայտնելու:

ԱԼԲԱ

(կարճ լռութենից յետոյ)

Ձեր Մեծութիւնը իմ պահպանութեան

Հաւատացել էք այս տէրութիւնը:

Եւ տէրութեանն եմ պարտական գաղտնի

Գիտութիւնս և խոհեմութիւնս:

Ինչ որ առանձին ես ենթադրում եմ,

Մտածում, գիտեմ, ինձ է պատկանում:

Դա է սրբազան սեփականութիւն,

Որ թէ ստրուկը, թէ հպատակը

Իրաւունք ունին չասել արքային —

Ո՛չ այն ամենը, ինչ որ ինձ համար
Պարզ է, հասուն է արքայիս համար։
Բայց թէ անպատճառ նա կամենում է
Բաւականութիւն տալ իւր ցանկութեան,
Խնդրում եմ հարցնէ ոչ իբրև իմ տէր.

ԹԱԳԱՒՈՐ

(տալիս է նորան նամակները)

Առէք կարդացէք։

ԱԼԲԱ

(կարդում է և վախեցած դառնում է թագաւորին)

Ո՞ր խելագարն է
Տուել արքայիս այս անբաղդ թերթը։

ԹԱԳԱՒՈՐ

Ուրեմն զիտէ՞ք խօսքն ում վերայ է —
Կարծեմ անունը մէջը յիշուած չէ։

ԱԼԲԱ. (շփոթուած յետ քաշուելով)

Տէր, ես շտապեցայ։

ԹԱԳԱՒՈՐ

Ասացէք, զիտէ՞ք։

ԱԼԲԱ. (կարճ մտածմունքից յետոյ)

Ես պէտք է խօսիմ։ Իմ տիրոջ կամքն է։
Ես էլ չեմ կարող — Ո՛չ, սուտ չեմ ասի։
Գիտեմ այն անձը —

ԹԱԳԱՒՈՐ

Ո՛հ, օգնի՛ր ինձ մի
Նոր մահ հնարել, ով վրէժխնդրութեան
Ահաւոր Աստուած։ — Ուրեմն այնպէս
Պարզ ու յայտնի է այդ թղթի միտքը,
Որ, առանց երկար քննութեան, իսկոյն
Մարդ իմանում է։ Այդ չափից դուրս է։
Ես չըզիտէի, ո՛չ, չըզիտէի,
Որ ես վերջինն եմ այդ բանն իմանում.
Վերջինն եմ ամբողջ տէրութեանս մէջ։ —

ԱԼԲԱ. (ընկնում է թագաւորի առաջ)

Խոստովանում եմ յանցանքս, արքայ։

Ես ամաչում եմ, ամաչում երկչոտ
Խոհեմութենից, որի խորհրդով
Ես լուռ մնացի, այն ինչ արքայիս
Պատիւը, այն ինչ արդարութիւնը,
Ճշմարտութիւնը հարկադրում էին
Ինձ, որ ես խօսիմ — Բայց որովհետև
Ամենքը լուռ են — և զեղեցկութեան
Կախարդութիւնը պապանձեցրել է
Բոլոր այր մարդկանց, ես յանդգնում եմ
Խօսիլ, թէպէտև գիտեմ, որ որդու
Գրաւիչ խօսքերը, որ մի ամուսնու
Սիրտը հրապուրող զեղեցկութիւնը,
Արտասուքները —

ԹԱԳԱՒՈՐ (շուտ և սաստկութեամբ)

Վե՛ր կացէք, Ալբա՛,
Անվա՛խ խօսեցէք ինձ հետ — Վե՛ր կացէք։

ԱԼԲԱ

Գուցէ յիշում էք, Ձերդ Մեծութիւն,
Արանջուէցի ամարանոցում
Պատահած անցքը, երբ դուք թագուհուն
Մենակ և շփոթուած գտաք պարտիզում —

ԹԱԳԱՒՈՐ

Ա՛հ, ինչ եմ լսում։ Շարունակեցէ՛ք։

ԱԼԲԱ

Մարկիզուհին Մօնդէկար գնաց աքսոր,
Որովհետև նա այնքա՛ն վեհանձն էր։
Որ իրան զոհեց թագուհու համար —
Հիմա յայտնի է — որ մարկիզուհին
Արել էր, ինչ նրան հրամայել էին.
Կարլոս իշխանը այնտեղ է եղել։

ԹԱԳԱՒՈՐ (սաստիկ բարկութեամբ)

Այնտե՞ղ է եղել —

ԱԼԲԱ

Մի այր մարդու հետք

Աւազում, որ այն ճեմելքի ճախ
Մուտքից ըսկսուած գնում էր կորչում
Մի քարայրի մէջ, ինչտեղ ընկած էր
Եւ մի թաշկինակ, որ կորցրել էր
Իշխանը, իսկոյն կասկած պատճառեց։
Պարտիզպաններից մէկը իշխանին
Տեսել էր այնտեղ նոյն իսկ բոպէին,
Երբ պարտէզ մտաք Ձեր Մեծութիւնը։

ԹԱԳԱՒՈՐ (մռայլ մտածմունքից յետոյ)

Եւ նա լաց եղաւ, երբ ես յայտնեցի
Նորան զարմանքս։ Ես կարմրեցայ
Այնտեղ իմ բոլոր պալատի առաջ։
Ինքս իմ առաջ կարմրեցայ ես —
Աստուած վկայ է, նորա այն վսեմ
Առաքինութեան առաջը ինչպէս
Մի դատապարտուած կանգնած էի ես —
(երկար և խոր լռութիւն. նա նստում է և երեսը ծածկում է)
Այո՛, դո՛ւքս Ալբա — Դուք ճշմարիտ էք —
Այս ինձ կարող է ստիպել սոսկալի
Մի վճիռ անել։— Թողէք մի բոպէ
Առանձին մնամ։

ԱԼԲԱ

Արքա՛յ, այդ բանը
Դեռ բոլորովին չէ վճռում գործը —

ԹԱԳԱՒՈՐ (թղթերը խառնելով)

Ո՛չ այս, և ոչ այս, ոչ էլ դարձեալ այս,
Եւ ոչ այս բոլոր, այս դատապարտող
Ապացոյցները։ Ոչ, բանը պարզ է —
Այդ բանը վաղուց արդէն գիտէի —
Յանցանքը սկսուեց նոյն իսկ բոպէին
Երբ որ առաջին անգամ Մադրիդում
Ես ընդունեցի նորան ձեզանից —
Հիմա յիշում եմ, ինչպէս սարսափած,
Մեռելի գոյնը երեսին փռուած,

Նայում էր նա իմ ալիքների վրայ։
Այնտեղ սկսեց նա նենգաւոր խաղը։

ԱԼԲԱ

Իշխանը զրկուեց իւր երիտասարդ
Մօր մէջ իւր հարսից։ Արդէն երկուսի
Սիրտն էլ ցնցվում էր քաղցր իղձերով,
Վառուած էր սիրով, որոնց արդելեց
Նոր դրութիւնը։ Երկիւղն էլ չըկար,
Որ սովորաբար միշտ ուղեկից է
Սիրոյ առաջին խոստովանութեան։
Եւ յիշատակը անցեալ օրերի
Սկսեց աւելի համարձակ խօսիլ։
Կապուած մտքերի և հասակների
Ներդաշնակութեամբ, դժգոհ ստիպմունքից,
Աւելի վստահ հնազանդվում էին
Կրքի յուզմունքին։ Նոցա ձգտմանը
Առաջը կտրեց քաղաքի՛անութիւնն։
Ի՞նչպէս հաւատալ, տէ՛ր արքայ, թէ նա
Այդ իրաւունքը ծերակոյտին տայ,
Թէ նա զսպեց իւր վավաշոտութիւնն,
Որ ուշադրութեամբ քննէ դիւանի
Արած ընտրութիւնն։ Նա սպասում էր սէր,
Եւ ստացաւ — մի թագ։

ԹԱԳԱՒՈՐ

(վիրաւորուած և դառնութեամբ)

Շատ խորն էք քննում —
Շատ խորը, Աչքա՛։— Ափսոսում եմ ձեր
Պերճախօսութեան։— Շատ շնորհակալ եմ։
(վեր կենալով, սառնութեամբ և հպարտութեամբ)
Դուք ճշմարիտ էք։ Այո՛, թագուհին
Շատ մեղանչել է, որ նա ինձանից
Ծածուկ է պահել այս նամակները,
Որ նա ինձանից թաղցրեց իշխանի
Գարտիզում գալը։ Նա շատ սխալուել է,

Սխալուել է մնոտի մեծահոգութեամբ.
Ես գիտեմ, ինչպէս կըպատժեմ նորան:
(քաշում է դանդակը)
Եվ ուրիշ ո՞վ կայ նախասենեակում —
Եվ հարկաւոր չէ՞ք ինձ, դուքս, հեռացէ՛ք:

ԱԼԲԱ

Մի՞թէ ես կրկին անհաճոյ եղայ,
Տէ՛ր արքայ, ձեզ իմ ջերմեռանդութեամբ:

ԹԱԳԱՒՈՐ

(մանկլաւիկին, որ ներս է մտնում)
Դոմինգո՛ն թո՛ղ դայ:

(մանկլաւիկը դուրս է գնում)

Ես ձեզ ներում եմ,
Որ երկու բոպէ սիրտս վախեցրիք
Դուք մի յանցանքով, որ կարող է միայն
Ձեր դէմ կատարուիլ:

(Ալբան գնում է)

ՉՈՐՐՈՐԴ ԵՐԵՒՈՑԹ

ԹԱԳԱՒՈՐ, ԴՈՄԻՆԳՈ.

ԹԱԳԱՒՈՐ

(մի քանի անգամ քայլում է յետ ու առաջ, որ հանդարտուի)

ԴՈՄԻՆԳՈ

(մտնում է դքսի հեռանալուց մի քանի բոպէից յետոյ, մօտենում է թագաւորին և մի քանի ժամանակ հանդիսաւոր լռութեամբ նայում է նորան)

Ինչպէս ուրախ եմ
Եւ հիանում եմ, որ Ձեր Մեծութեան
Տեսնում եմ այդպէս հանդիստ, անվրդով:

ԹԱԳԱՒՈՐ

Դուք հիանո՞ւմ էք:

ԴՈՄԻՆԳՈ

Փառք և գոհութիւն
Նախախնամութեան, որ իմ երկիւղը
Անհիմն է եղել։ Այժմ աւելի
Կարող եմ յուսալ։

ԹԱԳԱՒՈՐ

Երկիւղ։ Ի՞նչ բանից։

ԴՈՄԻՆԳՈ

Ես չեմ ուրանայ, տէր արքայ, որ ես
Մի գաղտնիք գիտեմ։

ԹԱԳԱՒՈՐ (մռայլ կերպով)

Ցայտնեցի՞ արդէն
Կամքս իմանալ ձեր այդ գաղտնիքը։
Այդ ո՞վ ինքնակամ առաջս կտրեց։
Մեծ յանդգնութիւն, պատի՛ւս վկայ։

ԴՈՄԻՆԳՈ

Վեհափառ տէր իմ, առիթը, տեղը,
Ուր ես իմացայ, կնիքը, որի տակ
Ես այն իմացայ, այդ մեղադրանքից
Ազատումն ինձ։ Խոստովանքի մէջ
Աւանդուեցաւ ինձ որպէս մի յանցանք,
Որ ծանրացնում է յայտնողի խիղճը
Եւ թողութիւն է խնդրում երկնքից։
Ուշ արդէն զղջաց իշխանուհին իւր
Այն արարմունքը, որից սպասում է
Շատ սարսափելի հետևանքներ իւր
Թագուհու համար

ԹԱԳԱՒՈՐ

Ճշմարիտ։ Որքա՜ն
Բարեսիրտ է նա։ — Դուք չէք սխալուել,
Թէ ինչի համար ես ձեզ կանչել եմ։
Դուք պէտք է հանէք ինձ այս մռայլոտ
Լաբիւրինթոսից, որի մէջ ձգեց

ինձ մի կոյր եռանդ։ Ձեզնից սպասումեմ
Ես ճշմարտութիւն։ Անկեղծ խօսեցէք։
Ինչի՞ն հաւատամ, ի՞նչ որոշում տամ։
Ճշմարտութիւն եմ՝ պահանջում ես ձեր
Պաշտօնից։

ԴՕՄԻՆԳՕ

Արքայ, եթէ որ նոյն իսկ
Փափուկ պաշտօնս չըդնէր ինձ վրայ
Ներելու քաղցր պարտաւորութիւնն,
Սակայն էլի ձեզ պէտք աղաչեմ,
Ձեր հանգստութեան համար աղաչեմ,
Արդէն յայտնածով բաւականանալ։
Զըշարունակել քննել մի գաղտնիք,
Որ ուրախալի չի պարզուի երբէք։
Ինչ այժմ յայտնի է, կարող էք ներել։
Արքայի բերնից մի բառ, մի հատ բառ—
Եւ չէ մեղանչել երբէք թագուհին։
Արքայի կամքը կարող է մէկին
Առաքինութիւն և թէ բաղդ շնորհել—
Միայն իմ տիրոջ միշտ հանդարտ հոգին
Կարող է վերջ դնել բոլոր լուրերին,
Որոնց բամբասանքը տարածում է։

ԹԱԳԱՒՈՐ

Լուրե՞ր։ Իմ մասի՞ն, ժողովուրդիս մէ՞ջ

ԴՕՄԻՆԳՕ

Ստեր, տէր արքայ, դատապարտելի
Ստեր, երդվում եմ։ Բայց կան դիպուածներ,
Երբ ժողովուրդի հաւատը, թէ և
Սուտ և անհաստատ, անցնում է իբրև
Զուտ ճշմարտութիւն։

ԹԱԳԱՒՈՐ

Եւ այդ դիպուածը
Հիմա՞ է, հիմա՞—

ԴՈՄԻՆԳՈ

Բարի անունը

Է մի թանկագին, եզակեան բարիք,
Որի համար միշտ պէտք է թագուհին
Մրցի հասարակ մարդու կնոջ հետ։

ԹԱԳԱՒՈՐ

Ես յոյս ունիմ, որ վտանգի մէջ չէ
Բարի անունը։

(Նա ձգում է Դոմինգոի վերայ կասկածոտ հայեացք։ Կարճ լռութենից յետոյ)

Տէրտէր ես պէտք է,
Աւելի վատ բան լսեմ ձեզանից։
Մի՛ յետաձգէք։ — Վաղուց կարդում եմ
Ձեր չարագուշակ դէմքի վրայ ես այդ։
Շուտով ասացէք։ Ինչ կուզէ լինի։
Մի թողնէք երկար այս տանջանքի մէջ։
Ի՞նչ կարծիք ունի իմ ժողովուրդը։

ԴՈՄԻՆԳՈ

Կրկնում եմ, տէր իմ, որ ժողովուրդը
Կարող է սխալուիլ — և նա սխալվում է։
Նորա կարծիքը պէտք է արքային
Երբէք չըշփոթէ — Միայն որ այդքան
Համարձակուել է նա այդ հաստատել —

ԹԱԳԱՒՈՐ

Մի կաթիլ թոյնի համար պէտք է ձեզ
Այսքան աղաչեմ։

ԴՈՄԻՆԳՈ

Տէր, ժողովուրդը
Մտաբերում է դեռ այն ամիսը,
Երբ որ մերձ ի մահ հիւանդ էիք դուք —
— Երեսուն եօթնեակ նորանից յետոյ
Կարդաց թագուհու աղատման լուրը —

(Թագաւորը վեր է կենում և քաշում է զանգակը։ Մանում է դուքս Ալբան Դոմինգոն չուարած)

Զարմանում եմ, տէր։

ԹԱԳԱՒՈՐ:

(Դքսին դէմ դնալով)

Տօլէդո, այր էք։

Պաշտպանեցէ՛ք ինձ այս քահանայից,

ԴՕՄԻՆԳՕ

(Նա և դուքս Ալբան տարակուսած նայում են միմեանց վերայ։ Կարճ լռութենից յետոյ)

Եթէ առաջուց մենք գիտենայինք,

Որ այս համբաւի համար կըպատժուինք —

ԹԱԳԱՒՈՐ

Ապօրինածի՛ն է, ասում էք դուք։

Հաղիւ թէ մահից ազատուել էի,

Երբ որ թագուհին իրան մայր ըզդաց —

Ի՞նչպէս։ Չէ՞ որ այդ այն ժամանակն էր,

Երբ որ դուք իսկ սուրբ Դօմինիկոսին

Տաճառների մէջ փառաբանեցիք

Այդ հրաշքի համար, որ ցոյց տուեց ինձ —

Ինչ որ հրաշք էր առաջ, այժմ էլ չէ՞։

Ապա ուրեմն կամ այն ժամանակ

Եւ կամ թէ հիմա սուտ էք խօսում դուք։

Ասացէ՛ք տեսնեմ, ո՞րին հաւատամ։

Ես բոլորովին թափանցում եմ ձեզ։

Թէ այն ժամանակ պատրաստ էր եղել

Ձեր դաւը, սուրբը կըզըկուէր փառքից։

ԱԼԲԱ

Դա՞ւ։

ԹԱԳԱՒՈՐ

Ապա ի՞նչպէս կարող էիք դուք

Այդ անօրինակ ներդաշնակութեամբ

Միմեանց հասկանալ, եթէ առաջուց

Չէք համաձայնել։ Եւ դուք ուզում էք

Ինձ հաւատացնե՞լ։ Մի թէ կարծում էք,

Թէ չե՞մ նկատել, ինչ ադահութեամբ

Ցարձակուեցաք ձեր կողոպուտի վրայ։

Եւ թէ որպիսի բաւականութեամբ
Զուարճանում էիք դուք իմ վշտերով
Եւ իմ բարկութեամբ։ Միթէ չէ՞մ տեսնում
Թէ ինչ եռանդով առաջէ ընկնում
Դուքսը այն շնորհին, որ որդուս համար
Էի պատրաստել։ Ինչ ուրախութեամբ
Բարեպաշտ հայրը առաջէր տանում
Իւր փոքրիկ ոխը, օգուտ քաղելով
Իմ բարկութենից։ Դուք կարծում էք ինձ
Աղէ՞ղ ձեր ձեռին, որ ինչպէս ուզէք
Կարող էք լարել— Ես դեռ կամք ունիմ—
Եւ թէ պէտք է ինձ կասկածել, ապա
Թողէք, որ ես նախ ձեզանից սկսեմ։

ԱԼԲԱ

Տէր, այդ խօսքերին արժանի չէ մեր
Հաւատարմութիւնն։

ԹԱԳԱՒՈՐ

Հաւատարմութի՞ւն։
Հաւատարմութիւնը զգուշացնում է
Սպառնող յանցանքից. վրէժխնդրութիւնը
Խօսում է, երբ որ կատարուած է նա։
Ասացէք ինձ. ի՞նչ օգտուեցայ ես ձեր
Ծառայութենից։ — Եթէ ուղղղ է,
Ինչ որ ասում էք, ի՞նչ է մնում ինձ
Բացի բաժանման սոսկալի վերքից
Եւ վրէժխնդրութեան տխուր յաղթանակից.—
Բայց ոչ, դուք միայն երկիւղ էք յայտնում,
Միայն անհաստատ կասկածներ տալիս.
— Անդունդի ափը կանգնած թողնում էք
Ինձ ու փախչում էք։

ԴՕՄԻՆԳՕ

Միթէ հնա՞ր են
Այլ ապացոյցներ, երբ կարելի չէ
Աչքը համոզել։

ԹԱԳԱՒՈՐ

(երկար լռութենից յետոյ ծանր և հանդիսաւոր կերպով դառնալով դէպի դուքսը)

Ես կը ժողովեմ։
Տէրութեան բոլոր մեծամեծներին,
Ինքս կը դատեմ։ Առաջ եկէք դուք —
Եթէ սիրտ ունիք — ամբաստանեցէք
Այնտեղ թագուհուն իբրև պոռնիկ կին —
Նա մահ կը ստանայ — առանց փրկութեան —
Նա և ինքնանտը — բայց լաւ իմացէք,
Թէ արդարանան — դուք պիտի մեռնիք։
Պատրաստ էք յարգել ճշմարտութիւնը
Այդպիսի ըսհով։ Շուտ որոշեցէք։
Զէ՞ք ուզում։ Լո՞ւռ էք։ Իրաւ չէ՞ք ուզում —
Ապա ուրեմն դուք խաբեփայ էք։

ԱԼԲԱ

(որ լուռ կանգնած էր մի կողմը, սառնութեամբ և հանդարտութեամբ)

Տէ՛ր, ես ուզում եմ։

ԹԱԳԱՒՈՐ

(զարմացած դառնում է նորա կողմը, և մի քանի ժամանակ անթարթ աչքով նայում է նորան)

Շատ համարձակ էք։
Բայց ես յիշում եմ, որ արիւնահեղ
Պատերազմներում երբէք չէք խնայել
Ձեր կեանքն աւելի փոքր բանի համար —
Եւ թեթևամիտ խաղացողի պէս
Բաղդին էք յանձնել նրան փառքի համար —
Կեանքը ձեզ համար մի ոչինչ բան է —
Ես արքայական արիւնը երբէք
Զոհ չեմ բերելու խելացնորին,
Որ չունի այլ յոյս, քան թէ իւր ընչին
Գոյութեան վախճան տալ մի փառաւոր —
Ոչ, ես մերժում եմ ձեր զոհ։ — Գնացէ՛ք։
Գնացէ՛ք, դահլիճում կիմանաք կամքս.

(Ալբան և Դոմինգոն դուրս են գնում)

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՑԹ

ԹԱԳԱՒՈՐ (մենակ)

Այժմ մարդ տուր ինձ, մի մարդ, ով բարի
Նախախնամութիւն. — Շատ բան ես տուել:
Այժմ խնդրում եմ, պարզևիր մի մարդ:
Դու, դու միայն ես. ոչինչ կարող չէ
Ծածկուիլ քո աչքից: Խնդրում եմ շնորհես
Ինձ մի բարեկամ, որովհետև ես
Ամենագէտ չեմ, ինչպէս որ դու ես:
Օգնականներս, որոնց տուել ես,
Դու գիտես, ինչ են: Ինձ շատ թանգ արժեն
Այդ ծառաները: Նոցա կրքերը
Սանձի տակ դրած ծառայում են
Իմ նպատակներին, ինչպէս կայծակներդ
Մաքրում են աշխարհ: Ես ճշմարտութեան
Կարօտ եմ— Նորա հանդարտ աղբիւրը
Չեն կարող գտնել թագաւորները
Կեղտոտ աղբիւսի մէջ մոլորութեան:
Տուր ինձ այնպիսի հաղուագիւտ մի մարդ,
Որ սիրտ ունենայ բաց և անարատ,
Պարզ հոգի և աչք անկաշառելի,
Որ օգնէ գտնել ինձ այն աղբիւրը. —
Ահա խառնում եմ վիճակը. օգնիր
Այն հազարներից, որոնք իմ դահի
Ճառագայթներում շարժվում են, գտնել
Իմ ցանկացածին

(Նա բաց է անում արկղը և հանում է մի յիշատակարան. բաւական մի-
ջոց գիրքը թերթելուց յետոյ)

Միայն անուններ

Գրուած են այստեղ — բայց ոչ մի վաստակ
Չէ յիշուած, որով նոքա այս գրքում
Տեղ են ըստացել — Ի՞նչն է մոռացվում՝
Այնպէս շուտ, ինչպէս շնորհակալութիւնն:

Բայց միւս երեսին ճիշտ ստորագրած է
Ամեն մի յանցանք։ Այս լաւ չէ։ Մի՞թէ
Ցիշողութիւնը վրէժխնդրութեան
Կարօտ է դեռ ևս սորա օգնութեան։
(շարունակում է կարդալ)
Ով է՞ — Կոմն Էդմոնտ — Նա ի՞նչ է ուզում
Այստեղ — Յաղթութիւն Սէնտ Կէնտինի մօտ։
Հին բան է։ Թող գնայ մեռելների մօտ։
(Ջնջում է այդ անունը և գրում է ուրիշ թերթի վերայ։ Շարունակում է կարդալ)
Մարկիզ դէ Պօ՞զա — Պօ՞զա — Հաղիւ թէ
Ցիշում եմ նորան, բայց երկու անգամ
Նշան եմ դրել — Ապացոյց, որ մեծ
Նպատակների համար ուզել եմ
Նորան գործ դնել։ Ի՜նչպէս այդ մարդը
Հեռու էր մնում մինչև այժմ ինձնից,
Եւ իւր պարտապան արքայի աչքից
Ծածկում էր իրան։ Իրաւ իմ բոլոր
Երկիրների մէջ դա է մէկ հատը,
Որ ինձ կարօտ չէ։ Եթէ նա լինէր
Շահասէր մէկը, կամ թէ փառասէր,
Վաղուց իմ գահի առաջ կերևէր։
Ե՛կ փորձեմ նորան։ Ով որ առանց ինձ
Կարող է ապրել, անշուշտ նորանից
Կարող եմ լսել ես ճշմարտութիւն։
(դուրս է գնում)

ՎԵՑԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՑԹ

ԴՈՆ ԿԱՐԼՈՍ խոսակցումէ ՊԱՐՄԱՑԻ ԻՇԽԱՆԻ հետ, ԱԼԲԱ-ՖԷՐԻԱ և ՄԷԴԻՆԱ ՍԻԴՈՆԻԱ ԴՌՍԵՐԸ, ԿՈՄՍ ԼԷՐՄԱ և ուրիշ ԻՇԽԱՆՆԵՐ ձեռներին թղթեր բռնած, բոլորն էլ սպասում են թագաւորին։

ՄԷԴԻՆԱ ՍԻԴՈՆԻԱ

(որից բոլորն էլ աչկարայ հեռանում են, դառնում է դուքս Ալբային, որ մենակ և մտածելով քայլում է յետ ու առաջ)

Դուք խօսում էիք, դո՛ւքս, արքայի հետ —
Ի՞նչպէս է նորա հոգու դրութիւնը։

ԱԼԲԱ

Շատ վատ ձեզ՝ ու ձեր համբաւի համար։

ՄԷԴԻՆԱ ՍԻԴՕՆԻԱ

Աւելի հեշտ էր ինձ Անդլիացոյ
Թնդանօթների կրակի մէջ, քան թէ
Այս յատակի վրայ։

(Կարլոս, որ լուռ կարեկցութեամբ նայում էր նորան, մօտենում է և սխմում է նորա ձեռը)

Իշխան, Ջերմեռանդ
Շնորհակալութիւնս ձեր վեհանձնութեան։
Տեսէք, ամենքը ինձնից փախչում են։
Հիմա որոշուած է իմ կորուստը։

ԿԱՐԼՈՍ

Դրէ՛ք ձեր յոյսը, բարեկամ, իմ հօր
Շընորհի և ձեր անմեղութեան վրայ։

ՄԷԴԻՆԱ ՍԻԴՕՆԻԱ

Ո՛հ, ես կորցրել եմ մի նաւատորմիղ,
Որի նմանը ծովը չէր տեսել։
Ի՞նչ է իմ գլուխը, համեմատելով
Այն եօթանասուն մեծ նաւերի հետ,
Որոնց կուլ տուեց ծովը — Բայց, իշխան,
Հինգ ձեզ պէս որդիք, ծաղկած հասակում —
Ահա այս է, այս իմ սիրտը կոտրում։

ԵՕԹՆԵՐՈՐԴ ԵՐԵԻՈՑԹ

ԹԱԳԱՒՈՐ, դուրս է գալիս հագնուած. ԱՌԱՋԻՆՆԵՐԸ. բոլորը վեր են առնում գլխարկները ու յետ են քաշվում երկու կողմը, կազմելով նորա բոլորքը մի կիսաշրջան. լռութիւն)

ԹԱԳԱՒՈՐ

(մի ընդհանուր հայեացք ձգելով նոցա վերայ)

Ծածկուեցէ՛ք։

(Դոն Կարլոս և Պարմայի իշխանը ամենից առաջ մոտենում են ու համբուրում թագաւորի ձեռը։ Նա բաւական բարեկամաբար է վարվում վերջինի հետ, առանց իւր որդու վերայ ուշադրութիւն դարձնելու)

Քոյրս հարցնում է, արդեօք
Բաւական ենք մենք ձեզնից, քեռորդի։

ՊԱՐՄԱ

Թող նա այդ հարցնէ, երբոր առաջին
Պատերազմից ես կը վերադառնամ։

ԹԱԳԱՒՈՐ

Մի՛ շտապէք, ձեզ էլ կարգը կը հասնի,
Երբ կը կոտրուին այս պինդ ոստերը։

(դուքս Ֆէրիային)

Ի՞նչ կայ, Ֆէրիա։

ՖԷՐԻԱ

(ծունկ խոնարհելով թագաւորի առաջ)

Կալատրավայի
Մեծ ասպետն այսօր առաւօտ մեռաւ,
Եւ նորա խաչը յետ է ուղարկուած։

ԹԱԳԱՒՈՐ

(առնում է խաչը և նայում է իւր շուրջ)

Նորանից յետոյ ո՞վ է արժանի
Կրել այս խաչը։

(Նշանով կանչում է Ալբային իւր մօտ, որ խոնարհում է նորա առաջ ծնկան վերայ և թագաւորը կախ է անում նշանը նորա կուրծքին)

Դուքս, իմ առաջին
Զօրավարն էք դուք — միայն այդ եղէք,
Եւ չի պակսի իմ շնորհը ձեզնից։

(նա նկատում է դուքս Մէդինա Սիդոնիային)

Վա՛հ, ծովապետս։

ՄԷԴԻՆԱ ՍԻԴՕՆԻԱ

(անհաստատ քայլերով մօտենում է թագաւորին և չոքում է նորա առաջ կորացած գլխով)

Այս է, տէր արքայ,
Բոլորը, ինչ որ ես յետ եմ բերում
Սպանիական զօրքից և Արմադայից։

ԹԱԳԱՒՈՐ

(երկար լռութենից յետոյ)

Ես Աստուծոյ տակն եմ — ես միայն մարդկանց դէմ
Ուղարկեցի ձեզ, ոչ թէ ժայռերի
Եւ մրրիկների — բարով էք եկել:

(Նա մեկնումէ նորան ձեռը համբուրելու համար)

Շնորհակալ եմ, որ ձեր մէջ ինձ համար
Մի արժանաւոր ծառայ պահեցիք:
Իշխաններ, այսպէս ճանաչել եմ ես,
Եւ դուք էլ պէտք է այսպէս ճանաչէք:

(Նշան է տալիս նորան, որ վեր կենայ և գլուխը ծածկէ — յետոյ դառնում է միւսներին)

Էլ ո՞վ ինչ ունի.

(Դոն Կարլոսին և Պարմայի իշխանին)

Իշխաններ, ձեզնից
Ես շնորհակալ եմ:

(Սոքա դուրս են գնում: Միւս իշխանները մօտենում են և չոքած յանձնում են թագաւորին իրանց թղթերը. նա շտապով կարդում է թղթերը և տալիս է դուքս Ալբային)

Տարէ՛ք սենեակս:
Վերջացա՛ւ արդեօք:

(ոչ ոք չէ պատասխանում)

Այս ի՞նչպէս է, որ
Իշխաններիս մէջ երբէք չեմ տեսնում
Մարկիզ Պօզային: Գիտեմ, որ փառքով
Ծառայել է ինձ: Ինչի՞ չէ յայտնվում:
Մեռա՞ել է գուցէ:

ԼԷՐՄԱ

Տէր արքայ, նա նոր
Վերադարձել է ճանապարդութենից
Եւրոպայի մէջ: Այժմ Մադրիդ է,
Եւ հանդիսաւոր օրուան է սպասում,
Որ գայ իւր տիրոջ ոտները ընկնի:

ԱԼԲԱ

Մարկիզ Պօզա — դա, Ձերդ Մեծութիւն,
Քաջ Մալտացին է, որ զարմանալի

Գործ է կատարել, ինչպէս պատմումեն։
Երբ մեծաւորի հրամանով բոլոր
Ասպետներն իրանց կղզին ժողվեցան,
Որ պաշարումէր Սուլթան Սոլիման,
Ցանկարծ դպրոցից, Ալկալայի մէջ,
Անյայտանումէ տասնութ տարեկան
Երիտասարդը, և անկոչ կանգնումէ
Լա Վալէտտայի դռների առաջ։
«Այս խաչն, ասումէ, գնեցին ինձ համար.
Այժմ ուզումեմ վաստակել նորան»։
Եւ նա էր մէկը այն ասպետներից,
Թով քառասուն, որոնք Պիալի,
Ուլուչիալի։ և Մուստաֆայի
Եւ Հասէնի դէմ ուղիղ կէսօրին
Սէնտ Էլմո ամրոցը պաշտպանեցին
Երեք իրար վրայ կրկնած կատաղի
Յարձակմունքներից։ Երբ որ վերջապէս
Ամրոցը առնվումէ և ասպետները
Բոլորը ընկնումէ, ձգումէ իրան
Ծովը և մենակ անվնաս հասնումէ
Նա Լա Վալէտտա։ Երբ երկու ամսից
Յետոյ թշնամին թողնումէ կղզին,
Ասպետը կրկին վերադառնումէ
Սկսած ուսումը շարունակելու։

ՖԷՐԻԱ

Մարկիզ Պոզան էր նոյնպէս, որ յետոյ
Այն երևելի դաւաճանութիւնն
Կատալոնիայում բացեց և միայն
Իւր ճարտարութեամբ տէրութեան համար
Այն նշանաւոր նահանգը պահեց։

ԹԱԳԱՒՈՐ

Շատ զարմանումեմ — Այդ ի՞նչ մարդ է նա
Որ այդ արել է և երբ հոգուց,
Որոնց հարցնումեմ, չունի նախանձող —

Անշուշտ այդ մարդը ունի անսովոր
բնաւորութիւն, կամ խսպառ չունի —
Իբրև հրաշք պէտք է նորան ես տեսնեմ։
(դուքս Ալբային)
Պատարագից յետ կըբերէք նորան
ինձ մօտ սենեակս։
(Դուքսը դուրս է գնում։ Դառնալով դուքս Ֆէրիային)
Դուք էլ կըբռնէք
իմ տեղը այսօր գաղտնի խորհրդում։
(դուրս է գնում)

ՖԷՐԻԱ

Այսօր մեր տէրը շատ ողորմած է։

ՄԷԴԻՆԱ ՍԻԴՕՆԻԱ

Լաւ է, ասացէք, թէ նա աստուած է —
Գոնէ ինձ համար։

ՖԷՐԻԱ

Դուք արժանի էք
Ձեր բաղդին։ Իրաւ, ես բոլոր սրտով
Համակրում եմ ձեզ։

ԻՇԽԱՆՆԵՐԻՑ ՄԷԿԸ

Ես էլ նմանապէս։

ԵՐԿՐՈՐԴԸ

Ճշմարիտ և ես։

ԵՐՐՈՐԴԸ

Սիրտս դողում էր։
Մի արժանաւոր ձեզ պէս ղօրավար։

ԱՌԱՋԻՆԸ

Ոչ թէ ողորմած էր արքան ձեզ հետ —
Այլ արդարադատ։

ԼԷՐՄԱ

(դուրս գնալով, Մէդինա Սիդոնիային)
Ո՛րքան հարուստ էք,
Ծովապետ, յանկարծ դուք երկու բառով։
(բոլորը դուրս են գնում)

թագաւորի առանձնարանը

ՈՒԹԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՑԹ

ՄԱՐԿԻԶ ՊՕԶԱ, ԴՈՒՔՍ ԱԼԲԱ.

ՄԱՐԿԻԶ (ներս մտնելով)

Ի՞նձ է կանչում, ի՞նձ — Անկարելի է:
Անշուշտ շփոթել է դուք անունները —
Բայց ի՞նչ է ուզում արդեօք ինձանից:

ԱԼԲԱ

Ուզում է ձեզ հետ նա ծանօթանալ:

ՄԱՐԿԻԶ

Հետաքրքրութեան համար միմիայն —
Ուրեմն ափսոս կորցրած վայրկենին —
Կեանքը շատ կարճ է:

ԱԼԲԱ

Ես ձեզ յանձնում եմ
Ձեր բարի աստղին: Արքան ձեր ձեռն է:
Աշխատեցէք, որ լաւ օգուտ քաղէք
Դուք այս վայրկենից. և ձեզ, ձեզ միայն
Պիտի մեղադրէք, եթէ զուր անցնի:

(Նա հեռանում է)

ԻՆՆԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՑԹ

ՄԱՐԿԻԶ (մենակ)

Լաւ ասացիր, դո՛ւքս: Այո՛, օգտուիլ
Պէտք է վայրկենից, որ միայն մէկ անգամ
Հանդիպում է մեզ: Ճշմարիտ, որ այս
Պալատականը լաւ խորհուրդ տուեց —
Թէ և ոչ այնքան նորա կարծիքով

Լաւ, որքան իմով։
(մի քանի անգամ յետ ու առաջ քայլելով)
Բայց ի՞նչպէս արդեօք
Եկայ ես այստեղ։—Արդեօք դիպուածի
Մի խաղ է, որ ես տեսնում եմ ինձ այս
Հայելիներում։ Ամբողջ միլիոնից
Ուղիղ ի՞նձ գտաւ և թագաւորի
Ականջին ասաց նա իմ անունը։
Մի դիպուածի միայն։ Գուցէ աւելի—
Դիպուածը նման է անտաշ քարին,
Որ կեանք է ստանում վարպետի ձեռին։
Դիպուածն է պարգև Նախախնամութեան.
Մարդը պէտք է նրան իւր նպատակին
Յարմար մի ձև տայ — ինձ համար մէկ է,
Թէ ինչ է ուզում արքան ինձանից —
Ես գիտեմ, ինչ եմ ուզում նորանից —
Եւ թող դա լինէր միմիայն մի հատ
Կայծ ճշմարտութեան այս բռնաւորի
Հոգու մէջ ձգուած — ի՞նչ զարհուրելի
Կարող է դառնալ Նախախնամութեան
Ձեռին այդ կայծը։ Ուրեմն, ինչ որ
Ինձ խաղ երևաց, գուցէ ունենայ
Մի մեծ նպատակ։ Այսպէս կամ այնպէս —
Այդ միևնոյն է այժմ ինձ համար։
Ես այս հիման վրայ պիտի ներգործեմ։

(Նա մի քանի անգամ յետ ու առաջ մտնելիս սենեակում և վերջապէս կանգնում է մի պատկերի առաջ և հանդարտ զննում է նորան։ Թագաւորը երևում է կից սենեակում, ուր նա մի քանի հրամաններ է տալիս։ Յետոյ մտնում է և լուռ կանգնում է դռան մէջ և մի քանի ժամանակ նայում է մարկիզին, որ նորան չէ նկատում)։

ՏԱՍՆԵՐՐՈՐԴ ԵՐԵԻՈՑԹ

ԹԱԳԱՒՈՐ, ՄԱՐԿԻԶ ՊՕՋԱ

(Մարկիզը դէմ է գնում Թագաւորին, երբ որ տեսնում է նորան, և խոնարհում է ծնկան վերայ, վեր է կենում և անչփոթ կանգնում է նորա առաջ)

ԹԱԳԱՒՈՐ

Առաջ էլ ինձ հետ խօսե՞լ էք դուք:

ՄԱՐԿԻԶ

Ո՛չ:

ԹԱԳԱՒՈՐ

Դուք վաստակ ունիք իմ գահի առաջ,
Ինչի՞ էք թողնում ինձ երախտապարտ:
Իմ յիշողութեան մէջ հազարաւոր
Մարդիկ են ճնշվում: Միայն Աստուած է
Ամենագէտը: Ձեզ կը վայելէր:
Ձեր Թագաւորի աչքին երևիլ:
Ինչի՞ համար դուք չարիք այս բանը;

ՄԱՐԿԻԶ

Տէր, երկու օր է, ինչ որ եկել եմ
Արտասահմանից:

ԹԱԳԱՒՈՐ

Ես չեմ կամենում
Իմ ծառաներին պարտական մնալ —
Խնդրեցէք մի շնորհ:

ՄԱՐԿԻԶ

Ես վայելում եմ
Օրէնքները, տէր:

ԹԱԳԱՒՈՐ

Այդ իրաւունքը
Ունի նմանապէս և մարդասպանը:

ՄԱՐԿԻԶ

Աւելի ևս լաւ քաղաքացին:
Ես գոհ եմ, տէր իմ:

ԹԱԳԱՒՈՐ (ինքն իրան)

Որքան մեծամի՛տ,
Որքան վստահ է։ Բայց ես այդ բանին
Ինքս էի սպասում։— Ես Սպանիացուն
Հպարտ եմ ուզում։ Այդ իմ սրտովս է,
Թէ և չափն անցնի։— Ես լսեցի, որ
Թողել էք դուք իմ ծառայութիւնը։

ՄԱՐԿԻԶ

Ես յետ քաշուեցայ, որ տեղ տամ ինձնից
Արժանաւորին։

ԹԱԳԱՒՈՐ

Շատ ափսոսում եմ։
Որքա՜ն ինչաս է իմ տէրութեանը,
Երբ որ ձեզ նման մարդիկ պարապ են—
Գուցէ երկի՛ւղ էք կրում զանց առնել
Այն ասպարէզը, որ յարմար է ձեր
Ընդունակութեան։

ՄԱՐԿԻԶ

Ո՛չ։ Ես լաւ գիտեմ,
Նա, որ հմուտ է ճանաչել մարդկանց
Սրտերը, իսկոյն մի հատ հայեացքով
Կիմանար, արդեօք ի՞նչ գործում նորան
Պիտանի եմ ես և ի՞նչ գործում ոչ։
Ամենախորին շնորհակալութեամբ
Զգումեմ, տէ՛ր արքայ, այն շնորհը, որին
Արժանի արիք ինձ ձեր կարծիքով.
Բայց —

(խօսքը կտրումէ)

ԹԱԳԱՒՈՐ

Դուք վստահ չէք։

ՄԱՐԿԻԶ

Խոստովանումեմ,
Զ՚արդ Մեծութիւն, որ պատրաստուած չեմ
Ձեր հպատակի բառերով յայտնել

Այն բանը, ինչ որ ես մտածել եմ
Իբրև մի անդամ ամբողջ մարդկութեան. —
Որովհետև, տէր, երբ ես վերջացրի
Տէրութեան հետ իմ յարաբերութիւնն,
Ես չէի կարծում, թէ պէտք կը լինի
Ցայտնել որոշմանս պատճառները;

ԹԱԳԱՒՈՐ

Այդքան թո՛յլ են ձեր այդ պատճառները:
Երևի երկիւղ ունիք մի բանից:

ՄԱՐԿԻԶ

Եթէ ժամանակ կը շնորհէք ինձ, տէր,
Բացատրել այստեղ իմ պատճառները, —
Կեանքս չեմ խնայի. բայց կը վնասուի
Ճշմարտութիւնը, եթէ կը զրկէք
Ինձ այդ շնորհից: Ես պէտք է ընտրեմ
Կամ ձեր բարկութիւնն, կամ արհամարհանք:
Ուրեմն լաւ է, որ ես ձեր աչքին
Ցանցաւոր թուիմ, քան թէ մի յիմար:

ԹԱԳԱՒՈՐ (ակնկալութեամբ)

Ասացէ՛ք տեսնեմ:

ՄԱՐԿԻԶ

— Ես մի իշխանի
Ծառայ չեմ լինի:

(Թագաւորը զարմացած նայում է նորան)

Տէր, ես չեմ խաբի
Վաճառականին: Թէ կամենում էք
Ինձ մի պաշտօն տալ, անշուշտ առաջուց
Կշռել էք գործը: Դուք կամենում էք
Միայն բազուկս և քաջութիւնս
Պատերազմի մէջ, գլուխս — խորհրդում:
Ոչ թէ գործերս, այլ թագաւորիս
Հաւանութիւնը պէտք է նպատակ
Դնեմ ինձ համար: Սակայն ինձ համար
Առաքինութիւնն իւր արժէքն ունի:

Բաղդը, որ արքան պէտք է իմ ձեռով
Ցանէ, ես ինքս էլ կարող էի ստեղծել,
Եւ այդ կը լինէր ինձ ուրախութիւն,
Որ յօժարակամ գործ կը կատարեմ,
Ոչ թէ միայն լոկ պարտաւորութիւն:
Եւ այս է արդեօք ձեր ցանկութիւնը:
Կընդունէք դուք ձեր արարչութեան մէջ
Այլ արարիչներ: Ես գործի՞ք դառնամ,
Երբ ինքս վարպետ կարող եմ լինել—
Ես մարդկութեան եմ նուիրել սէրս:
Միապետութեան մէջ ես կարող չեմ
Բացի ինձանից ոչ ոքին սիրել:

ԹԱԳԱՒՈՐ

Շատ գովելի է ձեր այդ եռանդը:
Դուք ցանկանում էք, որ բարի գործէք:
Բայց ինչպէս կանէք, այդ միևնոյն է
Հայրենասիրին և իմաստունին:
Ապա ընտրեցէ՞ք իմ տէրութեան մէջ
Այնպիսի պաշտօն, որ յարմար լինի
Այդ ազնիւ ձգտմանը ծառայելու:

ՄԱՐԿԻԶ

Չեմ գտնում:

ԹԱԳԱՒՈՐ

Ի՞նչպէս:

ՄԱՐԿԻԶ

Ինչ որ իմ ձեռով
Պիտի տարածէք—արդեօք բաղդ է դա:
Արդեօք դա նոյնն է, որ մաքուր սէրս
Տալիս է մարդկանց—Այս բաղդի առաջ
Կը դողար նոյն իսկ Ձեր Մեծութիւնը—
Ո՛չ: Տէրութիւնը նոր բաղդ է ստեղծել—
Որ նա կարող է առատ բաժանել,
Մարդկանց սրտերում նոր կրքեր ծնել,
Որոնք հանդարտվում են այդ սուտ բաղդով:
Ճշմարտութիւնը դրոշմում է նա իւր
Դրամների վերայ: Մի ճշմարտութիւն,

Որ ձեռնտու է միմիայն իրան։
Բոլոր միւսները, որոնք չեն նման
Սորան, մերժուած են։ Բայց մի՛թէ ինչ որ
Օգուտ է գահին — բաւական՞ն է ինձ։
Միթէ կարո՞ղ է իմ եղբայրական
Սէրը ծառայել եղբօրս ճնշման։
Ի՞նչպէս համարեմ նորան երջանիկ —
Մինչ դեռ կարող չէ ազատ մտածել։
Ո՛չ, ինձ մի՛ ընտրէք տարածել, արքայ,
Ձեր ստեղծած բաղդը։ — Ես հրաժարվում եմ —
Ես մի իշխանի ծառայ չեմ լինի։

ԹԱԳԱՒՈՐ (չուտ)

Դուք պրոտէստանտ էք։

ՄԱՐԿԻԶ

Տէր, ձեր կրօնը
Ինձ էլ է նոյնպէս։
(կարճ լռութենից յետոյ)
Սխալ հասկացաք,
Եւ իսկ այդ բանից վախենում էի։
Տէր, դուք տեսնում էք, որ ես տէրութեան
Գաղտնիքներից հանում եմ քօղը։
Եւ ո՞վ կը լինի ձեզ երաշխաւոր,
Թէ այսուհետև սուրբ է ինձ համար
Այն բանը, որից էլ չեմ վախենում։
Վստանգաւոր եմ, որ մտածել եմ
Ինքս ինձ վերայ — Ո՛չ, տէր, այդպէս չէ։
Իղձերս ահա այստեղ փտում են։
(ձեռը կուրծքին դնելով)
Ծաղրելի կիրքը նորասիրութեան,
Որ շղթաները միայն ծանրացնում է,
Բայց ջախջախելու զօրութիւն չունի,
Երբէք արիւնս բորբոքելու չէ։
Իմ գաղափարին հասուն չէ դարը։
Ես պատկանում եմ գալոց դարերին։
Միթէ կարո՞ղ է պատկերը խռովել,
Արքա՛յ, ձեր սիրտը — փչեցէք — չըկայ։

ԹԱԳԱՒՈՐ

Ես առաջինը ճանաչեցի ձեզ
Արդեօք այս կողմից։

ՄԱՐԿԻԶ

Այս կողմի՞ց — այո։

ԹԱԳԱՒՈՐ

(վեր է կենում և մի քանի քայլ անելուց յետոյ կանգնում է մարկիզի դէմը, ինքն իրան)

Այս եղանակը նոր է ինձ համար։
Շողոքորթութեան կայ նոյնպէս մի վերջ։
Ինչպիսին անվայել է խելօք մարդուն —
Այս էլ նոր փորձ է — Անշուշտ այդպէս է
Այս բաղդ որսալ է — եթէ այդպէս է,
Ես կառաջարկեմ ձեզ մի այլ պայման,
Ուր զօրեղ ոգին —

ՄԱՐԿԻԶ

Արքայ, շատ ինչին
Համարում էք դուք մարդու պատիւը։
Դուք ազատ մարդու խօսքերում անդամ
Շողոքորթողի հնարքներ էք տեսնում։
Գիտեմ, թէ ով է ձեզ այդ թելադրում։
Մարդիկ իրանք են ձեզ այդպէս ստիպում։
Նոքա կամաւոր ուրացան իրանց
Ազնվութիւնը և իջան այս ստոր
Աստիճանի վրայ։ Սաստիկ սարսափած
Փախչում են նոքա իրանց մեծութեան
Ուրուականից։ Գոհ են վիճակից։
Թշուառ և երկչոտ իմաստակութեամբ
Իրանց շղթաները զարդարում են,
Եւ պատշաճապէս նոցա կրելուն
Առաքինութեան տալիս են անուն։
Այսպէս ձեր ձեռը անցաւ աշխարհը,
Այսպէս էր ստացել նորան ձեր հայրը։
Եւ այսպէս թշուառ և աղաւաղուած —
Դուք չէիք կարող, տէր, յարգել մարդկանց։

ԹԱԳԱՒՈՐ

Փոքր ինչ ճշմարիտ են այս խոսքերը։

ՄԱՐԿԻԶ

Միայն ափսոս որ Աստուծոյ ստեղծած
Մարդուն փոխեցիք դուք ձեր արարած
Եւ այդ նորաձոյլ ձեր արարածին
Ձեզ իբրև Աստուած առաջարկեցիք —
Միայն մի բանում փոքր սխալուեցաք.
Դուք մնացիք մարդ — Աստուծոյ ստեղծած,
Իբրև հողեղէն ընդունակ էիք
Ցաւիլ և ըղձալ և համակրութեան
կարօտում էիք — այն ինչ Աստուծոյ
կարելի է միայն զոհ մատուցանել —
Առաջը դողալ — Նորան աղօթել։
Ի՜նչ արտասուելի փոխանակութիւն,
Բնութեան անբաղդ աղաւաղութիւն —
Մարդուն շինելով ձեզ անբան գործիք,
Ներդաշնակութիւնը խանգարեցիք։

ԹԱԳԱՒՈՐ

Իրաւ այս մարդը թափանցեց հոգիս։

ՄԱՐԿԻԶ

Սակայն ձեզ համար նշանակութիւն
Չունի այդ զոհը։ Դուք եզական էք —
Առանձին մի սեռ — Այդ գնով ահա
Դուք մի աստուած էք — Սարսափելի էր,
Թէ այդ չըլինէր — եթէ այդ գնով,
Բիւրաւոր մարդկան ոտնակոխ արած
Բաղդաւորութեամբ բան չը շահուէիք,
Եթէ միմիայն ազատութիւնը,
Որ ոչնցացրիք, բաւականացնէր
Ձեր ցանկութիւնը, խնդրում եմ թոյլ տաք,
Որ ես հեռանամ։ իմ սիրտը լի է —
Հրապոյրը զօրեղ. այն եզականի
Առաջը կանգնել, որին կուզէի
Իմ սիրտը բանալ։

(մտնում է կոմս Լէրման և կամաց խօսում է Թագաւորի հետ։ Սա նշան է տալիս նորան որ հեռանայ և ինքը մնում է նստած առաջուայ դրութեան մէջ)

ԹԱԳԱՒՈՐ

(մարկիզին, երբ որ Լէրման դուրս է գնում)

Շարունակեցէք

ՄԱՐԿԻԶ (կարճ լռութենից յետոյ)

Տէր, բոլորովին գնահատում եմ —

ԹԱԳԱՒՈՐ

Վերջացրէք։ Դուք ինձ շատ բան ունէիք
Էլի ասելու։

ՄԱՐԿԻԶ

Տէր, նոր եմ եկել
Ես Ֆլանդրիայից և Բրաբանտից —
Որպիսի՜ հարուստ, ծաղկած նահանգներ,
Եւ ի՜նչ պատուական բարի ժողովուրդ —
Մտածում էի, թէ ի՜նչ երկնային
Երջանկութիւն է այդպիսի ազնիւ
Ազգի հայր լինել — Եւ յանկարծ մարդու
Այրուած ոսկորներ տեսայ իմ առաջ։ —

(նա լռում է և աչքերը ուղղում է Թագաւորի վերայ, որ փորձում է դիմանալ նորա հայեացքին, բայց չփոթուած նայում է դեռնին)

Իրաւունք ունիք։ Սխալուած է։ Բայց որ
Կարող է, ինչ որ պարտք է համարում,
Այդ իմ հոգու մէջ սարսափ է ձգում։
Ափսոս կարող չէ իւր արիւնի մէջ
Լողացող զոհը գովասանութեան
Տաղեր նուագել զոհողի համար.
Որ պատմութիւնը մարդիկ են գրում —
Ոչ բարձր էակներ։ Փիլիպպի դարը
Կըփոխանակեն մարդասէր դարեր,
Որոնք կըծնին մեղմ գաղափարներ,
Եւ բաղդաւորուած քաղաքացիքը
Կըհաշտուին իրանց իշխանների հետ.
Տէրութիւնը իւր որդոց կըմնայէ,
Կարիքը կըզդայ մարդասիրութիւն։

ԹԱԳԱՒՈՐ

Ե՞ՐԲ ձեր կարծիքով պիտի մարդասէր
Այդ դարերը գան, եթէ ներկայի
Անէծքից ազատ։ Նայեցէ՛ք ձեր շուրջ
Իմ Սպանիայում, ուր ժողովուրդը
Վայելում է բաղդ և խաղաղութիւն.
Եւ Ֆլամանդացոց տալիս եմ ես նոյն
Խաղաղութիւնը։

ՄԱՐԿԻԶ

Գերեզմանատան

Խաղաղութիւնը։ Եւ դուք յո՞յս ունիք,
Թէ կըվերջացնէք, ինչ որ սկսել էք։
Յո՞յս ունիք, թէ դուք կըդադարեցնէք
Քրիստոնութեան նորոգութիւնը,
Աշխարհին նոր կեանք շնորհող դարունը։
Դուք կամենում էք ողջ Եւրոպայում—
Մենակ դէմ կենալ համաշխարհային
Բաղդի անիւին, որ արագութեամբ
Առաջ է գլորվում, և ձեր մարդկային
Թոյլ ձեռով—բռնել նորա ցիցերը։
Ո՛չ, այդ չէք կարող։ Քանի հազարներ
Արդէն փախել են ձեր երկիրներից։
Եւ կրօնի համար հալածուածներն են
Ձեր ամենալաւ հպատակները։
Այդ փախչողներին Էլիսաբէթը
Մայրական գթով ընդունեց գիրկը,
Եւ Բրիտանիան այժմ ծաղկում է
Մեր արհեստներով։ Գրէնադան, զուրկ նոր
Քրիստոնեաների աշխատութենից,
Անապատ դառաւ։ Եւ ի՛նչ ուրախ է
Եւրոպան տեսնել, որ իւր թշնամին
Սեփական ձեռով իրան մորթում է։

(Թագաւորը շարժուած է։ Մարկիզը նկատում է այդ բանը և մի քայլ մօտենում է նորան)

Դարերի համար ուզում էք տնկել,
Եւ մահ էք ցանում։ Այդ բռնի գործը

Իւր ըստեղծողից երկար չէ ապրի։
Ապերախտութեան կառուցել էք դուք —
Ի զուր բնութեան դէմ այդպէս մաքառել,
Ի զուր զոհել էք ձեր արքայական
Կեանքը կործանիչ նպատակներին։
Մարդն աւելի է, քան թէ կարծում էք։
Նա երկարատև քընից կըզարթի
Եւ կըպահանջէ իւր իրաւունքը։
Նա ձեզ Ներոնի և Բուզերիսի
Կարգին կըդասէ — եւ այդ ինձ ցաւ է,
Որովհետև դուք բնութեամբ բարի էք։

ԹԱԳԱՒՈՐ

Ո՞վ է այդ բանը ձեզ հաւատացրել։

ՄԱՐԿԻԶ

Այո՛, վկայ է ինքն Արարիչը —
Այո՛ — կրկնում եմ։ Ցեռ տուէք, ինչ որ
Առաք մեզանից։ Եւ վերհանձնաբար
Իբրև մի հզօր ձեր առատ ձեռով
Սփռեցէք ձեր շուրջ բաղդաւորութիւն։
Թողէք հանձարներ ծաղկին ու հասնին։
Ցեռ տուէք, ինչ որ առաք մեզանից։
Դառէք բիւրաւոր արքայից արքայ։

(վստահութեամբ մօտենում է նորան և ձգում է նորա վերայ հաստատ և կրակոտ հայեացքներ)

Ո՛հ, երանի թէ թափուէր իմ բերնից
Պերճախօսութիւնն այն հազարների,
Որոնք մասնակից են այս մեծ ժամին,
Որ ճառագայթը, որ նկատում եմ
Ես այս աչքերում, վառ բոց փոխէի —
Հրաժարուեցէք, տէր, այդ անբնական
Պաշտուելուց, որ մեզ ոչնչացնում է։
Օրինակ դառէք մեզ ճշմարտութեան
Ցաւիտենական։ — Ո՛հ, երբէք մի մարդ
Այդքան հարուստ չէր, որ ունեցածը
Գործ դնէր այդպէս աստուածավայել։
Ողջ Եւրոպայի թագաւորները

Ցարգումեն անունը սպանիական։
Առաջնորդ դառէք նոցա, տէր արքայ։
Մի գրչի շարժուածք միայն այս ձեռով,
Եւ կընորոգուի ամբողջ երկիրը։
Տէր, ազատութիւն շնորհեցէք մարքին —
(ընկնում է նորա ոտները)

ԹԱԳԱՒՈՐ

(Սաստիկ զարմացած դարձնում է երեսը, յետոյ կրկին դառնալով դէպի մարկիզը)

Ինչ զարմանալի ցնորասէր էք դուք։
Բայց — վերը կացէք — ես —

ՄԱՐԿԻԶ

Նայեցէք ձեր շուրջ,
Նայեցէք, արքայ, հրաշալի բնութեան։
Նա ազատութեան վերայ է հիմնուած —
Եւ ինչ հարուստ է այդ ազատութեամբ։
Մեծ Արարիչը կաթիլ ցողի մէջ
Դնում է որդնին, և մինչև անգամ
Ապականութեան մեռած փոսերում
Ազատութիւն է տալիս հաճոյքին։—
Բայց որքան նեղ է և աղքատ է ձեր
Արարչութիւնը։ Տերևի ձայնը
Սարսափեցնում է քրիստոնէական
Աշխարհի մեծին — Դուք ամեն տեսակ
Առաքինութեան առաջ դողում էք —
Իսկ նա — այդպէս չէ — Նա ազատութեան
Զրկամենալով մի արգելք դնել —
Նա թոյլ է տալիս իւր աշխարհի մէջ
Անթիւ չարիքներ — Նորան, Ստեղծողին,
Ոչ ոք չէ տեսնում։ Նա համեստաբար
Ծածկել է իրան յաւիտենական
Օրէնքների տակ։ Դոցա է տեսնում
Ազատամիտը և ոչ թէ նորան։
«Ինչ պէտք է Աստուած», ասում է նա մեզ,
«Ինքը աշխարհը շատ բաւական է։»
Եւ մի քրիստոնեայ իւր ջերմ աղօթքով

Չէ գովել նորան աւելի, քան թէ
Ազատամիտը այս հայհոյանքով։

ԹԱԳԱՒՈՐ

Դուք յանձնառու էք իմ տէրութեան մէջ
Տարածել վսեմ այդ գաղափարը։

ՄԱՐԿԻԶ

Դո՛ւք, դո՛ւք կարող էք։ Ձեր ժողովրդի
Բաղդաւորութեան նուիրեցէ՛ք, տէ՛ր,
Ձեր զօրութիւնը, որ — մինչև հիմա —
Միայն ձեր գահի փառքին էր նուիրած —
Վերականգնեցէ՛ք մարդու պատիւը։
Թո՛ղ քաղաքացին լինի այն, ինչ որ
Առաջ եղել է։ Թո՛ղ թագաւորին
Լինի նպատակ — Լինի միակ պարտք —
Իւր եղբայրների իրաւունքն յարգել։
Եւ երբ որ մարդը, ազատ ապրելով,
Կըսթափի, կըզգայ իւր մեծ արժէքը —
Եւ ազատութեամբ կառաքինանայ —
Երբ որ երջանիկ կանէք աշխարհում
Ձեր տէրութիւնը, այն ժամանակ, տէ՛ր,
Իրաւունք ունիք տիրել աշխարհին։

ԹԱԳԱՒՈՐ

(երկար լռութենից յետոյ)

Ես ձեզ մինչև վերջ թողի որ խօսիք —
Գիտեմ, ուրիշ կերպ, քան թէ այլ մարդիկ
Պատկերացնում էք դուք ձեզ աշխարհը —
Ես չեմ կամենում օտար չափի տակ
Դնել ձեր անձը։ Ես առաջինն եմ,
Որին ձեր սրտի խորհուրդն յայտնեցիք.
Ես հաւատում եմ, որ այդ այդպէս է։
Այդ համեստութեան համար, որով դուք
Այդ կարծիքները, որոնց յայտնեցիք
Ինձ ջերմ եռանդով, մինչև այսօրը
Ծածուկ էք պահել — Ձեր այդ խելացի
Զգուշութեան համար, երիտասարդ մարդ,
Ես կըմոռանամ, ինչ որ իմացայ,

Ինչպէս իմացայ։ Այժմ վեր կացէք։
Ես կամենումեմ անփորձ պատանուն
Դատել իբրև ծեր, ոչ իբրև արքայ։
Այդպէս է կամքս։ — Ես կարծումեմ, որ
Աշնիւ սրտերում, թոյնն էլ կարող է
Փոխուիլ մի լաւ բան։ Բայց հեռու կացէք
Ինկուիզիցիոնից — Ես շատ կափսոսամ։—

ՄԱՐԿԻԶ

Իրաւ կափսոսաք։

ԹԱԳԱՒՈՐ

(անթարթ աչքով նայելով նորան)

Երբէք ես ձեզ պէս
Մի մարդ չեմ տեսել։ — Ո՛չ մարկի՛զ, դուք ինձ
Շատ խիստ էք դատում։ Ես չեմ կամենում
Մի Ներոն լինիլ — Ձեր դէմ զոնէա
Ներոն չեմ լինի։ Ես իմ ձեռի տակ
Չեմ սպանի ամեն բաղդաւորութիւն։
Ես այսուհետև ձեզ իմ աչքի տակ
Իրաւունք կըտամ, որ միշտ մարդ մնաք։

ՄԱՐԿԻԶ

Եւ եղբայրներիս։ — Ո՛հ, տէր, ինձ համար
Չէի ես խօսում. իմ անձի համար
Չէի աշխատում։ Տէր, նոյնպէս և ձեր
Հպատակներին —

ԹԱԳԱՒՈՐ

Եւ եթէ այդպէս լաւ
Իմանումէք դուք, ինչպէս ապագան
Պէտք է ինձ դատէ. թող նա սովորի
Ձեր օրինակից, ինչպէս իմացայ
Վարուիլ մարդու հետ, երբ մէկին գտայ։

ՄԱՐԿԻԶ

Ամենաարդար արքան աշխարհի,
Ո՛հ, թող չըլինի յանկարծ անարդար —
Ձեր Ֆլանդրիայում հազարները կան
Ինձնից լաւերը։ — Միայն դուք, արքայ —
Կարող եմ ազատ ես խոստովանել —

Գուցէ առաջին անդամն է՞ք տեսնում
Ազատութիւնն այս հեզ պատկերի տակ։

ԹԱԳԱՒՈՐ

(մեղմ ծանրութեամբ)

Էլ բան մի՛ ասէք այդ նիւթի մասին —
Գիտեմ ուրիշ կերպ կըմտածէիք,
Թէ ճանաչէիք մարդկանց ինչպէս ես։ —
Ես չեմ կամենում այս տեսութիւնը
Վերջինը լինի։ Ի՞նչպէս անեմ, որ
Ձեզ պարտաւորեմ։

ՄԱՐԿԻԶ

Թողէ՛ք ինչպէս կամ։
Ի՞նչ կը լինէի, տէր իմ, ձեզ համար,
Եթէ որ ինձ էլ դուք կաշառէիք։

ԹԱԳԱՒՈՐ

Այդ հպարտութեան չեմ կարող տանել։
Դուք այսօրուանից պաշտօնի մէջ է՛ք —
Մի՛ հակառակիք։ Կամքս այդպէս է։

(կարճ լռութենից յետոյ)

Բայց ի՞նչպէս. ի՞նչ էր արդեօք ուզածս։
Չէ՞ որ ուզածս ճշմարտութիւն էր։
Եւ ես գտնում եմ այստեղ աւելի —
Դուք ինձ քննեցիք իբրև արքային,
Ոչ իբրև հօրը մի գերդաստանի։

(տեսնելով, որ մարկիզը տարակուսում է)

Ես ձեզ հասկացայ։ Բայց — թող լինէի
Իբրև հայր անբաղդ, միթէ չե՞մ կարող
Բաղդաւոր լինիլ իբրև ամուսին։

ՄԱՐԿԻԶ

Եթէ մի որդի, հօր ապաղայ յոյս,
Եւ մի սիրարժան աղնիւ ամուսին
Բաղդաւորացնել կարող են մէկին,
Սրբեմն վստահ կարող եմ ասել,
Թէ բաղդաւոր է՛ք դուք երկուսով էլ։

ԹԱԳԱՒՈՐ մռայլ (կերպով)

Ո՛չ, բաղդաւոր չե՞մ։ Եւ երբէ՛ք այսպէս

Սաստիկ չեմ զդացել այդ բանը, ինչպէս
Այս իսկ բոլորին —
(մի վշտալից հայեացք ձգելով մարկիզի վերայ)

ՄԱՐԿԻԶ

Իշխանը աղնիւ
Եւ շատ բարի է։ Ես միշտ այդպէս եմ
Ճանաչել նորան։

ԹԱԳԱՒՈՐ

Իսկ ե՞ս — ինչ որ նա
Խլեց ինձանից, ոչ մի թագ չի տայ
Ինձ վերադարձնը — մի առաքինի
Թագուհի։

ՄԱՐԿԻԶ

Տէր, ո՞վ կը համարձակի

ԹԱԳԱՒՈՐ

Ո՞վ, ո՞վ — Աշխարհը, բամբասանքը, ևս —
Փաստեր կան, որոնք նորան անխնայ
Եւ բոլորովին դատապարտում են։
Կան և ուրիշներ, որոնք ինձ վերայ
Սարսափ են բերում — Բայց, մարկիզ — ծանր է,
Ծանր է հաւատալ։ Ո՞վ է մեղադրում —
Բայց եթէ իրաւ — նա ընդունակ է
Այդքան ստոր ընկնիլ, այդ աստիճան իւր
Պատիւը կորցնել, որքա՞ն ուրեմն
Հեշտ է հաւատալ, թէ զրպարտել է
Նորան երօլին։ Չէ՞ որ քահանան
Ատում է նորան և որդուս։ Աչքան
Ոխ ունի սրտում։ Կինս ինձ համար
Աւելի արժէ, քան թէ ամենքը

ՄԱՐԿԻԶ

Տէ՛ր, կնոջ սրտում կայ դարձեալ մի բան,
Որ ամեն բանից շատ բարձր է, բարձր է
Եւ բամբասանքից — և դա է կնոջ
Առաքինութիւնն։

ԹԱԳԱՒՈՐ

Իմ խօսքն էլ այդ է։
Այնքան ստոր ընկնիլ, որքան թագուհուն

Անբաստանում են, դա շատ թանդ արժէ։
Այդպէս հեշտ, ինչպէս հաւատացնում են,
Անկարելի է պատուի սրբազան
Կապերը քանդել։ Մարկիզ, դուք մարդկանց
Լաւ էք ճանաչում։ Վաղուց ձեզ պէսին
Կարօտ էի ես։ Դուք բարեսիրտ էք
Եւ հոգով զուարթ, և ընդունակ էք
Մարդկանց ճանաչել — այս պատճառով էլ
Ես ձեզ ընտրել եմ —

ՄԱՐԿԻԶ

(զարմացած և վախեցած)

Ի՞նձ ընտրել էք, տէր.

ԹԱԳԱՒՈՐ

Դուք կանգնած էիք ձեր տիրոջ առաջ
Եւ չբինդրեցիք ձեզ համար ոչինչ։
Այդ մի անսովոր բան է ինձ համար —
Դուք, մարկիզ, անշուշտ արդար կը լինիք։
Կիրքը ձեր աչքը չի մոլորեցնի —
Մօտեցէք որդուս, և լաւ քննեցէք
Թագուհու սիրտը։ Ես ձեզ նորա հետ
Ծածուկ խօսելու իրաւունք կը տամ։
Հիմա հեռացէք։

(նա քաշում է զանգակը)

ՄԱՐԿԻԶ

Եթէ այստեղից
Հեռանամ մի հատ կատարուած յուսով,
Ապա կը լինի այս օրն ինձ համար
Կեանքիս ամենագեղեցիկ օրը։

ԹԱԳԱՒՈՐ

(մեկնում է նորան ձեռը համբուրելու)

Եւ սա ինձ համար մի կորած օր չէ։

(մարկիզը վեր է կենում և գնում է։ Կոմս Լէրման մտնում է)

Կոմս Լերմա, ասպետը այսուհետև
Ինձ մօտ ամեն ժամ ազատ մուտք ունի։

(մնացեալը յաջորդ համարում)

ԳԷՈՐԳ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑ

ԿԱՐԱՊԵՏ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Ախալցխայի Ս. Փրկիչ եկեղեցու գաւիթ մտնողը կրտեսնի նորա հարաւային դրան կից մի անշուք շերիմ, մի գերեզման, որի վերայ չըկայ ոչինչ գիր և ոչինչ յիշատակարան: Այդտեղ հաւաքվում են յաճախ Ախալցխայի փոքրիկ մանուկներն ու պատանիները և գերեզմանաքարի վերայ զանազան խաղեր են խաղում. այդտեղ հաւաքվում են նմանապէս և ծերերը և զանազան խօսակցութիւններ անում: Եթէ փորձէինք դառնալ դէպի այդ խաղացող մանուկներն ու պատանիները և հարցնել նոցա, թէ ո՞վ է այդ գերեզմանի տակ հանգչողը, մենք կստանայինք բացասական պատասխան, նոքա մեզ կասէին «չըգիտենք». իսկ եթէ դառնայինք դէպի ծերերը և նոցանից ուզենայինք մի բան իմանալ, նոքա մեզ թէև կըպատմէին մի քանի դէպքեր, իրողութիւններ, բայց այդ ամենը այնքան հարևանցի և կցկտուր կըլինէր, որ մենք անկարող կըլինէինք մի պարզ և որոշ գաղափար կազմել հանգուցելու մասին. բայց այսու ամենայնիւ դոքա իւրեանց մեծ նշանակութիւնն ունին, իբրև կենդանի զըոյցներ այն անցքերի, որոց ժողովուրդը ականատես է եղել և որոնք վերաբերում են այնպիսի մարդու, որ իւր ժամանակին յառաջէ վարել այդ անցքերը: Կանցնեն սակայն մի քանի տասնեակ տարիներ, մենք կըզըկուինք այդ ծերերից, նոքա կըմտնեն գերեզման և իրանց հետ կըտանեն և այն, ինչ որ գիտէին:

Այդ գերեզմանի տակ, ընթերցող, հանգչում են Կարապետ արքեպիսկոպոսի ոսկերոտիքը: Այդ անձի եօթանասուն և վեց ամեայ կեանքի շրջանի անընդհատ եռանդուն գործունէութիւնը, նորա զանազան բարեմասնութիւնները, անձնանուէր ժողովրդասի-

րութիւնը և այն յեղափոխութիւնը, որ կատարուել է Ցաճկական Հայաստանի Հայ ժողովրդեան կեանքում 1830 թուականին, այնպիսի խոշոր երևոյթներ են գաղթական ժողովրդեան համար մանաւորապէս և մեր վերջին ժամանակի պատմութեան համար առհասարակ, որ դոցա չը հետաղօտելը, չը քրքրելը յանցանք է մի կողմից գաղթական ժողովրդեան, միւս կողմից մեղանչանք մեր պատմութեան դէմ:

Կարապետ արքեպիսկոպոսը Ցաճկական Հայաստանում մեծ դեր է խաղացել. նա առաջնորդել է գաղթական ժողովուրդին դէպի Ռուսաստան, 26 տարի կառավարել և պահպանել է գաղթական ժողովուրդին, որ նորա շնորհիւ ունի այսօր իւր եկեղեցու անուանով մեծամեծ և հաստատուն կալուածներ: Կարապետ Արքեպիսկոպոսի շնորհիւ գաղթականաց զաւակները այսօր ստանում են փոքր ի շատ է կրթութիւն և դաստիարակութիւն, նորա հոգատարութեամբ և խնամածութեամբ կերակրուել են և դեռ կերակրվում են հարիւրաւոր աղքատներ և վերջապէս նորա հովանաւորութեան և պաշտպանութեան տակ յառաջ են եկել հազարաւոր անձինք աշխարհական և հոգևորական դասակարգից, որոնք կրթութեամբ, և ազգային գործունէութեամբ բարձր են կանգնած ամբոխից:

Ահա այդ արքեպիսկոպոսի կենսագրութիւնն է, ընթերցող, որ փորձեցի գրել: Ես աչքի առաջ ունի, բացի ժամանակակից մարդկանց կենդանի զրոյցներից և պատմութիւններից, նաև բազմաթիւ պաշտօնական գործեր, կոնդակներ, պաշտօնական և մասնաւոր գրութիւններ՝ թէ հոգևորական և թէ Ռուսաց քաղաքական ատենատեղիներից, բայց և այնպէս, խոստովանում եմ, որ այս կենսագրութիւնը ունի դեռ շատ թերութիւններ, որոնք ես առիթ կունենամ յետոյ լրացնելու, եթէ այն անձինք, որոց մօտ գտնվում են ինչ և իցէ գրաւոր, մինչև ցարդ չը տպագրուած, տեղեկութիւններ Կարապետ արքեպիսկոպոսի կամ նորա ժամանակակից Եփրեմ, Յովհաննէս և Ներսէս Կաթողիկոսների մասին, բարեհաճին ինձ ուղարկել:

Մի առողջամիտ բանաքննութիւն, գործին և ժամանակին տեղեակ անձինքների կողմից, ոչ պակաս կարող է օգնել ինձ նոյնպէս այս կենսագրութիւնը աւելի լուսաբանելու և աւելի կատարելագործելու:

Ա.

Հայաստանի «Մեծ Հայք» կոչուած նահանգի Սպեր գաւառի Հունուտ գիւղում կենում էր 1770 թուականին մի Հայ մարդ Կարապետ Եղեկ-օղլի անունով: Այդ Հայը իւր ահագին հարստութեամբ և ամենին յայտնի իմաստութեամբ այնքան մեծ վարկ և անուն էր հանել բոլոր գաւառում, որ Երզուրումի փաշան նորան նշանակել էր նոյն ընդարձակ գաւառը (Սպեր) կառավարող ութն դատաւորներից մինը: Դատաստանական գործերում, հասարակական հարցերում Կարապետ Եղեկ-օղլին իւր ուշիմութեամբ և խելքութեամբ այնպիսի մեծ համբաւ էր ստացել բոլոր ժողովրդեան և մեծամեծ իշխանաւորների առաջ, որ գաւառի Օսմանցիք նորան Հայ թագաւորաղն էին անուանում: Կարապետ Եղեկ-օղլին խրախուսուելով այդ հանգամանքից, և գուցէ պատմութիւնից իմանալով, որ Սպերը Հայոց իշխանութեան ժամանակ պատկանում էր Բագրատունեաց ցեղին, վերջերում թողել էր իւր «Եղեկ-օղլի» մականունը և ընդունել «Բագրատունեան» մականունը: Կարապետ Բագրատունեանը, իւր մեռնելից յետոյ, իւր մեծանունութեան հետ թողում է իւր Գրիգոր և Յարութիւն որդոցը նաև իւր ահագին կարողութիւնը: Գրիգորը և Յարութիւնը, ճշմարիտ է, հասարակական և տէրութենական պաշտօններ չեն վարում հօր նման, բայց նորա թողած հարստութիւնը առևտրական գործերում շահեցնելով, կրկնապատկում են:

Ինչպէս որ Կարապետ Բագրատունեանի ժառանգները Հունուտ գիւղում և բոլոր գաւառում մեծ ձայն էին հանել իւրեանց հարստութեամբ, նոցանից ոչ պակաս ձայն էր հանել և նոցա համագիւղացի և թաղակից մի յետին աղքատ Հայի — այրի մահտեսի Թորոս փտտեանցի — Արեգնազան անունով 13 տարեկան աղջիկը իւր աննման գեղեցկութեամբ:

Գրիգոր Բագրատունեանը, անդադար տեսնելով Արեգնազանին, սիրահարուած էր նորա վերայ. բայց որովհետև նորանից աւելի մեծ և իշխանաւոր մարդիկ Օսմանցիներից, որոնցից գլխաւորն էր Մէհմէտ Դէրէ-բէգի (գաւառապետ), նոյնպէս սիրահարուած էին Արեգնազանի վերայ և որոշել էին բռնութեամբ տիրել այն Հայուհուն, եթէ սիրով չը յաջողեցնեն, ուստի և Գրիգորը սիրտ չէր անում Արեգ-

նաղանին իւրեան կին ուզել, մանաւանդ որ նորա պառաւ մամը «Զանազան հանըմը» (Տիկին Զանազան) միշտ զգուշացնում էր նորան «չընկնիլ այն շներուն» (Օսմանցիների) հետ, աւելացնելով միանգամայն, թէ իւր թոռանը (Գրիգորին) «լայեղոՂ» բան է առնել աղքատի աղջիկ:

Մի երեկոյ աղքատ Թորոսը իւր դրացիներից լսելով, որ Մէհմէտ աղա Դէրէ-բէգիի մարդիկը շատ անցու դարձ արին իւր տան մօտից նոյն օրը, և գուցէ պատրաստութիւններ էին տեսնում նոյն գիշերը նորա տունը «կոխել», դիմում է լեղապատառ դէպի Զանազան հանըմը և աղերսում է նորան՝ եթէ ոչ ի սէր իւր թոռանը (Գրիգորին), գէթ ի սէր քրիստոնէական հաւատոյ, փրկել իւր աղջկանը՝ Արեգնազանին: Կրօնական զգացմունքները այնպիսի ոյժ և զօրութիւն են տալիս երբեմն մարդու, որ նա, մոռանալով ամեն բան, փառք, պատիւ, երկիւղ, վտանգ և այլն, յանկարծ փոխվում է և ամեն բան զոհում է այդ զգացմունքներին: Գրիգոր Բագրատունեանի պառաւ տատը, որ մինչև այդ ժամանակ արգելք էր իւր թոռան նշանադրութեանը, չընայելով նորա աղերսագին թախանձանացը, յառաջ բերելով իւր կողմից թէ հիմնաւոր և թէ անհիմն պատճառներ, այժմ լսելով, որ Օսմանցիները ուզում են քրիստոնեայ աղջկան հաւատափոխ անել (տաճկացնել), իսկոյն կանչում է իւր թոռն Գրիգորին ու նորա սիրուհի Արեգնազանին և դոցա յանձնելով մի քանի կարիճ Հայերի և Թորոս Փտտեանցի ինամակալութեանը, մի և նոյն գիշերը Հունուտից փախցնում է մինչև Կան (Հայաբնակ գիւղ, Երզուրումից մի ժամ հեռու), հայրական կարողութեան մեծ մասը նոցա տալով:

Կան գիւղում Գրիգորը պսակվում է և փոխադրուելով Երզուրում քաղաքը, սկսում է տուրուառութեամբ պարապել: Իւր պառաւ տատի մահուանից յետոյ Գրիգորն Երզուրումից իւր մօտ է հրաւիրում նաև իւր փոքր եղբայր Յարութիւնին և աներորդի Աւետիսին: Այդ ամուսնութիւնից Գրիգորը և Արեգնազանը ունեցան երկու արու զաւակ, որոնցից անդրանիկը, որի անունն էր Յովհաննէս, ջերմ սիրահարութեան արգասիք, ծնաւ 1779 թուականի մայիսի 18-ին:

Դեռ Յովհաննէսը չըկար տասը տարեկան, երբ ժանտախտից մեռան նորա հայրը՝ Գրիգորը և փոքր եղբայրը՝ Մկրտիչը. իսկ Արեգնազանը գնաց ուրիշ մարդու հետ ամուսնացաւ: Գրիգոր Բագրատունեանի

եանը թէև մեռնելուց առաջ իւր հարստութիւնը օրինաւոր կերպով կտակել էր իւր ժառանգներին, բայց նոյն ժամանակուայ օրէնքները ոչինչ ոյժ և նշանակութիւն չէին ունենում, մանաւանդ մի «գէվիւրի» (քրիստոնէի) վերաբերութեամբ, երբ բռնութիւնը երևան էր գալիս: Վեց ամիս յետոյ անդաւակ մեռաւ Արեգնազանը և զանազան վէճեր և տարաձայնութիւններ բացուելով, Գրիգոր Բագրատունեանի կարողութիւնը անցաւ նորա աներոջը՝ մահտեսի Թորոս փոտեանցի, իւր որդի Աւետիսի և Արեգնազանի երկրորդ մարդու ձեռքը: Իսկական ժառանգներից Գրիգորի ցարութիւն եղբայրը վերադարձած էր կրկին իւր հայրենիքը՝ Հունուտ գիւղը, իսկ ցովհաննէսը բոլորովին զրկուած էր: Նորա խորդ հայրը խեղճ որբից խլած կարողութեան համար միմիայն այս փոխարինութիւնը արաւ նորան, որ մի մետաքսագործ վարպետի, մահտեսի ցակոբ անունով, մօտ տուեց նորան, որ այնտեղ մնալով և նորա տանը ծառայելով, սովորի այդ արհեստը և իւր համար ժամանակին մի կտոր հաց ճարէ, «միխէննէթի էհթէճ» չը լինի, այսինքն խեղճ չը մնայ:

Թէ փոքրիկ ցովհաննէսը իւր վարպետի մօտ օրերն ինչպէս է անցկացրել, յայտնի չէ. յայտնի է միմիայն, որ այդ արհեստը նորա սրտովը չի եղել, թէ նորա վարպետը նորա հետ լաւ չի վարուել. ուստի, դեռ 12 տարին հազիւ լրացած, ցովհաննէսը թողնում է իւր վարպետին և գնում էկին քաղաքը, Միքայէլ արքեպիսկոպոսի՝ հայոց առաջնորդի մօտ սպասաւոր մնում, ուր սովորում է մայրենի լեզուով կարդալ ու գրել, և օգուտ քաղելով իւր մեծաւորի գրքերից, սկսում է հետզհետէ ինքնուրոյնաբար զարգանալ: (Փոքրիկ ցովհաննէսը իւր մետաքսագործ վարպետի մօտից փախչելու համար ստացել է «ուստադան—ղաչան» (վարպետից փախչող), իսկ Միքայէլ արքեպիսկոպոսի գրքերը շատ անգամ ծածուկ ձեռք ձգելու և կարդալու համար «քիթաբ—խրխզի» (գրքերի գող) տիտղոսները): Մի քանի տարի ծառայելով Միքայէլ արքեպիսկոպոսի մօտ, ցովհաննէսը իւր աչքաբացութեամբ և սրամտութեամբ այնքան էր սիրելի եղած նորան, որ տեսնելով նորա մէջ մեծ ընդունակութիւն և սէր դէպի ուսումը, իւր հաշուով ուղարկեց նորան 1788 թուակ. Կոստանդնուպոլիս, որտեղ նա այն ժամանակուայ գիտնականների մօտ սովորեցաւ քերականութիւն, ճարտասանութիւն, տրամաբանութիւն և աստուածաբանութիւն,

նոյնպէս և օսմանեան լեզու (¹)։ 1795 թուականին լաւ վկայականներ ձեռին վերադարձաւ Յովհաննէսը իւր բարերարի մօտ, որ մի քանի տարուայ ընթացքում նորան ձեռնադրեց դպիր (Էրզուրումի Ս. Աստուածածնի վանքում), սարկաւագ և 1801 թուականին Էկին քաղաքի Ս. Գէորգ եկեղեցում վարդապետ, երբ նորա Յովհաննէս անունը փոխուեցաւ, ըստ սովորութեան Հայաստանեայց Եկեղեցւոյ, Կարապետ։ Այնուհետև Կարապետ վարդապետը նշանակվում է իւր առաջնորդից «ընդհանուր կառավարիչ» Էկինի և Էրզուրումի վիճակաց բոլոր եկեղեցական կալուածների վերայ։ Մինչև Կարապետի վարդապետանալը այդ կալուածները կառավարում էր Միքայէլ արքեպիսկոպոսի միւս տաւագ փոքրաւոր» Յակոբ վարդապետը։ Վերջին ընտրութիւնը — Կարապետ վարդապետի կառավարիչ նշանակուիլը — որ մեծ պատիւ է բերում Միքայէլ արքեպիսկոպոսին, իբրև ուսումնական անձն գնահատող և նորա վերայ վստահութիւն յայտնողն, զարթեցրեց Յակոբ վարդապետի մէջ նախանձ դէպի Կարապետ վարդապետը, բայց այդ նախանձը չէր կարող, իհարկէ, արգելք լինել դործին կամ թնասել Կարապետ վարդապետին, քանի որ կենդանի էր նորան սիրող և յարգող առաջնորդը։ Վերջինիս մահուանից յետոյ, 1804 թուականին, Յակոբ վարդապետի նախանձը, ըստ երևոյթին, լայն և անարգելք ասպարէզ է գտնում ոտնակոխ անել իւր հակառակորդին և նորա փառքը. ուստի և կազմելով մի բաւականին զօրեղ կուսակցութիւն, աշխատում է ժողովրդեան առաջը Կարապետ վարդապետի անունն ստորացնել

(¹) Կարապետ արքեպիսկոպոսի «ցուցակ ծառայութեան» թղթի մէջ ասուած է, որ նա այդ դիտութիւնները սովորել է Կ. Պոլսոյ «Հոդևոր ճեմարանում», բայց այդ սխալմունք է. որովհետև Կ. Պոլսում Հոդևոր ճեմարան ոչինչ անդամ բացուած է «ճեմարան Սուրբ Երուսաղէմայ» անունով 1838 թուակ. դեկտ. 9-ին, Կ. Պոլսեցի Կարապետ ամիրայ Պալեանի և նորա քեռայր (օսմանեան տէրութեան արքունի ճարտարապետի) Յովհաննէս էֆէնդիի աշխատութեամբ և Երուսաղէմի Գաբրիէլ պատրիարքի հաճութեամբ, Կ. Պոլսոյ Իսկիթէր թաղում. (տես Ա. Գէրպէրեան. Պատմ. Հայոց. Կ. Պոլիս, 1871 եր. 267)։ Իսկ այդ ճեմարանը, ինչպէս ժամանակագրութիւնից երևում է. մեր պատմութիւնից բաւականին յետոյ է. այս պատճառաւ Կարապետ արքեպիսկոպոսի ծառայութեան ցուցակումը յիշուած «Հոդևոր ճեմարանը» չափազանցութիւն է, և պէտք է հասկանալ այնտեղի նոյն ժամանակուայ մասնաւոր ուսումնարանները, կամ, որ աւելի հաւանական է, դիտնականները։

և իւր ձեռքն առնել ոչ միայն եկեղեցական կալուածների կառավարութիւնը, այլ և լինիլ առաջնորդ Մելքայէլ արքեպիսկոպոսի փոխարէն — բայց այդ արդէն ուշ էր: Կարապետ վարդապետը իւր արթուն կառավարութեամբ արդէն գրաւած ունէր ժողովրդեան մեծագոյն մասի համակրութիւնը և յարգանքը: Յակոբ վարդապետի կուսակիցները, լինելով որպէս մեծատուն անձինք, ամիրաներ, էֆէնդիներ, սկզբից թէև բաւական ազդել են ժողովրդի վերայ և աշխատել են նորան առաջնորդ ընտրել տալ, բայց հասարակ ժողովուրդը չի յօժարացել զրկել եկեղեցին իւր արթուն կառավարչից, և համաձայնել է ընտրել Յակոբ վարդապետին առաջնորդ այն պայմանաւ, որ եկեղեցական կալուածների կառավարութիւնը առաջուայ նման մնայ Կարապետ վարդապետի ձեռքին: Մեծատունները չկարողանալով ամեն կողմից ճնշել ժողովրդին և խեղդել նորա համոզմունքը, համաձայնել են նորա այս առաջարկութեանը, յուսալով, որ յետոյ հեշտ կը լինի Յակոբ առաջնորդի համար հեռացնել Կարապետ վարդապետին իւր կառավարչական պաշտօնից: Նշանաւոր են այն խօսքերը, որ Կարապետ վարդապետն ասել է այդ առթիւ հարուստների միջից իւր միակ բարեկամ Փիլիպպոս ամիրային. «Լթէ դուք լինձ հաւատում էք ժողովրդի կարողութիւնը, ինչի՞ չէք հաւատում և լոկ իշխանական անունը»: Թէ այսպէս և թէ այնպէս մեծատունները և հասարակ ժողովուրդը միմեանց մէջ համաձայնում են Յակոբ վարդապետին ընտրել առաջնորդ, իսկ Կարապետ վարդապետին հաստատել իւր նախկին պաշտօնի մէջ: Բայց Կարապետ վարդապետը մտածելով, որ եթէ առաջնորդութիւնը անցնի իւր ոսոխի ձեռքը, ինքն այլ ևս չի կարող աղատաբար կառավարութիւն անել և ժամանակին իւր հանդէպ անշուշտ արդելքներ և թշնամութիւններ դուրս կը գան, մի տարու չափ Փիլիպպոս ամիրայի տանը կենալից յետոյ, գնում է Կ. Պոլիս և այնտեղ, 1808 թուականի Օգոստոսի 21-ին, Յովհաննէս Պատրիարքից նշանակուելով և սուլթանի հրովարտակով հաստատուելով առաջնորդ, վերադառնում է իւր վանքը (¹):

(¹) Մինչև այժմ սովորութիւն կայ մեր ազգի մէջ, որ քահանայ, վարդապետ և նոյն իսկ եպիսկոպոս ձեռնադրուող անձը ձեռնադրողին մի ընծայ է տալիս, որ և կոչվում է «աջահամբոյր»: Գուցէ մեր մէջ այդ սովորութիւնը ամենահին ժամանակներում ունեցել է իւր պարզ նշանակութիւնը, բայց որովհետև դա վերջերումս դառել է պարտադիր և իբրև

Կարապետ վարդապետի կողմից մի այդպիսի վարմունք պէտք է որ հաճելի չըլլներ, մանաւանդ հարուստներին, բայց որովհետև դորանով հասարակ ժողովրդեան բուն կամքն ու ցանկութիւնը յաղթանակած կըլլներ, ուստի հաւանական է, որ նորահաստատ առաջնորդի հակառակորդները այլ ևս չըկարողացան, գոնեա բացարձակ կերպով, հակառակել Կարապետ վարդապետ առաջնորդին և հետզհետէ նորա հետ հաշտեցան ու բարեկամացան, մանաւանդ, ինչպէս վերևում յիշեցինք, Կարապետ վարդապետը մի տարի կենում էր Փիլիպպոս ամիրայի տանը և իհարկէ վերջնիս միջոցաւ յաջողել էր գրաւել իւր կողմը և մի քանի ամիրաների և էֆէնդիների։ Առաջնորդ նշանակուելուց յետոյ Կարապետ վարդապետը նախ և առաջ աշխատում է վանքերի տնտեսական վիճակը բարւոքել, միաբանից թիւը քչացնում է, սահմանում է սոցա համար կանոններ, նշանակում է նոցա գործ, գլխաւորապէս քարոզչութիւն գիւղերում, և յետոյ Մամիկոնեան Յակոբ Ամիրայի (թոփալ — կաղ — մականուանեալ) հետ գնում է Ս. Էջմիածին և այնտեղ, 1811 թուականի նոյեմբ. 2-ին, Եփրեմ կաթողիկոսից ձեռնադրվում է արքեպիսկոպոս։

Բ.

Ս. Էջմիածնից վերադառնալիս Կարապետ արքեպիսկոպոսը լուր առաւ ճանապարհին Երզուրումի մէջ տարածուած սովի մասին։ Ճանապարհեց նա և Երզուրում հասնելուն պէս ցոյց տուաւ իւր գործունեայ և ժողովրդասէր բնութիւնը։

գլխաւոր պայման մի որ և իցէ աստիճանի հասնելու, ուստի այդ սովորութիւնը այժմ ոչ այլ ինչ է, եթէ ոչ կաշառակերութիւն, կամ աւելի ճիշտն ասելով, սիմոնականութիւն։ Կարապետ վարդապետին առաջնորդ նշանակող պատրիարքն ևս ազատ չէ եղել այդ ախտից։ Բացի Կարապետ և Յակոբ վարդապետներից Երզուրումի առաջնորդական աթոռի համար կային և ուրիշ մրցողներ նոյն իսկ Կ. Պոլսոյ մէջ, որոնցից նշանաւորն էր Իսրայէլ անունով մի վարդապետ, բայց նորա «աջահամբոյրը» 1000 ղուռուշ (50 ր.) քիչ է եղել և Պատրիարքը նշանակել է առաջնորդ Կարապետ վարդապետին ոչ այնքան նորա արժանաւորութիւնը ճանաչելով, որքան զուցէ նորանից իրան առաջարկուած 2000 ղուռուշ (100 ր.) աջահամբուրի համար։ Այդ հանգամանքից յետոյ ինչ զարմանք է, որ վարդապետները և քահանաները շատ անգամ ձեռնարկում են կաշառակերութեան, իբրև կրկնապատիկ փոխարէնը իրանց տուածների։ Ինքը Կարապետ արքեպիսկոպոսը իւր գործունէութիւնը երբեմն երբեմն արատաւորում էր կաշառակերութեամբ։

Առանց ժամանակ կորցնելու նա խորդակցեցաւ մեծատուններին հետ և նոցա օժանդակութեամբ իսկոյն մի աղքատանոց հիմնեց, որտեղ երեք տարի շարունակ 180 հոգի ծերեր և տնանկներ կերակրվում էին և շորեր ստանում եկեղեցու ծախսով և մասնաւոր մարդկանց նուիրատուութեամբ: Մի և նոյն ժամանակ նա քահանաների և ժամկոչների միջոցաւ այրիներին և որբերին ալիւր, ցորեն և գարի էր բաժանում իւր կառավարիչ եղած ժամանակը սահմանած եկեղեցական ամբարներից: Այդ սովի ժամանակ ընդարձակ գաւառի հայաբնակ քաղաքներում և գիւղերում նորա ցրուած շրջաբերականները, որոնցով սովելոց համար օգնութիւն էր «հայցում» իւր «սիրեցեալ» հօտից, լի և զեղուն են սրտաբուղխ յորդորներով և կենդանի նկարագրութիւններով մարդկային բազմաղէտ թշուառութեանց «յերեսաց Աստուծոյ և մանաւանդ ինքեան մարդոյն»: Վերջին բառերը պարզ ապացոյց են, թէ Կ. արքեպիսկոպոսը չէր այնպիսիներից, որոնք սովոր են ամեն տեսակ թշուառութիւնք վերագրել Աստուծուն: Խորագէտ արքեպիսկոպոսը այդ բառերով ակնարկում է դէպի տէրութիւնը և դէպի հասարակութեան անհոգութիւնն ու տգիտութիւնը: Նա միշտ աշխատում էր ժողովրդին գրաւել դէպի աշխատութիւն. այդ իսկ պատճառով թէ Երզնրումում և թէ Ախալցխայում գեղացիներին միշտ պատուիրում էր, որ բացի տէրունական կիւրակէներից, ուրիշ կիւրակէներ չըպահեն:

Որքան որ զարհուրելի էր Երզնրումի այդ սովը և երկարատև, այնքան անչափ էր Կարապետ արքեպիսկոպոսի եռանդը և գործունէութիւնը՝ օգնել իւր ժողովրդին. և հէնց այդ ժամանակներից սկսվում է Կարապետ արքեպիսկոպոսի մեծագործութիւնքը և իբրև բնական հետևանք դորա՝ նորա մեծահոգութիւնը: Ունենալով առաջնորդական աթոռ և իշխանութիւն Ցաճկաստանի նման մի տէրութեան մէջ, ի վաղուց հետէ և վերջերում ևս դրաւած լինելով իւր բոլոր հօտի ամենաջերմ համակրութիւնը, իւր ոսոխներից հետզհետէ իրան բարեկամներ շինելով, իւր անընդմիջական իշխանութեան և կառավարութեան տակ ունենալով ահագին վիճակի բազմաթիւ եկեղեցիների և վանքերի կառավարութիւնը, շարունակաբար պաշտօնական և մասնաւոր յարաբերութիւններ ունենալով տէրութեան մեծանուն պաշտօնատեարց հետ, Կարապետ արքեպիսկոպոսը այնուհետև իւր հօտի առաջ ներկայանում է իբրև

միահնձան թագաւոր և ըստ իւր կոչման՝ մի ճշմարիտ հովիւ և խնամատար ու գորովագութ հայր: Ամեն տեսակ քաղաքական, ազգային և կրօնական վէճ, ամեն տեսակ տարաձայնութիւն, դանդատ և բողոք, որ պատահում են հայ ժողովրդեան մէջ, պէտք է քննուին և վերջանան Կարապետ արքեպիսկոպոսի մօտ և նորա «կտրածը կտրած է, կապածը կապած»: Ընդարձակ վիճակի իւրաքանչիւր հայի մի որևիցէ լաւ կամ վատ գործում Օսմանեան տէրութիւնը ճանաչելիս է լինում Կարապետ արքեպիսկոպոսին: Հպատակ հայերից ստացուելիք հարկերը տէրութիւնը իւրաքանչիւր տարի ստանում է եղել նոյնպէս Կարապետ արքեպիսկոպոսից: Ընդունելով իւր վրայ այդչափ քաղաքական ծանրութիւններ, Կարապետ արքեպիսկոպոսը աչքի առաջ ունէր, իհարկէ, Տաճկաստանի օրէնքների ու դատաստանատների խստութիւնները քրիստոնէից վերաբերութեամբ. նա լաւ տեղեակ էր և այն բռնաբարիչ և կեղեքիչ միջոցներին, որոնցով հարկեր էին ժողովում տէրութեան մարդիկը քրիստոնեաներից. ուստի և իւր ժողովուրդը ամենայն կողմից ապահովացնելու համար, սահմանել էր երդուրումում ունենալ «ազգային դանձանակ», ուր ամեն հայ պարտաւոր էր իւրաքանչիւր ամիս ձգել մի որոշեալ թեթև գումար, որից յետոյ Կարապետ արքեպիսկոպոսի ձեռամբ իւրաքանչիւր տարի տրվում էր տէրութեան որոշեալ հարկերը: «Առ ի թեթևացուցանելոյ զպահանջս բազմատեսակ հարկաց, սահմանեցաք առ այն զազգային դանձանակ», գրում է նա ինքը իւր օրհնութեան թղթի մէջ: Կատարելով մի այդպիսի դեր, Կարապետ արքեպիսկոպոսը, ճշմարիտ է, կարողացել է ժողովուրդին միշտ ծառայեցնել իւր նպատակներին — առաւելապէս դէպի եկեղեցիների և վանորէից շինութիւնն ու պայծառութիւնը — բայց նա իւր ժողովրդեան երեսից կրել է և դառն վշտեր, ժողովրդեան զանազան չարութիւնների և անկարգութիւնների համար նա շատ անգամ կանչուել է «յատեան անօրէն դատաւորաց», բանտարկուել է ամբողջ շաբաթներով և ամիսներով, դատապարտուել է կախաղանի և աղատուել. և երկու անգամ ստացած կաթուածներից մեծ հոգատարութեամբ և չարչարանքներով հաղիւ հաղէ առողջացել:

Իւր այդ կրած նեղութիւնների և վշտերի մասին նա ինքը մասամբ յիշում է իւր այն «օրհնութեան» թղթի մէջ, որ ի 23-ն մայիսի 1856 ամի, վախճանելուց մի քանի օր առաջ, ուղղել է «պատուարժան քահանայից, բարեծնունդ աստիճանաւորաց, արժա-

նայարդ երևելեաց (իշխանաց), բազմաշխատ ուստաբաշեաց և արհեստաւորաց՝ դաղթականաց Կարնոյ՝ վերաբնակելոց յԱխալցխայ»: «Նախնիք ձեր և հարք գիտէին քաջ և բազումք ի ձէնջ որք գիտեն և ականատես եղեալ են ինքեանք, խոստովանեսցեն, զի ես որքանեաց վշտաց և տառապանաց տարի յերկրին Օսմանեան յերեսաց յայնժամեան խստաբարոյ մահմէտականաց, թշնամեաց քրիստոսական արեամբ զնեալ մերս Սուրբ Եկեղեցւոյ: Քանի՞ քանիցս յատեան անողորմ սպարապետաց նոցին և վէզիրաց մահու չափ կրեցի դառնութեանց ըստ պարտաւորութեան իմում ի սէր սիրելեացդ իմոց և որդւոցդ հարազատից»: Բացի այդչափ բարոյական հարուածներից Կարապետ արքեպիսկոպոսը շատ անգամ ստիպուած է եղել կրել և նիւթական վնասներ: Շատ անգամ նա ստիպուած էր լինում մեծամեծ նուէրներ (փէշքէշներ) տալու այս և այն քաղցած վէզիրին, այս և այն փաշային, այս և այն կրօնամոլ մոլլային, որոց միջոցաւ կարող էր իւր կամ ժողովրդեան անձին և պատուին մի որ և իցէ վնաս հասնել: Շատ բաղդախնդիր պաշտօնատար անձինք զանազան ընչին պատճառներով աշխատում էին նորանից մի բան պոկել, և Կարապետ արքեպիսկոպոսը հարկադրուած էր լինում բաւականութիւն տալ դոցա, ենթարկելով ի վերջոյ և դոցա իւր ազդեցութեանը:

Մինչև արքեպիսկոպոսի օրով շատ խեղճ էին Էրզրուրումի և Եկինի վանքերն ու եկեղեցիները և նոցանից շատերը անցել էին Օսմանցիների ձեռքը պարտքի փոխարէն:

Կարապետ արքեպիսկոպոսը միաբանների համար կարգ ու կանոններ սահմանելից յետոյ աշխատում է Օսմանցիների ձեռքից յետ առնել մի քանի նշանաւոր վանքեր, բայց դորա համար հարկաւոր էր մեծ գումար, ժողովրդեան տուրքերը բաւական չէին դորա համար. ուստի Կարապետ արքեպիսկոպոսը ձեռք է դարնում վաճառականութեան և անտեսապիտութեամբ նորանոր կալուածքներ է ձեռք բերում, գումար հաւաքելու ամենայն միջոցներ և արդիւնքներ է որոնում և գտնում, որոնցից և մեծամեծ եկամուտներ ստանալով, մի քանի տարուց յետոյ պարտքից ազատում է Էրզրուրումի Ս. Աստուածածնի (որ և Կարմիր) վանքը, մի քանի այլ նշանաւոր ուխտատեղիներ, վերանորոգում և պարապատպատ շինում Ս. Լուսաւորիչ և Ս. Խաչ վանքերը, որոնք արդէն հնացած և քայքայուած էին, բարեկարգելով և նոցա ներքին վայելչութիւնքը:

Թէ Կարապետ Արքեպիսկոպոսը իւր մեծագործութեանց համար

պարտական էր ժողովրդեան առատ նուիրատուութիւններին, դորան տարակոյս չկայ, բայց յայտնի է և այս, որ նա վանքերի և եկեղեցիների պատկանեալ դաշտերում և արօտատեղիներում պահելով և մեծացնելով մեծ բաղմութիւն զանազան չորքոտանի կենդանիներ, վաճառում էր յետոյ «ջալաբներին», և հէնց այդ էր նորա հարստութեան գլխաւոր աղբիւրը:

Յետոյ Կարապետ արքեպիսկոպոսը հաստատ համոզուած լինելով, որ հոգևորականաց բարեկարգութիւնը կախուած է միմիայն ազգային մանկաւոյ լուսաւորութիւնից և կրթութիւնից, Երզնրումում հիմնում է ազգային դպրոց «Կարապետեան» անունով, որ ամենայն իրաւամբ և արդարութեամբ նա իւր վերոյիշեալ «օրհնութեան» թղթի մէջ անուանում է «աշխարհածանօթ»: Կարապետեան դպրոցը բացուած լինելով Երզնրումում քաղաքում մի այնպիսի ժամանակ, երբ ոչ թէ ազգային (հայկական) այլ և տէրութեան դպրոցներ չէր կային, գտնուելով Կարապետ արքեպիսկոպոսի վեհ պաշտպանութեան տակ, կառավարուելով եկեղեցական հաստատուն աղբիւրներով, շատ մեծ դեր է խաղացել Երզնրումի հայ ժողովրդեան բարոյական կեանքում: Այդ դպրոցի ուսուցիչներն էին այն ժամանակուայ երևելի հայկաբանները, որոնց Կարապետ արքեպիսկոպոսը յատուկ իւր ուսումնարանի համար հրաւիրել էր Կ. Պոլսից: Դոքա էին Յովհաննէս (Արդար մականուանեալ) վարժապետ, Շէքերճեան Գրիգոր պատուելի, Կարապետ վարժապետ Վանեցի, Գէորգ պատուելի Տէր Յովհաննիսեանց, և վերջերում Կարապետ Զմշկեանց:

Ունենալով անսահման սէր դէպի ազգային մանկտին և ցանկանալով նոցա մեծագոյն մասին մասնակից անել կրթութեան և լուսաւորութեան, Կարապետ արքեպիսկոպոսը իւր հզօր ազդեցութեամբ իրագործել էր այն գաղափարը, որ այժմ մեր լուսաւոր դարում հզօր տէրութիւններն անգամ դժուարանում են իրագործել: Ուսումնառութիւնը Կարապետեան դպրոցում իւր ժողովրդի զաւակաց համար Կարապետ արքեպիսկոպոսը պարտադիր էր արել: Հարուստ և միջակ դասակարգի ժողովրդեանը նա ստիպում և հարկադրում էր որդիքը ուսումնարան ուղարկել, (ուստի և Երզնրումցիք ասում էին, թէ Կարապետ արքեպիսկոպոսը ուզում է վարդապետ և քահանայ շինել բոլորին. դոցա կարծիքով ամեն ուսում ստացող պէտք է որ անպատճառ քահանայ կամ վարդապետ դառնայ) աղքատներին ու տնանկներին և նոցա զաւակներին նա դրաւում էր դրամական թեթև

նուէրներով և օգնութիւններով։ Տարեկան 40 աղքատ աշակերտներ Կարապետ արքեպիսկոպոսի տանը կերակրվում էին, շորեր և ուսումնական պիտոյքներ էին ստանում. բացի դորանից, նոցա ծնողներն էս Կարապետ արքեպիսկոպոսից ստանում էին ամսական մի քանի կոթ ցորեն, գարի, մի քանի լիտր ալիւր, որպէս զի տեղեք չունենան որդոցը դպրոցից հանել և արհեստի կամ ծառայութեան տալ, ռոճկից ինքեանք (ծնողք) շահուելու նպատակով։ Մեր ձեռքում գտնուած մի կտոր հին հաշուեթղթից երեւում է, որ Կարապետ արքեպիսկոպոսը ամենայն տարի վճարում էր Գէորգ աղա Բօզոյեանցին (ճոթի վաճառական, մի և նոյն ժամանակ դերձակ) վերոյիշեալ քառասուն աշակերտաց հանդերձագինը 1037 ղուռուշ երեսուն փարայ (մօտ 52 ռուբլի) այն ժամանակուայ համար նշանաւոր գումար։ Մի և նոյն այդ ընթացքն ունեցաւ Կարապետ արքեպիսկոպոսը և Ախալցխայում, «Կարապետեան» դպրոցի աղքատ աշակերտների վերաբերութեամբ։

Կարապետեան դպրոցի աշակերտներից մինչև այսօր կան շատերը Էրզուրումում, որոնք մեծապէս նպաստել են ազգային լեզուի զարգացմանը և տարածմանը նոյն վիճակում։ Նոյն աշակերտներից Ախալցխայում յայտնի էին Յակոբ Զաթալբաշեանց, Բարսեղ Տէր Միքայէլեանց, Կարապետ քահանայ Մանդինեանց (Գանձակում վախճանեցաւ), Յակոբ Կարինեանց, Մկրտիչ Արվանեանց (Վենետիկ-մականուանեալ) և ուրիշները։

Գ.

1828 թուականին, երբ սկսվում է պատերազմը Օսմանցիների և Ռուսների մէջ, Կարապետ արքեպիսկոպոսի և իւր ժողովրդեան վիճակը — իբրև քրիստոնեաների վիճակ — վատթարանում է, նոցա կեանքը և կարողութիւնը ենթարկվում է յայտնի և բացարձակ վտանգների։ Օսմանցիները, ըստ իւրեանց բնատուր երկչոտութեան և անվստահութեան, արդէն Ռուսների «Ախալցխայի փաշալիկում» արած յաղթութիւններով վշտացած և թուլացած, զանազան մնոտի պատճառներ են պտռում՝ սրէ անցցնել, կոտորել Էրզուրումի և բոլոր վիճակի քրիստոնեաներին, երկիւղ կրելով, մի գուցէ նոքա Ռուսների կողմն անցնեն և իւրեանց գործը աւելի դժուարացնեն։

Յղանալով իրանց մէջ մի այդպիսի զարհուրելի միտք, Օսմանցիներին հարկաւոր էր նախ և առաջ սպանել Հայերի, մանա-

ւանդ թէ բոլոր քրիստոնեաների ընդհանուր պաշտպան և հզօր ախոյեան — Կարապետ արքեպիսկոպոսին:

Մի կիւրակէ օր Ս. պատարագի ժամանակ եկեղեցու մէջ իմաց են անում «մեծաւորին» (¹), թէ երկու «զաւազ» (զինուոր) եկեղեցու դրանը նորան են սպասում: Քրիստոնեայ եպիսկոպոսը ստիպվում է թողնել Ս. պատարագը, չոքում է սեղանի առաջ, ջերմ արտասուքով համբուրում է Ս. Խաչը և եկեղեցուց դուրս գալով ու զինուորներին հետևելով գնում է դէպի փաշայի Սարայը (պալատը): Ժողովրդականք արսափած այդ տարօրինակ հրաւէրից, և այն եկեղեցու մէջից, թողնում են եկեղեցին և քաշվում իրանց տներումն ամրանում:

Կարապետ Արքեպիսկոպոսը արդէն իւր հաւատարիմ մարդկանց ձեռքով լսած էր Օսմանցիների մեծաւորաց մտքում ծնած զարհուրելի և նենգաւոր միտքը, ուստի և կարծում էր, թէ այլ ևս չըպիտի կարողանայ վերադառնալ և տեսնել իւր սիրելի ժողովրդեան երեսը: Չընայելով որ այդ սոսկալի դաղտնիքը քանի ժամանակից հետէ նորան վրդովում և տաղնապում էր և այդ յանկարծական հրաւէրը նորա վերայ սաստիկ ազդեց, այսու ամենայնիւ, ժողովրդեան մէջ վրդով չբձղելու համար, նա մինչև եկեղեցուց դուրս գալը ինքն իրան լաւ զսպեց: Չընայելով Կարապետ արքեպիսկոպոսի պատուհերին և հրամանին՝ թողնել իրան մենակ, այդ միջոցին հեռուից ծածկաբար հետևում էր նորան իւր հաւատարիմ սպասաւորը՝ Գէորգ անունով (²):

Ս. Յովհաննէս եկեղեցուց մինչև փաշայի սարայը (կէս ժամից աւելի ճանապարհ) գնում էր քրիստոնեայ եպիսկոպոսը զինուորներով

(¹) Էրզրումի և նորա վիճակի Հայերը, մինչև անդամ միւս քրիստոնեայ ժողովուրդները, Կարապետ արքեպիսկոպոսի հետ խօսելիս, նորան կոչում էին «հայր սուրբ», իսկ միմեանց հետ նորան անուանում էին «մեծաւոր»: Այդպէս էին կոչում և դաղթականութիւնից յետոյ Ախալցխայում: Մինչև այսօր էլ ասում են «մեծաւորի գերեզմանը», «մեծաւորենց բաղնիքը» «մեծաւորենց դեղերը», «մեծաւորին տունը», «մեծաւորենց աղջիկը»:

(²) Այդ Գէորգ Տէր Դաւթեան սպասաւորը, իրրև ձեռնասուն և ամենից հաւատարիմ աշակերտ Կարապետ արքեպիսկոպոսի, շատ սիրելի անձն էր: Կարապետ արքեպիսկոպոսը նորան իւր հետ բերաւ Ախալցխայ՝ ձեռնադրեց վարդապետ և եպիսկոպոս, իսկ երբ ինքը նշանակուեցաւ Վրաստանի և Իմերէթի թեմական առաջնորդ (1836 թ.) Գէորգ եպիսկոպոսը

առաջնորդուած, հեծում էր և զանազան դառն մտքերում ալեկոծվում: Քառորդ ժամ հաղիւ առաջ գնացած, նա ընկնում է բոլորովին անզգայութեան մէջ: «Իշ-մէյդանի» կոչուած հրապարակը դուրս գալով, Կարապետ արքեպիսկոպոսը տեսնում է իւր հանդէպ իւր հաւատարիմ սպասաւոր Գէորգին, որ մի ման ջուր ձեռին, շտապում էր դէպի իրան: Այդտեղ եպիսկոպոսն սթափելով, հարցնում է Գէորգին, թէ ինչո՞ւ համար է այդ ջուրը:

«Հա՛յր սուրբ, պատասխանում է սպասաւորը լալագին, հա՛յր սուրբ, տե՛ս քո դրութիւնը:

Կարապետ եպիսկոպոսը նայում է ներքև և իւր մօրուքն ու վերարկուն արնաշաղախ է գտնում: Ճանապարհին նորա վարի շրթունքը ճաքել էր և այդ ճաքածի արիւնը խառնուելով քթից յորդութեամբ հոսող արեան հետ, ապականել էր նորա մօրուքն ու վերարկուն, բայց նա ինքը այդ չէր նշմարել և ցաւ բնաւ չէր զգացել: Խնդրելով զինուորներին, նա անտրտունջ գնում է մօտակայ աղբիւրը և լուացուելով, մտնում է փաշայի սարայը, ուր զինուորական և քաղաքական մեծամեծ պաշտօնակալները զինուորական խորհուրդ էին կազմում: Հաւատարիմ Գէորգը մնաց սարայի դրան մօտ մի անկիւնում և սրտատրոփ սպասում էր իւր տիրոջը:

Մտնելով սարայը և սովորական ողջոյնը (թէմէլէմ, այսինքն խոնարհումն մինչև նստողների քղանցքները) տալուց յետոյ, Կարապետ արքեպիսկոպոսը, ոտքի վերայ կանգնած, սպասում էր այդ նոր կայլափաներից լսել իւր յանցանքը և նորա վճիռը: Խեղճ եպիսկոպոսի բոլոր յանցանքն այն է եղել, որ նորանից մի օր առաջ, շաբաթ օրը, Հայերը, հետևելով Օսմանցիների օրինակին, իւրեանց խանութները կողպել էին, որ ըստ կարծեաց զինուորական խորհրդի, Հայերը նորա համար են արել իբր, որ տները քաշուին և տիրութեան դէմ որոգայթներ լարեն, դորա համար զինուորական խորհուրդը որոշել է նորանց ամենքին էլ կոտորել և նախապէս Իւրեանց եպիսկոպոսին սպանել, որ իւր «միլլէթը» (ժողովուրդը) այդպէս է «թերպիյէ» արել (կրթել): Կարապետ արքեպիսկոպոսը յայտնում է, թէ

Ախալցխայում յաջորդի պաշտօն էր վարում: Ախալցխայի Ս. Փրկիչ եկեղեցուն Գէորգ եպիսկոպոսը թողեց Սուլդա մեծ գիւղի երկու մասն և մի քանի նշանաւոր աւերակներ: Գէորգ եպիսկոպոսը վախճանեցաւ Ախալցխայում 1847 թ. յուլիսի 4-ին խոլերայից, 45 տարեկան, և թաղուեցաւ Ս. Փրկիչ եկեղեցու արևելեան կողմը:

Հայերը նորա համար են կողբել իրանց խանութները, որ նորանցից առաջ կողբել էին իրանք Օսմանցիները, որոց արածին հակառակ անելը Հայերի կողմից յանդգնութիւն կը լինէր։

«Զօ՛ք շէյ» (շատ բան) բղաւում է փաշան, «բայց Օսմանցիները տանը նստած չեն կարող որոգայթներ լարել տէրութեան դէմ։

—Երբ Հայերի կողմից տէրութեան մի որ և իցէ գլխաս հասնի, ես ինքս կը լինիմ պատասխանատու, ասում է Կարապետ արքեպիսկոպոսը, իսկ եթէ նոցա դուքաններ կողբելը հաճելի չէ ձեր վսեմութեան, հրամայեցէք, ես իսկոյն բանալ կը տամ։

«Ա՛յ բաջադան դէյմիշ» (լուսնիակը երդկից անց է կացել—ուշ է արդէն), զոռոզաբար պատասխանում է փաշան, «զինուորական խորհրդի որոշումը պէտք է կատարուի»։

Ա՛յդ տեղ երկիւղից Կարապետ արքեպիսկոպոսի շրթունքի ճաքածից դարձեալ սկսում է արիւն վազել, որ տեսնելով մի ծերունի վէզիր և ճանապարհի պատահած անցքն ևս լսելով, համոզում է խորհուրդին՝ փոխել իւր առաջուան միտքը—եպիսկոպոսի և քրիստոնէից խողխողումը—և պարապեցնում է նոցա պատերազմական գործերով, որպէս զի այլ ևս «քեօթու» (վատ) բաներ մտածելու ժամանակ չունենան։

Ա՛յդ այդպէս սարքուած էր արդեօք, թէ ինչպէս որ անհիմն և ամապարանօք վճիռ էր եղած, այնպէս էլ ամապարանօք այդ վճիռը փոխուեցաւ, յայտնի չէ. յայտնի է միայն, որ ծերունի վէզիրի առաջարկութիւնը զինուորական խորհուրդը յարգեց և Կարապետ արքեպիսկոպոսին հրամայեց՝ հաւաքել իւր ժողովուրդը և քաղաքի ու Ս. Նշան լեռան չորս բոլորքը «խէնդէկ» (խրամ) փորել։

Օսմանցիք հնումը սովոր էին պատերազմի ժամանակ իրանց հպատակ քրիստոնեաներին աշխատեցնել զանազան պատերազմական գործերով։ Ա՛յպէս 1805 թուականին, երբ պատերազմ սկսուեցաւ Ռուսաց և Ֆրանսիացոց մէջ, և երբ Անգլիացիք տասն և մի պատերազմական նաւերից կազմուած նաւատորմիղը մոտրին Սիջերկրական ծովը, Օսմանցիների սուլթան Սէլիմ թագաւորին ստիպելու՝ թողնել Նապոլէոն Բոնապարտի կուսակցութիւնը և անցնել Ռուսաց կողմը, սուլթան Սէլիմը, Անգլիացիների այդ վարմունքը համարելով իւր իրաւանց բռնաբարութիւն, պատրաստուեցաւ Անգլիացիներին ընդդիմանալու. նա պարտաւորեց Հայոց Յովհան-

նէս պատրիարքին «հանդերձ հասարակ ժողովրդեամբ գնալ ի պալատն արքայի, և ինքն առաջնակայ լինելով ժողովրդեան, սկսաւ հող կրել ի թիկունս իւր և կիր և որ ինչ պիտոյքն էին շինութեանն։ Տեսեալ զայս սուլթան Սէլիմ արքայ և հարցեալ թէ ո՞վ ոք իցէ նա և իմացեալ՝ հրամայէ զգեցուցանել նմա (Յովհաննէս պատրիարքին) զսամոյր մուշտակ արքայապարգև և նստուցանել զնա յաթոռ, զի ինքն (պատրիարքն) մի՛ աշխատ լիցի, այլ ժողովուրդ իւր փոխանակ իւր»։ (Պէրպէրեան. Պատմ. Հայոց. Կ. Պոլիս 1876 եր 56.)

Լ ի ուրախութեամբ հեռանում է Սարայից Կարապետ արքեպիսկոպոսը և երկու ժամից յետոյ բոլոր Էրզուրումի Հայ ժողովուրդը, բացառութեամբ կանանց, ծերերի, կաղերի և կոյրերի, բահ, թի, փետատ ձեռքերին, նշանակուած տեղերում խրամ և պատնէշներ էին փորում։ Սկզբումն ինքը Կարապետ արքեպիսկոպոսն էլ, ժամկոչի շորեր հագած, երեք օր աշխատեցաւ իւր ժողովրդի հետ, իսկ երեք օրից յետոյ զինուորական խորհրդի որոշմամբ Ղէլիբ փաշայի (խրամների վերակացուի) հետ իմիասին, ձի հեծած մտան էր գալիս խրամների բոլորքը և խրախուսում ժողովրդին, որ թողած իւր առևտուրը, իւր բանն ու գործը, որից կախուած էր նորա դերդաստանի օրական ապրուստը, ամենայն առաւօտ վաղ հաւաքվում էր «մեծաւորի խցի» հանդէպ, առնում էր նորա օրհնութիւնը և գնում էր չարաչար աշխատանքի. գնում էր և լալագին երգում. «Բահ, թի, փետատներ դիզուեցան, մեծ ու փոքր հիւանդացան. գնա՛նք՝ խրամը, խրամը»։ Այդ երգն ասուած է թուրքերէն. մենք թարգմանաբար գնում ենք այստեղ դորա մի քանի տները, որոնցով լաւ նկարագրվում է հայ ժողովրդի վիճակն ու մտքի զանազան արտայայտութիւններն այդ աշխատանաց օրերում։

Մոսկովը (Ռուսը) հասաւ Էրզուրումին,
Վայը եկաւ Հայոց գլխին.
Սաստիկ հրամանը վէզիրի
Քունը կտրեց մեր աչքերի.
Գնա՛նք խրամը, խրամը։
Զմեռ կուգայ բուք ու բօրան,
Մեր ընտանեաց հալն է եաման,
Թողնենք գործերս ցիրուցան,
Եկանք հասանք ի Սուրբ Նշան,
Փորել խրամը, խրամը։

Բահ, թիւ, փետատներ ղիղուեցան,
Մեծ ու փոքր՝ հիւանդացան.
Թէ չըլլնէր սուրբ օրհնութիւն (արքեպիսկոպոսը),
Ամենքին էլ հալն էր ղուրում.
Փորենք խրամը, խրամը:
Արի՛, եղբա՛յր, փորենք խրամ,
Հիմի կուգայ Ղէլիբ փաշան.
Թո՛ղ, ի՞նչ ես մտածում այդքան,
Աստուած կըլնի մեր պահապան.
Գնանք խրամը, խրամը:
Փետատը ղարկինք ապառաժին,
Ջուր հանեցինք քարի միջին.
Բայց ճաղուկներս մօրը կշտին
Կարօտ մնացին ցամաք հացին.
Գնանք խրամը, խրամը:
Հայր սուրբն ահա հեծած իւր ձին,
Կուգայ, եղբա՛յրք, երթանք աջին.
Նրա օրհնութիւնը մեր ղլխին,
Աստուած պահէ կեանքն իւր անգին.
Գնանք խրամը, խրամը:
Հող ու մոխրում թաւալ գլոր,
Միտք ու ուշքերս եղաւ մոլոր,
Եամա՛ն, հա՛յր սուրբ, ղուրբան քեզի,
Մեր ընտանեաց հոգսը քաշի՛.
Գնանք խրամը, խրամը:
Մոսկովցի եկաւ շարան շարան,
Ս.՛Յ օխտնանուն (Սուրբ Կարապետ), քեզի ղուրբան,
Խնամք արա Հայոց վերան,
Էլ չըմնաց մեր վերայ ջան.
Գնանք խրամը, խրամը:

Գ.

Այդ չարաչար աշխատանքը չորս ամիս շարունակուեց և Հայ ժողովուրդը ամեն տեսակ նիւթական և բարոյական զոհականներին համբերատար լռութեամբ և անձնուէր երկայնամտութեամբ համբերեց ու տարաւ, իւր սրտի խորքերից լուռ ու մունջ օգնութիւն

և խնամք հայցելով և աղերսելով իւր և իւր դեղաստանի համար երբեմն Աստուծուց, երբեմն «մեծաւորից», երբեմն «եօթնանուն» Սուրբ Կարապետից և երբեմն Ռուսի զօրքերից, որի Էրզուրումի մօտ գալը այնքան յետացաւ:

Կարապետ արքեպիսկոպոսի ժողովրդին մատակարարած նիւթական ձեռնտուութիւնները այդ չորս ամսուայ միջոցում զրկեցին եկեղեցական զանձարանն ու հացի ամբարները և իւղի ու պանրի բղուղները: Նա զարմանալի առատաձեռնութեամբ հազարաւոր մարդկանց ամենայն երեկոյ հաւաքում էր իւր մօտ և փող էր ընծայում, և նոցա ընտանեաց ցորեն ու ալիւր և իւղ ու պանիր էր ուղարկում, միևնոյն ժամանակ աշխատանքի միջոցին զանազան աղդու և մխիթարիչ յորդորներով նոցա ոգին բռնում, պահպանում էր:

Տեսնելով հայ ժողովրդի այդ աստիճան անձնանուէր ու ձրի ծառայութիւնը և նոցա առաջնորդի գործունէութիւնը, խոջաներն ու վէզիրներն սկսեցին համակրել հայերին, և ինչպէս առաջ, սկսան պատկառիլ Կարապետ արքեպիսկոպոսից: Մի օր, երբ ահագին խրամները լրանում էին, Ղէլիբ փաշան դարձաւ դէպի Կարապետ արքեպիսկոպոսը և նորանից շնորհակալ լինելուց յետոյ՝ գոռոզամտութեամբ ասաց. «Թող այժմ փորձէ Ռուսը մօտ գալ այս խրամներին և կրտեսնի, թէ ուր կրհասնի իւր վիճակը»: Կարապետ արքեպիսկոպոսը, որ աւելի քան մի որ և իցէ փաշայ լաւ գիտէր Օսմանեան տէրութեան քաղաքական թոյլ կողմերը, դարձաւ դէպի փաշան և ասաց. ներեցէք, փաշա, եթէ Ռուսը հասնի մինչև այս խրամները, սոցանից այն կողմն անցնելը նորա համար դժուար չի լինիլ:

Այս ճշմարիտ և մարդարէական խօսքը, բղխած մի «դէվլիւր ղարաբաշի» բերանից, կասկած ծնեցրուց Ղէլիբ փաշայի սրտում դէպի Կարապետ արքեպիսկոպոսը, որ այդ պատճառով բաւականին վշտեր կրեց յետոյ, բայց իվերջոյ Ղէլիբ փաշայի ցոյց տուած չարութիւնքը լաւութեամբ փոխադարձրեց, փրկելով նորա կեանքը, ինչպէս յետոյ կտեսնի ընթերցողը:

Խրամները վերջանալուց մի փոքր ժամանակ յետոյ, երբ Ռուսները տիրելով Ախալցխային, Գիւմրիին և նոցա շրջականերին, առնելով Կարսը, մօտենում էին Էրզուրումին, Ս. Էջմիածնից Եփրեմ Կաթողիկոսի կողմից գալիս է յանուն «Առաջնորդի Հայոց Կարնոյ» մի կոնդակ, որի մէջ ընդհանուր Հայոց Կաթողիկոսը պատուիրում

էր Կարապետ արքեպիսկոպոսին՝ հրաւիրել իւր ժողովուրդը, օգնել Ռուսաց, իբրև քրիստոնէից, երբ վերջիններս կրմնտենան Էրզրուրումին։ Այդ թուղթն ընկնում է փաշաների ձեռքը, որոնք դարձեալ ատեան են կանչում նոյն տարաբաղդ եպիսկոպոսին։ Բայց նախ քան ատեան կանչուիլը, Կարապետ արքեպիսկոպոսն արդէն այդ բանն իմանալով, իւր կողմն ունէր զրաւած արքունի թարգմանին, որ տարբեր իմաստով թարգմանեց ատեանի առաջ Եփրեմ Կաթողիկոսի կոնդակը, և թէպէտ այդ ատենում Կարապետ արքեպիսկոպոսն արդարացաւ և կաթողիկոսի կոնդակն իրան տրուեցաւ, բայց ինքը և իւր ժողովուրդը ենթարկուեցան նորանոր տուգանքների և աշխատանքների։ (¹)

(¹) Այդ օրերում Օսմանցիք աւելի խիստ և բարբարոս կերպով սկսան վարուիլ մանաւանդ կաթոլիկների հետ, որոնց բոլոր վարդապետներին բռնելով, մօրուքները գերծեցին և աքսոր քշեցին։ Ոմանք ասումեն այդ բանի պատճառը եղել է Կարապետ արքեպիսկոպոսը, որ իբր թէ կոնդակի տակի «Կաթողիկոս» բառը բացատրել է «կաթոլիկոս» (Հռոմայ պապ), որի կողմից թշնամարար ուղարկուած է եղել այդ գիրը Հայերին և նոցա առաջնորդին ջնասելու համար։ Բայց այդ սխալ է։ Կաթոլիկ վարդապետներին աքսոր քշելու իսկական պատճառն այն է, որ այդ անցքից մի փոքր ժամանակ առաջ, 1827 թուականի վերջերում, կաթոլիկ կղերը արդէն Օսմանցիների տէրութեան առաջ պաշտօնապէս ճանաչուած էր իբրև ազգ-տամբ և վտանգաւոր, և նոյն թուականում դուրս եկած սուլթան Մահմուտի մի ֆէրմանով՝ ինչպէս բոլոր Եւրոպական Տաճկաստանում, նոյնպէս և Անատոլում սկսուեցաւ կաթոլիկ կղերի հալածանքն ու աքսորը։ Այդ հրովարտակի զօրութեամբ՝ Ախալցխայում աւագ հինգշաբթի օրը փակուեցան կաթոլիկաց եկեղեցիները և նոցա բոլոր վարդապետները կալանաւորուելով, ուղարկուեցան Էրզրուրում քննութեան համար, որտեղից վերադառնալուց յետոյ, նոքա Ախալցխայի բերդում բանտարկուեցան մինչև Ախալցխայի առումը (1828) Ռուսներից, և Իւրեանց քահանայական պաշտամունքները կատարում էին զինուորների հսկողութեան ներքոյ։ Այդ վարդապետների մէջն էր մինչև այժմ բոլոր Ախալցխայցիներին յայտնի պատեր-Թոմա նշանաւոր ճեղուիթը, իսկ այն վարդապետները, որոնց մօրուքները վիր առան Էրզրուրումում և աքսոր քշեցին, արդէն բանտից փախածներն և Հայերի տներում ծածուկ պատսպարուողներն էին։ Ռուսի դալը լսելով, Էրզրուրումի փաշան խստութեամբ հետևեց դոցա և կալանաւորեց։ Գուցէ այն Հայերը, որոնք մինչև այդ ժամանակ պահումէին այդ վարդապետներին, այնուհետև, Իւրեանց անձից երկիւղ կրելով, դուրս տուին վարդապետներին, որոնք յետոյ այդ պատճառաւ, գուցէ, բարդեցին Կարապետ արքեպիսկոպոսի վերայ վերոյիշեալ բարուրանքը։

Ճանաչելով Կարապետ արքեպիսկոպոսի մէջ մեծ արժանաւորութիւն և ամենազօրեղ ազդեցութիւն բոլոր վիճակի Հայ ժողովրդի վերայ, փաշան նորան պարտաւորում է երեք օրուայ միջոցում, զօրաց պաշարը Էրզուրումից բանակը կրելու համար, ճարել 200 համեստած ձիանք: Դեռ երեք օրը չը լրացած, ձիանը պատրաստի կանգնած էին փաշայի սարայի առաջ և Կարապետ արքեպիսկոպոսը նախասենեկում սպասում էր փաշայի նորոդ հրամանին:

Տեսնելով այդպիսի մի յաջողութիւն Կարապետ արքեպիսկոպոսի կողմից, փաշան ուրախութեամբ գոչեց. «մաշալլա, զարաբաշ էֆենդի», և Կարապետ արքեպիսկոպոսին իւր մօտ ղահվէի հրաւիրեց: Շատ հասկանալի բան է, որ վերջին ժամանակներում օսմանցի իշխանաւորների ժամանակ առ ժամանակ ցոյց տուած այդ հիւրասիրութիւնը ոչ միայն հաճելի չէին Կարապետ արքեպիսկոպոսին, այլ մինչև անգամ երկիւղալի, թէ մի գուցէ նորան թունաւորէին, թէև Օսմանցիների, ինչպէս առհասարակ բոլոր հին բարբարոս ժողովրդեան հասկացողութեան մէջ չըկար այժմեան աւելի վտանգաւոր քաղաքականութիւնը, որով թշնամին մօտենում է քեզ գաղտնի, լռելեայն, շոհելով, փայփայելով և մինչև անգամ պարգևատրելով: Բարբարոս ժողովուրդը մօտենում է իւր հակառակորդին՝ սուրը ձեռքին, յայտնի ու բացարձակ, նախատում և սպանում է յայտնի ու բացարձակ:

Փաշայի պատուէրը՝ 200 ձի ճարելու վերաբերութեամբ, արդէն պարզ ապացոյց է, թէ որքան անզօր էր Օսմանեան տէրութիւնը: Զօրապետները պատերազմական դառն ժամանակում 200 ձի ճարելու համար մի Հայ եպիսկոպոսի էին ապաւինում և վերջնիս ժամկոչների ու զգերների միջոցաւ տուած բանաւոր հրամանները ունելի գործ էին առաջացնում, քան նոցա շրջաբերականները: Օսմանեան Տէրութեան մեղկ և թուլամորթ զինուորները, որոնք պատերազմ էին գնում միմիայն ճանապարհներին պատահած խեղճ ու անտէրունչ գիւղերը աւարի առնել, յափշտակել և իրանց քաղցած փորը կշտացնել, չէին կարող, ի հարկէ, դէմ առ դէմ կանգնել և պատերազմել ռուսական ոգելից զինուորների դէմ:

Այդպէս էլ լինում է: 1828 թուականին Ռուսները տիրելով Ախալցխային, Բոբլիանին, Փոցխովին, Աճղորին, Ասբինջային, Խրթուլին, Ախալքալաքին, Փամբակ ու Շիրակ գաւառներին, առնելով և Կարսը 1829 թուականին, մօտեցան Էրզուրմին: Օսման-

ցիք նոցա զօրաց սուլիններբը տեսնելուց ահաբեկուած, սկսեցին դարձեալ իւրեանց ոյժը հպատակ քրիստոնէից վերայ փորձել։ Նոցա կրօնամոլ մելլաներբը, կատաղի «դարաղէլիներբը», լեռնացի «ղազերբը», սուրերբը ձեռքերն առած, շրջում էին փողոցներում և ամեն պատահող քրիստոնէի խողխողում, սպանում։ Ողորմելի քրիստոնեայք անտէր և անօգնական կոտորվում էին։ Այդ սոսկալի ժամանակի տեսարանի վերայ գաղափար կազմել կամեցողը թող կարդայ «Բարթուղիմեան գիշերները», մեր նպատակը չէ այստեղ վիպասանութիւն գրել, այլ դուրս բերել այդչափ եղեռնագործութեանց ժամանակ մի վատ ազգի ձեռին խաղալիկ եղած, հայկական վեղարին պատիւ բերող մի Հայ եպիսկոպոսի մեծագործութիւնները։

Այդ ընդհանուր արհաւիրքի ժամանակ, հարկ չըկայ ասել, որ ամեն Հայ, մոռացած ամեն բան, մտածում էր միմիայն իւր և իւր դերդաստանի կեանքի ապահովութեան համար, և իւր միակ յոյսն ու ապաւէնը գտնում էր նկուղներում ու գետնափոռներում։

Ինքը Կարապետ արքեպիսկոպոսը հարկադրուած էր՝ ծպտեալ շորերով, քաղցած ու ծարաւ Հայազգի Մանէլօղլեանցի տան դէմ և խոնաւ նկուղում անցցնել երեք օր և երեք դառն գիշեր։ Հէնց այդ նկուղի միջից էր, որ նա մի գիր գրեց կոմս Պասկեվիչին և մաքսատան բեռնակիրներից Ֆերման անունով մի հաւատարիմ կորիճ Հայի տրեխներում հասցրեց կոմսին։ Այդ թղթի մէջ Կարապետ արքեպիսկոպոսը յայտնելով քրիստոնէից վիճակը, մի և նոյն ժամանակ ցոյց էր տալիս կոմսին, թէ ո՛ր ճանապարհով և ո՛ր կողմից պէտք է յարձակուել Երզուրումի վերայ և ո՛ր դիրքի վերայ։

Այդ թուղթը կոմս Պասկեվիչի առջև կարդաց և թարգմանեց Սերովբէ կաթոլիկ վարդապետը, որ Ռուսաց զօրաց հետ էր գնալիս և վերադառնալիս։ Սերովբէն յետոյ ընդունեց լուսաւորչական կրօնը, Էջմիածնում ձեռնադրուեց եպիսկոպոս և նշանակուեցաւ Աստրախանի Հայոց առաջնորդ։ Սա մի գործունեայ, աշխոյժ և եւրոպական կրթութիւն ստացած անձն էր։ Դորա կայքերից, իմ միջի այլոց, Էջմիածնին մնաց նորա ծնիբան գիւղը, մի պատուական կալուածք, Ախալցխայի հիւսիսային կողմում, 20 վերստ հեռաւորութեամբ։

Դ.

Մի քանի օր պաշարելուց յետոյ, Ռուսաց զօրքը յարձակվում է Երզուրումի վերայ և առանց արիւնհեղութեան տիրում է Երզուրումի

գլխաւոր դիրքը — Ս. Նշան լեռը: Օսմանցիք մի քանի թնդանօթներ արձակելուց յետոյ հարկադրվում են անձնատուր լինիլ, գլխիվայր ծռելով իւրեանց դրօշակները, և ուղարկում են կոմս Պասկեւիչին բերդի բանալիները: Կայծակի արագութեամբ հասնում է Օսմանցիների այդ ամօթալի պարտութեան լուրը նկուղներում և գետնափորներում ապաստանարան գտած Հայերի ականջը և նոքա սրտաորով դուրս են ընկնում քաղաքը: Դուրս է գալիս իւր նկուղից և Կարապետ արքեպիսկոպոսը, հագնում է իւր շորերը, ծածկում է վեղարը և ձի աշտանակած (հեծած), Ս. Խաչը ձեռին, Շէքէրճեան Գրիգոր պատուելու ընկերակցութեամբ գիմում է դէպի Ս. Նշան լեռը՝ կոմս Պասկեւիչին դիմաւորելու: Անվեհերութիւն սրտի և անդրդուելի հաւատ և վստահութիւն դէպի քրիստոնէական Ս. Խաչը՝ ահա՛ Կարապետ արքեպիսկոպոսի անսայթաք առաջնորդները Մանէլօղլեանի տանից մինչև Ս. Նշան լեռը — մէկ ժամից աւելի ճանապարհ — գնալը: Անմիտս հասաւ Կարապետ արքեպիսկոպոսը կոմս Պասկեւիչի մօտ, խաչակնքեց կոմսին և նորա զօրքին, օրհնեց և գրկախառնեցաւ նոցա: Բայց մենք թողնենք, ընթերցո՛ղ, այդ գրկախառնութիւնքը և դառնանք Երզուրում:

Երզուրումի և բոլոր վիճակի հայ ժողովուրդը, գլխաւորապէս երիտասարդները, Ռուսների յաղթութեամբ խրախուսուած, և անփորձութեամբ կարծելով, թէ հէնց այդ է որ ազատուեցան բարբարոս Օսմանցուի իշխանութեան լծից, սկսում են տաք գլխութեամբ անկարգութիւններ անել, կամենալով դարերի ընթացքում իւրեանց կրած վշտերի և նախատանաց վրէժը մի քանի օրում լուծել. նոքա բացարձակ կերպով սկսում են վերաւորել Օսմանցիների մինչև անգամ կրօնական զգացմունքները: Ժողովուրդը, որի կեանքը, իրաւունքները, փողը, անձնական և ընտանեկան պատիւը և որ նորա համար գլխաւորն է՝ իւր «լոյս հաւատը» հարիւրաւոր տարիներ շարունակ վիրաւորուած է եղել, նոքա, իբրև կենդանի, խորհուն և զգացող արարածներ, միշտ ոտնակոխ են եղել և միշտ ճնշուած ու հալածուած լռել են ու լռել, ներկայ հանգամանքներում, պէտք է ճշմարիտն ասած, այլ ևս չէին կարող լռել: Երբ մի տէրութիւն, արտաքոյ ամենայն իրաւանց և արդարութեան, ճնշում և ստորացնում է իւր հպատակ որ և է ազգութեան անհատական, ազգային և կրօնական զգացմունքները, նա այդ ազգութեան մէջ ծնեցնում է անսահման ատելութիւն դէպի ինքը — տէ-

բութիւնը, թէև ծածուկ և լռելեայն, բայց և այնպէս նա արծարծում է նորա մէջ զարհուրելի սոսկալի վրէժխնդրութեան ոգի, որ նման է լինում այն կրակի կայծերին, որոնք թաղուած են լինում մոխրի տակ։ Երբ որ և իցէ պատճառով կը շարժես այդ մոխիրը, տակից դուրս կը ցատքին անհամար կայծեր և մեծ հրդեհ կը պատճառեն։

Կարապետ արքեպիսկոպոսը կոմս Պասկևիչէ կշռից վերադառնալիս էլ, յետոյ էլ շատ յորդորներ և քարոզներ կարդաց իւր ժողովրդին՝ վերջ տալ այդ չարութիւններին, անմիտ և վտանգաւոր վարմացը, բայց այդ ամենը ապարդիւն անցաւ։ Այդ միջոցներում գալիս է Կարապետ արքեպիսկոպոսի մօտ խրամների վերակացու Ղէլբը փաշան և ներողութիւն խնդրելով նորանից իւր հասցրած վատութեանց համար, աղերսում է՝ ազատել իւր կեանքը, ասելով. «եթէ 20 տարի առաջ մենք ծանօթացած լինէինք միմեանց հետ, Էրզուրումը այս օրին չէր հասնիլ»։ Անյիշաչար եպիսկոպոսը իւր բարեկամների ձեռքով այդ փաշային փախցնում է կ. Պոլիս։

Երբ ռուսական զօրքը կոմս Պասկևիչի առաջնորդութեամբ մի կողմից յաղթութիւն էր անում փոքր Ասիայում, միւս կողմից մի ուրիշ բանակ Տիբիչ Ֆելդմարշալի առաջնորդութեամբ գնում էր կ. Պոլսոյ վերայ, և 1829 թուի Օգոստոսի 20—22-ին այդ բանակի առաջընթաց հեծելազօրը արդէն հասել էին Սիլիվրի, Օսմանեան կայսր՝ սուլթան Մահմուտ՝ տեսնելով այդ մօտալուտ վտանգը, ստիպուեցաւ խոնարհիլ եւրոպական դեսպանների առաջարկութեանը և խնդրել հաշտութիւն. և այդպէսով ահա Սեպտեմբերի 14-ին 1829 թուականի կատարուեցաւ Ադրիանուպօլսոյ դաշնադրութիւնը, որի երկրորդ յօդուածի զօրութեամբ 1828 թ. առնուած տեղերը, այսինքն Ախալցխան, Ասպինձէն, Քօբլէանը, Փոցխովը, Ածղօրը, Խրթվիսը, Ախալքալաքը իւր շրջակայ գիւղերով, Գիւմրին իւր փամբակ և Շիրակ գաւառներովը մնացին Ռուսաց, իսկ 1829 թուի առնուածները, այսինքն Էրզուրումը, Բայբուրդը (Բաբերդ) և Բայազէտը մնացին դարձեալ Օսմանցիներին։

Այդ դաշնադրութիւնը աւելի քան մի որ և իցէ այլ դժբաղդութիւն մեծ հարուած տուաւ առաւելապէս հայ ժողովրդին։ Կ. արքեպիսկոպոսը— այդ բարբարոս Օսմանցիների և նոյն իսկ իւր անխոհեմ և անհեռատես ժողովրդեան ձեռին «կրակն ընկած» պաշտելի անձը, քաջ—գիտէր, որ Ադրիանուպօլսոյ դաշնադրութիւնից յետոյ իւր քրիստոնեայ ժողովուրդը այլ ևս Օսմանցիների ձեռին

թողնելը անհնարին բան էր, որովհետև ուշ թէ շուտ նոքա նիւթապէս և բարոյապէս զոհ պիտի գնային Օսմանցիների վրէժխնդրութեանը. ուստի նախապէս կոմս Պասկևիչի և Բագրատիոն զօրապետի հետ խորհրդակցելով և նոցա միջոցաւ կայսերական հաճութիւն ընդունելով, հրաւէր կարդաց իւր ժողովրդեան՝ ռուսական զօրաց հետ միասին գաղթել Ռուսաստան: (¹)

«Գաղթենք, այո՛», ձայն տուեց միաբերան ժողովուրդը և հարցը վճռուեցաւ: Բայց ինչ որ շուտ է վճռվում լոկ խօսքով, այնպէս շուտ չի վճռվում գործով: Հաղարաւոր անձինք պէտք է թողնէին տուն, տեղ, կահ, կարասիք և գաղթէին. վիճակի բազմաթիւ եկեղեցիների և վանքերի անօթները, զարդերը, սուրբ մասունքները և զգեստները, նոյնպէս և անշարժ կալուածքներն ևս չէր կարելի թողնել. ուստի Կարապետ արքեպիսկոպոսը այդ հանգամանքում ևս մեծ զործունէութեամբ վաճառեց, ինչ որ կարելի էր վաճառել, իսկ մնացեալները հաւաքեց և տաներեք սայլերի վերայ բարձած, բերաւ իւր հետ Ռուսաստան: Բայց իհարկէ շատ բաներ էլ մնացին այնտեղ. «բազում ինչ թողաք անդանօր», նա ինքը ասում է իւր մի թղթում: Այդ անօթների և զարդերի մէջ կային բաւականին հազուագիւտ բաներ, մինչև 1200 տարուայ մի ձեռագիր Աւետարան և այլն, բայց դոցա վերայ մենք կխօսինք իւր տեղում: Մեծապէս օգնեց Կարապետ արքեպիսկոպոսը և ժողովրդեան վաճառել իւրեանց կահ կարասիքը, ստանալ մասամբ իւրեանց առնելիքները. և այսպէսով Էրզուրումից, Բայբուրդից և Բայազիդից

(¹) Թէպէտ Աղրիանուպոլսոյ դաշնադրութեան 7-րդ և 12-րդ յօդուածների զօրութեամբ Օսմանեան տէրութեան այդ գաւառների քրիստոնեաների վիճակը և հաւասը ապահոված էր, և թէպէտ մահտեսի Գէորգ աղա Բայբուրդցի հարուտ վաճառականը մի քանի երևելի անձանց հետ այդ միջոցում Կ. Պոլիս գնալով, սուլթան Մահմուդից հրովարտակ էր բերել յատկապէս Հայերի համար, բայց այդ յօդուածների և հրովարտակների ոչքան ոյժ և նշանակութիւն ունենալը չատ լաւ հասկացած էր Կարապետ արքեպիսկոպոսը, ուստի և չուզեց ինքն իրան և ժողովրդին խաբուսիկ յոյսերով խաբել: Օսմանցիներին երբէք ձեռնտու չէր, որ հպատակ քրիստոնեաները գաղթէին իրանց երկրից, ո՞չ ապաքէն երկիրը աւերակ կը դառնար, ինչպէս և եղաւ էլ. որովհետև բացի 95000 հոգի հայերից, Օսմանեան զանազան գաւառներից գաղթեցին դէպի Ռուսաստան նաև 10700 Յոյներ և 6000 Բուլղարներ:

իւր շուրջը հաւաքուած 90,000 հոգի (²) այր, կին երիտասարդ, ծեր, տղայ և աղջիկ, որոնց հետ յետոյ միացան 5000 հոգի էլ Կարսից, զլուխ կանգնած Կարապետ արքեպիսկոպոսը, 1830 թուականի մայիսի 10-ին, թողեց Օսմանեան երկիրը, ուր քսան և երկու երկար տարիներ առաջնորդութիւն էր արել բազմաթիւ Հայ ժողովրդեան վերայ և այն, ինչպէս տեսանք, այնքան դառնութեամբ և չարչարանքներով, մանաւանդ վերջին ժամանակներում: Եւ այդ իւր բազմամեայ և զործունեայ ծառայութեանց համար նա ստացել է Ս. Էջմիածնի Եփրեմ կաթուղիկոսից և Կ. Պոլսոյ ու Ս. Երուսաղէմի պատրիարքներից «զբազմաթիւ կոնդակս», որոնց մէջ մեծ շնորհակալութիւններ է յայտնուած Կարապետ արքեպիսկոպոսին այն նուիրատուութեանց համար, որ նա հաւաքել է յօգուտ նոյն վանքերի և սովատանջ հայերի զանազան ժամանակներում և զանազան դէպքերում:

Ե.

Շատ և շատ նեղութիւններ կրելով ճանապարհին, ամբողջ շաբաթներով և ամիսներով Արփաչայ և Կարս գետերի եզերքներին զանազան ձորերում և հովիտներում մնալուց յետոյ, այդ ահագին բազմութիւնը եօթն ամսուայ միջոցում հետզհետէ վերջապէս հասաւ Ռուսաստան, ուր մի մասը Ալէքսանդրապոլ (գլխաւորապէս Կարսից դաղթողները) և Նորա գաւառը, մի մասը Ախալքալաք և Նորա շրջակաները (Ջավախէթ,) իսկ մնացեալները 2800 տուն կամ 6—7 հազար հոգի Ախլցխան ընտրեցին իրանց բնակութեան համար: Կարապետ արքեպիսկոպոսը, որ իբրև մի նոր Մովսէս մարգարէ առաջնորդում էր այդ ժողովրդին, մեծամեծ նեղութիւններ կրեց ճանապարհին: Ազատարանք իրանց տներն ու տեղերը, իրանց կահ-կարասիքը Տաճկաստան թողնող Հայ ժողովուրդը երկարատև ճանապարհին տօթի ու շոգի, անձրևի ու ցրտի տակ, անտուն ու անպատսպարան մնալով, սկսաւ յուսահատուիլ. ումանք սկսան յետ դառ-

(²) Այդ դաղթականների թիւը Պ. Պէրպէրեան (Պատմ. Հայոց. եր. 212) դնում է 9900 տուն կամ 45000 հոգի. պ. Օդ. Հաքստհաուզէն (Կոմունկ Հայոց Աշխ. 1862 № 2 փետր. եր. 108 և Արարատ 1873 № 4 ապրիլ եր. 131) 52000 հոգի, պ. Զագուրսկին (Записки Кавказ. Отд. Импер. русс. Геогр. Общ. VIII) 14000 տուն կամ 90,000 հոգի որին համաձայն են մեր Ախալցխայի գաւառական կառավարութեան արխիվի պաշտօնական թղթերից հանած թուանշանները: Այս մասին տես նաև Դաստիարակ 1873 № 3, օգոստոս, եր. 43, պ. Արտաշէս Սուրէնեանցի յօդուածը:

նալ դէպի Էրզուրում, այլք սկսեցին տրանջալ Կարապետ արքեպիսկոպոսից, համարելով նորան պատճառ այդչափ թշուառութեանց, և լաց ու կոծի աղաղակը մինչև երկինք բարձրացաւ: Կարապետ արքեպիսկոպոսի դրութիւնը շատ վատ էր, բայց նա շշկլուող մարդիկներից չէր. նա նման էր քաջ զօրավարի, որ պատերազմի նեղ և ամենադառն ժամանակն անդամ գիտէ գիւտեր անել, այնպիսի ոգևորեցուցիչ խօսքեր ասել, որով թէ զինուորաց բարոյական ոյժը կը բռնէ և թէ յաջողութիւնը կը վաստակէ: Այդպիսի գիւտեր անելու շատ ընդունակ էր Կարապետ արքեպիսկոպոսը: Նա ունէր մի զէնք, մի զօրաւոր զէնք, որի առաջ խոնարհում էին իւր ժողովրդի ամեն գոռոզ մտքերն ու յեղյեղուկ խորհուրդները: Այդ զէնքը Կարապետ արքեպիսկոպոսի ճարտար լեզուն էր: Նորա մի թեթև քարոզը, մի համառօտ ատենաբանութիւնը բաւական էին դէպի ինքը և դէպի իւր նպատակները յեղաշրջել հազարաւոր խստապարանոց և ապստամբ մարդիկ: Ահա թէ ինչով է մեկնվում այն զօրեղ ազդեցութիւնը, որ ունէր Կ. արքեպիսկոպոսը իւր հօտի վերայ:

Ռուսաց տէրութիւնը, ըստ խնդրանաց և միջնորդութեան Կարապետ արքեպիսկոպոսի, իւր կողմից մեծամեծ օգնութիւններ արաւ այդ գաղթականներին: Այսպէս գաղթականութեան ժամանակ նա տալիս էր նորանց հաց, աղուր, սայլեր և ճանապարհի ապահովութեան և անվտանգաւորութեան համար պահապաններ. իսկ գաղթելուց յետոյ կայսերական հրովարտակով, յշ-ն ապրիլի 1831 ամի, գաղթական ժողովրդեան (Ախալցխացիներին) ընծայուեցաւ 380,000 ռուբլի արծաթ դրամ և 150,000 ռուբլի դրամ փոխարինաբար, որպիսի գումարները մասնատրելու համար նշանակուեցաւ յանձնաժողով ընդ նախագահութեամբ Կարապետ արքեպիսկոպոսի, որի միջնորդութեամբ դարձեալ տէրութիւնը ձրիաբար բաժանեց նաև ցորեան՝ կերակրուելու և սերմանելու համար, արհեստաւորներին մետաքս, բամբակ, երկաթ և զանազան նիւթեր ու գործիքներ. բնակարաններ շինելու համար հող և փայտեր ու զանազան ատաղձներ: Հէնց այդ ժամանակից սկսուեցաւ շինուիլ Ախալցխայի այժմեան նոր քաղաք կոչուած մասը, փոցխով գետի աջակողմում, որտեղ առաջ բանջարանոց էր: Իսկ մինչև այդ բնակարանների շինուիլը, այդ բաղմութիւնն ստիպուած էր ըստ մեծի մասին վրանների տակ բնակիլ՝ ՋԻՐԻԹ-ՄԷՅԴԱՆ կոչուած դաշտի սարահարթի կողքերում և Բաբադի գառիվայրում:

Համոզուած լինելով, որ տէրութեան կողմից եղած այդ օգնութիւնները ժամանակաւոր էին և ժողովուրդը չէր կարող միշտ յոյսը դրանց վերայ դնել, Կարապետ արքեպիսկոպոսը հնարքներ մտածեց, որ ժողովուրդը իրան ձեռքովը հայթհայթէ իւր հացը: Նա տէրութիւնից խնդրեց յունուարի 19-ին 1832 թուականի և ստացաւ այն արտօնութիւնը, որով գաղթական ժողովրդեան ամենայն տեսակ մաքսի ազատութիւն էր տրվում մինչև եօթը տարի և այդ արտօնութեան պէտք է վերաբերել անշուշտ այն հանգամանքը որ Ախալցխայում սկզբումն այնպէս շուտ ծաղկեցան արհեստներն ու վաճառականութիւնը: Բացի դրանից գաղթականներին տրուեցաւ և արքունական հարկի ազատութիւն, որ չնայելով յետոյ յառաջացած զանազան խոչընդոտներին և դժուարութիւններին, Կարապետ արքեպիսկոպոսը պահպանեց զէթ մինչև իւր մահը (1856 թ.) (¹):

Զբաւականանալով այդ ամեն բանով և իւր հօտի բարօրութեան և բարեկեցութեան գաղափարով միշտ տոգորուած լինելով, Կարապետ արքեպիսկոպոսը դիմում էր շատ անգամ դէպի տէրութիւնը զանազան խնդիրներով (²):

Շատ, խիստ շատ են այդ խնդիրների թիւն ու տեսակը, շատ են նմանապէս և տէրութիւնից ստացուած արտօնութիւններն ու առանձնաշնորհութիւնները, որոնք յետոյ ժամանակի և վատթար անձանց ազդեցութեան տակ կորել, անյայտացել են: Այդ խնդիրների

(¹) Մինչ դեռ Օսմանեան երկրից ահագին բազմութեամբ քրիստոնեաները դիմում էին դէպի Ռուսաստան, նոյն կարգաւ Ախալցխայի փաշալիկի Օսմանցիները ահագին բազմութեամբ դիմելով դէպի Տաճկաստան, ամբողջ քաղաքներ և բազմաթիւ գիւղեր մնում էին աւերակ և ամայի, որոց յետոյ պէտք է ծաղկեցնէր գաղթական ժողովուրդը. այդ պատճառաւ Ռուսաց տէրութիւնը պէտք եղած օգնութիւնը չը խնայեց նորանցից, մանաւանդ քանի կենդանի էր Կարապետ արքեպիսկոպոսը, որին ամեն տեսակ դիջողութիւն լինում էր տէրութեան կողմից, քանի որ նա ողջ էր:

(²) 1837 թուականի հոկտ. 1-ին, երբ հանդուցեալ Նիկողայոս կայսրը Ախալցխայ եկաւ և իջևանելով Կարապետ արքեպիսկոպոսի մօտ, առաջարկեց նորան պարգև, Կարապետ արքեպիսկոպոսը չոքեց Կայսեր առաջ և «գթութիւն ու ողորմութիւն» խնդրեց իւր հօտի համար, ասելով. «Ես իբրև քրիստոնեայ եպիսկոպոս, երկար ժամանակ պահպանեցի քրիստոնէութիւնը Տաճկաստանի մէջ, այժմ այդ քրիստոնեաները յանձնում եմ քրիստոնեայ թագաւորի հայրական խնամոցը»:

կարգումն էին և այս երկուսը՝ ա) Ախալցխայում առանձին ազգային դատարան հիմնել. բ) Ախալցխայի մեծատանց սերնդոց իշխանական տիտղոս շնորհել, որոնք տէրութիւնն ինքը բացասեց Կարապետ արքեպիսկոպոսին:

Կարապետ արքեպիսկոպոսի գլխաւոր նպատակներից մինն էլ այն էր, որ գաղթական ժողովուրդը խառն չըլինի բնակուած ուրիշ ազգութեան հետ. այդ պատճառով նա չը համաձայնեցաւ տէրութեան առաջարկութեանը, որով Ախալցխայի գաղթականների համար տեղ էր նշանակուած Թիֆլիզի այժմեան «Գերմանական կոլոնիա» կոչուած դաշտավայրը և աւելի լաւ համարեց մնալ «աւերակ Ախալցխայում»: Երբ Փոցխով գետի աջակողմը գաղթականներին տրուեցաւ բնակարաններ շինելու և Ախալցխայի բնիկ քրիստոնեաներն ուղեցին նոյնպէս Բաբաղից և «Դարա-մէհլէից» գալ այնտեղ, Կարապետ արքեպիսկոպոսը շատ ընդդիմացաւ և չը թողեց: Այդ հարցը նա շատ յաջող կերպով պաշտպանել է իւր նամակներում, որ առ փոխարքայն Կովկասու բարձր Ռօզէն:

Մենք արդէն տեսանք, թէ ինչ մեծ և զօրեղ ազդեցութիւն ունէր Կարապետ արքեպիսկոպոսը Օսմանեան երկրում իւր ժողովրդեան վերայ. մի և նոյն այդ ազդեցութիւնը նա ունեցաւ և Ռուսաստանում, մանաւանդ այնքան իրաւունքներ և արտօնութիւններ ձեռք ձգելից յետոյ: Ժողովուրդը մեծ և փոքր, այր և կին անխտիր ամեն մի դէպքում սովոր էր էլի դիմել միշտ դէպի իւր «մեծաւորը» և «մեծաւորը» միշտ պատրաստ էր նորան օգնել խրատելով, յորդորելով, սաստելով և յանդիմանելով:

Տէրութեան կողմից նշանակուած այն ժամանակուայ դատաւորները, կառավարիչները Հայ ժողովրդեան աչքում ձևի համար էին կարծես. գաղթական ժողովուրդը նորանց մէջ ոչինչ բանի համար և ոչ մի դէպքում կարօտութիւն չէր զգում, իսկ եթէ նորանք երբեմն միջամտում էին գէթ քաղաքական գործերի մէջ իրանց պաշտօնից հարկադրուած, այն ժամանակ գաղթական ժողովրդեան տրտունջն ու բողոքը երկինք էր բարձրանում: «Չենք ուզել, փոխէ, հեռացուր»: Եւ քանի՞ քանի ոստիկանարանի ծառայողներ, քանի դաւառապետներ այդ կերպով փոխել է տուած Կարապետ արքեպիսկոպոսը: Այդ և այդպիսի հանգամանքները մի քանի ժամանակից յետոյ եղան պատճառ, որ Կարապետ արքեպիսկոպոսը հարկադրուեցաւ հեռացնել իրանից ժողովրդին քաղաքական գոր-

ծերում. բայց տգէտ ժողովուրդն այդ մղումը բոլորովին ուրիշ կերպ մեկնելով, սկսաւ բացարձակ տրանջալ իւր բարերարի դէմ և նորան համարել միակ պատճառ իւր թշուառութեան, ուստի և ամեն տեսակ տգեղ վարմունք գործել նորա դէմ:

1831 թուականից սկսեալ մինչև 1835-ի վերջերը, այսինքն գաղթականութեան առաջին հինգ տարիները, Կարապետ արքեպիս-կոպոսի կեանքը ներկայացնում է մեզ մի լի վշտերով պատկեր նիւ-թական և բարոյական կատարեալ մարտիրոսութեան. նա հինգ եր-կար տարիներ հանգիստ չունէր իւր ժողովրդի անթիւ և անհամար իրաւացի և անիրաւացի, յարմար և անտեղի պահանջներից, բո-ղոքներից, գանգատներից, մինչև անգամ հայհոյութիւններից: Այս-պէս կանայք բաղնիս գնալիս իւրեանց «մէսփափուճները» (ոսնաման-ները) խրվում են ցեխերի մէջ, նորանք յիշում են Էրզրուրումի «ղալտրմները« (սալայատակները) և բողոքում են «մեծաւորին», նո-րան հայհոյում են: Բաղնիսի ջրերը «պաղ» (ցուրտ) են լինում, մե-ղաւորը «մեծաւորն» է: Բաղնիս կամ եկեղեցի գնալիս ռուս աստի-ճանաւորները կամ զինուորները նորանց «երեսները կաշին» (երեսնե-րին մտիկ են տալիս) մեղաւորը «մեծաւորն» է: Մի ռուս զինուոր և մի հայ պատանի կամ երիտասարդ միմեանց հետ կռվում են, ծեծկվում են, «մեծաւորն» է մեղաւոր. մի դաւառապետ, մի ոստի-կանարանապետ փոքր ինչ խիստ է լինում, փողոցների մաքրութեան հոգսն է քաշում, «մեծաւորն» է մեղաւոր. ժողովուրդը պահան-ջում է մեծաւորից «մութլաղ» (անպատճառ) փոխել (ոչ փոխել տալ հա՛) նորան. մինի տունը անձրևից կաթում է, «մեծաւորն» է մեղաւոր. Ախալցխայի օղը ոմանց «վերայ չի գալ» մեծաւորն է մե-ղաւոր. միւսի առևտուրը «լաւ չի բանել», մեծաւորն է մեղաւոր. պաշարեղէնը երբեմն թանգանում է, մեծաւորն է մեղաւոր: Այս բա-ները որքան որ մի կողմից կարող են ապացոյց համարուիլ գաղթա-կան ժողովրդեան միամտութեանը և տգիտութեանը, միւս կողմից էս լաւ ապացոյցներ են, թէ ժողովուրդը որքան վստահութիւն ունէր Կարապետ արքեպիսկոպոսի վերայ, և մի կողմից կարծես իրաւամբ-պահանջում էր նորանից, որ առջևն առնէ այն խստութեանց, որ բանեցնում էր իշխանութիւնը Էրզրուրում յետ փաղչողների դէմ, որոց և կօգակներով յետ էր դարձնում ճանապարհից:

Այս և այսպիսի հաղարաւոր բողոքներն ու տրտունջները հետ-զհետէ բազմանալով և սաստկանալով, պատրաստեցին այն ապստամ-

բութիւնը և մոլի վրէժխնդրութիւնը, որ ուզեց թափել գաղ-թական ժողովուրդը, գլխաւորապէս ստորին դասակարգը, իւր բա-րերարի գլխին, և 1834 ամի սեպտեմբերի 23-ին սուր ու դանակ, կացին ու փետատ ձեռքերին՝ արք և կանայք խուռն բազմութեամբ, խնուսցի Մկրտիչ հազարապետի առաջնորդութեամբ՝ մոլեգնաբար յարձակուեցան դէպի Բաբաղը՝ «մեծաւորին խուցը»՝ նորան սրախող-խող անելու։

Հեռուից տեսնելով, որ այդ խառնիճաղանճ բազմութիւնը շտապում է դէպի իւր բնակարանը, անվրդով և վեհանձն Կ. արք-եպիսկոպոսն ապաստաւորների միջոցաւ տան դռներն ու պատուհան-ներն ամրացնելով և բերդից իւրեան օգնութեան եկած զինուորների ձեռամբ, առանց արիւնհեղութեան, ժողովրդեան ձեռքից զէնքերը և սուր գործիքները հաւաքելով, ժողովեց նորանց Դաշղանի եկե-ղեցին և աղեծուփ ու մրրկեալ հոգւով ու սրտով խօսեցաւ այն նշանաւոր քարոզը, որի ամեն մի տողից կաթում է ցասումն ու կարեկցութիւն, և որ ապացուցանում է կեանքի և բարօրութեան մասին նորա ունեցած ճիշտ հայեացքները։ «Մի՛ յուսայք ի մար-դիկ և ի զօրութիւնս նոցին, այլ յուսացէ՛ք յԱստուած և յողոր-մութիւն նորա», բեմից որոտաց Կարապետ արքեպիսկոպոսը, այդ նշանաւոր խօսքերը իւր քարոզին բնաբան առնելով։

Մանրամասնաբար նկարագրելով ժողովրդականաց արած չարու-թիւններն ու անկարգութիւններն էրզուրումում, յիշեցնելով իւր կրած երեսնամեայ վշտերն ու տառապանքները, ակներև կացու-ցանելով նորանց իւր մշտական պատրաստականութիւնը՝ ամեն մի կարելի եղած դէպքում օգնել նորանց, Կարապետ արքեպիսկո-պոսը արտասուալից աչքերով կշտամբեց այդ անմիտներին, հասկա-ցնելով նորանց, որ մի մարդու, մի «մեծաւորի» ուժից և կամեցողու-թիւնից բարձր է նորանց ամենքին իւրեանց սրտի ուզածին համե-մատ բաւականութիւն տալ. թէ նորանք «ամենաթշուառ արա-բածներ և քան զմրջիւնս անպէտք» կը լինին աշխարհի երեսին, եթէ փոխանակ իւրեանց ձեռքերն ու խելքերն աշխատեցնելու և նորանց վերայ յուսալու, ամենայն ժամանակ իւրեանց յոյսը դնելու են մի «մեծաւորի» վերայ։ «Մի՛ յուսայք ի մարդիկ և ի զօրութիւնս նո-ցին, այլ յուսացէ՛ք յԱստուած և յողորմութիւն նորա ..... Անմի՛տք, ո՞չ ապաքէն երկնից պատգամն ասէ. «Քրտամբք երեսաց քոց կերիցես զհաց քո»։

Այս սրտառուչ և կրակոտ քարոզն էր ահա, որ Կարապետ արքեպիսկոպոսը սանձեց զայրացած ժողովրդի կատաղութիւնը, որոնք ափ ի բերան չոքեցան նորա դիմաց և ներողութիւն խնդրելով, ակնկոր յետ դարձան իւրեանց տները, պատկառելի ծերունու աչքերից թափուած արտասուքները տանելով իւրեանց հետ ի խայթ և ի կշտամբումն սրտի և խղճի:

Վերջապէս 1835 թուականի վերջերում, երբ արդէն գաղթական ժողովուրդը հաշտուած և ընտելացած էր իւր նոր հայրենիքի հետ, ունէր իւրեան համար եկեղեցի (¹), պատրաստի տուն և բնակարան և չափաւոր ապրուստի եղանակ, Կարապետ արքեպիսկոպոսը, միշտ հաստատուն իւր գլխաւոր և էական նշանաբանին, այնուհետև մտածեց իւր ժողովրդի զաւակաց կրթութեան և դաստիարակութեան մասին, բայց գիտենալով որ այդ բարձր նպատակը չի կարող իրագործուիլ և յարատև լինիլ առանց հաստատուն եկամտի, մի և նոյն ժամանակ չը կամենալով յետաձգել ուսման գործը, նախ և առաջ տաճկական մի մզկիթ (որ յետոյ կերպարանափոխեց և շինեց եկեղեցի «Ս. Լուսաւորիչ» անունով) յարմարեցնելով ուսումնարանի, Կարապետ արքեպիսկոպոսը այնտեղ հաւաքեց ազգային մանկտին և ժամանակաւորապէս այնտեղ էին սովորում ազգային լեզուն և կրօնը, մինչև Կարապետեան ուսումնարանի շինուիլը:

Օգուտ քաղելով ժամանակից և կալուածքների էժանութիւնից, Կարապետ արքեպիսկոպոսն ածապարեց և ինչին դներով հետզհետէ գնեց Ախալցխայի մէջ շատ պարապ տեղեր, խանութներ և

(¹) Ախալցխոյ Ս. Փրկիչ անունով մայր եկեղեցին շինուեցաւ 1835—1837 թուականներում և նորա մէջ զետեղուեցան օսմանեան երկրից բերուած վանքերի և եկեղեցիների անօթները, զարդերը, ս. մասունքները և զգեստները։ Այդ զարդերի և մասունքների վերջին ցուցակից, որ կազմուած է 1875 ամի ապրիլի 28-ին, երևում է, որ այդ ամէն զարդերը, անօթներն ու մասունքները, ընդ ամենը 486 կտոր, որոց մէջ արծաթից չինուած են ա) 116 արծաթեայ խաչեր և սրբոց մասունքներ. բ) 7 սկիհ. գ) 17 սաղաւարդ. դ) 6 բուրվառ. ե) 3 զոյգ քչոյներ. զ) 9 զոյգ մեծ և փոքր աշտանակներ. է) երկու կանթեղներ. ը) 10 գօտի. թ) 7 մանտատուփ և մեռոնատուփ. ժ) 13 վակաս. ժա) 5 դաւազան. ժբ) 62 արծաթապատ աւետարաններ. ժգ) 13 եպիսկոպոսական թագեր, որոնցից երկուսը բաւականին թանգագին. ժդ) Մի կոնք ու փարչ (պատարագչի լուացուելու համար. ժե) 52 հօխայ 203 դրէմ (4 փութ 5 ֆ.) ջարդուած արծաթեղէնք։

տներ (¹), իսկ Ախալցխայից՝ դուրս, նորա փաշալիկում, Կարծախ, Խաւէտ, երկու Տատէշներ, վերանա Կարծախ, Խոզաբին, Կարաւ, Կոնձղա, Զուրչուտս, Կանաթխէվ, Սիւր, Ծիրայ, Կոկաշէն, Պխիսցիխար, Թուտրուլթուբան, Բալաթուբան գիւղերը, աւերակներն ու ադարակները: Այդ կալուածներից Ախալցխայի Ս. Փրկիչ եկեղեցուն մնացին Ախալքալակայ գաւառում Տաճկաստանի Զլոր նահանգին սահմանակից եղածներն՝ Կարծախ, Խաւէտ, Տատէշ-գիւղ, Աւերակ-Տատէշ, Խոզաբին և Կարաւ՝ իւրեանց մէջ գտնուած վարելահողերով, լեռներով, ձորերով, առուներով, մարգագետիններով, արօտներով և դաշտերով, որոնք Կարապետ արքեպիսկոպոսը գնել էր 1834—1840 թուականներում տաճկահպատակ Թայր-բէգ Նազի-բէգ օղլուց 44,000 օսմանեան ղուռուշի (այն ժամանակուայ ընթացիկ գնով 2315 ռուբլի ռուսաց փող) և որոց կուպչան հաստատուած է յետոյ Թիֆլիզի քաղաքական և քրէական դատարանում 31-ն դեկտեմբերի 1852 ամի № 16 (²): Երկրորդ՝ Պխիսցիխար, Տկվարի, Թուտրուլթուբան, Փոդրաթուբան, Բալաթուբան և էլի մի քանի աւերակներ, որոնք, դժբաղդաբար, հոգևոր իշխանութեան սաստիկ թուլութեան պատճառով, Կարապետ արքեպիսկոպոսի մահուանից յետոյ, անցած են մասնաւոր մարդկանց ձեռքը:

Երրորդ՝ Ս. Փրկիչ եկեղեցուն մնացին Գէորգ արքեպիսկոպոս Տէր-Դաւթեանի գնածներն՝ ա) Սուլդա գիւղի երկու բաժինն. բ) Քեօվխաղ, գ) Բէդաշէն, դ) Զատանայ, ե) Պօղալ, զ) Կիլերտայ և է) Քեսիկ-ղայան աւերակները, որոնք Գէորգ եպիսկոպոսը գնել է

(¹) Այդ կալուածներն են, բացի երեք, Ս. Փրկիչ, Ս. Լուսաւորիչ և Ս. Ստեփաննոս, եկեղեցիներից և բացի երկու հոյակապ երկյարկեայ յաջորդարաններից և Կարապետեան ու Եղիսաբէթեան ուսումնարանների ընդարձակ և փառաւոր շինութիւններից, նաև 31 կրպակ, 28 տուն և 925 քառակուսի սաժեն դատարկ դետին: Այդ կալուածքներից նոր յաջորդարանը և Եղեսաբէթեան ուսումնարանը շինեց գերապատիւ Սուքիաս եպիսկոպոս Պարզեանցը, Ախալցխացիների համար միշտ անմոռանալի պատուական անձն:

(²) Այդ կալուածքների կուպչան այժմ կորած է, և չնայելով Ախալցխայի նախկին յաջորդ գեր. Սուքիաս վարդապետի մեծ աշխատութեան և երկարատև դրագրութեանը, չէ գտնուած. բայց կուպչայի գոյութեան մասին վկայուած է Կառավարիչ Ծերակուտի մի վճռագրում, որ կայացած է մարտի 27-ին 1873 ամի № 12,433, այդ գիւղերի և աւերակների համար, արքունի գանձարանի հետ բացուած վէճի առթիւ:

5,500 ղուռուշի կամ 284 ռ. 70 կոպ. Այդ կալուածքը Գէորգ եպիսկոպոսը մօտ 15 տարի առանց մի որ և իցէ վէճի տիրապետում էր առանց կուպչայի, իսկ երբ վերջէրում կամեցաւ կուպչա հաստատել տալ Ս. Փրկիչ եկեղեցու անունով, գեներալ-մայոր Ֆօն-Կլուգէնաու և տեղական իշխանութեան միւս պաշտօնավարք զանազան անվայել միջոցներով կամեցան խլել եկեղեցու ձեռքից այդ կալուածքը և նորան յարքունիս գրաւել, բայց Կարապետ արքեպիսկոպոսը չը թողեց այդ բանը, բողոքելով փոխարքային նոցա ապօրինի վարմաց դէմ:

Կարապետ արքեպիսկոպոսի գնած վերոյիշեալ կալուածքներից, այսինքն՝ Կոնճղա, Կանաթխեվ, Սիւր, Ծիրայ, Կօկաշէն գիւղերն և Զուրչուտս ագարակն ինքը Կարապետ արքեպիսկոպոսը ընծայագրերով նուիրել է իւր ազգականներին, Յովհաննէս, Մանուկ, Վարդան և Յակոբ Բագրատունեանցներին, որոց անունով յետոյ հաստատուած են և կուպչաները:

Զ.

Շատ մարդիկ մինչև այսօր Կարապետ արքեպիսկոպոսին բամբասում են երկու բանի համար. ա.) որ նա իւր գնած կալուածքներից վերոյիշեալ մի քանի գիւղերն ու մի ագարակը տուել է իւր ազգականներին. բ.) թէ Ս. Փրկիչ եկեղեցուն թողած գիւղերը և աւերակները չէր ընծայիլ եկեղեցուն, եթէ տէրութեան օրէնքը թոյլ տար իւր անունով կուպչա շինել: Այդ գիւղերի և աւերակների մասին, յիրաւի, ինքը Կարապետ արքեպիսկոպոսը իւր կտակումը այսպէս է գրում. «Գիւղօրայքն իմ Կարծախ, երկու Ցատէշներ, Խաւէտ, Խոզաբին, Կարաւ և վերանա-Կարծախ և ընդ սոցին եղեալ լերինք և խոտնոցք սանջախին Զլարոյ, որ անկանի ի կողմն Ռուսաց, զորս 1834 ամի գնեալ եմ ի սեպհական արդեանց իմոց, միայն ընդհանուր կանոնաց տէրութեան, որով չը հրամայի կուսակրօն հոգևորականաց հաստատել զկուպչայս յանուն իւրեանց, ըստ բարձրագոյն բարեհաճութեան հրամայեցաւ ինձ տալ հաստատել զայնս յանուն միոյ եկեղեցւոյ, որում ես յօժարիցիմ. վասն որոյ ես ետու հաստատել զայն կուպչա յանուն Ս. Փրկիչ եկեղեցւոյ»: Այդ երկու կարծիքների սխալականութիւնը ցոյց տալու համար մենք ստիպուած ենք մի քանի խորհրդածութիւններ անել մեր կողմից:

Մենք արդէն տեսանք, թէ Կարապետ արքեպիսկոպոսը ի՞նչ եղանակով է փող վաստակում: Նախ՝ նա լինելով մի ընդարձակ վիճակի

հոգևոր առաջնորդ, ունէր, ի հարկէ, եթէ ոչ իւր սահմանեալ ռոճիկը, գէթ առատ նուիրաբերութիւնք ժողովրդի կողմից: Այդ նուիրաբերութիւնքը Կարապետ արքեպիսկոպոսի արդար սեպհականութիւնն էին, այնպէս, ինչպէս մեր ամեն իս ստացած ռոճիկը, որ և է ծառայութեան համար, մեր սեպհականութիւնն է: Երկրորդ. Կարապետ արքեպիսկոպոսը պարապում էր և անանձնաբծութեամբ և այդ պարապմունքը նորան տալիս էին գլխաւոր օգուտներ: Ուրեմն Կարապետ արքեպիսկոպոսը էր մի և նոյն ժամանակ և վաճառական: Երրորդ՝ բոլորովին նման չը լինելով այն քանքարաթագոյց ծառաներին, հին ժամանակի հոգևորականներին և հարուստ աշխարհականներին, որոնք սիրում էին փողը հաւաքել և մնդուկներում դարսելով երբեմն երբեմն նորանց երեսին մտիկ տալ և ուրախանալ, կամ թէ չէ՝ այդ փողերով միմիայն իւրեանց փորերը հասցնել, Կարապետ արքեպիսկոպոսը ընդհակառակը իւր փողերը միշտ տոկոսով տալիս էր այս և այն մարդուն, գլխաւորապէս աղքատ վաճառականներին, այս և այն փաշային, այս և այն առևտրական հարուստ տներին, որով թէ ինքն էր շահվում և թէ ուրիշներին օգնում, շահեցնում: Ուրեմն Կարապետ արքեպիսկոպոսը էր մի և նոյն ժամանակ և սեղանաւոր: Չորրորդ՝ հաւանական է կարծել, որ տէրութեան կողմից գաղթական ժողովրդին տուած վերոյիշեալ մեծաքանակ գումարներից իւրեան ևս բաժին հանեց Կարապետ արքեպիսկոպոսը: Նա ինքը սաստիկ սակաւապէտ և չարքաշ կեանք էր անցցնում, ինչպէս վերջերում կըտեսնենք, և իւր ձեռքը հասած յետին ղուռուշն անգամ շահեցնում և բաղմացնում էր: Այս եղանակներով ահա ժողոված և դիղած էր Կարապետ արքեպիսկոպոսը իւր ահագին կարողութիւնը: Ո՞վ ինչ կարող էր ասել Կարապետ արքեպիսկոպոսին, եթէ նա իւր անձին և հաճոյից համար վատնէր իւր կարողութիւնը, և միթէ չէ՞ն եղած միւս բարձրաստիճան հոգևորականների մէջ վատնողներ, որոց մասին մենք մի խօսք անգամ չենք ասում. ընդհակառակը Կարապետ արքեպիսկոպոսը չը վատնեց, այլ պահեց և աղէիւ ու բարձր նպատակների վերայ գործադրեց: Երզնուրումի վիճակի վերայ առաջնորդ նշանակուած օրից մինչև իւր մահը, Կարապետ արքեպիսկոպոսը իւրեան կէտ նպատակի համարած էր հիմնել և հաստատուն աղբիւրներով ապահովել եկեղեցի, ուսումնարան, որին նա գաւիթ եկեղեցոյ էր անուանում և աղքատանոց: Այդ երեք վսեմ նպատակներն էլ

նա, ուր և եղել է, զարմանալի անձնանուիրութեամբ և յաջողակութեամբ յառաջէ տարել։ Նորա փողերով և նորա ձեռնտուութեամբ հազարաւոր աղքատ մանկունք կրթուելով՝ այսօր իւրեանց համար մի կտոր հաց ունին, նորա պաշտպանութեամբ և զոհաբերութեամբ յառաջացել և զանազան փառքերի և աստիճանների հասել են այն հարիւրաւոր հայ՝ թէ քաղաքական և թէ զինուորական՝ աստիճանաւորները, որոնք այսօր փայլում են փոքր ի շատէ գաղթական ժողովրդեան մէջ։ Կարապետ արքեպիսկոպոսի այդպիսի որդեգիրներից, քաղաքական և զինուորական աստիճանաւորներից, մինչև այսօր Ախալցխայում և նորա վիճակում կան 56 հոգի, թողնենք հազարաւոր քահանաները, թողնենք Էրզրումի մէջ զանազան բաղդի ու աստիճանի հասցրածները։ Այդպէս և այդքան մարդիկ կերակրելով, բաղդաւորեցնելով և զանազան փառքերի ու աստիճանների հասցնելով, Կարապետ արքեպիսկոպոսը կարո՞ղ էր միթէ բարձիթողի առնել իւր արենակից բազմաթիւ ազգականներին ու նորանց երեսը չըմտիկ տալ։ Եթէ, Ս. Գրոց վկայութեան համեմատ, «արդարն ողորմի և անասնոյ իւրում, և աղիք ամբարշտաց անօրէնք են,» ո՞չ ապաքէն Կարապետ արքեպիսկոպոսի ազգականները նոյնպէս մարդիկ էին, որոնք մշտապէս և միշտ ապրելով նորա հետ ի միասին, նորա ցաւոցը ցաւակից և վշտացը վշտակից էին աւելի, քան նորա ժողովուրդը։ Վերջապէս ի՞նչպէս կարող էր Կարապետ արքեպիսկոպոսը օգնել, սիրել ուրիշներին, եթէ չունենար սէր և գութ նախ դէպի իւր մերձաւորները։ Ով չի սիրում իւր անձը և իւր մերձաւորին, նա չէ կարող սիրել և հեռաւորներին։ Սա մի պարզ և երկնային օրէնք է։

Կարապետ արքեպիսկոպոսը շահելով իւր ազգականներին, չըզլեց իւր ժողովուրդին. ընդհակառակն նա իւր կալուածքների մեծագոյն և ընտիր մասը թողեց ժողովրդեան։ Դատապարտել մի այդպիսի ազնիւ հոգու, թէ ինչո՞ւ համար ամէն բան մեզ չըթողեց, կամ թէ ինչո՞ւ համար ուրիշներին ևս շահեց և ո՞չ միմիայն մեզ, — մի ծաղրելի գործ է։ Մեր կարծիքով շատ բաղդաւորվ՞ կը լինէր Ախալցխայի հասարակութիւնը, եթէ դիտենար խոհեմութեամբ և տնտեսութեամբ պահպանել և իւր օգտին ծառայեցնել այն երկամուտները, որոնք կտակել է Կարապետ արքեպիսկոպոսը հասարակութեան, և չը թողնէր, որ այն ահագին գումարները ի գուր վատնուէին որ և իցէ երիցփոխանի անձնական շահերի համար։

Վերևում յիշեցինք, որ Կարապետ արքեպիսկոպոսի թողած Պսխոցիկար, Տկվարի, Թուտրութուբան և Բալաթուբան և էլի մի քանի ուրիշ աւերակներ և խոտոնոցներ նորա մահուանից յետոյ ընկել են մասնաւոր մարդկանց տիրապետութեան տակ: Թէ այդ կորուստը ինչից է յառաջացել, մենք գրում ենք այստեղ, ցոյց տալու համար, թէ մեր հոգ. տեղական իշխանութիւնը և հասարակութիւնը ո՛ր աստիճանի անփոյթ և անհոգ են դէպի իրանց եկեղեցական օգուտները և թէ հասարակութիւնը սիրում է առհասարակ աղաղակել ուրիշի վերայ, ուրիշներին պարտականութիւն է յիշեցնում, իսկ իւր պարտականութեանց մասին բոլորովին լռում: Այս կալուածքների կէս մասը Ս. Փրկիչ եկեղեցուն, իսկ կէս մասը իւր աղգականներին է տուած եղել Կարապետ արքեպիսկոպոսը ընծայագրերով, որոց մասին յայտարարութեամբ 31-ն օգոստոսի 1853 ամի, յայտնելով փոխարքային, խնդրել է նորա կարգադրութիւնը եկեղեցու և աղգակցաց անուամբը կուպչաներ շինուելու համար: Կարապետ արքեպիսկոպոսի այդ յայտարարութիւնը փոխարքան յանձնում է իւր երկրաչափին, որպէս զի նա գնայ և չափելով՝ սահմանները որոշէ և իրան, փոխարքային, տեղեկութիւն տայ: Երկրաչափը 1857 թուականին մօտենալով այդ կալուածներին, գրութեամբ ի 24-ն յունիսի 1857 ամի № 28, խնդրում է հոգևոր կառավարութիւնից՝ ուղարկել իրան, երկրաչափին, Կարապետ արքեպիսկոպոսի ընծայագրերը, ընդ նմին և ի հոգևոր կուսէ պատգամաւոր նշանակել: Հոգևոր կառավարութիւնը, երկարատև խորհրդածութիւնից յետոյ, հասարակութեան մի քանի նշանաւոր անձանց հետ, գրութեամբ ի 4-ն յունիսի նոյն 1857 ամի № 191, պատասխանում է երկրաչափին, թէ Կարապետ արքեպիսկոպոսի ընծայագրերի իսկականը գտնվում է Քութայիսի նահանգական դատարանումը, իսկ նորա վաւերացեալ պատճէնը «հրամանաւ Կարապետ արքեպիսկոպոսի, եղեալ է Իսպահէստ Սուրբ Փրկիչ եկեղեցւոջ»: Պատգամաւոր էլ նշանակուած է մի պարոն, Մարտիրոս Ցարոյեանց: Այս պարոնը, առանց մի ապացուցական թղթի, ներկայանալով երկրաչափին, նորանից չի ընդունուել. և ահա այդ միջոցին Բագրատունեանք և ուրիշները կարողացել են խլել եկեղեցու կալուածքը: Ահա մի իրողութիւն, որ թէ տգիտութեան և թէ սարսափելի անհոգութեան հետևանք է:

Այս այսպէս: Բայց ինչո՞ւ համար Կարապետ արքեպիսկոպոսը չէր ուզում իւր միւս կալուածքների կուպչան հաստատել եկեղե-

ցու անունով, այլ իւր անունով, չմոռանանք՝ իւր, և ոչ ազգականներին: Եւ յիրաւի, ազգականներին շահելուց և նորանց վիճակը ապահովեցնելուց յետոյ, էլ ինչո՞ւ համար էր դժուարանում կամ չէր ուզում Կարապետ արքեպիսկոպոսը այդ կալուածքները թողնել եկեղեցուն: Ա.հա՛ ինչու համար: Այն ժամանակը երբ Կարապետ արքեպիսկոպոսը ուզում էր իւր գիւղերի կուսչան հաստատել, բուռն զօրութեամբ բորբոքուած էր արդէն այն կռիւը, որ սկսուել էր Ներսէս կաթողիկոսի և Կարապետ արքեպիսկոպոսի մէջ և որ շարունակուեցաւ, թէև վերջին ժամանակներում թոյլ կերպով, մինչև վերջինի մահը: Ներսէս կաթուղիկոսը ամենայն ջանք ի գործ էր դնում Կարապետ արքեպիսկոպոսի բոլոր կարողութիւնը դրաւել: Ի հարկէ, նորան հաճելի չէին կարող լինել Ն. կաթուղիկոսի այդպիսի նպատակներն և նա ոչինչ բանով չէր կարող համաձայնել, որ իւր կարողութիւնն անցնի կաթողիկոսի ձեռքը և գործադրուի այն նպատակների համար, որոց դուցէ չէր համակրում Կարապետ արքեպիսկոպոսը: Չի կարելի մեղադրել նոյնպէս Կարապետ արքեպիսկոպոսին և այն բանում, որ նա չը յարգեց իւր Հայրապետի պատուէրը. որովհետև նորա այդ պատուէրը անիրաւացի էր. նա պահանջում էր Կարապետ արքեպիսկոպոսից նորա արդար իրաւունքը, նորա անձնական սեպհականութիւնը. ընդհակառակն՝ նորա այն պատուէրները, որոնք օրինաւոր էին, Կարապետ արքեպիսկոպոսը միշտ յարգել և ամենայն հնազանդութեամբ կատարել է, չը նայելով որ այն ժամանակուայ շատ բարձրաստիճան անձինք, Կարապետ արքեպիսկոպոսի մերձաւոր բարեկամները, յորդորում էին նորան՝ հակառակել Ներսիսի կարգադրութեանցը: Թէ այդ նշանաւոր կռիւները երկու նշանաւոր, աշխարհածանօթ և զանազան մեծագործութիւններով միմեանց վերայ յաղթանակող (1) անձանց մէջ ե՞րբ սկսուեցաւ, ի՞նչ պատճառով, այդ հանգամանքում ո՞վ էր արդարը և ո՞վ մեղաւոր, մենք կը խօսինք իւր տեղում. առ այժմ այսքան միայն կասենք, որ Կարապետ արքեպիսկոպոսը իրաւունք ունէր կասկածելու

(1) Մենք չենք յանդգնում Կարապետ արքեպիսկոպոսի արժանաւորութիւնքը և մեծագործութիւնքը հաւասարեցնել Ներսէս կաթողիկոսի արժանաւորութեանցը և մեծագործութեանցը. առաջինը նշանաւոր էր իւր մասնաւոր վիճակի համար, իսկ երկրորդը ընդհանուր Հայոց համար. բայց թէ Կարապետ արքեպիսկոպոսը, ընդհանուր առմամբ, նոյնպէս նշանաւոր էր, դորա մասին կասկած չունինք:

Ներսէս կաթողիկոսից, միանգամայն ճանաչած լինելով ընդհանուր Հայոց կաթողիկոսի լիակատար իրաւասութիւնը բոլոր եկեղեցական կալուածոց վերայ, իրաւամբ չէր կարող իւր գիւղերի կուսչան հաստատել Ս. Փրկիչ եկեղեցու անունով:

Վերևում յիշեցինք որ Կարապետ արքեպիսկոպոսը գիւղերի կուսչաներն ուզում էր հաստատել իւր անունով և ոչ ազգականների. ազգականների պարտքից նա արդէն ազատուած էր, ինչ որ նորանց տալու էր, տուած պրծած էր, թողելով այդ գիւղերի երկամուտը իւր անկախ իրաւանց տակ, Կարապետ արքեպիսկոպոսը ուզում էր շահել իւր միւս, սրտին աւելի մօտիկ, ազգականներին. դրա էին Ախալցխայի նորաշէն անշուք եկեղեցին, գաւառի եկեղեցիներն, Ախալցխոյ բաղմաթիւ աղքատ և տնանկ դերդաստանները, Ախալցխոյ Կարապետեան և Ախալքալակայ Ս. Մեսրոպեան հոգևոր ուսումնարանները, որոնք ամենքն էլ պայծառանալու, կառավարուելու և պահպանուելու համար գումար էին պահանջում և մեծաքանակ գումար: Բայց մեռնելուց յետոյ ո՞ւմ կը մնային այդ գիւղերը, գուցէ մեզ հարցնեն: Կը մնար եկեղեցուն, այսինքն գաղթական ժողովրդեանը, ինչպէս որ վերջումն էլ կտակեց Կարապետ արքեպիսկոպոսը: Ուրիշ կերպ չէր կարող լինել, որովհետև անկարելի բան է մտածել, որ Կարապետ արքեպիսկոպոսը իւր եկեղեցիները, ուսումնարանները և աղքատանոցները թողնէր և գիւղերը կտակէր իւր ազգականներին. եթէ նա այդ ուզենար անել, սկզբից կանէր, և ոչ ոք նորա ձեռքից բռնող չէր լինիլ: Վերջապէս, գուցէ Կարապետ արքեպիսկոպոսը յոյս ունէր մի ժամանակ հաշտուիլ Ներսէս կաթուղիկոսի հետ և ապա երկոցունց համաձայնութեամբ որոշել այդ կալուածքների վիճակը: Ահա սոքա են գլխաւոր պատճառները, որոնցից սահպուած՝ Կարապետ արքեպիսկոպոսը չէր ուզում իւր գիւղերի կուսչան շինել տալ եկեղեցու անունով. բայց այս բաւական չէ, կայ էլի սորանից ոչ պակաս զօրաւոր պատճառ:

1836 թուականին Ռուսաց տէրութեան կողմից բարձրագոյն հաստատուած կանոնադրութեան մէջ, որ «վասն կառավարութեան հոգևոր գործոց Հայ - Գրիգորեան դաւանութեան», կայ ի միջի այլոց մի յօդուած, որտեղ ասուած է, թէ «եկեղեցական մայր-գումարները պէտք է շահեցողութեան դրուին արքունական կամ հասարակական բանկներում»: Այս յօդուածը մինչև այսօր շարունակ տարաձայնութիւն-

ներ է ձգել Տաճկաստանի մեր հայ եղբարց մէջ։ Տաճկաստանի հայերի մեծագոյն մասը մինչև այսօր չի կարող կարդալ այդ յօդուածը և չըվրդովուել։ 1860 թուականին այդ խնդրի մասին գրուեցան բազմաթիւ յօդուածներ Կ. Պոլսոյ տեղական ազգային լրագիրներում, հրատարակուեցան զանազան բրոշիւրներ, և երեցփոխանական ժողովը Պատրիարքարանի մէջ պաշտօնապէս քննութեան ենթարկեց այդ հարցը։ Տաճկաստանի հայերը վերոյիշեալ յօդուածը այսպէս են մեկնում. որպէս թէ Ռուսաց տէրութիւնը, սահմանելով որ Հայոց եկեղեցեաց գումարները պահուին տէրութեան բանկաներում, նպատակ ունի խլել այդ գումարները եկեղեցիների ձեռքից, կամ այդ կերպով իբր թէ ռուսական տէրութիւնը կամենում է ջլատել հայ եկեղեցիների զօրութիւնը։ Կարապետ արքեպիսկոպոսը լինելով Տաճկաստանցի հայ և հին մարդ, որպէս մի անձն, որ ամեն օր իւր աչքի առաջ տեսնում էր Օսմանեան տէրութեան խեղճ ու աղքատ դրութիւնը, նորա գռող ու գռփող յատկութիւնը, նոյնպէս հակուած էր դէպի վերոյիշեալ կարծիքը. և ինչպէս ինքը լաւ պահպանել գիտէր եկեղեցական՝ փողերը, կարծում էր, թէ ուրիշներն ևս իւր պէս կըլինին. բայց ամեն կաթողիկոս ներսէս չի լինիլ և ամեն առաջնորդ՝ Կարապետ։

Վերոյիշեալ կալուածքները ձեռք ձգելից և բացուելիք ուսումնարանի և աղքատանոցի հաստատուն եկամուտների աղբիւրները այդ կերպով հոգալից յետոյ, այնուհետև Կարապետ արքեպիսկոպոսը իւր ուշադրութիւնը դարձնում է դէպի գիւղացիները, որոնք մինչև այդ ժամանակ չունէին եկեղեցիներ և նորա կարգադրութեամբ հասարակ մատուռների մէջ էին անում ժամերգութիւնը, և Ախալքալաքայ ու Ծալկայի վիճակում հիմնարկում և հետզհետէ աւարտում է մասամբ իւր կալուածքների փողով և մասամբ ժողովուրդեան տուրքերով վաթսունի չափ եկեղեցիներ, հոգում է նորանց ներքին պայծառութեանց և վայելչութեանց մասին, և երբ այդպէսով գիւղական հասարակութեան հոգեկան մխիթարութեանց և իրեանց ս. կրօնի պաշտելու միջոցները պատրաստում է, այնուհետև հիմնարկում է Ախալքալակ քաղաքի մէջ Ս. Մեսրովպեան ուսումնարանը, ցորենի ամբարանոցը և աղքատանոցը, ապա 1842 թուականին՝ Ախալցխայի Կարապետեան ընդարձակ ուսումնարանը, որ և վերջացնելով 1844-ին, հաւաքում է այնտեղ, բացի հին քաղաքում ժամանակաւորապէս բացուած դպրոցի աշակերտներից, այլ

և 150 ի չափ նոր աշակերտներ, որտեղ, ի Թիւս այլ աւարկա-ների, մտցնում է առաջին անգամ և ռուսաց լեզու։ Մենք տե-սանք, թէ ինչ եռանդ և սէր ունէր Կարապետ արքեպիսկոպոսը դէպի Երզուրումի Կարապետեան Դպրոցը, նոյն սէրը և եռանդը սկզբից մինչև վերջը նա ունեցաւ և դէպի Ախալքալաքայ Ս. Մես-րովպեան, մանաւանդ դէպի Ախալցխոյ Կարապետեան դպրոցը։ Մենք տեսանք թէ նա ի՞նչ միջոցներով զբաւում էր հասարակութիւնը դէպի ուսումնարանը, մի և նոյն միջոցները մինչև իւր մահը գոր-ծադրեց և իրանից յետոյ գործադրելու կտակաւ աւանդեց նա և Ախալցխայումը։

Քանի որ Կարապետ արքեպիսկոպոսը Ախալցխայումն էր, Կա-րապետեան ուսումնարանը գտնվում էր նորա անընդմիջական իշխա-նութեան և վերահսկողութեան տակ, իսկ երբ առաջնորդութեան պաշտօնով նա գնաց Թիֆլիս, շարունակ գրագրութեամբ նա տեղեկութիւններ էր պահանջում իւր ուսումնարանի մասին և անդադար պատուիրում էր հոգևոր կառավարութեան անդամներին՝ «հոգ մեծ կալնուլ ի վերայ ազգային դպրոցին»։ Շատ անգամ նա չը բաւականանալով հոգևոր կառավարութեան անդամների տուած տեղեկութիւններից, ժողովրդեան առաջնակարգ մարդիկներից նոյնպէս տեղեկութիւններ էր հաւաքում և ըստ այնմ, ցետ մանրա-մասն հետազօտութեանց ի զգալի կարօտութիւնս տեղական ազգա-յին հոգևոր ուսումնարանի», հրամայում էր հոգևոր կառավարու-թեան անդամներին, «աւելացուցանել զառարկայս և ուսուցիչս, ուստի և զչոստ (ռոճիկ) ուսուցչաց»։ Այս բանը հաստատում են նո-րա բազմաթիւ յառաջադրութիւնքը առ անդամն հոգևոր կա-ռավարութեան։ Մի անգամ լսելով, որ Կ. Պոլսեցի Կարապետ Թո-րոսեան (որ և Զմշկեան) հայկաբան ուսուցիչը եկել է Ախալցխայ, յառաջադրութեամբն 'ի 11 սեպտ. 1849 ամի, պատուիրում է հո-գևոր կառավարութեան անդամներին՝ «Անշուշտ կարդել զնա (Զմշկ-եանին) ուսուցիչ հայկաբնութեան յազգային դպրոցի, տալով նմա զբնակարան, տնունդ և զերկու հազար հինգ հարիւր ղուռուշ վարձս»։

Կարապետեան ուսումնարանի յառաջադէմ աշակերտներին Կա-րապետ արքեպիսկոպոսը ուղարկում էր գաւառական ուսումնարանը և ինքը հոգում էր այդ աշակերտաց թէ ուսումնական և թէ տնտեսական պիտոյքները մինչև ուսման ընթացքն աւարտելը. այ-

նուհետև զանազան արքունական ծառայութիւնների է տալիս նորանց, միջնորդելով ուր հարկն է, և այդպէսով ահա յառաջացել են այն բազմաթիւ քաղաքական և զինուորական հայ աստիճանաւորները, երզնրումի գաղթական հասարակութիւնից, որոնց մասին մենք արդէն յիշեցինք։

Կարապետ արքեպիսկոպոսի ուսումնասիրութեան մի ուրիշ գեղեցիկ ապացոյց էլ կայ որ յիշատակելու արժանի է։

Յայտնի որ 1846 թուականին Թիֆլիզում առաջին անգամ սկսաւ հրատարակուիլ «Կովկաս» լրագիրը հայկական լեզուաւ։ Թէ այդ բանին որ չափ համակրեց Կարապետ արքեպիսկոպոսը, ցոյց է տալիս նորա, 8-ն փետրվարի 1876 ամի № 16, գրութիւնը առ անդամն Հոգևոր կառավարութեան, յորում, ի միջի այլոց, կան և հետևեալ ազնիւ տողերը. «Ոչ ընդ երկարեալ իմ ի ծանուցանել ձեզ (անդամոց) զօգուտ ընթերցման լրագրոց և պաշտպանութիւն նորին ազգային լուսաւորութեան և լեզուի մերում, ընդ սմին աւաքելով զքանի մի թերթս յայտարարական թղթոց և լրագրոց համար 4 յառաջադրեմ, ծանուցեալ զայսմանէ ուսումնասէր հոգևորականաց և աշխարհականաց, յորդորել զնոսա ստանալ զայնոսիկ լրագիրս և այնու լինիլ առիթ որպէս անխափան շարունակութեան այսր օգտաբեր գործոյ, նոյնպէս և լուսաւորութեան մտաց ամենեցուն։ Ես քաջայոյս եմ թէ հայրական յորդոր անդամոց կառավարութեանդ շարժեսցէ զբազումս յայս բարի ձեռնարկ, որ հայի ի բազմադիմի օգուտ ազգային լուսաւորութեան»։

Այսքան և այսչափ հոգսերի մէջ՝ թէ Ախալցխայում և թէ վերջերում Թիֆլիզում՝ Կարապետ արքեպիսկոպոսը երբէք չէր մոռանում իւր սիրելի գաղթական ժողովուրդին, նոցա զանազան քաղաքային, ընտանեկան ցաւերին ցաւակից էր լինում, նորանց նիւթապէս և բարոյապէս օգնում էր անդադար (¹)։ Որ և իցէ մի նոր

(¹) 1838—1839 թուականներում, երբ Կարապետ արքեպիսկոպոսը Թիֆլիզումն էր, Ախալցխայում ճարակուած էր բուռն զօրութեամբ ժանտախտ կոչուած հիւանդութիւնը։ Հարիւրաւոր մարդիկ կոտորվում էին այդ ժանտախտից։ Տէրութիւնը որոշել էր այդ ցաւով մեռածների դիակներն այրել։ Այդ առողջապահական կարգադրութիւնը խիստ ընդդիմութիւն և հակառակութիւն գտաւ գաղթական ժողովրդի կողմից, այնպէս որ տէրութեան այդ կարգադրութիւնը գործադրվում էր զիշերները, գրեթէ ծածուկ։

կարգադրութիւն որ լինում էր տէրութեան կողմից, ինչ. բանի համար էլ որ եղած լինէր, գաղթական ժողովուրդ չէր սիրտ անում գործադրել, առանց նախ և առաջ իւր «մեծաւորին» հետ գրագրութիւններով խորհրդածելու և առանց նորանից հաճութիւն ստանալու։ Այս ապացուցանում են նոյնպէս նորա զանազան գրութիւնները, յորդորական շրջաբերականները, զորս Կարապետ արքեպիսկոպոսը ժամանակ առ ժամանակ ուղղել է երբեմն հոգևոր կառավարութեան անդամներին, երբեմն «երկոտասանից» երևելի անձանց (իշխանաց), գաղթելոց Կարնոյ ի Տայս» և երբեմն բազմաշխատ ուստաբաշեաց և արհեստաւորաց։

Մի օր երբ ցերեկով մի մեռած այրի կնոջ դիակ էին տանում զինուորներով շրջապատած այրելու, ժողովուրդը շատ մեծ ընդդիմութիւն ցոյց տուեց և երկու անգամ դիակն առաւ զինուորների ձեռքից։ Այդ բանը տեսնելով բերդապահ և Ախալցխայի փաշալիկի կառավարիչ դեներալ-մայոր Ֆոն-Կլիւգենաու, մի խումբ ուրիշ զինուորներով անձամբ գնաց այդ անցքի տեղը և ստիպմամբ քաշեց առաւ գաղթական ժողովուրդի ձեռքից դիակը։ Ժողովուրդը դորանով իւր կրօնը իբր անպատուած և բռնաբարուած համարելով, սկսաւ կատաղաբար քարկոծ առնել կառավարչին, որ փախուստ տալով բերդը, հաղիւ մահից ազատուեցաւ։ Բայց այդ անմիտ վարմունքը շատ թանդ նստաւ յետոյ ժողովրդեանը։ Հետևեալ օրը Ախալցխայի իշխանները և փոքր ինչ ձայն ունեցող մարդիկը, թուով 36 հոգի, բերդում կալանաւորուեցան իբրև պատճառ և դրդող ժողովրդեան դէպի այդ ապստամբութիւնը, թէև իսկապէս այդ մարդիկը ոչինչ մեղք չունէին այդ բանում, բայց Ֆոն-Կլիւգենաու լաւ պատճառ գտաւ այդպէսով գոնեա լուծել իւր վրէժը, որ մի քանի ժամանակից յետոյ ունէր դէպի վերոյիշեալ անձինքը։ Հինգ ամիս բանտարկուած մնացին այդ մարդիկը բերդում և այդ ժամանակ ժողովրդեան նորանց ազատելու համար արած զանազան փորձերը աւելի և աւելի ծանրացրին բանտարկելոց վիճակը։ Կարապետ արքեպիսկոպոսի միջնորդութիւններն իզուր էին, և որոշուած էր արդէն ի ձեռն քննութեան, որ այդ ողորմելիքն աքսորուին։ Այդ որոշումը լսելով, Կարապետ արքեպիսկոպոսը Թիֆլիզում մի հացկերոյթ տուաւ Կովկասեան փոխարքայ բարոն Ռոզէնին։ Սեղանի վերայ, փոխարքայի կենացը խմելիս, Կարապետ արքեպիսկոպոսին յաջողեցաւ համոզել նորան, որ այդ տխուր անցքը եղել է լոկ տգիտութեամբ, և ոչ քաղաքական նպատակներով, ինչպէս այդ դուրս էր բերուած քննութեան թերթերում, և թէ որովհետև ինքն է եղել պատճառ ժողովրդեան գաղթելուն, ուստի և նորա գործած յանցանքների համար նա ինքն է պատասխանատու։ Այդ հացկերութից երկու օր յետոյ փոխարքան ինքն անձամբ Ախալցխայ գնաց և բանտարկեալներին ազատելով, քննութիւնից դուրս բերուած որոշումնքը ջնջեց։

1837 թուականի յունուարի 20-ին կարապետ արքեպիսկոպոսը, ըստ ընտրութեան Կարբեցի Յովհաննէս կաթողիկոսի և ըստ հաստատութեան թագաւոր կայսեր, նշանակուեցաւ Վրաստանի և Իմերէթի վիճակին թեմական առաջնորդ և նոյն թուականում նա ինքը բացեց վիճակային կանսիստորիայն, Ախալցխոյ, Գանձակի և Գորուոյ հոգևոր կառավարութիւնները: Յովհաննէս կաթողիկոսը ծանօթ էր արդէն Կարապետ արքեպիսկոպոսի բարեմասնութիւններին, ինքը նրանից էր օծուած կաթողիկոս, մայր Աթոռը արդէն մի քանի անգամ վայելած էր Կարապետ արքեպիսկոպոսի առատ նուիրաբերութիւնքը, հարիւրաւոր և հազարաւոր թումաններ ժամանակ առ ժամանակ նուիրած էր Կարապետ արքեպիսկոպոսը «առ ի թեթևացուցանելոյ զպարտս մօրն մերոյ լուսածնի»: Յովհաննէս կաթողիկոսի ընտրութիւնը յաջողակ էր, այն ժամանակ Կարապետ արքեպիսկոպոսը աւելի մեծ ձայն և համբաւ ունէր, քան միւս շատերը. բայց երանի թէ Կարապետ արքեպիսկոպոսը Ախալցխայում մնար. նա աւելի գործ կարող էր շինել Ախալցխայում, իբրև տեղապահ, քան Թիֆլիզում իբրև առաջնորդ: Բոլորովին անծանօթ օրինաց, անծանօթ և տարօրինակ բնաւորութեան և վարուց ու բարուց տէր ժողովրդեան վերայ նշանակուելով առաջնորդ, շրջապատած լինելով խարդախ և կաշառակուրծ մարդիկներով, կարապետ արքեպիսկոպոսը իւր դէմ շարժեց Ներսէս կաթողիկոսի զայրոյթը. և թող որ իւր առաջնորդութեան ժամանակ չը կարողացաւ մի նշանաւոր գործ կատարել, թող որ Ախալցխայում սկսածներն էլ, մանաւանդ աղքատանոցը, չը կարողացաւ առաջ տանել և ծաղկեցնել ըստ իւր ցանկութեան, այլ նաև իւր բարձր անունը ևս մասամբ նուաստացրեց:

(Շարունակելի)

ՅՈՎԱԿԻՄ ԳԵՂԱՄԵԱՆՑ

ՋԻՈՒԶԷՊՊԷ ՄԱԶՋԻՆԻ [1]

1872 թուի մարտի 10-ին Իտալիան զրկուեցաւ իւր ամենազնիւ և ամենամեծ մարդկանցից մինից, որ իւր հանճարի բարձր յատկութիւնների հետ ունէր և անխոնջ ու գործունեայ բնաւորութիւն և մարդկութեան համար այրուող մի սիրտ, որ հսկայական տոկունութեամբ իւր ամբողջ կեանքը նուիրեց իւր հայրենիքի վերածնութեան, յառաջադիմութեան և ազատութեան սկզբունքներին: Հէնց որ Մաձձինին աչքերը փակեց, ճշմարտութիւնն իրանը պահանջեց. պատմութիւնն ընծայեց նորան այն պատիւը, որ մինչև այժմ նորա հակառակորդները շարունակ կամակորութեամբ մերժում էին: Ո՞վ չի յիշում այն հայհոյանքները, զրպարտութիւնները և սուտերը, որոնք թափվում էին այդ մեծ հանրապետականի վերայ: Նորան նկարագրում էին իբրև մի արիւնածարաւ, խստասիրտ մարդասպան, որի ամեն մի ձեռքում հարիւր դաշոյն կար: Բայց նոքա էս, որոնք նորան դատապարտում էին բանտարկութեան, աքսորանքի և կախաղանի, նոքա ինքեանք լաւ գիտէին, որ այդ մարդը իւր երևելի հանճարի հետ ունէր և մի սիրալեր սիրտ, որ պակաս չէր նորա հանճարից. թէ նա իւր մէջ միաւորում էր բաղմաթիւ և հաղուագիւտ առաքինութիւններ:

Իտալական բոլոր կուսակցութիւնների մամուլը, հաղորդելով նորա մահուան բօթը, համեմատեց նորան Դանտէի, Գալիլէյի, Մաքիավէլլու, Ալֆիէրու, Կոլոմբոսի և Բայրոնի հետ: Իսկապէս Մաձձինուն կարելի է միայն իւր հետ համեմատել. նորա կեանքն ու գործունէութիւնը համարեա թէ մի առասպել պիտի թուի ապագայ սերնդին:

---

[1]) Unsere Zeit. Achter Jahrgang. Zweite Hälfte.

Ջիուզէպպէ Մաձձինին ծնաւ 1805 թուի յունիսի 12-ին Ջենովայում։ Նորա հայրը, որ մի աղնիւ և ազատամիտ մարդ էր, այնտեղ բժիշկ էր։ Նորա մայրը՝ Մարիա Մաձձինին՝ վեհ հոգու և աղնիւ սրտի տէր մի կինարմատ էր և մեծ ազդեցութիւն ունէր իրան քնքշութեամբ սիրող որդու վերայ։ Նկատելու արժանի է, թէ որքան վաղ երևեցան Մաձձինու մէջ այն բարձր ընդունակութիւնները, որոնցով նա գերազանցվում էր միւս մարդկանցից. դորա փառաւոր ապացոյցը տալիս է մի նամակ, որ ռմբաձիգ զօրքի նախկին զնդապետ Ջիուզէպպէ Պատրօնին՝ Մաձձինու տան ազգականներից և սերտ բարեկամներից մինը՝ 1812 թուի օգոստոսի 12-ին գրել է Մաձձինու մօրը նորա այն ժամանակ դեռ եօթը տարեկան մանկան մասին։ Այնտեղ ասուած է. «Այս սիրելի մանուկը, հաւատացնում եմ ձեզ, սիրելի՛ ազգակիցս, առաջին կարգի աստղերից մինն է, որ ամենապայծառ լոյս արձակելով, բարձրանում է, որ մի օր ամբողջ քաղաքակրթուած Եւրոպային հիացնէ. այս պատճառով իւրաքանչիւր մարդ պէտք է պարտականութիւն համարէ ամեն ջանք գործ դնել, որ այն երևելի ձիրքերը, որ բնութիւնը առատօրէն շնորհել է սորան, ամենալաւ կերպով զարգանան սորա մէջ։ Մեծ հանճարները, որոնք անցեալ ժամանակներում պատիւ են բերել իրանց դարին, արդէն իրանց մանկութեան հասակում սովորաբար ցոյց են տուել այն հոգեկան ընդունակութիւնները, որոնք նկատվում են և այս մանկան մէջ. այս պատճառով անհրաժեշտ է, որ դուք ևս ձեր ուժերից բարձր զոհաբերութիւններ անէք սորա կրթութեան համար։ Մի զարմանալի, անսխալ յիշողութիւն, բարձր տաղանդ և անսահման հանճար ուսման մէջ,—ահա՛ այն ակներև ձիրքերը, որոնցով նա գերազանցում է միւսներին։ Եւ որովհետև սա մի և նոյն ժամանակ ունի և բնածին սէր դէպի ուսումն, այս պատճառով թէև հեշտութեամբ կարող է մի առարկայից անցնել դէպի միւսը, բայց այսու ամենայնիւ տեղիք չըկայ կասկածելու, թէ մի՛ գուցէ սա իւր ընդունած գաղափարները խառնէ միմեանց հետ, կամ մի որ և իցէ վնաս կրէ իւր մտքի չափազանց ծանրաբեռնուելուց»։

Մաձձինին ուսանում էր իրաւաբանութիւն Ջենովայի համալսարանում, որտեղ նա ամենասերտ բարեկամութիւն կապեց Ֆեդերիկո Կամպանելլայի հետ, որ նոյնպէս Ջենովացի էր և նորա հետ մի և նոյն առարկան էր ուսանում։ Այդ բարեկամական կապը չը քանդուեցաւ նոցա ամբողջ կեանքում, ըստ որում Կամպանելլան միշտ

նորա ամենագործունեայ, ամենահաւատարիմ և ամենասեռանդոտ մտերիմն ու ընկերը մնաց։

Մի կիւրակէ օր 1821 թուի ապրիլ ամսում՝ երիտասարդ Մաձ-ձինին, ինչպէս ինքը պատմում է իւր յիշողութիւնների մէջ, իւր մօր և ծերունի աղգականի՝ Անդրէա Գամբինիի հետ անցնում էր Ստրադա Նուովա փողոցով։ Այդ օրերում զօրապետների դաւաճանութեան ու թուլութեան և Աւստրիացոց բռնակալութեան շնորհիւ ճնշուել էր Պիէմոնտի ապստամբութիւնը։ Միջոցներից զուրկ և օգնութեան կարօտ ապստամբները խմբերով հետևում էին դէպի Ջենովա, որ ծովով դէպի Սպանիա նաւեն, որտեղ ապստամբութիւնը դեռ ևս յաղթող էր։ Ջենովայի բնակիչները ջերմ կարեկցութիւն էին ցոյց տալիս այդ թշուառներին, մինչև անգամ շատերը առաջարկում էին նոցա առաջնորդներին՝ Սանտարոզային և Անսալդիին, կենտրոնացնել իւրեանց ուժերը այդ քաղաքում, տիրապետել նորան և դիմադրութիւնը շարունակել. բայց որովհետև Ջենովան չունէր պատերազմական պաշտպանութիւն, ամրոցները զուրկ էին թնդանօթներից, այս պատճառով առաջնորդները չը համաձայնեցան, ասելով քաղաքացիներին. «Պահպանեցէք ձեզ աւելի յաջող դէպքի համար»։ Ուրիշ ոչինչ չէր մնում, եթէ ոչ միայն դրամական միջոցներով օգնել այդ խեղճ հայրենասէրներին, որ կատարուեցաւ մեծ առատաձեռնութեամբ։ «Մի լուրջ և ուժեղ կերպարանքով մարդ», պատմում է Մաձձինին, «թխադէմ, սև մորուքով և վառվռուն դէմքով, որ ես երբէք չեմ մոռանալ, յանկարծ քայլեց դէպի մեզ. նա բացեց թաշկինակը երկու ձեռքով և ասաց միայն այս խօսքերը. «Իտալիայից աքսորուածների համար»։ Մայրս և նորա բարեկամը ձգեցին փոքր ինչ դրամ նորա թաշկինակը, և նա հեռացաւ ուրիշներին դիմելու համար։ Ես յետոյ իմացայ, որ նորա անունը Ռինի էր։ Սա գնդապետ էր այն ազգային գնդի, որ կազմուել էր նոյն շարժմունքի սկզբում։ Նա հեռացաւ այն մարդոց հետ, որոնց համար հաւաքել էր դրամը, և ես կարծում եմ, որ նա, ինչպէս և շատերը մերոնցից, մեռաւ Սպանիայի ազատութեան համար պատերազմելով։ Այս առաջին օրն էր, երբ սրտումս առաջին անգամ զարթեցաւ, չեմ կարող ասել հայրենիքի և ազատութեան միտքը, այլ այն միտքը, թէ մարդ կարող է, ուրեմն և պարտական է պատերազմել իւր հայրենիքի ազատութեան համար»։ Ծնողների ռամկապետական դաղափարները, Լիվիոսի և Տակիտոսի գրուածների

ուսումնասիրելը և Ֆրանսիական յեղափոխութեան ժամանակուայ լրագիրներից մի քանիսը, որ նա պատահմամբ գտել էր իւր հօր մօտ, բաւական պատրաստել էին Մաձզինուն այդ վսեմ զգացմունքների համար: Սէրը դէպի իւր տարաբախտ հայրենիքը բորբոքուեց նորա մէջ և դարձաւ մի զօրեղ կրակ: Շուտով դորանից յետոյ սկսեց նա զանազան քաղաքական և գրականական յօդուածներ գրել մահուան քնով օրօրած Իտալիայի հայրենասիրական զգացմունքը կրկին կենդանացնելու:

Աշխատելով գտնել մի միաբանութիւն, որ անհրաժեշտ էր Իտալիայի վերածնութեան գաղափարը իրագործելու համար, նա դարձաւ գաղտնի ընկերութեան անդամ (կարբոնարո) և եռանդով սկսաւ գործել այդ ընկերութեան համար: Ապստամբների գործակալներից մինի մատնութեամբ 1830 թուին նա ընկաւ ոստիկանութեան ձեռքը. նորան դատապարտեցին և ձգեցին Սավոնայի ամրոցը, որտեղ նա բանտի միայնութեան մէջ մի ոտանաւոր շարադրեց իւր դրութեան մասին. և որովհետև թուղթ ու գրիչ չէր տուած նորան, այս պատճառով նա միայն մտքումը պահեց և յետոյ ասում էր իւր բարեկամների առաջը: Ափսոս, որ այդ ոտանաւորը կորած է, բացի քանի մի տողից, որ դեռ ևս յիշում է նորա դասընկեր Կամպանելլան, և որ հետևեալն է:

Come fior trabalzato dal vento
É sparito quel sogno di gloria;
Or ne resta uno steril lamento
Un compianto, una triste memoria.
Ahi! venduti all' infame sbiraglia,
Accusati, dannati in un di,
Della libera morte in battaglia
Fin la speme il crudel ci rapi [1].

---

[1]) Փոթորկի շնչով պոկուած ծաղկի պէս
Փառքի երազը չքացաւ անհետ.
Մնում է միայն անօգուտ զանգատ՝
Կրած վշտերի տխուր յիշատակ:
Աւա՛ղ, մեզ ծախեց անգութ մատնիչը *)
Ոստիկանութեան, որ նոյն իսկ օրը
Դատապարտելով, խլեց մեր յոյսը՝
Պատերազմի մէջ ազատ մեռնելու:

*) Ապստամբների գործակալը Ռամոնդո Դորիան, որ Մաձզինուն և նորա ընկերներին ծախեց ոստիկանութեան:

Այս տողերը պարզ ցոյց են տալիս, որ Մաձձինին պատերազմի դաշտումն ստացած ազատ մահը համարում էր իւր կեանքի կատարելատիպը, մի կատարելատիպ, որ եսականների համար շատ գրաւիչ չի կարող համարուիլ:

Սավոնայի բանտումն էր նոյնպէս, որ Մաձձինին, մտածելով կարբոնարութեան վերայ, հասաւ այն եզրակացութեանը, թէ այդ ընկերութիւնն այլ ևս չէր համապատասխանում ժամանակի պահանջներին, և թէ աւելի լաւ կը լինէր փոխանակ դորան դժուարութեամբ վերականգնելու, մի նոր ընկերութիւն կազմել: Եւ նա կազմեց «Ջիովինէ Իտալիա» (Մանուկ Իտալիա) ընկերութիւնը, որ մի նոր զարկ տուեց Իտալիայի կեանքին և որ շատ արագ ընդարձակուեցաւ:

Բանտարկութիւնից մի քանի ամիս յետոյ Կարլո Ալբերտօի կառավարութիւնը աքսորեց Մաձձինուն: Մաձձինին գնաց Մարսէյլ: Այնտեղ նա՝ Իտալիայի Մարկիզ Պօզան՝ ուղղեց դէպի թագաւորը այն հռչակաւոր նամակը, որի մէջ նա իւր մտքի և սրտի բոլոր ճարտարախօսութեամբ աշխատում էր զարթեցնել նորա մէջ ազգային զգացմունքը: «Թագաւո՛ր, ասում է նա դորա մէջ Կարլո Ալբերտօին, մի՞թէ դուք երբէք մի հայեացք չէք ձգել, մինը այն արծուի հայեացքներից, որոնց առաջը նոր աշխարհ է բացվում, այս Իտալիայի վերայ, որի վերայ գեղեցկութեամբ փայլում է բնութեան ժպիտը, որի գլուխը զարդարուած է քսան դարուայ հարուստ յիշատակների պսակով, որ հանճարների հայրենիքն է, զօրեղ է անսպառ միջոցներով, որին ոչինչ պակաս չէ, բացի միութիւնից, և որ շրջապատած է այնպիսի ամրոցներով, որ մի զօրեղ կամք և մի քանի սրտոտ մարդիկ բաւական են նորան օտարների լծից ազատելու համար: Եւ մի՞թէ դուք չէք ասել ձեր մտքումը, թէ սա ստեղծուած է մի բարձր վիճակի համար: Մի՞թէ դուք երբէք չէք նայել նորա մէջ բնակուող ժողովրդի վերայ, որ փայլուն է, չը նայելով այն ստուերին, որ ստրկութիւնը ձգել է նորա գլխին. որ մեծ է անկախ կեանք ունենալու բնազդմամբ, իւր լուսաւոր մտքով, ուժեղ կրքերով, որոնք դեռ ևս խիստ կոպիտ և անմիտ են, որովհետև ժամանակը դեռ չի թոյլ տալիս միւս կիրքերին երևան գալու, բայց դոքա այն տարերքն են, որոնցից ստեղծվում են ազգութիւնները. դոքա յիրաւի մեծ տարերք են, որովհետև թշուառութիւնը չի կարողացել դորանց սպանել և ազատութեան յոյսը դոցանից խլել: Մի՞թէ ձեր մէջ երբէք չի ծագել այն միտքը, թէ արի այս բաժան բաժան

եղած տարերքների խառնակութիւնից մի աշխարհ կազմեմ. սա ամբողջապէս իմն է և երջանիկ է. դու այնպէս մեծ կը լինիս, ինչպէս Արարիչ Աստուածը. և քսան միլիոն հոգի կը բացագանչէ. երկնքումն Աստուած, իսկ երկրի վերայ՝ Կարլոս Ալբերտոն: Ձերդ մեծութիւն, դուք ունեցել էք այդ գաղափարները: Նոցա համար դուք դարձել էք դաւակից: Մի՛ կարմրէք այդ խօսքից, թագաւոր. աշխարհիս երեսին չը կայ մի աւելի սրբազան ասպարէզ, քան թէ այն դաւակցի ասպարէզը, որ մարդկութեան վերէժինդիր է հանդիսանում, բնութեան յաւիտենական օրէնքների թարգման է դառնում: Ձերդ մեծութիւն, պատերազմեցէք Աւստրիայի դէմ, թողէք Ֆրանսիան, միացրէք Իտալիան մի դաշնակցութեամբ: Դարձէք ազգի առաջնորդ և գրեցէք ձեր դրօշակի վերայ՝ Միութիւն, Ազատութիւն, Անկախութիւն: Հրատարակեցէք մտքի ազատութեան սրբութիւնը: Անուանեցէք ձեզ ժողովրդի իրաւունքների պաշտպան և թարգման, նոր Իտալիայի ստեղծող: Ազատեցէք Իտալիան բարբարոսների ձեռքից: Ստեղծեցէք նորա ապագան: Դրոշմեցէք ամբողջ դարը ձեր անունով: Թող ձեզանից սկսուի մի նոր տարեթիւ: Դարձէք Իտալիայի ազատութեան Եապօլէօն»: Ա.յսպիսի վառ գոյներով այս խնդիրը Ալբերտօին նկարագրելուց յետոյ, վերջացնում է նամակը այն խօսքերով, թէ թագաւորը պէտք է ընտրէ՝ «կամ առաջինը լինիլ մարդկանց մէջ, կամ վերջինը՝ բռնակալներից»:

Բայց Կարլոս Ալբերտօն չունէր և ոչ մինը այն յատկութիւններից, որոնք անհրաժեշտ էին այդպիսի մի մեծ ձեռնարկութիւն գլուխ բերելու համար: Նա ոչ միայն չը դարձաւ մարդկանց մէջ առաջինը, այլ և Սավոյայի արշաւանքից յետոյ, որի մասին շուտով կը խօսինք, կախաղանի դատապարտեց Մաձձինուն նորա դաւակցութեան համար:

Մաձձինին Մարսէյլում իւր գլխաւոր գործունէութիւնը ուղղեց դէպի այն, որ Ջիովինէ Իտալիայի գաղափարը գլուխ բերէ: Ա.յդ ընկերութեան նպատակն էր եղբայրացնել միմեանց հետ այն Իտալացիներին, որոնք յաւաջադիմութիւնը իբրև օրէնք և պարտականութիւն էին ընդունում և որոնք պատրաստ էին կռուել հանրապետութեան ու միութեան, ազատութեան, հաւասարութեան, մարդկայնութեան և անկախութեան համար: Ընկերութիւնը պէտք է հասնէր իւր նպատակին կրթութեամբ և ապստամբութեամբ: Նա գործում էր մամուլի միջնորդութեամբ, ըստ մեծի մասին գաղտնի—

ըստ որում ամեն մի բացարձակ ազատ շարժումն իսկոյն ճնշվում էր, նոյնպէս և դաւակցութիւններ կազմելով: Այդ ժամանակը սկսեց Մաձձինին հրատարակել «La Giovine Italia» լրագիրը, որի մէջ նա նոր գաղափարներ էր զարթեցնում և որին աշխատակից էին Կամպանելլան և միւս բարեկամները: Նոցա ամենքին առաջնորդողը Մաձձինին էր իւր հանճարով և իւր անխոնջ ուժով, գրելով ըստ մեծի մասին ծածուկ, նամակագրութիւններ անելով զանազան անձանց հետ, տպած թերթերը վերաղիտելով, իսկ գիշերները խորհրդակցելով Իտալիայից եկող իւր նոր կուսակիցների կամ Ֆրանսիական հանրապետութեան առաջնորդների հետ:

Նա կազմեց մի նախագիծ Իտալիան ոտքի կանգնեցնելու. ապստամբութիւնը պէտք է սկսէր Ջենովայում և այնտեղ ունենար իւր հիմքը. Գարիբալդին ևս գործակից էր այդ բանին: Ջենովայի գաղտնի մանաժողովը բաղկացած էր Կամպանելլայից, երկու եղբայր Եակօպօներից և Ջիովանի Ռուֆֆինիից: Դաւը մեծ ընդարձակութիւն էր ստացել և կուսակիցներ ունէր մինչև անգամ զօրքի մէջ, բայց հենց այդ պատճառով նա չը յաջողեցաւ, ըստ որում երկու զինուոր հարբած ժամանակ վէճ բաց արին միմեանց հետ և իւրեանց անզգոյշ խօսքերով մատնեցին բոլոր նախագիծը և կառավարութեան աչքերը բաց արին:

Երբ Մաձձինին տեսաւ, թէ ձեռնարկութիւնը չը յաջողեցաւ, շտապեց 1833 թուին դէպի ծրնէվ, Սավօիայի ապստամբութեան պատրաստութիւնը տեսնելու համար: Այստեղ ևս նորան օժանդակից էին Կամպանելլան և երկու եղբայր Ռուֆֆինիները: Այս ձեռնարկութիւնը ևս չը յաջողեցաւ և դորա գլխաւոր յանցանքն ընկնում է Լեհացի գեներալ Ռամորինօի վերայ, որին Մաձձինին յանձնել էր զօրքի հրամանատարութիւնը, իբրև պատերազմի գործին հմուտ մարդու, և նորա դունդը կազմակերպելու համար 40,000 ֆրանկ փող էր տուել: Ռամորինօն երբէք չը կարողացաւ մաքրել իրան այն ծանր կասկածից, թէ նա խօսք էր կապել Լուի Ֆիլիպպի հետ, որ այդ արշաւանքը ոչինչ հետևանք չը պիտի ունենար: Նա այնպէս վատ տարաւ գործը, որ նորա մարդիկը ոչինչ չէին գտնում ուտելու և գիշերները ստիպուած էին Մօնբլանի ստորոտում, առանց ծղնոտի, ձիւնի վերայ քնել: Պատերազմի օրը երևեցաւ, որ Ռամորինօի խոստացած կուռող ուժերի համարեա երեք քառորդը պակաս էր: Մաձձինին յետոյ իւր անկեղծ պարզութեամբ և այն ճշմարտախօսութեամբ, որ նորա թշնամիներն անգամ չէին կարողանում ուրանալ, նկարագրեց այն սրտաշարժ վայրկեանը, երբ խաբէութիւնը յայտնուեցաւ:

«Ես չափազանց շատ էի պահանջել իմ ֆիզիքական ուժից»; պատմում է նա: «Ամենից աշխատանքը, որ ես ամբողջ ամիսներ պէտք է կրէի, սպառեց դորան: Ամբողջ վերջին շաբաթը ես անկողին չէի մտել, և քնում էի միայն մի քառորդ կամ կէս ժամ, կրթնելով աթոռիս վերայ: Անհանգստութիւնը, անվստահութիւնը, դաւաճանութեան նախազգացմունքը, անակնկալ խաբէութիւնները, անհրաժեշտութիւնը՝ ուրիշներին ոգևորել այն վստահութեան ժպիտով, որ ես ինքս չէի զգում, յոգնեցրել էին իմ ընդունակութիւնները և ուժերը: Երբ ես վաշտերի մէջ մտայ, մի այրող ջերմ բռնեց ինձ: Շատ անգամ ես մօտ էի վայր ընկնելու և միայն կողքիցս եկող ընկերներս բռնում էին ինձ: Գիշերը սաստիկ ցուրտ էր և ես անզգուշութեամբ, չը գիտեմ, ո՞րտեղ էի թողել վերարկուս: Ես քայլում էի կիսով չափ երազում, ատամներս միմեանց խփելով: Երբ ես զգացի, թէ մինը — սա բարեսիրտ Ակիպիոն Պիսարուչին էր — մի վերարկու ձգեց ուսերիս, ես այնքան ոյժ չունէի, որ յետ նայէի և շնորհակալութիւն անէի նորան: Ժամանակ առ ժամանակ, նկատելով, որ մենք շեղվում էինք Սան Ջիուլիանօի ուղղութիւնից, ես մեծ դժուարութեամբ հաւաքում էի բոլոր ուժերս, շտապում էի Ռամօրինօի մօտ և նորան աղերսում էի, որ խոստացած ճանապարհով տանի: Նա աշխատում էր ինձ հանգստացնել իւր սատանայական հայեացքով, հաւատացնելով, թէ ամեն րոպէ պէտք է սպասել ծովի կողմից եկող լեհացիներին: Ես յիշում եմ, որ վերջին խօսակցութեան ժամանակ, երբ նա աւելի որոշ կերպով էր ինձ հետ հակաճառում, մի հրացանի ճայթիւն, որ հնչուեցաւ մեր փոքրիկ առաջապահ զօրքի կողմից, ստիպեց ինձ ուրախութեամբ ձեռք առնել հրացանս և խորին զգացմունքով շնորհակալութիւն անել Աստուծուն, որ ի վերջոյ մի վճիռ ուղարկեց մեզ, ինչ տեսակ և լինէր այդ վճիռը: Ես այլ ևս ոչինչ չէի տեսնում: Աչքերս մթնում էին. ես վայր ընկայ. դա ջերմից զրդռուած մի երևակայութեան յափշտակութիւն էր: Այն միջոցին, երբ իմ ուշքս գալիս ու գնում էր, երբ մի վայրկեան յետ էի բերում հասկացողութիւնս և յետոյ իսկոյն ընկղմում էի խաւարի մէջ, լսեցի Ջիուզէպպէ Լամբերտիի ձայնը, որ ինձ ասում էր. «Ի՞նչ ես ընդունել դու»: Նա և բարեկամներիցս մի երկուսը գիտէին, որ ես, վախենալով, թէ մի՛ գուցէ ինձ գերի առնեն և տանջանքով խոստովանութիւն դուրս քաշեն, զօրեղ թոյն էի ման ածում հետս: Միշտ տանջուելով անհաւա-

տարմութեան կասկածներով, որ ծագել էր մի քանիսի մէջ, կամ գոնէ ինձ թվում էր, թէ ծագել էր, ես այնպէս հասկացայ նորա խօսքերը, իբր թէ նա ինձ հարցնում էր, արդեօք ի՞նչ դումար եմ ընդունել թշնամիներից՝ հայրենակիցներիս մատնելու համար: Այդ ինձ կատաղեցրեց, և ես սկսեցի դողացնել: Ամենքը, որոնք մասնակցում էին այդ արշաւանքին և դեռ կենդանի են, գիտեն, որ ես ճշմարիտ եմ ասում: Այն գիշերը ամենասարսափելին էր կեանքիս մէջ: Թող Աստուած ներէ նորանց, որոնք կուսակցական կոյր ատելութիւնից շարժուած, չարամիտ զրպարտութիւնների նիւթ են դարձրել այդ: Հէնց որ Ռամորինօն տեղեկանում է իմ դրութեան մասին, զգում է, որ ամեն դիմադրութիւն արդէն ոչնչացրած է. նա հեծնում է ձին և տալիս է օրական պատուէր, որով ցրվում է զօրքը, յայտնելով, թէ ձեռնարկութիւնը անհնարին է գլուխ բերել և ինքը յետ է կանգնում: Կարլօ Բիանկօն հարկադրում է նորան յառաջ տանել զօրքը, բայց նա յետ է կանգնում, չը կամենալով նոր պատասխանատուութեան տակ ընկնել և մանաւանդ յայտնի տեսնելով զօրքի վհատութիւնը: Գունդը ցրվում է: Երբ ես զարթեցայ, տեսայ որ գտնվում էի մի զօրանոցում, շրջապատած օտար զինուորներով: Կողքիս կանգնած էր իմ բարեկամ Անջելօ Ուզիգլիօն: Ես նորան հարցրի, թէ ո՞ւրտեղ ենք: Նա ինձ պատասխանեց տրտմալից դէմքով. «Զուիցերիայում»: Ջիօվինէ Իտալիայի առաջին շրջանը այսպէս վերջացաւ:

Սակայն Մաձձինին յաղթուելուց երբէք չէր յուսահատվում. նա միշտ նորից աշխատում էր իրագործել իւր նախագծերը, և նորա երիտասարդական թարմ յուսոյ մէջ, որ նա մինչև իւր մահը պահեց, կար մի անսպառելի ոյժ, որ նորա հանճարին կրկնապատիկ զօրութիւն էր տալիս: «Այժմ սկսվում է մարդկութեան շրջանը», գրում է նա: «Մարդկութիւնն է հայրենիքների ընկերութիւնը, մարդկութիւնն է ազգերի միաբանութիւնը, որ նոցանից իւրաքանչիւրը խաղաղութեամբ և սիրով կատարէ իւր կոչումը երկրիս վերայ. մարդկութիւնն է ազատ և հաւասար ազգերի կազմակերպութիւնը, որ առանց արգելքի, միմեանց փոխադարձաբար օգնելով և միմեանց աշխատանքից օգուտ քաղելով, յառաջ տանեն աստուածային մտքի զարգացման այն նախագիծը, որ գրուած է նոցա օրօրոցի, նոցա անցեալի, նոցա ազգային լեզուի և նոցա դէմքի գծագրութեան վերայ: Եւ այդ յառաջադիմութեան, այդ ուխտագնացութեան մէջ, որի

առաջնորդողն նոյն ինքն Աստուած է, ոչ թշնամութիւն կը լինի և ոչ աշխարհակալութիւն. ըստ որում ոչ մասնաւոր մարդ և ոչ մի ազգ չի կամենալ իշխել միւսների վերայ, այլ՝ կը լինի եղբայրացած ազգերի մի ընկերութիւն, միատեսակ նպատակներով և շահերով: Ընդունուած պարտականութեան օրէնքը կը բռնի մի քանիսի այն դաշնական իրաւունքների տեղը, որոնք մինչև այժմ տիրապետում էին ազգերի յարաբերութիւնների մէջ, և որոնք ոչ այլ ինչ են, եթէ ոչ երկիւղից յառաջացած մի զգուշութիւն: Հասարակական իրաւունքի առաջնորդող սկզբունքը կը կայանայ ոչ թէ նորանում, որ մի քանիսը թուլանան, այլ նորանում, որ ամենքի վիճակը լաւանայ ընդհանուր գործակցութեամբ, ամեն մինը յառաջ գնայ յօգուտ միւսի: Այդ է ամենից աւելի հաւանական ապագան և դէպի այդ պէտք է ձգտին այժմ մեր բոլոր ջանքերը»:

Ազգերի այդ փառահեղ միաբանութեան հիմքը Մաձզինին դրեց, կազմելով «Ջիովինէ Եւրօպա» կոչուած ընկերութիւնը..... Նորա զօրեղ ձայնը շատ արձագանքներ էր գտնում: Այնպիսի յօդուածներ, որպիսի են «Յեղափոխական սկզբունքը Եւրոպայում», որ նա շարադրեց 1834 թուին և «Fede e Avenire», որ հետևեց 1835 թուին, շատ ազնիւ և գործունէութեան ծարաւ սրտեր ոգևորեցին և պատրաստեցին ապագայ ապստամբութիւնները:

Մաձզինու այդպիսի գործունէութիւնը անհանգստացնում էր կառավարութիւններին, որոնք այդ անընկճելի հանրապետականի մէջ տեսնում էին իրանց ամենավտանգաւոր թշնամուն և նոցա ազդեցութիւնն էր պատճառը, որ նորան ջուիցէրիայումն անգամ սկսեցին հալածել:

1836 թուին Մաձզինին ուղևորեցաւ դէպի Լօնդօն, որ միակ ապաստանարանն էր նորա համար Եւրոպայում: Այստեղ ապրում էր նա իբրև առաքեալ, իբրև ժողովրդի դասախարակիչ, իբրև հրապարակախօս, միշտ ձգտելով մի և նոյն նպատակին: Սկզբում նա ստիպուած էր Լօնդօնում պատերազմել մեծ կարիքների դէմ: Նորա բոլոր միջոցները սպառուել էին: Նա ստիպուած էր գրաւ դնել իւր սիրելի մօր տուած յիշատակը և մի օր, սովամահ չը լինելու համար, կօշիկները և վերարկուն ծախել: Բայց շուտով իւր գրականական աշխատանքներով նա մի ելք գտաւ այդ դրութիւնից: Նա անգլիական հողի վերայ ևս ճարում է այնպիսի բարեկամներ, որոնք կարողանում են նորա հանճարը և բնաւորութեան վսեմութիւնը

լիովին գնահատել և դորանով թեթևացնել նորա աքսորանքի դառնությունը:

1842 թուին, երբ Մաձձինու կուսակիցները, երկու ազնիւ եղբարք Ատտիլիո և Էմիլիո Բանդիերաները, Կալաբրիայի Կոսէնցա քաղաքում գլխատուեցան, որովհետև, ամեն երկրում ընդունուած մասնաւոր նամակներին վերաբերեալ օրէնքը քանդուելու պատճառով, յայտնուեցաւ ապստամբութեան նախագիծը (¹), այն ժամանակ Մաձձինին գրեց հետևեալը. «Մի գաղափարի համար նահատակուիլը ամենաբարձր վիճակն է, որին կարող է հասնել մարդկային եսը, որ դորանով կատարէ իւր կոչումը: Կոսէնցայում զոհուածները մեզ բոլորիս սովորեցրին, որ մարդ պէտք է իւր համոզմունքների համար ապրի ու մեռնի. նոքա ապացուցին աշխարհին, որ Իտալացիք գիտեն մեռնիլ. նոքա ամբողջ Եւրոպայում հաստատեցին այն գաղափարը՝ թէ Իտալիան պէտք է մի օր վերականգնի միացած: Այն գաղափարը, որի համար այդ մարդիկը այնպէս էին որոնում մահը, ինչպէս երիտասարդը իւր հարսնացուին, ոչ մի քանի յանցաւոր խռովարարների կատաղութիւն է և ոչ մի քանի խաբուած երևակայողների երազ. դա մի նորաբողբոջ կրօն է, դա Նախախնամութեան օրէնք է: Այն հայրենասիրութեան կրակից, որ բարձրանում է նոցա գերեզմանի վերայ, Իտալիայի ոգին՝ վաղ թէ ուշ՝ կը վառէ իւր ջահը, որ երրորդ անգամ Հռոմից — ոչ թէ, ինչպէս ձեզ սովորեցնում են սուտ մարգարէները, այժմեան պապական Հռոմից, որ երբեմն մեծ էր, բայց այժմ բոլորովին ընկել է, — այլ ժողովրդական Հռոմից պայծառ լուսով ցոյց տայ մարդկութեանը յառաջադիմութեան ճանապարհը»:

Նորա մարգարէութիւնը կատարուեցաւ: 1847 և 1848 թուերին Իտալիայում պատահած շարժմունքները բաց արին մարդկութեան համար այդ ճանապարհը: Եւ մենք 1849 թուին տեսնում ենք Մաձձինուն իբրև եռապետ Արմելինու և Աուրելիո Սաֆֆիի հետ հռոմէական հանրապետութեան ճակատում, որի առաջնորդն ու պարագլուխը նա ինքն էր:

Մինչև այդ ժամանակը Մաձձինին միշտ աշխատում էր իւր հայրենիքի ազատութեան համար: 1845 թուին նա կազմեց Բելտ-

---

(¹) Լօնդօնի մինիստր Գրահամը Բանդիերա եղբայրների Մաձձինուն գրած նամակները դատաճանօրէն ձգել էր աւստրիական կառավարութեան ձեռքը:

լինի արշաւանքը, որ անյաջող վերջացաւ և որից յետոյ Նորան Ջուիցերիայումն անգամ կամենում էին կալանաւորել. և նա ազատուեցաւ միայն իւր հաւատարիմ բարեկամ Կամպանելլայի շնորհիւ, որ Նորա տեղ զինքը բռնել տուեց, ըստ որում ոստիկանութեան մարդիկը Նորան Մաձձինու տեղ էին ընդունել: Երբ Փարիզում կատարուեցաւ փետրուարի յեղափոխութիւնը, Մաձձինին գնաց այնտեղ և այնտեղից Միլան, ուր Նորան ցնծութեամբ ընդունեցին: Բայց շատ շուտով այնտեղ գլխաւոր իշխանութիւնն ընկաւ չափաւոր կուսակցութեան ձեռքը, որին խաբեց Կարլո Ալբերտօն: Երբ կաղմուեցաւ Գարիբալդու լեգէօնը, Մաձձինին էս մտաւ Նորա մէջ. գաղափարների և գիտութեան մարդը մի և նոյն ժամանակ ուրիշների պէս մի պարզ և քաջ զինուոր էր: Գունդը միաձայն տուեց Նորան իւր դրօշակը նոյն վերնագրով՝ «Աստուած և Ազգ», որ նա կրում էր իւր հրացանի վերայ, և իւր քաջասրտութեամբն ու տոկունութեամբը նա ամենքին քաջալերում էր՝ տանել բոլոր պատահած նեղութիւններն ու վտանգները:

Մաձձինին մի փորձ փորձեց Պիոս Թ-ին էս, ինչպէս երբեմն Կարլո Ալբերտօին, գրաւել դէպի Իտալիայի միութեան գաղափարը: Նա մի նամակ գրեց Նորան Լօնդօնից 1847 թուին, երբ նոր պապը Իտալիայի բոլոր ժողովրդի համակրութիւնն ստացել էր, և այդ նամակում բացատրեց Նորա կոչումը: «Միացրէք Իտալիան, ասում է այդ նամակում, և ձեզ այլ էս հարկաւոր չի լինիլ Նորա համար գործել, այլ միայն օրհնել նոցա, որոնք ձեզ համար և ձեր անունով կը գործեն: Հաւաքեցէք ձեր չորս կողմը Նորանց, որոնք ազգային կուսակցութեանն են պատկանում: Մի՛ աղաչէք իշխաններին ձեզ հետ միաբանելու: Աշխատեցէք միաբանութիւն կաղմել ամբողջ ազգի հետ: Ասացէք մեզ, թէ Իտալիայի միութիւնը 19-րորդ դարու իրողութիւններից մինը պիտի լինի, և այդ բաւական է. մենք կը գործենք ձեզ համար: Թո՛յլ տուէք, որ ազատ գործէ մեր գրիչը, և ազատ տարածուին մեր գաղափարները ազգային միութեան խնդրի մասին, որ կեանքի և մահու հարց է մեզ համար»:

Պիոս Թ-ը չը հետևեց այդ հրաւէրին, ընդհակառակն, նա անցաւ հակառակորդների կողմը. սակայն Մաձձինու միութեան նախագիծը աւելի կատարեալ կերպով յաղթանակեց, կաղմելով Հռոմէական հանրապետութիւնը:

Այդ կարճատև հանրապետութիւնը այնքան հարուստ է մեծա-

մեծ օրինակներով և խրատներով, որ պատմութեան մէջ միշտ կը մնայ իբրև մի փառաւոր և վսեմ տեսարան: Շատ տարի է անցել դրանից յետոյ, բայց Հռոմայեցիք դեռ յիշում են այն մեծ մարդուն, որ տուեց այն իմաստուն և մարդասիրական օրէնքները, որոնց նմանը Իտալիան այլ ևս չի տեսել այնուհետև: Նա թեթևացրեց հարկերը, մանաւանդ այն հարկերը, որոնք ժողովրդի չքաւոր դասի վերայ էին ծանրանում: Աղի մաքսը նա ցածրացրեց մինչև 5 սանտիմ գրուանքան (այժմ նա 22 սանտիմ է) և խեղճ ընտանիքներին բնակարաններ տուեց տէրութեան պատկանող դատարկ շէնութիւններում: Քաղաքը ռմբակոծելու ժամանակ այն բնակիչներին, որոնք գնտակներից պատսպարուելու տեղ չունէին, նա օթևան էր տալիս փախած կարդինալների տներում: Նա պաշտպանում էր երկրագործութիւնը և կրօնական միաբանութիւնների ու անժառանգ մեռնողների կալուածները բաժանում էր չքաւոր ընտանիքներին: Նորա հինգամեայ կառավարութեան միջոցին ոչ մի մահուան վճիռ չը տրուեցաւ, ոչ ոք չաքսորուեցաւ քաղաքական համոզմունքների պատճառով, ոչ մի առանձին դատարան չը հիմնուեցաւ Հռոմում քաղաքական յանցաքները դատելու համար, ոչ մի լրագրի հրատարակութիւն չընդմիջուեցաւ կառավարութեան հրամանով, ոչ մի օրէնք չը դրուեցաւ մամուլի ազատութիւնը սահմանափակելու համար: Հռոմը ուրախ ու զուարթ էր մինչև պաշարումը: Ազգային գունդը քաղաքի և նորա շրջակայքի բարեկարգութիւնը պահպանելու համար տալիս էր 700 մարդ. բանտերը համարեա դատարկ էին, մանաւանդ նոցա այն բաժինները, որտեղ քաղաքական յանցաւորներն էին բանտարկվում: Երկու-երեք մարդ, որոնց մասին կասկած կար, թէ կապ ունէին Ֆրանսիական բանակի հետ, երկու-երեք կարդինալ, որոնց բռնել էին նոր կառավարութեան դէմ դաւ կազմելիս, և մի փախստական օֆիցեր — սոքա էին միակ քննութեան տակ գտնուած անձինքը, երբ պարոն Ֆօն Կօրցէլլէսը այցելութիւն արաւ բանտերին: Այն մարդիկը, որոնք ամենասաստիկ հակառակորդներն էին հանրապետութեան, ինչպէս Մամիանին և Պանտալէօնին, ազատ շրջում էին Հռոմի փողոցներում: Մաձզինին ուսուցանում էր ժողովրդին, թէ հակառակ մաքերը, եթէ միայն նոքա վտանգաւոր գործերի չեն ձեռք տալիս, պէտք է յարգուին:

Իւր բարձր պաշտօնումն ևս շարունակելով իւր կեանքի պարզ սովորութիւնները, Մաձզինին ճաշում էր ամեն օր, իբրև մի հա-

մեստ քաղաքացի, մենակ, առանց ուղեկիցների, մի փոքրիկ հիւրանոցում, օրական երկու ֆրանկով: Ֆրանսիական դեսպանը՝ պարոն Լեսսէպսը՝ մի դիշեր կամենալով Մաձձինու հետ խօսել, շատ զարմացաւ, երբ հասնելով մինչև Հռոմէական հանրապետութեան առաջնորդի անկողինը, գտաւ միայն բաց դռներ և չը պատահեցաւ ոչ պահապանների, ոչ ծառաների և ոչ առ հասարակ որ և իցէ մարդու:

Ֆրանսիացոց դաւաճանութիւնը վերջ տուեց այդ հանրապետութեանը: Հռոմի ժողովը դատում էր այն մասին, թէ արդեօք իրանց պաշարող Ֆրանսիացիներին պէտք էր ընդունել, թէ՞ պատերազմել նոցա դէմ..... Այն միտքը, թէ պատերազմը պէտք էր շարունակել, մինչև անգամ եթէ մի մարդ և մի զէնք միայն մնացած լինէր, այնքան հաստատ էր Մաձձինու մէջ, որ տեսնելով, թէ անօգուտ էր շարունակել Հռոմի մէջ պաշտպանութիւնը, նա առաջարկեց, որ եռապետութիւնը իւր փոքրիկ զօրքով և զրահաւորուած ամբոխով, որ կամենում էր նոցա հետևել, թողնէ քաղաքը, Արետինոյում պաշար վեր առնէ, և յետոյ Բոլոգնայի և Անկոնայի մէջ տեղը յարձակուի աւստրիական բանակի վերայ, և մի յաղթութեամբ Ռոմանիայի ժողովուրդը ոտքի կանգնեցնէ: Բայց ընդունուեցաւ Կերնուսխիու առաջարկութիւնը, թէ պէտք է դադարին քաղաքը պաշտպանելուց: Մաձձինին տուեց իւր համաձայնութիւնը այդ բանին, ասելով, որ ինքը եռապետ է ընտրուել քաղաքը պահպանելու և ոչ թէ նորան կործանելու համար: Սաֆֆին և Արմելինին հետևեցին նորա օրինակին:

Ֆրանսիացոց ներս գալուց յետոյ Մաձձինին մի շաբաթ ևս բացարձակ մնաց Հռոմում, որտեղ նորա բարեկամները շատ զգուշանում էին նորա կեանքի մասին: Յետոյ նա, առանց անցաթղթի, ուղևորուեց դէպի Չիվիտա-Վէքիա, և այստեղից նաւով դէպի Մարսէյլ: Մենք նորան կրկին գտնում ենք փոփոխաբար Ջուիցէրիայում և գլխաւորապէս Լօնդօնում, երբեմն ևս ծպտեալ կերպով Իտալիայում, որտեղ նա երբեմն մութ դիշերով այցելութիւն էր գնում Ջենովայում իւր մօր գերեզմանին: 1850 թուին նա հիմնեց Լօնդօնում «Կոմիտատո Էուրոպէօ» ընկերութիւնը Կոշութի, Լէդրիի, Ռոլլենի, Ռուդէի և Դարասի հետ, նախապատրաստեց 1853 թուի փետրուարի 3-ի Միլանի յեղափոխութիւնը, որով կամենում էր իտալական ազգի ոյժը վեր քաշել աւստրիական լծի դէմ, բայց յաղթուեցաւ:

Այնուհետև Մաձձինին նախապատրաստեց 1859 թուի անցքերը: Սակայն նա վճռողապէս հակառակ էր Իտալիայի դաշնակցութեանը Նապոլէօնի հետ: 1860 թուին նա օգնեց Գարիբալդուն՝ կազմելու նորա հազարի արշաւանքը դէպի Սիցիլիա, և ոգևորեց նորան հայրենիքի գործը յառաջ տանել Հռոմում: Յետոյ նա մերկացրեց Իտալացոց առաջը այնպէս անուանեալ Սեպտեմբերի դաշնադրութիւնը և Ֆրանսիացոց կայսեր ու Վիկտոր Էմմանուէլի մէջ կապած պայմանը, երբ դոքա դեռ մի անթափանցելի գաղտնիք էին համարվում: Միւս կողմից սխալ է այն կարծիքը, թէ Մաձձինին մասնակից էր Օրսինիի Նապոլէօնի կեանքի դէմ կազմած դաւին: Ընդհակառակն, Օրսինին, որի յիշատակարանների մէջ կան ոչ միայն շատ անարդարութիւններ Մաձձինու դէմ, այլ և առ հասարակ շատ անճշտութիւններ, այնպէս որ մեծ զգուշութեամբ պէտք է օգուտ քաղել պատմութեան համար, կռուել էր մաձձինու հետ և, լինելով չափազանց պատուասէր, ուզում էր սորան ցոյց տալ, թէ ինքը միայնակ ևս ընդունակ է մի համարձակ գործ գլուխ բերել:

1859 և 1860 թուականների անցքերից յետոյ, երբ Իտալիայի միութեան նախագծի մի մասը արդէն գլուխ էր եկել, Մաձձինին, բոլորովին հաւատարիմ մնալով իւր հանրապետական գաղափարներին, մի քանի ժամանակ հանգիստ սպասում էր սոցա իրագործուելուն. բայց երբ պարզ երևեցաւ, որ կառավարութիւնը, փոխանակ ազգային տարրի և իւր սեփական ժողովրդի վերայ կրթնելու, Իտալիան դարձրել էր Ֆրանսիայի կամքից կախուած մի նահանգ, այն ժամանակ Մաձձինին անփոփոխ շարունակեց իւր գործունէութիւնը, բացարձակ յայտնելով առաջուայ կառավարութեանը, թէ ինքը դարձեալ պիտի կռուէ նորա հետ, և բացատրեց դորա պատճառը: 1866 թուի պատերազմից յետոյ շնորհած թողութիւնը Մաձձինին մերժեց, իսկ թէ որքան անկեղծ էր այդ նորա համար, այդ երևեցաւ նորանից, որ 1870 թուին Պալերմոյում նորան բռնեցին: Կարլօ Ալբերտօն դատապարտել էր կախաղանի, իսկ Վիկտոր Էմմանուէլը շատ ամիսներ պահեց նորան Գայէտայի բանտում: (Նապոլէօնը ևս մահուան դատապարտեց Մաձձինուն Տիբալդիի դաւի համար, որի մէջ նորան ևս մասնակից էին ուզում ցոյց տալ): Բայց Իտալիայում չէին համարձակվում նորա դէմ դատ բաց անել. այս պատճառով նորան ազատեցին, վախենալով ժողովրդի ձայնից, որ այն ժամանակը շատ զրգռուած էր: Սակայն նորա

բանտարկութիւնը մի մեծ դժբախտութիւն էր իտալական ռամկապետական կուսակցութեան համար, որովհետև, մինչ նորա ձայնը չէր հասնում իւր կուսակիցների ականջին, Գարիբալդին, կոյր ոգևորութեամբ, կուրացած հանրապետութեան լոկ անունով, կռուի ծարաւ երիտասարդութեան մի մասը գրաւեց դէպի մի անյաջող պատերազմ՝ Ֆրանսիացոց պաշտպանութեան համար՝ ընդդէմ Գերմանացոց: Մաձձինին, ընդհակառակն, հենց որ կրկին ազատութիւն ստացաւ, ճշմարտութիւնն ամեն բանից վեր դասելով, եռանդով յայտնեց իւր կարծիքը յօդուտ Գերմանացոց և ընդդէմ Ֆրանսիացոց: Փարիզի կոմմունային և ազգամիջեան ընկերութեանը ևս նա հակառակ էր, և խօսում էր նոցա դէմ շատ համոզիչ կերպով:

Երկար ժամանակ Լուգանոյում մնալուց յետոյ, քանի մի տարի առաջ, որտեղ նորա խանդարուած առողջութիւնը աւելի ևս վատացաւ, Մաձձինին կիսով չափ առողջացած՝ գնաց Պիզայի խաղաղ կլիման, որտեղ միամսեայ կեցութիւնից յետոյ, հիւանդութեան մի նոր հարուած վերջ տուեց նորա կեանքին 1872 թուի մարտի 10-ին: Նորա ծանօթ ընտանիքների անդամներից մի քանիսը՝ Նաթանը և Ռոսսէլին, և նորա բարեկամ Ադրիանո Լէմմին և Ֆելիցէ Դանդոնիերը, կանգնած էին նորա անկողնի մօտ, երբ նա փչեց վերջին շունչը: Իսկ միւս բոլոր բարեկամները, որոնց, սպառնացող վտանգը տեսնելով, իմաց էին տուել հեռագրով, գտան նորան արդէն իրրև դիակ, բայց նա մեռած ժամանակն ևս պահպանել էր այն ազնիւ, ծանր և մեղմ հայեացքը, որ նորան յատուկ էր կենդանութեան ժամանակը: Մահիցը դեռ մի քանի ժամանակ առաջ նորա միտքը բոլորովին պարզ էր: Նա մեռաւ հանգիստ և այն հաստատ համոզմունքով, թէ նորա գաղափարները՝ վաղ թէ ուշ՝ պէտք է յաղթող հանդիսանան:

Մաձձինու անձնաւորութեան մէջ Իտալիան կորցրեց իւր ամենահաւատարիմ որդկերանցից մինը, և ոչ մի մարդու նա այնքան պարտական չէ իւր վերածնութեան համար, որքան նորան: Մինչ որ նա իւր աղմկալից կեանքի ընթացքում գործել է, հաշուել անգամ չի կարելի, և մինչև անգամ նորա այն ձեռնարկութիւնները, որոնք անմիջական հետևանք չունէին, կրում էին իւրեանց մէջ ապագայ յաջողութեան սերմը: Այն սարսափելի բռնակալութեան միջոցում, երբ նորա երիտասարդութեան ժամանակ ամեն ազատ խօսք ճնշվում էր Իտալիայում, միայն նա սիրտ և հաստատակամութիւն ունեցաւ իւր

ձայնը բարձրացնել ազգի վերականգնման համար և, իբրև ամենաջերմ հանրապետական, գործել իւր հայրենիքի միութեան և ազատութեան համար, շրջապատած այնպիսի վտանգներով, որ այժմեան սերունդը երևակայել անգամ չի կարող։ Հարկաւոր էր մի շատ աւելի մեծ դիւցազնական հոգի ունենալ, քան թէ հռչակաւոր զօրապետները, որոնց ժպտում է պատերազմի դաշտումն սպասող մահը, որ նոցա գունաթափ ճակատը զարդարում է փառքի պսակով, մինչ Մաձձինին, բազմութեանն օգնելու փափաքով, խաւարի մէջ՝ ամեն րոպէ պէտք է աչքի առաջ ունենար ամենասարսափելի մահ, կարելի է տանջանքների մէջ, կախաղանի վերայ, կամ մի ամրոցի խաւար պատերի մէջ փակուած, առանց փառքի, առանց սիրալիր համակրութեան այն ազգի կողմից, որի համար նա իրան զոհեց։

Այն միջոցին, երբ կառավարութիւնները հալածում էին նորա ձգտումները, նա գտնում էր բարեկամներ ու կուսակիցներ, որոնք սիրով և յարգանքով հետևում էին նորա ուսմանը։ Այնպիսի ընտիր հայրենասէրներ, որպիսիք են Կամպանելլան, երկու եղբայր Ռուֆֆինիները, երկու եղբայր Բանդիերաները, Գրիլենցօնին, Ցիրօնին, Սաֆֆին, Բինին, Քաղրիօն, Մօտօն, Սավին, Բօզօլենօն, Պիլօն, Պիզականէն և ուրիշ շատերը, որոնք արժանի են իւրեանց հայրենիքի շնորհակալութեանը, օգնում էին նորան ազատութեան գործում։

Մաձձինիականների ոյժը կայանում էր նոցա մի ընդհանուր հաւատ ունենալու մէջ. նոքա հաւատում էին իրանց առաջնորդին և ուրախութեամբ նուիրում էին նորան իրանց կեանքը. նոքա հաւատում էին նորա քարոզած մեծ սկզբունքներին, որք են Միութիւն, Ազատութիւն Հանրապետութիւն, և դոցա համար նոքա պատերազմում էին նորա հետ միասին։ Եթէ նոքա մեռնում էին մարտիրոսական մահով, երջանիկ էին մեռնում, կրկնելով այդ խօսքերը իւրեանց շրթունքներով։

Այդ Մաձձինիական հաւատը և՛ քաղաքական, և՛ ազգային, և՛ հասարակական և՛ մարդասիրական է. դա մի կրօնի ոյժ ունի։ Մաձձինին ուսուցանում էր Իտալացիներին, թէ մարդ իւր իրաւունքները պահանջելուց առաջ՝ պէտք է կատարէ իւր պարտքը դէպի հասարակութիւնը և դէպի մարդկութիւնը,— մի վարդապետութիւն, որ հակառակ է 1879 թուի այն ֆրանսիական յեղափոխականներին, որոնք իրաւունքները պարտականութիւններից բարձր էին դասում և դո-

բանով ամբոխի մէջ աւելի եսականութիւն, քան թէ առաքինութիւն էին յարուցանում: Մաձինու համար ազատութիւնը ոչ թէ նպատակ էր, այլ միայն միջոց մարդկային ցեղը յառաջադիմութեամբ աղնուացնելու: Դեռ իւր Ռէնանի մասին գրած մի յօդուածում, «Ռոմա դէլ Պոպոլո»ի մէջ, որ նորա վերջին յօդուածն է, նա գրում է. «Կեանքը նորանում չէ կայանում, որ մարդ բարեկեցութիւն որոնի, ընկնի աշխարհիս երեսին անհասանելի երջանկութեան յետևից. կեանքը մի կոչումն է, ապա թէ ոչ նա ոչ խորհուրդ ունի և ոչ արժէք: Կեանքը մեզ չէ պատկանում, այլ պատկանում է Աստուծուն. այս պատճառով նա ունի միայն մի նպատակ, մի օրէնք: Մեր խնդիրն է այդ օրէնքը գտնել, ձգտել այդ նպատակին փոքր առ փոքր հասնելու և մեր միտքն ու գործունէութիւնը դէպի այդ ուղղել: Պարտականութեան սրբազան կանոնը պէտք է իշխէ մեր կեանքի վերայ: Մարդը բնութիւնից ոչինչ իրաւունք չունի ստացած, բացի այն իրաւունքից, որ իւրեան դարձնէ անկախ նոյն բոլոր բաներից, որոնք արգելում են նորան իւր պարտականութիւնները ազատ կատարել. միւս բոլոր իրաւունքները դուրս են գալիս իրրև հետևանք մեր գործերից և կատարած խնդիրներից: Իւրաքանչիւրը մեզանից ապրում է ոչ թէ իւր, այլ ամենքի համար: Մեր յառաջադիմութիւնը կարող է իրագործուիլ միայն ուրիշների յառաջադիմութեան հետ: Զոհաբերութիւնը ամենաբարձր առաքինութիւնն է. մտածել, գործել, պատերազմել, անձնուիլ, որտեղ այդ հարկաւոր է, ոչ թէ մեր, այլ ուրիշների համար, այն նպատակի համար, որ բարին յաղթէ չարին»:

Մաձինին քարոզում էր նոյնպէս, թէ սէրը դէպի ընտանիքը և հայրենիքը այն աստիճաններն են, որոնցով մարդ պէտք է բարձրանայ պէպի ընդհանուր մարդկութեան սէրը հակառակ այն ամենանոր խմբի վարդապետութեանը, որ կամենում էր սեփականութեան հետ ոչնչացնել և սէրը դէպի ընտանիքն ու հայրենիքը: Նա քարոզում էր, թէ մարդ իւր նպատակին հասնելու համար պէտք է գնայ միայն հաստատակամութեան և իւր սկզբունքներին միշտ հաւատարիմ մնալու ճանապարհով և երբէք չը պէտք է շեղուի այդ ճանապարհից. այդ հակառակ է օպպորտունիստների վարդապետութեանը, որոնց կատարելատիպը Նապոլէօն Գ-ն էր, և որոնք անազնիւ ճանապարհներով ու ստախօսութեամբ, իւրեանց համոզմունքներին դաւաճանելով, և աններելի միջոցներով, աշխա-

տում էին հասնել իւրեանց նպատակին — խղճալի վարդապետութիւն, որ տարաբախտաբար Իտալիայում ևս կուսակիցներ գտաւ:

Մաձձինու ամբողջ կեանքը ներկայացնում է մեզ մի փառաւոր օրինակ այդ սկզբունքների և իւր քարոզած բարձր առաքինութեան և արժանաւորութեան: Սերը դէպի մարդկութիւնը և իւր օտար ու ընտանի բռնակալներից կաշկանդուած հայրենիքն ազատելու և միաւորելու բորբոքուած ցանկութիւնը այնպիսի անձնուրացութիւն էին ներշնչել նորան, որ նա մերժում էր առհասարակ ամեն տեսակ անձնական երջանկութիւն, նուիրելով իւր անձը իւր ազգին և իւր գաղափարների իրագործմանը: Նա աղդում էր գործով, իւր զօրեղ խօսքով, իւր ճարտար գրչով. այդ բոլոր միջոցներով նա վառեց իւր ազգի մէջ հայրենիքի սիրոյ կայծը, և ինչ որ Իտալիան կարողացաւ ձեռք բերել, այդ բոլորի համար նա պարտական է Մաձձինու ցնորքներին:

Կառավարութիւնները լաւ գիտէին, թէ ինչու էին վախենում նորա «ցնորքներից». նորա գիտէին, որ նորա մարգարէութիւնները՝ վաղ թէ ուշ՝ պիտի կատարուէին: Նորա, բանտարկելով, հալածելով ու աքսորելով Մաձձինուն, ոչինչ հնար չէին գտնում նորա մտքի ազդեցութեան առաջն առնելու համար:

Եթէ նա մեռաւ, նորա հետ չը մեռաւ և նորա գաղափարը. նորա գերեզմանի վերայ միայն այս էր հնչվում, թէ «Մաձձինին դեռ կենդանի է, թէև մեռած ևս լինի». այդ այն ազնիւ հայրենասէրների ձայնն էր, որոնք իւրեանց ամբողջ կեանքի ընթացքում նորա ընկերներն են եղել. այդ նոր սերունդի ձայնն էր, որ ոգևորուած էր նորա վարդապետութեամբ. նորա միաձայն երդուեցին նորա դագաղի վերայ՝ հաւաքուել նորա տնկած դրօշակի տակ, որ նորա հայրենիքի մեծութեան, արդարութեան և ազգերի եղբայրանալու նշանակն էր:

Այստեղ պատշաճ է աւելացնել և այն, որ Մաձձինին իւր վեհ բնաւորութեան հետ ունէր և ամենագրաւիչ կերպարանք: Նա ունէր շատ հաղուագիւտ գեղեցիկ աչքեր, խոշոր, սև, թափանցիկ և ազնիւութեան կրակով փայլող աչքեր. նորա բարձր, աղեղնաձև ճակատը ցոյց էր տալիս, որ նա մտախոհ էր: Նորա ժպիտը անդիմադրելի, կախարդող էր. նորա ձևերը ցոյց էին տալիս նորա բնածին արժանաւորութիւնը, բայց մի և նոյն ժամանակ շատ պարզ և առանց հպարտութեան էին: Նա խօսում ու գրում էր շատ գեղեցիկ

զաղղերէն ու անգղերէն, հասկանում էր և փոքր ինչ գերմանե-
րէն: Նա ծանօթ էր բոլոր գրականութիւններին: Նա շատ հիանալի
կերպով գիտար էր ածում և միևնոյն ժամանակ շատ քաղցրա-
ձայն երգում: Նա միշտ ապրում էր չափազանց պարզ. իւր հօր
կարողութիւնը նա բոլորովին զոհեց ազգային գործին: Իւր կրած
բոլոր վշտերի ու նեղութիւնների ժամանակ նորա սիրտը երբէք չէ
դառնացել: Իբրև սիրոյ ճշմարիտ հրեշտակ, նա չը գիտէր, թէ ինչ է
ատելութիւնը, և ներում էր ամենքին, մինչև անգամ իւր հակա-
ռակորդներին ու այն դաւաճաններին, որոնք իւրեանց անձնական օգտի
համար ուրանում էին նորան: Նա իդէալիստ էր, հաւատում էր հողու
անմահութեանը և միշտ կռվում էր նիւթապաշտների վարդապե-
տութեան դէմ: Նորա նշանաբանն էր «Աստուած և Ազգ»:

Իբրև մանկան, իբրև մարդարէ, իբրև առաքեալ, իբրև դաւա-
կից, իբրև օրէնսուս, իբրև մատենագիր, իբրև հասարակաց, իբրև
ժողովրդի դասախարակիչ, նա ցոյց տուեց իւր հանճարը: Եւ եթէ
խաչիան պէտք է պարծենայ, որ Մաշտոցին նորա հողն վերայ է
ծնուել, որ նա խաչիալի ոգու ամենագեղեցիկ և ամենազորաւոր
ներկայացուցիչն է, ապա ամբողջ աշխարհն էլ նորան իւրը պէտք է
համարէ, որովհետև նա ապրում էր և գործում ամբողջ մարդկու-
թեան համար, որ նորա յիշատակը բարձր կը դարի, երբ կը լուն
կուսակցա՛ն կրքերը:

(Լ. Ասլանեան)

Թարգ. Ն. ԼԱԼԱՑԵԱՆՑ

ՅՈՅՍ

(Նմանողութիւն)

Թող ցուրտ ձմեռը նայէ խիստ աչքով
Երկնակամարից աշխարհի վերայ,
Թող նա երկիրը պատէ սառուցով,—
Դարձեալ գեղեցիկ գարունը կը գայ։

Թող սև ամպերը ծածկեն մեզանից
Կենսատու դէմքը արևի պայծառ,—
Կը գայ ժամանակ՝ աշխարհը քընից
Նա կը զարթեցնէ նոր կեանքի համար։

Թող լայ, բառանչէ գաղանի նման
Փոթորիկը մեր գլխների վերայ,—
Մի գիշերի մէջ ցանկալի գարնան
Օրն անակնկալ մեզ կը լուսանայ։

Երկիրը, ծանր քնից զարթելով
Կանաչազարդած կըտեսնէ իրան,
Գապոյտ երկնքին սիրով ժպտելով,
Նա կը հնչեցնէ երգեր ցնծութեան։

Հասկեր ու վարդեր, ծաղիկներ պէսպէս
Կը պճնազարդեն նորա պսակներ,
Եւ ուրախութեան արտասուքի պէս
Կը վազեն աշխոյժ, կարկաջուն ջրեր։

Ապա ուրեմն թող մեր յոյսերը
Երբէք կասկածը չը թունաւորէ,—
Մեծ և փառաւոր մայիսեան օրը
Մեզ ապագայում կը դիմաւորէ։

Եւ երբ երկիրը լինի քեզ համար
Աւելի քան թէ դժոխք սոսկալի,
Նայիր միշտ առաջ, հաւատա՛, եղբա՛յր,
Անշուշտ գարունը կը գայ ցանկալի։

ԳԷՈՐԳ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑ

ՖՐԱՆԿԼԻՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ

ՀՐԱՊԱՐԱԿԱԽՕՍՈՒԹԻՒՆ ԼԱԲՈՒԼԷԻ [1])

Տիկիններ և պարոններ.

«Ֆրանկլին» հասարակութիւնը կազմելով իւր առաջին ընդհանուր նիստը, պատշաճաւոր և արդար համարեց յարգելու այն մարդու յիշատակը որոյ անուան հովանաւորութեան ներքոյ հաստատուեցաւ ինքը, այն է յիշատակը Բենիամին Ֆրանկլինի, որ ստորագրութիւնների վերայ հիմնուած մատենադարանների առաջին հնարողը, առաջին հիմնարկուն է: Հասարակութիւնը մեծ պատիւ արաւ ինձ, մատնացոյց անելով իմ վերայ այս նպատակն իրագործելու համար. ես առանց պատիր պարկեշտութեան և ուրախութեամբ ընդունեցի այդ:

Քսան տարի է, որ ես ուսումնասիրում եմ Ամերիկան և նորա առաջին ապստամբութեան պատմութիւնը. քսան տարի է, որ ապրում եմ Ֆրանկլինի և Վաշինգտոնի հետ. ես յայտնում եմ, որ երբէք դոցանից աւելի անշահասէր ազգասէրներ, ազատութեան աւելի անկեղծ բարեկամներ չեմ ճանաչած. ես սիրում եմ դոցա և ինչպէս ամենայն սիրահարուած՝ կարօտ եմ խօսելու սիրոյս առարկայի մասին, (ծիծաղում են). երկիւղ կրելով, որ չը ձանձրացնեմ ունկնդիրներիս: (Ո՛չ, ո՛չ, խօսեցէք):

Այսու ամենայնիւ ես դիտաւորութիւն չունիմ Ֆրանկլինի ամբողջ կեանքը պատմել. դա շատ երկար կը քաշէր, և բացի սորանից, նորա կեանքը այնպիսի մարդու ձեռքով է գրուած, որ ամենից լաւ

---

[1]) Պարոն Լաբուլէն այս հրապարակախօսութիւնը արել է Փարիզի Արուեստագիտական և Հնարագիտական դպրոցում 1865 թուի ապրիլի 27-ին, «Ֆրանկլին» կոչուած հասարակութեան առաջին ընդհանուր նիստին.

Ծ. Խ.

էր ճանաչում Ֆրանկլինի թէ պակասութիւնները և թէ արժանաւորութիւնները.—այդ մարդը նոյն ինքը Ֆրանկլինն է: Նա պատմել է մեզ իւր երիտասարդութեան ընթացքը, իւր մանաւոր կեանքի պատմութիւնը, մինչև յիսուն և մէկ տարեկան հասակը, այն հիանալի «Ցիշատակարաններին» մէջ, որ ամենայն մարդու ձեռքում պէտք է լինէին. իսկ յետոյ մի թղթակցութեան մէջ,—որ շատ սակաւ է յայտնի Ֆրանսիայում, բայց որ Ցիշատակարանից պակաս հրապուրիչ չէ,—նա յայտնել է մեզ իւր հոգու դրութիւնը օրէցօր և ժամ առ ժամ: Այստեղ միայն կարելի է գնահատել այս մարդու բոլոր պարզութիւնը և վսեմութիւնը, որի մասին իրաւամբ ասած են, թէ նա երբէք չի ասել այնպիսի խօսք, որ պէտք չէր ասել, այլ որ միշտ այն է ասել, որ պէտք էր ասել. թէ նա երբէք չի արել մի գործ, որ պէտք չէր անել, այլ որ միշտ արել է այն գործը, որ պէտք էր անել: (Բրավո բրավո): Միով բանիւ՝ Ֆրանկլինն այն մարդկանց թուիցն էր, որոնք հարցնում են իրանց, թէ արդեօք խելքն ինչո՞ւ պէտք է արտօնութիւն լինի չար մարդկանց: Նա խելքի տէր մարդ էր. իմանում էր գործ ածել այդ խելքը. նա ծառայեցնում էր ազնիւ մարդկանց օգտին այն, ինչ որ պարգևել էր նորան երկինքը: (Շարժումն. շատ լաւ):

Ուստի ես ձեզ կը պատմեմ Ֆրանկլինի կեանքի միայն մէկ մասը. ես կը խօսիմ այն գործունէութեան մասին, որ նա կատարել է Ֆիլադէլֆիայում, քաղաքական ասպարէզ մտնելուց առաջ, իբրև հասարակ քաղաքացի. մի խօսքով նորա այն գործքերի մասին, որ ամենայն մարդ կարող է անել, այն պայմանով միայն, որ նա Ֆրանկլինի բանականութիւնը և մանաւանդ նորա հաստատ կամքն ունենայ:

Նա այն մարդիկներից էր, որոնց մասին իրաւամբ ասած են, որ եթէ դոցա մարմարիոնի սեղանի վերայ դնես, այնտեղ ևս արմատ կը բռնեն: (Շարժումն): Նա կատարեալ խելքին ծառայեցնում էր հաստատուն կամքը, որ երբէք չէր վհատում:

Բայց ես չեմ ուզում խօսել ձեզ հետ նորա այն գործքերի մասին, որ նա կատարել է իւր հասակն առած ժամանակ, այլ ես կը ցանկանայի ցոյց տալ ձեզ Ֆրանկլինին իւր երիտասարդութեան մէջ, մանաւոր կեանքում, և հասկացնել ձեզ թէ ինչպէս դարձաւ նա Ամերիկայի սիրելին:

Բայց սորա համար հարկաւոր կը լինէր տարիները տեղափո-

լսել, գնալ դէպի Ամերիկա և հանել այնտեղ 1731 թուին։ Այդ դժուար չէր լինել....եթէ մենք լինէինք Միացեալ նահանգներում, որ սպիրիտների աշխարհն է. մենք մի որ և իցէ սպիրիտի կը խնդրեինք ներկայացնել մեզ Ֆրանկլինին։ Բայց այստեղ, այս դահլիճում, ուր հաւատում են միայն այն բանին, ինչ որ տեսնում են, ինչ որ կշռում են և այն էլ..... (ծիծաղում են). ի՞նչ անենք ուրեմն։

Սակայն մի բան ընկաւ միտս. մեր մէջ մի բան կայ, որ արհամարհում է ժամանակը և տարածութիւնը — դա միտքն է։ Շեքսպիրի գրուածքների մէջ մի փոքրիկ ոգի կայ, որ ասում է, թէ քառասուն րոպէում զօտի կըկապի դեռևի շուրջը։ Այս փոքրիկ ոգին այնքան արագ չէ, որքան մարդուս միտքը։ Ես առաջարկում եմ ձեզ տեղավոխուիլ Ամերիկա և հարիւր երեսուն տարով ջահիլանալ։ Սա մեծ բան չէ. ահա հասանք։ Յուսով եմ որ դուք չը յոգնեցաք, և ինձ թվում է, որ զարմանալի կերպով երիտասարդացաք։ (ծիծաղում են)։

Թոյլ տուէք ինձ այժմ ծանօթացնել ձեզ Ֆիլադէլֆիա քաղաքի հետ 1731 թուին։ Սա Ամերիկայի ամենամեծ քաղաքն է, 10,000 բնակիչ ունի։ Այն դաշտը, որ տեսնում էք քաղաքի առաջև, հասարակաց արօտատեղին է, ուր առաւօտները կովերն արածելու են ուղարկում, իսկ քաղաքը այն մեծ փողոցի նման բանն է, որ դուք տեսնում էք զարդարած պարտէզների շարքով և չոր ցանկերով։ Գուցէ պտուղներով ծածկուած խնձորիների և դեղձիների միջով նշմարում էք մանր քարաշէն տներ. այդ է ահա Ֆիլադէլֆիա քաղաքը։ Բայց ի՞հարկէ ես կարող եմ մարդարէանալ և յայտնել ձեզ, որ 1865 թուին այդ քաղաքը 600,000 բնակիչ կունենայ. ազատութեան արդասաւորութեան կենդանի ապացոյց։ (Բրաւօ)։

Գտնենք այժմ պարոն Ֆրանկլինի տունը. նա բնակում է վաճառականի մօտ. մեզ հեշտութեամբ ցոյց կը տան։ Ահա հասանք. մտնենք. դուռը բաց է։ Մենք զտանում ենք քաղաքի ամենամեծ տպարաններից մէկում։ Երկու մտնում է դրան այստեղ, և Ֆրանկլինը իւր մօտ մի աշակերտ ունի։ Ֆրանկլինը աշխատում է. կողքին նախաճաշն է դրած. կերակուրը շատ հասարակ է. իսկապէս Ֆրանկլինը միլիոնատէր չէ.... մի կաւէ աման, մէջը կաթը և մի անագեայ դրդալ։ Միայն աւելի ուշ, երբ նա կը հարստանայ, իրաւունք կը տայ իրան մի ճենապակեայ թաս և արծաթեայ դրդալ ունենալ։ Բայց այն էլ կինը պէտք է ստիպի, որ Ֆրանկլինը ձեռք բերի այդ իրեղէնները.

որովհետև նորա աչքում դա մի աւելորդ ծախս է և ապարդիւն դրամագլուխ: (Ծիծաղում են):

Նա շարադրութեամբ է պարապած: Մենք առանց անհամեստ լինելու կարող ենք յետևից նայել, դա է Լրագիր Պենսիլվանիայի: Ֆրանկլինը մի յայտարարութիւն է գրում:

Լրագրի յայտարարութիւնների հնարողը և կատարելագործողը Ֆրանկլինն է: Տեսնենք ինչ է յայտնում դա կարդացողներին: «Սորանից երեք կամ չորս օր առաջ՝ եկեղեցու նստարանների վերայ թողել են մի աղօթագիրք. գիրքը կարմիր մաշկեայ կազմ ունի, կողքերը ոսկեզօծ են և նշանակուած Դ. Ֆ. տառերը (Դէբորա Ֆրանկլին — սա տիկին Ֆրանկլինն է): Մենք խնդրում ենք գտնողին վերոյիշեալ գրքում բանալ ութերորդ պատուիրանը, (ընդհանուր ծիծաղ) և կարդալուց յետոյ՝ գիրքը կրկին իւր տեղը դնել»: Գտնելու համար ուրիշ հնարներ գործ չեն դրուիլ: (Կրկին ծիծաղ):

Թողնենք որ նա աւարտի իւր յայտարարութիւնը և տեսնենք թէ ինչ ձեռագիր է դրած իւր կողքին: Դա կոչվում է «Բարի մարդ Ռիչարդի օրացոյցը» 1731 թուականի համար: Թերթենք փոքր ինչ և տեսնենք ինչպիսի պարունակութիւն ունի այդ գիրքը:

«Մարդս երեք ընտիր բարեկամ ունի. մի ծեր ամուսնուհի, մի պառաւած շուն և նաղդ փող»: (Ծիծաղ)

«Երեք կին գաղտնիք կարող են պահել, եթէ միայն նոցանից երկուսը մեռած լինին: (Սաստիկ ծիծաղում են):

Ներեցէք....սխալուեցայ, լաւ չը կարդացի —այստեղ գրած է երեք անձն և ոչ թէ երեք կին: Ֆրանկլինը վերաբերում էր այս սրամտութիւնը թէ տղամարդկանց և թէ կանանց: (Կրկին ծիծաղ):

Շարունակենք:

«Դու գանգատվում ես, թէ խաբուած ես: Ո՞վ է քեզ ամենից յաճախ խաբել: Պատասխան.—Դու ինքդ»:

Դուք տեսնում էք, որ Ֆրանկլինը այնպիսի մարդ է, որ ամեն բանով փոքր ինչ պարապում է. նա խմբագիր է, օրացոյց շինող, և տեղն ընկած ժամանակ՝ մինչև անգամ օրացուցի բանաստեղծ: Պէտք է խոստովանել, որ նորա բանաստեղծութիւնները օրացուցից շատ բարձր չեն ընթանում: Բացի դորանից նա էլի ուրիշ շատ բան է. փորագրող, տառ. ձուլող, գրաշար, մրաղարկ, տպագրիչ, սրբագրող, թղթավաճառ և հարկաւոր եղած ժամանակ յայտարարութիւնների մէջ յանձն է առնում սուրջ և ոսմ ծախել. մի խօսքով նա ոչ մի բանից

չի վախենում. նա կարծում է, որ մարդս ստեղծուած է աշխատելու համար, և ամենայն ազնիւ գործունէութիւն արժանի է վարձատրութեան:

Այսպէս ահա աշխատութեամբ և խնայողութեամբ նա պատուաւոր դրութեան հասաւ:

Ահա, կասէք դուք, մի զուարճալի մարդ. բայց մենք դորա նման շատ մարդիկ ենք ճանաչում, որոնք հաստատ կամք ունին և կամենում են հարստանալ: Դա արտաքոյ կարգի բան չէ, մանաւանդ այնպիսի բան, որով կարելի լինէր մարդ զարմացնել:

Այո՛, բայց մենք Ֆրանկլինի կեանքի միայն մի կէսի հետ ենք ծանօթացել: Մենք տեսանք Ֆրանկլինին այն ժամանակ միայն, երբ ինքն էր ուզում բարձրանալ, բայց մենք չենք տեսել նորան այն ժամանակ, երբ նա իւր հետ միասին ուզում էր և միւսներին բարձրացնել: Ահա այս հանգամանքը նա անուշադիր չի թողել. նա երբէք չի կամեցել կրթուել՝ առանց ուրիշներին կրթելու. նա երբէք չի կամեցել հարստանալ՝ առանց հարստացնելու և ուրիշներին. նա երբէք չի կամեցել ազատ լինել՝ առանց վայելելու այդ ազատութիւնը ուրիշների հետ միասին: (Բրաւո, բրաւո):

Քսան տարեկան հասակում — յետ գնանք փոքր ինչ — այն է 1726 թուին, Ֆրանկլինը տպարանի արհեստաւոր է, որ ամեն օր նախաճաշիկ ուտելու միջոց չունի, բայց կրթուելու կամք ունի: Այդ իսկ ժամանակը նա մտադրվում է մի կլուբ հիմնել: Այդ կլուբի համար որոնում է մի սպանիական անուն և անուանում է Junte [1]): Բայց Ֆիլադելֆիայի բնակիչները տեսնելով թէ ինչ տեսակ անձինքներից է բաղկանում այդ պատուական հասարակութիւնը, և փոքր ինչ ծաղրել կամենալով, անուանում են «մաշկեայ գոգնոցների կլուբ», ըստ որում ուրբաթ օրերը ժողովվում են այդ տեղ այն արհեստաւորները, որոնք ըստ սովորութեան մաշկեայ գոգնոցներ են ունենում նկապած, միմեանց հետ խօսելու և պարզելու զանազան հարցեր Այս հարցերը մեզ յայտնի են. մենք գիտենք, թէ ինչ բաներով

---

[1]) Իւնտա (Iunta միութիւն) բառով Սպանիայումն անուանվում է ամենայն ժողով, որ հաւաքվում է կամ նշանակած է մի որ և է քաղաքական հարց կամ գործ վճռելու համար: Պատմութեան մէջ երևելի է մանաւանդ ապստամբած Սպանիացիների կենտրոնական իւնտան իւր նահանգական իւնտաներով:

են պարապում այս տպարանի արհեստաւորները, հիւսները, կօշկակարները, դերձակները և այլն:

Ամենից առաջ մի նկատողութիւն պէտք է անենք: Մենք 1726 թուականումն ենք. եթէ այդ ժամանակ այս բաները Ֆրանսիայումը պատահէին, խորհրդակցելու առարկան ջեզուիտների և պարլամենտների վիճաբանութիւնները կը լինէին. եթէ որ և իցէ տեղ բողոքական լինէր, նորան կաքսորէին հեռաւոր երկիրներ: (Շարժումն): Բայց մենք Ֆիլադէլֆիայումն ենք և Ֆրանկլինը կամենումէ, որ անդամ դառնալ ցանկացողները ձեռքը սրսին դրած երդուին, թէ երբէք չեն հետաքրքրուելու իւնտայի և ոչ մի անդամի կրօնական համոզմունքը... (բրաւօ), թէ այնտեղ երբէք չեն ակնարկիլ այս առարկաներին վիճաբանութեան ժամանակ և որ մինչև անդամ երբէք թոյլ չի տրուիլ ասելու՝ ես հաստատում եմ. ես համոզուած եմ. այլ՝ կարծեմ, որ... ինձ թվումէ, թէ... կարելի էր կարծել, որ... ահա խօսքով նա այս հասարակութեան մէջ քաղաքավարութիւն մտցրեց ոչ միայն կենցաղավարութիւնը բարւոքելու համար, այլ և համաձայնութիւն բարեկամութիւն հաստատելու այն անձանց մէջ, որոնց նա միաւորեց: (Շատ լաւ, շատ լաւ):

Ես յօշինեց քսան և չորս հարց, և այս հարցերը ամեն ուրբաթ հանդարտ կարդումեն այնպէս, ասումէ Ֆրանկլինը, որ կարելի լինի երկու հարցի միջոցում լցնել և դատարկել մի բաժակ:

Ահա այս խնդիրներից մի քանիսը:

«Այս մի շաբաթում ուսել է՞ք դուք արդեօք մի նշանաւոր բան պատմութեան, դրականութեան կամ քաղաքականութեան մէջ:

«Արդեօք եկե՞լ է քաղաքը մի որ և իցէ նշանաւոր օտարական, որին ուրախ կը լինէինք լսել:

«Կա՞յ արդեօք քաղաքի մէջ մի այնպիսի անձն, որ հարստացել է. կարո՞ղ է՞ք ասել, թէ ինչպէս է յաջողել նորան այդ:

«Կա՞յ արդեօք մի այնպիսի անձն, որ սնանկացած լինի. կարո՞ղ է՞ք ասել, թէ ի՞նչպէս է պատահել. պատճառն արդեօք անչափաւորութի՞ւնն է, թէ՞ վատ բարքը:

«Կա՞յ մի այնպիսի բան, որ մենք կարող ենք անել, և որ օգտաւէտ կը լինի մեզանից մէկին, մեր հայրենիքին կամ մարդկութեանն:

Ահա մի ցանկութիւն, որ կարող է փոքր ինչ մեծ երևիլ չքաւոր արհեստաւորների մէջ, որոնք բնակումեն մի անապատում կորած փոքրիկ քաղաքի մէջ. բայց այս տեսակ փառասիրութիւնը

լաւէ. միայն նոքա են լաւ գործեր կատարում, որոնք մեծ բաներ են սիրում. լաւ կը լինի դոցա վաղօրօք սիրենք: (Շատ լաւ, շատ լաւ):

Ահա Ֆրանկլինի առաջին գործը: Ցիսուն տարուց աւելի այս հիմնարկութիւնը զուարճութեան աղբիւր էր նորա համար: Նա երբէք չի կամեցել, որ այդ գործը անձնական փառասիրութեան գործ լինի. նա երբէք չըկամեցաւ, որ իւնտայի մէջ տաններկու անձինքներից աւելի լինին. բայց որոշուեցաւ որ անդամներից իւրաքանչիւրը կարող է կողքին մի ուրիշ իւնտա հիմնարկել. և այս եղանակով Ֆիլադէլֆիա քաղաքում կազմուեցան մանր հասարակութիւններ, որոնց անդամները ժողովվում էին միասին խօսելու և վիճաբանելու համար: Սա այն մեծ միջոցներից մէկը եղաւ, որոնցից Ֆրանկլինը օգուտ քաղեց իւր գաղափարները ժողովրդացնելու համար:

Նորա առաջին գաղափարներից մէկը եղաւ, իւր քսան և հինգ տարեկան հասակում, մի մատենադարան հիմնել: Այդ ժամանակ գրքերը հազուագիւտ էին Ամերիկայումը, գրեթէ բոլորը Անդղլայից էր գալիս: Ի հարկէ՝ Ամերիկայումն էս տպվում էին գրքեր, բայց դոքա աղօթքի և աստուածաբանական գրքեր էին: Աստուածաբանները ամեն տեղ կռվում են): (Ծիծաղում են): Ցպում էին նաև աբբենարաններ, օրացոյցներ, բայց շատ քիչ հիմնաւոր գրքեր. այդ տեսակ գրքերը պէտք է Եւրոպայից բերել տային: Դոքա միաձայ, քառաձայ, հաստ և թանդաղին մատեաններ էին:

Ֆրանկլինը աղքատութեան պատճառով անկարող լինելով սեփական մատենադարան ունենալ, մտադրուեց իւր բարեկամների հետ ստորագրութեամբ մի մատենադարան հիմնել:

«Ես մտածեցի, ասում է նա, որ եթէ յայտնէի, թէ մատենադարան հիմնելու նախագիծը ինձ է պատկանում, լսող չէի գտնիլ. ես ասացի՝ այդ գաղափարը պատկանում է բարեկամ անձինքների մի խմբի, և այս կերպով ես իրաւունք ստացայ գովելու այդ միտքը և յայտնելու, որ ես դորան շատ լաւ եմ համարում: Այդ ժամանակից հետէ ես միշտ օգուտ եմ քաղել այդ հնարքից, որ և միշտ յաջողել է ինձ»: (Ծիծաղում են):

Ուրեմն Ֆրանկլինն առաջարկեց կազմել բաժանորդագրութեամբ մի հասարակութիւն. իւրաքանչիւր անդամ պէտք է վճարէր գաղթական դրամով երկու ֆունտ ստերլինգ, այսինքն մօտ 40 ֆրանկ, գլխաւոր գրքերը ձեռք բերելու համար, և տարին 10 շիլլինգ՝ մատենադարանը պահպանելու համար:

Ստորագրութիւնը յաջողեցաւ, բայց գրքեր ձեռք բարելը հեշտ չէր — պէտք էր Անգղէսային դիմել: Անգղէսայումը գտան մի եռանդոտ և հաւատարիմ մարդ, որ միշտ Ֆրանկլինին բարեկամ մնաց. դորա անունն էր Պետրոս Կոլլինսօն, այնպիսի մի թղթակից, որի նմանը կցանկանայի և մեր հասարակութեանը ունենալ: Սա այնպիսի մարդ էր, որ երբ Ֆիլադէլֆիայի հասարակութիւնը նորա ձեռքով քսան հատոր գիրք էր պահանջում, նա միջոց էր գտնում երեսուն հատոր ուղարկել, առանց գինն աւելացնելու: Տեղը եկած ժամանակ, նա գործիքներ էլ էր ուղարկում: Ահա այսպէս այն առաջին ֆիզիքական գործիքները, որ նա Ամերիկա ուղարկեց, զարգացրին Ֆրանկլինի մէջ այն գիտնական ոգին, որ պարգևեց մեզ դեղեցիկ գիւտեր:

Հինց մատենադարանը կարգաւորելին թէ չէ, Ֆրանկլինը գրքերի ցուցակը շինեց, և ինչպէս տեղեկանում ենք հասարակութեան արձանագրութիւններից, նա աղատ էր իւր բաժին տասը շիլլինգը վճարելուց երկու տարով, և այդ մէկ նորա համար, որ նա աղքատ էր և երկրորդ՝ որ հասարակութեան համար տպել էր մատենադարանի ցուցակը և զանազան ուրիշ բաներ:

Այս գրադարանը, որի զարգացումն սկզբումը կամաց էր գնում, միշտ մասնաւոր գրադարան մնաց: Հիմնադրելուց յիսուն տարի յետոյ դորա մէջ 6000 հատոր գիրք կար. եօթնասուն և հինգ տարուց յետոյ 14,000. իսկ այսօր նա անուանվում է Ֆիլադէլֆեան մատենադարան, և պարունակում է իւր մէջ 80,000 գիրք: Սակայն սա միշտ Ֆրանկլինի և իւր բարեկամների գրադարանն է. սերմը զարգացել է և դուք տեսնում էք, թէ մենք իրաւունք ունէինք թէ ոչ՝ հովանաւոր ընտրելու մի այնպիսի մարդ, որ իմանում էր այսպիսի արգասաւոր սերմեր ցանել: (Ծափահարութիւններ):

Իւր որդեգիր քաղաքին մի մատենադարան պարգևելով, միակ գրադարան, որ կար այն ժամանակ, դորանից տասը տարի յետոյ նորա մէջ մի ուրիշ միտք ծագեցաւ: Ֆիլադէլֆիայումը ճեմարան չը կար. նա մտածեց, որ պէտք է մի ճեմարան, կամ լաւ ևս ասել, մի համալսարան հիմնել: Այս անգամ ևս նա թագ կացաւ իւր խորհրդաւոր բարեկամների անուան տակ, որոնք երբէք չէին տեսնվում, բայց որոնք իսկապէս կային, ըստ որում բոլոր իւնտաներում Ֆրանկլինը կողմնակիցներ ունէր, որոնք ըմբռնում էին նորա գաղափարները, և բոլոր ժողովներում նա մարդիկ գտաւ, որոնք համակրում էին ճեմարան հիմնելուն:

Այս առիթով նա կարծիք յայտնեց, որ լատիներէն չուսուցանեն, և ահա նորա այդ մասին արած դատողութիւնը:

«Առաջուայ ժամանակը, ասում էր նա, մարդիկ սանտրում էին մազերը, ինչպէս կամենում էին, և գլխներին գդակ էին դնում. բայց այսօր այնպիսի սիրուն կեղծամներ ունին, որ էլ գլխարկը գլխներին չեն դնում, այլ կռան տակն են մտնում: Այս է ահա լատիներէնի դերը կրթութեան մէջ — դա կռան տակի գլխարկն է:

Ես կարծում եմ, թէ սխալվում էր նա, աւելի ևս կը սխալուէր, եթէ ապրելիս լինէր Ֆրանսիայումը, այսինքն լատինական ցեղի երկրում, որ Հռովմումն է գտնում իւր լեզուի ծագումը և քաղաքակրթութեան հիմունքները: (Շատ լաւ, շատ լաւ):

Ինչ և իցէ նորան չը յաջողեցաւ այս միտքն իրագործել, իսկ ճեմարանը յաջողեցաւ. նա մեծ յառաջադիմութիւն ունեցաւ.... լատիներէնն ևս մոցնելով, և 1864 թուին դարձաւ Ֆիլադէլֆիայի համալսարան: Այսպէս ուրեմն մենք կարող ենք Ֆրանկլինի հաշուետումարի մուտքի մէջ գրել Ֆիլադէլֆիայի գրադարանը և համալսարանը:

Բախտը միայնակ չէ գալիս. երբ մարդս մի բարի գործ է կատարում, մի այլ բարի գործ ևս անմիջապէս հետևում է նորան:

Մի օր Ֆրանկլինի բարեկամներից մէկը, դօքտոր Թոմաս Բօնդը, եկաւ նորա մօտ և ասաց. «Ֆիլադէլֆիայումը աղքատանոց չը կայ. ես մտադիր էի հիմնել այդ բանը, և արդէն խօսել եմ մի քանի անձանց հետ: Ինձանից հարցրին, թէ Ֆրանկլինն այդ գործի մէջ խաՀն է, թէ ոչ. խօսե՞լ էք Ֆրանկլինի հետ այդ մասին: Ես պատասխանեցի. «ոչ, այդ նորա գործը չէ»: Բայց ամենքը պնդեցին, թէ «պէտք է նախ Ֆրանկլինին ստորագրել տաս. երբ որ նա ստորագրուի, մենք ևս կստորագրուինք»:

Ֆրանկլինն սկսեց իսկոյն պարապել աղքատանոցով, և փողը ժողովեցին. բայց որովհետև այնքան դրամ չը հաւաքուեցաւ, որքան հարկաւոր էր, Ֆրանկլինը ասաց ինքն իրան. Թող Պենսիլվանիայի ժողովը (նահանգի այն ժամանակուայ ատեանը) վճռի ընդհանուր գումարներից փող տալ: Ժողովի անդամները, որոնք համարեա թէ բոլորն էլ գիւղերից էին, երբ նոցա առաջարկուեցաւ, նոքա այս պատասխանեցին, թէ աղքատանոցը քաղաքին պէտք է ծառայէ և ոչ թէ նահանգի բնակիչներին:

Ֆրանկլինը այցելութեան գնաց նոցա իւրաքանչիւրին առանձին և ասաց: «Եկէք մի պայման կապենք. դուք վճռեցէք 50,000 ֆրանկ

տալ, այն պայմանով, որ քաղաքի բնակիչներն ևս իւրեանց կողմանէ 50,000 ֆրանկ տան»:

Ժողովի անդամները համաձայնեցան, մտածելով իւրեանց մէջ, թէ «Ֆիլադէլֆիա քաղաքում 50,000 ֆրանկ չի գտնուիլ. վճռենք այնպէս, ինչպէս որ խնդրում են մեզանից. դորանով մենք բարեգործների պատիւ կստանանք և միևնոյն ժամանակ դա մեզ վերայ ոչինչ չի նստիլ. մեր վճիռն անզօր կը լինի»:

Այդ նշանակում է հաշուն առանց Ֆրանկլինին տեսնել: Ֆրանկլինը գնաց քաղաքի գլխաւոր բնակիչների մօտ, և որովհետև Ամերիկացին այն տեսակ մարդ է, որ օգտաւէտ գործն ըմբռնում է ամենքի պէս և ամենից ևս լաւ, նա հեշտութեամբ հասկացրեց նոցա, թէ ինչ օգուտ ունին նոքա ստորագրելով. ըստ որում 200 ֆրանկ տալով, միևնոյն է թէ 400 են տալիս: Այս կերպով նա 50,000 ֆրանկ քաղաքիցն ստացաւ, իսկ ժողովի վճռած 50,000 ֆրանկը մեծ օգուտ բերին այն հաստատութեանը, որ այսօր Ֆիլադէլֆիայի մեծ աղքատանոցն է:

Արդարև քառասուն տարեկան հասակում իւր որդեզիր քաղաքին մի մատենադարան, մի համալսարան և մի աղքատանոց տալը արդէն բաւական գեղեցիկ գործ է, թէև Ֆրանկլինի քաղաքական կեանքի փայլունը իւր լուսով փոքր ինչ մթնացրեց այս բարի գործերը. բայց այս դեռ բոլորը չէ:

Ֆիլադէլֆիայում հրդեհաշէջներ չը կային: Ֆրանկլինը մտադրուեց մի հասարակութիւն կազմել, որի անդամները յանձն առնէին կաշուէ ջրհաններ շինել և այնպիսի մեծ զամբիւղներ, որոնց մէջ կարելի լինէր հրդեհի ժամանակ տեղաւորել շարժական իրեր: Այս հասարակութիւնը ժողովներ ունէր, և այն անդամները, որոնք չէին մասնակցում նիստերին, պարտաւորուած էին տուգանք վճարել. այդ տուգանքների գումարով գնում էին սանդուղքներ, կարթեր և ջրացաններ:

Ահա այսպէս կազմակերպեց նա հրդեհաշէջների խումբը: Նա վերանորոգեց նմանապէս զիշերային պահապանների կազմակերպութիւնը, որ շատ վատ էր մինչև այն ժամանակ: Մէկ խօսքով՝ Ֆիլադէլֆիայի համար նա ամէն բան արեց: Նա այնքան խելք ունէր և միշտ ամէն հակառակ դէպքի համար այնպիսի պատասխաններ ունէր պատրաստի, որ դժուար էր ընդդիմանալ նորան:

Երբ տեսան, որ նա այսպէս հեշտութեամբ ամէն բանի համար

փող է գտնում, ամեն մարդ սկսեց նորան դիմել։ Մի մեթոդիստ ցանկանալով եկեղեցի հիմնարկել, եկաւ Ֆրանկլինի մօտ։ Ֆրանկլինը արդէն հաստատել էր մի այնպիսի տաճար, որ ծառայում էր բոլոր դաւանութիւններին, ուր ամենքը կարող էին քարոզել. այս եկեղեցին էր, որ յետոյ Ճեմարան շինեցին։

Այս մեթոդիստին էր, որ Ֆրանկլինն ասաց.

«Դուք փող էք ուզում ունենալ։— Այո։ «Այդ բանի համար մի հնար կայ. գնացէք նախ և առաջ այն բոլոր մարդկերանց մօտ, որոնց վերայ վստահ էք, և նոցա անունները թերթի վերայ նշանակեցէք. ներկայացրէք յետոյ այդ ցուցակը կասկածելի անձանց. տեսնելով առաջինների անունները, այդ մարդիկը կատարզրուին իւրեանց կարգին. այդ նուիրատուների անուններն էլ ցուցակի անցցնելով, գնացէք այն անձանց մօտ, որոնցից բնաւ յոյս չունիք ոչինչ ստանալու. գոցա մէջ էլ կը գտնէք այնպիսիներ. որոնցից մի բան կարողէք ստանալ։ Միշտ կայ մի այնպիսի յաջողութիւն, որի վերայ մարդս չի էլ մտածում»։

Մի օր մի կուակէր եկաւ այս համաշխարհական խորհրդատուի մօտ և ասաց. «Պարոն Ֆրանկլին, ես եկել եմ ձեզանից մի խորհուրդ հարցնելու։ Ես շատ դժուար տեղն եմ ընկել։ Մառանիս մէջ դարեջրի տակառներ ունիմ դրած. տարակոյս չը կայ, որ հարևաններս ախորժակ ունին իմ դարեջրի համար, ըստ որում տակառներիս անընդհատ դարեջուր է պակասում։ Ի՞նչպէս անեմ, որ դրացիներիս արգելեմ իմ դարեջուր խմելը»։

«Շատ հեշտ բան է, պատասխանեց Ֆրանկլինը, դարեջրիդ տակառների առաջ մի մեծ տակառ դնի դրէք»։ (Սիծաղում են)։

Այս օրը միայն այս պատասխանը տուաւ։

Ահա Ֆրանկլինի արած գործերը։

Բայց մի բան պէտք է միշտ աչքի առաջ ունենանք. մարդ չի կարող ամբողջ կեանքումը միշտ բարին կատարել, եթէ մի անկեղծ համոզմունք և խորին հաւատ չունենայ։ Թող այդ հաւատը դրական հաւատը լինի. թող այդ հաւատը լինի մարդկութիւն, եղբայրութիւն, փիլիսոփայութիւն։ Բայց պէտք է խորին համոզմունք լինի, որպէս զի մի մարդ ղտնի իւր ժամանակը, խաղաղութիւնը և փողը՝ ուրիշներին ծառայելու համար։

Ֆրանկլինը, արդարև, խորին հաւատ ունէր. բայց նա սովորական հաւատացեալներից չէր։ Թէև Բրիտասարդութեան ժամանակ,

աստուածաբանների կռիվները զզուացրել էին նորան հաստատուած դաւանութիւններից, բայց այստեղ ամենայնիւ նա ունէր իւր մէջ Քրիստոսի սէրը, ըստ որում նա մեռաւ իւր անկողնու մէջ, ձեռքին բռնած Քրիստոսի խաչը, որի վերայ ցոյց էր տալիս, ասելով. «Ահա նա, որ ուսուցել է մարդկանց սիրել միմեանց»: Նա դէիսիտ էր, այսինքն հետևող այն վերացական գաղափարին, որ տալիս էին մի այլ ժամանակ այնպիսի քրիստոնեային, որ չէր հաւատում հրաշքներին, բայց որ ընդունել էր իւր համար Աւետարանի բոլոր բարոյականութիւնը: Նորա վստահութիւնը դէպի Աստուած՝ շատ մեծ էր, նա խորին հաւատ ունէր դէպի հոգւոյ անմահութիւնը. նա հաւատում էր, որ Աստուած այս կեանքից յետոյ մարդուս աւելի երկար մէջոց կը պարգևէ իւր ընդունակութիւնները գործ դնելու համար, մի նոր կերպարանք և նոր կացարան տալով նորան:

Բայց Ֆրանկլինի հաւատի մասնաւոր յատկութիւնն այն էր, որ այս խորին համոզմունքի տէր լինելով, նա հարցրել էր իւրեան, թէ ի՞նչ երկրպագութիւն, ի՞նչ ծառայութիւն պէտք է մատուցանէր Աստուծուն: Նա շատ լաւ էր համարում, որ աղօթում են Աստուծուն, որ ծէսեր և արարողութիւններ կան, բայց նա ասում էր. այս չէ կրօնի էական նշանակութիւնը, և վկայութիւն էր բերում Աւետարանը, ուր Քրիստոս ասում է թէ՝ նա իւրեանց հաղաղաղ կը համարի ոչ թէ նորան, որ կը կոչէ «Տէր, Տէր», այլ նորան, որ կը կատարէ Աստուծոյ կամքը:

Իսկ Ֆրանկլինի համար, Աստուծոյ կամք կատարելը նշանակում էր մարդկանց սիրել. ընկերասիրութիւն, մարդասիրութիւն, եղբայրութիւն — այդ էր նորա միակ կրօնը և բոլոր հաւատը: Երբ նա իւր նմաններից մէկին օգնում էր, ինչպէս նա յայտնել է այդ մի շատ սիրուն նամակում, որ ուղղած է պարոն Վ. Պատիֆիլդին, նա չէր կարծում, որ պարտաւորում է մի անհատի, այլ որ վճարում է մի պարտք. ըստ որում, ասում էր նա, Աստուծոյ հովանաւորութիւնը իմ բոլոր կեանքի ընթացքում նեցուկ է եղել ինձ, և մարդկանց սիրելով միայն ես կարող եմ ցոյց տալ Աստուծուն իմ երախտագիտութիւնը: (Ծափահարութիւններ): Բացի այդ՝ ինձ օգնել են անթիւ մարդիկ, որոնց չեմ կարող ծառայութիւն մատուցանել, սա մի պարտք է, որ ինձ տուել են. պէտք է որ այդ պարտքը ես ուրիշներին վճարեմ:

Ֆրանկլինի համար սա մի այնպիսի հաստատուն գաղափար էր,

որ նորա թղթակցութեան մէջ գտնվում են երկու զանազան ժամանակ գրած նամակներ, որոց մէջ մի և նոյն միտքը երևում է ինքնորոյն ձևերով։

Մի Անգղեացի, դերի ընկած Ֆրանսիա Ամերիկայի պատերազմի ժամանակ, նամակով Ֆրանկլինից օգնութիւն էր խնդրում, գրելով նորան, թէ ինքը ցանկանում է Ամերիկա անցնել՝ մի որ և է վարժատան մէջ պաշտօն ստանալու համար։ Ֆրանկլինը պատասխանում է նորան. «Ես չեմ կարող խորհուրդ տալ ձեզ Ամերիկա գնալ, ես չեմ կարող խոստանալ ձեզ համար գտնելու այն պաշտօնը, որ ցանկանում էք. բայց եթէ դուք հինգ լուիդօրի փոխանակագիր ուղարկէք իմ անունով, ես խոստանում եմ վճարել։ Այն օրը, երբ դուք կարող կըլինիք այդ գումարը ինձ վերադարձնել, դուք այդ տուէք կարօտութեան մէջ գտնվող մի ազնիւ մարդու, որին դուք սոյն պատուէրը կը տաք, նա էլ միւսին, մինչև մի այնպիսի անազնիւ մարդ գտնուի, որ դրամը մշտապէս իւր գրպանը դնի (ծիծաղ)։ Այս եղանակով քիչ փողով մարդ կարող է շատ բարի գործ կատարել. պէտք է որ ծառայութիւնները բոլորի—շուրջ մատուցանուին, ըստ որում մարդկութիւնը մի ընտանիք է և բոլոր մարդիկ եղբայրներ են (բրավօ)։

Նորա միտքը այս էր։ Այս մարդը, որի մասին տարածուել է չափազանց խնայող անձի անուն,—ըստ որում այդպէս ասողները կարդացել են «Բարի Ռիչարդ» անուանուած գիրքը,—ընդհակառակն միայն մի պակասութիւն ունէր, և այդ այն է, որ նա շատ առատաձեռն էր. և հէնց նա ինքը մեզ պատմում է, թէ առանց իւր բարի կին Դէբօրային՝ նա երբէք փող չէր կարող յետ ձգել։

Նա պատմում է մեզ, որ մէկ օր լսելիս է եղել Վիտֆիլդ քահանայի քարոզը. հռչակաւոր մեթոդիստը քարոզում էր յոգուտ մի որբանոցի, որ ուզում էր հիմնարկել Ջիորջիա նահանգում։ Ֆրանկլինը չէր համակրում այս հաստատութեանը և վատ էր տրամադրուած դէպի հռետորը։ «Ես, ասում է Ֆրանկլինը, գրպանումս փոքր ինչ սև փող, չորս արծաթի դօլլար և հինգ ոսկեայ դրամներ ունէի։ Ահա մարդն սկսում է խօսիլ... սև փողս սորան կը տամ ասացի ինձ ու ինձ։ Յետոյ տես թէ ի՞նչպէս սկսեց նկարագրել իւր որբերի դրութիւնը. և ես ասացի ինձ, արծաթս էլ սորան կը տամ։ Վերջը՝ իւր վերջաբանութեան մէջ՝ նա մի այնպիսի նկարագրութեան հասաւ, որ ես ու իմ արևը, երբ այս փուչ կենդանին քարոզն աւարտեց, իմ

սև փողն էլ, արծաթն էլ, ոսկին էլ, բոլորն անցաւ Նորա ձեռքը»: (Բրավո բրավո):

Այս տեսակ մարդ էր ահա Ֆրանկլինը, բացի այդ՝ նա այնպիսի բնութեան տէր էր, որ ինձ շատ հաճելի է. որովհետև ես կարծում եմ, որ մենք մանում ենք քաղաքակրթութեան այն կարգի մէջ, ուր Ֆրանկլինի նման մարդկանց համար մեծ ասպարէզ է բացվում:

Հարիւր տարի առաջ խօսում էին ազնուականների և քաղաքացիների մասին, շատ քիչ էին խօսում գիւղականների և արհեստաւորների մասին: Այսօր խօսում են գիւղականների և արհեստաւորների մասին, և գլխաւորապէս խօսում են այն բանն ասելու համար, թէ գիւղացիք էս, երբ հողն իրանցն է, նոյնպէս քաղաքացիք են ինչպէս միւսները, և թէ արհեստաւորներն էլ ուրիշների պէս մարդիկ են, եթէ նոքա դրամագլխի տէր են, երբ նոքա խնայողութեան ոգի ունին. ուրեմն արհեստաւորների, քաղաքացիների, գիւղականների և ազնուականների մէջ եղած խտրութիւնները պետք է անհետանան. զանազանել պէտք է միայն բան գիտցող և աշխատող մարդուն ոչինչ չգիտցող և չաշխատող մարդուց: (Ծափահարութիւններ):

Ֆրանկլինը եղել է այն մարդու ամենագեղեցիկ տիպը, որ ինչպէս ասում են Ամերիկացիք, ինքն է իրան կազմակերպել, և երբ նա մեծացաւ, երբ դարձաւ իւր երկրի ներկայացուցիչը, Ամերիկայի դեսպան Ֆրանսիայում, չը մոռացաւ, որ արհեստաւոր է եղած. նա երբէք չը դադարեց սիրել և յարգել աշխատանքը:

Մի օր Նորա ներկայութեամբ փիլիսոփայաբար վիճում էին և քննում այն հարցը, թէ ինչ է մարդը: Իրաքանչիւրը առաջարկում էր իւր որոշումը: Ֆրանկլինն էլ առաջարկեց մի կարծիք, որ միւսներից վատ չէր: «Մարդը, ասաց նա, գործիք շինող անասուն է»:

Եւ իրաւացի էր Նորա ասածը: Ես չեմ ասում, որ միայն Նորա ասածն է գտնվում մարդու մէջ, բայց մէկ լաւ նայեցէք և տեսէք թէ ինչ բան է մարդը. նա ամենաթշուառ սարսած կը լինէր, եթէ չունենար բանականութիւն, միտք. այն միտքը, որ ազդում է մատների ծայրերի վերայ: Մտքի շնորհիւ մարդ ստեղծագործում է այն բոլոր հրաշալիքը, որ հիացնում է ձեզ այս դահլիճում. նորանով պաշտպանում է իրան բնութեան դէմ, պատերազմում է քաղցի և աղքատութեան դէմ, անդադար բարւոքում է իւր վիճակը: Ուրեմն շատ լաւ կարելի է սահմանել մարդուն այնպէս, ինչպէս Ֆրանկլինը—անասուն, որ գործիքներ է շինում:

Մի օր էլ Ֆիլադէլֆիա քաղաքում վիճաբանութիւններ կային: Դուք դիտէք դասակարգութիւնների ինչ լինելը. դոքա ստանում են այն անձանց արհամարանքը որոնք իրանցից բարձր են դասած և անց են կացնում այդ արհամարհանքը դէպի այն մարդիկը, որոնք ստոր են դասած: (Ծիծաղում են): Ֆրանկլինին առաջարկեցին ստորագրուիլ մի պարահանդիսի. «Դուք կունենաք» ասացին նորան, ընտիր հասարակութիւն, արհեստաւորներին թոյլ չի տրուիլ մասնակցելու»:

«Շատ երանելի բանէ, պատասխանեց նա, որ Աստուած Ֆիլադէլֆիայի բնակիչ չէ»: — Ինչո՞ւ համար: — «Նորա համար որ դուք նորան ևս կարգէլէիք մուտքը. չէ՞ որ նա արարչագործութեան ամենամեծ արհեստաւորն է»:

Այս հարուածը ներգործեց. արդելքը ոչնչացրին, ընդունելով արհեստաւորներին:

Ֆրանկլինը մինչև իւր կեանքի վախճանը հաւատարիմ մնաց այս մտքին: Այսպէս, օրինակ, երբ Ամերիկայից Ֆրանսիա էր գնում, իբրև Միացեալ նահանգների դեսպան, նա մի նամակ ստացաւ իւր հօրեղբօր որդուց, որ սապոն շինող էր, և նորան գրում էր իւր դրութեան մասին: «Ես շատ ուրախ եմ, որ դուք սապոն շինող էք», գրեց Ֆրանկլինը իւր պատասխանի մէջ, «Ֆրանկլինները առաջին սապոն շինողներն են եղել Ամերիկայումը. մենք մեր կնիքը և մեր դրոշմն ունինք: Հարկաւոր է մանաւանդ, որ ձեր սապոնը լաւ արժանաւորութիւն ունենայ: Երբէք չը պէտք է խաբել առնողին: Այդ սապոնից մի արկղ ուղարկեցէք իմ կնոջը, որ նա կարողանայ դնել 'ի ցոյց ամենքի. նա ձեզ նաղդ փող կուղարկի»:

Նա այս բոլորը բնական կերպով է ասում, առանց որ և է կեղծ մեծամտութեան: Նորա համար ազնուականութիւնը — աշխատանքն է. նա երբէք չի մոռանում իւր ազնուականութիւնը:

Պատերազմի ժամանակ, երբ նա իւր փառքի ամենաբարձր կէտին էր հասել, իսկ Ամերիկան, կարելի է ասել, թշուառութեան բարձրագոյն կէտին էր հասել, նա մի օր փարիզում, մի նամակ է ստանում իւր դուստր Սառայից, իւր սիրած Սէլլիից, ինչպէս ինքն անուանում էր, մի պատուական անձն, որ պարապում էր մանուգործ անելով՝ որ Ֆրանսիական զօրքերին օգնութիւն հասցնէ նորա զինուորների համար գուլբէք գործելով: Սառան որչափ որ համեստաբարոյ էր, այսու ամենայնիւ ցանկացաւ մի օր գեղեցիկ երևիլ: Գեներալ Վաշինգտոնը պէտք է Ֆիլադէլֆիա գար. ի պատիւ նորա՝ մի

պարանահանդէս պիտի տային. ամբողջ քաղաքը հրաւիրուած էր: Սառան իւր հօր վերայ մի նամակ գրեց, որով խնդրում էր ուղարկել իւր համար անկուածոյք և զարդի փետուրներ:

Ֆրանկլինը մի պատասխան գրեց, որ կարելի է բանականութեան և բարոյականութեան հայելի համարել:

«Դու, սիրելի՛ դուստր, զարդի փետուրներ և ծաղիկներ ես խնդրում ինձանից. չես իմանում, որ դորանով, աղքաթս խառնել ես»: Ուրեմն դու այլ ևս չէ՞ս մտնում, դու այլ ևս չէ՞ս գործում, իմ սիրելի՛ Սէլլի: Միթէ մոռացել ես, որ աշխարհիս երեսին՝ ախտից յետոյ՝ մեզ ամեն բանից թանգ պարապութիւնն է նստում: Դու ասում ես, թէ կը ցանկանայիր զարդարուիլ, որով ապացուցած կը լինէիր քո հօր ճաշակի նրբութիւնը: Բայց հօրդ ճաշակը այն է, որ այս թշուառութեան ժամանակ դու չը զարդարուիս: Ա՛խ ինչպէս քո հայրն է անում. թեզանիքներդ այնքան հագի՛ր, մինչև որ ծակոտուին, և այդ կերպով անկուածոյք կունենաս: (Ցիծաղ): Իսկ որ ինչ կը վերաբերի զարդի փետուրներին, եթէ կուզես, կարող ես շատ գտնել Ամերիկայի բոլոր աքաղաղների պոչերի վերայ»: (Կրկին ծիծաղ):

Դուք տեսնում է.ք ուրեմն Ֆրանկլինի մշտական դաղափարը. նա հին արհեստաւոր դոլով, հպարտ էր իւր այս ծագմամբը, իւր սկզբնական վիճակը պատուի տիտղոս էր նորա համար:

Եւ եթէ դուք ինձ թոյլ կը տաք մի մտածողութիւն անել, որ չեմ կարող զանց առնել, ես կասեմ, որ այն մարդը, որի տարօրինակ և սարսափելի մահուան դուժը նոր իմացանք, նմանապէս մի արհեստաւոր էր: (Շարժումն): Այն ձեռքը, որ աւելի քան չորս միլիոն արանց և կանանց աղատութիւնն ստորագրեց, այն ձեռքը փայտահատ ձեռք էր: Ահա Լինկօլնը պատմութեան դուռը մտաւ. ահա նախնի դարձաւ նա: Ո՞վ է այն թագաւորը, որ չէր ցանկանալ իւր ծննդաբանութեան մէջ դասել այդ մարդու անունը, որ սկսել է իւր կեանքը փայտ ճեղքելով: (Խորին շարժմունք, երեք անգամ կրկնվում են որոտալի կեցցէներ և ծափահարութիւն):

Բայց յիշեցնելով այսպիսի անուններ, ես չէի ցանկանալ առիթ տալ ձեզ մտածելու, որ իմ դիտաւորութիւնը հասարակութեան աւելի այս ինչ կամ այն ինչ դասակարգին շողոքորթել է: Ես միշտ ամենքին ասել եմ ճշմարտութիւնը. սա է իմ երկրին ծառայելու եղանակս: Եթէ Ֆրանկլինը, եթէ պարոն Լինկօլնը իրանց հայրենեաց այսպիսի մեծ ծառայութիւններ են արել, պատճառը

այն չէ, որ նոքա արհեստաւոր են ծնուել, այլ որովհետև կրթուել են, բառիս բուն նշանակութեամբ. որովհետև նոքա վսեմացրել են իրանց հոգին, որովհետև ուսումով, աշխատանքով, խնայողութեամբ նոքա սեփականացրել են իրանց լուսաւորուած միտք, ազնիւ սիրտ, և պատրաստուել են իրանց հայրենակցաց ծառայելու: (Կրկնուած ծափահարութիւններ): Ես միայն մի բան էի ուզում ասել, որ այս-օրուան օրս ծնուելու դիպուածականութիւնը ոչինչ չէ, մեր վիճակը մեր ձեռքին է. և այնպիսի հասարակութեան մէջ, որ այսքան միջոցներ է տալիս մեզ յառաջ գնալու, պսակը աւելի առաքինիներին, աւելի աշխատասէրներին, աւելի ընդունակներին է պատկանում: (Աշխոյժ ծափահարութիւններ):

Իսկ այժմ թոյլ տուէք ինձ մի վերջին խորհրդածութիւն, մի անձնական յիշողութիւն անել:

Քսան և հինգ տարի առաջ ես տառ ձուլող էի և մի փորձ էի պատրաստում աշխարհահանդիսի համար: Ես ուզում էի նմանիլ նախնիներին և մի այնպիսի նշանաբան գտնել, որ կարողանայի հատուածիս գլխին դնել: Դէպքն այնպէս բերաւ, որ ես այդ նշանաբանը մի սպանիական հին գրքում գտայ, ուր պատկերացրած էր պրբուբենի քսան և հինգ տառը, շուրջանակի դասաւորած հետևեալ վերնագրով «Vis bene conjunctis» (սոցա զօրութիւնը իրանց լաւ միաւորելումն է):

Սա տառ ձուլողի և տպագրչի նշանաբան էր, մի նշանաբան, որ իմ կարծիքով խորին ճշմարտութիւն է պարունակում իւր մէջ: Տառերը լաւ միաւորեցէք, և դորանից դուրս կը գայ մի գիրք, որ կը-վսեմացնէ հոգիները և մարդկութեանը կը ծառայէ: Տառերի միաւորութիւնը վատ կազմեցէք, դուրս կը գայ մի գիրք, որ հոգիները դէպի կորուստ կը տանէ և յեղափոխութեան խմոր կը դառնայ: Բոլորը, ուրեմն, լաւ միաւորութիւնից է կախուած:

Արդ ինձ թվում է, որ Ֆրանկլինը պէտք է յաճախ այս միտքը ունենար, երբ կանգնած իւր տառարկղի առաջ, գրաշարութիւն էր անում: Ես կարծում եմ մինչև անգամ, որ նա աւելի ևս հեռու պէտք է գնար, որովհետև եթէ այս միտքը ճշմարիտ է տառերի վերաբերութեամբ, նա աւելի ևս ճշմարիտ է մարդկանց նկատմամբ. նոցա ընտիր միաւորութիւնից է հետևում նոցա զօրութիւնը: Աղքատ երիտասարդներին գինետան մէջ անարդ մարդկերանց հետ միաւորեցէք և նոքա կրկորչին այդ վատ հասարակութեան մէջ: Ենթա-

դրեցէք, ընդհակառակը, որ նոցա միացնեն ազնիւ մարդկերանց հետ, մի լաւ գործի, մի ազնիւ նպատակի, միմեանց օգնելու համար, դուք կըտեսնէք, որ իւրաքանչիւրի միտքը կըճոխանայ, կըվսեմանայ և սիրտը կազնուանայ: Մարդը մի թուանշանէ. երկու մարդ միմեանց մօտ զետեղած, տասնապատկի արժողութիւն ունին. երեք մարդ՝ հարիւրապատիկը կարժէն, երբ նոքա միացրել են իրանց միտքը և բարի ցանկութիւնը: (Բրավո բրավօ):

Այն միտքը ապացուցանելու համար, թէ մարդիկ միաւորուելով միմեանց հետ, շատ բան կարող են գործել, ես զըոյցս չեմ աւարտիլ, առանց առաջ բերելու մի մարդ, որի անունը ես գտնում եմ ժողովրդական գրատուն հիմնարկուների մէջ. մի արհեստաւոր. որ այս տեսակ մատենադարանների գաղափարը առաջինը ունեցաւ, որ մի փոքր Ֆրանկլին էր, բայց փոքր Ֆրանկլինը, ինչպէս և փոքր ձուկը, կարող է մեծանալ:

Ես նորանից հրապարակապէս շնորհակալութիւն կանեմ և կարծեմ որ ամբողջ ժողովիս թարգմանը կլինիմ. ես շնորհակալութիւն կանեմ պարոն Ֆիրարից, որ երկու այլ արհեստաւորների հետ, որոնց անունները ափսոս որ չեմ իմանում, առաջինը եղաւ այս գրատունների հիմնադրելու գաղափարը ունեցողների մէջ, որոնք այսօր բարգաւաճում են և առիթ են տալիս մեզ այս բոլին միմեանց հետ ժողովուելու բաղդը և մի լաւ հիմնարկութեան, մի բարի գործի մասին խօսելու: (Ամենքի հայեացքները դառնում են դէպի Ֆիրարը և բոլորեքեանք ծափահարում են):

Եթէ Ֆրանկլինը այստեղ լինէր, կասէր ձեզ.«Արէք այնպէս, ինչպէս ես արեցի. քայլեցէք և յիշեցէք իմ այն օրուայ պատմութիւնը, երբ գրպանումս սև փող, արծաթ և ոսկի ունէի»:

Պէտք է խոստովանել, որ մենք Ֆրանսիացիքս ծլատ չենք, սակայն մենք դեռ ի միասին գործ տեսնելու սովորութիւն չունինք. ազնիւ ենք, որպէս անհատներ, բայց մենք շատ փոքր գործ ենք կատարում, որպէս ընկերութեան անդամներ: Ոչ միայն մարդ պէտք է իւր անունը տայ, այլ պէտք է տայ նաև իւր փողը, իւր գործակցութիւնը. պէտք է իւր գրացիներին անհանգստացնէ, իւր դրացուհիներին բեղարեցնէ և պէտք է համոզուի, որ բարեգործութիւնը միայն ծախսելով կարելի է անել. իսկ ամեն ծախսի համար փող է հարկաւոր:

Լաւ նկատեցէք...այս փողը, որ մենք խնդրում ենք, չէ նմա-

նում այն փողին, որ սովորաբար խնդրում են. մենք հարուստից փող չենք խնդրում աղքատին պարտաւորելու համար, այլ մենք խնդրում ենք, որ իւրաքանչիւրը տայ ըստ չափու կարողութեան, որպէս զի կարողանանք օգնել միմեանց: Մենք հետևում ենք Ֆրանկլինի փիլիսոփայութեան. նա չէր խնդրում, որ իրան օգնութիւն տային. նա հաց և կաթ էր ուտում, բոյց դարձեալ միջոց էր գտնում գրքեր գնելու: Իւր փոքրիկ քսակը իւր ընկերների փոքրիկ քսակների հետ միաւորելով՝ մէջը հարուստ դանձ էր գտնում:

Այս մենք այս օրինակին պէտք է հետևինք: Մենք մի սուրբ խաչամարտի համար պէտք է միանանք: Մենք երկու ստրկութիւն պէտք է բնաջինջ անենք Ֆրանսիայումը — տգիտութեան և աղքատութեան ստրկութիւնը: Մենք դաստիարակութեան զէնքով միայն կարող ենք պատերազմել. իսկ դաստիարակութիւնը միայն ընկերութեամբ կարող ենք ունենալ: Միանանք ուրեմն, ձեռք ձեռքի տանք, բոլորի սրտերը թող միաձայն զարկեն. յառաջ գնանք այս երկու թշնամիներին ոչնչացնելու համար. յառաջ գնանք, ընդունելով եղբութեան իսկական նշանաբանը, որ է.— Սիրենք միմեանց, օգնենք միմեանց...(Կրկնեալ կեցցէներ և շարունակ ծափահարութիւններ):

ՍԿԶԲՈՒՆՔ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԸՍՏ ՀԵՐԲԱՐՏԻ

Մինչև որ բարոյականութեան փիլիսոփայութիւնը (էթիկը) և հոգեբանութիւնը հիմք չընդունուին՝ չի լինիլ և գիտութիւն մանկավարժութեան: Եթէ կրթութեան նպատակը կամենում ենք գտնել, պէտք է բարոյագիտութեան դիմենք. վասն զի դժուար չէ հասկանալ, թէ կրթութեան նպատակը ընդհանրապէս մարդկային կեանքի նպատակի հետ սերտ կապակցութիւն պիտի ունենայ, որ բարոյագիտութիւնն է ուսուցանում: Իսկ եթէ կամենում ենք գտնել այն միջոցները և ճանապարհը, թէ ինչպէս կարելի է մանկական հոգին առաջնորդել դէպի այդ նպատակը, պէտք է միւս կողմանէ դիմենք հոգեբանութեան: Սա պէտք է ուսուցանէ մարդկային մտքերի, զգացմունքների և յուզմունքների ներքին շարժումները և այդ ներքին գործողութեանց օրէնքներով մեզ ճիշտ յայտնէ կրթութեան նպատակի յարմար երևոյթները զոյացնելու, պահպանելու և զօրացնելու եղանակները, իսկ արդելառիթ երևոյթները ոչնչացնելու կամ գէթ նոցա հեռացնելու և թուլացնելու հնարները:

Հէնց այդ երկու գիտութիւններն են, որոց մէջ Հերբարտը իւր անունն անմահացրեց. նա բարոյագիտութեանը և հոգեբանութեանը նոր և հաստատուն հիմք տուեց, որի վերայ մի շէնք կանգնեցնելը այլ ևս անհնարին բան չէ: Հերբարտը մի և նոյն ժամանակ իւր բարոյագիտական և հոգեբանական խուզարկութիւնները իւր մեծ և փոքր մանկավարժական գրուածքների մէջ ամենայն յաջողութեամբ գործադրեց, այնպէս որ դորա շնորհիւ մանկավարժութիւնը գիտութեանց շարքը մտաւ:

Բաւական է միայն յիշել, թէ կրթութեան ճշմարիտ նպատակը շատ մանկավարժներից և փիլիսոփաներից ճանաչուած է, բայց մինչեւի հերբարտը նոցանից ոչ մէկը չըկարողացաւ դէպի այդ նպատակը տանող ճանապարհները այնպէս ճիշտ և որոշ կերպով ցոյց տալ, ինչպէս այդ նոր փիլիսոփան և մանկավարժը նկարագրեց և գործով ցոյց տուեց։ — Հիներն ասում էին, թէ կրթութեան նպատակն է ի մաստուն մարդիկ յառաջ բերել, նորերը— թէ բարոյական բնաւորութիւններ պէտք է ստեղծել. նոյն մտքով, բայց ուրիշ խօսքով, այդ նպատակը համարվում է կատարեալ մարդ, գաղափարական մարդ, մարդկային յուզմանց և գործունէութեանց կատարելատիպ զարդացնելը։ Բայց բոլոր այս խօսքերի ընդհանուր նմանութիւնը այն է, որ ամենեքեանք բարոյականութեան իմաստով են գործ ածուած։ Ամենայն ժամանակ և ամենայն ազգ ունեցել է իւր բարոյականութեան գաղափարը. հիները կրթութեան մէջ ուրիշ գաղափար էին գործ դնում, նորերը ուրիշ։ Մեր ժամանակուայ ճիշդ և անպաճոյճ խօսքը գործ դնելով, պէտք է ասենք, թէ կրթութեան նպատակն է Քրիստոնէական Ոգին։ Ի հարկէ Քրիստոնէական Ոգին պէտք է հասկանանք այնպէս, ինչպէս որ Քրիստոսն ինքը մեզ այդ վարդապետել է և իւր կեանքով մեզ կատարեալ մարդու օրինակ է տուել։ Լոքքից և Կոմենիուսից սկսած մանկավարժութիւնը աւելի և աւելի ձգտում է հասնել իւր նուիրական նպատակին — բարոյական բնաւորութիւններ գոյացնելու նպատակին. բայց միջին դարերից սկսած, երբ ուսմունքների թիւը հետզհետէ շատանալ սկսուեցաւ ուսումնարանների մէջ, մարդիկ սկսեցին գլխաւոր նպատակը մոռանալ և առանձին ուշադրութիւն դարձնել տեսակ տեսակ ուսմանց առանձին նպատակներին, կամ այլ ևս ամենևին չըհասկանալով այն խնդրի ծանրութիւնը և կամ իրագործելու իբր թէ անդիմադրելի դժուարութիւնները աչքի առաջ ունենալով աւելի սիրով ապագային էին թողնում նոյնը իրագործելու։ Արդարև, հրաշալի գործ էր հերբարտի արածը, որ վերջապէս գտաւ իրագործելու եղանակը, որ վերջապէս հնարաւոր արեց ոչ միայն այն ուսմունքներից ոչ մէկը չըպակասեցնել, այլ և նոցա միջնորդութեամբ ամենափառաւոր կերպիւ գլխաւոր նպատակն իրագործել։ Թէ այդ ճշմարիտ կարելի է, մենք կը փորձենք համառօտ կերպիւ նկարագրել. և ի հարկէ մենք միայն ակնարկութիւններով կը բաւականանանք, որպէս զի աւելի խնդրի ամբողջութիւնը ըմբռնենք, քան թէ մանա-

ւորութիւնները, որոնց համար առանձին հատորներ պիտի գրէինք. մի և նոյն ժամանակ ենթադրում ենք, թէ ընթերցողն արդէն ծանօթ է մեր նախընթաց գրուածքների հետ, որոնք այս իսկ սկզբունքների վերայ են հիմնուած և մեծ օժանդակութիւն ցոյց կըտան սոյն յօդուածի բովանդակութիւնը լիովին ըմբռնելու:

Արդ ինչո՞ւ համար կրթութեան գլխաւոր նպատակը բարոյականն է, ի՞նչ յարաբերութիւն ունի բարոյականութիւնը ուսման հետ, և արդեօք ուսումն ու դաստիարակութիւնը իրարից տարբեր և անկախ գործողութիւններ են, ինչպէս որ սովորաբար մեզանում կարծում են:— Կրթութեան նպատակը որոշելու համար, մենք պէտք է լաւ ճանաչենք դաստիարակչի պաշտօնը մանկան առաջ: Դաստիարարակիչը մանկան ապագայի ներկայացուցիչն է, մանկան ապագայ կենաց պատգամաւորն է, և ուրեմն ինչ նպատակի որ նորա ձեռնասունը ապագայի մէջ՝ հասակն առած ժամանակ՝ ինքն իրան կը նուիրէ, դորա համար հէնց այժմ դաստիարակը պիտի հոգայ և վաղօրօք ճանապարհը թեթեւացնէ և հարթէ, ի նկատի ունենալով կեանքի պահանջները: Կեանքը մարդկանց երկու ճիւղ է կազում. մէկն է՝ կոչումն, որ ամենայն մարդու համար մի և նոյնը չէ, միւսն է՝ ընդհանուր մարդկայինը, որ ամենայն մարդու վերայ հաւասար պահանջմունք է դնում: Ապա ուրեմն դաստիարակչի ձեռնասունը ապագայի համար երկու նպատակ ունի, որոնցից մէկը լոկ պատահական է, որ կարող է կամ այսպէս պատահել կամ այնպէս, միւսը անհրաժեշտ կարևոր է, որ ինքը երբեք չէր վստահանալ անխնամ թողուլ, եթէ այնքան հասկացող լինէր և իւր կրթութիւնը իւր ձեռին ունենար:

Արդեօք մանուկը ո՞րպիսի պատահական նպատակներին կը դիմէ ապագայում, ո՞րպիսի ուսումնական, արուեստական կամ ընկերական շրջանում ամենայն յօժարութեամբ, սիրով, յաջողութեամբ և ճարպիկութեամբ կը ծառայէ, դաստիարակը վաղօրօք որոշել և դուշակել չի կարող. այս կողմից ուրեմն նորա պարտականութիւնը միայն այն կարող է լինիլ, որ իւր ձեռնասունին սպառազինէ քաղաքակրթութեան պահանջներին համեմատ՝ բազմատեսակ ձիրքերով, բազմակողմանի շրջահայեացքով, բազմակողմանի հետաքրքրութեամբ աշխարհիս թէ ներքին և թէ արտաքին հանգամանքների համար, կարճ ասել՝ ընդարձակ ընդհանուր զարգացմամբ:

Ուրիշ տեսակիցն է ի հարկէ միւս անպայմանն կարևոր նպատակը: Սա հէնց ի սկզբան կարծես սահմանուած է ամեն մարդու համար անխտիր, չընայելով նոցա տարբեր անհատականութեանց, նոցա յատուկ ընդունակութեանց և ընկերական դրութեանց վերայ: Կրթութեան այդ անպայման նպատակը ուրիշ բան չէ, եթէ ոչ մանկան ապագայ բարոյական բնաւորութիւնը: Այս կողմից ուրեմն նպատակը առաջուց յայտնի է, պարզ և անփոփոխելի է:

Եւ այսպէս մանուկը պէտք է հաւասարաչափ բազմակողմանի հետաքրքրուի արտաքին և ներքին աշխարհքի համար, բայց բարոյական բնաւորութեամբ պատկերանայ, որպէս զի այդտեղ իւր բոլոր հոգեկան զարգացումը ամփոփէ և վերջնական ներդաշնակութիւն ստանայ: Հետաքրքրութեան բազմակողմանիութիւնը մանկան պատրաստում է իւր մասնաւոր վիճակի համար, իսկ բարոյական բնաւորութեան զարգացումը ընդհակառակ նորա համաշխարհական վիճակի համար, և միայն այսպէս կարող են կատարուիլ վերև յիշած երկու պահանջն էլ:

Երկու պահանջ ասելով՝ գուցէ շատերին տեղիք ենք տալիս կարծելու, որ իբր թէ կրթութիւնը երկու նպատակ ունի և ոչ թէ մէկ. բայց այս սխալ եզրակցութիւն կը լինի: Մենք ասացինք, թէ մեր ներքին գոյութեան առաջին խնդիրը, մեր կեանքի առաջին սկզբունքը՝ պէտք է բարոյականութիւնը լինի. ապա ուրեմն բարոյական բնաւորութիւն զարգացնելը՝ կրթութեան առաջին և անդրժելի հոգսը պիտի լինի: Մի մարդու բնաւորութիւնը երևում է ոչ թէ նորա գիտութեանց, նորա զգացմանց մէջ, այլ նորա կամքի մէջ: Կամքը պէտք է լինի ուժեղ և եռանդոտ, բայց նա պէտք է և ուրիշ նշաններ ևս ունենայ. նա պէտք է իւր ձգտողութեանց մէջ հաստատ, անփոփոխ և անայլայլելի մնայ. այս անփոփոխութիւնը ուրիշ ոչինչ չէ, եթէ ոչ կամքի հաստատուն սկզբունքները. կատարեալ մարդը իւր գործոց մէջ միշտ երևում է մի և նոյն սկզբունքների տէր: Բարոյական մարդու սկզբունքները համաձայն են բարոյական նախադաղափարների հետ. սոցա հնազանդվում են մարդուս բարոյական դատողութիւնները և վճիռները: Բարոյական բնաւորութիւնը տէր և իշխան է կամքի, բայց ծառայ է բարոյական նախադաղափարների: Ուրեմն մինչև որ մարդս

աշխարհի մասին բարոյական ծանօթութիւն չունենայ, մինչև որ բարոյական նախագաղափարների համաձայն ազատ, ջերմ, պարզ և մեկին բարոյական դատողութիւն չունենայ աշխարհքի յարաբերութեանց մասին, նա չի կարող բարոյական բնաւորութեան տէր դառնալ: Բարոյական լինելու համար՝ մարդս պէտք է արտաքին և ներքին աշխարհքը ճանաչէ և ըստ այնմ գործէ:

Եթէ բաւական համոզեցուցիչ է, թէ կրթութեան միակ նպատակն է բարոյական բնաւորութիւններ զարգացնել, ապա շատ հասկանալի է, որ իւրաքանչիւր ուսմունք ուսումնարանի մէջ որպէս մի մաս, որպէս մի օղակ պիտի համարուի այդ զարգացման համար, և չէ թէ իրարից անկախ պիտի մնան և առանձին նպատակների ծառայեն, ինչպէս որ մեր ուսումնարանները այդ միշտ արել են և անում են:

Այն մարդիկը, որոնք այս հարցերի վերայ չեն մտածել, պիտի զարմացմամբ հարցնեն, թէ ի՞նչ յարաբերութիւն ունի բնագիտութիւնը, աշխարհագրութիւնը և մանաւանդ մաթեմատիքան բարոյականութեան հետ, ի՞նչ նմանութիւն և մերձաւորութիւն կարող են ունենալ նոքա բարոյականութեան հետ, երբ զոր օր. 2×2=4 ոչ բարոյական և ոչ էլ անբարոյական միտք է: Այսպիսի հարցմունքը որքան էլ որ սրամիտ երևայ, միայն մի նոր ապացոյց կը լինի, թէ բազմաթիւ մարդիկ «բարոյականութիւն» բառի հետ կապում են շատ անորոշ գաղափարներ: Եւ յիրաւի շատ քիչ մարդիկ կան, որ հասկանում լինին, թէ բարոյականութիւնը մարդուս մտքերի արդիւնքն է, թէ մարդս նոր մտքեր ստանալով, նոր յարաբերութիւններ է կապում աշխարհքի հետ, և թէ միայն այդպիսի յարաբերութիւնների մէջ է երևում մի մարդու բարոյական աստիճանը: Շատերը կարծում են, թէ բարոյականութիւնը ոչ թէ մտքի, ապա զգացմունքի ծնունդ է, ի հարկէ մի և նոյն ժամանակ կարծելով, իբր թէ զգացմունքը մի անկախ բան է մտքից, իբր թէ սոքա իրարից երկու տարբեր աշխարհներ են մարդուս հոգու մէջ. բայց այս ցոյց է տալիս, թէ նոքա հոգեբանութեան այբուբենի հետ ծանօթ չեն, ուր առաջին երեսներում որոշակի ապացուցանվում է, թէ ամեն զգացմունք՝ նոյն իսկ մտքերի ծնունդ է. այսինքն որպէս միտքն է, նոյնպէս և զգացմունքն է: Եւ այսպէս մենք վերջապէս պէտք է հաշտուինք այն գաղափարի հետ, թէ ամենայն ուսմունք, լինի սա մինչև անգամ մաթեմատիքան, որովհետև մարդուս միտքը ընդարձակում

է, կարող է և պէտք է բարոյականացնել, միայն թէ կատարեալ բարոյականութիւնը պահանջում է, որ ուսմունքներից ոչ մինը չըպակասի, և հոգեբանական օրէնքներով միմեանց հետ կապուին: Այս մասին շուտով դարձեալ կը խօսինք:

Մի երկրորդ սխալ գաղափար բարոյականութեան մասին քիչ չփոթ չէ ձգում մանկավարժութեան ասպարիզի մէջ, որով դուցէ շատ լաւ բացատրվում է, թէ ինչո՞ւ «բարոյականութիւն» բառը ատելի խօսք է դառել մեր իմաստակների համար: Շատ անգամ լսվում է, թէ բոպէին համեմատ խրատն ու քարոզը, պատիժն ու վարձատրութիւնը, գովեստն ու պարսաւը, կամ թէ մի քանի արտաքին սովորութիւնները՝ ինչպէս եկեղեցի յաճախելը, առաւօտ երեկոյ աղօթելը, հլու հպատակութիւնը, անպայման հնազանդութիւնը և այլն, կրթութեան ուղղակի միջոցներ են. այդ մարդիկը կարծում են, թէ միայն հատ հատ սրտի շարժումները կամ սրտի զրգիռները և կամ անցողական տպաւորութիւնները մարդուս բարոյականացնել կարող են: Կրօնական զրգիռներն անպամ (զոր օր. հանդէսները) չեն կարող այդ պաշտօնը կատարել, որ ինչպէս յայտնի է, ամենազօրեղ տպաւորութիւններից մէկն են և որ այդ պատճառաւ, ինչպէս պատմութիւնից յայտնի է, պիէտիստները (ֆրանկէն և ուրիշները) գործ էին ածում իրանց դաստիարակութեան մէջ: Եթէ մենք յիշենք, թէ ինչպէս կրօնական մտքերը և զգացմունքները մանկան հոգու մէջ հետզհետէ սաստկանում են, և ուրեմն հակառակ Ռուսսոյի (և ֆիլանտրօպիստների) կարծեաց՝ անշուշտ մանկան զարգացման սկզբնական մասերից մէկը պիտի դառնան, դարձեալ պիտի ասենք, թէ բարոյականութիւնն ու կրօնը երբէք չեն կարող մարդկային հոգին զարդարել, եթէ նոքա ամբողջ ուսման կաղմութիւնից անկախ և ինքնիշխան գործիչ պիտի դառնան, եթէ նոքա միայն սրտի զրգիռ, սրտի շարժում պիտի լինին, առանց մտքի հետ սերտ կապուելու: Նոյնը պէտք է կրկնենք աղգային ընտիր սովորութիւնների, ընտանեկան ընտիր սովորութիւնների, ուսումնարանի ընտիր սովորութիւնների մասին. սոքա ևս կրթութեան վերայ զօրեղ ներգործել չեն կարող, եթէ առանձնապէս ներգործել են ուզում, և երբէք այն դերը չեն կարող կատարել, ինչ որ կատարում է ուղիղ կազմակերպուած ուսումը: Մենք ներքև կը տեսնենք, թէ սոքա սուսմանհետի միասին կապուած,

այսինքն իբրև ուսման աջակից գործիք՝ այո, մեծ նշանակութիւն ունին բնաւորութիւններ (քարակտերներ) կրթելու մէջ, և ոչ թէ արտաքոյ նորա: Ընթերցողն ուշադրութիւնը հրաւիրում եմ նորա վերայ, թէ որ կողմից էլ որ սկսենք մեր խորհրդածութիւնները, դարձեալ վերջ ի վերջոյ կը գանք այն եզրափակութեան, թէ կրթութեան ամենազօրեղ ոյժը նոյն ինքն ուսումն է. ուսումն է հիմն կրթութեան, ուսումն է միջոց կրթութեան, առանց ուսման չկայ կրթութիւն: Բայց ի հարկէ ուսումը պէտք է անշուշտ կազմուած լինի հոգեբանական սկզբանց համաձայն: Մեծ հոգեբանական սխալ է, եթէ ոմանք կարծում են, թէ ուսումը և դաստիարակութիւնը այնքան տարբեր բաներ են իրարից, որ լոկ դաստիարակութեամբ կարելի է մարդուս կրթել, այսինքն՝ իբրև թէ առանց գործի հասկացողութեան՝ կարելի է գործելու կամք զոյացնել: Մենք վերև ակնարկեցինք, թէ ամենասրտաշարժ կրօնական ներգործութիւններն անդամ անհետ են կորչում, եթէ մանկան մտաւոր շը ջանը այդ բանի համար մեծ խնամքով պատրաստուած չէ, եթէ այսինքն ուսումը նախապէս հարկաւոր հասկացողութիւն չի տուել: Կրթութեան բարձրագոյն նպատակն է բնաւորութիւններ զարգացնել, այսինքն՝ որ մարդկային բարոյական-կրօնական նախագաղափարը, ճշմարիտ առաքինի քրիստոնէի նախագաղափարը՝ մատաղ սերնդի մտքի, սրտի և կամքի մէջ մի մնայուն կերպարանք ստանայ: Բայց դորա համար լոկ դաստիարակչական ներգործութիւնները բաւական չեն. դորա համար նախ և առաջ հարկաւոր է, որ մանկան մտքերը կանոնաւոր կերպիւ զարգանան, որպէս զի դոցա միջնորդութեամբ մանկան սրտի մէջ աշխոյժ հոգեկան կեանք շարժի: Ամենայն ուսումնարան այս կարող է ուսմամբ կատարել, չնայելով մանկանց ամենայն անհատական սահմաններին: Եթէ այդ հոգեկան զօրութիւնը պակասի մանկանց մէջ, եթէ նոցա կեանքի և աշխարհի վերայ ունեցած հասկացողութիւնը հարուստ չէ, չեն ունենալ ուրեմն և այն հիմքն ու արմատը, որով բարոյականութիւնն ու կրօնը արթուն են լինում սրտի մէջ: Այս հոգեբանական ճշմարտութիւնը միշտ զգացուել է, քանի որ մարդկութիւնը մանկավարժական սխալներ անելով դարձեալ ձգտել է դէպի լուսաւորութիւն:

Աւելորդ չի լինիլ մի քանի սխալ կարծիքներ ևս յիշատակել կրթութեան մասին, որոնք մանաւանդ մեծ հեղինակութիւն ունե-

ցող մարդիկներից են ծագում, այսինքն Ռուսսոից, Կոմենիուսից և աստուածաբաններից: Կրթութիւն բառը կարելի է ընդարձակ և անձուկ մտքով հասկանալ: Ընդարձակ մտքով է հասկացվում երբ դորանով ցոյց է տրվում այն ամենայն արտաքին տպաւորութիւնների գումարը, որ մարդուս վերայ ներգործել են, մանաւանդ նորա տեսական աշխարհաճանաչութեան վերայ և գործնական տրամադրութեանց այսինքն բարքի վերայ: Այս մտքով մարդուս կրթում են նորա փորձերը, նորա հաղորդակցութիւնքը, նորա ընթերցանութիւնքը, այն պատահմունքները, որ նորան, նորա ընտանիքին, նորա ազգին և նորա ժամանակին վիճակվում են. բայց այս բոլորը ցիրուցան և անկարգ ու անկանոն տպաւորութիւններ են, դոցա վերայ վստահանալ խոհեմութիւն չէ. փորձն ու պատահմունքը, ճշմարիտ է, շատ թանգագին խրատներ են, բայց շատ անգամ էլ շատ ծանր և ողբալի հետևանքներ ունին: Ով որ այսպիսի պատահական դիպուածքների մէջ մեծանալով, չի փնտրվում, գոնէ պարզ է, որ նա շատ խորտ ու բորտ, երկար ճանապարհով և վտանգալից ու չարաչար ճգնաժամներով կը հասնի նպատակին. որովհետև «եթէ կրթութիւնը (անձուկ մտքով) կանխապէս մի հող չի հերկում և չի մշակում, այն տեղ դէպքը և պատահմունքը շատ խոտ և տատասկ է ցանում»: Այժմ հասկանալի կը լինի մեծ և երևելի Ռուսսոի այն սխալ կարծիքը, երբ թէ կրթութեան նպատակի համար բնութիւնը պէտք է լինի առաջնորդող, այսինքն միանգամայն բնութեան պէտք է յանձնուի մանուկը, նորա պատահական դիպուածական ազդեցութեանց տակ պիտի մնայ մանուկը, և որքան այդ ազդեցութիւնները չըխանգարուին, որքան որ դաստիարակը բնութեան լսէ, այնքան արդիւնաւոր կը լինի կրթութիւնը: Բայց շատ հասկանալի է նմանապէս, թէ մանկական դիւրազգայ հոգու զարգացումը անկարելի է դէպքի և պատահմունքի վերայ ձգել, ընդհակառակն՝ առաջնորդող թելերը մի հասկացող և նախախնամող ձեռքի պէտք է յանձնուի, այսինքն մի կրթութեան, որ անձուկ մտքով ենք հասկանում և որը նախապէս ծրագրած շաւղով իւր որոշեալ նպատակին է դիմում և աշխատում է ամենայն ներգործութիւն հեռու պահել, ինչ որ իրան խանդարել կարող է. և որովհետև նա ամենազօրեղ բնութեան առաջ միշտ ընդդիմադրել չի կարող, ուստի մանկան մտաւոր շրջանը ընդլայնացնելով՝ դիմում է սորա ինքնագործունէութեանը, որպէս զի սա հետզհետէ ճանաչելով բնութիւնը՝ հետզ-

հետէ կարողանայ իւր գործունէութիւնը յարմարել նորա օրէնքներին։

Բայց մանկան մտաւոր շրջանը զարգացնելիս սխալ կը լինէր, եթէ ենթադրէինք, իբր թէ նորա հոգու մէջ արդէն ամփոփուած կան ի բնէ պարգևած կամ մկրտութեան շնորհքով գոյացած մի քանի սերմեր, որոնք ծլելու և ծաղկելու ընդունակ են, և մնում է, որ դաստիարակը գտնէ այդ սերմերը և պարտիզպանի պէս նոցա խնամքով պահպանէ և զարգացնէ։

Առաջին կարծիքը արդէն կոմենիուսը յայտնել է։ Բայց այդ վաղուց համարուած է մի հոգեբանական սխալ։ Ով որ այդ կարծիքը ընդունել է, միշտ վտանգի մէջ է ձգել մանկան զարգացումը. և շատ հասկանալի է, ըստ որում նա զարգացնելու ժամանակ միշտ անփոյթ պէտք է թողնէր զարգացման ամենագլխաւոր և ամենակարևոր պատրաստութիւնները և օժանդակութիւնները, լռելեայն ընդունելով, թէ այդ կամ բնութիւնը և կամ մկրտութեան շնորհքը արդէն իսկզբան անտի ունի մի անհատականութիւն, այսինքն այնպիսի հոգեկան նշաններ, որոնք միայն իրան են յատուկ և տարբեր են ուրիշներից, և այդ պատճառաւ կրթութեան ժամանակ զարգացումը այդ տեղից պէտք է սկսուի. բայց այս խօսքը սխալ չըպէտք է մեկնուի, իբր թէ անհատականութեան մէջ ամենայն բան պատրաստ կայ կրթութիւնը յաջողութեամբ տանելու համար և թէ հիմքը այնքան հարթուած է դաստիարակչի համար, որ նա ամենայն բան կարող է գոյացնել, ինչ որ ինքը ցանկանում է։ Մենք շատ անգամ ասացինք, թէ կրթելու ժամանակ մենք միշտ պէտք է դիմենք մանկան մտքերի շրջանին և նոցա բաղադրութիւններին, որտեղից որ՝ իբրև կենդրոնից՝ զգացմունքները և ձգտողութիւնները ծագում են։ Այժմ պէտք է աւելացնենք, թէ անհատականութիւնը այդ բոլոր բաների միմիայն մի փոքր աննշան մասն է, թէպէտ և ի հարկէ այն խորհրդաւոր մասը, որոյ մէջ մարդուս բուն զօրութիւնը ամփոփուած է և որը մեծաւորապէս գուշակեցնում է այդ մարդու ապագայ վիճակը ընկերութեան մէջ։ Միւս մեծագոյն մասը արտաքուստ ստացած տպաւորութիւնների արդիւնքն է, որ գուցէ դեռ արմատացած չէ և ուրեմն միշտ փոփոխական է։ Այսպէս մարդուս հոգու բնատուր նշանների հետ խառնվում են ստացական նշանները, նորա անհատականութիւնը կամաց կամաց ուրիշ կերպարանք է ընդունում։ Անհատականութիւնը մանկան հետ աճում է, և ուրեմն կրթութիւնը

կարող է և պէտք է իւրաքանչիւր անհատականութեան անհամեմատ շատ նիւթ տայ, քան թէ նորա մէջ սկզբնական ամիսփուաածից զարգացնել կարելի է: Այժմ տեսնենք, թէ այս սկզբնական ամիսփուաածն էլ ինչ տեսակ բան է: Պարզ է, որ մարդս առաջին բոպէին, երբ առաջին անգամ է բնութեան մէջ մտնում և մարդկանց մէջ խառնվում, չունի դեռ ոչ աշխարհածանօթութիւն և ոչ էլ միտութիւն կամ հակումն,—նա պէտք է երկուսն էլ նոր ստանայ. ուրեմն չունի այն սերմերը, որ Կոմենիուսը վարդապետում է. նա ունի միայն այն հողը, ուր այժմ պէտք է ցանուին այդ սերմերը արտաքուստ, նա ունի միայն ընդունակութիւն դիւրութեամբ կամ դժուարութեամբ ընդունելու այդ սերմերը: Կարծ՝ մենք ուզեցանք ասել, թէ առաջին միտքը մանուկը իւր հետ չի բերում աշխարհք, այլ ստանում է առաջին բոպէին աշխարհքից: Աստուածաբանների գաղափարին գալով, ի հարկէ պէտք է ասենք, թէ նա էս Կոմենիուսի վարդապետութեան պէս անճիշտ է, և ճշմարիտ է միայն փոխաբերական մտքով, այսինքն անհատական ունակութիւնները, որոնցից մի մասը մարմնի կազմութիւնից է ծագում, իսկ միւսը—մանկան տեղական և ընկերական դիրքից, միշտ կարող են զարգացումը կամ արգելել կամ օժանդակել, և ուրեմն նա, որ քրիստոնէական ընտանիքի մէջ է ծնում, այս հոգեբանական մտքով, մկրտութեան շնորհքով ստանում է բարոյական կրօնական ունակութիւն: Իւր ընկերական դրութեամբ նա այնպիսի կեանքի մէջ է մտնում, ուր քրիստոնէական ոգին արդէն տիրապետում է և որ անշուշտ նորա վերայ էլ կը տարածէ իւր աստուածային շնորհքը. ինչ գաղափարներ որ նորա չորս կողմը շրջում են, անշուշտ անջնջելի պիտի տպաւորուին նորա մանկական հոգու մէջ և պիտի օժանդակեն նորա զարգացմանը:

Եւ այսպէս՝ մենք տեսնում ենք, թէ որքան քիչ օժանդակութիւն ենք գտնում իսկզբան մանկան հոգու մէջ նորա զարգացման համար, թէ ինչ երկար, դժուար և զգոյշ շաւղով պիտի առաջնորդենք նորան, թէ ինչքան հեշտ է ամեն բոպէի շեղուիլ այդ շաւղից. մի և նոյն ժամանակ մենք տեսնում ենք, թէ միակ դուռը մանկան հոգու մէջ մտնելու համար՝ նորա մտաւոր շրջանն է, թէ միակ միջոցը մեր ձեռին՝ ուսումն է: Ապա ուրեմն ներելի է մեզ, որ մտաւոր շրջանի և ուսման մասին դարձեալ խօսինք փոքր ինչ, որպէս զի մեր գլխաւոր նպատակին աւելի արդեամբ ծառայել կա-

բողանանք: Մեր մանուկը բարոյական աշխարհածանօթութիւն պիտի ձեռք բերի, կեանքի մէջ մտնելու ժամանակ՝ նա պէտք է բարոյական բնաւորութեան տէր դառած լինի: Ինչպէս ասացինք՝ բնաւորութիւնը կամքով է երևում, իսկ կամքը ծագում է մտքերի բովանդակութիւնից: Մեր մտքերի դասաւորութիւնից և կապակցութիւնից է կախուած, թէ ինչ զգացմունքներ են ծագում մեր մէջ, ինչ ցանկութիւններ և բաղձանքներ են շարժվում մեր մէջ, ինչ վճիռներ ենք յայտնում: Արդեօք մենք մեր կամքի մէջ տատանվում ենք, երբեմն այս, երբեմն այն ցանկալով, կամ թէ՝ արդեօք մի հաստատ և անփոփոխ ոյժ է գոյանում մեր կամքի մէջ,—այս կախուած է մտաւոր շղթաների սերտութիւնից և ամրութիւնից, կապակցութիւնից և հիւսուածքից: Չկայ հաստատուն բնաւորութիւն՝ առանց մտաւոր հաստատուն միութեան և զօրութեան, չկայ միութիւն կամքի՝ առանց միութեան մտածողութեան: Ով որ կամենում է մի ուրիշի կամքի վերայ հաստատապէս ազդել, նա աշխատում է նորան այս ինչ գործի անհրաժեշտ կարևորութիւնը համոզել. նա չի կարող վստահանալ ուրիշի տրամադրութեանց և զգացմանց վերայ, ապալոկ միայն մտքերի անփոփոխութեան վերայ: Մենք գիտենք, որ ուսումն է զարգացնում մտքերի շրջանը, ուստի և նա է կրթութեան գլխաւոր միջոցը. դաստիարակչի ձեռին ուսումը մի միջոց է կամք զարգացնելու համար:

Ուսումը նախ և առաջ տալիս է այնպիսի ծանօթութիւններ, որոնք անշուշտ կարևոր են կամք գոյացնելու համար: Իսկ այդ ծանօթութիւնները կարող են անհետաքրքիր լինիլ, քանի որ նոքա մեռած պաշարքի պէս դիզվում են մարդուս գլխի մէջ, քանի որ նոքա կամքի նիւթ չեն դառնում: Արդ ի՞նչպէս կարող է մի գիտութիւն, մի ծանօթութիւն կամքի մէջ մտնել: Նա պէտք է մեզ մի տեսակ սիրելի եղած լինի, մեր աչքի առաջ արժէք ստացած լինի, մեր սիրտը ջերմացրած, մեզ ոգևորած. նորա ազդեցութեամբ մեր մէջ ձգտողութիւն պէտք է ծագի՝ իմացածը անմոռաց պահպանել, հետզհետէ ընդարձակել և տեղն եկած ժամանակ գործ դնել, մեր իմացածից գործելու ձգտողութիւն պէտք է բղխէ. մէկ խօսքով՝ մենք պէտք է նորանով հետաքրքրուինք: Ապա ուրեմն կրթողական ուսման պարտքն է, մանկանց միտքը չի թէ գիտութիւններով լցնել, ապա նորա մէջ հետաքրքրութիւն շարժել, գիտութիւնը հետաքրքրութեան առարկայ շինել: Նա

պէտք է աշխատէ ոչ թէ անշարժ զիտութիւններ ժողովել, ապա մանկան գործունէութիւնը և աշխոյժը զարթեցնել և զրաւել: Այսպիսի հետաքրքրութիւնը շատ տեսակ ուղղութիւն կարող է բռնել, որոնց գլխաւորապէս հետևեալ վեց կարգի մէջ կարող ենք ամփոփել: Նա կարող է երևիլ որպէս սոսկ հարցասիրութիւն (էմպիրիքական ինտերես), որպէս մտածողութիւն՝ հիմք և ներքին կապակցութիւն գտնելու համար (սպեկուլատիվական), որպէս կենդանի զգացմունք գեղեցկութեան համար (էսթէտիքական), որպէս կարեկցութիւն մարդկային ուրախութեանց և ցաւոց համար (էթիքական), որպէս մասնակցութիւն մարդկային ընկերութեանց, ազգաց և տերութեանց զարգացման մէջ և մանաւորապէս որպէս հայրենասիրութիւն (սոցիալական). Նա կարող է վերջապէս իւր հայեացքը վեր դարձնել և Աստուծոյ նախախնամութիւնից կախումն ճանաչելով՝ որպէս բարեպաշտութիւն երևիլ (կրօնական): Կրթողը հետաքրքրութիւնը չը պէտք է դարձնէ միայն մէկ կամ միւս ուղղութեան. նա այս գլխից չը պէտք է որոշէ մանկան ապագայ անելիքը, ապագայ պաշտօնը. նա պէտք է հաւասարաչափ թեթևացնէ ամենայն նպատակի ծառայելը, որին որ մանուկը ապագային կը դիմէ: Հետաքրքրութեան այսպիսի բազմակողմանիութեան մէջ՝ ապագայ մարդը բարոյական խարիսխ և պաշտպանութիւն պիտի գտնէ իւր խուռն կրքերի և անմիտ ցանկութիւնների բռնութեանց դէմ. նախ և առաջ դա պէտք է ազատէ նորան այն մոլութիւններից, որոնք պարապութեան և անգործութեան հետևանք են. դա պէտք է նորան զինաւորէ բախտի փոփոխութեանց դիմանալու համար, որպէս զի ամենայն առաքինութեամբ կարողանայ տանել, ինչ որ անդառնալի է. դա պէտք է կեանքը վերստին սիրել տայ, եթէ կեանքի մի ողբալի բերմամբ որևիցէ կողմից մի զրկանքի հանդիպեցաւ. դա պէտք է նորան ընդունակութիւն տայ մի նոր վիճակ գտնելու, եթէ հնից դուրս է մղուած. դա պէտք է նորան այն կէտի վերայ բարձրացնէ, որ տեղից որ անցողական բախտը կամ յաջողութիւնը երևումէ որպէս մի դիպուածական բան և չի կարող մեր ներքին աղնիութիւնը խախտել. նորա առաջ միանգամայն անարատ և վսեմ պիտի մնայ բարոյական բնաւորութեան նշանակութիւնը:

Եթէ մենք ոչ թէ զիտութիւն, ապա հետաքրքրութիւն ենք պահանջում, ոչ ոք կարող չէ կասկածել, իբր թէ դորանով զի-

տութեանց արժէքը նուաստացնում ենք. հետաքրքրութեան շնորհքն է, որ մարդս չէ թէ վեր ի վերոյ գիտեցող կամ մինչև անգամ տգէտ է մնում, այլ հիմնաւոր ուսում է ստանում: Բայց մենք պահանջեցինք բազմակողմանի դիտութիւն: Չէ՞ որ մեր այժմեան ուսումնարանների ցաւն էլ հէնց այդ է, որ նոքա շատ բան են ուսուցանում, բայց ոչինչ կանոնաւոր կերպիւ. որ նոքա ցրվում են մանուկների մտքերը, և անընդունակ են անթերի բարոյական բնաւորութիւններ զոյացնել. չէ՞ որ շատագէտ, բայց սակաւագործ մարդիկ մեր ուսումնարաններն էլ տուել են. չէ՞ որ մեր մէջ ամենայն մարդ ամենայն բան կամենում է գործել, չէ՞ որ աշխատանքի բաժանում առանց այդ էլ չենք իմանում, ոչ ոք ուրիշն հասկանալ չի կարողանում, ամենայն մարդ ուրիշի գործերի մէջ խառնվում է՝ առանց իւր յատուկ գործը կատարելու:

Մենք չենք պահանջում, որ մարդիկ բազմազբաղ լինին, որ նոքա ցրուեն, մենք չենք պահանջում բազմակողմանիութիւն կամքի և գործի մէջ, մենք միայն պահանջում ենք, որ հետաքրքրութիւնը լինի բազմակողմանի: Ընկերութեան մէջ պահանջվում է, որ զանազան մարդիկ զանազան կամք և գործք ունենան, այս տեղից է ծագում աշխատանքի բաժանման սկզբունքը. բայց հէնց այս սկզբունքի առաջին պայմանն է, որ մէկ մարդը միւսից շահուի, որ մէկը միւսին համակր է, որպէս զի աշխատանաց արդիւնքը ապարդիւն չը կորչի: Մարդը մէկ բանի մէջ գործող հանդիսանալով, պէտք է ամենայն բանի համար էլ սիրտը բաց պահպանէ, ամենիցն էլ մի մի բան ընդունել կարողանայ. ակնկալութիւնը փոխադարձ պիտի լինի: «Բոլորեքեանք պիտի հասկացող լինին բոլոր կողմերի համար, իւրաքանչիւրը ճարպիկ լինի միայն մէկ գործի մէջ»: Քանի որ ընկերական վիճակը սպառնում է մարդուս հետաքրքրութիւնը միմիայն մէկ կէտին դարձնելու, այնքան աւելի պէտք է ճգնէ կրթութիւնը, որ կարողութեան չափ բազմակողմանի հետաքրքրութիւն շարժէ մանկան մէջ: Բայց այդ չէր վերջին նպատակը: Կրթութեան իսկական նպատակը բարոյական բնաւորութիւն զարգացնելն էր: Բնաւորութիւնը ամբողջ անձնաւորութեան արտայայտութիւն է, ապա ուրեմն մի անձի միութիւնը չը պէտք է կորչի հետաքրքրութեանց բազմութեան մէջ: Այս հետաքրքրութիւնները պէտք է մի և նոյն անձի զանազան կողմերը ներկայացնեն. մանուկը պէտք է ամբողջութեամբ լինի, ինչ որ նա է, ամբողջու-

թեամբ գործէ, ինչ որ գործում է: Ամենայն բան, ինչ որ նորա ոգու բովանդակութիւնն է կազմում, պէտք է սերտ կապուած ամբողջութիւն կազմէ, ինչ որ նոր է ընդունում, բազմակողմանի կերպիւ պէտք է հիւսուի և բաղադրուի եղածի հետ: Այս թէ ոչ նոքա անձնաւորութիւն զարդացնելու վերայ չեն ազդիլ և ապարդիւն ծանրութիւն կը լինին կրթութեան համար:

Որպէս զի հետաքրքրութիւնը բազմակողմանի շարժուի, պէտք է ուսումը այնպէս նեղ կապմուած չլինի, ինչպէս որ մեզանում սովորութիւն է եղած: Ամենայն յարմար զբաղմունք, որ մանկան մտաւոր շրջանը ընդարձակում է, որ նորա մասնակցութիւնը կրօնի, գիտութեան, արուեստի, բնութեան և ընկերութեան համար զարթեցնում, կենդանացնում և լուսաւորում է. ամենայն բան, ինչ որ օժանդակում է նորա կամքը զօրացնելու և մաքրելու, նորա տրամադրութիւնը աղնուացնելու, նորա բնաւորութիւնը հաստատացնելու, — այս բոլորը ուսման շրջանը պիտի մտնի: Եւ ուրեմն ուսումը չի սահմանափակուիլ լոկ միայն գրքի, աշխարհացուցի և գրատախտակի մէջ. դասատան չորս պատն էլ նեղ է նորա համար. թանգարանի, արուեստանոցի, գործարանի, դաշտի և արտի մէջ ևս նա ցանկալի հիւր պիտի լինի: — Եւ որպէս զի բազմակողմանիութեան մէջ անձնաւորութեան միութիւնը պահպանուի, ուսումը պէտք է քաջ յարմարուի հոգու զանազան գործողութեանց սերտ և փոխադարձ յարաբերութեանց հետ: Չին հոգեբանութիւնը մարդուս հոգու մէջ ընդունում էր շատ տեսակ իրարից անկախ ունակութիւններ, այս հիման վերայ ծագեցին շատ ուսմունքների անկախ դասատուութիւնը: Իւրաքանչիւր առարկան մի տեսակ մտքերի շղթայ էր զարդացնում, միանգամայն անփոյթ թողնելով, թէ մի երկրորդ, երրորդ կամ չորրորդ դասը ինչ էր մէջը աւելացնում, պակասեցնում, խանգարում կամ օժանդակում: Այս պատճառաւ գիտութեան մեծ մասը մնում էր մեռած, սիրտն էլ դատարկ: Ընդհակառակն ուսումը պէտք է լինի կրթողական, որ զանազան ուսմանց մէջ մի ներքին կապ և կազմ է հաստատում: Ուսումը կրթողական է նախ՝ երբ նա ճարտար բաղադրութեամբ ուսման առանձին առանձին ճիւղաւորութիւնների մէջ մի ներքին և սերտ կապ է հաստատում. երկրորդ՝ երբ նա զանազան գլխաւոր հատաքրքրութիւնները, այսինքն՝ էմպիրիքական, սպէկուլատիվական, էսթէտիքական, էթիքական, սոցիալական և կրօնական հետաքրքրութիւնները՝

իւրաքանչիւրն առանձին խնամում և նոցա մէջ հարկաւոր հաւասարակշռութիւն է պահպանում. և վերջապէս երրորդ՝ երբ նա գիտէ ամենայն գիտութիւն և կարողութիւն՝ որպէս բարոյական բնաւորութիւն զարգացնելու համար միջոց գործ ածել:

Ուսումն սկսելուց առաջ, մենք տեսնում ենք, որ մանկան հոգու մէջ մտքերի և գաղափարների մի հարուստ գանձ կայ արդէն ամփոփուած, որ յետոյ ուսման ժամանակ և երբեմն առանց սորա օժանդակութեան՝ անդադար ընդարձակվում է: Ո՞ր տեղից է այս գանձը և դարձեալ ի՞նչ տեղից պէտք է աւելի ընդարձակուի: Ո՞րն է եղել աղբիւրը, որպէս զի դարձեալ նորան դիմենք, կամ եթէ նա մեզ բաւական չէ՝ գոնէ մի ուրիշը գտնենք: Այն մտքերը և գաղափարները մասամբ ծագում են հաղորդակցուելով ծնողների, ազգականների, ընկերակիցների և ուրիշ մարդիկների հետ, մասամբ էլ մեզ շրջապատող բնութիւնից: Այս երկու աղբիւրը, մին՝ հաղորդակցութիւն — շնչաւոր էակների հետ. և միւս՝ փորձ — որով բնութիւնը ճանաչվում է, մարդկութեան զարգացման միակ աղբիւրներն են եղել. մանկան առաջին տարին դոցանով է զարգացել, այսուհետև էլ միայն դոցանով կարող են զարգանալ նորա միւս տարիքը: Մի աղբիւրից ծագում են միտութիւնները և զրամադրութիւնները դէպի մարդիկ, միւսից՝ բնութեան մասին տեղեկութիւնները: Դոքա են մանկան մտաւոր շրջանի գլխաւոր ճիւղերը. ապա ուրեմն դոցանով էլ պիտի որոշուին ամենայն սկզբնական կրթութեան գլխաւոր ուղղութիւնները, այսինքն պատմական և բնագիտական կամ բարոյական և իրական ուղղութիւնները: Հապա ո՞ր մնացին միւս գիտութիւնները, կը հարցնի ընթերցողը: Եթէ մեր ասած երկու ուղղութիւնները մանկան բոլոր մտքերի կենտրոն կը դառնան, միւս ուսմունքները ինքն ըստ ինքեան պիտի բղխեն այդ տեղից: Եթէ ուսումը ուղղում է կրթողական ուսում դառնալ, նա պէտք է աշխատէ, որ ամենայն տեղեկութիւն՝ ինչ որ փոքր ինչ մանկավարժական արժանաւորութիւն ունի և ինչ որ արժան է մանկան մէջ հոգեկան ոյժ դառնալու՝ չթողու առանձնապէս և արտաքոյ այն երկու ուղղութիւնից, չմոցնի մտքի մէջ անկախ կամ միակողմանի գերազանցութեամբ, այլ ուսման այն երկու ճիւղաւորութեանց մէջ այսպէս կամ այնպէս թափանցած՝ նոցա հետ կապէ, նոցանից բղխեցնէ: Աշխարհագրութիւնը գիտենք որ ամենասերտ կերպով կապուած է երկու ճիւղաւորութեանց հետ հաւասարապէս,

բայց և ամենայն լեզուական, մաթեմատիքական, բարոյական և կրօնական խնդիրները, ամենայն բան, ինչ որ սրտի մէջ առակով կամ երգով պիտի արմատանայ, այս ամենը այն երկու աղբիւրից ուղղակի պէտք է բղխէ: Ուրիշ բոլոր ճանապարհները, զոր օր. սովորական ուսումը իւր անկախ գիտութիւններով, անհաստատ են, թիւր և թերի են. այդպէս մանկան հոգու մէջ չի տիրապետիլ այն, ինչ որ պէտք է տիրապետել էր, ամենայն բան կըմնայ խառն ի խուռն և ցիրուցան, ամենընտիր գիտութիւնները և արուեստները ապարդիւն կը մնան և մանկան ճշմարիտ սեփականութիւն չեն դառնալ: Եթէ մենք մտքի համար երկու աղբիւր ցոյց տուինք, չըպէտք է մոռանանք, որ մարդս ի մանկութենէ միշտ հակում է թէ դէպի մարդը և թէ դէպի բնութիւնը՝ առանձին յարաբերութիւններ կապելու, և այդ կապն է այն, ինչ որ բարք է կոչվում, որ և յետոյ մարդուս բոլոր մտքերի վերայ իշխող է հանդիսանում, ուստի շատ բնական է, որ ուսման ժամանակ բարոյագիտական նիւթերը աւելի նախադաս տեղ են բռնում, քան թէ միւս նիւթերը, ինչպէս որ արդէն կրթութեան նպատակն ևս մեզ այդ յորդորեց: Այս մտքով ուրեմն բնութեան քննութիւնը պէտք է միշտ ստորադրեալ մնայ, չնայելով նորա ինքնակախ սկզբունքներին: Մենք ներքև ցոյց կըտանք, թէ այս ստորադրութիւնը չը պէտք է այնպէս հասկանալ; իբր թէ մէկը միւսի վերայ պիտի գերազանցէ, այլ միմիայն նիւթի ընտրութեան մտքով կարող է արդարանալ այդ ստորադրութիւնը. այսինքն աչքի առաջ ունենալով, որ բնագիտական նիւթը խիստ ընդարձակ է և որտեղից որ նորա ուսումը սկսենք, մեզ համար միևնոյնը պէտք է լինի, ուստի հգեբանական օրէնքներով միանգամայն օգտաւէտ է, որ ամենայն աստիճանին բնագիտութեան այն մասերը ուսուցանուին, որ մասերը որ անմիջապէս հարկաւոր են բարոյագիտական ուսմանց համար: Ասհասարակ մանկավարժական քննութեանց մէջ, մեծ զգուշութիւն են պահանջում գաղափարների թուերը, նայելով թէ որ կէտից է ծագում քննութիւնը: Այսպէս մենք հէնց այս բոպէին տեսանք, որ երբեմն մէկ և երբեմն երկու կլիսաւոր գաղափարի հետ ունինք գործ: Դժուար չէ ցոյց տալ, թէ մի ուրիշ կէտից նայելով, մենք մինչև անգամ երեք գաղափար ունինք. Հաղորդակցութիւնն ու փորձը մեզ ի հարկէ տալիս են նախ երկու առարկայ ծանօթութեան համար, այսինքն մարդ և բնու-

թիւն, բայց ոչմ յայտնի չէ, որ այդ երկու աղբիւրներից բղխում է նաև մի երրորդ ծանօթութեան առարկայ, միանգամայն տարբեր երկու յիշեալներից, այսինքն «Աստուած», ինչպէս մենք մեր նախընթաց գրուածքների մէջ շատ անգամ այդ կրկնել ենք: Որպէս զի այս շփոթութիւններից զերծ մնանք, կարգով շարենք այդ թուերը միասին: Կրթութիւնը մի նպատակ ունի (բարոյականութիւն), երկու աղբիւրից է քաղում իւր նիւթը (հաղորդակցութիւնից և փորձից), որ իրարից անկախ երեք ծանօթութեան առարկաներից է բաղկացած, (մարդուց, բնութիւնից, Աստուծուց), հաւասարապէս շարժելով մարդուս վեց յայտնի հետաքրքրութիւնները:

Այս թուերը ակներև ապացոյց պիտի լինին, թէ որքան դժուար և բաղադրեալ գործ է ուսումը, թէ ինչպէս հեշտ է երբեմն ուղիղ ճանապարհից շեղուիլ, թէ ինչ ճարտար և արուեստական կազմակերպութիւն պիտի ստանայ կրթողական ուսումը, որպէս զի հարուստ հոգեկան կեանք դոյացնէ, որ անհրաժեշտ կարևոր է բարոյական-կրօնական բնաւորութիւն զարգացնելու համար: Այդ կազմակերպութիւնը երկու տեսակ աշխատանք է պահանջում. նախ՝ պէտք է մանկան պատրաստի եղած մտքերի շրջանը իւր երկու գլխաւոր ճիւղաւորութեանց համաձայն այնպէս մշակուի, որ իւր եղած սահմանների մէջ կարգաւորուի, լրացուի և ուղղուի. երկրորդ՝ այդ սահմանից դուրս նոր շրջաններով ընդարձակուի:

Այդ երկու գործողութիւններից առաջնին գալով, ամենևին չպէտք է կարծենք, իբր թէ մանկան մտքերը շուտով կը կարողանան տրամաբանական դաղափարներ դառնալ՝ բարձր ուսումնական պահանջներին համաձայն կամ թէ բարձր զարգացման համար: Մեր պահանջը պէտք է լինի, որ մանկան մտքերը գոնէ հոգեբանական դաղափարների աստիճանին հասնեն, որ նա գոնէ իւր հասկացողութեան չափ խելամուտ լինի իւր մտածածի մասին, որ գիտակցութեամբ մտածէ նախ և առաջ իւր հասկացողութեան սահմանում, վասն զի այս է առաջին պայմանը բարձր զարգացման կամ ճիշդ ուսումնական մտածողութեան համար:—Մի մանուկ, որ Տփխիսից Մոսկվա գնալով այն տեղ Москва-рѣка թարգմանում է Մոսկվա-քուռ, նա ոչ միայն չգիտէ, թէ ինչ է գետը ընդհանրապէս, այլ և թէ մեր Քուռը յատուկ անուն է. քանի որ առաջ նա գետ էր տեսնում, նա լսում էր քուռ. Մոսկվայի

մէջ գետ տեսաւ՝ նորան էլ անուանեց քուռ. լսածն ու տեսածը, աչքի և ականջի տպաւորութիւնները կապուել էին արտաքուստ. այդպէս դոյացրեց նորա մէջ սխալ միահամուռ տպաւորութիւններ:—Ամերիկացին, երբ առաջին անգամ սպիտակ Եւրոպացուն ձիու վերայ նստած տեսաւ, նա բացագանչեց՝ «սա մի աստուած է վեցոտանի», որով ապացուցեց ոչ միայն թէ իւր օրումը ձի չէր տեսել, ոչ միայն թէ մի կենդանի բարձր արարած է համարում քան թէ մարդը, այլ և թէ մարդն ու կենդանին միասին մի անբաժան մարմին է: Այս մի ուրիշ տեսակ միահամուռ տպաւորութիւն է, որ միայն աչքն է ստացել: Երբ որ Ամերիկացին սպիտակ մարդուն ձիուց վեր եկած տեսաւ, այն ժամանակ միայն իմացաւ, որ մի կողմից իւր նման մի մարդ, միւս կողմից մի անծանօթ չորքոտանի է կանգնած, և այսպէս իւր միահամուռ տպաւորութիւնը հոգեբանական գաղափար դառաւ. տրամաբանական գաղափար կստանայ, երբ նա կիմանայ, թէ մարդիկ ոչ միայն իրանց դոյնով, այլև հոգեկան զարգացմամբ, ազգաւ և ցեղով, տեղով և կլիմայով զանազանվումեն, թէ նոքա բարձրեն քան ամենայն ուրիշ արարածները, թէ ձին ոչ միայն չորքոտանի է, այլ և կաթնակեր, ջերմարիւն, միասմբակ կենդանի և այլն: Գուցէ այժմ հասկանալի լինի, եթէ մենք ասենք, թէ մանուկները իսկզբան հոգեբանական գաղափարների փոխարէն ունին լոկ միայն միահամուռ մտքեր, այսինքն խառն ի խուռն մտքերի անկարգ, անկատար, պղտոր դիզուածքներ: Այդ տեղ իւրաքանչիւր միտքը դեռ խնամքով չէ ջոկուած միւսից, հապա միմեանց շփոթում և խառնումեն, մինը միւսին մթնեցընում, խաւարեցնումէ: Այդ տեղ դեռ չկայ շղթայաձև կարգ: Երբեմն ամենաշօրեղ տպաւորութիւնները, զոր օրինակ գոյների, անունների տպաւորութիւնները, մինչև անգամ բոլորովին զիպուածական, աննշան մտքերը աւելի դերազանցութիւն են ստանում, քան թէ միւս հարկաւոր մտքերը, քան թէ զոր օրինակ կերպարանքի գաղափարը: Ուղիղ և կանոնաւոր խորհրդածութիւնը շատ անգամ ծռվումէ, որովհետև մէջը առանց հարկաւորութեան սպրտումէ որ և իցէ արտաքին և չնչին միտք: Այսպէս է բացատրվում, թէ ինչու երբեմն մանուկը իւր ծանօթ շրջանի մէջն էլ անկատար և սխալ հասկացողութիւն է ցոյց տալիս, իսկ երբեմն անընդունակ է լինում մտաւոր շղթաների բազմութիւնը, զոր օրինակ պատմելու ժամա-

նակ, կանոնաւոր կերպիւ կապել և տիրապետել, կամ թէ ճիշդ որոշել մի բառի հնչիւնները: Եւ ուրեմն անհրաժեշտ հարկաւոր է, որ ուսման միջնորդութեամբ՝ մանկան պատրաստի ունեցած մտաւոր շրջանը իւր սահմանի մէջ կարգով մշակուի, իւրաքանչիւր միտքը միւսներից զատուի և լրացուի, և այսպիսի առանձին հասկացողութիւնները հաւասարակշռուին, իսկ մտքերը ուղիղ շղթայաձև, կապակցութիւններով և միաւորութիւններով լիակատար զննութիւններ դառնան և հետզհետէ աւելի ընդարձակ և կարգաւոր խմբակցութիւններ և համակարգութիւններ (սիստեմներ) կազմեն: Այս է այն ուսումը, որ Պեստալոցցու ժամանակից զննողական ուսումէ կոչվում, դոնէ նորա ճիշդ նկարագիրը այս է: Նկատել արժանի է, որ այստեղ այնքան չպէտք է աշխատենք, որ մանկան նոր նոր մտքեր աւանդենք, որքան որ վերլուծենք նորա ունեցած մտքերը: Ուստի աւելի ճիշդ է մեր ուսումը վերլուծական զննողական ուսում կոչել, քանի որ մանկան բաղադրուած, բայց անկանոն կերպով խառնուած մտաւոր շրջանին դեռ ոչինչ չաւելացնելով՝ աշխատումենք պարզ և գեղեցիկ կերպարանք տալ, միանգամայն կարծես նոր ստեղծումենք: Վերևի օրինակներից կարող էինք համոզուիլ, որ մանկական ամեն մէկ միտքը իւր ծագման պատմութիւնն ունի, ուստի դաստիարակիչն էլ քաջ պիտի խուզարկէ, թէ որպիսի առարկաների միջնորդութեամբ կամ որպիսի դէպքերի մէջ է կազմուել այս կամ այն միահամուռ միտքը և թէ ինչ չափով արդեօք ուղիղ է կազմուած, ի հարկէ հարկաւոր տեղը սխալ կազմածը ուղղելով և վերակազմելով: Այսպիսի վերլուծական-զննողական ուսումը ոչ միայն ստորին հասակում պէտք է գործածուի, հապա զանազան ձև առած՝ մինչև կրթութեան վերջը պիտի շարունակուի: Մի և նոյն ժամանակ ոչ միայն միտքը պիտի զբաղուի, այլ և մարմնի գործարանները, մանաւանդ ձեռքը, որոնց միջոցով ոգին կարծես մտնում է արտաքին աշխարհ և ներքին մտաւոր դանձը արտաքուստ մարմնացնում և պատկերացնում է, որի մասին նորերիս մանաւանդ Ֆրեօբէլը շատ աշխատեց, թէպէտ և մտաւոր շրջանի զարգացման մասին բոլորովին ճիշտ դաղափար չուներ:

Ի հարկէ ամբողջ վերլուծական ուսումը միայն նախապատրաստութիւն պէտք է համարուի այն երկրորդ ուսման համար, որը որ մանկան ոգեկան շրջանի սահմանները նոր դաղափարներով ընդարձակում է, և որով որ ոգին իսկապէս հարստանալ է սկսում և վեր-

ջապէս հաստատուն հիմք է ստանում բարոյական կրօնական ընաւորութիւն զոյացնելու համար: Այդ ուսումը կոչվում է յ օ դ ա ւ ո ր ա կ ա ն (սինթետիքական) ուսում, որովհետև մանկան ոգու մէջ եղած ամենապարզ դրութիւններից, այսինքն հիմնական մտքերից և մտածողութիւններից իւր գործը սկսելով և շարունակելով՝ այդպիսի պատրաստի եղած, կարգաւորած, լրացուցած և ուղղած մտաւոր շրջանի վերայ յօդ յօդ աւելացնելով՝ նոր ոգեկան կեանք է հաստատում համաձայն կրթութեան պահանջին և քրիստոնէական գաղափարին: Այդ պատճառաւ հէնց որ յօդաւորական ուսումը սկսվում է, նա դառնում է ամբողջ ուսման առաջնորդողը, կառավարողը: Այսինքն այնուհետև ուսման յաջորդ յառաջադիմութիւնը միանգամայն կախուած պէտք է լինի — մանկան ոգու մէջ յաջորդող զարգացման աստիճանների համեմատ — հետևեալ յօդաւորական նիւթից: Եթէ մանկան զարգացման աստիճանները մտաւորապէս նոյնը համարենք, ինչ աստիճաններ որ մարդկութիւնն է անցել իւր զարգացման շրջաններում, ապա ամենայն ժամանակ, երբ որ և իցէ աստիճանի վերայ մանկան մտաւոր շրջանը մշակում ենք, մենք պէտք է իմանանք և այն նոր յօդը, որ նորան պէտք է յաջորդէ, ուստի որպէս զի կամայական ոստիւններ չանենք՝ ասացինք, թէ պէտք է յօդաւորական նիւթով որոշուի ուսման յաջորդ յառաջադիմութիւնը: Երբ որ մանուկը իւր զարգացման համեմատ մի տեսակ աշխարհածանօթութիւն ստացաւ, մենք պէտք է առաջնորդենք նորան, որ իւր աստիճանին համեմատ ընդարձակէ այդ ծանօթութիւնը. ուրեմն միշտ նորա ամբողջ մտաւոր շրջանը պիտի յառաջ շարժենք, և ոչ թէ նորա մի մի մասերը, ինչպէս այս սովորութիւն է եղած մեր ուսումնարաններում, ուր առանձին գիտութիւնները անկախ և առանց ներքին կապակցութեան մէկը առաջ է գնում, միւսը յետ է մնում, երրորդն իսպառ հանվում դասատուութիւնից, չորրորդն առանձին գերազանցութիւն ստանում միւսների առաջ և այլն: Ի հարկէ հասկանալի է, որ յօդաւորական նիւթի ամեն մէկ մասը պէտք է որոշ կերպով նախապատրաստուի իւրեան համեմատ վերլուծական ուսմամբ, այսինքն մանկան այն մտքերը պէտք է կարգաւորուին, մշակուին, ուր որ նորը պիտի ընդունուի. միայն այդպիսի պատրաստութեամբ է միտքը յօժարութիւն ստանում նոր բան ընդունելու: Այսպէս վերլուծական ուսումը յառաջ է գնում այն չափով, որ չափով որ յօդաւորականը ուզում է գնալ, և

առաջնի նախապատրաստութեամբ՝ վերջինը աւելի ապահով, արագ, հաստատ և խոր տպաւորվում է մանկան մտքի մէջ: Ուսումն այսպէս կարգաւորուելով, շուտով կը նկատուի, որ նորա մէջ իւրաքանչիւր ժամանակամիջոցում մի և նոյն հոգեկան զօրութիւններն են գործածում, որը որ պատճառ է դառնում միտքը աւելի աշխոյժ, թարմ և ուշադիր պահպանելու: Այս ուսմամբ ոչ միայն հոգեկան գործողութիւնները տնտեսվում են, այլ և սովորական ուսման նիւթը շատ անփոփվում է, եթէ մտաբերենք այն իրողութիւնը, որ ուսման ամենայն իրը ունի իւր նշանն ու ձևը (խօսք, կերպարանք, թիւ), և ուրեմն տոքա ևս նորա հետ զուգընթաց կարող են ուսուցանուիլ՝ առանց դժուարութիւն պատճառելու: Ուսումն այսպիսի ամփոփմամբ ամենայն կողմից օժանդակում է աշակերտի ոգեկան զօրութիւնները խնայելու և ուսումը թեթևացնելու: Միշտ մի և նոյն զօրութիւնները գործածելով ուսման զանազան տեսակ գործողութիւնների մէջ, մանկան գիտակցութիւնը ստանում է միութիւն, վստահութիւն, ոյժ և զօրութիւն, որ բարոյականութեան հիմք է:

Անհրաժեշտ կարևոր է իմանալ, թէ վերը յիշած զարգացման աստիճանների մէջ հետզհետէ որպիսի փոփոխութիւններ են կատարվում, որպէս զի նոցա օրէնքներով ևս ուսումը կազմուի: — Ի սկզբան մանկան գաղափարները շատ դիւրափոփոխ են: Նոքա դեռ տրամաբանական գաղափարների պէս հաստատութիւն չստացած՝ կարող են հետզհետէ բովանդակութեամբ ընդարձակուիլ կամ սղուիլ: Նոքա դեռ հատ հատ, բաժան բաժան են, ուստի կարող են ամենայն տեսակ կապակցուիլ: Միով բանիւ մանուկը դեռ քիչ նշաններ է ցոյց տալիս, որով երևայ, թէ նա հասկացողութեամբ մտածում և գործում է, թէ նա փորձառութիւն ունի, որը որ մտքերի հաստատուն կապակցութեան արդիւնք է. մանուկը ապրում է դեռ երևակայութեամբ: Այս է պատճառը, որ նա այնքան ընդունակ չէ պատմական և բնագիտական շրջանների մէջ փաստերը և իրողութիւնները ճշտութեամբ ըմբռնելու, կամ թէ մի անգամ ընմբռնածը՝ պահպանելու: Նորա մտքերի ընթացքի մէջ միշտ մի օտարոտի մաս է խառնվում նա միշտ մտածում է այլապէս, քան հասուն միտքը: Ի հարկէ կարելի է նորան ստիպել, որ սովորացրածի պէս ուղիղ մտածէ, որ մի անգամ ըմբռնածի մէջ օտար մտքերը չխառնէ. կարելի է մանկան այն հոգեկան դրութիւնը կարճեցնել յիշողու-

թեան միջնորդութեամբ, այսինքն ստիպելով, որ անգիր և բերանացի սերտէ, և այս սովորութիւնը պէտք է ասել, թէ մեզանում շատ է տարածուած: Բայց դա ապացոյց է միայն, որ մեր մանկավարժները չը գիտեն, թէ ինչ դեր է խաղում երևակայութիւնը մանկան առաջին զարգացման մէջ: Մինչև անգամ Բուսսօն և Գերմանիայում նորան հետևող Ֆիլանտրօպիստները ոչինչ յարգ չէին տալիս մանկան երևակայական կեանքին: Նոքա համարում էին մասամբ նախապաշարման աղբիւր, մասամբ էլ արդելք գործնական կեանքի համար ամենայն բան, ինչ որ ճշմարիտ և իրական կեանքից դուրս է, ինչ որ բանաստեղծութիւնը հիւսել է մարդուս և բնութեան մասին. և այդ պատճառաւ ուսումից հեռու էին պահում անպէտ նախնական սովորութիւնները, ազգային սովորական բարքն ու վարքը, ազգային առակները, ազգային երգերը: Բայց անտարակոյս այսպէս մանուկների ճարպիկութիւնը և ոգեկան արդիւնաւորութիւնը պէտք է թուլանար, մոռացողութիւնը, զգացմունքը և ուրեմն բարոյականութիւնը նուաստանար, որովհետև ոգին էլ չէր կարող ազատութեամբ շարժուիլ, քանի որ նորա հոգեբանական հիմքը, այսինքն երևակայութիւնը կապանքի մէջ էր պահվում: Ուրեմն մենք ամենայն հաստատութեամբ կարող ենք ասել, թէ փոքր հասակում զուտ յօդաւորական բնազիտութիւնն ու պատմութիւնը, այսինքն առանց բանաստեղծական նշանների, միանգամայն անօգուտ և վնասակար բան է: Այդ ժամանակ բնութիւնն ու մարդիկ գերբնական զօրութիւններ պիտի ունենան, անասունները պիտի խօսին, գետերը պիտի լան ու լսեն, երկինքը պիտի ժպտի և գթայ, մարդիկ պիտի լինին չնաշխարհիկ, հսկաներ և չաստուածներ: Այդ ժամանակ մենք պէտք է մանկան աւանդենք այն, ինչ որ նորա անհատականութեան, նորա հոգեկան և անձնական զրութեան աւելի յարմար է. մինչև անգամ շատ անգամ խաղն ու զուարճալիքը նորա համար ամենայարմար ուսում պիտի լինին: Կարմ՝ մենք պէտք է հետևինք նորան իւր երևակայական կեանքի մէջ, մինչև որ ինքը կարօտութիւն զգայ այդ տեղից դուրս գալու համար: Չնայելով Պեստալոցցու մեծամեծ ծառայութեանց, այս հիմնական հոգեբանական օրէնքը իւր զննական վարժութեանց մէջ ցոյց չտուեց:

Եթէ մենք բանաստեղծական պատմութիւնները և նկարագրութիւնները մանկութեան համար ոչ թէ զուարճութեան առարկայ, հապա կրթողական ուսման հիմնական մաս ենք

համարում, մինչև անգամ այդ ուսման կենտրոն ենք ճանաչում, ապա անտարակոյս նոքա այն տեսակից պէտք է լինին, որ նոցա բովանդակութիւնը մի ճնայուն արժողութիւն ունենայ, որպէս զի յետոյ՝ երբ պատանեկան ոգին նոցանից բանաստեղծական զարդը հանէ՝ նոքա դարձեալ մի ընդհանուր մարդկային նշանակութիւն պահպանեն: Վիպասանական պատմութիւնները (զոր օրինակ Ոդիսականը) մանաւանդ անգին նիւթ են, որովհետև այդ տեղ են ամփոփուած ամենայն բանաստեղծութեանց առաջին աղբիւրները: Այդպիսի պատմութիւնների զբաղմունքը ի հարկէ առիթ պիտի լինի, որ մանկան մտաւոր շրջանը ամենայն մասամբ և ամենայն կողմից զուգընթացօրէն հետզհետէ մշակուի: Նախ և առաջ հարկաւոր է, որ ճշմարիտ զգացմունքը, մաքուր մանկական զգացմունքը լիակատար արտայայտուի, որ միշտ ինքն ըստ ինքեան կը կատարուի, եթէ բնականութիւնը վաղօրօք չէ խեղդուած կեղծ ճաշակով: Արդարև կը դայ ժամանակ, երբ վերջապէս մանուկը ինքը կզգայ բանաստեղծական և իրական կեանքի ներհակութիւնը և աննմանութիւնը. այս բանից մենք չպէտք է վախենանք, մեր ցանկութիւնն էլ այդ պիտի լինի: Բայց պէտք է որ ինքը դայ այդ ժամանակը, և ոչ թէ բռնի շտապեցնենք: Ինչ չափով որ մանկան մտքերը սկսում են կանոնաւոր կերպով ձուլուիլ, այն չափով նա սկսում է այն պատմութեանց բարոյական-կրօնական նշանակութիւնը աւելի ըմբռնել, մինչև որ ամենայն դիւրութեամբ տանում է իւր հոգեկան վերանորոգութիւնները՝ երբ սկսում է զգալ բանաստեղծակն և իրական կեանքի աննմանութիւնները և արտաքին հակասութիւնները: Բայց մի անգամ անպատճառ պէտք է կտրուի մանկան հոգու մէջ այդ իւր ազատ երևակայութեան թելը, և բանաստեղծութիւնը այնուհետև իբրև բանաստեղծութիւն ճանաչուի: Այդ ժամանակից արդէն կարող են պատմութիւնն ու յօդաւորական բնագիտութիւնը սկսուիլ, ենթադրելով որ մինչև այդ օրը մանուկը եկեղեցական գլխաւոր տօների առիթով՝ Քրիստոսի բարձր աստուածային բնաւորութեան հետ ծանօթացել է, և այդպէս իւր սրտի մէջ այն կատարելատիպը տպաւորել, որը որ նորա համար չափ պիտի դառնայ՝ մարդկային պատմական արարողութեանց վերայ դատաւճիռ կարդալու համար:

Ազատ երևակայութեան թելը ամենից լաւ կը կտրուի Բօբինզօնի աննման պատմութեամբ, ուր անցեալ և ներկայ ժամանակ-

ների ոգին այնպէս հրաշալի կերպով հիւսուած է, որ դժուար է որոշել, թէ հեղինակը որ ժամանակն է աւելի ուզեցել նկարագրել: Ամենայն մանուկ մեր ժամանակի ծնունդ լինելով, ոչ միայն տրամադրութիւն ունի այժմեան ժամանակուայ գիտակցութեան համար, այլ և նորա մէջ հաստատուած կայ ազգային և ընդհանուր մարդկութեան մանկական ոգին: Ինչպէս ասացինք՝ Բօբինզօնը այս երկու թելն էլ ամենայն յաջողութեամբ կապում է: — Կրուզօի պատմութիւնը, որի մեծ նշանակութիւնը նախ Ռուսսօն ցոյց տուեց, գրգիռ է տալիս երկրի գլխաւոր մասերի ընդհանուր ձևերը ուսանելու համար: Այս տեղ մաթեմատիքական կողմից պէտք է ի հարկէ առ ժամանակ ամենաընդհանուր որոշմունքներով բաւականանանք: Բայց աւելի մանրամասն պէտք է ցոյց տանք զանազան աշխարհաց բոյսերի, կենդանիների և մարդկանց որոշ տիպերը և բնութեան ընդհանուր երեւոյթների պատկերները, եթէ ի հարկէ նախապէս չենք մոռացել աշխարհագրական հիմնական գաղափարները հայրենական շրջակայքի մէջ գտնել տալու, որ միշտ առատութեամբ է տալիս: Այս ճանապարհով հիմք է դրվում անցեալ ժամանակները հասկանալու համար, այսինքն պատմութիւն ուսանելու համար, և այնուհետև կարող է մասնաւոր աշխարհագրութիւնը Պաղեստինէից սկսած, սրբազան պատմութեան հետ միասին շարունակուիլ: Շատ հասկանալի պատճառով սրբազան պատմութիւնը վաղ պէտք է ուսուցանենք մանուկներին, բայց Բօբինզօնը ուրիշ պատճառներով ևս ցոյց է տալիս, թէ ե՞րբ պէտք է սկսուի դորա ուսումը: Այդ բանաստեղծական կենսագրութիւնը մեզ յիշեցնում է այն նախնական ժամանակը, երբ մարդս առաջին անգամ երեսի քրտինքով աշխատելով և ի սկզբան ընկերական հաղորդակցութիւնից և օգնութիւնից զուրկ լինելով, հետզհետէ արտաքին բնութեան վերայ իշխեց. յիշեցնում է այն ժամանակը, երբ ամենամեծ չարչարանքով՝ ամենապարզ և ամենակարևոր փորձեր և գիւտեր պիտի անէր, որոնց նշանակութիւնը այժմ սովորութեամբ և դիւրին գործածութեամբ աննշան և աղօտ է երևում, այն ինչ առանց դոցա մարդս չէր կարող ըմբռնել ընկերական խորհրդաւոր գաղափարները, որ իւր պատմական զարգացման համար անհրաժեշտ կարևոր էր: Հէնց որ մանուկը այս կէտին հասել է, արդէն կարող է Պաղեստինէի, հայրենական և Յունաստանի հին պատմութիւնից հետզհետէ բարձրանալ մինչև մեր ժամանակի պատմութիւնը: Նա պէտք է անցնի մարդկային զարգացման բոլոր գլխաւոր

կէտերը, որոնք ընդհանրապէս մանկան զարգացման ընթացքին համապատասխան են, միշտ առաջնորդ ունենալով մի ընտիր բանաստեղծ կամ պատմագիր, և ամեն մէկ գլխաւոր կէտին հասնելով՝ պէտք է համոզուի, որ մարդկութիւնը այստեղ դադարել չէր կարող: Նա պէտք է իմանայ մարդկային ընդհանուր կրթութեան նշանակութիւնը, մարդկային մտքերի յարաբերութիւնքը, տարբերութիւնքը և փոփոխութիւնքը, նոցա մասին իւր վճիռը տայ: Պատմութեան ուսումը, որ բարոյականութեան գլխաւոր աղբիւրն է, թէպէտ և այնպէս պէտք է կազմուի, որ սրբազան պատմութիւնը և հասարակ պատմութիւնը իրարու հետ չը խառնուին, բայց որովհետև երկուսն էլ շատ նման և լրացուցիչ դարագլուխներ ունին և մէկի լոյսը միւսի ստուերով աւելի պայծառ կարող է երևալ՝ այդ տեղերում պէտք է միմեանց զուգընթաց հետևեն:

Հարկ չը կայ մանրամասն ցոյց տալ, թէ ի՞նչպէս կարելի է և պէտք է օտար լեզուները իբրև օժանդակութիւն գործ ածել մեր նկարագրած պատմութեան ուսման համար:

Բնագիտութիւն էլ նոյն յարաբերութիւնը պիտի ունենայ պատմութեան ուսման հետ, ինչպէս և լեզուի ուսումը: Թէպէտ և բնագիտութիւնը մանկան մտաց շրջանի երկու ճիւղաւորութիւններից մէկն է, բայց ոգւոյ ամփոփումն և կրթութեան նպատակը առաջի աչաց ունենալով՝ նիւթի ընտրութեան ժամանակ պատմութեան ուսումը առաջնորդող պիտի լինի, իսկ բնագիտութիւնը նորան հետևող: Արդէն դժուար չէ հասկանալ, որ ո՛չ բնագիտութեան առանձին մասերի համառօտ շղթայաձև նկարագիրը, ո՛չ էլ բնութեան առանձին ընդհանուր պատկերները, ուր զանազան բնագիտութիւններից հանած նիւթերը խառնուած են, չեն կարող մեր ուսման յարմարուիլ, ուր մեզ որ անկարելի է ամենայն ճշդութեամբ պահանջել, թէ բնութիւնը միայն բնութեան մէջ ուսանուի: Մեր գլխաւոր պահանջը այս է, որ բնութիւնը միանգամայն համարուի իբրև հող և հիմք մարդկային և ընկերական գործոց համար, նորանից պէտք է ստացուի միջոցներ որ և իցէ դիտաւորութեան կատարման կամ օժանդակելու համար, այն տեղ պէտք է գտնուին և արգելքները այդ դիտաւորութեանց համար, որոնք որ դարձեալ նոյն բնութեան միջոցներով կարող են վերանալ: Այս մտաք հասկանալի է, որ բանաստեղծական և պատմական նիւթերը առաջնորդող պիտի դառնան բնագիտութեան ուսման ընթացքի

համար, և թէ նոցանով պէտք է որոշուի բնութեան մասին առնելու նկատողութիւնների, խորհրդարկութիւնների և մտածողութիւնների աստիճանները: Զանազան տեսակ բնագիտական առարկաների և երևոյթների միահամուռ քննութեան լրացումը, նոցա ստէպ ստէպ կարգաւորութիւնը բնագիտական համակարգութեան օրինաք, նոյնպէս և վերլուծական յօդաւորական նախապատրաստութիւնը՝ պէտք է այստեղ ևս նոյն ճարտարութեամբ կատարուի, ինչպէս բարոյագիտութեան և իւր մասերի մէջ, մանաւանդ նոցանից ոչ մէկը միւսից երբէք յետ չը պիտի մնայ, որպէս զի մանկան միտքը անվատանդ և լրիւ զարգանայ: Բնագիտութիւնը բարձր դասատներում պիտի հասնի մինչև երկրայողական (սկեպտիքական) աստիճանը, երբ բացվում է փիլիսոփայութեան նախադուռը, որ ուսանողի համար այլ ևս ծածկուած չը պիտի մնայ: Մաթեմատիքան պէտք է որպէս ձևական (ֆորմալական) բնագիտութիւն ըմբռնուի, այսինքն թուի, ձևի և շարժողութեան կողմից: Ամենայն մաթեմատիքական օրէնք պէտք է բղխի որպէս արդիւնք կամ վերջին խօսք աշակերտի տեսակ տեսակ քննութիւններից: Նոյնպէս և նկարչութիւնն ու միւս արուեստական ուսմունքները պէտք է կապուին բնագիտութեան հետ:

Ինչ որ կը վերաբերի ուսումնարանների արտաքին կազմութեանց՝ կրթութեան ճշմարիտ ոգուն այնպիսի կազմութիւններն են աւելի բնական, որոնք որ մանկանց անհատականութեանց միանգամայն յարմարվում են, ընտանեկան արդարացի պահանջներին համապատասխանում են, ազատ են հիմնվում, առանց տարեկան դասընթացը նախապէս որոշելու, հարցաքննութեանց և նեղ սահմանած նախագիծների ճնշողութիւնը կրելու, և վերջապէս մերձաւոր կապակցութիւն են պահպանում իրանց դաւանած եկեղեցու հետ: Ի հարկէ այստեղ ենթադրում ենք, թէ ինչպէս ուսումնարանի ծառայողները, նոյնպէս և կառավարիչները հարկաւոր մանկավարժական և գիտնական ոգւով ներշնչուած են: Եթէ այսպիսի ոգին պակասում է, այնու ամենայնիւ հիմնական յարաբերութիւնները կանոնաւոր պիտի լինին և ի զուր չը պէտք է դժուարացնեն գործի ընթացքը: — Անտարակոյս ուսումնարանի ներքին կազմութիւնը աւելի նշանաւոր խնդիր է: Եթէ այդ տեղ ճիշդ Մեթոդիքական, ուղիղ կարգաւորուած և մի ոգւով ներշնչուած ուսումն է տիրապետում, եթէ այդ տեղ գիտութեանց ձայնը յարգվում է, եթէ տեսական գիտութիւնը գործնական կամքի մէջ ևս յայտնվում է, եթէ այն ուսումը բարձր բա-

բոյական յարաբերութիւններ է հաստատում ուսուցչի և աշակերտի մէջ, — այնուհետև ամենահարկաւոր բանն է՝ մի բարեկարգ ուսումնարանական կեանք, որը որ աշակերտի համար ապարէզ պիտի դառնայ իւր կամքը գեղեցկապէս ձուլելու համար: Փոխադարձ ծառայութիւնները, որ ամբողջ կազմութեան շահուց համար կատարվում են, խաղն ու զուարճութիւնը հրապարակի մէջ, առանձին ընկերութիւնները որոշեալ նպատակների համար, ազատ զբաղմունքները ուսումնարանի պարտիզի մէջ, արուեստանոցի մէջ, երբեմն էլ տնտեսական կառավարութեան մէջ, թատերական ներկայացումները, ուսուցիչների փոքր ճանապարհորդութիւնները իրանց աշակերտաց հետ ի միասին, ուսումնարանի հանդէսները և այլն, ոչքա բոլորը միշտ և բազմաթիւ առիթներ պիտի տան այսպէս կամ այնպէս գործելու համար, որ շատ կամ քիչ հրապարակական նշան ունին, և ուր աշակերտի կամքը որոշակի կերպով պէտք է երևայ և հետզհետէ կազդուրուի:

Այսպիսի միջոցները չէ թէ միայն զուարճութիւն և ուրախութիւն տալու համար են մանկանց համար, ապա դոյանով բարոյական բնաւորութիւններ պէտք է կրթուին, որ երբէք չէ կատարուիլ դիպուածական ներգործութիւններով, կամ նեղ և կեղծ կազմակերպութիւններով: Թէպէտ և ամենայն մանուկ անհատական տրամադրութիւններ ունի այս կամ այն տեսակ կամքի համար, բայց դարձեալ կամենալը կամ չը կամենալը, որով որ ամենայն մարդու բնաւորութիւն ճիշդ ճանաչվում է, չէ մի սկզբնական տուրք կամ մի հրաշալի պարգև, որ մէկ անգամից ամենայն կատարելութեամբ զարգանում է: Այսպիսի կամենալը կամ չը կամենալը դոյանում է ճշմարիտ գործ կատարելով այս կամ այն դէպքի մէջ, և այդ ժամանակ դոյանում է ներքին փորձառութեան ոյժ, որ միշտ հարկաւոր է վստահութեամբ գործելու համար: Ուրեմն միշտ մի և նոյնը գործելով և մի հաստատուն կենցաղավարութեան մէջ շրջելով, մարդուս մէջ յաճախ կրկնվում են մի և նոյն կամենալը և չը կամենալը, որ շատ անգամ մնում են անփոփոխ: Այս ճանապարհով դոյացած կամքը այնքան սաստկանում է, ինչքան որ մտաւոր շրջանն ընդարձակվում է, ինչքան որ լայնանում է այն ասպարէզը, ուր որ գործքը յաջողում է, ինչքան որ գործողութեանց միջոցներն ու նպատակը աւելի ամուր են կապվում, ինչքան որ նպատակին յարմար միջոցներն աւելանում են, ինչքան որ զանազան առիթներով ծագած կամքերից՝ կարծես մի ընդ-

հանուր, նման, ներդաշնակ և փոխադարձ օժանդակող կամք է դառնում: Այս ճանապարհով մարդուս մէջ բնաւորութեան խորագոյն մասը շուտով սկսում է ամրանալ, իւր կամքի ուղղութեանց մէջ որոշակի ընտրութիւններ է անում. այդպիսի ընտրութիւնները բնաւորութեան տալիս են տեսակ տեսակ անհատական գոյն, թէպէտ և բնաւորութեան արտաքին մասը, կարծես նորանից բաժանուած; միշտ այդ գոյնը չէ պահպանում և երբեմն շեղվում է իւր այդ սկզբնական ուղղութիւնից: Եթէ մենք բնաւորութեան մասերի վերայ ենք խօսում, մենք յիշում ենք այն յայտնի աններդաշնակութիւնը, թէ մարդս շատ անգամ կարծես երկու հոգի ունի: Նա ինքն իրան զննում է, նա ձգտում է ինքն իրան հասկանալ, առաջնորդել: Բայց այս զննութիւնից առաջ՝ ունի արդէն մի կամք, երբեմն շատ որոշ կերպով ձուլուած: Ահա այս վերջինն է մեր ասած խորագոյն բնաւորութիւնը, որին զննող անձը իւր նոր կազմած կամքով կամ հակասում է և կամ համաձայնում: Ներքին բնաւորութիւնը, որ աւելի արմատացած է, կարող ենք անհատական էլ կոչել, իսկ նոր կազմուած բնաւորութիւնը, որ սրտի զանազան փոփոխակի տրամադրութիւններից միշտ գոյանալ կարող է, կարելի է անձնաւորական կոչել: Բայց ինչ որ արմատացած է, այն միշտ ընտիր յատկութիւններ չի կարող ունենալ: Եւ եթէ կամենում ենք, որ բնաւորութիւնը խապառ չը փչանայ, պէտք է միշտ զգուշանանք, որ չը լինի թէ ներքին անհատական բնաւորութեան մէջ ամենայն գոյացած սուր ցիցերը՝ առանց այլևայլութեան արտաքին անձնաւորական բնաւորութեան մէջ էլ ցցուին և առաջնորդող սկզբունքներ դառնան: Ցայտնի է, որ բիրտ մարդու խորքում, մանաւանդ մանկանց մէջ, բուռն կրքեր են թագաւորում. մենք ի հարկէ չենք ցանկանալ, որ այդ կրքերը արտաքին բնաւորութեան մէջ էլ տիրապետեն և կեանքի սկզբունքներ դառնան: Սկզբունքն է մարդուս խմտանքի օրէնսդրութիւնը, որ դաստիարակութեամբ աւելի հեշտ է արտաքին անձնաւորական բնաւորութեան մէջ գոյացնել, քան թէ ներքնի մէջ, որ անմիջապէս և ուղղակի անմատչելի է դաստիարակչին. բայց մի անգամ գոյացնելով անձնաւորականի մէջ, որ անշուշտ վաղօրօք պէտք է սկսուի, այնուհետև անկարելի չէ նորա միջնորդութեամբ անհատական բնաւորութեան մէջ էլ մտցնել: Ոմանք զարմացմամբ կը հարցնեն, թէ ինչպէս կարելի է փոփոխականով արմատականը փոխել, բայց պէտք է պատասխանել, թէ ճշմարիտ

հոգեբանական գործողութիւնքը այդ են ուսուցանում: Ուրեմն ամենայն բան կախուած է նորանից, որ նախ արտաքին անձնաւորական բնաւորութեան մէջ սկզբունքներ գոյանան: Այդ սկզբունքները բարոյականութեան գաղափարներ են և դոցանով է փորձում մարդս իրան ճանաչելու և առաջնորդելու: Այդ սկզբունքները ընտրութեան են ենթարկվում, որ հանգամանքներին նայելով՝ երբեմն լինում են լոկ դիտաւորութիւններ, երբեմն կանոններ և երբեմն կեանքի նպատակներ: Բայց այդ ընտրութիւնը դիպուածական տպաւորութիւններից չը պէտք է յառաջանան, ինչպէս որ ներքին անհատական բնաւորութեան բուռն կրքերից այդպիսի ընտրութիւններ գոյանում են: Ընդհակառակն՝ անձնաւորական բնաւորութեան սկզբունքները, որով որ մարդս ինքն իրան ճանաչել է սկսում, պէտք է ներշնչուած լինին պարզ և պայծառ հասկացողութեամբ՝ բարին ու արդարը ըմբռնելու համար, և որպէս զի դոցա համար սրտի ջերմութիւնն էլ անպակաս լինի՝ պէտք է սրտաշարժ և վսեմացուցիչ օրինակներից ծագած լինին, որոնք որ կեանքի, պատմութեան ու բանաստեղծութեան մէջ առատութեամբ գտնվում են: Աւելի լաւ է, եթէ այդ օրինակները մանուկը այնպէս է ստանում իւր մերձաւոր, բարեկամ և սիրելի անձինքներից, որ կարծես իւր խղճմտանքի խորքից է ընդունում. ցանկալի է, որ իւր հասակակիցների ընկերական յարաբերութեանց մէջ ևս այդ ոգին կենդանի լինի, և այդպէս ամենայն կողմից բարի ներգործութեանց ենթարկուած լինի: Այսպիսի շրջանի մէջ մանուկը հետզհետէ սովորում է իւր ներքին աշխարհքը արտաքին աշխարհքի հետ համեմատել, և հետզհետէ նորա մէջ ցանկութիւն է երևում նմանիլ նորան, բայց ի հարկէ ի սկզբան դեռ զուրկ է լինում հաստատ կամքից, և այսպէս ինքն իրան հետ պատերազմելով՝ փոքր առ փոքր ներքին անհատական կամքի ուղղութիւնը ամենայն կողմից բարոյական ինքնակրթութեամբ կանոնաւորվում և կարգաւորվում է. այդ ժամանակ մարդոյս ազնիւ և ընտիր մտքերը, այսինքն բնաւորութեան արտաքին անձնաւորական մասը տիրապետող է հանդիսանում: Այսպիսի պատերազմի մէջ փորձվում և ամրանում է բնաւորութեան ոյժը: Բայց այդ պատերազմը միայն այն ժամանակ կը յաջողի, երբ արդարութեան և բարոյ սերմերը մտել են արդէն ներքին անհատական բնաւորութեան մէջ ևս, որ և արտաքին անձնաւորական բնաւորութեան հետ կապուած՝ միասին սրտի միութիւն են կազմում և այդպէս նոր ոյժ դոյացնում:

Ով որ այս ներքին գործողութեանց նշանակութիւնն ու սոցա զարգացնելու դժուարութիւնը փոքր ի շատէ չափել կարող է, նա չի վստահանալ ընտանեկան օգնութեան կարօտութիւնն ուրանալ: Ցայտնի է ընտանեաց անջնջելի տպաւորութիւնները մանկանց վերայ. այս կողմից ընտանիքը միշտ ուսումնարանից գերազանց է: Բայց ուսումնարանը մի տեսակ հրապարակական յատկութիւն ունի, որ ընտանեաց մէջ ի զուր պէտք է որոնէինք, և որի նշանակութիւնը մանկան բնաւորութեան կրթութեան վերայ բացայայտ երևում է բանաստեղծի այն խօսքից, թէ «աշխարհքի հեղեղի մէջ է զարգանում բնաւորութիւնը»: Սակայն ուսումնարանը այն ժամանակ կարող է ընտանիքից աւելի գործ կատարել, երբ համաձայն նորագոյն հոգեբանութեան՝ բնաւորութեան զարգացման բոլոր նշանները ճիշդ որոշելով, ըստ այնմ ուսումնարանական կեանքը կը կազմէ, որպէս զի դա մեր ասած «հեղեղ» դառնայ մանկան համար: Այս տեղ հարկաւոր է իւրաքանչիւր դէպքում ճշդութեամբ իմանալ այն պակասութիւնների աղբիւրները, որոնք միշտ բնաւորութեան զարգացման ժամանակ երևում են, և որոնք կամ ներքին անհատական կամքի ուղղութեան մէջն են ծածկուած, կամ սխալ բարոյական դատողութեանց մէջ և կամ սկզբունքների թիւր զարգացման և կապակցութեան մէջ: Այստեղ հարկաւոր է մանրամասն քննել, թէ ինչպէս կարող են պարտաճանաչութեան սովորութիւնները զարգանալ: Հարկաւոր է լաւ մտածել, թէ ինչ պէտք է անել, որ մանկան ընարութիւնը ազատութեամբ կատարուի, երբ նա մի բան կրել, առնել կամ ուներ է կամենում, որպէս զի ներքին բնաւորութեան այս երեք գլխաւոր ուղղութիւնքը վերջ ի վերջոյ միմեանց համաձայնին: Հարկաւոր է առիթներ գտնել, որ մանուկը համարձակ և բացսիրտ խօսել կարողանայ իւր ընարած սկզբունքների մասին: Հարկաւոր է հոգալ, որ մանուկը միշտ անդորր և խաղաղ միտք պահպանէ, առանց որոյ բարոյական դատողութիւն չի կարող գոյանալ: Վերջապէս հարկաւոր է աշխատել, որ մանուկը իւր սիրելի սկզբունքները միշտ իւր վերայ գործադրէ և նոցա հաւատարիմ մնայ իւր ներքին կռիւների ժամանակ: Այս բոլոր զանազան տեսակ գործողութիւնները չէ թէ միմեանց յաջորդում են կրթութեան մէջ, ապա ամենայն կերպ բաղադրուած և հիւսուած՝ միահամուռ և կից միմեանց կատարվում են: — Ով որ կամենում է այս ծանր և խառն գործի մէջ ոչ անդիտութիւնից շփոթուիլ և

ոչ էլ շատադէտների թեթեւութեամբ աչքերը ծածկել դժուարութիւններին հանդիպելու ժամանակ՝ նա պէտք է ձգտի, որ հիմնաւոր հասկանայ — տեսական և գործնական մանկավարժութիւնը:

Ընթերցողը չը պէտք է զարմանայ, որ այսպիսի հին ճշմարտութեամբ ենք վերջացնում մեր խօսքը: Պէտք է զարմանալ, թէ ինչպէս միմիայն մանկավարժութեան մէջ է, որ այս ճշմարտութիւնը իւր յարգը չի գտնում և յաճախ կրկնութեան է կարօտում: Ամենայն կօշկակար, ամենայն դերձակ, ամենայն դարբին նախ սովորում է իւր արհեստը, նախ վարժվում է մի վարպետի մօտ և ապա ինքն էլ վարպետութիւն անում: Ամենայն բժիշկ, ամենայն իրաւաբան, ամենայն ճարտարապետ քանի տարիներ ուսանում և վարժվում է իւր գիտութեանց մէջ. ինչո՞ւ համար միայն մեր մանկավարժը պիտի այդպիսի ուսումը և վարժութիւնը իւր համար աւելորդ զարդ համարէ: Մեզանում ամենայն մարդ կարող է համարուիլ մանկավարժ, ով որ ցանկութիւն է յայտնում, իսկ եթէ նա համալսարանական դիպլօմ էլ ունի, էլ այնուհետև ոչ ոք չի համարձակի կասկածել անդամ նորա մանկավարժական կատարելութեանց մասին: Մեզանում ամենայն մարդ իրաւունք է ստանում մանկավարժական գործքերի մասին խօսիլ, դատաւճիռ կարդալ, պատուէրներ տալ. սա մի շատ գեղեցիկ սովորութիւն է և ազատութեան նշան է, որ ամենայն խմբագիր, ամենայն հոգաբարձու ամենայն ազգային անդամ գովելի հսկողութեան տակ է պահպանում ուսումնարանները: — Մեզ հաւասարաչափ յարգելի և պատուելի է, թէ դիպլօմի, թէ խմբագրի, թէ հոգաբարձուի և թէ ազգային անդամի իրաւունքները, մենք չենք կարողանում միայն այն մտքի հետ հաշտուիլ, որ ոմանք կարծում են, թէ մանկավարժ լինելու համար ոչ գիտութիւն է հարկաւոր և ոչ վարժութիւն, այլ հարկաւոր է միայն առողջ դատողութիւն ունենալ: Բայց պատեցէք աշխարհքի չորս կողմերը, խօսեցէք ամենայն մարդու հետ առաձին, և դուք կը տեսնէք, որ այդ մարդիկը իւրեանց վկայութեամբ ամենքն էլ առողջ դատողութիւն ունին. մի՞թէ յիրաւի ուսումնարանների վիճակը դոցա քմահաճութեանց պիտի դատապարտուի:

Ս. ՄԱՆԴԻՆԵԱՆ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Կրօնական շարժումներ մահմեդականների մէջ։—Ամերիկացի բողոքական միսսիօնարներ։—Կաթոլիկ միսսիօնարներ Լազարիստների կարգից։—Հայոց հոգևոր կառավարութիւնը Պարսկաստանում և նորա անբաւականացուցիչ ընթացքը։—Հայոց ազգային սահմանադրութիւն Պարսկաստանում։—Պարսկաստանի Հայոց մտաւոր շարժումը և Դավրէժի ազգային դպրոցը։—Ո՞ր-պէս պէտք է բարեկարգել Պարսկաստանում վիճակային հոգևոր կառավարութիւնը։—Դավրէժի ընթերցարանը։

Պարսկաստանում վերջին ժամանակներում մահմեդականների մէջ յայտնվում են խիստ զգալի կրօնական շարժումներ, որոնք առաջ թաքնուած էին հալածանքի երեսից։ Երևան են գալիս զանազան աղանդներ, որոնք իւրեանց բազմաթիւ հետևողներ ունին։ Այս կրօնական հերձուածները մի ազգու բողոք են իսլամի մոլեռանդութեան դէմ, որ ճնշում է կամքի և մտքի ամեն ազատ ձգտողութիւն [1]։

Քննելով այս աղանդների բնաւորութիւնը և ոգին, սոցա մեծ մասը յայտնվում են որպէս հերքողական։ Բայց ո՞րտեղից է յառաջ եկել հերքողական ուղղութիւնը դեռ ևս չը զարգացած պարսիկների մէջ։

Դա ունի իւր բնական պատճառները։

---

[1]) Պ. Բաֆֆիի Պարսկաստանի ճանապարհորդութեան մէջ ընդարձակ և աւելի մանրամասն տեղեկութիւններ լինելով մահմեդականների մէջ եղած աղանդների մասին, մենք բաւականանում ենք այս յօդուածում միայն ընդհանուր տեսութեամբ, սպասելով յիշեալ աշխատութեան հրատարակութեանը, որ արդէն, որպէս գիտենք, պատրաստվում է իւր ամբողջութեամբ «Փորձի» մէջ տպագրուելու համար։ Ս. Հ.

Մի կրօնք որքան հեռանում է ճշմարիտ աստուածպաշտութիւնից, մի կրօնքի մէջ որքան պակասում են բարոյական և հոգեկան սկզբունքները, այնքան նա դառնում է մնապաշտական և նորա բոլոր վարդապետութիւնները հիմնուած են լինում արտաքին ծէսերի և արարողութեանց վերայ:

Մի այսպիսի կրօնքով ապրող մարդը, երբ յանկարծ զգում է իւր մոլորութիւնը, նա մի ծայրայեղութիւնից թռչում է դէպի մի այլ ծայրայեղութիւն,— ամենաստոր մոլեռանդութիւնից նա անցնում է անկրօնութեան և դառնում անհաւատ, հերքող:

Շատ բնական է, որ մարդու չափազանց խաբուած դրութիւնը ծնեցնում է նորա մէջ կասկած և երկբայութիւն. բաւական է, որ նա հասկանայ, թէ խաբուած է իւր կարծիքների մէջ, որ այնուհետև կորցնէ իւր հաւատարմութիւնը դէպի ամեն ճշմարտութիւն: Նա միայն հերքում է, փշրում է, ոչնչացնում ամեն ինչ, որ հին է, բայց թէ ի՞նչ պէտք է դնէ նոցա տեղ, այդ ինքն էլ չը գիտէ:

Այստեղից հասկանալի է, թէ ինչու ամեն մէկ պարսիկ աղանդաւորից հարցնելու ժամանակ, նա չէ կարողանում մի որոշ տեղեկութիւն տալ իւր դաւանութեան մասին: Նա միայն բողոքում է հնի դէմ, բայց ինքը մի կազմակերպուած վարդապետութիւն չունի: Եւ այլ կերպ լինել կարող չէր, որովհետև աղանդներն իւրեանց սկզբնական դրութեան մէջ միշտ լինում են անմշակ. նորանք զարգանում են, կատարելագործվում են կեանքի և ժամանակի հետ:

Զարմանալին այն է, որ Պարսկաստանում յայտնուած աղանդներից մի քանիսը բոլորովին նիւթապաշտական են, հիմնուած աւելի բնական ճշմարտութիւնների վերայ: Դոցա հետևողները գտանվում են ժողովրդի աւելի զարգացած դասի մէջ:

Նիւթապաշտութիւնը, կամ այլ խօսքով՝ բնապաշտութիւնը մարդու սկզբնական և վերջնական դաւանութիւնն է: Նա իւր տղայութեան մէջ, հրապուրուելով բնութեան ազդու երևոյթներով, աստուածացնում է նորանց և պաշտում է որպէս կոյր հաւատացող, իսկ իւր զարգացման աստիճանին հասնելով, պաշտում է նորանց որպէս փիլիսոփայ: Բայց ոգիներին կամ աներևոյթ էակներին երկրպագութիւն տալը յիշեալ երկու ծայրերի միջասահմանն է:

Բայց մի աղանդ, որ աւելի ուժ և զօրութիւն է ստացել, չը նայելով այն հալածանքներին, որ մինչև անգամ ինկվիզիցիան չէ

ունեցել իւր զոհերի վերայ, — է բաբիների աղանդը: Նորա հետևողներն ամեն քաղաքներում բազմացել են և ժողովրդի աւելի մտածող և ընդունակ մասն են կազմում: Զանդիանի սարսափելի կոտորածից յետոյ՝ այս աղանդը առ ժամանակ լռեց և թաքուստի մէջ էր պահվում, բայց այս օրերում նա իւր դրօշը կրկին բարձրացրեց Դավրէժ քաղաքում:

Քաղաքի նշանաւոր մեչիդներից մէկի դրան վերայ, որտեղից իսլամի մեծ մուշտայիդը (հոգևոր գլուխը) ամեն օր անցնում էր նոյն մեչիդում իւր նամազը կատարելու, կպցրած էր մի յայտարարութիւն. նորա պարունակութիւնը խիստ վստահ և վճռական էր: Բաբիները յայտնում էին, թէ իւրեանց աղանդի գլխաւոր հեղինակը (Մօլլա Մամադալի զանդիանցին, որին պարսիկները 22 տարի առաջ նահատակեցին Դավրէժ քաղաքում) այժմ կենդանի է. նա արդէն յարութիւն էր առած այն ժամանակ, երբ պարսիկները կարծում էին, թէ սպանեցին նորան. թէ նա գտանվում է այժմ Աքքա քաղաքում և այնտեղից ուղարկում է հաւատացեալներին իւր հրահանգները. թէ այժմ բաբիների հասարակութիւնը պահանջում է, որ իրանք թոյլտուութիւն ստանան ազատ և առանց արգելքի պաշտել իւրեանց կրօնքը, և այդ սպասում են իսլամի մեծ մուշտայիդից. իսկ հակառակ դէպքում, ոչ միայն մուշտայիդի կեանքը ենթարկուած կը լինի մահուան, այլ և իրանք արդէն պատրաստ ունին 10,000 զինեալ տղամարդիկ, որոնք իւրեանց սրով և արիւնով պէտք է գնեն բաբիութեան ազատութիւնը:

Այս յայտարարութիւնը բոլորովին սարսափի մէջ գցեց քաղաքը. մուշտայիդը մի քանի օր դադարեց մեչիդը գնալուց, այնուհետև նա դուրս էր գալիս շրջապատած զինեալ մարդկանցով: Բայց թէ ինչով կը վերջանայ այս խռովութիւնը, դեռ յայտնի չէ:

Թէ հալածանքը սաստկացնում է աղանդների աճելութիւնը, — դա մի պարզ ճշմարտութիւն է: Եւ առաքեալների օրերում, երբ հրէաներն ամենայն խստութեամբ հալածում էին նոցա քարոզութիւնները, մի ատեանի մէջ, որ հաւաքուած էր նորանց դատապարտելու համար, խիստ խելացի կերպով խօսեց հրէաների օրէնսուսոյց Գամաղիէլը. «Հեռու կացէք այդ մարդկանցից (առաքեալներից) և թողէք դորանց. պատճառը որ, եթէ այդ խորհուրդը և այդ գործը մարդկանցից է, կը քանդուի: Բայց թէ որ Աստուծուց է, չէք կարող քանդել դորանց, դուցէ Աստուծոյ դէմ կռիւ անողներ կը լինիք»:

Բայց ես ուրիշ կերպ կասեմ. — ամեն մի աղանդ, որ ծագում է մի ժողովրդի մէջ, եթէ չէ համապատասխանում նոյն ժողովրդի կենսական պահանջներին, նա հիմք չունի և ինքն իրան կը ոչնչանայ:

Բայց Պարսկաստանի մէջ աղանդների ոչնչանալն անհնարին է, որովհետև նորանք ժողովրդի բուն պահանջների արտայայտութիւն են: Գուցէ նորանք կը կերպարանափոխուին, բայց իրանց իսկութիւնը կորցնելու չեն:

***

Ոչ սակաւ շարժումն է ձգել Պարսկաստանումը քրիստոնէական քարոզութիւնը, որ մուտք է գործել Ամերիկացի բողոքական առաքեալների ձեռքով: Նորանք համարեա թէ Պարսկաստանի բոլոր նշանաւոր քաղաքներում ունին իւրեանց ծածուկ և յայտնի քարոզիչները, սկսեալ Դավրէժից մինչև Բէնդիր-Բուշիր: Քանի օր առաջ այս տեղում գտնուած նոցա ժողովարանը գնացի. նա գտանվում է ամենագեղեցիկ և հոյակապ տան մէջ Հայոց թաղում: Ժողովարանի դահլիճը լենքն էր լսողներով երկու սեռից և.ս. նոցա մեծ մասը մահմետականներ էին, որոց թւում կային մի քանի մ ո ղ լ ա ն ե ր և ս է յ ի դ ն ե ր (իսլամի մարգարէի որդիներ), իսկ լսողների մնացեալ մասը կազմուած էր հայերից և ուրիշ ազգութիւններից: Անգլիացի քարոզիչը մամբրոնի վերայ խօսում էր իւր քարոզը ամենին հասկանալի թուրքաց լեզուով, աղօթքները և երգերը մատուցանվում էին դարձեալ նոյն լեզուով:

Զարմանալի է, թէ ուրպիսի խորին տպաւորութիւն է անում մինչև անգամ անզգայ սրտերի վերայ լաւ քարոզը: Ես սկզբում ուշադրութեամբ էի լսում, բայց յետոյ համարեա դադարեցայ լսելուց, թէև նա խիստ գեղեցիկ և քարոզը էր: Ես նոյն միջոցին մտածումէի.... բայց ի՞նչ էի մտածում.... մտածումէի մեր եկեղեցու և մեր եկեղեցականների մասին....

Ես յիշեցի, որ քանի օր առաջ քաղաքի Հայոց եկեղեցու քահանաները բողոքել էին Սրբազան Առաջնորդի մօտ, որպէս զի եկեղեցուն կից ընթերցարանը կիւրակէ օրերը փակուի, որովհետև ժողովուրդը ընթեցարան գնալով, էլ ժամ չէր գալիս, և քահանները զրկվում էին իւրեանց շահերից.... Նորին Սրբազնութիւնը շատ խելացի կարգադրութիւն արեց. հրամայեց, որ ընթերցարանը բացուի՝ եկեղեցու մէջ պատարագն աւարտուելուց յետոյ.... Բայց

ցաւալին այն է, որ դորանով ևս եկեղեցի գնացողների թիւը չը բազմացաւ.... Ինչո՞ւ։— Քահանաները պատասխանում են, թէ ժողովուրդն անհաւատ է դարձել, կրօնքը և ջերմեռանդութիւնը նոցա մէջ սառել է.... Այս խօսքերը լսվում են ամեն տեղ, ամեն հայ քահանայի բերանից... Բայց ճշմարիտ են նորանք։

Ո՛չ։ Մեր ժողովուրդը անհաւատ չէ և ոչ սառել է նորա մէջ կրօնական ջերմեռանդութիւնը, բայց թէ նորան չի գրաւում իւր մայրենի եկեղեցին, դա ունի իւր առանձին պատճառները։ Վեր առնենք երկու հիմնարկութիւն՝ մինը եկեղեցին, միւսը ընթերցարանը. երկուսն էլ մրցութիւն են անում միմեանց հետ, երկուսի մէջ նոյնպէս լինում են ընթերցանութիւններ, բայց մինը տալիս է կենդանի խօսք և մտաւոր սնունդ, միւսը հնչեցնում է գրաբար անհասկանալի և մեռեալ ձայներ մի այն...ընթերցարանը յաղթող է հանդիսանում, որովհետև ժողովուրդը նորան հասկանում է և նորանով գրաւվում....

Աստուածների տաճարները զանազան ժամանակներում զանազան կերպերով գրաւում էին ժողովրդի սիրտը։ Կար ժամանակ (և այժմ Հնդկաստանում նոյնն է) երբ մի արձան բազմաթիւ գլուխներով և բազմաթիւ ձեռքերով, որի պարանոցի վերայ գալարուել էին վիշապներ, կամ գցած էր մի մանեակ՝ շարած մարդիկների կառափներով, որը մի ձեռքով բռնել էր փոքրիկ երեխայի ոտներից և մինչև նորա կէսը կուլ էր տալիս.—այսպիսի աստուածներն իւրեանց հրէշաւոր այլանդակութեամբ սարսափ էին գցում ռամկի վերայ և հետևապէս զարթեցնում էին նորա մէջ յարգանք և մոլեռանդութիւն դէպի իւրեանց սրբարանը։ Բայց երբ որ մարդիկների ճաշակը նրբացաւ, երբ նորանք սկսեցին սիրել գեղեցիկը և վսեմը, այն ժամանակ աստուածներն ևս փոխեցին իւրեանց կերպարանքը. նորանք սկսեցին երևալ տաճարների մէջ աւելի գեղեցիկ և վայելուչ կերպով։ Հռոմի և Աթէնքի գեղարուեստն ստեղծեց աստուածների ամենընտիր օրինակները, և այնուհետև ամբոխը գրաւվում էր իւր տաճարների շքեղութեամբ, իւր աստուածների գեղեցկութեամբ։

Քրիստոնէութիւնն աշխարհ եկաւ. նա իւր դրօշի վերայ գրած ունէր այս խօսքերը. «Աստուած Հոգի է և նորան երկրպագողներն էլ պէտք է որ հոգւով և ճշմարտութեամբ երկրպագութիւն տան»։ Բայց քրիստոնէութիւնը իւր պարզութեամբ, իւր բոլոր հոգեկան զօրութեամբ երկար ժամանակ չը կարողացաւ դարձնել ժողովուրդը

դէպի ճշմարիտ աստուածպաշտութիւն, այն որ մարդու սրտի և հոգու մէջ իւր հիմքն ունի: Որովհետև ժողովուրդը վաղուց արդէն սովորած էր իւր աստուածը իւր աչքի առջև տեսնել, իւր շրթունքներով և ձեռքերով շօշափել և նորա նիւթական մարմինը պաշտել... Հռօմի եկեղեցին, կռապաշտութեան այդ վաղեմի վարպետը, սկսեալ Կոնոսի ժամանակներից, ժողովրդի նիւթապաշտութեան կոյր օժանդակ դարձաւ, և իւր տաճարները զարդարեց այն բոլոր շքեղութիւններով, որ կարող են ազդել արտաքին զգայարանքների վերայ, որ կարող են հրապուրել նորա անհաւատութիւնը խայտաճամուկ երևոյթներով միայն:

Բայց ժողովուրդը միշտ միակերպ չի մնածում, նորա ճաշակը կրթվում է, նորա միտքը զարգանում է, և հետևապէս նորա պահանջմունքները փոխվում են: Նա կրօնքի միջից սկսում է դուրս ձգել այն, որ նիւթական է, և որոնում է հոգևորը, այն, որ բարոյական ոյժ ունի, այն, որ մաքրում և աղնուացնում է բնաւորութիւնը: — Դա Աստուծոյ կենդանի խօսքն է. ինչ եկեղեցում նա չի լսվում, ժողովուրդը հետզհետէ դադարում է այնտեղ մուտք գործելուց....Եւ ինչ եկեղեցի աշխատում է միայն ծէսերի և արարողութեանց զօրութեամբ պահել ժողովուրդը, նա հիմք չունի:

Այժմ ես հասկանում եմ, թէ ինչու այս հայերն իւրեանց մայրենի եկեղեցին թողած, հաւաքուել են այստեղ.—ես կրկին դառնում եմ դէպի բողոքականների ժողովարանը:

Քարոզը վերջացաւ մի կարճ մաղթանքով, երգուեցաւ մի թեթև երգ, և այնուհետև բաղմութիւնն սկսեց ցրուիլ: Բայց ոմանք մնացին. երևում էր, որ դորանք եկել էին լոկ հետաքրքրութեան և մանաւանդ վիճելու համար. վերջիններս մահմետականներ էին: Վիճաբանութեան առարկան սկզբում Քրիստոսի աստուածութեան մասին էր: Մստեր Ստէյն, ամերիկացի քահանան, թէև երևում էր բաւական հմուտ աստուածաբանութեան մէջ, բայց պարսից և թուրքաց լեզուները լաւ չը տիրապետելու համար՝ դժուարանում էր պատասխանել: Նոյն միջոցում մի ծերունի մոլլա, որ հեռուից նորան լուռ լսում էր, մօտեցաւ վիճողներին և պահանջեց մի պարսկերէն Աստուածաշունչ: Այնուհետև դառնալով դէպի միսսիոնարը, նա խնդրեց, որ թոյլ տայ իւր փոխարէն պատասխանել: Միսսիոնարը հաճեցաւ. վիճաբանութիւնը տևեց երկար և անդադար փոխվում էր մի խնդրից դէպի միւսը: Բոլորը, ինչ որ կարողացայ եզրա-

կացնել մոլլայի խօսելուց, այն էր, որ իսլամի այս ծերունի կրօնաւորը երկար ժամանակ և խիստ հաստատուն կերպով ուսումնասիրել էր Աստուածաշունչը. նորա փաստերը և բերած ապացոյցներն անկեղծ էին և պինդ համոզմունքից յառաջ եկած: Մոլլային կամակից էին և մի քանի ուրիշ պարսիկ դպիրներ, որոց թւում կար և մի սէիդ իսլամի մարգարէի սերունդից: Նրանք գործ էին ածում երկու զէնք քրիստոնէութիւնը պաշտպանելու համար, մինը՝ Աստուածաշունչ գիրքը, միւսը՝ մահմեդականութեան փտած կազմակերպութեան ցուցմունքը:

Շատ վտանգաւոր բան է, երբ մի կրօնքի ընդդէմ զենուորվում են այն անձինքը, որ իրանք նոյն կրօնքի վարդապետներ են. որովհետև նորանք գիտեն և ծանօթ են իւրեանց կրօնքի թոյլ կողմերին, ուստի հեշտութեամբ կարող են խորտակել նորան: Եւ այսպէս, քրիստոնէութիւնը գտանելով իւրեան հետևողներ մոլլաների մէջ, սպառնում է մեծ վտանգ իսլամին, որ իւր հիմքը պահպանում է միմիայն ժողովրդի մոլեռանդութեան մէջ: Այսպէս էլ եղաւ և քրիստոնէութեան մէջ. հռօմէական վանքերի ցեխից դուրս եկան այն մարդիկը, որոնք Հռօմի սարսափելի թշնամիքը դարձան. բողոքականութիւնը նորանց արդիւնքն է:

Հետևեալ օրը ես բողոքականների երկսեռ դպրոցը մտայ, ուր խառն սովորում էին աղջիկներ և տղաներ. նորանց թւում գտայ մի քանի աշակերտներ և աշակերտուհիք թուրքերից, իսկ մնացեալները հայեր էին: Առաջին քաղցր տպաւորութիւնը, որ գործում է այցելուի վերայ, է ամերիկական մանկավարժութեան կանոնաւոր կազմակերպութիւնը, մանաւանդ մի այնպիսի երկրում, ուր բնիկների երեխայքը դեռ սովորում են ժամատների բակերում, տիրացուների ձեռքով, կամ մղկիթների խուցերում տգէտ մոլլաների ձեռքով:

Վարժուհին, որ կոչվում էր Միս Ջուդիդ, խիստ պարզ կերպով խօսում էր հայերէն և թուրքերէն. նա գիտէր այդ երկու լեզուների դպրութիւնը այնքան, որ կարողանում էր նոյն լեզուներով աւանդել աշակերտներին ուսանելի առարկայքը: Թէև աշակերտուհիքը նոյն միջոցում պարապուած էին ձեռագործներով և աշակերտները՝ գեղագրութեամբ, բայց վարժուհին ցանկացաւ, որ ես տեսնէի, թէ որքան յառաջ էին գնացած նորանք հայերէնի մէջ: Եղաւ մի փոքրիկ հարցաքննութիւն: Ճշմարիտն ասած, ես բոլորը գտայ գոհացուցիչ, չը նայելով, որ երեխայք շատ փոքր էին

և նորանցից շատերը երկար ժամանակ չէր, որ մտել էին դպրոցը:

Այնուհետև վարժուհին յայտնեց, թէ ինքը շատ ցանկանում է ունենալ Հայոց աշխարհաբար լեզուի քերականութիւն՝ աշակերտներին մայրենի լեզուն կանոնաւոր կերպով ուսուցանելու համար, և դիմում էր իմ խորհրդին, որ նորան մի որևիցէ ձեռնարկ առաջարկեմ: Ես ամաչեցի ասել, թէ մեր աշխարհաբարը դեռ բոլորովին մշակուած չէ, և մենք աշխարհաբարի կանոնաւոր քերականութիւն չունինք, և առաջարկեցի պ. Պալասանեանի քերականութիւնը: Նա խոկոյն նշանակեց իւր յիշողութեան տետրակի մէջ:

Այնմ՞թ մեզ համար. ամերիկացուհին մտածում է Հայի որդուն կանոնաւոր կերպով ուսուցանել իւր մայրենի լեզուն, բայց աշխարհաբարի քերականութիւնը դեռ բուն հայկական դպրոցներում մուտք գործած չէ...

Զը մոռանանք ասել, որ քանի օրից յետոյ ես ընդունեցի մի քանի խոշոր բամբասանքներ, թէ ինչո՞ւ ես մտել էի Ֆարմասոնների ժողովարանը, — այստեղ այսպէս են կոչում բողոքական քարոզիչներին: — Ողորմեալ՛ մարդիկ, դեռ չը գիտեն, թէ ի՞նչ նշանակութիւն ունի մտնել թշնամու բանակը և նորա ուժերը կշռել.... Այս կեղծաւորները, ճշմարիտ է, Հայոց եկեղեցու փոշիները իւրեանց ծնրադրութեամբ լցկոտում են, բայց եթէ գիտենային, թէ Հայկի և Արամի ոսկերքը կարող էին մի քանի կօպէկ շահ բերել, միշտ պատրաստ են նորանց գերեզմաններից հանել ու վաճառել....

*
* *

Այսքան խօսելով բողոքական միսսիօնարների մասին, չի կարելի մի քանի խօսք չասել և կաթոլիկ կղերի մասին, որոնք յայտնուել են Պարսկաստանում, որպէս լոյս և ճշմարտութիւն տարածողներ: Եւրոպայում անարգուած և իւր համարումը կորցրած, այդ սևախումբ հասարակութիւնն այժմ որոնում է իւր զոհերը միամիտ արևելքում: Նորանք գործում են այստեղ այն, ինչ որ մի քանի դար առաջ անում էին Եւրոպայում: Որպէս զի աւելի շօշափելի կերպով նկարագրուի դորանց գործունէութիւնը, իբրև օրինակ, ես վեր կառնեմ մի գիւղ, ուր անցեալ ամառ Սալմաստայ կողմերում ճանապարհորդութեանս ժամանակ առիթ ունեցայ գտնուելու: Այս գիւղը կոչվում է Խոսրովիա. դա ունի մինչև 300 տուն բնակիչներ, ուր բացի մի քանի Հայ-լուսաւորչական ընտանիքներից, մնացեալ բոլորը կաթոլիկներ են:

Չի կարելի մի ուրիշ տեղում աւելի բացարձակ կերպով նկատել կաթոլիկ կղերի բթամտացնող, ստրկացնող և կենդանի մարդկանցից դիակներ պատրաստող ազդեցութիւնը, որպէս յիշեալ գիւղում: Թէ ո՞րպիսի զէնք է գործ դնում հռոմէական կղերը տիրելու իւր ժողովրդի սրտի, մտքի և բոլոր զգացմունքների վերայ, դա արդէն յայտնի է. — դա կրօնական խայտաճամուկ թելերով պատրաստուած ուռկանն է, որով որսում է նա իւր զոհերը: Բայց այստեղ գործ է դրվում մի ուրիշ և աւելի սարսափելի զէնք, որ բոլորովին ստրկացնում է ժողովուրդին կղերի ձեռքում: Այս վերջինը կարօտ է բացատրութեան:

Զարմանալի է, թէ ո՞րպէս կաթոլիկ կղերը դիտէ օգուտ քաղել զանազան հանգամանքներից, երկրի դրութիւնից, ժողովրդի վիճակից և այլն: Խոսրովիայ գիւղը, որի մասին է մեր խօսքը, Սալմաստայ այն գիւղերից մէկն է, ուր ամենասարսափելի կերպով աճել է վաշխառուների հարստահարութիւնը: Կաթոլիկ կղերը, յիշելով այն առածը, թէ «պարտականը պարտատիրոջ գերին է», մտածեց օգուտ քաղել և այն ստրկացնող միջոցից, որի մէջ կային և նիւթական շահեր:

Խոսրովացին միշտ փողի կարօտութիւն ունի: Հասկանալի է, թէ ինչ կը լինի մի ժողովրդի վիճակը, երբ նա գործում է և վաստակում է միմիայն իւր եկեղեցու և նորա պաշտօնեաների պիտոյքները լրացնելու համար: Մի գիւղի մէջ, որպէս Խոսրովիան է, կան երկու վանքեր, մինը կուսանաց, միւսը՝ աբեղաների. երկուսն էլ լիքն են միաբաններով: Ժողովուրդն աղքատ է, այսու ամենայնիւ նա պէտք է լրացնէ այն պարտաւորութիւնները, որ դնում է նորա վերայ եկեղեցին: Բայց նա ունի ուրիշ պարտաւորութիւններ ևս. նա պէտք է հոգայ իւր ընտանիքի ապրուստը, նա պէտք է վճարէ դիւանի տուրքը և այս տուրքը նոյնպէս ծանր է և անտանելի, որպէս եկեղեցունը: Ո՞րտեղից պէտք է տայ. նորա երկրագործական վաստակը չէ լրացնում այս բոլոր ծախսերը. մնում է մի ճար միայն — պարտք անել: Նա սկսում է մահմեդականներից պարտքեր անել խիստ ծանր տոկոսներով, իւր այգին, տունը, պարտէզը գրաւ է դնում: Նա անդադար պարտամուրհակները փոփոխում է, տոկոսը տոկոսի վերայ բարդվում է. իսկ պարտքերը հատուցանելու ոչինչ հնար չը կայ: Ի՞նչ պէտք է անէ նա:

Գիւղացոց պարտքերը հասնում են մինչև մի քանի հարիւր,

հաղար բուբլու։ Այն ժամանակ միայն ժողովուրդը հասկանում է իւր կործանումը և սկսում է բողոքել։ Դառն աղքատութեան ստիպումունքն աւելի զօրաւոր է լինում քան կրօնական զգացմունքը, և ժողովուրդը սկսում է կղերի դէմ ապառնալ. «Եթէ դուք մեր պարտքերի մասին մի հոգացողութիւն չանէք, մենք պատրաստ ենք ընդունել բողոքականութիւն, և բողոքականների առաքելական ընկերութիւնը կը վճարէ մեր պարտքերը»։ Աբեղաները նորանց հանգստացնում են. «Դուք անհոգ կացէք, մենք մարդիկ կուղարկենք դէպի աշխարհի զանազան կողմերը, փող կը հաւաքեն, կը բերեն, ձեր պարտքերը կը տանք»։

Ժողովուրդն այս յուսով «անհոգ» է մնում... Նա սկսում է աւելի պարտքեր անել իւրեան աւելի զուարճութեան տալ, որովհետև մի քանի ամսից յետոյ, առանց իւր աշխատութեան, նորա պարտքերը վճարելու են.....

Եւ իրաւ, շատ ժամանակ չէ, որ վանքի միաբանութեան կողմից երեք խումբ մուրացկաններ ճանապարհ են ընկնում դէպի աշխարհի զանազան կողմերը. մէկը գնում է դէպի Հնդկաստան, միւսը՝ դէպի Ամերիկա, իսկ երրորդը՝ դէպի Եւրոպայի կաթոլիկ երկիրները։ Նորանք իւրեանց ձեռքում ունենում են թղթեր, վկայականներ միաբանութեան կողմից ստացած, որոց մէջ ամենասարսափելի գոյներով նկարագրուած է լինում Պարսկաստանի կաթոլիկ եկեղեցու թշուառութիւնները, նոցա նիւթական չքաւորութիւնը, որ յառաջ է եկել պարսիկների և նոցա կառավարութեան հարստահարութիւնից. (ինչո՞ւ ոչ իրանց՝ աբեղաների հարստահարութիւնից....)

Ողբմութիւն հաւաքողների խումբերը վերադառնում են. որքան փող են բերում, յայտնի չէ. միայն կղերն սկսում է այնուհետև գիւղացոց պարտքերը տալ։

Բայց որպէս։

Կղերն սկսում է մի կողմից գնել գիւղացոց կալուածները, որ զանազան վաշխառուների մօտ գրաւ դրուելով՝ տիրացել էին, և այսպիսով վանքի միաբանութիւնը գիւղի ամենընտիր արտերը և այգիները դցում է իւր ձեռքը։ Միւս կողմից, նա գիւղացիներին փողը տոկոսով է տալիս և նորա մնացեալ կալուածները իւր մօտ գրաւ է դնում, և այսպիսով ժողովուրդն իւրեան պարտական անելով, բոլորովին ստրկացնում է...

Գիւղացիք սարսափումեն. «այդ ի՞նչ էր, որ դուք մեզ հետ արեցիք» գոռումեն նոքանք:—«Փողը ե կ ե ղ ե ց ո ւ անունով է հաւաքուած, մենք չենք կարող Աստուծոյ գանձանակը վատնել», պատասխանումեն աբեղաները:

Ինձ պատահեց աբեղաների մէկից հարցնել, թէ դուք ինչո՞ւ խլեցիք գիւղացիների կալուածները: Նա խիստ մարդասիրական կերպով պատասխանեց:—«Մենք ինքներս մշակելով այդ հողերը, աշխատում ենք գիւղացիներին երկրագործութեան կատարելագործուած օրինակներ ցոյց տալ»: Լաւ միտք է, եթէ այդպէս լինէր: Բայց կղերը այստեղ մշակումէ իւր հողերը թշուառ գիւղացիների քրտինքով, որոնք առաջ նոյն հողերի տէրերն էին. կղերը այս դէպքում մի հարստահարող կալուածատէր է և աւելի ոչինչ:

Եւ շատ բնական է, որ այդպէս լինէր. այժմ հռօմէական միաբանութիւններն, որոնք դէպի արևելք եկած են որպէս քարոզիչներ, Եւրոպայից աւելի նպաստ չեն ստանում, նորանք ստիպուած են այսպիսի խարդախ միջոցների դիմել, որովհետև մէջ տեղում հացի խնդիր կայ [1]):

Հռօմէական աբեղաներն այստեղ խառնվում են իւրեանց ժողովրդի և դատաստանական գործերին. նորանք ժողովրդի կողմից ուղղակի յարաբերութիւն ունին դիւանի հետ: Օրինակ, երբ որ գիւղացին դիւանին պէտք է հարկ վճարէ, բայց փող չունի, հարկը աբեղաներն են տալիս և գիւղացիներից պարտամուրհակ առնում: Նորանք գործումեն և ուրիշ առաքինական գործեր. օրինակ, երբ որ մի կնոջ ամուսինը գնացել է օտար աշխարհ բախտ որոնելու (տղամարդիկ մեծ մասամբ պանդխտութեան մէջ են ապրում), և կինը երկար ժամանակ ամուսնից ծախսելու արծաթ չի ստանում, կղերը նորան փող է տալիս, ի հարկէ տոկոսով, և ամուսնից փող եկած ժամանակ յետ է ստանում: Երևակայեցէք մի կնոջ վիճակ, որ յանձնուած կը լինի կաթոլիկ աբեղայի հոգաբարձութեանը....

---

[1]) Յօդուածս վերջացնելու վերայ էի, երբ հաստատ աղբիւրներից լուր ստացայ, որ Խոսրովիայի կաթոլիկ միաբանութիւնը գնել է նոյն գիւղից ոչ այնքան հեռու մի ամբողջ գիւղ Գուլիզան անունով: Ես զարմանում եմ. Պարսից կառավարութիւնը, որ արգելած է օտար պետութեանց հպատակներին Պարսկաստանում կալուածատէր լինել, ինչպէս է թոյլ տալիս հռօմէական Լազարիստ աբեղաներին գիւղեր և ագարակներ գնել...

Ես ասացի, թէ աբեղաները խառնվում են գիւղացոց և դատաստանական գործերում. որպէս զի ճիշտ գաղափար տամ, թէ ինչպիսի իրաւաբանական ճշմարտութիւններով են վճռվում նոցա մէջ վէճերը, ես կը յիշեմ մի դատ: Երկու կաթոլիկներ կռվում են միմեանց հետ և սաստիկ ծեծվում են: Կռիւը ծագում է նորանից, որ մինը հայհոյանք է տալիս միւսի վաղուց մեռած հօրը, իսկ երկրորդը փոխադարձաբար հայհոյում է առաջինի հօրը, որ նոյնպէս մեռած էր: Մեռելներին հայհոյելը Պարսկաստանում աւելի մեծ յանցանք է համարվում, քան կենդանիներին. բայց բանը նորանումն է, որ մէկի հայրը վախճանուել է որպէս ուղղափառ-կաթոլիկ, միւսի հայրը՝ որպէս հերետիկոս-Նեստորական: Կաթոլիկի որդին արդարանում է, որովհետև նա մեղք չէր գործել մի հերետիկոս հայհոյելով. իսկ հերետիկոսի որդին դատապարտվում է. որովհետև նա իրաւունք չունէր չար խօսիլ մի ուղղափառ հանգուցելու դէմ:

Ահա այս գիւղի ժողովուրդն է, որ կազմում է Թիֆլիս քաղաքի Թուլուղչիների ամբողջ հասարակութիւնը, որից հարցնելու ժամանակ, թէ ի՞նչ ազգից ես, բերնումը միշտ պատրաստ ունի «փռանկ» կամ «կաթոլիկ» բառերը. — թշուառականը մինչև անգամ մոռացել է իւր ազգութիւնը....

***

Պարսկաստանում սրից և վեղեմի մահմեդական հալածանքներից զերծ մնացած մի պատառ Հայերին այս նոր և աւելի վտանգաւոր եւրոպական օրսորդներից ազատ պահելու համար գործ դրուած միջոցները բոլորովին զոհացուցիչ չեն: Որովհետև իւր եկեղեցուց հրաժարուիլ ցանկացող և դէպի այլազգաւանները յարուղ մի Հայի կրկին դէպի մայրենի փարախը դարձնելու համար՝ մի վարդապետի նզովք, բանադրանք և եկեղեցական արարողութիւններից զրկելու սպառնալիքը, — այդ բոլորը հին և փտած զէնքեր են: Հասկանալու է, թէ ի՞նչ է, որ Հային զրաւում է դէպի մի օտար եկեղեցու դիրկ, և նորա ճարն անելու է: Ցայտնի բան է, որ փոքր ի շատէ խելացի մարդը երբէք չի հեռանալ իւր մայրենի եկեղեցուց. հեռանում են միայն տգէտները, և նորանք էլ ոչ թէ դաւանաբանական ճշմարտութիւններ որոնելու համար, այլ աճնական հաշիւներն ունենալու համար: Կամ նա որդի ունի, ցանկանում է, որ միսսիօնարի մօտ ձրի կրթութիւն ստանայ, կամ դա-

տաստանական վէճ ունի, նորանցից պաշտպանութիւն է սպասում [1]), կամ աղքատ է, փողի կարօտութիւն ունի, կամ վերջապէս զանազան պատճառներով իւր եկեղեցուց զզուած է:

Պարսկաստանի Հայոց հոգևոր կառավարութիւնն այնպիսի մի բարձր նշանակութիւն ունի, որ եթէ իւր պարտաւորութիւնները խղճմտաբար կատարելու լինի, նա կարող է լիակատար բաւականութիւն տալ իւր ժողովրդի պահանջներին, որ նա ամենևին դէպի այլադաւան եկեղեցիները յարուելու ցանկութիւն չունենայ:

Մեր ասածն աւելի շօշափելի կերպով ապացուցանելու համար՝ նախ խօսինք այն բանի վերայ, թէ ի՞նչ նշանակութիւն ունի Պարսկաստանում հոգևոր կառավարութիւնը:

Պարսկաստանը իւր ծայրայեղ-միապետական կառավարութեան մէջ դարձեալ չը կարողացաւ թուլացնել իսլամի հոգևոր—աստուածպետական զօրութիւնը: Մ օ լ լ ա ն միշտ մնաց իւր բարձր նշանակութեան մէջ, որպէս կ ր օ ն ք ի և ս ո ւ ր բ օ ր է ն ք ի աւանդապահ, որպէս մեծ մարգարէի և նորա յաջորդների ներկայացուցիչ, որոնք իւրեանց ձեռքումն ունէին ժողովրդի թէ հոգևոր և թէ մարմնաւոր իշխանութիւնը: Այս պատճառաւ մահմեդական հոգևորականութիւնը վայելում է խիստ ընդարձակ իրաւունքներ ժողովրդի կեանքի մէջ: Այս իրաւունքներից չը զրկուեցան և ոչ-մահմեդական ազգերի հոգևոր ներկայացուցիչներն իւրեանց ժողովրդի վերաբերութեամբ: Հայերի հոգևոր առաջնորդը համարվում է Հայ ժողովրդի որպէս եկեղեցական, նոյնպէս և աշխարհային գլխաւորը. տէրութիւնը նորան է ճանաչում իբրև ազգի ներկայացուցիչ: Նա իրաւունք ունի միջամտութիւն դործելու Հայերին վերաբերեալ բ ո լ ո ր գ ո ր ծ ե ր ի մէջ:

Մի այսպիսի իրաւունք վայելում էր մի ժամանակ Կ. Պոլսի Հայոց պատրիարքը, բայց Կ. Պոլսի մնացող Հայերն այնքան խոհեմ գրանուեցան, որ պատրիարքի կղերա-միապետական իշխանութիւնը փոխեցին ս ա հ մ ա ն ա դ ր ա կ ա ն վարչութեան: — Դա մի արտօնութիւն էր, որ ազգը համարեա անգիտակցաբար ստացաւ, այնժա-

---

[1]) Միսսիոնարները իւրեանց դեսպանների և կոնսուլների զօրութեամբ, կարողանում են մեծ դեր խաղալ իւրեանց ժողովրդի քաղաքական կեանքի մէջ. նորանք մինչև անգամ կարողանում են փոխել տալ մի երկրի դատաւորի, եթէ նա իւրեանց նպատակներին յարմար չէր:

մանակուայ թուրքաց կառավարութեան նեղ դրութիւնից օգուտ քաղելով: Թէև սահմանադրութիւնը այն օգուտները չը բերեց՝ որքան կարող էր և որքան սպասվում էր, որովհետև պօլսեցի պառոտախօս էֆէնդիներն այնքան գործ չը շինեցին, որքան դատարակ աղմուկներ բարձրացրին, այսու ամենայնիւ սահմանադրութիւնը դարձեալ կը մնայ իւր արժանաւորութեան մէջ, որպէս մի ժանդոտած, բայց հատու դէնք, որ լաւ բանեցնողի ձեռքում կը սրբուի և կրկին կըստանայ իւր նշանակութիւնը:

Այժմ Պարսկաստանի հոգևոր կառավարութիւնը նոյն դրութեան մէջ է, ինչ դրութեան մէջ էր պատրիարքի իշխանութիւնը Կ. Պօլսում սահմանադրութիւնից առաջ: Առաջնորդը իւր թէմի Սուլթանն է. նա ինչ որ կամենում է, անում է, առանց ոչ ոքի հաշիւ ու համար տալու: Նա ստանում է իւր վիճակի իւրաքանչիւր ընտանիքից (ծուխից) մի նշանակեալ հոգևոր տուրք. նա ստանում է առանձին տուրք մկրտութեան, պսակի և թաղման համար: Նա ստանում է վարձ տգէտ քահանաներ ձեռնադրելու համար. նա ստանում է և քաղաքավարի «աջահամբոյրներ», երբ մէկի դատաստանական գործը դիւանում շինում է, շիտկում է...Նա շատ բաներ է ստանում, և այդ բոլորն այլ խօսքով կոչվում է հոգևոր պտուղ...[1])

Բոլորը, ինչ որ ստանում է առաջնորդը, նորա անձնական սեպհականութիւնն է. նա չունի իւր մօտ ոչ կօնսիստորիա և ոչ որ և իցէ վերադիտող ատեան: — Նա վարվում է իւր ժողովրդի հետ այնպէս, որպէս կապալառուն իւր վարձած այգու հետ, որ եթէ պտուղից չը կարողանայ աւելի շահուիլ, կսկսէ ծառերի ճիւղերը կտրատել և ծածուկ վաճառել....

Թողնենք հարցի նիւթական կողմը, դառնանք նորա վարչական նշանակութեանը: Շատ պարզ է, որ միապետութիւնը, մանաւանդ հոգևոր կառավարութեան մէջ, աւելի բռնապետական կերպարանք է ստանում, երբ իրաւունքի լաւ կամ վատ գործադրութիւնը կախումն է ունենում միմիայն մի մարդու կամայականութիւնից: Այստեղ գործերի ընթացքը կապուած է կառավարող անձի բարոյական յատ-

---

[1]) Վիճակային առաջնորդի ստացած յիշեալ հոգևոր արդիւնքներից դուրս է այն վարձատրութիւնը, որ ստանումն քահանաները որպէս վարձ իւրեանց եկեղեցական ծիսակատարութեանց համար:

կութիւնների հետ, որովհետև նորա իշխանութիւնը սահմանափակուած չէ, և նորա կամայականութիւնը թէ լաւութեան և թէ վատութեան մէջ սահման չունի: Փնտրելով մի քանի տասնեակ տարիների Պարսկաստանի հոգևոր առաջնորդների գործունէութիւնը, աւելի պարզ կերպով երևան է գալիս մեր ասածների ճշմարտութիւնը. նորանցից ոմանք, բնաւորապէս տրամադրուած լինելով դէպի հասարակաց բարին, թողել են բաւականին ազգօգուտ գործեր, իսկ ոմանք՝ խիստ սև յիշատակներ...Բայց ոմանք եղել են բոլորովին անտարբերներ, ոչ լաւն են գործել և ոչ վատը. — այսպիսիք նոյնպէս լաւերի կարգն են անցնում. որովհետև Հայի համար միշտ լաւ մարդ է նա, որ վնաս չի տալիս, որպէս ճշմարիտ մարդ է նա, որ գող չէ: Հայը մարդկութիւնից շատ փոքր պահանջմունք ունի. նա չը գիտէ, որ գող կամ վնասակար չը լինելը մեր անձնական պարտաւորութիւնն է, և եթէ մենք չենք գողանում, ղորանով մի բարի բան չենք գործում: Մտածութեան այսպիսի տրամադրութեան մէջ գտնուելով մեր ժողովուրդը, նա իւր առաջնորդից մի աւելի մեծ բան չի պահանջում, նա գոհ է, երբ նա չը լինէր գող և յափշտակող: — «Կիրակոսը լաւ մարդ է, ասում է Հայը, որովհետև Մարտիրոսի փողը նորա ձեռքն ընկաւ, բայց չը կերաւ»:

Բայց նայելով այն դիրքին, որ Պարսկաստանում բռնած են Հայոց առաջնորդները, նայելով այն արտօնութիւններին, որ նորանք վայելում են պետութիւնից, բոլորովին իրաւունք ունէին պահանջել, որ նորանք վարուէին համաձայն իւրեանց նշանակութեանը, նորանք ժողովրդի բարին մտածէին, նորա ժամանակակից պահանջներին բաւականութիւն տային և ոչ միայն իւրեանց քսակը հարստացնելու աշխատէին: Բայց քանի որ առաջնորդի իրաւունքները մի կանոնաւոր ձևի մէջ դրուած չեն, դոցանից և ոչ մինը սպասել կարելի չէ:

Ի՞նչ ելք կայ:

Մեր կարծիքով պէտք է հետևիլ այն օրինակին, ինչ որ արաւ Թուրքիայի Հայը, պատրիարքի միապետական իշխանութիւնը փոխելով սահմանադրական վարչութեան: Պարսկաստանում դա փրկարար միջոցներից ամենադիւրաւորն է: Բայց հարցը նորանումն է, թէ արդեօք Հայերին Պարսկաստանում թոյլ կը տրուի՞ ունենալ ազգային առանձին սահմանադրական վարչութիւն: Այդ մասին ոչինչ տարակոյս չը կայ, քանի որ առաջին փորձը աչքի առջև

ունինք: Շատ տարի չէ (1873 թուին), որ Թէհրանի Հայերը փորձ փորձեցին ունենալ ազգային սահմանադրական վարչութիւն, և բարձր կառավարութիւնը չը մերժեց նոցա խնդիրքը, շնորհելով բոլոր արտօնութիւնները, ինչ որ պէտք էր մի ազգային ազատ սահմանադրական վարչութեան: Բայց եթէ գործը յառաջ չը գնաց, և համարեա իւր խանձարուրի մէջ մեռաւ, պատճառն այն էր, որ գործիչ անձինքն պատրաստուած չէին. նորանք սկսեցին և թողեցին, առանց շարունակելու համբերութիւն ունենալու: Բացի դորանից, Թէհրանը թէև Պարսկաստանի մայրաքաղաքն է, բայց Հայութեան կենտրոն չէ, մի այսպիսի գործ պէտք էր հիմնել այն տեղում, ուր Հայերն աւելի խստ բնակութիւն ունին, ուր նոքա իւրեանց զարգացումով աւելի բարձր են, ուր նոցա նիւթական դրութիւնը աւելի յաջող պայմանների մէջ է: Այդ մասին աւելի յարմար է Ատրպատականը, և Դավրէժ քաղաքը կարող է նորա կենտրոնը լինիլ:

Մենք համոզուած ենք, որ ազգային սահմանադրութիւնը սկզբում մի նշանաւոր օգուտ չի կարող բերել նաև Ատրպատականում, ժողովրդի անպատրաստ լինելու համար: Դա կը լինէր միայն սկսել գործը իւր ժամանակից առաջ, որ անհմուտ գործադրողների ձեռքում խեղաթիւրուելով և այլանդակուելով, մի աւելի հրէշաւոր բան պիտի դառնար:

Բայց մենք հայերս առհասարակ նախապատրաստուած մարդիկ չենք, մենք սովորումենք գործել գործի մէջ. օրինակ, մեզանում վարժապետը սովորում է մի առարկայ, նոյն առարկան ծուռ ու սխալ կերպով աշակերտներին դաս տալով, բժիշկը սովորում է բժշկութիւն, աւելի մեծ թւով մարդիկ կոտորելով. լրագրապետը սովորում է գրել, յիմար թերթեր դուրս տալով.—ամեն գործ մեզանում այսպէս է յառաջ գնում...

Թէև մենք ընդդէմ ենք դօնկիշօտութեան, թէև մենք գիտենք, որ ամեն մի վերանորոգութիւն որ և իցէ ժողովրդի կեանքի մէջ լինում է աւելի հիմնաւոր և աւելի օգտաւէտ, երբ ժողովուրդը հասնում է նորան իւր կանոնաւոր զարգացումով, յաջորդաբար, և ոչ թռիչքներ գործելով,—այսու ամենայնիւ, Պարսկաստանում ազգային սահմանադրութիւն ունենալու խնդրի մէջ մենք խորհուրդ կը տայինք տեղային հայերին՝ ամենայն վստահութեամբ դիմել այս գործին: Ժողովուրդը դորանով շահած կը լինէր երկու բան, առաջին՝ կանոնաւոր ձևերի մէջ կը դնէր տեղային հոգևոր կառավարութիւնը, երկրորդ՝

որ նա առ այժմ ստացած կը լինէր մի արտօնութիւն, որը մի քանի տասնեակ տարիներից յետոյ գուցէ դժուար կը լինէր ձեռք բերել...

Թէև բաւականին անբնական մի երևոյթ է տիրող ազգի անկարգ միապետական կառավարութեան մէջ մի մասնաւոր ազգի ունենալ առանձին սահմանադրական վարչութիւն, բայց այլապէս լինել կարելի չէ, քանի որ որպէս Թուրքիայում, նոյնպէս և Պարսկաստանում տիրապետող ազգերը խիստ թոյլ և դանդաղ կերպով են շարժվում, իսկ քրիստոնեաները համեմատաբար խիստ յառաջ են գնացած. նորանք սպասել կարող չեն, մինչև մահմեդականները, դուրս գալով վաղեմի նախապաշարմունքներից, նորէն ոտք կոխէին յառաջադիմութեան շաւղի վերայ:

Բայց որպէս և լինէին, պէտք է այս քանով ևս գոհ լինել, որ Պարսից կառավարութիւնը այժմ իւր ոչ-մահմեդական ազգերին չի խնայում որևիցէ արտօնութիւն, որ կարող էր նորանց հանդստութեանը և յառաջադիմութեանը նպաստել: Ինչո՞ւ օգուտ չը քաղել ժամանակի բերմունքից, քանի որ գիտենք, թէ պետութիւնները որքան քաղաքակրթվում են (ի հարկէ կեղծ քաղաքակրթութեամբ), որքան զարգանում են, այնքան նորանք ժլատ են լինում իւրեանց հպատակ մանր ազգերին ազատ արտօնութիւններ շնորհելու ... [1])

* * *

Այժմ դառնանք այն հարցին, թէ արդեօք Պարսկաստանի հայերը ցոյց տալիս են որևիցէ ձգտողութիւն դէպի ժամանակակից կրթութիւնը, կամ նոցա մէջ երևում են յառաջադիմութեան նշաններ: Արդարև, Պարսկաստանի Հայի անցեալն անցել է խիստ տխուր յիշատակներով, և նորա ներկան թէև այնքան նախանձելի չէ, բայց նա արդէն պատրաստվում է մի փառաւոր ապագայի համար: Օրինակ, առնենք Դավրէժի հայերը և քննենք այս քաղաքի մերայնոց մտաւոր գործունէութիւնը: Սկսենք դպրոցից: Դավրէժի ազգային դպրոցի հիմքը դրեց արժանայիշատակ Սահակ եպիսկոպոս Սաթունեանը 1850 թուին. նա կառոյց դպրոցի շէնքը և ժողովեց այնտեղ Հայ

---

[1]) Մենք խոստանում ենք առանձին յօդուածներով աւելի մանրամասն կերպով բացատրել այս հարցը, ցոյց տալ նորա իրագործելու միջոցները, և Պարսկաստանում նորան որպիսի կերպարանք տալու ձևը:

մանուկները, որոնցից շատերը մինչև այն օրը մի տիրացուի մօտ այբբեն սովորելու բախտից ևս զուրկ էին: Սաթունեանը կանգնեց նոյն դպրոցի մօտ և մի հոյակապ շինուածք, որպէս առաջնորդարան, և առաջնորդի «դուռը» այն օրից պաշտօնական կերպարանք ստացաւ, երբ նորանից առաջ անյայտ և բոլորովին աննշան մի բան էր:

Ցաւալին այն է, որ յիշեալ հիմնարկութիւններից յետոյ Սաթունեանի կեանքը կարճատև եղաւ, այդ պատճառաւ նա չը կարողացաւ կատարել իւր խիստ ցանկալի փափագը, այն է՝ դպրոցի գոյութիւնը պահպանելու համար նորա նիւթական դրութիւնը մշտապէս ապահովել: Բայց նորա մահից յետոյ դարձեալ մնաց մի գումար, որ դպրոցի սկզբնական հիմնադրամն դարձաւ: Սաթունեանի մահից յետոյ մինչև այժմ 26 տարուայ միջոցում միմեանց յաջորդեցին 6 առաջնորդներ: Այս «նորին սրբազնութիւններից» և ոչ մէկը մի քար անգամ չը դրեց այն շինուածքի վերայ, որի հիմքը դրել էր Ատրպատականի արժանայիշատակ բարերարը: Այլ խօսքով, դպրոցը դոցա օրերով ոչ միայն իւր ուսումնական և նիւթական վիճակի մէջ յառաջ չը գնաց, այլ հետզհետէ ընկնիլ սկսաւ[1]):

Սաթունեանը շինեց դպրոցը, առաջնորդարանը և այլ աղգօգուտ հիմնարկութիւններ,—բոլորը իւր փողով, այսինքն այն փողով, որ նա ստանում էր վիճակից որպէս «հոգևոր պտուղ»: Բայց նա ժողովրդից ստացածը կրկին ժողովրդին յետ դարձրեց, իւրեան չը սեպհականեց: Նոյն վիճակից նորա յաջորդներն ստանում էին նոյնքան, բայց այս վերջինները «հոգևոր պտուղը» իւրեանց ջիբը դրին.....

Ճշմարիտ է, եթէ Սաթունեանի յաջորդներից ամեն մէկը մի մասնաւոր գումար աւելացրած լինէր դպրոցի դրամագլխի վերայ, դպրոցը բոլորովին նիւթապէս ապահովուած կը լինէր, բայց ընդ-

---

(1) Իբրև բացառութիւն, խղճմտանքի ընդդէմ կը լինէր չը յիշել Գէորգ եպիսկոպոս Վեհապետեանցին, որոյ առաջնորդութեան օրերով դպրոցը բաւականին ծաղկիլ սկսաւ, և նորին սրբազնութիւնը, իւր սեպհական փողից մինչև 6000 ռուբլի ծախսելով, անձամբ Թէհրան գնաց, նորին մեծ. Շահին ներկայացաւ, և դպրոցի համար արքունի հրովարտակ (ֆէրման) և կառավարութիւնից 250 թուման մշտական օժանդակութիւն ստացաւ, որ մինչև այսօր չնորհվում է դպրոցին:

հակառակն, նորանք այնքան անփոյթ գտնուեցան, որ չաշխատեցին մինչև անգամ հանգուցեալի թողած գումարը օրինաւոր կերպով շահեցնել, այլ այս և այն մարդու ձեռքն ընկնելով, համարեա ոչնչացաւ....

Թողեալ դպրոցի միայսպիսի անմխիթար նիւթական վիճակը, նորա ուսումնական կամ կրթական մասը սարսափելի այլանդակութեան մէջ էր: Երևակայեցէք ձեզ մի վարժատուն, ուր վարժապետը բոլորովին հարբած է ներս մտնում, աթոռի վերայ նստած ժամանակ նորա քունը տանում է, — աշակերտներն այս բախտաւոր բոպէին էին սպասում:— Նորանք հավաքվում են վարժապետի չորս կողմը, մինը պոչին թել կապած ճանճ է թռցնում նորա երեսի վերայ, միւսը մօրուքի հետ է խաղում, երրորդը՝ այս խօսքերն է ասում .«վարժապե՛տ, վարժապե՛ա, մի փիալայ էլ (բաժակ) համեցէ՛ք»: Երևակայեցէք ձեզ մի վարժատուն, ուր աշակերտը առաւօտից մինչև իրիկուն լսում է իւր դաստիարակից այսպիսի խօսքեր. «շուն շան որդի»—«հառամ ղաղա» —« էշի լակոտ և այլն,— և միշտ ընդունում է իւր մարմնի վերայ նորա ձեռքի անտանելի հարուածները: Երևակայեցէք վերջապէս մի վարժատան դրութիւն, ուր ուսման ամբողջ շրջանը Սաղմոսից և Աւետարանից այն կողմը չէ անցնում.....

Ի՞նչ էր այս բոլոր անկարգութեանց պատճառը:

—Այն, որ դպրոցը գտանվում էր եկեղեցական անմիջական իշխանութեան ներքոյ և նա «եկեղեցականացրած» էր.....

Բայց Սաթունեանը այս նպատակով չէր շինած դպրոցը. նա չը դրշմեց դպրոցի վերայ «հոգևոր» անունը. նորա դպրոցը ճիշտ ժողովրդական էր. նա շինուած էր ժողովրդի փողով և ժողովրդի համար: Եւ Սաթունեանն ինքը ժողովրդական մարդ էր. նա ոչինչ առիթ չունէր իւր դպրոցը կնքել «հոգևոր» անունով.....

Պարսկաստանում թէ աշխարհականը և թէ հոգևորականը կարող չեն մինչև անգամ համալսարան հիմնել առանց ոչ ոքից հարցնելու, մեր բարեսիրտ կառավարութիւնը այսպիսի բաների մէջ մտնել չէ սիրում:

Այո՛, դպրոցը բոլորովին ժողովրդական էր, բայց նորան եկեղեցականացրին, և եկեղեցականացնելով՝ մեռցրին.....

Ժողովուրդն այս հասկացաւ, բայց հասկացաւ խիստ ուշ..... Նա ազատեց առաջնորդի ձեռքից դպրոցի միայն կմախքը.....

նորան պէտք էր նորից շունչ և հոգի տալ, — այդ վերջինը կարօտ էր դրամի։

Ժողովուրդը, թէև աղքատ, բայց եռանդոտ դէպի հասարակաց բարին, սկսեց իւրաքաչիւրի կարողութեանը համեմատ հաւաքել մի օժանդակութիւն, դպրոցի նիւթական վիճակը բարւոքելու համար[1]։ Բարեբար անձանց նուէրներն հասան մինչև մի նշանաւոր գումարի, որի տոկոսով դպրոցը կարողացաւ ունենալ առաջուայ տիրացու վարժապետների տեղ՝ մի տեսուչ և եօթն վարժապետներ։ Դպրոցի մէջ մտան երկրի պահանջներին համեմատ բացի հայերենից, ֆրանսերէն ռուսերէն և պարսկերէն լեզուներ, և դիտութիւնից՝ զանազան առարկաներ։ Դպրոցն ունեցաւ հինգ դասատուն, և բաւականին բարեկարգ ձևի մէջ մտաւ։ Նորա կառավարութիւնը յանձնուեցաւ ժողովրդից ընտրուած հոգաբարձութեան, որոյ եռանդուն գործունէութիւնը առաջին տարուայ ընթացքում ցոյց տուեց իւր պտուղները։ Առաջին հարցաքննութիւնը, որ եղաւ 1875 թուին, դրաւեց մինչև անգամ քաղաքում գտնուած եւրոպացիների և եւրոպական կօնսուլների ուշադրութիւնը, որոնք իւրեանց ներկայութեամբ պատուեցին հայ մանուկների ուսման հարցաքննութիւնը։ Ներկայ էր նաև քաղաքի արտաքին գործոց վէզիրի փոխանորդը, որ մինչ այն աստիճան գոհ մնաց, որ նուիրեց դպրոցին մի նշանաւոր գումար։

Յիշեալ վերանորոգութիւններից յետոյ Դավրիժոյ ազգային դպրոցը թէև տակաւին ունի իւր ինչ-ինչ թերութիւնները, բայց երկրի դրութեանը նայելով, նա կարողացել է դպրոցների կատարելատիպը համարուիլ։ Իբրև ապացոյց՝ ես հարկաւոր եմ համարում յիշել, որ շատ ժամանակ չէ Դավրէժի արքունի դպրոցի [2])

---

[1]) Այս վերանորոգութիւնը եղաւ 1874 թուին Աստպատականի՝ այժմեան վիճակաւորի Անդրէաս եպիսկոպոսի առաջնորդութեան առաջին տարուայ մէջ։ Պէտք է հրապարակաւ շնորհակալութիւն յայտնել նորին սրբազնութեանը, որ նա ոչ միայն չընդդիմացաւ ժողովրդի կամքին, այլ ժամանակի պահանջների հետ հաշտուելով, իւր կողմից ևս բաւականին օգնեց ժողովրդին դպրոցի դրութիւնը բարւոքելու համար և քաջալերեց նոցա եռանդը։

[2]) Խոստանալով ուրիշ անգամ աւելի մանրամասն գրել Դաւրիժի արքունի դպրոցի մասին, առ այժմ այսքանը կասեմ, որ նա ամբողջ Պարսկաստանում գտնուած երկու արքունի դպրոցներից երկրորդն է. հիմնուեցաւ այս տարի։ Ինչպէս մի մարդ երկար ժամանակ սոված մնալով, ձեռն ընկած

տեսուչը այցելութեան եկաւ մեր դպրոցը. դա էր գեներալ Միրզա-Ջաւադ խանը. գիտէ գաղղիերէն և բաւականին կրթեալ երիտասարդ է: Նա տեսնելով Հայոց դպրոցը, շատ գոհացուցիչ գտաւ նորա կազմակերպութիւնը և պահանջեց ուսումնարանի ծրագիրը: Այս այցելութիւնից յետոյ մի քանի շաբաթ հազիւ էր անցել, որ պատուելի տեսուչը ուղևորուեցաւ դէպի Թէհրան, այն նպատակով, որ այնտեղ աշխատէ, դուցէ կարողանայ փոխել տալ Դավրէժի արքունի դպրոցի ծրագիրը, որ տրուած էր լուսաւորութեան վէզիրից:

Բայց մի ուրախալի երևոյթ այն է, որ դպրոցը, մանաւանդ հայի դպրոցը, գրաւում է մահմեդական բարձր հոգևորականի ուշադրութիւնը: Այս օրերում Դաւրիժի մեծ մուշտայիդը, որ կոչվում է Հուջաթ-ուլ-իսլամ (իսլամի հաստատութիւնը) իւր այցելութեամբ նոյնպէս պատուեց մեր դպրոցը: Նորին Սրբազնութիւնը ման եկաւ բոլոր դասատները, ամենի մէջ հարցրեց ուսանելի առարկաները, քննեց, թէ որքան աշակերտները յառաջ էին գնացած պարսկերէնի մէջ, և իւր հեռանալու ժամանակ յայտնեց իւր կատարեալ համակրութիւնը, թէ «ինքը շատ ուրախ է, տեսնելով, որ հայերը կրթութեան համար այդ չափ հոգս են տանում, քանի որ պարսիկները բոլորովին անփոյթ են այդ մասին:

***

Այս բոլորից յետոյ ծագում է մի խնդիր թէ արդեօք Դավրիժի ազգային դպրոցը պիտի կարողանայ այս ընթացքը շարունակել, թէ ոչ:

Ցաւելով պէտք է պատասխանենք, թէ՝ ոչ, չը պիտի կարողանայ շարունակել:

Որպէս յիշեցինք, դպրոցը կառավարվում է գլխաւորապէս այն գումարի տոկոսով, որ վերջին անգամին բարերար անձինքներից հա-

---

կերակուրները միանգամով ուզում է լափել, այնպէս էլ եւրոպական կրթութեանը կարօտ պարսիկները, հիմնելով եւրոպական ձևով (?!!) մի դպրոց, կամենում են բոլոր ուսմունքները և գիտութիւնները նորա մէջ ամփոփել: Այժմ Դավրէժի անդրանիկ արքունի դպրոցի մէջ ինչ ասես դաս են տալիս. այբ-բեն, փիլիսոփայութիւն, բժշկութիւն, ճարտարապետութիւն, զինուորական կրթութիւն և շատ այսպիսի ութիւններ.... Այսպիսի մի դպրոցի հետ կարող է համեմատուիլ միայն ..... և մի հռչակաւոր կախարդի (անունը մոռացել եմ) ներկի կարասը, որտեղից նա ամեն գոյներ դուրս էր բերում,—կարմիր, սպիտակ, դեղին, սև, կանաչ և այլն:

ւաքուեցաւ որպէս դրամագլուխ։ Այս դրամագլուխը կազմուելուց յետոյ երկու տարուայ հաշիւները ցոյց տուին, որ դպրոցի մուտքը չի ծածկում նորա ելքը, այսինքն իւրաքանչիւր տարի ծախսերի մէջ բաւականին բաց է մնում, և այս բացը ծածկվում է դրամագլխից պակսեցնելով։ Մուտքի և ելքի մի այսպիսի զգալի անհաւասարակշռութիւնն առիթ է տալիս այժմէն մտածել, որ իւրաքանչիւր տարի դրամագլխից անդադար պակսելով, վերջապէս կը սպառուի նա, և դպրոցը փակուելու վիճակի կենթարկուի։ Դա շատ ցաւալի կորուստ կը լինէր, քանի որ մտածում ենք, թէ այս դպրոցը բարձր նշանակութիւն ունի ոչ միայն Ատրպատական նահանգի համար, այլ և ամբողջ Պարսկաստանի համար։

Ի՞նչ պէտք է արած։

Զանազան մտածողներ զանազան միջոցներ՞ են առաջարկում։ Ոմանք ասում են՝ Պարսկաստանի Հայոց վիճակը կարեկցական է, դիմենք ուրիշ երկրներում հարուստ բարերարների օգնութեանը, գուցէ նորանք օգնեն մեզ։—Լա՛ւ երաղ է, եթէ բարին կատարի...[1]։ Ոմանք ասում են՝ կրկին ժողովրդից օժանդակութիւն հաւաքենք։— Ժողովուրդն աղքատ է, նորան շատ ձանձրացնել չի կարելի, նա որքան կարող էր, տուաւ։ Ոմանք ասում են, թէ աշակերտների վերայ վճար նշանակենք։— Այն ժամանակ աղքատ ծնողներն իւրեանց որդիքը կը հանեն և բողոքականների դպրոցը կը տան, ուր ամեն ինչ ձրի է։ Ոմանք ասում են, թէ դպրոցի ուսումնական շրջանը նեղցնենք, դասատուներից մի քանիսը փակենք, ուսուցիչների թիւը պակասեցնենք, որպէս զի ծախսերը փոքրանան։— Այն ժամանակ դպրոցը կը կորցնի իւր նշանակութիւնը։ Վերջապէս շատ տեսակ խօսքեր են ասվում, բայց մենք դոցա և ոչ մէկը նպաստաւոր չենք գտնում։

Ապա ի՞նչ պէտք է արած, կը հարցնեն մեզ։

---

[1]) Շատ անմխիթար մի երևոյթ է տեսնել, որ Հայոց հարուստները բոլորովին անզգայ են դէպի հասարակաց գործը։ Դավրէժի ազգային դպրոցի մասին՝ շատ գրուեցաւ լրագրներում, մանաւանդ «Մեղուի» և «Մշակի» մէջ։ Բայց՝ մինչև այսօր չը գտնուեցաւ մի անձն, որ հեռու տեղից մի մասնաւոր բան նուիրած լինէր այս դպրոցին. չենք ասում մեծ գումարներ, այլ մինչև անդամ փոքր՝ բաներ, որպիսի են՝ թուղթ, գրիչ, գրքեր, պատկերներ նկատողական ուսման համար և այլ ուսումնական պարագայք։ Որովհետև դպրոցը՝ ոչինչ վճար չի ստանում աշակերտներից և մինչև անդամ թուղթը, գրիչը և գրքերը ձրի է տալիս նորանց։

Նախ քան ուղղակի պատասխանելը, մենք հարկաւոր ենք համարում կրկին վերադառնալ դպրոցի սկզբնաւորութեանը և մեր կողմից առաջարկել մի քանի հարցեր, — Ո՞վ հիմնեց այդ դպրոցը։— Դպրոցը հիմնեց Սաթունեան եպիսկոպոսը։ — Ի՞նչ դումարով հիմնեց։ Նա հիմնեց Ատրպատականի վիճակից ստացած հոգեւոր արդիւնքով։ — Այժմ այն արդիւնքն ո՞ւր է մնում։ — Նա մնում է այժմեան առաջնորդի քսակը....

Եթէ այդ քսակի հարցը վճռուելու լինի, ամեն ինչ պարզուած է։

Խօսելով Պարսկաստանի հոգեւոր կառավարութեան մասին, մենք արդէն ցոյց տուինք, թէ ո՞րպիսի աղբիւրներից է գոյանում առաջնորդի «հոգեւոր արդիւնքը» կամ այն եկամուտը, որ կոչվում է «հոգեւոր պտուղ»։ Մենք դարձեալ կը յիշեցնենք։ Այս «պտուղն» ստացվում է այն հարկերից, որ առաջնորդը դրել է իւրաքանչիւր տան վերայ։ Այս հարկերը նոյնպէս ստիպողական են, որպէս արքունի հարկերը. եթէ իւրեանց ժամանակին չստացուին, գործ կը դրուին ազդու միջոցներ, որպիսի են՝ փայտ, ծեծ և այլն։ Այս «պտուղն» ստացվում է մկրտութեան, պսակի և թաղման համար, որ նոյնպէս եթէ իւր ժամանակին չը վճարուի, յիշեալ եկեղեցական արարողութիւնները կը մնան անկատար։ Այս «պտուղն» ստացվում է և զանազան աղբիւրներից, որոնք այնքան անվայել են, որ նորանց շօշափելու ցանկութիւն չունինք....Բացի յիշեալ «պտուղներից», կայ մի ուրիշ ևս, որ կոչվում է աթոռահարկ։ — Դա մնում է Մայր Աթոռի (Էջմիածնայ) գանձարանը....

Պարսկաստանի հարստահարութեանց տակ ճնշուած մի ժողովուրդի կրկին ծանրաբեռնել այսպիսի հոգեւոր տուրքերով, վերջին աստիճանի անխղճութիւն է, բայց քանի որ ժողովուրդը սովորած է տալու, թող տայ. մենք նորա ջերմեռանդութիւնը վիրաւորելու միտք չունինք։ Բայց մոռացո՞ւմ է արդեօք ժողովուրդը, թէ իւր տուածը որտեղ է մնում։ — Մտնում է առաջնորդի քսակը...

Դարձեալ քսակի խնդիրը մէջ մնաս։

Հայերի մէջ, որքան յիշում եմ, Պարսկաստանի պէս չը կայ մի վիճակ, ուր հոգեւոր առաջնորդը, մի արեւելեան միապետի նման, ազատ և անձնիշխան կերպով՝ ժողովրդի վերայ հարկեր նշանակէր և այս ու այն եկեղեցական արարողութեանց համար առանձին տուրքեր ստանար։ Զանազան երկրներում կան զանազան ձևով հոգեւոր

վարչութիւններ, բայց նոցա և ոչ մէկը Պարսկաստանի ինքնահաճ կամայականութիւնը չունի: Մի տեղ՝ օրինակ՝ Ռուսաստանում, թէմերը ունին իւրեանց վիճակային կոնսիստորիան, ուր տնօրինվում են բոլոր եկեղեցական գործերը և կանոնաւոր հաշուի ու համարի տակ են ընկնում: Վիճակային հոգևոր արդիւնքը նոյնպէս տնօրինվում է կոնսիստորիայի ձեռքով և իւր նշանակութեանը համեմատ գործի է դրվում: Առաջնորդը, որպէս վիճակային հոգևոր կառավարութեան ներկայացուցիչ, իրաւունք չունի գոյացած արդիւնքից մի կոպէկ անդամ իւրեան սեպհականել. նա ունի իւր համար նշանակած ռոճիկ, որով ապրում է: Կան ուրիշ տեղեր, օրինակ Ցաճկաստան, ուր վիճակային հոգևոր ատեանը իւր ձեռքում ունի վիճակի կառավարութիւնը: Բայց Պարսկաստանում չը կան դոցա և ոչ մէկը. այստեղ կառավարում է միմիայն առաջնորդը և ամեն ինչ կախում ունի միայն նորա կամքից....

Մի՞թէ կարելի է այդ:

Մենք ամենևին չենք դատապարտում այս երևոյթը, թէ ինչու է եղած այսպէս. մենք գիտենք, որ Պարսկաստանի միապետութեան մէջ մի այլ ձևով հոգևոր կառավարութիւն կազմուիլ կարող չէր: Մենք գիտենք, որ Հայ կղերը երբ ազատ է, նա բռնակալ է, և եթէ այս կամ այն երկրում սահմանափակուած է նոցա կամայականութիւնը, այդ մասին պէտք է դոհ լինել բարձրագոյն տիրող կառավարութիւնից:

Այո՛, հայ կղերը սիրում է ազատութիւն, բայց նա ցանկանում է ազատութիւնը միմիայն իւր համար: Այն ցնորք է, որ շատ անգամ ասում ենք՝ «Հայոց եկեղեցին ժողովրդական է». եթէ նա մի ժամանակ ժողովրդական էր, դա ուրիշ հարց է, իսկ այժմ այդ չի երևացնում....

Ի՞նչ ելք կայ:—

Պէտք է վերանորոգել, պէտք է ոչնչացնել հին ձևը, և բոլորովին նոր կերպարանք տալ նորան:

Արդարև, մենք սկզբում խօսելով Պարսկաստանի հոգևոր կառավարութեան բարեկարգելու մասին, առաջարկեցինք սահմանադրական վարչութիւն. այո՛, բախտաւոր կը լինէր Պարսկաստանի Հայը, եթէ մեր երազն իրագործուէր.. Բայց քանի որ գիտենք մեր այստեղի ազգայնոց անհոգութիւնը, առ այժմ մեր կողմից բոլորովին անրջային ցնորք կը լինէր առաջարկել մի այսպիսի ձեռնարկութիւն:

Առհասարակ հայերն ապագայ պատրաստելու մէջ խիստ անփոյթ են, և մանաւանդ Պարսկաստանի Հայը.....

Ուրեմն ի՞նչ պէտք է անել — Բարեկարգել վիճակային հոգեւոր կառավարութիւնը և նորան իւր այլանդակութիւնից կանոնաւոր ձևերի վերածել, — դա առաջին քայլն է դէպի սահմանադրութիւն. դորանով ուղղին հարթվում է նոյն նպատակին հասնելու:

Բայց ո՞րպէս բարեկարգել, — այստեղ է գլխաւոր հարցը:

Բայց որովհետև բարեկարգութեան հարցը մի այնպիսի բաղադրեալ խնդիր է, որ այժմեան մեր յօդուածի համառօտութիւնը չի ներում նորան աւելի մանրամասնաբար ընդարձակելը, մենք խոստանում ենք բացատրել դորան մի շարք յօդուածներով: Իսկ առ այժմ կասենք մի քանի ընդհանուր խօսքեր:

Մենք բոլորովին ընդդէմ ենք կօնսիստօրիային, կամ մոցնել Պարսկաստանում այն ատենական կազմակերպութիւնը, որ բաղկացած է լինում միմիայն եկեղեցականներից՝ որ և իցէ առաջնորդի նախագահութեամբ: Եւ որովհետև Պարսկաստանի հոգևոր կառավարութիւնը միացնում է իւր մէջ թէ հոգևոր և թէ աշխարհային իրաւունքներ, այս պատճառաւ, և նորա կենտրոնական վարչութիւնը պէտք է կազմուած լինի՝ թէ հոգևորականներից և թէ աշխարհականներից. — առաջինները որպէս եկեղեցու ներկայացուցիչներ, իսկ վերջինները որպէս ժողովրդի ներկայացուցիչներ: Վիճակային առաջնորդը կը լինի տուեանի նախագահը. իսկ գործերը կը վճռուին ժողովի ընդհանուր հաւանութեամբ: Այն ժամանակ բոլոր վիճակային «հոգևոր արդիւնքը», որ ստացվում է այլևայլ անուններով, կանոնաւոր սահմանի մէջ դրուելով, կը հաւաքուին և կրմտնեն ազգային կ ե ն տ ր ո ն ա կ ա ն ս ն դ ո ւ կ ը և ոչ առաջնորդի ք ս ա կ ը, որպէս մինչև այժմ լինում էր:

Հիմայ տեսա՞ր, ընթերցող, ք ս ա կ ի հարցը մասամբ վճռուեցաւ. բայց կարելի է դու հարցնես՝ ապա առաջնորդն ինչո՞վ պէտք է ապրի:—Մենք կը սահմանենք նորա համար մի որոշեալ ռոճիկ, որքան կը բաւականանար մի եկեղեցականի համեստ կեցութեանը: Այսպիսով մենք շահած կը լինինք երկու բան. առաջին՝ վիճակային հոգևոր կառավարութիւնը կարգ-կանոնի մէջ կը դրուի, երկրորդ՝ վիճակային «հոգևոր արդիւնքը» առաջնորդի քսակից դուրս կորզելով, աւելի ազդօգուտ հիմնարկութեանց վերայ գործ կածուի:

Եւ որովհետև բոլոր մեր այս խորհրդածութիւնները յառաջ

եկան Դավրէժու ազգային դպրոցի նիւթապէս ապահովված չը լինելու հարցից,— այժմ հարկաւոր ենք համարում կրկին վերադառնալ դէպի նոյն հարցը:

Վիճակային բոլոր «հոգևոր արդիւնքը» հաւաքուեցաւ կենտրոնական սնդուկի մէջ, առաջնորդի ուռճիկը տուին, ատենական ծախսերն արին, այժմ սնդուկի մէջ մնում է աւելացած փող[1]), ի՞նչ անենք այդ փողը:— Այդ փողով ահա Դավրէժի ազգային ուսումնարանը բոլորովին կապահովենք և նորա ուսումնական շրջանը աւելի կընդարձակենք:

Այստեղ յառաջ է գալիս մի նոր խնդիր, թէ ինչու միայն Դավրէժի ազգ. ուսումնարանը պէտք է շահուի կենտրոնական սնդուկից, իսկ միւսները զուրկ մնան:—

Միւսները զուրկ չեն մնալ. նորանք նոյնպէս կը շահուին, բայց ուրիշ կերպով: Դավրիժոյ ազգային դպրոցը, որպէս ամբողջ Ատրպատականի կրթութեան կենտրոնական աղբիւր, յանձն կառնէ զանազան գաւառներից ընդունել իւր մէջ աշակերտներ. նորանք կը պահուին ուսումնարանի ծախսով, և իւրեանց կրթութիւնն ստանալուց յետոյ, կը վերադառնան իւրեանց հայրենիքը, այնտեղ կը լինին վարժապետներ կամ քահանաներ: Այսպիսով դիւղական ուսումնարաններն ազատուած կը լինին յիմար տիրացուներից, և դիւղական եկեղեցիներն ազատուած կը լինին տգէտ քահանաներից:

Բայց բացի կենդրոնական սնդուկից, ես մոռացայ յիշել արդիւնքի մի ուրիշ աղբիւր ևս, որից Դավրէժի ազգային դպրոցը նոյնպէս կարող է շահուիլ: Ես, վերևում խօսելով վիճակային այլ և այլ հոգևոր տուրքերի մասին, ասացի, թէ ժողովրդից հաւաքվում է մի առանձին տուրք ևս, որ կոչվում է «ամրոռահարկ», թէ դա մնում է Էջմիածնայ գանձարանը: Թողեալ այդ, Ատրպատականի երկու վանքերի, այսինքն Ս. Ս. Թադէոս և Նախավկայի վանքերի եկամուտներն դարձեալ նոյն գանձարանն են մնում, Էջմիածին են ուղարկվում...

Դիցուք թէ ժողովուրդը տգէտ-ջերմեռանդ է և չէ հասկանում,

---

(1) Պարսկաստանի երկու վիճակների, այսինքն Ատրպատականի և Արաղիստանի, հոգևոր արդիւնքն այնպիսի մի գաղտնիք է, որ մինչև այսօր խորին կերպով պահուած է եղել թէմական առաջնորդների մօտ. ուրեմն նորա որքանութեան վերայ ճիշտ դատել անկարելի է, քանի որ աչքի առջև չունենք որ և իցէ գրաւոր ապացոյց:

Էջմիածինն ի՞նչ իրաւունքով է քարշում Պարսկաստանից աղքատ և հաղարաւոր պէտքեր ունեցող ժողովրդի արծաթը։ Չը մոռանանք, որ երկու վանքերից մէկը, այսինքն Ս. Նախավկայի վանքը ունի մի ամբողջ գիւղ Դարաշամբ անունով. այս գիւղը պատկանում է վանքին, որ նուիրուած է պարսից մեծ իշխան Նաիբ-ուլ-Սալթանայից [1]։ Կարծեմ նորին բարձրութիւնը այն մտքով չը նուիրեց այս գիւղը վանքին, որ նորա արդիւնքը Էջմիածինը տանէ. նա նուիրեց Պարսից տէրութեան մէջ գտնուած մի վանքի և Պարսկաստանի Հայ ժողովրդի պէտքի համար գործածելու։

Բացի վերոյիշեալներից, կան և ուրիշ կալուածներ ևս, որոնց արդիւնքը Էջմիածինն է տանում, որոնք բոլորն էլ, ամենայն իրաւամբ, պէտք է սեպհականել Դավրիժի ազգային դպրոցին [2]։

Բայց ո՞վ պէտք է իրագործէ մեր առաջարկած բարեկարգութիւնները։ — Մենք պատասխանում ենք. — ժողովուրդը։

Այո՛, ժողովուրդը. որովհետև նա է իւր իրաւունքների պաշտպանը և տէրը. նա պէտք է բողոքէ իւր վերայ գործ դրած անի-

---

[1]) Նաիբ-ուլ-Սալթանա՝ նշանակում է թագաւորի փոխանորդը կամ երկրորդականը. այսպէս կոչվում էր Աբբաս-Միրզա մեծ իշխանը, որ իւր ժամանակին Պարսկաստանի Բիսմարկն էր։ Դա Ռուսաց Պարսից հետ պատերազմի ժամանակը Պարսկաստանի ամբողջ արևմտեան մասի փոխարքան էր, որ կապեց Ռուսների հետ Թուրքմէն-Չայի դաշնադրութիւնը։ Նոյն ժամանակ, երբ Պարսկաստանի Հայերն սկսեցին գաղթել դէպի Ռուսաստան, Աբբաս-Միրզան ամենայն հնարք ի գործ էր դնում, որ արգելէ գաղթականութիւնը. այս պատճառաւ նա շնորհեց Հայերին շատ արտօնութիւններ, օրինակ, Դավրէժի Հայերին բոլորովին ազատ կացոյց հարկավորութիւնից, մէլիքներին, տանուտէրներին մշտական ռոճիկներ սահմանեց, վիճակային առաջնորդին նոյնպէս թոշակ նշանակեց, նշանաւոր եկեղեցիներին և վանքերին կալուածքներ շնորհեց, որոնց թուումն է և Ս. Նախավկայի Դարաշամբ գիւղը։

[2]) Մենք լսում ենք, որ Դավրիժի ազգային դպրոցի հոգաբարձութիւնն արդէն առանձին աղերսագրով դիմել է Նորին Վեհափառութեան Կաթողիկոսին, խնդրելով, որ Ատրպատականի ինչ-ինչ կալուածքների և եկեղեցեաց «աթոռային» արդիւնքները, որ մտնում էին մինչև այսօր Էջմիածնի գանձարանը, այսուհետև յատկացնվին Դավրիժի ազգային դպրոցին։ Ցուսով ենք, որ Նորին Վեհափառութիւնը, տեսնելով այս գործի կարևորութիւնը, կը յարգէ հոգաբարձութեան աղերսը, և այսպիսով մեծ շնորհ արած կը լինի Պարսկաստանի աղքատ Հայերին և նոցա դպրոցին, որ մեծ կարօտութեան մէջ է։

բաւութեանց դէմ, և նորա ձայնը այնքան ուժ և զօրութիւն ունի, որքան նորա պահանջը իրաւացի է և արդար:

Բայց մեր ժողովուրդը գիտէ՞ այդ: — Ո՛չ: Դժբախտաբար նա այնպիսի մի թմրեալ վիճակի մէջ է ապրում, որ գուցէ չի էլ զգում, թէ ինքը հարստահարուած է...Գուցէ նա համոզուած է, թէ գործերի կարգը հէնց այնպէս պէտք է լինէր, որպէս առաջուց դրուած է, որպէս կայ....որովհետև ինքը նորան սովորած է, ինչպէս որ սովորած է, թէ յօրանջելու միջոցին պէտք է բերանը խաչակնքել. եթէ պատճառը հարցնես, կասէ. «իմ պապս էլ այսպէս էր անում»....

Բայց ամեն տեղ ամբոխը չէ, որ ներգործում է. նա շատ անդամ մնում է անտարբեր. ներգործում է միայն նորա ընտրեալ մասը — մտածողները և հասարակական բանուորները: Եւ մենք այդ ունինք, դորանից զուրկ չենք: Մեզանում ևս կան տղամարդիկ, որոնք թէ խօսքով և թէ գործքով պատրաստ են պատերազմել ճշմարտութեան համար....Թողեալ այդ, ժողովուրդն արդէն ունի իւր ներկայացուցիչները, — դա է Դավրիժոյ ազգային հոգաբարձութիւնը. նորա ոչ միայն սեպհական պարտքն է պաշտպանել ժողովրդի շահերը, այլ իրաւունք ևս ունի:

Յուսով ենք, որ Ատրպատականի այժմեան թէմական Անդրէաս եպիսկոպոսը, ուշադրութեան առնելով այս խնդիրը, իւր կողմից չի խնայելու ամեն աշխատութիւն և ջանք, որպէս զի իւր առաջնորդութեան օրերով վիճակային հոգևոր կառավարութիւնը մաքրուի հին կեղտերից և հեռացնուի վաղեմի անկարգութիւնները: Յուսով ենք, որ նորին սրբազնութեան օրերով կը բարեկարգուի իւրեան յանձնուած վիճակը, ստանալով մի նոր ձև և կերպարանք, որպէս պահանջում է ժամանակը, որպէս յարմար է ժողովրդի այժմեան պիտոյքներին: Եւ նորին սրբազնութեան ազնիւ յատկութիւնները բոլորովին երաշխաւորում են մեր յոյսը, թէ նորա անունը Պարսկաստանի հոգևոր կառավարութեան բարեկարգութեան տարեթուի մէջ առաջին տեղը կը բռնէ:

***

Վերջացնելով մեր յօդուածը, չի կարելի մի քանի խօսք չասել Դավրիժի ժողովրդական ընթերցարանի մասին, որ բացուեցաւ 1875 թուին: Դա գետեղուած է նոյն տան մէջ, ուր գտանվում է քաղաքի ազգային դպրոցը և առաջնորդարանը. եկեղեցուն շատ մօտ է:

Դավրիժի Հայ ժողովրդականք, ապրելով ասիական կեանքով, չունէին մի տեղ, մի կենտրոն, ուր նոքա որոշեալ օրերում հաղորդակցութիւն ունենային: Նորանց յարաբերութիւնները խիստ առանձնական էին: Նորանք տեսնվում էին միմիայն եկեղեցում, ուր բանաւոր հաղորդակցութիւն նոցա մէջ լինել կարող չէր: Փողոցներում առաւօտից մինչև երեկոյ նորանք զբաղված էին իւրեանց գործերով, իսկ տուն դառնալուց յետոյ խիստ մերձաւոր բարեկամները միայն, այն էլ ոչ միշտ, կարող էին միմեանց տեսնել: Եւ այսպէս ընկերական կապը նոցա մէջ ամեն կերպով կտրուած էր: Հասարակային տեղեր չը կային, ամեն մարդ իւր աշխարհը գտնում էր իւր նեղ ընտանեկան շրջանի մէջ, որից դուրս նորա համար կեանք և լոյս չը կար...

Ապրելով այսպիսի առանձնական կեանքով, ժողովուրդը մինչ այն աստիճան բթամտացած էր, մինչ այն աստիճան հանգել էր նորա մէջ մարդկային զգացմունքները, որ նա բոլորովին անզգայ էր դարձել դէպի հասարակային գործերը. նա չէր հետաքրքրվում, թէ իւր հորիզոնից դէպի հեռու կողմերում ի՞նչ են գործում մարդիկ, ի՞նչպէս են ապրում և ի՞նչ են մտածում....

Այսպիսի վիճակի մէջ էր ժողովուրդը, երբ մի քանի եռանդոտ երիտասարդներ մտածեցին մի ընթերցարան հիմնել և նորանով առիթ տալ ժողովրդին մի կողմից շուտ-շուտ միմեանց հետ հաղորդակցութեան կապեր ունենալ, միւս կողմից, զարգացնել նոցա միտքը:

Ընթերցարանը բացուեցաւ: Թողեալ նիւթական կողմը, նա սկզբում պէտք է հանդիպէր շատ արգելքների, պէտք է պատերազմէր հասարակութեան նախապաշարմանց դէմ: Ժողովուրդն արհամարհանքով էր նայում այս հիմնարկութեան վերայ, նա ծիծաղում էր. «Գիրքը կարդում են աղօթելու համար, և այն կարդում է միայն տէր հայրը, աշխարհականն ի՞նչ գործ ունի գրքի հետ»: Լրագրութեան մասին ամենևին գաղափար չունէին, այդ պատճառաւ նորա մասին դատել կարող չէին:

Ի նկատի ունելով այսպիսի տխուր հանգամանքները, ընթերցարանը պէտք է յաղթէր մի մեծ դժուարութիւն. նա չունէր պատրաստի ընթերցասէրներ, նա ստիպուած էր նորից ընթերցողներ պատրաստել: Այս նպատակով ընթերցարանն սկզբում ընդունեց մի տեսակ լսարանի կերպարանք, որպէս զի իւր յաճախորդների ճա-

շակը կրթէ, նոցա նախապաշարմունքները ջնջէ, նոցա մտածութեանց ձևերը փոխէ և նոցա նորանոր գաղափարների հետ ծանօթացնէ: Այս մտքով ընթերցարանը հիմնող երիտասարդները հազար ու մէկ ճարպկութիւններով մարդիկ էին որսում, այնտեղ բերում: Մէկին սկսում էր, օրինակ, բարձր ձայնով կարդալ որ և իցէ լրագրում մի նշանաւոր յօդուած, միւսները լսում էին. յօդուածը վերջանալուց յետոյ յայտնվում էին կարծիքներ, վիճում էին, դատում էին, և այս բոլոր մտաւոր պատերազմի մէջ մեր ակամայ յաճախորդը ն կատում էր. «չէ՞, ընթերցարանը մի ուրիշ բան է եղել, ասում էր նա իւր մտքում զարմանալով. — էստեղ մարդ շատ բան է սորվում»: Նա հետաքրքրվում էր, սկսում էր այնուհետև ինքը կարդալ, չը գիտցած, չը հասկացած տեղերը հարցնել և «բան սորվել»:

Այնուհետև այն պարոնները, որ սկզբում ակամայ էին բերվում ընթերցարանը, սկսեցին իրանք յաճախել, սկսեցին գրքեր վարձել և տուն տանել կարդալու համար: «Ինձ մի լաւ գիրք տուէք տանեմ տանը կարդամ», ասում էր յաճախորդը: «Լաւ» գիրքը ընտրում էր ընթերցարանի կառավարիչը, որովհետև խնդրողը ոչ մի գրքի ծանօթ չէր, և ոչ մի գրքի անուն չը գիտէր բացի Սաղմոսից և Աւետարանից:

Այնուհետև փոստայի ներս գալու օրը մի անհամբեր օր դարձաւ. յաճախորդները շուտ վերայ էին թափվում և հարցնում էին՝ «ի՞նչ նոր բան կայ լրագրների մէջ»: Իւր պատասխանները հեշտացնելու համար ընթերցարանի վարչութիւնը ստիպուած էր ամենից առաջ ինքն աչքից անց կացնել ստացած լրագրերը և ամսագրերը, և նշանակել նոցա ճակատի վերայ նշանաւոր յօդուածների անունները:

Այսպիսի երևոյթները տալիս են մի մխիթարական յոյս մտածելու, թէ մի ժողովուրդ որքան և բթամտացած լինէր, որքան և անզգայացած լինէր դէպի հասարակային մտածութիւններ, այսուամենայնիւ տոկուն և եռանդոտ աշխատութիւնը կարող է զարթեցնել նորա մէջ կեանք և ազնիւ զգացմունքներ:

Տեսնելով ընթերցարանի այսպիսի յաջող յառաջադիմութիւնը, մենք չենք կարող չը յիշել Պարոն Ց. Հաջիեանին՝ Պօլսեցի ազնիւ երիտասարդին, որ սկզբից և այժմ ընթերցարանի տեսուչն է, և նորա եռանդոտ հիմնողների պարագլուխն է եղել: Նորա աշխատութեամբ ընթերցարանը մէկ ու կէս տարուայ ընթացքում ունեցաւ 700

հատոր հայերէն, դաղիերէն, ռուսերէն, յունարէն, անդղիերէն և պարսկերէն գրքեր. շարունակ ստանում է. 8 օրինակ հայերէն լրագիրներ, 4 օրինակ դաղիերէն, 1 օրինակ պարսկերէն 1 օրինակ ռուսերէն. ստանում է նաև 5 օրինակ զանազան հայերէն ամսագրեր:

Ընթերցարանը, բացի նորանից, որ բաւականութիւն է տալիս հասարակութեան ընթերցասիրութեանը, որպէս յիշեցինք, Դավրիժի ազգային դպրոցին կից լինելով, նաև նպաստում է դպրոցին նորա ուսումնական յառաջադիմութեան մէջ: Ընթերցարանը իւր հաշուով բերել է տալիս բոլոր այն գրքերը, որոնցից վարժապետները և նոցա աշակերտները կարող են օգուտ քաղել: Ընթերցարանը օգնում է և Պարսկաստանի հեռաւոր քաղաքներին. իւր ստացած լրագիրները կարդացուելուց յետոյ բոլորովին ձրի ուղարկում է, օրինակ, Թէհրանի Հայոց ընթերցարանին, որ շատ աղքատ վիճակի մէջ է. այլ և իւր մէջ գտնուած գրքերի աւելորդ օրինակները նոյն ընթերցարանին է ընծայում[1]:

Այսպիսի յաջող ընթացքով, յուսով ենք, մի քանի տարուց յետոյ ընթերցարանը իւր կատարելագործուած վիճակին կը հասնի: Ի՞նչ հրաշքներ չի գործում երիտասարդութիւնը, ժողովրդի թարմ և կենդանի ուժը.....

ՄԷԼԻՔԶԱԴԷ

1-յունիսի 1876
Դավրէժ:

---

[1]) Շնորհակալութիւն Կ. Պոլսեցի ազգայիններին. նորանք ցոյց տուին խիստ ազնիւ համակրութիւն դէպի աղքատ Դավրիժի ընթերցարանը, ուղարկելով նորան, որպէս ընծայ, 470 հատոր զանազան լեզուներով գրքեր: Իսկ մեր Ռուսաստանի հայերից չը գտնուեցաւ և ոչ մէկը, որ մի հատոր գիրք ուղարկած լինէր, բացի մեծապատիւ Մ. Սանասարեանցից, որ իւր հաշուով ուղարկել է տալիս Ա ր ա ր ա տ ամսագիրը....

ԼԱ ՐԱԲԻԱՏԱ*)

ՎԷՊ

ՊԱՌՈՒԼ ՀԷՅԶԷԻ

Արեգակը դեռ չէր ծագել։ Վեզուվը ծածկուած էր թանձր մոխրագոյն մէգով, որ ձգվում էր դէպի Նէապոլ և մթնեցնում էր ծովեզրի վերայ գտնուող փոքր քաղաքները։ Ծովը հանդարտ էր։ Բայց նաւահանգստում, որ շինուած է մի նեղ ծոցում, Սօրէնտօի բարձր ժայռոտ ափի մօտ, արդէն զբաղուած էին ձկնորսներ, իրանց կանանց հետ մեծ պարաններով դէպի ցամաք քաշելով ուռկանաւոր նաւակները, որոնք ձուկ որսալու համար բոլոր գիշերը մնացել էին դուրսը։ Միւսները պատրաստում էին իրանց նաւակները, փռում էին առագաստները, դուրս էին բերում թիակներ և առագաստակալներ վանդակապատ մեծ կամարներից, որոնք շինուած էին ժայռերի մէջ ծովագնացութեան պարագաները գիշերը պահելու համար։ Ոչ ոք պարապ չէր, որովհետև մինչև անգամ ծերերը, որոնք էլ չէին նաւարկում ծովի վերայ, օգնում էին նոցա, որոնք քաշում էին ուռկանները, և տեղ տեղ տափակ տանիքների վերայ կանգնած էին պառաւ կանայք իլիկները ձեռներին, կամ զբաղուած էին թոռների հետ, այն ինչ նոցա աղջկերքն օգնում էին այր մարդկանց։

«Տեսնում ես, Ռաքէլ, ահա՛ մեր տէր հայրը», ասաց մի պառաւ կին մի փոքր աասը տարեկան աղջկան, որ նորա մօտ կանգնած պտոյտ էր տալիս իւր փոքր իլիկը։ «Ահա՛ նա իսկոյն մտնում է նաւը։ Անտօնինօն պիտի տանէ նորան Կապրի։ Սրբուհի՛ Մարիամ, ի՞նչ պէս քնաթաթախ է երևում արժանապատիւ հայրը»։ Եւ այս ասելով, ձեռով արեց նա մի կարճահասակ բարեսիրտ քահանայի,

*) Այս բառը անկարելի է ճշտութեամբ թարգմանել հայերէն. սա մօտաւորապէս նշանակում է խելագար կամ դլխից ձեռք վեր առած աղջիկ։

Ծ. Թ.

որ նոր նստեց ցածում կանգնած նաւակի մէջ, և հանելով իւր սև վերարկուն, զգուշութեամբ ծալեց ու դրեց նստարանի վերայ: Ծովափի վերայ զբաղուած մարդիկը դադարեցին իրանց գործը, որ տեսնեն, թէ ինչպէս ճանապարհ կընկնի իրանց քահանան, որ աջ ու ձախ բարեկամաբար ողջունում էր ամենին:

— Ինչի՞ է գնում նա Կապրի, մե՛ծ մայր, — հարցրեց երեխան: — Մի՞թէ այնտեղի մարդիկը քահանայ չունին, որ կանչում են մեր քահանային:

«Ինչ յիմար ես», ասաց պառաւը: «Նոքա շատ ունին քահանաներ և ամենագեղեցիկ եկեղեցիներ, և մինչև անգամ մէկ ճգնաւոր, որ մենք չունինք: Բայց այնտեղ կայ մի մեծատուն տիկին, որ երկար միջոց ապրում էր այստեղ Սորէնտոում, և այնպէս ծանր հիւանդ էր, որ տէր հայրը պէտք է շուտ շուտ գնար նորա մօտ գերապատուելու հետ, երբ որ կարծում էին, թէ նա գիշերը չի լուսացնիլ: Բայց Սուրբ կոյսը օգնեց նորան և նա կրկին առողջացաւ, և կարողանում էր ամեն օր լողանալ ծովի մէջ: Երբ որ նա այստեղից հեռացաւ Կապրի, մի գեղեցիկ գումար ոսկի ընծայեց եկեղեցուն և աղքատներին. և ասում են, թէ չէր ուզում հեռանալ, մինչև որ տէր հայրը չըխոստացաւ այցելել նորան այնտեղ, որ նա կարողանայ խոստովանուիլ նորան. որովհետև զարմանալի է, թէ որքան մեծ հաւատ ունի՝ տիկինը տէր հօր վերայ: Եւ մենք կարող ենք մեզ երանի տալ, որ նորա պէս քահանայ ունինք, որ արքեպիսկոպոսի հաւասար ձիրքեր ունի և որին որոնում են մեծատուն մարդիկ:

«Լա՛ւ եղանակ կունենանք, որդեակ», հարցրեց փոքր քահանան և երկմտութեամբ նայեց Նէապոլի կողմը:

— Արեգակը դեռ չի դուրս եկել — պատասխանեց տղան: Այս փոքր ամպի հետ նա իւր հաշիւը շուտ կը տեսնէ:

«Ուրեմն գնանք, որ շոգը չսկսած՝ տեղ հասնենք:

Անտօնինօն ձեռն առաւ երկար թիակները, որ նաւակը յառաջ քշէ, բայց յանկարծ կանգնեց և նայեց պէպի զառիվայր ճանապարհը, որ Սորէնտոից տանում է նաւահանգիստը:

Այստեղ երևեցաւ մի վայելչակազմ աղջիկ, որ շտապով իջնում էր քարերից և ձեռին շարժում էր մի թաշկինակ: Նա ունէր թեւի տակ մի փոքր կապոց, և նորա հագուստը շատ աղքատիկ էր: Բայց նա համարեա թէ հպարտ և փոքր ինչ վայրենի

կերպով բարձրացնում էր գլուխը և սև հիւսը, որ փաթաթուած էր նորա ճակատին, զարդարում էր նորա գլուխը թագի պէս:

«Ի՞նչ ենք սպասում», հարցրեց քահանան:

— Ահա գալիս է մեկը մեր նաւակը, որ գուցէ նոյն պէս գնալու է Կապրի: Եթէ թոյլ կըտաք, տէր հայր — այդպէսով մենք աւելի կամաց չենք գնալ, որովհետև եկողը մի երիտասարդ տոն և ուրթը տարեկան աղջիկ է:

Այս բոպէին դուրս եկաւ աղջիկը պարսպի ետևից, որ պատում էր օճապտոյտ ճանապարհը: «Լաուրէլան է», ասաց քահանան: «Ի՞նչ գործ ունի նա Կապրի:

Անտոնինոն ուսերը վեր քաշեց: Աղջիկը մօտենում էր արագ քայլերով և նայում էր իւր առաջ:

— Բարի լոյս, լա Բաբբիատա, — ձայն տուին մի քանի երիտասարդ նաւորդներ: Գուցէ տուելի բան ասէին նոքա, եթէ չը քաշուէին քահանայի ներկայութենից. որովհետև աղջկայ յանդուգն լռութիւնը, որով նա ընդունեց նոցա ողջոյնը, գրգռում էր նոցա մեծամտութիւնը:

«Բարի լոյս, Լաուրէլա.» կանչեց հիմա և քահանան: «Ի՞նչպէս ես: Դու էլ ես ուզում մեզ հետ Կապրի գնալ:

— Այո՛, եթէ իրաւունք կը տաք, հայր:

«Հարցրու Անտոնինոին, որ նաւակի տէրն է: Ամեն մարդ իւր սեփականութեան տէրն է, և Աստուած տէր է ամենիս վերայ:

— Ահա՛ կէս կարլին*) — ասաց Լաուրէլան, առանց նայելու երիտասարդ նաւավարին. — եթէ կարող եմ գալ այդ գնով:

— Դու կարող ես այդ փողը աւելի լաւ գործ ածել, փնթփնթաց տղան և տեղ բաց արեց նաւակում՝ մի կողմ քաշելով մի քանի նարինջներով լի կողովներ: Նա տանում էր այդ պտուղները Կապրի վաճառելու, որովհետև այն ժայռոտ կղզին այնքան չէ արտաբերում այդ պտուղներից, որ բաւականացնէր իւր բաղմաթիւ այցելուներին:

— Ես չեմ ուզում ձրի գալ — պատասխանեց աղջիկը և վրայ տուեց սև յօնքերը:

«Ե՛կ, որդեակ», ասաց քահանան: «Սա մի կորիճ ֆ՝տղայ է և չի ուզում հարստանալ քո աղքատութեամբ:» Ե՛կ, մտիր — և նա

---

*) Կարլին՝ իտալական փոքր դրամ է:

տուեց նորան իւր ձեռը, — և նստիր այստեղ ինձ մօտ։ Տես, ահա նա փռելէ քեղ համար իւր բաճկոնը, որ փափուկ նստես։ Ինձ համար այդպէս լաւ չէ պատրաստել։ Բայց երիտասարդ մարդիկ միշտ այդպէս են։ Մի փոքր կնոջ համար աւելի հոգս են տանվում, քան թէ տասը հոգևոր տէրերի համար։ Լաւ, լաւ, Անտոնինո, քեղ հարկաւոր չէ ներողութիւն խնդրել։ Մեր երկնաւոր տէրը այդպէս է կարգադրել, որ նմանը նմանին է սիրում»։

Այդ միջոցին Լաուրէլան մտել էր նաւակը և նստել էր, առանց մի խօսք ասելու, մի կողմը քաշելով բաճկոնը։ Երիտասարդ նաւավարը թողեց այնտեղ բաճկոնը և ինչ որ փնթփնթաց քթի տակ։ Յետոյ ուժով հեռացրեց ափից նաւակը, որ և յառաջ թռաւ ծովի մէջ։

«Ի՞նչ ունիս կապոցիդ մէջ», հարցրեց քահանան, երբ որ նոքա լողում էին ծովի վերայ, որ հիմա սկսեց փայլել արևի առաջին ճառագայթներից։

—Մետաքս, խճուճ և մէկ հաց, հայր։ Ես պէտք է վաճառեմ մետաքսը կապրի՝ մի կնոջ վերայ, որ երիզներ է շինում, և խճուճը՝ մի ուրիշի վերայ։

«Դու ի՞նքդ ես հիւսել»։

—Այո՛, տէր։

«Եթէ չեմ սխալվում, դու սովորել ես նոյնպէս երիզներ շինել»։

Այո՛, տէր։ Բայց մօրս առողջութիւնը կրկին վատ է. այդ պատճառով ես չեմ կարող հեռանալ տանից, իսկ սեփական մեքենայ գնելու կարողութիւն չունինք։

«Վա՞ղ է։ Ո՛հ, ոչ։ Երբ որ զատկին ձեզ մօտ էի, նա առողջ էր»։

—Գարունն ամենավատ եղանակն է նորա համար։ Վերջին փոթորիկներից և երկրաշարժներից յետոյ նա միշտ պարկած է ցաւերի պատճառով։

«Մի՛ դադարիր աղօթելուց, որդեակ, որ Սուրբ Կոյսը բարեխօս լինի նորա համար։ Եւ դու ինքդ եղի՛ր աղնիւ և աշխատասէր, որ լսուի քո աղօթքը»։

Կարճ լռութենից յետոյ ասաց քահանան։ «Երբ որ դու ինքդ ծովափի վերայ, ձայն տուին քեղ. «բարի լոյս, լա Բաբբիատա»։ Դա

մի լաւ անուն չէ քրիստոնեայի համար, որ պիտի լինի հեղ և երկիւղած»։

Աղջկայ թուխ դէմքը բորբոքուեցաւ և նորա աչքերը փայլեցին։

—Նոքա ծաղը են անում ինձ, որովհետև ես չեմ պար գալիս և երգում, և շատախօս չեմ ուրիշների պէս։ Թող հանգիստ թողնեն ինձ. ես նոցա ոչինչ չեմ անում։

«Բայց դու կարող ես բարի լինել ամենի հետ։ Թող պար գան և երգեն ուրիշները, որոնց կեանքը աւելի թեթև է։ Բայց քաղցրութեամբ պատասխանել կարող է և տխուրը»։

Աղջիկը նայեց իւր առաջ և աւելի վրայ տուեց յօնքերը, կարծես թէ ուզում էր նոցա տակ ծածկել իւր սև աչքերը։ Նոքա կարճ ժամանակ լուռ յառաջ էին գնում։ Արևը շքեղութեամբ բարձրացել էր լեռների վերայ, վեղուվի գագաթը դուրս էր ցցուած ամպերից, որոնք դեռ ևս ծածկում էին նորա ստորոտը, և դաշտավայրի վերայ նարնջենու պարտէզների միջից փայլում էին Սօրէնտօի սպիտակ տները։

«Էլ ոչինչ չՔս լսել այն նէապօլիտանացի նկարչի մասին, որ ուզում էր քեզ իրան կին առնել», հարցրեց քահանան։

Աղջիկը գլուխը շարժեց։

«Նա այն ժամանակ եկաւ, որ քո պատկերը նկարէ։ Ինչի՞ թոյլ չըտուիր»։

—Ի՞նչ հարկաւոր է նորան իմ պատկերը։ Ուրիշներն ինձանից աւելի գեղեցիկ են։ Եւ — ով գիտէ, թէ ինչ պիտի անէր։ Նա կարող էր ինձ կախարդել և հոգուս մի ՔՔաս հատցնել, կամ գուցէ և սպանէր ինձ. ասաց մայրս։

«Մի՛ հաւատար այդպիսի մեղաւոր բաներին», ասաց քահանան ծանրութեամբ։ «Զի՞ որ դու Աստուծոյ ձեռին ես, որի կամքին հակառակ մի մազ անգամ չի ընկնիլ քո գլխից։ Եւ մի՞թէ մի մարդ, այդպիսի մի պատկեր ձեռին, աւելի հզօր կը լինի քան թէ Աստուած։ Բացի դորանից դու կարող էիր տեսնել, որ նա քեզ համակրում էր։ Եթէ ոչ, ինչի՞ պէտք է ուզէր քեզ հետ ամուսնանալ։

Աղջիկը լուռ էր։

«Եւ ինչի՞ մերժեցիր նորան։ Ինչպէս լսել եմ, նա լաւ մարդ է եղել և գեղեցիկ, և կարող էր քեզ և քո մօրը աւելի լաւ կերակրել, քան թէ դու՝ հիւսելով և մետաքս մանելով»։

—Մենք աղքատ մարդիկ ենք, — ասաց աղջիկը սաստկութեամբ, և իմ մայրը վաղուց հիւանդ է: Մենք ծանրութիւն կը լինէինք նորա համար: Ես ինքս էլ յարմար չեմ տիկին լինելու: Երբ որ նորա բարեկամները գային իւր մօտ, նա պիտի ամաչէր իմ պատճառով:

«Ի՞նչ ես խօսում: Ես քեզ ասում եմ, որ նա լաւ մարդ էր: Բացի դորանից, նա ուզում էր տեղափոխուիլ Սօրէնտօ: Շուտով չի գալ այնպիսի մի ուրիշը. նա կարծես ուղարկուած էր երկնքից ձեզ օգնելու համար»:

—Ես երբէք մարդու չեմ գնալ — ասաց նա կամակորութեամբ, կարծես ինքն իրան հետ խօսելով:

«Ուխտե՞լ ես, թէ ուզում ես վանք մտնել»:

Աղջիկը գլուխը շարժեց:

Մարդիկ իրաւունք ունին յանդիմանել քո կամակորութիւնը, թէև նոցա տուած անունը գեղեցիկ չէ: Մի՞թէ չես մտածում, որ դու մենակ չես աշխարհիս վերայ, և որ քո յամառութեամբ դառնացնում ես քո տկար մօր թէ կեանքը և թէ հիւանդութիւնը: Ի՞նչ հիմնաւոր պատճառներ պիտի ունենաս դու մերժելու ամեն մի կտրիճ ձեռք, որ կամենում է օգնել քեզ և քո մօրը: Պատասխան տուր, Լաուրէլա»:

—Ես ունիմ պատճառ — ասաց նա կամաց և երկբայութեամբ: Բայց ես չեմ կարող ասել:

«Չե՞ս կարող ասել: Ոչ էլ ի՞նձ, քո խոստովանահօրը, որին դու միշտ հաւատացել ես, որ քո լաւն է ուզում: Կամ գուցէ այդպէս չէ»:

Աղջիկը գլխով արեց:

«Ուրեմն թեթեւացրու քո սիրտը, որդեակ: Եթէ իրաւունք ունիս, ես առաջինը կընդունիմ քո իրաւունքը: Բայց դու երիտասարդ ես և դեռ սակաւ ես ծանօթ աշխարհի հետ, և յետոյ գուցէ զղջաս, որ տղայական թեթեւամտութեամբ զրկուել ես քո բախտից:

Մի թեթեւ երկչոտ հայեացք ձգեց աղջիկը երիտասարդ մարդու վերայ, որ արագ թիավարելով նստած էր նաւակի մի կողմը և աւելի խորէր քաշել ճակատի վերայ բրդէ գլխարկը: Նա նայում էր մի կողմը դէպի ծովը և ընկղմած էր իւր սեփական մտքերի մէջ: Քահանան նկատեց աղջկայ հայեացքը և աւելի մօտեցրեց նորան իւր ականջը:

—Դուք իմ հօրը չէք ճանաչում—շշնջեց աղջիկը, և նորա աչքերը մթնեցան:

«Քո հօրը, կարծեմ նա մեռաւ, երբ որ դու տասը տարեկան էիր: Բայց ի՞նչ գործ ունի քո ողորմածհոգի հայրը քո յամառութեան հետ:

—Դուք նորան չէիք ճանաչում, հայր: Դուք չըգիտէք, որ նա է իմ մօր հիւանդութեան միակ պատճառը:

«Ի՞նչպէս»:

—Որովհետև նա մօրս չարչարում էր, ծեծում և ոտներով կոխոտում: Ես դեռ էս յիշում եմ այն գիշերները, երբ որ նա գալիս էր տուն և կատաղում էր: Մայրս երբէք մի բառ չէր ասում նորան և բոլոր նորա ուզածը կատարում էր: Բայց նա ծեծում էր նորան այնպէս, որ սիրտս մղկտում էր: Ես քաշում էի վերմակը գլխիս և քնած էի ձևանում, բայց ամբողջ գիշերը լալիս էի: Եւ երբ որ նա տեսնում էր մօրս գետնին ընկած, յանկարծ փոխվում էր, բարձրացնում էր և համբուրում, և մայրս աղաղակում էր, թէ խեղդվում է: Մայրս արգելել է ինձ, որ ես սորա մասին երբէք ոչինչ չասեմ. բայց այդ բանը այնպէս սաստիկ ներգործեց նորա վերայ, որ այսքան տարիներ հօրս մահից յետոյ անց կենալով, նա դեռ էս չը կարողացաւ առողջանալ: Եւ եթէ նա, Աստուած ոչ անէ, շուտով մեռնի, ես լաւ գիտեմ, թէ ով սպանեց նորան:

Փոքր քահանան շարժեց գլուխը և չէր իմանում, թէ որքան իրաւունք տայ իւր խոստովանաորդուն: Վերջապէս ասաց նա. «Հեռացրու քո մտքերը այդ տխուր պատկերներից: Կը գան քեզ համար աւելի լաւ ժամանակներ և այդ բոլորը մոռացնել կը տան»:

—Ես այդ երբէք չեմ մոռանալ—ասաց Լաուրէլան և սարսափեցաւ:—Խմացէք, հայր, որ ես այդ պատճառով ուզում եմ միշտ կոյս մնալ, որ ստորադրեալ չը լինիմ ոչ ոքի, որ ինձ միշտ ծեծէ և յետոյ համբուրէ: Եթէ մէկը կամենայ ինձ հիմա ծեծել, կամ համբուրել, ես կարող եմ ինձ պաշտպանել: Բայց իմ մայրը չէր կարող իրան պաշտպանել ոչ ծեծից, ոչ համբոյրներից, որովհետև նա սիրում էր իմ հօրը: Ես չեմ ուզում այնքան սիրել մէկին, որ նորա պատճառով ես հիւանդանամ և թշուառանամ:

«Դու կատարեալ երեխայի պէս ես խօսում, որ ամենևին չը գիտէ, թէ ինչ է պատահում երկրիս վերայ: Մի՞թէ բոլոր այր մարդիկ քո խեղճ հօրը նման են, որ հետևին իրանց հաճոյքին և կրքե-

բին և վատ վարուին իրանց կանանց հետ։ Միթէ քի՞չ ես տեսել մեր դրացիների մէջ ազնիւ տղամարդիկ և կանայք, որոնք իրանց մարդկանց հետ ապրում են հաշտ և միաբան»։

—Իմ հօր մասին նոյնպէս ոչ ոք չը գիտէր, թէ ինչպէս էր վարվում մօրս հետ, որովհետև սա պատրաստ էր հազար անգամ մեռնիլ, քան թէ մէկին պատմել և գանգատուիլ։ Եւ այդպէս վարվում էր նա, որովհեաև սիրում էր իմ հօրը։ Եւ եթէ սէրն այնպիսի բան է, որ կապում է մարդու շըթունքները, երբ որ պէտք է օգնութիւն կանչել, և խլում է կարողութիւն պաշտպանել իւր անձը այն անիրաւութիւններից, որ կարող է նորա դէմ գործել միայն նորա ամենաչար թշնամին, ապա երբէք չեմ կապիլ ես իմ սիրտը մի տղամարդու հետ։

«Ես քեզ ասում եմ, որ դու երեխայ ես, և չը գիտես, թէ ինչ ես խօսում։ Շատ կը հարցնի քեզ քո սիրտը, թէ արդեօք ուզում ես սիրել, թէ ոչ. երբ որ ժամանակը կը գայ, այլ ևս ոչնչով չի օգնիլ քեզ այն, ինչ որ մտքումդ դրել ես»։ Կարճ լռութենից յետոյ շարունակեց։ «Միթէ դու կարծում էիր, որ այն նկարիչը խստութեամբ կը վարուէր քեզ հետ»։

—Նա այնպիսի աչքով էր նայում ինձ վերայ, ինչպէս իմ հայրը, երբ որ նա ներողութիւն էր խնդրում իմ մօրից և ուզում էր գրկել նորան, որ կրկին քաղցրութեամբ խօսի հետը։ Այդ հայեացքը ծանօթ է ինձ։ Այդպէս կարող է նայել և նա, ով որ սիրտ է անում ծեծել իւր կնոջը, որ նորան երբէք մի ցաւ չի պատճառել։ Ես սարսափեցայ, երբ որ կրկին տեսայ այդ աչքերը։

Սորանից յետոյ լռեց աղջիկը։ Լռեց նոյնպէս և քահանան։ Նա մտաբերում էր շատ գեղեցիկ վկայութիւններ սուրբ գրքից, որոնց կարող էր յառաջ բերել աղջկան ասածների դէմ. բայց երիտասարդ նաւավարի ներկայութիւնը, որ այս խոստովանութեան վերջումը անհանգստութիւն էր ցոյց տալիս, փակեց նորա բերանը։

Երբ որ մէկ ժամից յետոյ մեր ճանապարհորդները հասան Կապրի կղզու փոքր նաւահանգիստը, Անտոնինօն դուրս տարաւ նաւակից հոգևոր հօրը վերջին տափակ ալիքներով և յարգանքով կանգնեցրեց նորան ցամաքի վերայ։ Բայց Լաուրէլան չսպասեց, մինչև որ նա վերադառնայ և իրան էլ դուրս տանէ դէպի ցամաք։ Նա հաւաքեց իւր փէշերը, աջ ձեռքն առաւ փայտէ հողաթափները, կապոցը ձախ ձեռը, և ջրի մէջ չփչփացնելով, վազեց դէպի ափը։

«Ես այսօր երկար կը մնամ Կապրի», ասաց քահանան նաւավարին, «և քեզ պէտք չէ սպասել ինձ։ Գուցէ մինչև անգամ վաղը վերադառնամ տուն։ Եւ դու, Լաուրէլա, երբ որ յետ դառնաս, ողջունիր իմ կողմից քո մօրը։ Ես այս շաբաթ կը գամ ձեզ մօտ։ Դու ի հարկէ այսօր կը վերադառնաս»։

—Եթէ միջոց կը լինի, — ասաց աղջիկը և սկսեց կարդի ձգել իւր հագուստը։

—Դու գիտէ՞ս, որ ես պիտի յետ դառնամ, — ասաց Անտոնինոն, ինչպէս ինքը կարծում էր, շատ անտարբեր կերպով։—Ես կրսպասեմ քեզ մինչև Ave Muria. եթէ մինչև այն ժամանակ չը գաս, ինձ համար մի և նոյն է։

«Դու պիտի գնաս, Լաուրէլա», մէջ ընկաւ փոքր քահանան։ «Դու չէս կարող մօրդ գիշերը մենակ թողնել։ Հեռո՞ւ է գնալու տեղդ»։

—Ես պիտի գնամ Անակապրի։

«Իսկ ես պիտի գնամ Կապրի։ Ցանձնում եմ քեզ Աստծուն, աղջիկս, և քեզ նոյնպէս, իմ որդի»։

Լաուրէլան համբուրեց նորա ձեռը և ասաց «մնաք բարով», որ կարող էր վերաբերիլ թէ տէր հօրը և թէ Անտոնինոյին։ Բայց Անտոնինոն չընդունեց իւր վերայ այդ բանը։ Նա առաւ իւր գլխարկը քահանայի առաջ և չընայեց Լաուրէլային։

Բայց երբ որ արդէն երկուսն էլ հեռացել էին, Անտոնինոն միայն կարճ միջոց նայեց հոգևոր հօր ետևից, որ դժուարութեամբ էր յառաջ գնում ծովեզրի խոր աւազի մէջ, և ուղղեց իւր աչքը աղջկայ վերայ, որ դառնալով աջ կողմը, սկսել էր բարձրանալ, ձեռով պաշտպանելով աչքերը արևի սուր ճառագայթներից։ Դեռ չը հասած այնտեղ, ուր ճանապարհը ծածկվում էր պատերի մէջ, մի վայրկեան կանգնեց աղջիկը, որ շունչ առնի և նայեց իւր չորս կողմը։ Նորա ոտների տակ փռուած էր նաւահանգիստը, չորս կողմը բարձրանում էին զառիվայր ժայռեր, ծովը ներկուած էր հիանալի կապոյտ գոյնով — դա այնպիսի մի տեսարան էր, որ արժէր կանգնել։ Այնպէս պատահեցաւ, որ նորա հայեացքը Անտոնինոի նաւակի մօտով անց կենալով հանդիպեց այն հայեացքին, որ Անտոնինոն ուղղել էր նորա կողմը։ Երկուսն էլ այնպիսի մի շարժողութիւն արին, ինչպէս այն մարդիկը, որոնք փոխադարձ ներողութիւն են խնդր-

բում, թէ այդ բանը անդիտութեամբ եղաւ. որից յետոյ դէմքը խոժոռելով, հեռացաւ աղջիկը:

Հաղիւ մէկ ժամ անց էր կացել կէսօրից, և Անտոնինոն արդէն երկու ժամի չափ նստած էր նստարանի վերայ պանդոկի առաջ: Նորա միտքն զբաղուած էր մի բանով, որովհետև նա ամէն հինգ րոպէից յետոյ վեր էր թռչում տեղից, դուրս էր գնում արևի մէջ և աչքի տակն էր անցկացնում ճանապարհները, որոնք աջ և ձախ տանում էին դէպի երկու փոքր քաղաքները: «Եղանակը կասկածելի է», ասաց նա պանդոկապետի կնոջը: «Թէև իրաւ է պարզ է, բայց ես ճանաչում եմ երկնքի այդ գոյնը: Դա այս մի և նոյն տեսքն ունէր այն մեծ փոթորկից առաջ, երբ ես մեծ դժուարութեամբ կարողացայ ցամաք հանել Անգլիացի գերդաստանը: Պէտք է որ դուք յիշէք այդ բանը:

—Ոչ, պատասխանեց կինը:

«Ո՞չ. ուրեմն կը յիշէք, երբ որ դեռևս մութը չը կոխած եղանակը փոխուի:

—Շա՞տ են եկաւոր մեծատուններ ձեր կողմը,—կարճ լռութենից յետոյ հարցրեց պանդոկապետի կինը:

«Նոր են սկսել գալ: Մինչև հիմա վատ ժամանակ էր: Նոքա, որոնք գալիս են ծովի մէջ լողանալու, այս անգամ ուշացան:

—Գարունն ուշ եկաւ,—ասաց կինը:—Արդեօք դուք աւելի վաստակ ունեցաք, քան թէ մենք այստեղ Կապրիի վերայ:

«Ես չէի կարողանալ շաբաթը երկու անգամ մակկարօնի ուտել, եթէ ապրուստս ստանում լինէի միայն իմ նաւակից: Երբեմն մի նամակ տանել Նէապոլ, կամ մի պարոնի մոն ածել ծովի վերայ ձուկ որսալու համար—ահա այս էր բոլորը: Բայց դուք դիտէք, որ իմ քեռին ունի մեծ նարնջի պարտէզներ և հարուստ մարդ է: «Ցօնինո՛», ասաց նա ինձ, «քանի որ ես կենդանի եմ, ոչինչ կարիք չէս ունենալ, և յետոյ քո հոգսն էլ կը քաշեմ»: Ահա այս պէս Աստուծոյ օգնութեամբ անց կացրի այս ձմեռը:

—Զաւակներ ունի՞ ձեր քեռին:

«Ո՛չ: Նա երբէք ամուսնացած չէր և երկար ժամանակ օտարութեան մէջ էր, ինչտեղ նա ժողովել է բաւական հարստութիւն: Այժմ նա մտադիր է մեծ ճկնորսութիւն սկսել և ինձ է ուզում յանձնել բոլոր գործը:

—Ուրեմն ձեր բանը շինած է, Անտոնինո:

Երիտասարդ նաւավարը ուսերը վեր քաշեց։ «Ամեն մարդ իր բեռը պէտք է շալակէ», ասաց նա։ Դորանից յետոյ վեր թռաւ և կրկին նայեց աջ և ձախ, հողմը քննելով, թէև պէտք է յայտնի լինէր նորան, որ հողմը միայն մէկ կողմից է փչում։

—Ես մէկ շէշ գինի էլ կը բերեմ ձեզ համար. ձեր քեռին կը վճարէ փողը, ասաց կինը։

«Բերէ՛ք, միայն մէկ բաժակ, որովհետև ձեր գինին շատ թունդ է։ Գլուխս արդէն բոլորովին տաքացել է։

—Արիւնի հետ չի խառնվում։ Կարող էք խմել ինչքան կամենաք։ Ահա մարդս գալիս է, նորա հետ պէտք է մի փոքր ժամանակ նստէք և խօսիք։

Իրաւ՝ գալիս էր վերևից բարձրահասակ պանդոկապետը, ուռկանը ուսովը ձգած և կարմիր գլխարկը խուճուճ մազերի վերայ ծածկած։ Նա ձուկն էր տարել քաղաքը, ուր այն մեծատուն տիկինը ապսպարել էր Սարէնտօի փոքր քահանայի համար։ Տեսնելով երիտասարդ նաւավարին, նա բարեկամաբար ողջունեց նորան, յետոյ նստեց նորա կողքին նստարանի վերայ և սկսեց հարցնել ու պատմել։ Նոր էր բերել նորա կինը մի երկրորդ շէշ իսկական և անխառն կապրի, երբ ձախ կողմը ծավալի վերայ ոտի ձայն լսուեցաւ։ Եկողը Լաուրէլան էր, որ գալիս էր Անակապրիից։ Նա թէևթէև գլուխ տուեց և կանգնեց շուարած։

Անտօնինօն վեր թռաւ իւր տեղից։ «Ես պիտի գնամ», ասաց նա։ Այս աղջիկը Սարէնտօից է։ Նա այսօր եկաւ այստեղ մեր տէր հօր հետ և գիշերը պիտի վերադառնայ իւր հիւանդ մօր մօտ։

—Լաւ, լաւ, գիշերը դեռ հեռու է, ասաց ձկնորսը։ Նա դեռ ևս այնքան ժամանակ կունենայ, որ մեզ հետ մի բաժակ գինի խմէ։ Դէ՛հ, ա՛ կնիկ, մի բաժակ էլ բեր։

—Շնորհակալ եմ, ես չեմ խմում, ասաց Լաուրէլան, և մնաց իւր տեղը։

—Տո՛ւր սորան մի բաժակ, ա՛ կնիկ, տո՛ւր։ Սա նազ է անում։

—Հանդիստ թող սորան, ասաց երիտասարդը։ Սա շատ կամակոր է. մէկ որ ասաց «չէ՛», էլ ոչ մի սուրբ չի համոզի սորան։— Այս ասելով, շտապով մնաս բարով ասաց նա պանդոկապետին և նորա կնոջը, վազեց իւր նաւակի մօտ, արձակեց պարանը և կանգնած սպասում էր աղջկան։ Սա մէկ անգամ էլ գլուխ տուեց պանդոկատէրերին և երկմտութեամբ գնաց դէպի նաւակը։ Նա նայեց

իւր չորս կողմը, կարծես թէ սպասում էր, որ ուրիշ գնացողներ էլ գան: Բայց նաւահանգստում ամենևին մարդ չը կար. ձկնորսները քնած էին, կամ գնացել էին ձուկ որսալու, միայն քանի մի կանայք և երեխայք նստած էին դռների մէջ և քնած էին կամ գործում էին, և օտարականները, որոնք այն առաւօտը եկել էին, սպասում էին երեկոյեան հովին, որ վերադառնային: Եւ նա շատ ժամանակ չունեցաւ շրջահայելու, որովհետև Անտոնինոն շուտ գրկեց նորան երեխայի պէս և տարաւ նաւակը: Ցետոյ ինքն էլ թռաւ նորա մէջ և կարճ միջոց թիավարելուց յետոյ՝ արդէն բաց ծովի վերայ էին նոքա:

Լաուրէլան նստած էր նաւակի առաջին ծայրի մօտ՝ մէջքը կիսով չափ Անտոնինոի կողմն ուղղած, այնպէս որ սա կարող էր նորան միայն կողքից տեսնել: Աղջկայ դէմքը հիմա սովորականից աւելի ծանր էր: Մազերը ծածկում էին նորա փոքր ճակատը, գեղեցիկ քիթը կարծես դողում էր և բերանը բոլորովին փակուած էր:— Այս դրութեան մէջ մի քանի ժամանակ լուռ յառաջ գնալով, աղջիկն սկսեց նեղանալ արևի այրող ճառագայթներից. բաց արեց կապոցը, հանեց նորա միջից հացը և թաշկինակը ծածկեց գլխին: Ցետոյ սկսեց հաց ուտել, որովհետև նա ոչինչ չէր կերել կղզու վերայ:

Անտոնինոն այդ բանը տեսնելով, հանեց մէկ կողովից, որ առաւօտը լիքն էր նարինջներով, երկու հատ այդ պտուղներից և ասաց: «Ահա առ հացի հետ կեր, Լաուրէլա: Չը կարծես, թէ ես այս պտուղները քեզ համար եմ պահել: Նոքա թափուել են կողովից նաւակի մէջ, և ես գտայ, երբ որ դատարկ կողովները դնում էի իրանց տեղը:

—Ինքդ կեր: Հացս ինձ բաւական է:

«Սա կը զովացնէ քեզ. դու այսօր շատ ես ման եկել:

—Ես մի բաժակ ջուր խմեցի, և այն ինձ զովացրեց:

«Քո կամքն է», ասաց նա, և կրկին ձգեց պտուղները կողովի մէջ:

Նոր լռութիւն: Ծովը հանդարտ էր ինչպէս հայելի, և հաղիւ ծփում էր նաւակի առաջակողմի վերայ: Սպիտակ ծովային թռչունները, որոնք բոյն են դնում ծովերի քարայրերի մէջ, առանց մի ձայն հանելու, յարձակվում էին իրանց որսի վերայ:

«Դու կարող էիր այս նարինջները տանել մօրդ համար», նորից սկսեց Անտոնինոն:

—Մենք տանն ունինք մի քանի հատ, և երբ որ այն կը վերջացնենք, կերթամ էլի կը գնեմ:

«Տար այս նորա համար, և մի և նոյն ժամանակ ողջունիր իմ կողմից:

—Նա քեզ չի ճանաչում:

«Դու կարող ես ասել նորան, թէ ես ով եմ:

—Ես էլ չեմ ճանաչում քեզ:

Այս առաջին անգամը չէր, որ Լաուրէլան նորան ուրանում էր: Մէկ տարի առաջ, երբ այն նկարիչը դեռ նոր էր եկել Սօրէնտօ, մի կիրակի օր Անտօնինօն գնտախաղի էր տալիս ուրիշ երիտասարդների հետ մի դաշտի վերայ մեծ ճանապարհի մօտ: Այնտեղ առաջին անգամ պատահեցաւ նկարիչը Լաուրէլային, որ առանց ուշադրութիւն դարձնելու նորա վերայ, անց էր կենում ջրի կուժը գլխին դրած: Նէապօլիտանացին զրաւուած նորա տեսքով, կանգնեց և սկսեց նայել նորա ետևից, թէև գտնվում էր խաղի ասպարիզի մէջ տեղը, և մի երկու քայլ անելով, կարող էր հեռանալ այնտեղից: Մի արագընթաց գնտակ, որ դիպաւ նորա ոտին, յիշեցրեց նորան, որ այստեղ մտածմունքների մէջ խորասուզուելու տեղը չէր: Նա յետ նայեց, կարծես թէ սպասում էր, որ ներողութիւն կը խնդրեն: Երիտասարդ նաւավարը, որ արձակել էր գնդակը, կանգնած էր իւր ընկերների հետ լուռ և յանդգնաբար, այնպէս որ օտարականը լաւ համարեց ձայն չը հանել և հեռանալ: Բայց մարդիկ խօսեցան այդ անցքի մասին, և նորից սկսեցին խօսել, երբ որ նկարիչը յայտնի սկսեց ուզել Լաուրէլային: «Ես չեմ ճանաչում նորան», ասաց աղջիկը տհաճութեամբ, երբ որ նկարիչը հարցրեց նորան, թէ արդեօք այն անբաղաքավարի տղայի պատճառով է մերժում նորան, թէև այն զրոյցները նորա ականջին էլ էին հասել: Այնուհետև, երբ որ Անտօնինօն պատահում էր Լաուրէլային, նա, իհարկէ, ճանաչում էր նորան:

Եւ հիմա նստած էին նոքա նաւակի մէջ, ինչպէս ամենասասիկ թշնամիներ, և երկուսի սիրտն էլ բաբախում էր: Անտօնինօի բարի դէմքը սասսիկ կարմրել էր. նա այնպիսի սաստկութեամբ էր զարկում թիակներն ալիքներին, որ փրփուրը ցայտում էր նորա վերայ, և նորա շրթունքները երբեմն այնպէս դողում էին, կարծես թէ վատ խօսքեր էին արտասանում: Աղջիկը այնպէս էր ձևանում, իբր թէ չի նկատում այդ բանը, և աշխատում էր հանգիստ երևալ,

նա թեքուեցաւ նաւակի կողքի վերայ և ձեռով սկսեց խաղալ ջրի հետ։ Ցնտոյ վայր առաւ գլխից թաշկինակը և սկսեց կարգի ձգել իւր մազերը, կարծես թէ մենակ էր նաւակի մէջ։ Միայն նորա արտեւանունքները շարժվում էին, և ի զուր էր դնում նա իւր բաց ձեռները բորբոքուող այտերի վերայ, որ հովացնէ։

Հիմա նոքա բոլորովին բաց ծովի վերայ էին, և չորս կողմը ամենևին չէր երևում ոչ մի հատ առագաստ։ Կղզին միայնացել էր հեռու նոցա ետև, ծովափը, ծածկուած էր մառախուղով, մինչև անգամ ոչ մի ձկնկուլ չէր թռչում այդ ջրանապատի մէջ։ Անտոնինան նայեց իւր շուրջ, կարծես մի միտք էր ծնում նորա գլխի մէջ։ Ցանկարծ թռաւ նորա երեսի կարմրութիւնը, և նա ձեռից թողեց թիակը։ Ակամայ նայեց Լաուրէլան նորա կողմը, լի ակնկալութեամբ, բայց անխօս։

«Պէտք է վերջ դնեմ այս բանին», կանչեց երիտասարդը։ Արդէն շատ երկար քաշեց և ես զարմանում եմ, թէ ինչպէս դիմացայ։ Ասում ես, որ դու ինձ չես ճանաչում։ Մի՞թէ չես տեսել ինչպէս խելագարի պէս անց կի կենում քո մօտից, սիրտս բոլորովին լցուած, կամենալով հետդ խօսել, բայց դու անարգում էիր ինձ և երեսդ դարձնում։

—Ի՞նչ ունէի քեզ հետ խօսելու, կարճ ասաց աղջիկը։— Ես լաւ տեսնում էի, որ դու ուզում էիր ինձ հետ վէճ սկսել։ Բայց ես չէի ուզում զուր տեղ մարդկանց բերան ընկնիլ։ Ես չեմ դառնալ քո կինը, ոչ քոնը, ոչ ուրիշինը։

«Ոչ ուրիշ՞նը։ Միշտ այդպէս չես խօսիլ դու։ Դու ի հարկէ մերժեցիր նկարչին։ Բայց դու այն ժամանակ երևոյայ էիր։ Կը գայ մի օր, որ դու քեզ մենակ կըզգաս, և այն ժամանակ յիմարաբար կուզես առաջին պատահածին։

—Ոչ ոք չը գիտէ իւր ապագան։ Գուցէ միտքս փոխեմ։ Քո ի՞նչ գործն է այդ։

«Ինչ իմ գո՞ր ծն է», կանչեց նա և այնպէս վեր թռաւ նստարանից, որ նաւակն օրօրուեցաւ։ «Ինչ իմ գո՞ր ծն է։ Եւ դու այդպէս հարցնո՞ւմ ես ինձ, երբ որ գիտես իմ դրութիւնը։ Թշուառ վերջ կունենայ այն մարդը, որի հետ դու աւելի լաւ կը վարուիս, քան թէ ինձ հետ։

—Մի՞թէ ես խոստացել եմ քեզ իմ անձը։ Մեղաւո՞ր եմ ես, որ քո գլուխը յիմար է։ Ի՞նչ իրաւունք ունիս ինձ վերայ։

«Ո՛հ, աղաղակեց Անտոնինոն, ի հարկէ իմ իրաւունքը գրուած չէ թղթի վերայ, իմ իրաւունքը չի գրել մի փաստաբան լատինարէն և վաւերացրել. բայց այսքան գիտեմ, որ ես քեզ վերայ նոյնքան իրաւունք ունիմ՝ որքան երկնային արքայութեան վերայ, եթէ ես մի ազնիւ տղայ եմ եղել: Կարծում ես, թէ կարո՞ղ եմ տեսնել, ինչպէս դու ուրիշի հետ եկեղեցի կերթաս և աղջկերքը առաջս անցնելով, ուսերը վեր կը քաշեն. մի՞թէ կարող եմ ես այդ նախատինքը տանել:

—Այրա՛, ինչ որ ուզում ես: Ես չեմ վախենալ, որքան և սպառնաս: Ես իմ ուզածը կանեմ:

«Դու երկար չես խօսիլ այդպէս», ասաց նա և դողաց բոլոր մարմնով: «Ես թոյլ չեմ տալ, որ քեզ պէս մի յամառը աւելի երկար դառնացնէ իմ կեանքը: Գիտե՞ս, որ դու այստեղ իմ իշխանութեան տակն ես, և պիտի կատարես իմ կամքը:

Աղջիկը թեթև ցնցուեցաւ և նայեց նորան փայլուն աչքերով:

—Սպանիր ինձ, եթէ կարող ես, ասաց նա կամաց:

«Բանը կիսատ չը պէտք է անել», ասաց երիտասարդը խեղդուած ձայնով: Ծովի մէջ բաւական տեղ կայ երկուսիս համար: Ես քեզ չեմ կարող օգնել, աղջի՛կ,—և նա ասում էր այս խօսքերը կարեկցութեամբ, կարծես թէ երազի մէջ խօսելով.—մենք պէտք է ներքև իջնենք, երկուսս էլ, միասին և իսկոյն», աղաղակեց նա սաստիկ ձայնով և յանկարծ բռնեց նորան երկու ձեռով: Բայց նոյն վայրկենին յետ քաշեց նա իւր աջ ձեռը, որից վազում էր արիւնը. աղջիկը կծել էր նորա ձեռը:

—Պէտք է քո կամքը կատարե՞մ, կանչեց նա և շուտ մղեց նորան իրանից:—Տեսնենք, թէ ինչպէս եմ քո իշխանութեան տակը:—Այս ասելով, դուրս թռաւ իսկոյն նաւակից և մի բոպէ անյայտացաւ ջրի մէջ:

Նա իսկոյն էլի երևեցաւ ջրի երեսին. նորա շորերը պինդ կպել էին նորա մարմնին, նորա հիւսերը քանդուել էին ալիքներից և ծանր կախուած էին վզին. նա եռանդով լողում էր ձեռներով, առանց մէկ ձայն հանելու, աշխատելով հեռանալ նաւակից և մօտենալ ծովափին: Սարսափեց, քարացաւ Անտոնինոն: Նա կանգնած էր նաւակի մէջ թեքուած դէպի առաջ, անթարթ աչքով նայելով աղջկան, և նորան թվում էր, թէ մի հրաշք է պատահում իւր առաջ: Ցետոյ ուշքի գալով, շուտ ձեռն առաւ թիակները և բոլոր զօրութեամբ

շտապեց աղջկայ ետևից, այն ինչ նորա նաւակի յատակը ներկուեցաւ անդադար վազող արիւնով։

Անտոնինոն մի բոպէի մէջ հասաւ աղջկան, թէև սա լողում էր սաստիկ արագութեամբ։ Թէ Մարիամ Սուրբ Կոյսը կը սիրես, էկ նաւակը», ձայն տուեց երիտասարդը։ «Ես խելագար էի։ Աստուած գիտէ, թէ ինչը մթնեցրեց իմ խելքը։ Կայծակի պէս շուտ ծնաւ ուղեղիս մէջ այդ միտքը, այնպէս որ ես յանկարծ բոլորովին բորբոքուեցայ և չը գիտէի թէ ինչ եմ անում և խօսում։ Մի՛ ներիր ինձ, Լաուրէլա, միայն փրկի՛ր կեանքդ և կրկին մտի՛ր նաւակը։

Աղջիկը շարունակում էր լողալ, կարծես թէ ոչինչ չէր լսել։

«Դու չես կարող հասնել ցամաքին, դեռ երկու մղոն կայ։ Մտածի՛ր մօրդ վերայ։ Նա կը մեռնի, եթէ քեզ մի տարաբախտութիւն պատահի։

Աղջիկը աչքով չափեց հեռաւորութիւնը մինչև ծովափը։ Յետոյ, առանց պատասխան տալու, մօտեցաւ նաւակին և ձեռներով բռնեց նորա եզրը։ Անտոնինոն մօտեցաւ, որ օգնէ նորան. նորա բաճկոնը, որ դրած էր նստարանի վերայ, ընկաւ ծովը, երբ որ նաւակը աղջկայ ծանրութենից պարկեց կողքի վերայ։ Արագութեամբ բարձրացաւ աղջիկը նաւակի մէջ և նստեց իւր առաջուան տեղը։ Անտոնինոն նորան փրկուած տեսնելով, կրկին ձեռքն առաւ թիակները։ Իսկ Լաուրէլան քամեց ջուրը իւր շորերից և մազերից։ Այդ միջոցին նա նայեց նաւակի յատակի վերայ, և հիմա նկատեց արիւնը։ Նա շուտ նայեց Անտոնինոի ձեռին, որ այնպէս շարժում էր թիակը, կարծես թէ վերաւորուած չէր։ — Ահա՛, ասաց Լաուրէլան, և մեկնեց նորան իւր թաշկինակը։ Տղան գլուխը շարժեց և շարունակում էր թիավարել։ Վերջապէս վեր կացաւ աղջիկը, մօտեցաւ երիտասարդին և թաշկինակով պինդ կապեց նորա խոր վէրքը։ Յետոյ առաւ նորա ձեռից թիակի մէկը, թէև նա չէր ուզում տալ, նստեց նորա դէմը, բայց առանց նորա երեսին նայելու, այլ արիւնաշաղաղ թիակի վերայ, որով ուժով յառաջ էր վարում նաւակը։ Երբ որ նոքա մօտեցան ցամաքին, հանդիպեցան նոցա ձկնորսներ, որոնք գիշերուայ համար ձգում էին ուռկանները։ Նոքա ողջունեցին Անտոնինոին և ծաղրեցին Լաուրէլային։ Երկուսն էլ ոչ նայեցին նոցա, ոչ պատասխանեցին։

Արևը դեռ. ևս բաւական բարձր էր կանգնած, երբ որ նոքա հասան նաւահանգիստը։ Լաուրէլան թափ տուեց իւր շորերը, որ համարեա թէ բոլորովին չորացել էր ծովի վերայ, և դուրս թռաւ

ափի վերայ։ Խլիկ մանող պառաւ կինը, որ առաւօտը տեսել էր Նորան ճանապարհ ընկնելիս, էլի կանգնած էր տանիքի վերայ։ «Այդ ի՞նչ է քո ձեռը, Յօնինօ», ձայն տուեց նա տանիքից, «Տէր Յիսուս, նաւակը արիւնով լիքն է»։

«Բան չը կայ, սանամայր, պատասխանեց սղան։ «Մէկ դուրս ցցուած մեխ քերծեց ձեռս։ Վաղը կանցնի։ Անիծած արիւնը իսկոյն երևումէ, և բանն աւելի վտանգաւոր է ցոյց տալիս, քան թէ իսկապէս է։

«Ես խոտեր կը դնեմ վէրքիդ վերայ, Կնքահայր։ Սպասի՛ր, ահա գալիս եմ։

«Մի՛ նեղանաք, սանամայր։ Արդէն ամեն բան արած պրծած է, և էգուց առողջացած կը լինի ձեռս և մոռացուած։ Ես շատ առողջ մարդ ունիմ, որ իսկոյն, ծածկումէ վէրքը։

—Ադի՛օ, ասաց Լաուրէլան և գնաց իւր ճանապարհով, որ տանումէր դէպի վեր։

«Բարի գիշեր», կանչեց Նորա ետևից Անտօնինօն, առանց Նորա կողմը նայելու։ Յետոյ հանեց նաւակից կողովները և մի փոքր քարէ սանդուղքով բարձրանալով՝ գնաց խրճիթը։

Բայց Անտօնինօից ոչ ոք չըկար երկու սենեակի մէջ, որոնց մէջ նա հիմա մտնելիս էր գալիս յետ ու առաջ։ Բայց փոքր պատուհանից որ ծածկվում էր միայն փայտէ փեղկերով, փչում էր հովը աւելի զով, քան թէ հանդարտ ծովի վերայ, և մենակութիւնը շատ ախորժելի էր Նորան։ Նա երկար միջոց կանգնած էր Տիրամօր փոքրիկ պատկերի առաջ և երկիւղածութեամբ նայում էր արծաթափայլ թղթից Նորան կպցրած աստեղազարդ կամարի վերայ։ Սակայն աղօթել չէր ուզում։ Եւ ի՞նչ բանի համար աղօթէր, երբոր էլ ոչինչ յոյս չունէր։

Կարծես այն օրը վերջ չունէր։ Նա ուզումէր որ մթնի, որովհետև յոգնած էր և արիւնի կորուսաը աւելի էր ազդել Նորա վերայ, քան թէ որքան նա խոստովանում էր։ Նորա ձեռը սաստիկ ցաւումէր. նա նստեց աթոռի վերայ և բաց արեց վիրակապը։ Յետ քաշուած արիւնը կրկին սկսեց վազել և վէրքի բուերքը սաստիկ ուռել էր։ Նա լաւ լուացաւ իւր վէրքը և երկար

միջոց հովացրեց: Երբ որ նա կրկին ընեց իւր վէրքը, պարզ տեսաւ Լաուրէլայի ատամների հետքը: «Իրաւունք ունէր», ասաց նա: «Ես գազան էի և արժանի իմ այս բանին: Ես վաղը կուղարկեմ նորան իւր Թաշկինակը Ջիուզէպպի ձեռով: Ինձ նա միւս անդամ էլ պիտի չընտանէ: — Ցետոյ լաւ լուացաւ նա Թաշկինակը և փռեց արևի մէջ, առաջուց կրկին կապելով իւր ձեռը ձախ ձեռի և ատամների օգնութեամբ: Ցետոյ ընկաւ նա անկողնի վերայ և աչքերը փակեց:

Պայծառ լուսինը զարթեցրեց նորան քնից, մի և նոյն ժամանակ և ձեռի ցաւը: Նա այն էր որ վեր թռաւ իւր վրդովված արիւնը ջրի մէջ հանդարտեցնելու, որ ոտի ձայն լսեց իւր դռան առաջ: «Ո՞վ է», կանչեց նա և բաց արեց: Նորա առաջ կանգնած էր Լաուրէլան:

Աղջիկը ներս մտաւ առանց այլայլութեան: Նա վեր առաւ Թաշկինակը, որ ծածկել էր գլխին, և դրեց սեղանի վերայ մի կողով: Ցետոյ խոր շունչ քաշեց:

«Դու եկել ես Թաշկինակդ տանելո՞ւ», ասաց Անտոնինոն. ի զուր տեղն ես աշխատել, որովհետև էգուց առաւօտը վաղ պիտի տայի Ջիուզէպպին, որ բերէր քեզ»:

— Թաշկինակի համար չեմ եկել, պատասխանեց Լաուրէլան: — Ես գնացել էի լեռան վերայ խոտեր ժողովելու, որոնք արիւնը կապումեն: Ահա: Եւ նա բաց արեց կողովի խուփը:

«Շատ ես նեղացել», ասաց երիտասարդը առանց դառնութեան, շատ ես նեղացել: Ձեռս արդէն լաւ է, շատ լաւէ, և եթէ աւելի վատ լինէր, ես արժանի եմ այդ բանին: Ի՞նչ ես ուզում դու այստեղ այս ժամանակ, եթէ քեզ մէկն այստեղ տեսնէր. գիտես, թէ ինչպէս սիրումեն խօսել, թէև իրանք էլ չըգիտեն, թէ ինչ են ասում:

— Ոչ ոք փոյթս չէ, ասաց աղջիկը սաստկութեամբ:

— Ես պէտք է ձեռդ տեսնեմ և խոտեր դնեմ վէրքիդ վերայ, որովհետև դու ձախ ձեռով կարող չես անել այդ բանը:

— Ուրեմն թող տեսնեմ, որ հաւատամ:

Աղջիկը բռնեց ձեռը, որ չէր կարող իրան պաշտպանել և արձակեց փաթեթը: Սաստիկ ուռուցքը նկատելով, սարսափած աղաղակեց նա. Ջիսուս-Մարիամ....

«Մի փոքր ուռել է», ասաց Անտոնինոն: «Բայց այդ մի օր ու գիշերի մէջ կանցնի»:

Աղջիկը գլուխը շարժեց։ — Այդպէս դու ամբողջ շաբաթ չես կարող ծովի վերայ երթալ։

«Ես կարծում եմ, որ վաղը չէ՛ միւս օր կարող եմ։ Բան չըկայ։

Այդ միջոցին Լաուրէլան բերեց մէկ ամանով ջուր և նորից լուացաւ վէրքը։ Անտոնինոն հնազանդեցաւ ինչպէս մի երեխայ։ Յետոյ Լաուրէլան դրեց վէրքի վերայ առողջարար խոտեր, որոնք իսկոյն թեթևացրին բորբոքումը, և կապեց ձեռքը քսիդանի երիզներով, որ բերել էր իւր հետ։

Երբ որ այդ վերջացաւ, Անտոնինոն ասաց. «Շնորհակալ եմ։ Հիմա լսիր, եթէ ուզում ես ինձ բաւականութիւն տալ. ների՛ր ինձ, որ այսօր մի այնպիսի յիմարութիւն ծագեց գլխիս մէջ, և մոռացիր այն բոլորը, ինչ ասել ու արել եմ։ Ինքս էլ չըգիտեմ, թէ ինչպէս պատահեցաւ այդ։ Դու երբէք պատճառ չես տուել ինձ քեզ հետ այդպէս վարուելու, երբէք չես տուել։ Այսուհետև դու չես լսիլ ինձանից ոչինչ այնպիսի բան, որ կարողանայ վերաւորել քեզ։

«Ես պէտք է խնդրեմ ներողութիւն, ասաց Լաուրէլան։

— Ես պէտք է ուրիշ կերպ և աւելի լաւ հասկացնէի քեզ և չըգրգռէի իմ լռութեամբ։ Եւ բացի դորանից այդ վէրքը։—

«Դա պաշտպանութեան գործ էր, և շատ յարմար ժամանակ պատահեցաւ՝ ինձ կրկին ուշքի բերելու համար։ Եւ ինչպէս արդէն ասացի, ոչինչ բան է։ Մի՛ խօսիր ներողութեան վերայ։ Դու ինձ լաւութիւն արիր և ես շնորհակալ եմ քեզանից։ Հիմա գնա՛ քնիր, և ահա — ահա քո թաշկինակը, որ իսկոյն կարող ես հետդ տանել։

Անտոնինոն տուեց աղջկան թաշկինակը, բայց նա տեղից չէր շարժվում, և կարծես թէ պատերազմում էր ինքն իրան հետ։ Վերջապէս ասաց նա. — Դու իմ պատճառով բաճկոնդ էլ կորցրիր, և ես գիտեմ, որ նորա մէջ էր նարինջների փողը։ Այդ բոլորը ճանապարհին միտս ընկաւ։ Ես չեմ կարող վճարել քո բոլոր վնասը, որովհետև մենք ոչինչ չունինք, և ունեցածն էլ մօրս է պատկանում։ Բայց ահա ես ունիմ մի արծաթէ խաչ, որ այն նկարիչը թողեց սեղանի վերայ, երբ նա մեզ մօտ էր վերջին անգամ։ Նորանից յետոյ ես այս չեմ տեսել և էլ աւելի չեմ ուզում պահել արկղիս մէջ։ Եթէ դու այս վաճառես — սա արժէ մի քանի պիաստր, ինչպէս այն ժամանակ ասում էր մայրս — այդպէսով մի մասով կըփո-

խարինուի քո մեսը, և պակասորդը ես կըվաստակեմ իմ աշխատութեամբ գիշերները, երբ որ մայրս քնած կըլինի:

«Ես ոչինչ չեմ առնի քեզանից, կարճ ասաց Անտոնինոն և յետ մղեց փայլուն խաչը, որ Լաուրէլան հանել էր գրպանից:

— Պէտք է առնես, ասաց աղջիկը: — Ո՞վ գիտէ քանի ժամանակ ոչինչ չես վաստակիլ այդ ձեռով: Ահա դնում եմ այստեղ և միւս անգամ էլ չեմ ուզում տեսնել:

«Ուրեմն ձգիր ծովը»:

— Ես ընծայ չեմ տալիս քեզ, այլ ինչ որ արդար իրաւունքով կըհասնի քեզ:

«Իրաւո՞ւնք: Ես ոչինչ իրաւունք չունիմ քո և ոչ մի բանի վերայ: Եթէ այսուհետև էլի մի անգամ պատահես ինձ, խնդրում եմ չընայես իմ երեսին, որ չըկարծեմ, թէ յիշեցնում ես ինձ իմ պարտքը: Հիմա բարի գիշեր, և թող այս մեր տեսութիւնը վերջինը լինի:

Անտոնինոն դրեց նորա կողովի մէջ թաշկինակը և խաչը և խուփը ծածկեց: Յետոյ գլուխը բարձրացնելով, նայեց աղջկայ երեսին և վախեցաւ: Խոշոր և ծանր արտասուքներ գլորվում էին նորա այտերի վերայ, նա լալիս էր:

«Սուրբ կոյս Մարիամ, կանչեց երիտասարդը «հիւանդ ես. դու բոլոր մարմնովդ դողում ես:

— Ոչինչ, պատասխանեց աղջիկը: Ես տուն կերթամ, և տատանելով գնաց դէպի դուռը: Լացը յաղթեց նորան, և նա ճաքատը դռանը սխմելով, սկսեց հիմա սաստիկ և բարձրաձայն լալ. Բայց մինչև Անտոնինոն կըմօտենար նորան, որ յետ դարձնէր, յանկարծ շուռ եկաւ աղջիկը և փաթաթուեցաւ նորա վզին:

— Ես այս չեմ կարող տանել, աղաղակեց նա, և պինդ սխմեց նորան իւր կուրծքին, ինչպէս մեռնողը փաթաթվում է կեանքին:— Ես չեմ կարող լսել, որ դու ինձ հետ քաղցրութեամբ ես խօսում և հեռացնում ես քեզանից այս ծանր խղճմտանքովս: Ծեծիր ինձ, կոխոտիր ոտներով, անիծիր ինձ, — բայց եթէ ճշմարիտ է, որ դու ինձ սիրում ես, դ ե ռ ևս սիրում ես, այն բոլոր վատութենից յետոյ, որ ես արել եմ քեզ, ապա առ ինձ և պահիր և արա ինձ հետ ինչ որ ուզում ես: Բայց այդպէս մի հեռացնիր ինձ քեզանից:— Նոր սաստիկ հեկեկանք կտրեց նորա խօսքը:.

Երիտասարդը կարճ միջոց անխօս պահեց նորան իւր թևերի

մէջ։ «Արդեօք դեռ ես սիրո՞ւմ եմ քեզ», վերջապէս կանչեց նա։ «Ո՛վ Սուրբ Աստուածածին. մի՞թէ կարծում ես թէ այս փոքր վէրքից դուրս վազեց սրտիս բոլոր արիւնը։ Մի՞թէ չե՞ս զգում, ինչպէս բաբախում է նա կուրծքիս մէջ, կարծես թէ ուզում է դուրս թռչել քեզ մօտ։ Բայց եթէ դու այդ ասում ես ինձ փորձելու համար, կամ որովհետև կարեկցում ես ինձ, ապա գնա՛, ես այդ էլ պատրաստ եմ մոռանալ։ Թող չը կարծես դու, թէ պարտական ես ինձ, որովհետև դիտես, թէ ինչ եմ կրում քեզ համար։

—Ո՛չ, ասաց աղջիկը հաստատ ձայնով և գլուխը Նորա ուսից բարձրացրեց ու արտասուալից աչքերով նայեց Նորա երեսին,— ես սիրում եմ քեզ, և այն, ինչ որ ես հիմա ասում եմ, վաղուց վախենում էի այդ բանից և ընդդիմանում էի Նորան։ Բայց հիմա ուզում եմ փոխուիլ, որովհետև էլ չեմ կարող համբերել, որ չը նայեմ քո երեսին, երբ որ դու փողոցում պատահես ինձ։ Հիմա ես քեզ կը համբուրեմ, ասաց նա, որ երբ որ կրկին կասկածես, կարողանաս ասել ինքդ քեզ. նա ինձ համբուրել է և Լաուրէլան չի համբուրիլ ոչ ոքի, բացի Նորանից, որին նա պիտի ուզէ։

Նա երեք անգամ համբուրեց Նորան և յետոյ խլուելով, ասաց. բարի՛ գիշեր, իմ սիրական։ Հիմա քնի՛ր և առողջացրու ձեռդ. մի՛ դար ինձ հետ, որովհետև ես չեմ վախենում ոչ ոքից, բացի քեզանից։

Այս ասելով, դուրս թռաւ նա տանից և ծածկուեցաւ պարսպի ստուերի մէջ։ Իսկ Անտոնինոն երկար ժամանակ նայում էր պատուհանից ծովի վերայ, որի վերայ կարծես օրօրվում էին բոլոր աստղերը։

Երբ որ փոքր քահանան հետևեալ անգամ դուրս եկաւ խոստովանարանից, ուր Լաուրէլան երկար մէջոց չոքած էր Նորա առաջ, կամաց ժպտում էր ինքն իրան։ «Ո՞վ կը մտածէր», ասաց նա, «որ Աստուած այսպէս շուտ կը ողորմի այս գարմանալի սրտին։ Եւ ես յանդիմանում էի ինձ, որ խստութեամբ չէի հալածել յամառութեան դևը։ Բայց մեր աչքերը կարճատես են երկնքի շաւիղների համար։ Ուրեմն թող տէրը օրհնէ նոցա և ես հանեմ այն օրին, որ Լաուրէլայի մեծ որդին մի ժամանակ իւր հօր փոխանակ նաւակով տանէ ինձ ծովի վերայ։ Է՛յ, է՛յ, է՛յ, Լա Բաբբիատա։

Գ. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑ

ԻՄ ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆԻՑ *

ՆՈՒԻՐՎՈՒՄ Է ԻՄ ԸՆԿԵՐ Ս. Մ.-ԻՆ

Ա.

Ես փառահեղ չինոմնիկ էի 1862 թուին: Ունէի կօշիկներիս կրնկներին կպցրած գնգղնգան մեխեր, կամ ինչպէս ասում են մեզանում շպօրներ, իսկ գլխարկիս ճակատին՝ կօկարդ. մէկ խօսքով՝ գեղեցիկ, արծուաքիթ, մեծ յոյսերով լի երիտասարդ էի և ունէի կապոյտ ղայթանով բոլորած գդակ:

Կապոյտ ղայթանը իմ ուսումնականութեան նշանն էր: Ես կատարեալ ուսումնական էի: Կարդում էի Բէլինսկին և մէկ քանի ժամանակից յետոյ անցայ դէպի Բօքլը, որից իմացայ, որ ես սատիկ կօսմօպօլիտ պիտի լինիմ և հենց, այդ ժամանակներում վերայ հասաւ Լուիսի ռուսական թարգմանութիւնները և ես սովորեցի, որ չինոմնիկական փորմն շատ դժուարութեամբ են պատրաստվում իմ կերած հիւթերի խառնուրդները՝ որոնցից գոյանում են մաղձ և արիւն: Մէկ խօսքով՝ սարսափելի ուսումնական և գիտնական չինոմնիկ էի:

Ես իմ աղնուական և գիտնական չինոմնիկութիւնով մէկ օր զբաղուած Բէլինսկիով, Բօքլով և Լուիսով, ամենադատարկ գրպան-

---

* Այս յօդուածից մի կտոր տպուած է Մշակ լրագրի առաջին համարներում:

Ն. Խ.

ներով, անցնում էի մէկ մեծ փողոցով, տեսայ մէկ յայտարարութիւն պինդ կպած պատին: Ես մօտեցայ և կարդացի, յայտնի բան է, շատ դժուարութեամբ, — Ա ր շ ա կ Բ. Գործող անձինք. Շահխաթունեանց, Ամերիկեանց, Մատինեանց, Սուքիասեանց և այլն և այլն. Դ ա լ ա լ Ղ ա ղ օ, որի տակ դարձեալ կային Մատինեանց, Սուքիասեանց Ամերիկեանց, և այլն: Տոմակները ծախվում են, այս-ինչ տեղ:

Իմ ուսումնականութիւնս և դիտնականութիւնս ստիպեցին ինձ վաղ տալ այն-ինչ տեղը և գտնել այն-ինչ «Արշակ Բ.» և «Դալալ Ղաղօ» ներկայացման տոմակները:

— Զարմանալի, զարմանալի բան, ասում էի ես ինձ ու ինձ, վազելով դէպի այն-ինչ կողմը, — հայը հայերէն խօսի և այն էլ ինչ տեղ... հրապարակական թատրոնում: Ամ՞թ, ամ՞թ... վճռեցի ես և հասայ:

Մէկ նիհար մարդ՝ հանդարտ, անվրդով նստած էր այն-ինչ տեղի մէկ սենեակում:

— Խնդրեմ մէկ տոմակ, ասացի ես ռուսերէն:

— Տոմակ չկայ, պատասխանեց ինձ նիհար մարդը, որի ՈՒԵՐԵ արտասանելու ժամանակ ես նկատեցի, որ նա նմանապէս շատ անվրդով Ֆ տառի տեղ e է արտասանում:

— Ի՞նչպէս թէ չկայ, բացագանչեցի ես, զգալով որ այդ պարոնն ինձ լաւ չի տեսնում, որ նա չի նկատում ոչ իմ զնգզնգան մեխերս, ոչ իմ կապոյտ ղայթաններս, ոչ իմ կօկարդս: — Չկայ, ասում եմ, պատասխանեց նա առաւել անվրդով:

Ես շրխկ-շռխկացրի թուրս և շպօրներս և բարկացած դուրս գնացի այն-ինչ տեղից:

— Ինչ անեմ, ասացի ես, և գլխումս ծագեց մի հիանալի միտք:

«Ես կերթամ թատրոն, կը խնդրեմ որ ինձ համար մէկ աթոռ դնեն, որի համար ես կը վճարեմ երկապատիկ գին: Մտածեցի, վճռեցի և դիմեցի եօթն ու կէս ժամին Թիֆլիզի քաղաքային թատրոնը:

Գնացի, մտայ, տեսայ տոմարկղը փակած և նախամուտը լցուած հայ բազմութիւնով և տոմսավաճառներով: Հայ վաճառականների ազգասէր գործակատարները նորաբոյս հայկական թատրոնից մեծ երկամուտ նախագուշակելով, գնել էին շատ տոմակներ և թատրոնի նախամուտքում ծախում էին եռապատիկ գներով: Բայց ինձ ինչ

փոյթ, ես պիտի թատրոն տեսնէի, հայկական թատրոն. պիտի այն թատրոնի բեմի վերայ լսէի ընդհանուր կոսմոպոլիտութեան և թիֆ-լիզի բարիշնեաների համար ատելի և զզուելի բարբառը...Բայց վճռեցի աղգասէր վաշխառուներից տոմսակ չառնել և մտայ թատրոնի կորրիդորը:

Նիհար երիտասարդը դարձեալ առաջս եկաւ:

Խնդրեմ, պարոն, դարձեալ ես դիմեցի նորան, բայց այս անգամ շատ վրդովուած:

—Այս բոպէիս, պարոն, այս բոպէիս, ասաց նա թոթովելով, և տուաւ ինձ մի տոմսակ: Երջանի՛կ բոպէ, անդառնալի, գեղեցիկ և տխո՛ւր յիշատակ...Մտայ թատրոնի դահլիճը և զգացի, որ ես հայ եմ.

. . . . . .

Խնդրեմ ոչոք չը կարծէ, թէ այս կէտերը չը տպած բառեր են... Դոքա տպած են իմ սրտումն, որոնք արտայայտելու չափ ես ոյժ չունիմ....

Ուսումնական կոսմոպոլիտս մտայ հայկական թատրոն և զգացի որ ես հայ եմ: Ցայտնի բան է, ես նոյն ժամին թէև շատ ամաչում էի իմ հայ լինելուցս, նա մանաւանդ որ այդ հայութիւնը իմ համազգակից ինստիտուտաների համար զզուելի էր, բայց այն բոպէին երջանիկ էի ես իմ հայ ծագումովս:

Դահլիճը լեքն էր, և լեքն էր նա հիանալի, գեղեցիկ, շքեղ, բթամիտ և զգայուն հասարակութիւնով: —Օթեակներումը կային հիանալի սննդած օրիորդներ, լաւ ռուսերէն խօսողներ, անպայման գեղեցիկ կրթուած՝ տիկին Ցավրի մեծ և այլ այսպիսի տեսակ ուսումնարաններում: Բազկաթոռներում կային հայ ջէնտէլմէններ հիանալի ձեռնոցներով, սպիտակ շապիկներով, կրթուած զանազան բարձրաստիճան ուսումնարաններում: Աթոռներում կային, հաստաքիթ, հաստափոր, բարակափոր. խիտամազ, սերտամազ և այլ զանազան տեսակ վաճառականներ, չինովնիկներ և անյայտ գործունէութեան տէր մարդիկ: Կային և խելօքներ, ինձ պէս յիմարներ և ինձանից շատ գիտնականներ: Ես մտայ, նկատեցի այդ բոլորը և նստեցի ինձ համար պատրաստած աթոռի վերայ, ու կարգի բերելով իմ անմման, սպիտակ, արծաթազարդ թրագօտիկս և իմ զանգակաձայն շալօրներս, շատ բաւական ինքս իմ էութիւնով, նայեցի չորս կողմս:

Ես ուրախ էի, որովհետև ես այդ բոպէին զգում էի, որ մարդ եմ, և որ առաւել խայտառակն էր — հայ եմ.... Որովհետև, ներեցէք, խնդրեմ. օ՜ հարուստ, բարձր ուսում ստացած հայածնունդ խելօք հայ երիտասարդներ, գիտնականութեան և կլուբների հերոսներ, — Միշաներ, Կոստեաներ, Վալոդիաներ և յսաճախ Ֆիզրաններ, Արշակներ, և այլ այս կարգի երիտասարդներ...ներեցէք խնդրեմ, որ ես, հակառակ բարձր ուսումնականութեան և հայ բ օ մ օ ն տ ի հասկացողութեան, զգացի, որ ես հայ եմ: Ես հայ էի, ի՞նչ անեմ:

Հայեր էին բոլորն էլ ինձ հետ այդ դահլիճում:

Հայեր էին բոլոր վերոյիշեալ անձնաւորութիւնները և Հայեր էին....մուռացայ դարձեալ մէկ տեսակ անձնաւորութիւններ, այն է.... վրացա - եւրոպական հագուստով տիկինները. — Սօնիչկաները, Լիզաները, Կէկէլները, Անիչկաները, Սուսանա Իվանովները, Մարթա Իսակովները, Կատարինէ Պավլովները և այլ այսպիսի քնքոյշ հայ տիկիններ:

Ես երջանիկ էի ամեն կողմից, երջանիկ էի իբրև հայ և իբրև մարդ և անհամբերութեամբ սպասում էի վարագուրի բաց անելուն:

Ինձ հետ սպասում էր նորա բացուելուն և բոլոր այդ հասարակութիւնը:

Բացուեցաւ վարագոյրը: Լսուեցաւ խորական երգ՝ «Մեծափառ արքայ».....

Դուրս եկան մի քանի երիտասարդ, անկիրթ, անդիպլոմ, դէսից դէնից, Ղազախից, Շամշադնից և այլ երկիրներից հաւաքուած երիտասարդներ:

Աքանչելի հայ հասարակութիւնը, որի քառորդ մասը հաղիւ էր խոստովանում իւր հայութիւնը և գիտէր իւր մայրենի լեզուն, ծափահարեց:

Թիկնաթոռները ծափահարեցին ծիծաղի համար և որ ապացուցանեն թէ ծափահարում են ծիծաղի համար. նոքա յօրանջելով և խրխռալով «բրավո, բրավո» կանչելով՝ յետ էին նայում ավժոռների հայերին և վերնայարկ համբարձուած ամբոխին, ցաւելով նորանց տգէտ հայասիրութեան վերայ:

Աթոռները, ծափահարեցին ծափահարելու համար, որովհետև ծափահարում էին թիկնաթոռները:

Վերնայարկում ծափահարում էր ամբոխը բեմի վերայ հայ բարբառ լսելու համար:

Իսկ օթեակներում ծափահարում էին բարիշնեաները և հաստատիր ու բարակափոր քաղաքացիների կանայքը, գնահատելով հայ թատրոնական գաղափարը, ազատ բացագանչելով. Ֆի՛, զա՛ղբստ, (ի՞նչ անպիտան բան է) «թվալե կի դադիդգէբաթ»: (աչկներդ դուրս գայ) և այլն:

Ես հասայ իմ երջանկութեան բարձր աստիճանին: Դուրս եկաւ Վահան Մամիկոնեանը, հայրենիքի բարեկաւութեան համար մերձիմահ վիրաւորուած հայ նախարարը: Ես ճչացի «բրավո» և յիմարացայ, որովհետև ամենքը շուռ եկան և ինձ նայեցին: Բայց որ ցոյց չըտամ թէ ես յիմար եմ, և հայ եմ, սկսեցի անկեղծօրէն պարապել եմ թրագօտկով ու շալօրներով: Դուրս եկաւ Դրաստամատը, որի վերայ կը խօսինք հետագայ յիշողութեանս մէջ:

Արքայից արքայ Շապուհը, հզօր, շքեղ, պարթեւատոհմ Շապուհը, մահու և կեանքի հրամանատար թագաւորը (պ. Աբովեան) բեմ դուրս եկաւ, յաղթական պատերազմից յետոյ: Պարթեւների և հայերի զօրքերը, զարդարուած կարտօնների մէջ անդադար «կեցցէներ» էին գոչում: «Կեցցես դու Շապուհ» յաղթական երգով ուղեւորում էր արքայն մինչև ավան-սցենան, Ղազախից, Շամշադինից և այլ կորած մոռացած հայերի համար երկիրներից, տկլոր, սոված, չքաւորութեան մէջ ճնշուած երիտասարդները, ինչպէս ասացի վերև, առանց որ և իցէ բարձր ուսումնականութեան դիպլոմ դրպանում.....մեծ ուշադրութեամբ սկսեցի ուսումնասիրել այդ ինքնուրոյն հայ թատրոնական գոյութիւնը բեմի վերայ:—Իսկ դու, քաջդ Դրաստամատ, դարձաւ արքայն դէպի հայ նախարարը, պարգև պահանջեր ինձանից: Պարգե՛ւ, թագաւոր, պատասխանեց նա: Ոչինչ պարգե՛ւ չեմ ուզում: Ես իմ պարտքս եմ կատարել: Ես հաւատարմութեամբ պիտի ծառայէի իմ տիրոջը, և ծառայեցի: Հայերը միշտ հաւատարիմ են եղել դէպի պարթեւների տոհմը և կը մնան հաւատարիմ, քանի որ կղգան նորանց բարեկամութիւնը:

Այս և սորա նման խօսքեր արտասանուեցին հրապարակական թատրոնի բեմի վերայ ուժեղ շեշտահարութեամբ, հայի մաքուր արտասանութեամբ և կատարեալ բեմական արհեստն իմանալով:

«Ո՞վ է, ո՞վ», հարցրի ես դէս ու դէն: Այս հարցիս պատասխանն էր միայն ծափահարութիւնը և «կեցցէների» ու «բրավօների» դղրդումն դահլիճում: Ծափահարում էին Դրաստամատին (Ամերիկեանին):

Կողքիս նստածների մէկից ես ուզեցի դիտակ և սկսեցի զննել Դրաստամատին. նա էր միջահասակ, փոքր ինչ ծաղկատար, խոժոռ կերպարանքով և կաղաքայլ:

Ես իմ չինովնիկութեան բարձր կէտից զգացի, որ այդ երիտասարդի մէջ կայ բեմական տաղանտ, որ կարող է զարգանալ հայկական թատրոնի բեմի համար:

Վերջացաւ առաջին գործողութիւնը:

Սկսուեցաւ երկրորդը, և այդ գործողութեան մէջ նմանապէս առաջին անգամ բեմ դուրս եկաւ պ. Շահխաթունեանցը, որ խաղում էր Արշակ Բ-ի դերը: Ամենայն ուշադրութեամբ ես հետևում էի այդ երիտասարդի խաղին. բայց երբ նա ցնորուած, գետին փռուեցաւ և մեռաւ, ես միայն ափսոսացի, որ այդ երիտասարդը յափշտակվում է իւր խաղով ինքը և յափշտակում են նորան ժողովրդի միջից շատերը՝ իրանց անտեղի ծափահարութեամբ և «բրավո» ու «կեցցէներով»:

Բեմական Արշակի մեռնելուց յետոյ՝ ներկայացրին «Դալալ-Ղաղ» անունով մէկ զաւեշտի նման բան, հեղինակութիւն պ. Ն. Փուղինեանցի: Այդ պիեսան առաջին փորձն էր տեղական լեզուով մէկ որ և իցէ կենդանի միտք արտայայտել բեմական միջոցով: Դժբախտաբար պիեսայի մէջ ոչինչ մէկ որոշուած միտք չկար, բայց կային տիպերի նման մէկ քանի բան: Այդ տիպերից մէկն էր Մշեցի Կիվկիվը միւսը Թիֆլիզցի Դալալ-Ղաղն:

Այդ դերերի խաղացողներից մէկը մի ինչին և աննպատակ դերից շինեց կատարեալ բեմական դեր, ցոյց տուաւ այդ ինչին դերում խեղճ Մշեցի մշակին անյայտ, ողորմելի, միշտ աշխատող, միշտ պանդուխտ և միշտ հոգով սրտով կպած իւր հայրենիքին, իւր Մուշ երկրին, օրական հացի համար՝ Թիֆլիզու դալալ, տգէտ և կոպիտ բնաւորութեանը ծառայող Մշեցուն: Այդ ինչին դերից տիպական անձնաւորութիւն ներկայացնողը բեմի վերայ՝ էր հանգուցեալ Ստեփանոս Մատինեանցը: «Եամա՛ն մեր մամլաքաթ» ասում էր մշակ Մշեցին, Դալալ Ղաղի ծառայ Մշեցին ու լաց էր լինում, յիշելով իւր հայրենիքը, իւր «ձղեր ու վղեր». նա դառն արտասուք էր թափում ու տխուր, սրտաշարժ աղեղորմ «եամա՛ն կիվկիվն» էր երգում: Միւսը՝ պ. Սուքիասեանցը, մի և նոյն դատարկ պիեսայում աշխատեց և ցոյց տուեց մի և նոյն մեռած հայ հասարակութեանը դալալ Ղաղին՝ կենդանի մէկ տիպ:

Միշտ բաւական իրանից, իւր կին Սինդուխտից (տ. Սօփիա Շահինեանց), միշտ աշխատող, որ խաբէ ուրիշներին և օգուտ քաղէ նորանց միամտութիւնից, միշտ վաշխառու և միշտ անվերջ տխմար. այդ դերը էս ստեղծեց պ. Սուքիասեանցը, որի հեռանալը հայկական թատրոնից մեծ հարուած տուեց ամբողջ հայ թատրոնական գաղափարին:

Այսպէս վերջացաւ առաջին հայկական ներկայացումը Թիֆլիզի քաղաքային թատրոնի բեմի վերայ: Այդ ներկայացումից յետոյ ես վճռեցի...ի՞նչ էք կարծում, ի՞նչ... նուիրել ինձ թատրոնին, մէկ կողմ թողնելով իմ փայլուն կօկարդս ու զնգզնգան շալօրներս:

Բ.

1862 թուի Զրօրհնէնքին էր: Երկինքը պարզ էր և կապոյտ, օդը սաստիկ ցուրտ: Վանքի եկեղեցու գաւիթը լեքն էր հայ հասարակութիւնով, բաղկացած ամեն տեսակ հայ մարդուց և կընոջից: Մարդկանց մէջ կային հաստատիորներ, բարակատորներ, վաճառականներ, չինովնիկներ՝ կօկարդով և առանց կօկարդի. հնացած, փտած ազգասէրներ. մէկ խօսքով՝ չուխա, մունդիր, սիվիլ և այլն և այլն: Կանանց մէջ կային՝ ռուս-հայ կին, վրացի-հայ կին, ռուս-հայ օրիորդներ, վրացի-հայ օրիորդներ և ոչ մէկ հայ կին կամ հայ-օրիորդ. մէկ խօսքով՝ կային քաթիբաներ, ղաթիբաներ, սալօփներ, մանդիլներ, շլեապաներ, չիխտիներ*), կրինօլիններ և շէյֆներ, որոնք նոր էին մօդա ընկել:

Ես և իմ ծառայակից բարեկամ պարոն Կ. Զ. մունդիրով և ձեռներս ներս հագցրած նեղլայկեայ ձեռնոցներում, ահագին գինուորական փափախները գլխներիս, ներս մտանք գաւիթը՝ այդ խառնիխուռն հասարակութեան ներդաշնակութիւնը լրացնելու համար:

Վանքի արևելեան պատի հովանաւորութեան ներքոյ, զանազան խմբերի մէկի միջում գտնվում էին երկու մարդ՝ մէկը սիվիլ, միւսը իմ և պ. Կ. Զ.ի նման կիսաղինուորական հագուստով, որոնք, չը նայած բոլոր իրանց պակասութիւններին, պէտք է մտնեն մեր փոքրիկ և տարաբախտ հայ կեանքի պատմութեան մէջ, իբրև սկզբնապատճառներ հայ լեզուի տարածութեան Թիֆլիզում:

---

*) Զանազան զարդարանքներից չինած կնոջ գլխի կապոց վրաստանցոց ձևով:

Այդ մարդիկն էին տարաբախտ հեղինակը «Ինկվիզիցիա»ի աննշան թարգմանութեան և «Շուշանիկ» ողբերգութեան գրուածքի հեղինակ՝ հանդուցեալ Յ. Կարինեանցը և պ. Մ. Պատկանեանցը:

Յափշտակուած իմ մէջ վճռած հարցովս—«վինել հայ դերասան», ես մէկ առանձին ուրախութիւն զգացի, տեսնելով այդ երկու մեր հայութեան կօրիֆէյներին՝ հանդուցեալ Կարինեանցին և պ. Պատկանեանցին, իմ ուսուցիչներիս՝ Ներսիսեան ուսումնարանում եղած ժամանակս:

Ես և իմ ընկեր Կ. Ջ. մօտեցանք այդ խմբին: Բարևեցինք նորանց և մտանք ընդհանուր խօսակցութեան մէջ: Խօսում էին թատրոնի վերայ: Ես յայտնեցի իմ կարծիքս պ. Մ. Պատկանեանցին, թէ լաւ կը լինէր Թիֆլիզում ունենալ մէկ փոքրիկ կանոնաւորված խումբ, հայ ներկայացումների համար: Մ. Պատկանեանցը յայտնեց, թէ նա արդէն աշխատում է, բայց 'ի զուր, թէ հայ հասարակութիւնը չի համակրում [1]): Ես յայտնեցի իմ կարծիքս իմ տեսած հայ ներկայացումների մասին՝ Սամել և Արշակ պիեսաների: Պ. Պատկանեանցը տաքացաւ: Յետոյ՝ շատ ուշ իմացայ ես այդ տաքանալու պատճառը, որ կը պատմեմ իւր ժամանակ:

—Այդ խումբը, պատասխանեց ինձ պ. Պատկանեանցը, երկար չի տևիլ, որովհետև դա անկարգ է:

—Կը կամենաք, ասացի ես, մենք փորձենք մէկ ներկայացում:

Զանցաւ երեք օր, ես և իմ ընկեր Կ. Ջ. յափշտակուած ապագայ դերասանական փառքի երևակայութիւնով, դիմեցինք դէպի հանդուցեալ Յ. Կարինեանցի տունը՝ խարփուխ անուանուած թաղը: Մտանք դահլիճը, մեծ, ահագին, զարդարած դահլիճ, լի բազմութիւնով, մինչև քառասուն հոգի: Մեզ մօտեցաւ տանուտէրը և յայտնելով մեզ իւր շնորհակալութիւնը, բացատրեց, որ այդ բազմութիւնը ապագայ դերասանական խումբն է:

—Այո՛, այո՛, մնատաղ, շտապեց աւելացնելու պ. Մ. Պատկանեանցը. մենք անպատճառ կանոնաւոր խումբ պիտի կազմենք ВЪ ПИКУ

---

[1]) Պ. Մ. Պատկանեանցը, մինչև հայ-թատրոնի տեղափոխուիլը քաղաքային թատրոնը, շարունակ թատրոնական ներկայացումներ է եղել տալիս, նախ Ներսիսեան հին ուսումնարանի դահլիճում, և յետոյ Գ. Շերմազանեանցի դարբասում:

имъ (նրանց հակառակ)*: Իսկոյն կը դայ Ն. Միրիմանեանցը. նա մեր կառավարիչը պիտի լինի: Ա. այժմ խնդրեմ ծանօթ լինիք, և ծանօթացրեց ինձ ռուս-Հայատրոնական գործին հմուտ պ. Շադինեանցի հետ:

—Սա և պ. Միրիմանեանցը կը կառավարեն մեր խումբը:

Եկաւ վերջապէս պ. Միրիմանեանցը, վճռուեցաւ հարցը. որոշեցին խաղալ Շուշանիկ ողբերգութիւնը, յարմարեցրած բեմի համար պ. Մ. Պատկանեանցից:

Դերերը բաժանեցին: Ինձ ընկաւ Վարդանի դերը, Կ. Ջ.-ին մէկ ինչ որ Բագրատունու թէ Ծերունու դեր, միտս չէ, իսկ կանանց դերերը տուին՝ Շուշանիկի դերը մէկ բաղաձայն բայց գեղեցկատես երիտասարդի և Դստկի՝ Վարդանի կնոջ դերը, մէկ պարիկով երիտասարդի basso-profondo ձայնով:

Գ.

Երևակայեցէք թիֆլիզի հանդուցեալ փոքրիկ, բայց գեղեցիկ թատրոնի դահլիճը, լիքը հարիւրաւոր բինոկլներ ուղղած դէպի բեմը, բեմը լիքը քառասուն ապագայ հայ-դերասանական խմբով, քառասուն գինուորներով, որոնց գլուխն էր պարոն Ա. Շ. որ անհետացաւ հայ թատրոնական բեմից այդ ապագայ քառասնից խմբի հետ միասին. երևակայեցէք այդ ամենը, ասումեմ, և պարիկաւոր 25 տարեկան տղայ երիտասարդ պ. **, ինձ՝ զանազան ոսկեզօծ գոգնոցներում փաթաթուած Վարդանիս և մեզանից 250 ռ. թատրոնի վարձ ստացող Իտալացի Տօրիչելլօին քթի տակ ծիծաղելիս մեղ վերայ, մեր կառավարիչ պ. Միրիմանեանցին բեմի աջակողմի օթեակում, և դուք կունենաք շատ թոյլ պատկեր խայտառակ իրագործուած Շուշանիկի ներկայացումի մասին, հեղ. պ. Մ. Պատկանեանցի. բայց թէ ո՞ւր գնաց այդ ներկայացման մուտքը, մինչև այսօր ինձ յայտնի չէ:

Դ.

Այս գլխում ես անհրաժեշտ եմ համարում բացատրել պ. Պատկանեանցի ինձ ասած «въ пику имъ» խօսքերի նշանակութիւնը:

---

*) Այս խօսքերը վերաբերում էին սորանից առաջ մէկ անցքի, պատահած դերասանների և Պատկանեանցի ու Կարինեանցի մէջ, որից յետոյ խումբը բաժանուել էր այդ պարոններից.

Պատկանեանցը և Հանդուցեալ Կարինեանցը՝ ինչպէս ասացի՝ Հայութեան ապարիզի պարագլուխներն էին։

Դոքա սկսեցին Ներսիսեան դպրոցի աշակերտների մէկ քանիսի հետ ինչպէս էին պ. պ. Ամերիկեանց, Սուքիասեանց, Մատինեանց, ապագայ երևելի տաղանները, և Պերճ Պռոշեանցի ձեռնտուութեամբ տալ մէկ-երկու թէ երեք ներկայացումներ Ներսիսեան դպրոցի դահլիճում։— Յետոյ, երբ մէկ քանի տարուց յետոյ, Պատկանեանցը, կարծեմ, կազմեց առանձին խումբ գիմնազիայի աշակերտներից և տուեց մէկ քանի ներկայացումներ Շերմազանեանցի դահլիճում և ապա դարձեալ միանալով այդ երկու ոյժը՝ Պատկանեանցը և Կարինեանցը՝ կամեցան տալ ներկայացումներ քաղաքային Թատրոնի դահլիճում, այդ ժամանակ Պերճը, Ամերիկեանցը, Սուքիասեանցը, Ռուսաստանից նորեկ երիտասարդ Շահխաթունեանցը և Մատինեանցը բաժանուեցան և տուին վերև յիշած Սամել և Արշակ պիեսայի ներկայացումները։

Այս բացատրութիւնից յետոյ պարզ բան է, որ մենք, այսինքն քառասուն անդամներից բաղկացած խումբը և ես դառանք գործիք եկրպառակութեան դէմ։ Այն ժամանակ ես չէի զգում այդ բանը, բայց լաւ էի հասկանում, որ հարկաւոր է ունենալ Թիֆլիզի մէջ կանոնաւորուած փոքրիկ հայ դերասանական խումբ։

Ե.

Շուշանիկի ներկայացումից յետոյ անցաւ մէկ տարի։ Կարինեանցը գրել էր «Վարդան Մամիկոնեան» ողբերգութիւն, կարծեմ, հինգ արարուածով։

Մենք հաւաքուեցանք դարձեալ Կարինեանցի տանը։

Պիեսան կարդալուց յետոյ՝ Նիստը, որ բաղկանում էր Միրիմանեանցից, Պատկանեանցից, Կարինեանցից, քառասուն անդամից, ինձանից և Կ. Ջ.ից, յանձնեց Շադինեանցին և ինձ՝ յարմարեցնել այդ պիեսան բեմական խաղարկութեան համար։ Երեք օրից յետոյ հինգ արարուածով «Վարդան Մամիկոնեանը» ներկայացրինք Նիստին ես և Շադինեանցը երեք արարուածով։ Նիստը որոշեց տալ այդ ներկայացումը։

Զ.

ԳԱՑԻԱՆԷ

Երբէք հայ թատրոնական բեմը քեզ չըպիտի մոռանայ, ազնիւ երիտասարդ, մէտամօրֆօզ Գայիանէ։ Դու զանազան չքաւո-

բուլթեանդ պատճառով ենթարկուած անպիտան, շահասէր մարդկանց կրքերին, լի հայութեան հոգով, առանց իմանալու, թէ ինչ ես անում, ստեղծեցիր հայ բեմի համար տաղանտաւոր դերասանուհի Գայիանէին, որը անցաւ ցնորքի պէս անիմաստ հայ հասարակութեան առաջ. բայց մնաց անջնջելի այդ յիշատակը խեղճ Հայոց բեմի համար, որը պարգևեց քեզ, իբրև երախտագէտ մօր, տասնաւոր հայ դերասանուհիք, որոնց մէջ պարծանքով կարող ես դու ցոյց տալ Սաթինիկին, Քէթէվան Արամեանցին և նոցա հետագաներին, որոնք պիտի խոստովանուին, որ քո աշակերտուհիքն են և պիտի պարտաւոր մնան քեզ միշտ, յիշելով քո հայ բեմին ընծայած դերասանուհու նշանակութիւնը:

«Վարդան»ի մէջ անհրաժեշտ հարկաւոր էր ունենալ երեք դերասանուհի, Սաթինիկի՝ Վասակի կնոջ դերի համար, Դստիկի՝ Վարդանի կնոջ դերի համար, և դարձեալ մէկ իշխանի կնոջ դերի համար:

Իսկ այդ միջոցին ամբողջ Թիֆլիզում գտնվում էր միայն մէկ հատ դերասանուհի, այսինքն մէկ անգամ բեմ դուրս եկած «Դալալ-Ղաղ»ի մէջ, Տ. Շահինեանցը, որ չիմանալով կարդալ հայերէն, սովորել էր իւր դերը իւր ամուսնու բերանից անգիր անելով

Մի և նոյն ժամանակ Կարինեանցի և Պատկանեանցի դէմ երկպառակուած խումբը պատրաստում էր իւր համար դերասանուհի տաղանտաւոր երևելի, բայց աւա՜ղ, կարճ միջոցի համար, հաղուագիւտ Տ. Մէլիք-Նազարեանցին[1]: Պէտք են դերասանուհիք, վճռեց նիստը և երեք օրից յետոյ, շնորհիւ Ց. Կարինեանցի, լքցուեցան նորա դահլիճը վեց թէ եօթը օրիորդներ, պատրաստ դերասանութեան նուիրելու իրանց:

Ի շարս դոցա էին մետամորֆոզ օր. Գայիանէն, օր. Արամեանցը և օր. Սոֆիա, կարծեմ, Դաւթեանց:

Առաջին իսկ փորձում օր. Գայիանէն ցոյց տուեց, որ նա հանճար է: Հանդիսականներն զմայլեցան և նիստը վճռեց, որ նոր խումբը պիտի հրաշքներ գործէ, ունենալով իւր մէջ այդպիսի շնորհալի դերասանուհի:

---

[1]) «Աւաղ» ասելով, մենք այն ենք ուզում ասել, որ քիչ ժամանակ ծառայելուց յետոյ՝ Տ. Մէլիք-Նազարեանցը Պ. Գ. Իզմիրլեանցի հետ ամուսնանալուց յետոյ, թողեց բոլորովին հայկական բեմը:

Միւս կուսակցութիւնը, որին այսուհետև ես կանուանեմ Պերճեան կուսակցութիւն, որովհետև նա էր նորանց պարագլուխը, շարունակում էր իւր գործունէութիւնը. նա պատրաստում էր «Սանդուխտ» պիեսան Լճեցի անունով մէկ Ցամաքկաստանցի պարոնի կառավարչութեամբ:

Է·

Չեմ յիշում, թէ երբ և ինչ տեղ ծանօթացայ Ամերիկեանցի և Սուքիասեանցի հետ, միայն լաւ միտս է, որ մէկ երեկոյ ես հրաւիրեցի այդ պարոններին ինձ մօտ և կարդացի մէկ քանի տեղ իմ թարգմանութիւնից «Ցիմոն Ամէնացի», հեղինակութիւն Շէքսպիրի. պիտի խոստովանիմ, շատ աննշան թարգմանութիւն էր:

Այդ ընթերցանութեան ժամանակ ես նկատեցի, որ իմ թէ կարդալու և թէ շեշտահարութեան ձևը (որովհետև ես աշխատում էի կարդալ այնպէս, ինչպէս երևակայում էի, թէ պիտի կարդամ թատրոնական բեմից) նորանց շատ անծանօթ թուաց և անգամ ծիծաղ պատճառեց: Ես կարդում էի շատ հասարակ և բնական ձևով:

Իմ այդ կարդալու ձևս դառաւ պատճառ երկար վիճաբանութեան, վերաբերեալ թատրոնական արհեստին:

Նոքա համոզուած էին, որ պիտի ընդունուած երգեցողական, կամ ինչպէս ասում են մինչև այժմ, ողբերգական առոգանութիւնով արտասանել ամեն մէկ խօսք, որպէս թէ այդ ձևով առաւել կարելի է աղդել հանդիսականների վերայ:

Ես սկսեցի հերքել այդ կարծիքը, և օրինակ բերեցի զանազան երևելի թատրոնական բեմեր, որտեղից վաղուց արտաքսուած է այդ հնացած մեթոդը, որ միայն բթացնում է դերասանի ընդունակութիւնը. որովհետև դերասանը սովորելով այդ ձևին, այնուհետև շինում է նորան իւր համար մեքենայական արհեստ և չի մշակում իւր ընդունակութիւնը, երբեմն տաղանդ անգամ:

Վերջապէս, բացատրելով իրարու մեր մտքերը, մենք ձեռք ձեռքի տուինք և խոստացանք, որ չընայելով թէ մենք պատկանում ենք հակառակ կուսակցութիւնների, այսինքն ես հ ա կ ա պ ե ր ճ ա կ ա ն, իսկ նոքա պ ե ր ճ ա կ ա ն, միշտ կաշխատենք միասին հայ թատրոնի բեմի համար:

Եկաւ դարունքը. ես դնացի երկրաչափութեան զանազան դիւղեր:

Ամառուայ միջոցում, յայտնի բան է, դադարեց հայ թատրոնի գործունէութիւնը:

Ես վերադարձայ Թիֆլիզ աշնան սկզբներում, և մնացի թողնել երկրաչափական պաշտօնս և նուիրել ինձ հայ-թատրոնական գործունէութեան:

Դարձեալ հաւաքուեցանք Ամերիկեանցը, ես և Սուքիասեանցը, և յիշելով մեր միմեանց տուած խոստմունքը, սկսեցինք գործել:

Գնացինք Պ. Գ. Իզմիրեանցի մօտ և հրաւիրեցինք նորան օգնել մեզ:

Նա շատ ուրախացաւ այդ բանի համար և յայտնեց իւր պատրաստութիւնը, միայն այն պայմանով, որ երկու խմբից կազմուի մէկ խումբ:

Մէկ քանի օրից յետոյ Իզմիրեանցը կանչեց մեզ, շինեց մէկ ցուցակ տասներկու նշանաւոր հայ մարդկերանց և յանձնեց մեզ՝ դիմել ամէն մէկին նորանցից և ստորագրել տալ: Այդ ցուցակի հետ կար և մէկ թուղթ, որի մէջ յայտնուած էր՝ որ ստորագրող անձինք պէտք է համաձայնին կազմել իրանցից հոգաբարձական ժողով, որը պիտի կառավարէ հայ դերասանական խումբը Թիֆլիզում:

Ես և պ. Սուքիասեանցը յանձն առինք մեր ածել այդ թղթերը: Օ՜, երջանիկ անցած, միշտ յոյսերով լի և անվրդով երիտասարդութիւն: Երանի՜ թէ դու մնայիր անխախտ և չընկնէիր հաղար ու մէկ հարուածների տակ, խոստովանելով ներկայ անպօրութիւնդ և յիշելով լուսաւոր անցեալդ: Առանք այս թղթերը, դիմեցինք նախ և առաջ պ. Իզմիրեանցի ազգականի մէկին, հարուստ, չաղ և իրան ծայրայեղ ազգասէր անուան տէր համարող այժմ հանգուցեալ Ն.....

Սեպտեմբեր ամսին էր, ինչպէս յիշում եմ, և շատ տաք եղանակ էր:

Մտանք ալաղափի դռնից, սիրտս սկսեց քիչ բաբախել, որովհետև դեռ չէի վայր ձգել ինձանից պաշտօնական ունիֆորմս և չինովնիկութեան վերայ ունեցած բարձր կարծիքը իմ մէջ փոքր ինչ չփոթուեցաւ:

«Ի՞նչպէս, զարթեցաւ իմ մէջ հարց, ես, սքանչելի դուբերնոկի սեկրետարս, պիտի ստորանամ՞, դիմելով մէկ որ և իցէ անծանօթ հաստափոր վաճառականի, որին կարող է խորթ թուիլ իմ այցելու-

թիւնս։ Բայց երիտասարդութեան յատկանիշ խոհեմութիւնը յաղթեց իմ մէջ չինովնիկի ընչին հոնորը։

Հայաթը մտնելու պէս Սուքիասեանցը կանգնեց և առաջարկեց մտնել պ. Հաստափորի մօտ ինձ միայնակ։

Անցայ տան դաւիթը, սկսեցի բարձրանալ սանդուղքներից, տեսայ մէկ երկայն, սաստիկ հաստ և կարմրագոյն երեսով մարդ, փաթաթուած աբրեշումի խալաթում, նստած փոքրիկ տախտակամն բանի վերայ և նորա առաջ կանգնած մէկ դալալ հրէայ կարճ հասակով և կարճ մօրուքով։

Սանդուղքի կէսը հասնելու պէս՝ Ն. նկատեց ինձ, ես կանգնեցայ և գլուխս տուի, բայց նա չը շարժուեց տեղից։

Ես հաւաքեցի իմ բոլոր քաջութիւնս և հասայ բալկոնի դուռը, որ կողքած էր այն կողմից։

Տեսայ չեն բաց անում, ես բախեցի։

—Ի՞նչ ես ուզում, ո՞վ ես, հարցրեց ինձ չարացած մէկ ձայն։

—Խնդրեմ, պատասխանեցի ես։ Ներքև մտիկ տուի դէպի դաւիթը և տեսայ, թէ ինչպէս փորը բռնած ծիծաղում է այս անցքի վերայ ծաղրերես Սուքիասեանցը։

Ծաղրիր, մտածեցի ես ինձ ու ինձ, իսկ ես կը հասնեմ իմ նպատակիս։

Դռան կէսը բացուեց և տեսայ կանգնած առաջիս այլանդակ տան տիրոջը, որ չարութիւնից համարեա փրփրում էր, և այնքան վրդովուել էր, որ չը նկատեց, թէ ինչպէս նորա յիմար խալաթի փէշերը բացուել էին և նա արժանացնում է ինձ իւր կեղտոտ շապկի և վարտիկի զմայլուն տեսարանով։—Ի՞նչ ես ուզում, բոռաց վերաս պ. Խալաթը։

Ես փոխանակ պատասխանելու, մեկնեցի նորան ձեռիս թերթերը։

—Դուն մէ ասա, էս ի՞նչ է։

—Այդ ուղարկել է ձեզ մօտ Իզմիրեանցը և խնդրում է, որ յանձն առնէք դուք թատրոն....

—Տօ կորէք գնացէք, ձեր թատրոնի հէրն էլ....և շըլխկ, կողբեց դուռը երեսիս վերայ։

—Ахъ ты.....

Ասացի ես և քացի տուի դռանը։ Ի՞նչպէս, դու համարձակում ես վիրաւորել ինձ, չինովնիկ մարդուս...

Սուքիասեանցի ծիծաղը դաւիթում ուժեղացաւ. ես վպեցի ինձ և շատ ծաղրալի և խայտառակ ձևով ինչպէս պարոնի սանդուղքներից:

Մօտեցայ Սուքիասեանցին, նա թողեց ինձ և շարունակելով իւր քռքռալի ծիծաղը, փախաւ ինձանից:

Սաստիկ վերաւորուած, համարեա դողալով բարկութիւնից, եկայ Իզմիրեանցի մօտ, որտեղ արդէն Սուքիասեանցը ծիծաղից հեկեկալով, պատմում էր դլխից եկած խայտառակ անցքը:

Իսկ Իզմիրեանցը փոխանակ ինձ հանդստացնելու, սկսեց ծիծաղել ինքն ևս. կատաղութեանս սահմանն անցաւ:

— Ծիծաղեցէք, ծիծաղեցէք, ասացի ես, բայց լաւ իմացէք, որ այդ խայտառակութիւնը ձեզ է վերաբերում, որովհետև ես ձեր առաքեալն էի:

Վերջապէս ինձ հանդստացրին, և միւս օրը ես դարձեալ առի թերթերը ձեռս և ընկայ Սուքիասեանցի հետ քուչա-քուչա:

Ը.

Վերջապէս կազմուեցաւ հոդաբարձութիւնը այս անձինքներից. Պ. պ. Փրիդոնեանցից (այն ժամանակուայ քաղաքագլխից), Իզմիրեանցից, Սունդուկեանցից, հանդուցեալ Ա. Սվէչնիկեանցից, բժիշկ, յետոյ հանձարաւոր հեղինակ, Մ. Տէր Գրիդորեանցից, Ն. Միրիմանեանցից, Աղամջանեանցից, Խօսրոյեանցից, Նաղիրեանցից, Շաղինեանցից, և դարձեալ երկու պարոնից, որոց անունները մոռացել եմ:

Բայց պէտք է ասած, որ մինչև այդ հոդաբարձութեան կազմուիլը պերճական խումբը, ինչպէս ասացի վերևում, արդէն սկսել էր պատրաստել պ. Մարկոս Աղաբէգեանցի, երբեմն խմբագրի «Կռունկ, Հայոց աշխարհի»ի, վարչութեան ներքոյ «Սանդուխտ» ողբերգութիւն, որի մէջ առաջին անգամ պիտի բեմ դուրս գար տաղանտաւոր Տիկին Նուարդ Մէլիք-Նաղարեանցը:

Այդ տեսակ անձինքներից հոդաբարձութիւն կազմուելու միակ նպատակն էր մեր երեք ձեռք ձեռքի տուած դերասաններիս, միացնել երկու հակառակ կուսակցութիւնները, որոց մէջ պ. Իզմիրեանցն էր պարագլուխ մէկ կուսակցութեան, այսինքն պերճական կուսակցութեանը, իսկ երկրորդին պ. Ն. Միրիմանեանցը: Առաջինի դերասանական ուժերն էին պ. Շահխաթունեանցը, Ամերիկեանցը, Սուքիաս-

եանցը և Մանդինեանցը, իսկ երկրորդինը՝ ես, և երկու հռչակաւոր այն ժամանակ թաթրոնական հեղինակներ, փորձուած բեմական արհեստի մէջ պ. Միքայէլ Պատկանեանցը և հանգուցեալ «Յակոբ Կարինեանց, և դոցա ղեկավարն էր պ. Իվան Շադինեանց, երբեմն քաղաքային ռուս-իտալական թատրոնական կառավարիչը:

Թէև կազմելով երկու կուսակցութիւններից մէկ հոգաբարձութիւն, պէտք էր յուսալ, որ կրքերը այլ ևս տեղիք չըպէտք է ունենային ընդհանուր ազգային գործունէութեան մէջ, բայց որովհետև պատմական ճակատագիրը ենթարկել է հայութեան վիճակը ինչին եսական կոպտութիւնից հալածել միմեանց, ամեն մէկի իւր կրքոտ դաղափարը յառաջ տանելու համար, այդպէս էլ պատահեց և այս բանում:

Այսպէս՝ պարոն Իզմիրեանցը Պերճի ազդեցութեան տակ՝ աշխատում էր պաշտպանել միշտ Պերճական խմբի արտօնութիւնները, իսկ պ. Պ. Միրիմանեանը և Շադինեանցը՝ Յ. Կարինեանցի ազդեցութեան տակ, աշխատում էին գործի ղեկավարութիւնը իրանց ձեռքն առնել:

Վերջապէս եղաւ առաջին նիստը հոգաբարձութեան: Յիշում եմ լաւ, ինչպէս մեզ՝ ինձ, Ամերիկեանցին, Սուքիասեանցին և Կուսիկեանցին հրաւիրեցին Աղամջանեանցի փառահեղ, շռայլ զարդարուած կաբինետը և այնտեղ հազար ու մէկ խոստմունքներ արին մեզ. նաև ինձ, որովհետև ես յայտնեցի, որ թողնում եմ յաւիտեան երկրաչափական պաշտօնս և վճռել եմ պարապել միայն հայ թատրոնական բեմով:

Դորանից յետոյ հոգաբարձութիւնը նիստ ունեցաւ, եթէ չեմ սխալվում պ. Իզմիրեանցի տանը Հոկտեմբերի 5-ին 1863 թուի, և վճռեց.— Գրիգոր Իզմիրեանցին ճանաչել ընդհանուր կառավարիչ թատրոնի, որը պիտի ունենար պաշտօնական յարաբերութիւն թէ դուրսը և թէ թատրոնում, իսկ արհեստական մասը յանձնեցին պ. պ. Տ. Գրիգորեանցին, Սունդուկեանցին, Աղամջանեանցին և Շադինեանցին, իսկ տնտեսական մասը՝ պ. Ն. Միրիմանեանցին:

Եւ ահա տուինք միութեամբ առաջին ներկայացումն՝ «Սանդուխտ» ողբերգութիւն, որի մէջ երկրորդ անգամ ևս դուրս եկայ բեմ, Երուանդ անունով սիրահարական դերի մէջ:

Օ՜, քաղցր յիշատակ, անդառնալի ուժեղ երիտասարդական քաղցր զգացմունքներ...

Մինչև ներկայացման օրը սիրտս ալէկոծվում, բաբախում էր այնպէս, ինչպէս պատահում է սիրահարներին, մինչև նոքա արժանի են լինում տեսնել առաջին անգամ իւրեանց սիրոյ առարկան:

Եկաւ վերջապէս ներկայացման օրը. օրկէստրն ածեց ուվերտիւրան, բացին վարագոյրը, ես դուրս եկայ Ջ.ի հետ, որ խաղում էր Շավարշի դերը:

Բեմ դուրս գալուս պէս՝ աչքերս մթնեցան, սրտիս բաբախումը սասկացաւ այնպէս, որ կարծում էի, թէ կը փռուիմ բեմի վերայ և չէի զգում ոչ մէկը իմ արտասանած խոսքերիցս, նաև որ մեծ մասը համարեա չէի հասկանում և անդիր էի արել մեքենայաբար:

Միչև հիմա միտս են այն խոսքերը, որ Երուանդը ասում է դառնալով պատերազմից վերաւորուած, և որի նշանակութիւնը իմացայ շատ օրեր ներկայացումից յետոյ, դիմելով մեր բեժիսորին՝ Աղաբէգեանցին: Այդ բառերն էին՝ «մարդախանձ դաշտից փառաց արիւնոտ մրտենին ճակատից», իսկ ես արտասանում էի, կապելով այդ խոսքերը միմեանց ետևից և շեշտելով անյարմար վանկերի վերայ, և դուրս էր գալիս. «փարթախանձ — դաշտից - փառաց - արիւնոտ, մրտեն-են-ճակատիս և այլն»: Պրծաւ Սանդուխտը, նորա հետ տուած Դալալ-Դաղո վոդեվիլով և առաջին անգամ ես ստացայ վարձ խաղիս համար 30 ռ:

Երկրորդ անգամ հոդաբարձութիւնը վճռեց տալ առաջին անգամ ծլատ անունով պիեսան, հեղինակութիւն տէր Գրիգորեանցի և «Գիշերուան սաբրը խեր է», հեղինակութիւն Սունդուկեանցի, որոնք կրկնեցին երկրորդ անգամ:

Թ.

ՄԱՆԴԻՆԵԱՆՑ

Այս երկու պիեսաների կրկնութեան ժամանակ, գուցէ և քիչ առաջ, լաւ չեմ յիշում, եկաւ Մոսկուայից պ. Ս. Մանդինեանցը:

Լսած լինելով այդ պարոնի դերասանական ձիրքը, որ ցոյց էր տուած Լազարեան Ճեմարանի աշակերտների ներկայացումների ժամանակ, չը գիտեմ ո՞վ մեզանից դորան հրաւիրեց մեր կրկնութիւններին, որին ներկայ էին գտնվում միշտ հեղինակները:

Մանդինեանցը յանձն առաւ խաղալ Ս.ութիւն ճարտարովի դերը և առաջին իսկ կրկնութեան ժամանակ այնպիսի մէկ նոր

և ինքնուրոյն խաղի ձև ցոյց տուեց, որ ամենքն զմայլեցան և դրոշմեցին նորան արտիստ անունով:

Այդ օրից սկսուեցաւ իմ և նորա ծանօթութիւնը, որ վերջին ժամանակներում փոխուեցաւ դէպի սերտ բարեկամութեան:

Դա սկսեց առաւել դրդել իմ մէջ սէր դէպի բեմական արհեստը և միացաւ մեզ հետ, այսինքն իմ, Ամերիկեանցի և Սուքիասեանցի հետ, իբրև մշտական դերասան հայ թատրոնական բեմի, և այդ ժամանակից, կարծեմ, սկսեց թարգմանել Կրէչինսկու հարսանիքը, որի մասին կը խօսիմ ներքևը:

Ժ.

Այդ երկրորդ և երրորդ ներկայացումները ևս գնացին հանդարտ և առանց խռովութեան, թէ հոգաբարձուների և թէ դերասանների կողմից: Եկաւ չորրորդ ներկայացումը, «Արտաշէս և Սաթինիկ», հեղինակութիւն Հաքիմեանցի:

Սկսեցին բաժանել դերերը և կրքերը երևան դուրս եկան:

Ես և Շահխաթունեանցը ընդունուած էինք իբրև մէկ ամբողջական դերասաններ, և այնպէս էր որոշուած բերանացի պայմանով, որ երբ մէկ պիեսայում Շահխաթունեանցը կատարէր առաջնակարգ դեր, այն պիեսայում պէտք չէր տալ ինձ երկրորդական դեր. բայց ընդհանուր կառավարիչ Իզմիրեանցը և մեր բէժիսոր Աղաբէգեանը որոշեցին տալ Շահխաթունեանցին Արտաշէսի դերը, իսկ ինձ մէկ աննշան և չնչին երկրորդական դերերից մէկը:

Ես հրաժարուեցայ. բարձրացաւ սասիկ աղմուկ:

Հոգաբարձութիւնը բաժանուեցաւ երկու կուսակցութեան, նմանապէս և դերասանները:

Հոգաբարձութիւնից պաշտպանում էին իմ իրաւունքս միայն Շաղինեանցը և Միրիմանեանցը, իսկ դերասաններից Ամիրիկեանցը և Սուքիասեանցը, որոնք ներկայ էին այդ վճռին:

Այս հանգամանքի հետ միացաւ մէկ ուրիշ անսպասելի հանգամանք ևս, որ պատճառ եղաւ յաւիտենական երկպառակութեան հոգաբարձուների և դերասանների մէջ, և որի հետևանքն էր երկու կուսակցութեան ջոկ ջոկ ներկայացումներ տալը և երկու թատրոնասէրների առանձին խմբեր կազմուիլը:

Հոգաբարձութիւնը իւր նիստերից մէկի մէջ, առաջարկութեամբ Գ. Իզմիրեանցի, որոշել էլ բաժանել դերասանական խումբը զանա-

զան կարդերի և վարձատրել ներկայացումներից ստացած եկամուտից ամեն մէկին ըստ արժանաւորութեան: Այդպէս՝ դերասանուհիներին բաժանել էին երեք կարգի և առաջին կարգում դասել էին միայն Նուարդ Մէլիք-Նաղարեանցին, որ պիտի ստանար երկրորդ կարգի դերասանուհիներից 10 ռուբլիով առաւել, իսկ Գայիանէին, որի ընդունակութիւնը և տաղանտը արդէն հռչակուած էր ամեն տեղ՝ վարդանի կրկնութիւններից յետոյ, դասել էր հոգաբարձութիւնը երկրորդ կարգի դերասանուհիների հետ: Հոգաբարձութիւնից Միրիմանեանցը և Շաղինեանցը, իսկ դերասաններից՝ ես, Սուքիասեանը, Կուսիկեանը և Մանդինեանցը բողոքեցինք այդ բանի դէմ:

Գ. Իզմիրեանցը որոշեց մէկ նիստ ևս հոգաբարձական, որին մասնակից էին հինգ հոգի միայն հոգաբարձուներից, և հրաւիրեցին դերասաններիս, որ մենք հոգաբարձական վճռի ներքոյ ստորագրուելով, յայտնենք ամեն մէկս մեր համաձայնութիւնը կամ անհամաձայնութիւնը:

Հոգաբարձութեան այդ նիստը տեղի ունեցաւ Պերճի անուանուած մասնաւոր ուսումնարանում, որ գտնվում էր Մողնու թաղումը:

Հաւաքուեցանք բոլոր դերասաններս և դերասանուհիք: Նիստը բացուելուց առաջ ես յայտնեցի պ. Իզմիրեանցին իմ և ընկերներիս կողմանէ հոգաբարձական այդպիսի այլանդակ վճռի մասին, ասելով՝ որ այն ժամանակ միայն կարող էին նոքա նախապատուել երկու հաւասար ոյժ ունեցող դերասանուհիներից մէկին միւսից, երբ նոքա վարձեն բոլոր խումբի անձինքները ամնական ռոճիկով: Իսկ երբ որ ոչ մէկը մեզանից չի կարող համոզուիլ, որ պ. Մէլիք-Նաղարեանցի դերասանական ընդունակութիւնը կարող է առաւել բարձր լինել օր. Գայիանէից, ուրեմն և աւելորդ է այդպիսի նշանաւոր տարբերութիւն որոշել նոցա երկուսի մէջ, աչքի տակ ունենալով, որ թատրոնական ներկայացումներից ստացած դումարի կարգադրութեան իրաւունքը կը վայելէ յանձնել դերասանական խմբին և ոչ թէ հոգաբարձուներին, որոնք միայն պիտի աշխատեն բարելաւացնելու հայ թատրոնի ապագան՝ նիւթական կողմից:

Ինձ և միւս ընկերներիս լսող չեղաւ: Նիստը բացուեց, մեզ սկսեցին մէկ մէկ ներս կանչել միւս սենեակը:

Առաջինը մտայ ես, և պիտի խոստովանիմ, որ մտայ սաստիկ շփոթուած և գզաղուած բարկութիւնից:

— Պ. Զմշկեան, դարձաւ ինձ պ. Իզմիրեանցը, կարդացէ՛ք հոգաբարձական օրագիրը և ստորագրեցէ՛ք ձեր համաձայնութիւնը կամ անհամաձայնութիւնը:

— Ես ձեզ յայտնեցի, պարո՛ն, պատասխանեցի ես, որ հոգաբարձութեան արած վճիռը ես գտնում եմ անկանոն և կողմնապահ, ասացի և սաստիկ վրդովուած ստորագրեցի «Համաձայն չեմ»:

Այս տողերը գրելու ժամանակ ես մտոս ունենալով այդ օրուայ կազմուած օրագիրը, հետաքրքրութիւնիցս նայեցի իմ ստորագրութեանս և համոզուեցայ, որ մարդու գրելու եղանակից կարելի է հասկանալ նորա հոգեկան դրութիւնը:

«Համաձայն չեմ, Գ. Զմշկեան»: Այս մէկ քանի բառերի գրելու եղանակից երևում է, որ ես սարսափելի շփոթուած դրութեան մէջ եմ եղել:

Ստորագրեցի և դուրս եկայ, պինդ խփելով դուռը ետևիցս:

Ինձանից յետոյ մնաց Ս. Մանդինեանցը, որ ստորագրեց համարեա մի և նոյնը և շարունակուեց այդպէս: Ի վերջոյ դուրս եկաւ, որ համաձայնել էին միայն երեք թէ չորս անձինք, որոնք առանձին նշանակութիւն չունէին խմբի մէջ:

ԺԱ.

Այս անցքից յետոյ թատրոնական միացած ոյժերը բաժանուեցան երկու, և վերջացաւ հոգաբարձական գործունէութիւնը և նորա պաշտօնական օրագրութիւնները:

Գրիգոր Իզմիրեանցը դառաւ պարագլուխ մէկ ոյժի, որոնց մէջ էին Տ. Մէլիք-Նազարեանց, Շահխաթունի և Հաղուադիւտ տաղանտ հանդուցեալ Ս. Մատինեանցը, իսկ միւս ոյժը, որը կազմուեց ինձանից, Ամերիկեանցից, Սուքիասեանցից և յուշարար Ս. Կարինեանցից, մնանք պ. Ն. Միրիմանեանցի հովանաւորութեան տակ, հիմնելով մի և նոյն ժամանակ անկախ և միախոհ ընկերութիւն:

Մենք վճռեցինք տալ առաջին անգամ «Վարդան Մամիկոնեան», որ ինչպէս ասացի վերև, արդէն պատրաստ էր համարեա: Ցրուեցինք յայտարարութիւնը, եկաւ ներկայացման դիշերը: Անսպասելի ֆուրոր: Օրիորդ Գայիանէն գերազանցեց իրան, ես մեռայ սաստիկ էֆէկտով, ժողովուրդը ապշեց, զմայլուեց և ես արժանացայ պ. Ն. Միրիմանեանցի համբուրին:

Պէտք է խոստովանել, որ ես սաստիկ ուսումնասիրել էի Վարդանի դերը:

Այդ հայութեան հերոսի նկարագրութիւնը իմանալով փոքր ի շատէ երեխայութեան հասակումս, հեղինակից նորա ինչին ձևով նկարագրուած բնաւորութեան արտայայտութիւնները ես երևակայեցի մշակել բեմի համար իմ հասկացողութեանս և հայութեան վերայ ունեցած գաղափարներիս համեմատ:

Յափշտակուած թատրոնական արհեստով և երևակայելով, որ ես պիտի երևելի դերասան դառնամ, ամբողջ օրեր սկսեցի պարապիլ Վարդանի դերով:

Կարդացած էի, թէ ինքնուրոյն միտք ծագեց իմ մէջ, չեմ յիշում լաւ, միայն սկսեցի պարապիլ այդ դերի մշակելուն յետևեալ ձևով:

Մենք, այսինքն ես ծնողացս հետ, Ֆնում էինք այդ ժամանակ պ. Մ. Ղօրղանովի տանը, Մուխրանսկի անուանուած փողոցում: Ունէինք մէկ դահլիճանման սենեակ, որի մէջ կար մէկ հին պատմական, բաւականին մեծ հայելի և նորա դիմաց դրած մէկ ահագին դիւան: «Լուսին դու լուսին» (երրորդ գործողութեան Վարդանի առաջին մենախօսութիւնը) սկսելով միւս սենեակներից, առհասարակ ճաշից յետոյ, ես մտնում էի այդ դահլիճանման սենեակը և փակելով նորա միայնակ դուռը դէպի նախասենեակը, շարունակում էի այդ մենախօսութիւնը հայելու առաջ. սկսում էի առաջին գործողութիւնից, նկատելով հայելու մէջ ամեն մէկ շարժուածս, մշակում էի այդ կերպով դերս և շատ անգամ Ֆնում էի բաւական իմ դերասանական հանճարով:

Գնաց, յափշտակուեց այդ երջանիկ երիտասարդական յիշատակը, ամփոփուելով ժամանակի խիստ հոսանքների ալիքների մէջ:...

Գ. ՉՄՇԿԵԱՆ

(կը շարունակուի)

ՎԱՐԴՈՒՀԻ

ԵՂԵԼՈՒԹԻՒՆ

1869 թուականին օգոստոսի 12-ն էր: Կիրակի առաւօտեան Կ. Պոլսոյ Ղալաթիոյ մեծ կամուրջի վերայ խառնիճաղանճ ժողովուրդը անց ու դարձ էր անում: Կամուրջի երկու կողմը կանգնած փոքր շոգենաւերը սուլելով, իմաց էին անում ժողովրդեան՝ իւրեանց նոյն տեղը հասնիլը կամ մեկնիլը, և հրաւիրում էին նոցա՝ շտապելու դուրս գնալու կամ ներս մտնելու:

Այս խուռն բազմութեան մէջ մի բարձրահասակ օրիորդ, խարտեաշ մազերով, կապոյտ և թափանցիկ աչքերով, ամբոխը ճղելով, արագութեամբ դիմում էր դէպի Պոլսոյ կողմերի շոգենաւը: Նա հագնուած էր պարզ, ինչպէս մի ուսումնարանի գիշերօթիկ աշակերտուհի, մոխրագոյն շրջազգեստ, նոյն գոյն վերարկուով, սև յարդէ գլխարկ՝ շաղանակագոյն ժապաւէններով, մի փոքր կաշուէ քսակ թեւն անց կացրած, մի մեծ գիրք բռնած և իւր հովանին, որոնց հազիւ հաղ էին կառավարում իւր փոքրիկ ձեռները: Ժամացուցին նայեց, սրտնեղութեամբ դիտեց, որ շոգենաւը իւր վերջնականը սուլեց, անհամբերութեամբ իւր եկած ճանապան նայեց, տժգոհութիւն նշմարուեց նորա քաղցր դէմքի վերայ, և իբրև թէ մի մեծ որոշման գիջանելով, ժողովեց իւր շրջազգեստը, պարզմտութեամբ ցոյց տալով մանրիկ ոտքերը, որոնք սահում էին նեղ ու կեղտոտ սանդուղքների վերայով: Սիրտը թռթռալով, մտաւ նա շոգենաւ, ուշքն ու միտքը իւր սպասած առարկայի վերայ դարձրած. մինչ դեռ նա կանգնած էր և անորոշ կերպով մտածում էր, կոպիտ նաւաստին խլեց, վեր առաւ առջևից շարժական կամուրջը, չուանն արձակեց, անիւները պտըտեցին և շոգենաւն սկսաւ շարժ դալ: Խեղճ օրիորդը շուարած մնաց, երբ տեսաւ իւր շուրջը զանազան ազգի և աստի-

ճանի հարիւրաւոր անձինք, նստոտած, տեղաւորուած, ինքը միայն ոտի վերայ կանգնած, անծանօթ և անպաշտպան: Մի երիտասարդ սորա նեղ դրութիւնը նշմարելով՝ յառաջ վազեց, իւր աթոռն առաջարկեց, և շնորհակալ լինելու ժամանակ չը տալով, հեռացաւ:

Օրիորդը հազիւ թէ նստաւ, ահա տոմսակ բաժանողը ներկայացաւ, մի կարմիր և մի դեղին թղթի կտորներ ներկայացրուց նորան, ճանապարհորդուհին դողդոջուն ձեռքը մեկնեց ընդունեց, սորան հետևեց տոմսընկալը ձեռքի փողի թիթեղնեայ տուփը շարժ տալով: Օրիորդը կարմրեց, գլուխը շուռ տուաւ և կարծես թէ իւր անծանօթ պաշտպանին էր փնտռում: Աթոռ նուիրող պարոնը, որ այս օրիորդին իւր ուշադրութիւնից չէր հեռացնում, մօտեցաւ և քաղաքավարութեամբ առաջարկեց նորան իւր ծառայութիւնը:

—Ներեցէ՛ք, պարո՛ն, ասաց օրիորդը, ես իմ մօր եղբօրն էի սպասում, որ ինձ խոստացել էր ժամը իններին մեկնող շոգենաւով գալ ինձ հասնել, իսկ եթէ չը յանդգնէի նաւ մտնել, ես խոստմնազանց կը գտնուէի մտրը Կուտէլի մօտ, որին խոստացած էի ժամը 11-ին գնալ ֆնալը կղզին, մեր ժողովարանը և ընկերակցել իրան երդեցողութեան ժամանակ դաշնամուրի վերայ: — Ո՛չինչ, պատասխանեց երիտասարդը, այդ տեղ նեղանալու ոչինչ չկայ, յանձնեցէք միայն ինձ ձեր դեղնագոյն տոմսակը, և դուք հանգիստ ձեր տեղը նստեցէք: Գործակալին յետ դարձրուց դեղնագոյն թերթիկը և մի տոմսի փոխանակ երկուսի վարձ վճարեց:

Վերոյիշեալ երիտասարդը, որ օրիորդի արտաքին գծագրութեան նայելով, օտարուհի էր կարծում նորան, զմայլեց մնաց, երբ այն քնքուշ աղջկայ բերնից մաքուր հայերէն բարբառ լսեց: Երեք խօսք արտասանեց նա, և այդ երեք խօսքի մէջ իւր լաւ հանգամանքներն արտայայտեց: — Մտրը Կուտէլի մօտ խոստմնազանց չը գտնուելու համար, հասարակաց կարծեաց նախապաշարման ուշ չը դարձնելով, շոգենաւ էր մտել մենակ և անփոդ:

Բայց աւա՜ղ, «մտրը Կուտէլ» և «ժողովարան» բառերը սլաքի պէս ծակեցին մեր երիտասարդի սիրտը. մի՞թէ բողոքական է, մտածում էր նա, և եթէ խաս-գիւղցի լինէր, ինչպէս կարելի էր, որ ես չը ճանաչէի սորան, բնիկ այնտեղացի լինելով: Այսպէս հազար ու մէկ հարցումներով գլուխը ճաքեցնում էր նա, և անհամբերութեամբ ճանապարհորդաց մէջ փնտրում էր մէկին, որից կարողանար տեղեկութիւն ստանալ այդ էակի մասին, որ մէկ ժամու մէջ

իւր սրտին ու մտքին տիրել և երևակայութիւնը յափշտակել էր:

Այս միջոցին հեռուանց մի պարոն, արտաքին ձևերով շատ թեթև, դանդրահեր, ազնվեէ ֆէսը ծուռ դրած, ծիրանեգոյն վզնոցով, սպիտակ բաճկոնով, ծծմբագոյն սռնագզեստով, մութ կարմրագոյն ձեռնոցներով, սիգարը բերնին, բարձրաձայն գոչեց մեր երիտասարդին.— Միհրանիկ աղա, Միհրանիկ աղա, ո՞ւր, մե՞ծ, թէ քնալը կղզին... ես չէյլէլին պիտի գնամ այսօր:

Միհրանիկը թէև թաղակից և դրացի էր այս պարոնին, բայց սորա անձնագով, ինքնահաւան և պճնասէր բնաւորութեանը համար, չէր համակրում սորան, սակայն յուսալով որ թերևս կարողանայ այն օրիորդի մասին մի տեղեկութիւն ստանալ սորանից, մեղմութեամբ պատասխանեց:

—Ես նախ քնալը կղզին կիջնիմ, այնտեղ պատարագ կը տեսնեմ, հօրեղբօրս տունն այցելութեան կերթամ, յետոյ 12 ժամուայ շոգենաւով մեծ կղզին կանցնիմ, որ քրոջս տունը շնորհաւորեմ:

—Ո՞ր քրոջդ, Իսկուհի տիկնոջը. եղբայր, մի՞թէ սուրբ Իսկուհի կա՞յ Հայոց տօնայուցի մէջ:

—Ո՛չ, սուրբ Իսկուհի չը կայ, բայց չը գիտե՞ս, որ Իսկուհի, Սրբուհի, Մաքրուհի, Տիրուհի և Թագուհի անունները սուրբ Աստուածածնայ օրն են տօնվում:

—Այո՛, այո՛, այդպէս է. ես մոռացել էի. եղբայր, դու լաւ ազգասէր ես եղել. քանի տարի է Եւրոպայումն ես պտտվում, բայց մեր ազգային սովորութիւններն ու ծէսերը չես մոռացել:

—Ինչո՞ւ պէտք է մոռանամ...

—Հա՛, հա՛, չես մոռացել, ինչպէս ահա այս մոխրագզեստ օրիորդը.... Եղբայր, լսուա՞ծ բան է, վեր կացաւ Ամերիկա գնաց, որ այնտեղ հայերէն սովորի... Այս ասելով վերոյիշեալ օրիորդին նայեց ու բարձրաձայն ծիծաղեց, որով հասկացնել ուզեց, թէ նորա մասին են խօսում:

Միհրանը շատ նեղացաւ նորա այս թեթև վարմունքից, բայց իւր հետաքրքրութիւնը յագեցնելու յուսով՝ համբերեց:— Ո՞վ է այդ օրիորդը, հարցրեց նա անտարբեր ձևով:

—Մի՞թէ չը գիտես. դա մեր խաս-գիւղի տիրացու Օհաննիսի աղջիկն է. չե՞ս լսել այն տիրացու Օհաննիսի պատմութիւնը, որ Ամերիկայի աւետարանական ընկերութեան ուսումնարանի առաջին աշակերտն է, որին 1839-ին Յակոբոս արքեպիսկոպոսն աքսորեց թէ-

քիրդաղ (խաս-գիւղի տէր Գէորգ քահանայի հետ) լուտերականութիւնն ընդունելուն համար, բայց Անգղիացոց դեսպան Քանինկը ազատեց աքսորանքից և բերել տուաւ: Յետոյ Օհաննէսը մնորը համբլինի միջնորդութեամբ իւր դուստր Վարդուհուն ուղարկեց Նիւ-Եօրք, ուր հինգ տարի մնալուց յետոյ՝ վերադարձաւ: Հիմա միս Ռոզա է անունը, և Գում-Գափուի Ոսկանեան օրիորդաց ուսումնարանի մէջ վարժուհի է. տներումն էլ է դասեր տալիս, հայերէնից ու անգղերէնից, և պիանօի վերայ ածել է սորվեցնում:

Տեսնելով, որ Միհրանիկն ուշադրութեամբ է լսում իւր ասածները, պատմող երիտասարդը հպարտանալով իւր գիտութեան վերայ, քմծիծաղով շարունակեց խօսակցութիւնը, մէկ պարոնից միւսին անցնելով, և ամենքին միատեսակ ճանձրութիւն պատճառելով:

Յիշեալ շոգենաւը կանգնեց քնալը կղզու առաջ, կամեցողները դուրս եկան, օրիորդ Վ. ամենավերջինը եղաւ դուրս եկողներից. նա հետևում էր իւր անծանօթ պաշտպանին, որ իւր շնորհակալութիւնը յայտնէ, բայց անծանօթը համեստութեամբ փախչում էր օրիորդի շնորհակալութիւնից: Դաւամատուցի վերայ ընդունեցին օր. Ռոզային Ծերունի կուտէլը, իւր աղջիկները և այլ ծանօթներ, զանազան հարցումներ անելով, ուղեկցեցին դէպի տունը: Պարոն Միհրանը հեռուանց հետևում էր նորանց, և շատ ուրախացաւ, երբ տեսաւ, որ նոյն ընկերութիւնը իւր իջևանելու տան կողքի եղած պատշգամբաւոր տունը մտաւ:

Միհրանիկի ներկայութիւնը նոյնպէս մեծ ուրախութիւն պատճառեց իւր հօրեղբօր տանը. մեծ ու փոքր առաջ վազեցին, որպիսութիւնը հարցրին, քաղաքից լուրեր ուզեցին և քիչ հանգստանալուց յետոյ, հօրեղբօր մեծ աղջիկը՝ Էլմոնիկը ասաց:

—Գնանք եկեղեցի, այսօր մեծ տօն է. միւս կղզիներից էլ շատ բազմութիւն կը գայ:

—Գնանք, պատասխանեց Միհրանը, բայց դու նախ ինձ խօսք տուր, որ յետոյ ինձ քու գեղեցիկ դրացուհիներիդ հետ կը ծանօթացնես:

—Յօժարութեամբ, պատասխանեց օրիորդը:

Պատարագն արդէն կանգնած էր. «յիշեա տէր»ի ժամանակ լուեցաւ երկրորդ շոգենաւի սուլելը: Էլմոնիկը դուրս եկաւ ժամից իւր փոքր քրոջ և եղբօր ձեռքից բռնած, նորան հետևեց Միհրանը:

Հասան Ծովեզը. այնտեղ պատահեցան շատ Ծանօթներ, որոնց մէջն էին նաև օրիորդք Կուտէլները և իրանց հիւրը. սորանք Ծանօթացրին իրանց հիւրին Էլմենիկի հետ, այս վերջինը Ծանօթացրեց նորանց իւր հօրեղբօր որդու՝ Միհրան Նուրիջանեանի հետ: Այս միջոցին շոգենաւից դուրս գալով միացաւ իրանց հետ վերոյիշեալ Տիրացու Օհաննէսի աներորդին՝ Ծերունի Սիմոնը, պայուսակը ձեռին և զուարթադէմ խմբակին բարևելուց յետոյ, ասաց իւր քեռ աղջկան.—Ների՛ր ինձ, սիրելի՛ իմ Վարդենի, ես չը կարողացայ խոստացած ժամանակին հասնել քեզ. հաւատա, սիրելիս, խելքս միտքս քեզ հետ էր. և ինչ գիտէի որ . . . . բայց ի՞նչ անեմ, պատճառն իմ վաղ ծնած լինելս էր: Վարդուհին կարմրելով՝ բրոնեց իւր պաշտպանի ձեռից և մօրեղբօրը ներկայացնելով, ասաց ահա, մօրեղբայր իմ, պ. Միհրան Նուրիճանեանը, որ ինձ քաջալերեց, իւր աթոռը և տոմսակը նուիրեց ինձ. այժմ իմ շնորհակալութիւնս յայտնելով՝ քեզ եմ յանձնում, որ յետ դարձնես...

—Ի՞նչ, օրիորդ, ձեր շնորհակալութիւնը... խնդրեմ, այն քաղցր վայրկեանը մի խանգարէք, թողէք որ այն օրհնեալ բոպէն, որ ձեզ հետ Ծանօթանալու պատճառ եղաւ, անբիծ մնայ իմ սրտի մէջ:

Առաքլինի սրտերը երկայն բացատրութեանց կարօտութիւն չեն ունենալ. Ծերունի Սիմոնը անկեղծ սրտով շնորհակալ եղաւ Միհրանից, խնդրեց, որ իւր բարեկամութիւնը ընդունի և իւր համար նորա տունը և սիրտը միշտ բաց համարէ: Միհրանն իրան յայտնուած բարեկամութեան փոխադարձը նուիրելով, մօտեցաւ օրիորդներին:

Միհրանը իւր ուսումն աւարտել էր Մալթա կղզումը անգլիացոց ուսումնարանումը. նա Եւրոպիոյ մեծ մասը պտըտել էր, շատ և շատ լաւ գրքեր էր կարդացել և կանանց ազատութեան հարցի վերաբերութեամբ մի առանձին համակրութիւն էր զգում: Մի նպատակով էր նա զբաղուած. թէ արդեօք, երբ Պոլիս վերադառնայ, ի՞նչ միջոցներով հայոց մէջ ևս իգական սեռի համար ազատ դաստիարակութեան սկզբունքներ մտցնէ, հայ օրիորդաց հիմնաւոր ուսմունք տալով, նորանց խելքն ու սիրտը կրթելով և նոր սերունդի համար գիտնական մայրեր պատրաստելով: Միհրանը կարծում էր, որ վարդուհու մէջ անշուշտ կը գտնի իւր դաղափարները տարածելու օգնականը:

Բայց մի կէտ միայն նորան արգելում էր առաջարկութիւն անելու. Վարդուհին բողոքական էր, իսկ ինքը լուսաւորչական: Արդ-

եօք օրիորդը կը համաձայնէր իրան կին դառնալու, արդեօք ինքը իւր նպատակին կը հասնէր այլակրօն կին ունենալով. հապա մայրը ինչ պիտի ասէր, հապա հասարակաց կարծիքը ի՞նչպէս կը նայէր նորա վերայ:

Վարդուհին, զուրկ ծնողներից, ապրում էր իւր մօրեղբօր՝ Ծերունի Սիմօնի հետ, որի վերայ սա որդիական սէր և խնամատարութիւն ունէր: Ծերունի Սիմօնն էս իւր ծնողական և եղբայրական սէրը ամփոփել էր այդ քնքուշ ու արժանաւոր էակի մէջ:

Միհրանն այն օրից սկսած ոչ մի առիթ չէր փախցնում Վարդուհուն մօտենալ և իւր դաղափարները նորան հաղորդել: Երբ Միհրանը Վարդուհուն իրան համակարծիք էր գտնում, նոյն օրը նորա համար ուրախութեան և երջանկութեան օր էր լինում: Այսպէս ահա օր ըստ օրէ Միհրանը հաստատուելով իւր նախադդացման մէջ, թէ միմիայն Վարդուհին է կարող երջանկացնել նորան և իւր երևակայած առաքելութիւնը տարածել, համարձակեցաւ մի օր ամուսնութեան առաջարկութիւն անել, որ և ընդունելու բաղդաւորութիւն ունեցաւ:

1870 թուի, յունուարի 27-ին, գիշերուայ ժամը 11-ին, Բէրայի մեծ փողոցը, Սուրբ Երրորդութեան եկեղեցւոյ առաջ կանգնեցան երեք կառքեր: Մի յաւերժահասակ օրիորդ, սպիտակ շղջազգաստով, սպիտակ քօղը թողած երեսին, ծաղկէ թագը գլխին, համեստ կերպիւ իջաւ կառքից, նորան դիմաւորեց մի երիտասարդ՝ բարեկամներով շղջապատած. յիշեալ զոյգը մտաւ լուսաւորուած եկեղեցին: Փառաւոր էր պսակակատարութեան հանդէսը: Ծերունի քահանայի մեղմ և ազդու ձայնով կարդացած աղօթքները խոր տպաւորութիւն գործեցին հանդիսականաց վերայ: «Տէր եմ» խոստման ձայնին միացաւ «Հնազանդ եմ» պատասխանը, և եկեղեցու մէջ ներկայ եղող բազմութեան շնորհաւորութիւններով վերջացաւ վսեմ խորհուրդը:

Այս անցքից մի ամիս յետոյ՝ Բերայի Իսմամ փողոցից անցնողը մի տան դրան վերայ կախած սև տախտակի վերայ կը կարդար՝—

Օրիորդաց ուսումնարան Տիկին Նուիրճանեանի:

Նոյն 1870 թուի մայիսի 24-ն էր: Պօլսոյ նեղուցի մէջ, հիւսիսային արևելեան կողմը գտնուած Հիւնքեար-Իսկէլէսի անուանեալ գեղեցիկ տափարակի վերայ, դարևոր ծառերի տակը, հարիւրաւոր

հայ ընտանիքներ այս ու այն կողմ ընկերութիւններ էին կազմած. ամենքը ուրախ, ամենքը զուարթ։ Այն օրը Ազգային Սահմանադրութեան տասներրորդ տարեդարձն էր։

Շոգենաւները հետզհետէ երթևեկութիւնները շարունակում էին՝ նոր նոր խուռն բազմութիւն բերելով։ Այդ մի մեծ խումբ երիտասարդների, օսմանեան կայսերական դրօշակի տակ պատսպարուած, կուրծքները երեք գունաւոր նշաններով զարդարուած, նուագարանների առաջնորդութեամբ, հանդիսաւոր կերպիւ անց էին կենում բարձր և գեղեցիկ զարդարուած յաղթանակի դռներից, «Սահմանադրութեան նոր բարև մին ալ տանք» երգելով, և կեցցէների արձագանքը Հիւնքեար Իսկէլէսիի մէջ տարածելով։ Մի այլ տեղ մի քանի դպրոցների աշակերտներ շրջապատել էին մի առոյգ երիտասարդի, որ սաստիկ ոգևորուած ճառ էր խօսում, որտեղ խորին լռութիւնը սաստիկ ծափահարութեամբ միայն էր ընդհատվում։ Ոչ շատ հեռու այդ ընկերութիւնից՝ բարձրացել էր ամբիոնի վերայ մի պարոն, նիհար, ակնոցները քթին. դա էլ էր խօսում, դորան էլ էին շրջապատել մի խումբ մարդիկ և կանայք. բարձր ծիծաղ, զանազան ձայնարկութիւններ, ստէպ ծափահարութիւններ, հաւանութեան նշաններ էին ունկնդիրների կողմանէ։ Այս խօսողը երբեմն Մեղուի խմբագիր, պ. Յարութիւն Սվաճեանն էր։

Հէնց որ դա վերջացնում էր իւր խօսքը, տեղն անցնում էր մի այլ պարոն, և նորէն, լսեցէք, լսեցէ՛ք, Օգսէն Էֆենդին կը խօսի, գոչելով, իրարու ուշադրութիւն կը հրաւիրէին։

Այս միջոցին ծովի կողմից մի հրեշտակային մեղմ և քաղցր երգեցողութեան ձայն լսուեցաւ. հանդիսականք երգերն ընդմիջեցին և շտապեցին դէպի ծովեզը. մի շոգենաւ առագաստներով ու գոյնզգոյն դրօշակներով զարդարած՝ արագութեամբ մօտենում էր եղերքին, հարիւրաւոր սպիտակազգեստ մատաղահաս օրիորդներ ծաղկանց փունջեր ձեռքներին, ծիրանեգոյն ժապաւէններ կապած, շոգենաւի վերայ շարուած էին, և քաղցր երգելով բոլոր նեղուցը անցած, իրանց Կայսր Սուլթանին ողջունած և նորա ուշադրութիւնը գրաւած էին։

Այդ մօտեցաւ ցամաքին այդ շոգենաւը և երգեցողութեան վերջի ձայներին հետևեց, կեցցէների բարձր աղաղակը։

Այս օրիորդները Ազգապետան վարժարանի սանիկներն էին, որ եկել էին տօնին մասնակցելու և հանդէս կատարելու։

Կէս օր էր. ընկերութիւնները դարևոր ծառերի տակ կանաչ խոտերի վերայ բաղմած, կեր ու խումի մէջ, Ազգի համար զանազան բարեմաղթութեանց դաւաթներ էին դատարկում:

Ճաշից յետոյ մի ծառի տակ նստած էին առանձին՝ Միհրանը և իւր հօրեղբօր աղջիկ Էլմնիկը: Միհրանը տխուր էր: «Ես ամենևին չէի ուզում գալ, ասում էր նա, բայց Ռոզան այնքան ստիպեց ինձ, որ զիջայ նորա խնդրքին. չը նայելով իւր տկարութեանը, ուզում էի հետս բերել, բայց վախեցայ, թէ իմ անխոհեմ ընթացքս նորա փափուկ դրութեանը վնասէ: Թէև մայրը մօտն է, բայց իմ խելքս այն կողմն է. արդեօք բժիշկը կերթա՞ր մօտն այսօր: Յունիսի կէսին մեր ուսումնարանի քննութիւնները կը վերջանան. բժիշկները Վարդուհուն ծովի բաղնիքներ անելու խորհուրդ տուին. երկու ամսով ձեզ հիւր կը դանք կղզին, լաւ ժամանակ կանցցնենք: Էլմնիկն ուշադրութեամբ լսում էր այս խօսքերը և ուրախանում, որ ամառը միասին պիտի անցցնեն:

Կէս օրից յետոյ ժամը երեքն էր. մի բլրակի վերայ, ծառի տակ, Ադապեան ուսումնարանի աշակերտուհիները ուշադրութեամբ լսում էին Կարապետ Փանոսեան էփէնդուն, որ իգական սեռի դաստիարակութեան վերայ էր խօսում. վերջացրեց թէ չէ, կեցցէներ և ծափահարութիւններ պսակեցին հռետորի վերջին խօսքերը:

Ահա բեմն անցաւ մի 17 տարեկան օրիորդ, որ Ամերիկայի և Անգղլիայի կանանց դրութեան վերայ էր խօսում: Ուշադրութեամբ և մեծ հաճութեամբ էին լսում հանդիսականները:

Մինչ դեռ այսպէս ուրախութեան և զուարճութեան մէջ էին, յանկարծ հարաւային արևմտեան կողմից մի սև ամպ բարձրացաւ և արեգակի ճառագայթների առաջը վարագոյր քաշեց: Հազիւ թէ զուարճասէր հասարակութեան ուշադրութիւնը գրաւած էր այդ ամպը, երբ ոմանք ասացին — Ծուխ է, ամպ չէ: Թնդանօթի խուլ ձայն լսուեցաւ, ամենի վերայ խոր լռութիւն տիրեց. Թնդանօթի ձայնը կրկնուեց: «Ո՛հ, դարձեալ հրդեհ», բոռացին ամեն կողմից, և բաղմութեան մէջ աղմուկ բարձրացաւ:

Ո՞ւր, ո՞ր թաղումն է, հարցնում էին միմեանց, և ոչ ոք չէր կարողանում մի զոհացուցիչ պատասխան տալ:

Ամենքն անհանգստացան, ամենքի սիրտը դող ընկաւ. ճառախօս օրիորդը լուռ ու մունջ իջաւ ամբիոնից:

Բոլոր հանդիսականք ծովեղը ժողովեցան. դիմացէն Պէյիւք—

Դէրէից և Թարափիայից մի նաւակ մօտեցաւ Հիւնքեար Իսկէլէսիի և զուժեց Բէրայի զարհուրելի հրդեհը:

Կայծակը Միհրանի ղլխին նոյն ներգործութիւնը չէր ունենալ, ինչ ներգործութիւն որ արաւ այս լուրը: Բայց միայն նա չէր զունաթափ լինողը, շատերին բօթ եղաւ այդ լուրը. մէկը չը կար, որ այնտեղ քոյր, եղբայր, կին կամ ազգական ու բարեկամ չունենար: Հանդիսականները խնդրեցին ծովեզրը կանգնած նաւապետներին, որ պայմանաժամից առաջ կրակ վառեն: Նորանք համաձայնեցան և սկսան պատրաստուիլ ուղևորուելու. ժողովուրդը խառն ի խուռն մէջն էր խրվում. մի նպատակ ունէր նա—հասնել ժամ առաջ Բէրա, օգնել նեղելոց:

Երաժիշտները փորձեցին, իբր թէ ժողովրդեան սփոփել իրանց գործիքներու քաղցրաձայնութեամբը, բայց ճանապարհորդք խնդրեցին որ լռեն, իրանք արդէն մասնակցել էին հոգով և մտօք իրանց եղբարց դժբախտութեանը:

Սահմանադրութեան տարեդարձ տօնողները շոգենաւերով և նաւակներով, նեղուցի հոսանքին ապաւինած, արագ արագ վերադառնում էին քաղաք: Միհրանն Էլմենիկից բաժնուեցաւ, մտնելով մի այլ շոգենաւ, որ սովորականից արագընթաց էր: Հազիւ թէ այս շոգենաւը Միջադիւղի առաջը հասաւ, մի չարագուշակ ուժեղ հով փչեց և անիւներից ցրթող ջրի աւազը Միհրանի երեսին սփռեց: Այս միջոցներին Բերայի վերայ բարձրացող բարձր ծուխի միջից ահագին հրեղէն լեզուներ երևեցան, և թէև արևը դեռ մայր չէր մտել, բայց երկինքը փայլեց, ծուխի ամպերը մի պղտոր կարմրութիւն ստացան: Նաւապետը շոգենաւի մէջ եղողների ուշադրութիւնը մի խուլ ձայնի վերայ դարձրեց, այդ Բէրայեցոց աղաղակի ձայնն էր, որ հազիւ-հազ կը հասնէր իրենց: Միհրանն այդ աղմուկի մէջ իւր Վարդուհու օգնութիւն կանչելու ձայնն էր երևակայում:

Շոգենաւը մօտենում էր Ղալաթիայի կամուրջին և մեծ դժուարութիւն էր իրան անթիւ շոգենաւերի և մակոյկների միջով ճանապարհ բանալ. ամեն ազգի պաշտօնական և վաճառականական նաւերը միօրինակ մօտեցել էին եղերքին, և նոցա մէջ գտնուած բոլոր նաւաստիները, կրակ մարելու գործիքներով, դէպի Բէրա էին վազում: Քամին հետզհետէ սաստկանում էր, և կրակի կայծերը կարմրացած երկնքի երեսին պտոյտ պտոյտ խաղալով ու տատանելով մոխրի հետ խառը ծովի վերայ էին թափվում:

Ամենքն էլ դէպի երկինքն էին նայում, վասն զի գետնի վերայ եղած հրդեհը կարծես երկինքն էր փոխադրուել: Գեղեցիկ և հրաշալի էր այս տեսարանը, եթէ դեռ ևս գտնուէին կենդանի Ներոններ, որ կարողանային այս պատկերի վերայ սառը սրտով նայել:

Կէս ժամից յետոյ, դողդոջուն սրտով և շունչը կտրելով, Միհրանը շտապով բարձրանում էր դէպի Բէրա: Անտարբեր լսում էր իւր չորս կողմի աղմուկը և միմիայն նպատակն էր յառաջ վազել, թէև իրան մղում էին աջ ու ձախ և ինքը ուրիշներին հրելով շարունակում էր իւր ճանապարհը: Բայց դեռ ևս իւր տանից կէս ժամուայ ճանապարհ հեռու, Բերայի մեծ ու նեղ փողոցի վերայ առաջը կտրեցին կանոնաւոր զօրքերի խիտ դասակարգերը: Ի զուր էր խնդրում Միհրանը, ի զուր էր աղաչում ճանապարհ շնորհել իրան, զինուորականք անտարբեր կրկնում էին՝ արգելուած է: Բայց եթէ դոքա զեղջած էլ լինէին, կրակը պիտի ընդդիմանար: Մինչ զինուորականք Միհրանին համոզելու վերայ էին, ահա մի դղրդոց լսուեցաւ, մի աղաղակ բարձրացաւ, երկինքը կարծես թէ կայծակէն փայլեց: Մօտի* ահագին փայտէ տունը սաստիկ ճայթոցով վայր իջաւ փլաւ և զինուորականներն ու թուլումբաջինները միմեանց հրելով դէպի ետև փախուստ դարձան, ամենքն իրանց անձի պաշտպանելուն էին նայում: Այդ միջոցին փախչող թուլումբաջիները ուժով հրեցին ամբոխին, Միհրանը և ուրիշ շատ մարդիկ կենդանոյն ծովի անդունդն ընկան: Միհրանը թեւը ցաւեցրած վեր կացաւ կանգնեց, շորերը ցեխոտ, երեսը փոշոտ, գլխարկը կորցրած, կարծես նոր էր սթափում քնից, ահա մի նոր ալիք բոցի, և իրան կրթնած փայտաշէն տունը մխալ սկսաւ: Նորէն յետ քաշուեցան զինուորականք և իրանց հոսանքով Միհրանին քանի մը հարիւր քայլ հեռացրին իւր նպատակից:

Յանկարծ խեղճի միտքն ընկաւ փորձել, իւր տունը հասնելու համար նեղ ու ծուռ փողոցներով պտտել:

Նա ճղեց ամբոխը և մի ամբողջ ժամից հազիւ հասաւ այն փողոցի ծայրը, որի մէջ գտնվում էր իւր տունը: Բայց այստեղ նորէն դէմ դրին զինուորները. նա բարձրացաւ փողոցի մէջ դիզուած տան կահ ու կարասիքների վերայ, և քանի մը ամթոռներ ոտքի տակը ջարդելով, հազիւ կարողացաւ հաստատել իւր ոտքերը մի փայլուն տախտակի վերայ. նա ուզում էր ծուխի և բոցի մէջ տեսնել հեռուանց իւր տունը. . . . . Նեղ ու երկար փողոց էր

բացվում առջևը, երկու կողմից մինը քան զմիւսը բարձր ու մի քանի յարկանի տների պատերը դէմն էին կանգնում. փողոցը մութն էր և պղտոր, տների տանիքները փայլուն էին և կրակի հետ առատ ծուխ էին թողնում դէպի երկինքը: Հովը փչում էր և հրեղէն լեղուներ էին դուրս վազում պատուհաններից. ժամանակ առ ժամանակ քանդուող տների ճայթոցները մի ակամայ դող էին պատճառում Միհրանին: Ահա լուսաւորուեցաւ փողոցը, երևաց իւր տունը. ահա կնոջ սենեակի պատուհաններից դուրս են հոսում կրակի աչքեր: Միհրանը տեսնում է սենեակի ներսը. լուսաւորուած, ահա սենեակի մի անկիւնումը մահճակալի վերայ հանգիստ քնած է իւր Վարդուհին: «Կինս այրվում է...» Միհրանը բոռալով վայր ցատքեց բարձրացած տեղից և դիզուած կահ կարասիքը դղրդոցով քանդուեցան: Մի քայլ յառաջ, և ահա աչքն ընկաւ դետնին ընկած, ցեխի մէջ տապալած մի տախտակ, վրան գրած «ուսումնարան օրիորդաց, Տիկին Նուրիճանեանի»: Միհրանը երկու ձեռով գլուխը բռնեց և ապշած մնաց.....

Հրդեհը նոր և նոր ուժով լափում էր շինութիւնները և տները ճայթելով, ինչնում էին: Ջինուորականք այս և այն տներից մարդիկ էին աղատում և փողոցի ամբոխը յետ մղում դժբախտութիւններից ազատ պահելու մտօք:

Նոյն իրիկունն էր: — Օրթագիւղի Ծովեզերեայ տների մէկի մէջ, անկողնի վերայ պարկած էր Վարդուհի Նուրիճանեանը, մայրը մօտը կանգած, մէկ կողմանէ ուրախ՝ իւր աղջիկը ազատած տեսնելու համար, միւս կողմանէ խիստ անհանգիստ Միհրանի մասին: Վարդուհին իւրեանց հիւրասիրող բարեկամ տանտիրոջից խնդրում էր անդադար՝ լուր տալ Միհրանին իրանց ազատութեան մասին, և նորա լուրերը իրան հասցնել: Տանտէրը լապտերներով մէջ դիշերին երկու երեք մարդ ուղարկեց Բերա հրդեհի գնացող ամբոխի մէջ՝ Միհրանին գտնելու:

Երկու ամսից յետոյ մի սեւազգեստ, բարձրահասակ կին ամեն օր Սամաթիայի կողմերից շտապում էր դէպի Փրկչի Ազգային Հիւանդանոցը: Այս փրկարար շինութեան բակը մտնելով, սեւազգեստ կինն շտապով վազում էր խելագարների մասը, և իւր փափուկ ձեռներովը նիհարացած և ապուշ դէմքով իրան նայող երիտասարդի շինքին փաթաթուելով, ասում էր. «Միհրանի՛կ, հոգի՛ս, ես եմ, նայիր, չե՞ս ճանաչում, Վարդուհիդ եմ, քու Ռոզան.... և առատ արտասուքները խեղդում էին խեղճ կնոջ կոկորդը:

Ամիսներ անցան:

1871 թուականի Համբարձման օրն էր:

Սրբազան պատրիարքը Ս. Փրկիչ եկեղեցու մէջ հանդիսաւոր պատարագ էր մատուցանում և հանգուցեալ հոգոց համար փրկութիւն էր մաղթում: Ահագին բազմութիւն հանդիսին ներկայ էին:

Աւետարանը համբուրելու մօտեցան քանի մի որբեր և այրիք: Հանդիսականաց վերայ աւելի խորին տպաւորութիւն ունեցաւ, երբ օրհնութիւն ստանալու մօտեցաւ և մի սեւազգեստ բարձրահասակ կին, սև քողը գլխին ծածկած և կուրծքին մի կաթնակեր մանուկ սխմած. առատ և աղի արտասունք մօր թշերից սահելով՝ թրջում էին անմեղ հրեշտակի երեսը. . . . . Այդ Վարդուհին էր՝ Միհրանից մնացած իւր միակ յիշատակովը:

ՍՐԲՈՒՀԻ ԵՐԻՑԵԱՆՑ

ԿԱՐՏԱՐՈՍՔ ԱԽՄԱԶԱՐՈՎՔ
Մ. Յ. ՀԱԽՆԱԶԱՐԵԱՆՑ
Գ. ԹԱՖԼԻՍՔ.

ՖԱՆԱՐԻՕՏ

(ՄԻԻԼԼԷՐԻՑ)

Ա՛խ, նոքա իմ հօրն ու մօրը խոր ծովի մէջ խեղդեցին,
Եւ նոցա սուրբ դիակները փողոցներում քարշեցին.
Իմ գեղեցիկ քրոջը նոքա տանից անխնայ քշեցին,
Եւ հասարակ աղախնի պէս շուկայի մէջ ծախեցին։
Ակնքների ձայն եմ լսում, կարծես թէ կանչումեն ինձ.
Չա՛, իմ ծնողքը ինձ կանչումեն խորը, լայն գերեզմանից.
Կանչումեն վրէ՛ժ և — նետումեմ ծովը թուրքի գլուխներ,
Մինչև իմ վրէժը կշտանայ և հանդարտուին ալիքներ։
Բայց երբ երեկոեան հովը մաղերիս հետ խաղումէ,
Ա՛խ, հէգ, երկչոտ մաղթանքի պէս ականջիս հառաչումէ։
Ամօթալի ստրկութենից քոյրս է այդպէս հառաչում.
«Անարգական իմ կապերից, եղբա՛յր, ի՞ր չես ինձ փրկում»։
Ա՛խ, թէ ես արծիւ լինէի և օդի մէջ սլանայի,
Եւ սրատես իմ աչքերով ամեն տեղ էլ տեսնէի,
Մինչև իմ քրոջը գտնէի և թշնամու ձեռից նորան
Ազատ կտուցիս մէջ տանէի դէպի ազատ ցունաստան։

ԿՈՅՐ ԱՐՔԱՅ

(ՈՒԼԱՆԴԻՑ)

Ինչի՞ համար ծովափին
Գողովվել են քաջերը,
Ի՞նչ է ուզում կոյր արքան
Այնտեղ կանգնած թոյլ ծերը։
Գաւազանի վրայ կրթնած,
Ձայն է տալիս դառնագին,
Որ նեղուցի միւս կողմից
Նրկնումէ ձայնը կրկին։

«Մութ քարայրից, աւազակ,
Ցնա տուր դուսարս աննման։
Նրա անոյշ քնարն ու երգը
Էր բաղդը իմ ծերուվժեան։
Կանանչ ափից պարելիս
Դու նորան փախցրիր բռնութեամբ.
Քեզ մեծ ամօթ, որ ծերիս
Սիրաը լցրիր տրտմութեամբ»։

Եւ քարայրից դուրս գալով,
Աւազակը վայրենին,
Իւր մեծ սուրը շարժելով,
Զարկումէ նա վահանին։
«Պահապաններ ունիս շատ,
Ինչի՞ նոքա թոյլ տուին։
Ասպետներդ, թէ տղամարդ
են, նրա համար դան կռուին։»

Լուռ կանգնած են քաջերը,
Ոչ ոք առաջ չէ գալիս,
Եւ շուռ գալով կոյր ծերը
Ասաց. «մի՞թէ միայն եմ ես։»
Հիմա բռնեց հօր աջը
Կրտսէր որդին ջերմութեամբ
«Թոյլ տուր ինձ, հայր, գնամ կռուեմ։
Կուռս լի է զօրութեամբ։

«Որդեակ, հզօր է թշնամին,
Ոչ ոք կանգնել չէ նրա դէմ,
Բայց և քո երակներում
Ազնիւ արիւն կայ, գիտեմ։
Ահա, առ այս հին շեղբը,
Մրցանակը քաջերի,
Եւ թէ կընկնես, յորձանքը
Կուլ տայ թող դին խեղճ ծերի։»

Ալեքները ճեղքելով
Նաւակն անցնում է ծովը,
Ականջէ դնում կոյր արքան,
Բայց խոր լռութիւն չորս կողմը։
Մինչև լսեց միւս ափից
Զէնքերի ձայնն ու զարկը,
Աղմուկը կռուողների,
Այլ և խուլ արձագանքը։

Դողալով կանչեց կոյրը.
«Ասացէք, ի՞նչ էք տեսնում։
Սուր ձայն հանեց իմ թուրը,
Հնչիւնից եմ ճանաչում։»
— Գող աւազակը ընկաւ,
Ստացաւ նա վարձ արժանի։
Կեցցէ՛ մանուկ մեր հսկան,
Կեցցէ որդին արքայի։»

Դարձեալ լռութիւն, կոյր արքան
Կանգնած ականջէ դնում։
«Լսում եմ ալիքի ձայն,
Մեզ նաւակ է մօտենում»։
— Այո՛, նոքա են գալիս,
Որդիդ սուր ու վահանով
Եւ քո դստրիկը Գունիլդ
Արևափայլ մազերով։

«Բարով եկաք», ձայն տուեց
Բարձր ժայռից կոյր արքան,
«Սրտիս իղձը կատարուեց,
Թող այժմ մտնեմ դերեզման։
Որդեակ, ինձ հետ կըթաղես
Դու իմ թուրը սրաձայն,
Եւ դու դստրիկ, դու կերդես
Վերջին տաղը հանդստեան»։

Գ. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑ

ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ ԵՒ ՆՈՑԱ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

(ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ)

Ներածութիւն. — Հայոց գաղթականութիւնը ի Տաճկաստան։ — Տաճկական կառավարութեան յարաբերութիւնները հայոց հետ, սուլթան Մէհէմմէտ II օրից մինչեւ XIX դարը։ — Պոլսոյ հայ պատրիարքների իրաւունքները և Էջմիածնայ ու Երուսաղէմայ նուիրակները։ — Պատրիարքական փոխանորդները։ — Էջմիածնայ, Սսոյ և Երուսաղէմայ յարաբերութիւնները։ — Հայ կաթողիկութեան սկզբնաւորութիւնը։ — Պոլսեցւոց իրաւունքները Էջմիածնայ կաթողիկոսաց ընտրութեան մէջ։ — Հայոց իրաւունքները սուլթան Մահմուտի օրերով։ — Հայ-հռոմէականների վէճերը և կնճռալի խնդրոյն վերջաւորութիւնը։ — Երուսաղէմայ խնդիրը։ — Պատրիարքական իրաւունքները և ազգային ժողով։

Ներկայ տարւոյս մայիսի 24-ին Տաճկաստանի մեր հայ եղբայրք կատարեցին իւրեանց ունեցած Սահմանադրութեան տասն և վեցերորդ տարեդարձը։ Բոսֆորի եղերքներից սկսած՝ մինչեւի խորին Քիւրդիստանը ուր որ միայն զարգացած հայ կայ, ուր որ պակաս չեն կարդալ գրել իմացող երիտասարդներ, ամենքը պարտք անձին համարած են մայիսի 24-ը տօնել իբրև ազգային մի նուիրական և սրբազան տօն։

Տասն և վեց տարի շարունակ Ռուսիայի հայոց ականջին հասնում է Պոլսոյ ազգայնոց «կեցցէ սահմանադրութիւն» հոգեւորուած աղաղակը, բայց մեր տպագրութիւնը ցայսօր չէ ծանօթացրած տեղոյս կարդացող հասարակութիւնը Տաճկաստանի մեր հայ եղբարց վայելած իրաւանց հետ։

Այն յօդուածիս նպատակն է վերցնել մասամբ մեր գրականութեան մէջ նշմարուած այդ պակասութիւնը և այդպէսով դիւրացնել այն անձանց աշխատանքը, որոնք այսուհետև աւելի մօտաւորապէս կը կամենային ուսումնասիրել վերոյիշեալ Սահմանադրութիւն ասուած կանոնադրութիւնը:

Ներկայ Օսմանեան կայսերութեան մէջ չը կայ քաղաք, նահանգ և գաւառ, ուր որ չը լինի հայ: Ասորիքից և Իրագ-Արաբիայից սկսած, մինչև Ռումելի և Բալքան լերանց միւս կողմը, ամեն տեղ սփռուած են հայք՝ դեռ ևս պատմական ժամանակներից սկսած: Մեր պատմիչները թէև յիշում են հայ գաղթականութեան քանի մի նշանաւոր հատուածները, բայց մի մանրամասն տեղեկութիւն տալ Հայոց հետզհետէ ցրուելու մասին, դրքա, ի հարկէ, չեն կարող: Մենք, օրինակ, գիտենք որ Արշակունեաց հարստութեան վերջանալից յետոյ, V դարում, հայ նախարարներից ոմանք գնացին, բնակուեցան նախ Մակեդոնիայի մէջ գտնուած Նիկիա քաղաքում, ապա տեղափոխուեցան Ադրիանուպօլիս:

VIII դարում Հայոց մի հատուածը բռնի քշուեց դէպի Դամասկոս, իսկ միւսը՝ որ մօտ 12,000 հոգի էր, կամաւոր կերպիւ անցաւ Անատոլիոյ կողմերը և յունաց կայսրէն ստացաւ արգաւանդ երկիր ու շատ բարիքներ:

Առհասարակ յունաց կայսրները ճանաչած են մեր ազգը իբրև աշխարհաշէն և ընդունակ ժողովուրդ, և այդ պատճառաւ շատ անգամ աշխատում էին գաղթեցնել հայերին Բիւզանդիոնի կայսրութեան խորքերը, և մանաւանդ այն գաւառները, որոնք այս կամ այն պատճառաւ հարկաւորութիւն ունէին մի աշխատասէր ժողովրդի: Այդպէս ահա, X դարում, համեմատ Ասողիկի պատմելուն, շատերը հայերից, կայսեր ցանկութեամբ և այն մտքով «զի շինեսցեն զերկիրն», բնակութիւն են հաստատում Մակեդոնիոյ այն մասում, որ բուլղարաց սահմանին մօտ էր: X դարու Հայոց գաղթականութիւնը միանգամայն այնքան նշանաւոր է իւր քանակութեամբ, որ փոքր Ասիոյ քանի մի հեռաւոր քաղաքների մէջ թիմաւոր եպիսկոպոսներ էին նստում: Իսկ հետևեալ XI դարը միան-

գամայն կարող է համարուիլ Հայոց համաշխարհային ընդհանուր սիրման ժամանակամիջոց: Այս միջոցին մեր ազգի մի ծայրը հասաւ մինչև Ղրիմ, Կիէվ, Լեհաստան և Տրանսիլվանիա, միւսը մինչև Իտալիա և Եգիպտոս: Այդ երկիրներում մնացած քանի մի հնախօսական յիշատակներից երևում է, որ մեր գաղթող ազգայնոց թիւը շատ մեծ էր. ուստի հաւանական է կարծել, համաձայն բնական և պատմական օրինաց, որ փոքր Ասիայի և այժմեան Եւրոպական Տաճկաստանի վերայ անցնելու ժամանակ՝ հայք ամեն մի ինքնանում, ամեն մի նշանաւոր քաղաքում կամ գիւղում թողնում էին մի որ և իցէ քանակութիւն ժողովրդի, որ և մնացել է այնտեղ, ընտելացել և դարձել տեղացի բնակիչ:

Վերոյիշեալ ժամանակներից սկսած՝ գաղթականութիւնը Հայոց յափշտակող միաքը դարձաւ, և մեր հայրենեաց օր ըստ օրէ շատացած վշտերը աւելի նպաստեցին ժողովրդի մէջ ծնած օտար երկիրներում խաղաղ և անվրդով կեանք պտռելու գաղափարին: Եւ որովհետև արաբաց և մահմեդական ազգերի հետ ունեցած պատերազմների ժամանակ այդ խաղաղութիւն խոստացողը մեր ազգին տակաւին մօտակայ Բիւզանդիոնի կայսերութիւնն էր, վասնորոյ բնական է, որ հայոց ամենամեծ մասը մնար կայսերութեան նոյն ժամանակուայ սահմաններում, որոնք միանդամայն մօտ են այժմեան Տաճկաստանի մեծութեանը:

Թէ ինչ իրաւանց տէր էին հայք Բիւզանդիոնի կայսերութեան մէջ, այդ մի առանձին հետազօտութեան առարկայ է: Առ այժմ կը նկատենք, որ թէև կայսերք ճանաչած են ազգիս բնական արժանաւորութիւնները, սակայն կրօնական խտրութիւնները ամեն ժամանակ խոչնդոտն են եղած մեր և յունաց մէջ և միշտ արգելած են նոցա՝ պատուել հայոց ազգին ըստ արժանւոյն:

Երբ 1453 թուին Սուլթան Մէհէմմէտ երկրորդը առաւ Բիւզանդիոնի մայրաքաղաք Կ. Պոլիսը, հայք կենտրոնացած էին այս քաղաքի թաղերէն գլխաւորապէս Ղալաթիայում և Պէյ-Օղլու կամ Բէրա: Օսմանցւոց այս ինքնակալը դեռ Պրուսա էր նստում, երբ մեր ազգի վերայ մեծ համարումն ունէր և սիրում էր հայերին. իսկ երբ իւր գահը Կ. Պոլիս տեղափոխեց, հրաւիրեց այնտեղ Պրուսայի

առաջնորդ Յովակիմ եպիսկոպոսին և կարգեց նորան պատրիարք, ստորադրելով սորան Յունաստանի և Անատոլիայի հայքը, որոնք կամ արդէն սուլթանի հպատակ էին և կամ յետոյ հպատակեցան: Նոյն դահակալը վերահաստատեց և յունաց պատրիարքութիւնը և առ-հասարակ իւր հպատակ քրիստոնէից հետ վարվում էր յարգանօք: Այս բանը գլխաւոր պատճառ եղաւ դաւառացի հայոց նշանաւոր թուով դէպի Պոլիս գաղթելուն: Ջիշեալ Յովակիմ պատրիարքի հետ Պրուսայէն Պոլիս եկան վեց տուն նշանաւոր հայ գերդաստաններ և դաւառներից շատ հայք, որոնցից ոմանք բնակուեցան հին քաղաքի մէջ, իսկ միւսները ի Գալաթիայ և այլևայլ թաղերում: Որովհետև այս գաղթականութիւնը սուլթանի հրաւէրքով էր, վասնորոյ եկողները բոլորեքեանք ընտրած վաճառականներ և արհեստագործներ էին: Պոլսոյ հայ արհեստաւորների թիւը շատացաւ մանաւանդ Սուլթան Սէլիմ Ա.ի օրերով, վասն զի այս ինքնակալը, 1513 թուին, հասնելով մինչև Պարսկաստան, առաւ Դավրէժը և ի թիւս այլոց գաղթեցուց ի Պոլիս և այն տեղի բոլոր հայ արհեստագործներին:

Այս եղելութիւններից յետոյ հայոց բոլոր բարոյական ոյժը Օսմանեան կայսերութեան մէջ միանգամայն կենտրոնանում է Կ. Պոլսոյ մէջ: Շատ սակաւ են մեզ հասած պատմական տեղեկութիւնները յիշեալ տէրութեան իւր հպատակ հայոց հետ ունեցած յարաբերութեան մասին տասնեվեցերորդից մինչև ներկայ դարը: Սակայն որքան և քիչ են մեզ հասած նիւթերը, այսու ամենայնիւ վերջին երեք հարիւր տարուայ օսմանեան և նոյն իսկ մեր ազգային պատմութիւնքը հաստատում են, որ Պոլսոյ սուլթանները ընդհանրապէս հանդիսացած են կարելոյն չափ պաշտպան և սիրող հայոց: Տէրութեան քաղաքականութիւնը քանի մի անգամ պարզած է ազգիս սէր և պաշտպանութիւն ցոյց տալու պատճառները: Օրինակի համար՝ երբ 1641 թուին Պրուսա քաղաքում հայոց դէմ հալածանք յարուցին, այն ժամանակուայ մեծ վէզիր Քարայ-Մուստաֆայ փաշան՝ սուլթան Իբրահիմի հրամանաւ, ոչ միայն արտաքսեց տաճիկ քաղաքապետին և պատժեց հայոց եկեղեցիքը քանդողներին, այլև բացատրեց տէրութեան քաղաքականութիւնը, որ սուլթանը կը ցանկայ հայոց իւր հպատակ ունենալ և թէ ազգիս սիրը գրաւելու համար պէտք չէ թոյլ տալ որ և իցէ հալածանք և կամ նեղութիւն, մանաւանդ աստուածպաշտութեան և կրօնական արարողութեանց վերաբերութեամբ:

Թէև պակաս չեն մանաւոր դէպքեր տեսակ տեսակ հալածանաց ընդդէմ հայոց, մանաւանդ գաւառների մէջ, բայց այդ դէպքերը երբէք չեն ունեցած բնութիւն ընդհանուր հալածանաց ընդդէմ քրիստոնէից-հայոց, այլ մասնաւոր երևոյթներ էին մեծ մասը տգէտ ցաճիկ ժողովրդի կրօնամոլութիւնից շարժած: Սակայն այդ ցաւալի դէպքերը շատացան մանաւանդ սուլթան Սուլէյման երկրորդի օրերով, երբ այս կամ այն գաւառների մէջ նահատակեցին քանի մի հայ՝ հրապարակաւ քրիստոնէական կրօնը մեծարելու պատճառաւ և կամ թէ քանի մի տեղ բռնի խլելով հայոց եկեղեցիքը մզկիթ դարձրին:

Հին արևելեան թագաւորները սովորութիւն ունէին իրանց սրով և թրով ձեռք բերած այլակրօն հպատակներից ամեն տարի մանկաժողով անել, խլելով ծնողաց ձեռքից որոշեալ հասակի մանուկներին և բռնի ածելով դոցա դէպի իրանց կրօնը: Ցիշեալ սուլթան Սուլէյմանի ժամանակ քանի մի անգամ կրկնուեցան քրիստոնէաՀնաս մանկաժողովների հրամանները, և որովհետև հայոց նեղութեան ու բողոքի ձայնը, միջնորդութեամբ Մաղաքիա վարդապետի Դերջանեցւոյ, հասաւ սուլթանի ականջը, դահապետը 1843 թուին հրամայեց այլ ևս չը նեղացնել քրիստոնէից և այդպէսով մի առժամանակ դադարեցաւ օսմանեան կայսերութեան մէջ մանկաժողովների սովորութիւնը: Կան և մի քանի տխուր դէպքեր հալածանաց և անարգանաց ազգիս վերաբերութեամբ մեծ վէզիրների կողմանէ, բայց ամեն անգամ գրգռողները դարձեալ հայքն են եղած, որոնք զանազան կուսակցութիւններ կազմած և կրքերից դրդուած՝ տէրութեան ձեռքով միմեանց դէմ հալածանք են յարուցել: Մի այդպիսի անարգ վարմունք հայոց հետ վէզիրի կողմանէ յիշվում է 1659 թուին Թ Լ Թ ե ա ն անուանեալ կուսակցութեան դրդմամբ: 1662 թուին մեծ վէզիր Ահմէտ փաշան (Քէօփրիւլի-օղլու) Զատկի օրը քանդեց Պոլսոյ մէջ շինած հայոց և յունաց եկեղեցիքը. նոյնը գործեցին տաճիկները Կարս, Ակն, Երզրում և ուրիշ քանի մի տեղեր: Ոչ պակաս արհամարանաց արժանացան հայք 1704 թուին Աւետիքեանց և հայ-կաթոլիկաց դրդմամբ և այլն և այլն:

Նոյն տարիքը և մի քանի ուրիշ ժամանակներ եղած են ցաւալի դէպքեր Պոլսոյ հայ պատրիարքների բանտարկութեանց, ծեծի և սպանման, բայց, կրկնում եմ, ամեն անգամ այդ բոլորը եղած է

հայոց դրդմամբ։ Ամեն անգամ պատրիարքաց այս կամ այն պատիժների ենթարկելիս՝ տէրութիւնը նայած է նոցա վերայ իբրև լոկ հպատակի. իսկ հոգևորական աստիճանի վերաբերութեամբ մեծ վէճերները աւելի ևս աններելի են համարած ամբաստանեալ կրօնաւորաց ազգի մէջ որևիցէ շփոթի և վրդովմանց պատճառ լինելը. քանի մի անգամ՝ կրօնաւորաց պատժելու ժամանակ տաճկաց մեծամեծները արտասանած են հետևեալ խրատական խօսքերը.—«քեզ, իբրև հոգևորականի, պարտ է խաղաղութիւն տարածել և ոչ թէ վրդովմունք սերմանել»։

Եկեղեցւոյ ներքին գործոց վերաբերութեամբ, բացի պատրիարքաց պաշտօնատարութեան խնդրոյն, տաճկաց տէրութիւնը երբէք չէ խառնուած ու միշտ յարգած է կրօնական խորութիւնները և ազգային ու կրօնական իրաւունքները։ Նշանաւոր է այն դէպքը, որ երբ 1659 թուին Պօլսոյ հայ եկեղեցիներից մէկի մէջ հարկ եղաւ կարդալ թագաւորի հրովարտակը՝ որ ուղղակի հայոց պատրիարքի խնդրոյն էր վերաբերում, եկեղեցականք արգելեցին հրովարտակի կարդալը, ասելով, թէ «օրէնք չէ եկեղեցւոյ մէջ թագաւորի հրաման կարդալը»։

Կ. Պօլսոյ հայ պատրիարքները ամեն անգամ այդ պաշտօնը ձեռք բերելու համար պարտաւորուած էին տէրութեանը մի որոշեալ տուրք տալ, և այս բանը մեծամեծ չարութեանց պատճառ եղած է։ Մի այդպիսի տուրք տրվում էր տէրութեանը և նոր կամ քանդուած եկեղեցիք շինելու համար։ Սակայն այս երկու հարկապահանջութիւններն էլ հասկանալի կը լինին, եթէ մտաբերենք, որ այս ժամանակները Տաճկաստանում այդ կարգ ու կանոնը մի սովորական բան էր և նոյն իսկ օտարազգի դեսպանները որևիցէ խնդիր կամ գործ յառաջ տանելու համար միշտ նշանաւոր գումարներ են ծախս արած և թէ առանց վոսկի տաճկաց մեծամեծների մօտ ոչինչ գործ շինել կարելի չէր։

Հայոց և յունաց եկեղեցեաց վերաբերութեամբ տաճկաց դէնպետները (Շէյխ-իւլ-իսլամները) նմանապէս խառնուած չեն, բացի միջամտութեան այն միքանի դէպքերը, երբ դէնպետները, հայ վարդապետաց հետ բարեկամութիւն ունենալով, սոցա համար միջնորդ են գտնում բարձրագոյն դռան կամ նոյն իսկ սուլթանի առաջ։

Գալով Էջմիածնայ կաթողիկոսաց խնդրոյն՝ պէտք է ասել, որ Էջմիածնայ գահակալաց հաստատութեան համար Պօլսոյ սուլթան-

ներից հաստատութեան հրովարտակներ ստացուած են միայն այն ժամանակները, երբ Էջմիածինը Օսմանցոց ձեռքին է եղած: Իսկ առաջին օրինակը, երբ յիշեալ հովուապետի գահը Պարսից ձեռքն անցած լինելով, սուլթանը ևս հաստատութեան հրովարտակ տուած է Էջմիածնայ կաթողիկոսին, եղաւ 1734 թուին, Աբրահամ երրորդի կաթողիկոսութեան օրով, թէև այս անգամն էլ յիշեալ տէրութեան միջամտութիւն խնդրողները նոյն իսկ հայքն էին:

Փոքր ինչ տարբեր է եղած աշխարհական հայոց դրութիւնը Տաճկաստանի մէջ: Հայք մինչև անգամ զգեստով պարտ էին զանազանուիլ բուն տաճիկ ժողովրդից. հայք հագնում էին տէրութեան որոշած գոյնի և ձևի զգեստներ ու գլխարկներ և զանց առնողները տուգանաց և մինչև անգամ մահու էին ենթարկվում: Զընայելով, որ վերջի երեք դարուց մէջ հրդեհները, շարժերը և ժանտախտները անպակաս են եղած Տաճկաստանի ամեն կողմերում և ժողովուրդը մինչ ի խեղճութեան և աղքատութեան հասցրած են, միւս կողմից էլ հայոց կեղեքողը եղած է տէրութեան հարկապահանջութեան վատ սիստէմը: Բացի այդ՝ բուն Հայաստանի գաւառներում, օրինակ Կարինի, Մուշի և Վանայ կողմերը նախ Ջէլալիները, ապա քուրդերը և ուրիշ վրանաբնակ ազգութիւնք միշտ թշնամութեամբ էին վարվում հայոց հետ, մեծամեծ վնասներ տալի սոցա, մանաւանդ որ տէրութիւնը շատ քիչ անգամ կարողացած է զսպել նոցա բռնութիւնները:

Մի այլ հանգամանք ևս: Կ. Պոլիսը՝ իբր մայրաքաղաք, միշտ ձգած է դէպի իրան ընդունակ և աշխոյժ գաւառացոց: Սեբաստիոյ, Եդեսիոյ, Տիրիկի և այլ նահանգների հայք անդադար մեծ քանակութեամբ տեղափոխվում էին 'ի Պոլիս, այն ինչ նոցա հայրենակիցք, իւրեանց տեղը մնալով, պարտաւորուած էին այդ գաղթականների փոխարէն ևս հարկ վճարել: Այս հանգամանքը մինչև այսօր ևս արդարացի բողոք է շարժում գաւառացոց կողմից և տէրութիւնը 1660 թուականից սկսած շատ անգամ կարգադրած է Պոլսոյ պատրիարքների ձեռքով դուրս քշել գաւառացոց Պոլսէն դէպի իւրեանց հայրենիքը:

Հայոց քաղաքական ընդհանուր իրաւանց այն կէտերի մասին, որոնց մէջ դոքա չէին զանազանվում Տաճկաստանի միւս հպատակ քրիստոնեայ ազգերից, մենք առիթ կունենանք աւելի մանրամասնաբար խօսելու Սահմանադրութեան վերաբերութեամբ ճառելիս:

Ինչպէս վերևը ասած էինք՝ 1461 թուին Պրուսայի առաջնորդ Յովակիմ եպիսկոպոսին Սուլթան Մէհէմէտը թագաւորական հրովարտակով նշանակեց Պոլսոյ մէջ փաթրիկ կամ պատրիարք, իբրև ներկայացուցիչ ընդհանուր հայոց, որոնք այն ժամանակ Օսմանեան տէրութեան մէջ գտնվում էին:

Այն օրից մինչև վերջին ժամանակները տէրութիւնը մի որոշ կանոնադրութիւն չտուեց Պոլսոյ պատրիարքաց իրաւանց մեծութեան կամ սահմանի մասին և, մեր կարծիքով, ահա պատճառը այն խառնաշփոթ հասկացողութեան, որ ունին տաճկաբնակ հայք թէ իւրեանց անձնական և թէ պատրիարքի իրաւանց վերաբերութեամբ: Անցած երեք դարուց մէջ Պոլսոյ այն պատրիարքներն են աւելի մեծ իշխանութեան տէր դարձած որոնք դրամով, բարեկամութեամբ, ճարպիկութեամբ, հնարագիտութեամբ կամ վերջապէս անձնական համարձակութեամբ են հասած գերագոյն բարձրութեանը: Եղած են այնպիսի միջոցներ, երբ պատրիարքները ահ ու սարսափ են ձգած իւրեանց հօտի վերայ և մինչև անգամ 'ի մահ դատապարտել տուած շատ ու շատ մեծամեծների:

Մի նշանաւոր երևոյթ է, որ, այն ժամանակները, երբ էջմիածնի գահը ոչ մի վարդապետ չէ կամենում բարձրանալ և ամենեքեանք փախչում են կաթողիկոսութիւնից՝ ժամանակի դժուարութիւնները զգալով, Պոլսոյ պատրիարգութիւնը ձեռք բերելու համար՝ հայ վարդապետները ահագին գումարներ են ծախս անում, միջնորդութեանց են դիմում և զանազան հնարքներ ի գործ դնում: Ասել է թէ, չը նայելով էջմիածնայ կաթողիկոսների գերագոյն իշխանութեանը, փառասիրաց համար Պոլսոյ պատրիարքութիւնը աւելի համակրելի և գրաւիչ է եղած . . . .

Օսմանեան կայսերութիւնը մինչև ներկայ դարուս կէսը, զուրկ լինելով մի որ և է բարեկարգ քաղաքական օրէնսդրութիւնից իւր քրիստոնեայ հպատակաց վերաբերութեամբ, որոնք կրօնական խտրութեան պատճառաւ միշտ տարբեր են եղած տաճիկներից և քաղաքական իրաւունքների մասին, ուրախ եղած է ճանաչել Պոլսոյ պատրիարքի անձնաւորութիւնը իբր մի այնպիսի իշխանութիւն, որ առանց տէրութեանը գլխացաւանք պատճառելու պիտի կառավարէր հայ ազգութիւնը՝ սորա հոգևոր և քաղաքական մասերի վերաբերութեամբ, երաշխաւոր պիտի լիներ միշտ սոցա հաւատարիմ հպատակութեան մասին և մինչև անգամ պատասխանատուութիւն յանձն առներ տէ-

րութեան առաջ հարկերի իւր ժամանակին արքունի գանձատունը մտնելու մասին: Այս հիմանց վերայ, Պոլսոյ պատրիարքները ոչ միայն կրօնական, եկեղեցեաց, ուսումնարաց և ազգային կալուածների վէճերն էին նայում, այլ և իրաւունք էին համարում հայոց առևտրական և մինչև անգամ քրէական դործերի քննութեանց մէջ խառնուելու: Պատրիարքները իւրեանց իշխանութեան տակ բանտ ունէին, հանդերձ որոշեալ թուով զինուորների (եասախճի) և այդ բանտերի մէջ ամբողջ ամիսներով շատ անգամ նստած են հոգեւորական և աշխարհական նշանաւոր անձինք, դոքա պատրիարքի հրամանաւ և ներկայութեամբ ծեծ կերած են և այլն և այլն:

Ակզբում պատրիարքական պաշտօն վարողները լինում էին եպիսկոպոսական աստիճանի արժանացած անձինք, բայց յետոյ պատրիարք են նստում հասարակ վարդապետներ, ամուսնացած քահանայք և մինչև անգամ մի երկար միջոց պատրիարքական աթոռը բռնած ունէին աշխարհական անձինք, որոնք կոչվում էին տեղակալներ:

Սուլթան Մէհմէտի տուած իրաւունքների հիման վրայ, Պոլսոյ պատրիարքութիւնը հաստատուելուց յետոյ՝ դարձեալ անկախ մնացին Սսոյ, Աղթամարայ կաթողիկոսութիւնները և Երուսաղէմայ պատրիարքութիւնը. սակայն 17-դ դարու կիսից սկսած Պոլսոյ պատրիարքներին քանի մի անդամ յանձնուած է Սսոյ, Աղթամարայ և Երուսաղէմայ գահակալներին փոփոխել կամ թէ Երուսաղէմի պատրիարքներին իւրեանց ստորադրել: Մի ժամանակ մինչև անգամ Պոլսոյ պատրիարքներից մէկը իւրեան յիշեալ երկու աթոռների գահակալ էր անուանում:

1663 թուին անթափոյի Եղիազար եպիսկոպոսը շատ աշխատեցաւ Տաճկաստանի հայերին միանգամայն բաժանել Էջմիածնայ կաթողիկոսութենից և այդպէսով Օսմանեան տէրութեան սահմաններում մի նոր կաթողիկոսութիւն հաստատել ծայրագոյն իշխանութեամբ, սակայն այս միտքը մեծ ընդունելութիւն չը գտաւ և չը յաջողուեցաւ:

Հին աւուրց սովորութիւն եղած է, որ Էջմիածնայ կաթողիկոսները միշտ նուիրակներ էին ուղարկում ամենայն երկիր, ուր որ հայք կան: Այդպէս ահա՝ Էջմիածնայ նուիրակները վարդապետական կամ եպիսկոպոսական աստիճանաւ, շարունակ գտնվում էին Պոլսոյ մէջ, օգուտ էին քաղում ազգի ջերմեռանդութիւնից դէպի Էջմիած-

նայ գահը, կաթողիկոսաց գործակատար և մի կերպ ներկայացուցիչ էին համարվում, ժողովում էին ի նպաստ Էջմիածնայ նշանաւոր գումարներ և շատ անգամ այդ դրամը անխնայ գործ էին դնում իւրեանց փառասիրութեանը բաւականութիւն տալու և Պոլսոյ պատրիարքութիւնը ձեռք բերելու համար: Այդ նուիրակները շատ անգամ միջնորդ էին լինում Էջմիածնայ կաթողիկոսաց մօտ այս կամ այն ջերմեռանդ Տաճկաստանցու համար օրհնութեան կոնդակ ձեռք բերելու մտքով: Միւս կողմից Էջմիածնայ կաթողիկոսները իրանք էլ շատ անգամ դիմած են Պոլսեցւոց օգնութեան. սովորաբար նոցա համար օրհնութեան կոնդակներ էին ուղարկում և մինչև անգամ անձամբ գալիս էին Պոլիս օգնութիւն խնդրելու կամ թէ խաղացնելու որ և իցէ կուսակցութիւններից վրդովուած հայ հասարակութեանը: Այսու ամենայնիւ, որքան մեզ յայտնի է, Պոլսեցիք մինչև 1726 թիւը Էջմիածնայ կաթողիկոսաց ընտրութեանը չէին մասնակցած, և մինչև այս ժամանակ, ինչպէս և սորանից յետոյ շատ անգամ Էջմիածնայ միաբանութիւնը ինքը ընտրում էր իրան կաթողիկոս, որ գահ նստելուց յետոյ շտապում էր օրհնութեան կոնդակներով իմացնել իւր ընտրութիւնը համօրէն հայոց, ի թիւս որոց և Տաճկաստանցւոց ընդհանրապէս, իսկ Պոլսեցւոց մասնաւորապէս:

Նուիրակներ ուղարկելու մասին Էջմիածնայ օրինակին հետևում էին և Երուսաղեմայ պատրիարքները, որոնք սկզբում նմանապէս աշխատում էին այդ նուիրակների ձեռքով դրամ ժողովել իրանց ապրուստը հայթհայթելու կամ պարտքերը վճարելու, բայց հետզհետէ այդ նուիրակների Պոլսոյ մէջ և նոյն իսկ հայոց պատրիարքարանի կից նստիլը մի սովորական բան դարձաւ և դոքա Երուսաղէմայ պատրիարքական փոխանորդի անուն սկսեցին կրել:

Պոլսոյ պատրիարդները XVII դարում սովորութիւն ունէին երբեմն շրջել Տաճկաստանի Հայաբնակ գաւառները և քանի մի օրինակներ ևս եղած են, երբ այդ բարձրաստիճան պաշտօնակալները, աշխատելով միշտ մօտ գտնուելու Օսմանեան կայսրների կամ մեծ վեզիրների բանակից, թողնում էին իւրեանց պատրիարքարանն ու Պոլսոյ գործերը, և զինուորական բանակի հետ շրջում Ադրիանուպոլիս և կամ այլևայլ տեղեր:

Պատրիարքաց բացակայութեան ժամանակ նոցա տեղը լինում էր միշտ փոխանորդ կամ վէքիլ, որ մեծ մասը ընտրվում էր քահանայից դասէն և ժողովուրդի մէջ վէքիլ տէր բաբայի անուն էր կրում: Քանի մի անգամ եղած են վէքիլութեան պաշտօնում և աշխարհական անձինք: Թէ ինչ ու ինչ իրաւանց տէր էին սոքա անցեալ երեք դարերում — որոշ յայտնի չէ:

XVII և XVIII դարերում Տաճկաստանի սահմաններումը քանի մի անգամ ժողովներ են կազմուած, որոնցից նշանաւոր են երկուսը, այն է՝ Երուսաղէմայ ժողովը, որ եղաւ 1651 թուին և Պօլսոյ — 1726 թուին: Առաջինը նշանաւոր է նորանով, որ այդ տեղ փոքր ի շատէ պարզուեցան Էջմիածնայ և Սսոյ կաթողիկոսութեանց յարաբերութիւնները. ժողովը հաստատեց մի տասն և երեք գլուխ կանոնադրութիւն, որից սոյն խնդրոյն վերաբերութեամբ նշանաւոր են հետևեալ գլուխները. ա.) Էջմիածնայ և Սսոյ կաթողիկոսները, միմեանց հետ սէր պահելով, իրաւունք ունին ձեռնադրել միմիայն այն անձանց, որոնք Իւրեանց վիճակին կամ թէմին են վերաբերում. բ.) ձեռնադրելի անձը իրաւունք չունի դնալ այն կաթողիկոսին, որ առաջինի վիճակին չէ տիրում. գ.) առանց ժողովրդի վկայութեան ոչ ոք յիշեալ կաթողիկոսներից ոչ ոքի եպիսկոպոս չը ձեռնադրէ. դ.) եպիսկոպոսները միմեանցից վիճակ չյափշտակեն. ե.) մէկ վիճակի մէջ երկու առաջնորդ չնշանակուին. զ.) ուրիշ վիճակից ոչ ոք եպիսկոպոս չձեռնադրէ. է.) եպիսկոպոսը առանց կաթողիկոսի հրամանի իրաւունք չունի տիրելու այլոց վիճակի, թէև այդ նոյն իսկ այլազգեաց իշխանների բռնի հրամանովը լինի: Միւս գլուխները վերաբերում են քահանայից և հոգևորական միւս դասուց: Այս ժողովին ներկայ էին Էջմիածնայ Փիլիպպոս և Սսոյ Ներսէս կաթողիկոսները:

1726 թուի Պօլսոյ ժողովի մէջ, Էջմիածնայ Կարապետ կաթողիկոսի ներկայութեամբ, գլխաւորապէս որոշուեցաւ Երուսաղէմայ և Պօլսոյ պատրիարքութեանց իրաւունքները հետևեալ կերպիւ. ա.) ոչ ոք չը լինի պատրիարք կամ փոխանորդ Երուսաղէմայ, եթէ այն տեղի Սուրբ Յակոբայ վանքում չլինի սնուած, վարժուած, կամ այլ խօսքերով՝ Երուսաղէմայ պատրիարքութեան պիտի արժանանան

միմիայն այն տեղի միաբանները. բ.) Երուսաղէմայ միաբանութեան վերայ վերակացուներ աշխարհական անձինք չպիտի դրուին և գ.) Երուսաղէմայ և Պոլսոյ պատրիարքութիւնները այնուհետև չպիտի լինին առանձին մէկ մարդու ձեռքում, կամ այլ խօսքերով, մէկ անձը մի և նոյն ժամանակ յիշեալ երկու տեղերը պատրիարք լինիլ չէ կարող: Սոյն կանոնադրութեամբ արգելվում էր այդ աթոռներին միմեանցից առաջնորդութիւններ կամ վիճակներ խլելը:

Տակաւին XVII դարու մէջ լատինական կրօնաւորները կարողացան որսալ Պոլսոյ հայերից շատերին և մեծամեծ եռկպառակութիւններ ծագեցնել ազգիս մէջ: Լատինացի քահանայք, հայոց հիւրասիրութիւնից և քրիստոնէական եղբայրասիրութիւնից օգուտ քաղելով, իրաւունք էին ձեռք բերած Պոլսոյ հայ եկեղեցեաց մէջ պատարագ անելու և եկեղեցեաց բակերում բնակուելու: 1641 թուին նշանաւոր լատին կրօնաւոր Կլէմէս Գալանոսը, մինչև անգամ հայ վարդապետական զգեստ հագած, Պոլսոյ հայ պատրիարքարանումն էր բնակվում և դասախօսութիւններ էր անում: Ահա այս ժամանակից սկսած հայք սկսումէն միմեանց հալածել, կաթոլիկ անուանելով, և շփոթներին ու աղմուկներին վերջ չէր լինում: Շատերը՝ թէ հոգևորականներից և թէ աշխարհականներից, հալածվումէին, բանտ էին դրվում և զանազան պատիժներ կրում լոկ կասկածի տակ ընկնելով, կամ իւրեանց անձնական թշնամեաց մատնոյութեամբ: Միւս կողմէն այլևայլ կարգի լատին կրօնաւորների թիւը օրէցօր շատանալով Տաճկաստանի մէջ, աշխատում էր աւելի մեծացնել ազգիս մէջ շփոթը և անբաւականներին դրդել յայտնի կերպիւ բաժանուելու հայոց պատրիարքի իրաւասութիւնից: Մօտ 1684 թուականից Պոլսեցոց մէջ ծագած կրօնական այդ վէճերը հետզհետէ մեծանալով, անցան և գաւառները, և հայք ամեն տեղ միմեանց հալածումէին կաթոլիկութեան պատճառաւ, մինչև որ այս կաթոլիկ անուանուածները մի նշանաւոր ոյժ բաղկացրին և օտար ազգաց, մանաւանդ Գաղղիացոց, դեսպանների պաշտպանութիւնը և միջամտութիւնը խնդրեցին: Գաղղիայի դեսպանները, կաթոլիկ քահանայից դրդմամբ և այլևայլ քաղաքական նպատակներով, օգուտ քաղեցին այդպիսի առաջարկութիւնից և ոչ

միայն ձեռք բերին Լուսաւորչական կրօնից անջատուողների համար քանի մի իրաւունքներ, այլ և ազգիս մեծամեծ առաւելանքներ հասուցին և մի ամբողջ դար շարունակ անդադար զբաղած էին Տաճկաստանի հայոց կրօնական խնդիրներովը, դոցա քաղաքական նշանակութիւն տալով:

Ներկայ դարուս սկզբէն Պօլսոյ հայք փոքր առ փոքր իրաւունք են ձեռք բերում Էջմիածնայ կաթողիկոսների ընտրութեան գործում առաջին դերը խաղալու: Այդպէս ահա երբ 1800 թուին Ղուկաս կաթողիկոսի մահուանից յետոյ Էջմիածնայ միաբանութիւնը, ըստ վաղեմի սովորութեան, անմիջապէս ընտրութիւն արաւ և հրաւիրեց այդ պաշտօնը վարելու այն ժամանակուայ Պօլսոյ պատրիարք Դանիէլին, Տաճկաստանի մայրաքաղաքի հայերը առաջին անգամ չհամաձայնեցան այդ ընտրութեանը և իրանց կողմից ընտրեցին նախ Բարթուղիմէոս Կապուտիկ անուանեալ եպիսկոպոսին, ապա նոյն Դանիէլին, իսկ սորա աքսորանքից յետոյ Էնոգէթցի Դաւթին: Պօլսեցւոց ձեռքով Օսմանեան տէրութեան գործ դրած միջամտութիւնը և մասնակցութիւնը Էջմիածնայ ընտրութեան մէջ, տեղիք տուաւ և Ռուսաց կայսերութեան փոքր առ փոքր ձեռք բերել մի բարոյական ազդեցութիւն կաթողիկոսաց ընտրութեան մէջ, նա մանաւանդ որ իւր ձեռքին կար ի հարաւային Ռուսիա և ի Վրաստան հայոց մի նշանաւոր քանակութիւն: Նոյն միջոցներին, երբ Պօլսոյ հայք, կարելի է ասել, օրը մի կաթողիկոսացու էին ընտրում, Ռուսաց կայսերութիւնը առաջարկեց իւր ընտրելին Արղութեանց Յովսէփ եպիսկոպոսին, սակայն, ինչպէս յայտնի է, Յովսէփ արհին Թեֆլիսի մէջ վախճանեցաւ, Էջմիածին չհասնելով: Նորէն ընտրութիւնը եղաւ յօգուտ Դանիէլի, որ այս անգամ Պօլսոյ Գրիգոր պատրիարքի օգնութեամբ Օսմանեան կայսեր կողմից հաստատութեան հրովարտակ ստացաւ և այդ պատճառաւ «կայսերակոչ և ազգահրաւէր» կոչուեցաւ: Նշանաւոր է այն իրողութիւնը, որ Տաճկաստանի հայ եպիսկոպոսները այս երկրորդ անգամ իրաւունք համարեցին կաթողիկոսի օծումն կատարել Էջմիածնից դուրս, այն է Իւչ Քիլիսայի վանքումը, 1802 թուին. մի այդպիսի օրինակ եղած էր 1726 թուին, երբ Կարապետ Գ. Ուլնեցի անուանեալ կաթողիկոսին

էլ Պոլսեցիք ընտրեցին և յիշեալ մայրաքաղաքի մէջ կաթողիկոս օծեցին և ապա ուղարկեցին Էջմիածին։

Սուլթան Մահմուտ երկրորդի գահ նստելու օրից սկսած, այն է 1808 թուականից, մի նոր դարագլուխ համարելու է Տաճկաստանի հայոց իրաւանց վերաբերութեամբ։ Այս կայսրը Օսմանեան ինքնակալներէն առաջինը եղաւ իւր հպատակ քրիստոնէից բարօրութեան համար ճիգն թափող, և չնայելով շփոթ ժամանակներին և իւր պատերազմական անյաջողութեանցը — կարողացաւ ամբողջ Տաճկաստանին մի նշանաւոր զարկ տալ դէպի յառաջադիմութիւն, վասն որոյ ինքն ևս իրաւամբ արժանացաւ վերանորոգող տիտղոսի։ Եւ որովհետև ամենայն վերանորոգութիւն դրամի պէտք ունի, վասնորոյ մօտաւորապէս և գլխաւոր հետևանքը Սուլթան Մահմուտի գործունէութեան եղաւ արքունի հարկերի աւելանալը։ Զօրքերի ռոճիկը 1825 թուից սկսած կարգադրուեցաւ վճարել ամսէ ամիս, վասնորոյ և արքունի հարկի ժողովելը նմանապէս գործ էր դրվում ամիսը մի անգամ։ Մինչև այս ժամանակները հայք վճարում էին տէրութեանը տարեկան հարկ 24 ղուրուշ մարդագլուխ. եէնիչէրի անուանեալ զօրքը ջնջելուց յետոյ, Եւրոպական զօրախումբ կազմելու առթիւ, նոյն 1825 թուին մարդագլուխ հարկը 24 ղուրուշից բարձրացրին մինչև 36ը։ Քանի մի տարուց յետոյ, այն է 1829 թուին, նորից աւելացրին և շինեցին 48 ղուրուշ։ Տէրութեան այս կարգադրութեանց հետ միասին յիշելու է 1826 թուին հրատարակած հրովարտակը, որով վերցնվում էր մինչև այն օրը եղած օրէնսդրութիւնը մասնաւոր մարդկանց կայքի յարքունիս գրաւելու մասին։ Սովորաբար և համաձայն հինօրեայ աւանդութեանց, ամենայն Տաճկաստանցի համարվում էր ստրուկ և ծառայ արքայի և պատկանում էր սորան ոչ միայն ինքը, այլ և իւր գերդաստանը և իւր շարժական թէ անշարժ կայքը. այս հիման վերայ ամենեցունց մահուանից յետոյ միայնակ ժառանգը դոցա սուլթանն էր համարվում։ Ոչ ոք ապահով չէր իւր սեփականութեանց տևողութեան մասին և հայք ամենից նշանաւոր զոհն էին համարվում այս բռնի օրինաց, վասն զի բաւական էր մի փոքր հարստութիւն դիզել, իսկոյն տաճիկները ամեն կերպ մեղքեր կու-

տակելով հայի վերայ, իրան պատիժների էին ենթարկում, աքսորում կամ ի մահ դատապարտում և նորա կայքը յարքունիս գրաւում: Անթիւ օրինակներ կան հայ ամենանշանաւոր և հարուստ գերդաստանների հանգչելու՝ լոկ այս օրինացը զոհ գնալու պատճառաւ: Միւս կողմէն՝ գուցէ այս կարգ ու կանոնից յառաջ էր գալիս և անդադար դրամական տուգանք պահանջելու սովորութիւնը, որ նմանապէս մեծամեծ ՀԼասներ էր տալիս մանաւանդ գիւղացւոց և արհեստաւորաց: Հետևաբար հարուստ հայք, անձնական պաշտպանութիւն գտնելու և իւրեանց կայքը ապահովացնելու համար, այս կամ այն փաշայի հովանաւորութեան տակ էին մտնում, նոցա սառաֆը (սեղանաւոր) և կամ ծախսարարը դառնալով, երբեմն ամենայն տեսակ տմարդի և անարժան ու ստոր գերեր խաղալով նոցա առաջ: Թէև փաշաների այդ հովանաւորութիւնը ամենալաւ միջոցն էր համարվում անձին և կայից ապահովութեան մասին, բայց շատ անգամ դա էս ունենում էր իւր ծանր և ՀԼասակար հետևանքները, երբ փաշան մեռնում էր, արտաքսվում էր, պատժի էր ենթարկվում և կամ ինքը բարկանում ու նեղանում էր իւր սեղանաւորի վերայ. թէ այսպէս և թէ այնպէս՝ ՀԼասաւոր զոհը լինում էր հայի ժողոված դրամը և շատ անգամ նոյն իսկ նորա կեանքը: Ինչպէս արդէն ասացի, սուլթան Մահմուդը առանձին հրովարտակով ինքնակամ հրաժարուեց իւր հպատակաց ժառանգ լինելու իրաւունքից և դադարեցրուց այն առանձին դատարանը (Մուխալէֆաթ-քալէմի), որ զբաղած էր մանաւոր կալուածների և սեփականութեանց գրաւելով: Այնուհետև կայք խլելու սովորութիւնը մնաց միմիայն ծանր յանցաւորաց վերաբերութեամբ, և այն էս կարող էր գործ դրուիլ միմիայն կայսերական առանձին հրովարտակներով:

Եէնիչէրների հետ միասին ջնջել տուեց սուլթան Մահմուդը Պոլսոյ միջի հրդեհ հանգցնողներին (թուլումբաչի) և բեռնակիրներին (համալ), որոնք մահմեդական դաւանութեան տէր էին և շատ անգամ քաղաքական գործերի մէջ խառնվում ու շփոթ էին յարուցանում: Փոխանակ սոցա՝ արքայն հրամայեց հրաւիրել ի Պոլիս Անատոլցի և փոքր Ասիացի հայերին, ազատ թողնելով դոցա մայրաքաղաքի մէջ գտնուած ժամանակը արքունական հարկից: Այս հրաւէրքը պատճառ եղաւ հայոց մեծ քանակութեամբ գաւառներից ի Պոլիս գաղթելուն մշակութեան համար: Մի սորա նման, բայց միանգամայն

անմարդավայել օրէնք հաստատեց սուլթան Մահմուտը 1836 թուին, որ գործ է դրվում և մինչև այսօր. առաջուայ մանկաժողովների նման, որի մասին վերը յիշեցի, ամեն տարի արքունի հրամանաւ փոքր Ասիայի գաւառներից քանի մի հարիւր հայ տղայք են ժողովում և, բերելով դոցա ի Պոլիս, գործ են դնում կայսերական նաւարանում և գործարաններում, առանց ամենայն վարձատրութեան և ռոճկի, միմիայն դոցա հանդերձը և հացը հոգալով:

Ինչպէս արդէն ասած եմ, հայք հին ժամանակներից սկսած, միւս ոչ-տաճիկ ազգութեանց նման, դատապարտուած էին առանձին ձևի և գոյնի զգեստներ հագնելու: Մահմուդը և այս մասին փոքր ինչ նորոգութիւն մտցրեց. այս գահակալը, իբր առանձին ողորմութիւն և շնորհք, իրաւունք տուեց քանի մի քրիստոնէից տաճկաց յատկացեալ զգեստներ հագնել. հայերից այս շնորհքը վայելեցին Պէզճեան Յարութիւն, Գրիգոր Պալեան և Սիմէոն Տատեան ամիրաները 1828 թուից սկսած:

Այն քանական թուականներին հրաման եղաւ բոլոր գաւառապետաց հարկ եղած պաշտպանութիւնը ցոյց տալ ամենայն տեղ քրիստոնեայ հպատակաց, և կրօնամոլ հալածողաց պատժել: Նոյն ժամանակները վաճառականութիւնը ծաղկեցնելու մտքով գահապետի ցանկութեամբ թարգմանուեցան գաղղիերէնից ի գործադրութիւն առևտրական օրէնքները (code du commerce), թէև այս բանը յետի անգամները շատ արգելքների հանդիպեցաւ:

1828—1829 թուականներին բացուած պատերազմը օսմանցոց և ռուսաց մէջ՝ լաւապէս ապացուցեց տաճկաց՝ հայոց ունեցած հաւատարմութիւնը դէպի իւրեանց տէրութիւնները, բայց այս պատերազմը, բացի այլ և այլ վնասուց, նշանաւոր քանակութեամբ սակաւացրուց Տաճկաբնակ հայոց թիւը, որոնք գաղթեցին դէպի Ռուսիա, ցանկանալով ազատուիլ իւրեանց գաւառներում կրած հարստահարութիւնից: Ջնայելով հայի բնութեան՝ հաւատարիմ մնալ միշտ այն պետութեան, որին ենթարկել է իրան մնալ ի հպատակութեան, այնու ամենայնիւ չափազանց հարստահարութիւնները մի կողմից, տէրութեան թուլութիւնը դուցէ միւս կողմից, ստիպած են հայերին սուլթան Մահմուտի օրերով այստեղ և այնտեղ դէմ դնել վարչութեանը և փոքր ի շատէ ազատութիւն փնտրել: Այդ՞ պէս ահա նշանաւոր էր 1819 թուին Ուշնեցւոց կամ Ջէյթունցոց ապստամբութիւնը. սոքա մինչև այն ժամանակը տէրութեանը մոտ

60,000 ղուրուշ հարկ էին տալիս, և այժմ դադարեցուցին մի առ-ժամանակ այդ դրամ տալը և ոտքի ելան:

Հայոց ազգային իրաւունքները Տաճկաստանի մէջ Սուլթան Մահմուտի օրերում գլխաւորապէս երևան ելան հայ-կաթոլիկաց խնդրոյն ժամանակ: Այս խնդիրը ներկայ դարուս հայոց համար այնքան նշանաւոր է, որ հարկ կը համարիմ քանի մի մանրամասնութիւններ յառաջ բերել: Լատինական քահանայից ցանած սերմը Արևելքում արդէն երկու երեք դար շարունակ ամենամեծ աճումը դտած էր հայոց մէջ: Փոքր առ փոքր շատանում էին ոչ միայն Հռովմայ գահապետի գլխաւորութիւնը ճանաչողները, այլ և աւելանում էր նոցա կրօնական և մոլեռանդ ատելութիւնը դէպի իւրեանց հայրական կրօնը: Միւս կողմից նոցա մի առանձնական մարմին կազմելուն նպաստում էին շարունակ թէ հայ հոգևորականաց կողմէն յարուցած հալածանքը նոցա դէմ, լիբ թէ ուղիղ ճանապարհի վերայ կանգնացնելու դիտաւորութեամբ, և թէ տաճկաց տէրութեան վախը—չը լինի թէ նոցա ձեռքով օտար Եւրոպական տէրութիւնները իրաւունք ձեռք բերեն Օսմանեան կառավարութեան ներքին գործերում խառնուելու: Սակայն Մահմուտի օրերով թէ Պոլսոյ հայ պատրիարքաց և թէ տաճկաց թագաւորութեան գործ դրած միջոցները այնքան ուշ և անժամանակ էին, որ ոչ միայն չարի յառաջը չառան, այլ և առաւել ևս գրգռեցին գործը և Եւրոպացւոց միջամտութիւնը հրաւիրեցին:

Հայոց կաթոլիկութեան խնդիրը շատ տարիներ զբաղեցրուց Պոլսոյ նշանաւոր հոգևորականաց և աշխարհականաց, որոնք 1810 թուին սկսեցին աշխատել մի կերպ համաձայնեցնել երկու բաժանուած ազգիս: Երկու կողմիցն էլ նոյն տարին քանի մի նշանաւոր ժողովներ ունեցան, և որովհետև խնդիրը գլխաւորապէս բովանդակվում էր կրօնական և աստուածաբանական անվճռելի հարցերի մէջ, վանորոյ երկար վիճաբանութիւններից յետոյ ժողովները ցրուեցան և մի նշանաւոր հետևանք չունեցան: Այսու ամենայնիւ հայ-լուսաւորչականների կողմից քանի մի զիջողութիւններ եղան հաշտութիւնը դլուխ տանելու մտքով, օրինակի համար համաձայն հայ-կաթոլիկաց պահանջման Շարականը սրբագրեցին, «Ով հրա-

շալի» երգից երեք տուն դուրս ձգելով Լայլն։ Պողոս պատրիարքի օրերով՝ 1816 թուականից սկսած՝ հայ-կաթոլիկները, դարձեալ լատին կրօնաւորաց դրդմամբ, գաւառների մէջ կռիւներ ունեցան հայ-լուսաւորչականաց հետ և մինչև անգամ աշխատեցան խլել մեր եկեղեցիները Տրապիզոնում և մի քանի այլ տեղեր։ Պողոս պատրիարքը նորէն բարձրացրուց հաշտութեան հարցը և երբ որ հայ-հռովմէական հոգևորականներն ու մեծամեծները չը պատասխանեցին իւր հաշտուելու հրաւէրքին, այն ժամանակ պատրիարքը դարձաւ արհեստաւորաց և նոցա ձեռքով սկսեց գործը յառաջ տանել։ Եթէ չեմ սխալվում՝ այս առաջին օրինակն էր որ այսպիսի ծանր խնդիրների մէջ հասարակ ժողովուրդի միջամտութիւնը հրաւիրուեցաւ։

Երբ 1819 թուին տէրութիւնը իւր փողերանոցի գործակալ հայ հռովմէական իշխան Տիւզեանների տները և կայքը դրաւեց յարքունիս, յանկարծ նոցա տների մէջ գտաւ խորաններ կամ տնային եկեղեցիք, պատկերներ, հոգևորական զգեստներ և սրբութեան անօթներ։ Տէրութիւնը իրաւունք չը համարեց իրան այդ սրբութիւններին տիրանալու, այլ, այդ բոլորը ուղարկելով հայոց պատրիարքին, հրամայեց սորան ի փոխարէն հաւաքել հռովմէական հայ ժողովրդից մօտ 35,000 ռ. իբր արժէք այն կայից։ Այս անցքը պատճառ տուեց Օսմանեան կառավարութեանը ուշադրութիւն դարձնելու հռովմէական հայոց խնդրոյն վրայ և տէրութիւնը առաջարկեց պատրիարքին այդ բաժանման առաջն առնել, որովհետև նա հայոց ազգը մէկ մարմին կուզէ համարել և ճանաչել։ Այս միջոցներին նոյն իսկ հայ հռովմէականք երկու բաժանուեցան։ Մի կուսակցութիւնը բաղկացած էր մեր դաւանութեան ծայրայեղ թշնամիներից, որպիսիք էին Գօլեճեան, Լիբանանեան և Վիէննայի միաբանք կամ Թրէստեան անուանեալ քահանայք, իւրեանց կողմը ունենալով և մոլեռանդ Գաղատացի ժողովուրդը։ Միւս կուսակցութիւնը, որ աւելի համամիտ էր միութեան և համաձայնութեան և ոչ այնքան մոլեռանդ պաշտպան կաթոլիկութեան, գլխաւորապէս Վենետիկու Մխիթարեան անուանեալ միաբանութեանը պատկանող քահանաներից և սոցա համակրում էր Պոլսոյ հռովմէական հայոց զարդացած մասը։ Այս վերջին կուսակցութիւնը համաձայնեց մասնակցել հաշտութեան համար գումարուած ժողովների մէջ, որոնք այն հետևանքի բերին, որ 1820 թուին հռովմէական հայերից շատերը ստորագրութիւն տուին պատ-

բիարքին չըշեղուելու հայոց բուն դաւանութիւնից, և այս պատճառաւ գրուեցաւ Հրաւէր Սիրոյ անուանեալ կրօնական սահմանադրութիւնը: Սակայն սորանով ևս չվերջացաւ գործը, որովհետև Մխիթարեան քահանայք դաշնադրութիւնը ստորագրելուց յետոյ նորանոր պահանջմունքներ արին, որ Պօղոս պատրիարքին ծանր թուեցաւ ընդունել: Այն ժամանակ Մխիթարեանք տաճկաց մեծամեծների միջամտութեանը դիմեցին և կարողացան այնքան ներգործել սուլթանի վերայ, որ այս վերջինը, հակառակ տէրութեան սովորութեան, առաջին օրինակը տալով, արքունի հրովարտակաւ հրամայեց հայոց ընդունել հռովմէական հայոց պահանջած փոփոխութիւնները: Այս փոփոխութիւններն ևս եղան և Մխիթարեան քահանայից կուսակցութիւնը սկսեց յաճախել հայոց եկեղեցիքը, ուր որ քանի մի ժամանակ հոգևոր մեծամեծ հանդէսներ էին կատարում, մասնակցութեամբ վերոյիշեալ կուսակցութեան: Եւ որովհետև, համաձայն հայոց զիջման, պէտք կար նոր մոցրած վերջին օծման իւղ օրհնել (մեռոն), վանորոյ Պօղոս պատրիարքն ստիպուեցաւ այդ օրհնութիւնը Պոլսոյ մէջ կատարել նոյն 1820 թուին, այն ինչ մինչև այն ժամանակ օրհնած իւղը բերում էին Էջմիածնից: Պատրիարքի այդ գործը ռամիկ ժողովրդին անբաւականութեան տեղիք տուեց, և ամբոխը կատաղաբար յարձակուեցաւ պատրիարքարանի վերայ, ուր ծեծ տուին երկու եպիսկոպոսների և կամեցան պատրիարքին սպանել, բայց նա կարողացաւ թաքչել: Տէրութեան զօրաց միջամտութեամբ ամբոխը ցրուեցաւ և շատ հայեր, իբրև խռովարարք, բանտարկուեցան և ոմանք նոցանից աքսոր ուղարկուեցան, ոմանք կախուեցան իսկ ոմանք հայոց եկեղեցու դրան առաջ գլխատուեցան: Այս դժբախտ անցքերը նորից տեղիք տուին հռովմէական հայոց սառչելու միաբանութեան ձգտումից և միմեանց դէմ նորից ատելութիւն և հալածանք սկսուեցաւ: Այս հալածանացն օգնում էին մինչև անգամ Եէնիչերիքը, որոնք, իբր թէ հայոց դաւանութեան նախանձախնդիր լինելով, անդադար բռնում էին փողոցներում հայ մարդկանց և տանում պատրիարքարան ու վկայութիւն տալիս, որ այդ հայը պաս օրով ուտիք կամ ձուկն է ուտում և ուրեմն կաթոլիկէ դարձել. պատրիարքական փոխանորդը ակամայ կամաք պարտաւորվում էր Եէնիչերի զինուորին մի դահեկան ընծայել և մեղապարտ համարուած հային արձակել: Եէնիչերների այս տեսակ աշխատասիրութիւնը մինչև այն տեղը հասաւ, որ մեր պատրիարքարանն

ստիպուեցաւ վերջապէս տէրութեան ձեռքով արգելել զինուորաց այդ ջերմեռանդութիւնը։ Այսու ամենայնիւ այս միջոցիս հռովմէական հայոց թիւը Պոլսոյ մէջ հասնում էր մինչև 7000 տան։

Պողոս պատրիարքի իւր պաշտօնից հրաժարուելուց յետոյ՝ հայ հռովմէականաց գործը բարեկարգել ուզեց այն ժամանակները մեծ դեր խաղացող հայազգի ցարութիւն ամիրան Պէզճեան, որ պատրիարքարանի ազգային ժողովումն էլ նախագահ էր լինում։ Սա կամեցաւ որ հայ հռովմէականներն ունենան իւրեանց համար մի պատրիարքական փոխանորդ կամ երեսփոխան, միանգամայն ստորադրեալ հայ պատրիարքին։ Այդ անձը պիտի ստանար պատրիարքարանից տէրութեան հրամանները կամ պատրիարքի կարգադրութիւնները և հաղորդէր հայ հռովմէականաց։ Պէզճեանն անշուշտ միտք ունէր դորանով մէկ կողմից պատրիարքի իրաւասութեան տակ պահել փոքր առ փոքր անջատող հայ-կաթոլիկները և միւս կողմից՝ սոցա փոքր ի շատէ իրաւունքներ տալ և շահել սիրտը։ Սակայն այդ դիտաւորութիւնը յառաջ տանելով, Պէզճեանը ոչ միայն իւր նպատակին չըհասաւ, այլ և տեղիք տուեց հռովմէական հայոց աշխատել մի առանձին քաղաքական մարմին կազմելու և իւրեանց համար անկախ և առանձին պատրիարք ունենալու, իբրև իւրեանց ներկայացուցիչ տէրութեան առաջ։ Այս ցանկութիւնն ի կատար ածելու համար հռովմէական հայք բարեպատեհ առիթ համարեցին 1827 թուին Էջմիածնայ գահը ռուսաց ձեռքն անցնիլը և, սուլթանին մատուցած իւրեանց աղերսագրի մէջ, ընդհանուր հայ ազգի վերայ քաղաքական ամբաստանութիւններ կուտեցին, իբր թէ Օսմանեան հայք միտք ունին առանձին թագաւորութիւն կազմելու և այլն և այլն։ Նշանաւոր է այն իրողութիւնը, որ Օսմանեան կառավարութիւնը, այսպիսի վտանգաւոր լուրեր ստանալով, ամենևին զաղտնի քննութիւններ և խուզարկութիւններ չարաւ, այլ բաւականացաւ հայոց պատրիարքի տուած երաշխաւորութիւնից հայ ազգի ապստամբութեան մտքից հեռի լինելու մասին։ Սակայն երաշխաւոր կանգնելով հայ-լուսաւորչականաց համար, պատրիարքը մի և նոյն ժամանակ յայտնեց տէրութեանը իւր անվստահութիւնը հռովմէական հայոց մասին, որոնք, ասաց, մեր քահանայից չեն խոստովանում — այլ Լատինացւոց ժողովուրդ են դարձել։ Որքան և իրաւ լիներ պատրիարքի այս յայտարարութիւնը, այնու ամենայնիւ ներկայ հանգամանաց մէջ միանգամայն մատնութեան բնութիւն

ունէր, որոյ ցաւալի հետևանքները շուտով երևան եկան։ Քաղաքական դժբախտ հանգամանքներից ալեկոծուած տէրութիւնը, 1827 թուին, առանձին հրովարտակաւ արտաքսեց Պոլսէն լատինացւոց և հայ հռովմէականաց քահանայից և կուսանաց, աքսորեց դէպի Փոքր-Ասիա բոլոր դաղատացւոց, որոնք արդէն յայտնի էին իւրեանց յամառութեամբ, և առհասարակ այն ամենայն հռովմէական հայերին, որոնք հնազանդ չէին հայ կղերին, և վերջապէս տեղափոխեց Բերայի, Ղալաթիայի և քանի մի ուրիշ թաղերի հայ հռովմէականաց դէպի բուն հայաբնակ թաղերը՝ Ստամբօլ, Իսկիւտար և այլն։ Այս հրամանը գործ դրուեցաւ դեկտեմբերի վերջերին 1827 թուին և յունուարին հետագայ թուի և միանգամայն անխիղճ, տմարդի և անգութ կերպիւ կատարուեցաւ սուլթան Մահմուդի հրամանը։ Հարիւրաւոր և հազարաւոր հայ հռովմէական գերդաստաններ իւրեանց մատղաշ հաս երեխաներով և յղի կանանցով, առանց ամենայն պատրաստութեան և մեծ մասը առանց դրամի, ամենայուրտ ժամանակին սարսափելի տառապանաց ենթարկուելով, քշուեցան դէպի Ասիայի ներքին գաւառները. շատերը փախան դէպի Ռուսիա և Եւրոպայ. սակայն, ինչպէս սովորաբար և լինում է այդպիսի դէպքերում, մեծ մասը հայ հռովմէական ժողովուրդի մնաց իւր առաջուայ յամառութեան մէջ։ Այդպէս ահա աքսորուածների թիւը հասնում էր մօտ 12,000 հոգու, որոնց մէջ 42 քահանայք կային։ Մօտ 400 երեխայք մեռան ճանապարհին ցրտից և տուլից։ Շատերը մահմեդականութիւն ընդունեցին սուլթանի բարկութիւնից ազատուելու համար։

Աւելորդ չեմ համարում յառաջ բերել այստեղ այն ժամանակուայ օսմանեան նշանաւոր նախարարների մէկի պաշտօնական գրութիւնը, որի հիման վրայ Սուլթանը վերոյիշեալ աքսորման հրովարտակը ստորագրեց։ Այդ գրութեան հեղինակը, յիշելով թէ որ և որ տէրութեանց մէջ է տարածուած կաթոլիկութիւնը և թէ բոլոր կաթոլիկները Հռովմայ պապի իրաւասութեան ներքոյ են, ասում է՝—«Ըստ հրամանի այս լ ո ղ ի (այսպէս է կոչում հեղինակը պապին) կաթոլիկների կանայքը շրջում են առանց երեսի քողի. «ինքա իւրեանց պասերի ժամանակ ձուկ և զանազան ծովային կենդանիք են ուտում. պապը մեղքերի թողութիւն է տալիս և առ«հասարակ մեծամեծ թեթևութիւններ է տալիս, որպէս զի որսայ «հայերին. պապը, համաձայն իւրեանց դաւանութեան, կարող է «մինչև անգամ վախճանած անհաւատներին (քրիստոնեաներին)

«մեղքերի թողութիւն տալ և անցագիր շնորհել ուղղակի դրախտ «մտնելու համար. . . . . Ահա այդ պատճառաւ շատ հայեր «փոքր առ փոքր և առանց ոչ-ոքի իմացնելու, կաթոլիկ դարձան հա- «զար ու մէկ խորամանկութիւններով և շողոքորթութիւններով, «որոնք յատկութիւն են այս խոզերի երամի վատ բնութեանը և «սոցա անիծեալ օրինացը, և որոնք այդ պատճառաւ հասարակ կեն- «դանեաց հաւասար են: Իսկ եթէ պապի իրաւասութեան տակ աղ- «գերի մէկը, օրինակ նեմցէները (գերմանացիք) կամ վենետիկեցիք, «Օսմանեան տէրութեան հետ պատերազմ բանան, այն ժամանակ «մեր կաթոլիկ հպատակները ամեն միջոց գործ են դնելու Բարձրա- «գոյն Դրան թշնամեացը օգնելու, որովհետև եթէ նոքա այդ օգ- «նութիւնը չը տային, այն ժամանակ, ըստ իւրեանց կրօնական հա- «մոզմունքին, իւրեանց մարգարէ Յիսուսի առաջ՝ մեղապարտ կը հա- «մարուէին: Ցունաց ազգի վարմունքը միանգամայն ապացուցեց այս բա- «նի ճշմարտութիւնը, այն ինչ հայք, հաւատարիմ մնալով իւր- «եանց հայրական աւանդութեանը, ոչ մինի կողմը չեն և բացար- «ձակ հաւատարիմ են Օսմանեան գահին:» Այս պատճառներով խնդրում է սուլթանից խստագոյն պատիժներ «անիծեալ կաթոլի- կաց մէկ քանիսի համար»:

Ադրիանուպոլու 1829-ի դաշնադրութիւնը պահանջում էր տաճկաց տէրութիւնից տալ կրօնական ազատութիւն իւր հպատակ բո- լոր քրիստոնեայ ազգութեանց, և այս հիման վերայ հռովմէական հայք ևս իրաւունք էին ստանում ազատ հետևիլ իւրեանց դաւա- նութեանը: Հետևեալ 1830 թուին Եւրոպացի դեսպանաց միջնոր- դութեամբ վերադարձան աքսորից հայ հռովմէականները և իրա- ւունք ստացան իւրեանց համար առանձին եկեղեցիք շինելու, միայն թէ լատինացւոց եկեղեցիքը չերթևեկէին: Այս արտօնութեան հետ հռովմէական հայք իրաւունք ստացան առանձին առաջնորդ ունենալու, բոլորովին անկախ հայոց պատրիարքարանից: Հայ կա- թոլիկաց առաջին առաջնորդը եղաւ Վիէննայի Մխիթարեան միա- բանութեան անդամ Յակոբ վարդապետ Մանուէլեանցը, որ Բարձ- րագոյն Դրանը ներկայանալով, պատրիարքական իշխանութեան վերարկուն ստացաւ և հրովարտակի մէջ «Յ ա կ ո ր փ ի ս գ ո պ ո ս Գ ա թ ո ղ ի կ ե ա ն» անուանեցաւ: Այս եղելութեանց պատճառաւ 1831 թուին հայ հռովմէականացը տուած՝ հրովարտակի մէջ 'ի թիւս այլոց, հետևեալ իրաւունքները յիշուեցան:

«Տէրութեան հարկատու հռովմէական հայոց եպիսկոպոսները, ասում է արքունական հրովարտակը, յունաց և հայոց պատրիարքների հրամանի տակը գտնուելով առաջուց, հռովմէական հայոց ծէսը յունաց և հայոց ծիսին չը յարմարուելու պատճառաւ, իւրեանց ծէսերը չէին կարողանում կատարել»:

«Այս պատճառաւ ակամայ լատինացւոց եկեղեցին էին գնում, իւրեանց ծէսերը և պսակը ուրիշներին էին կատարել տալիս և առ հասարակ շատ խեղճութիւն և նեղութիւն էին քաշում, ինչպէս որ շատերին էլ յայտնի է»:

«Եւ որովհետև այս հռովմէական հայք վաղուց 'ի վեր իմ տէրութեանս հովանաւորութեան տակ են գտնվում և հարկատու են, վասնորոյ թէ լատինացւոց եկեղեցիքը չերթալու համար, թէ իւրեանց յատկացեալ եկեղեցեաց մէջ ծէսերնին կատարելու համար, թէ առաջուայ քաշած նեղութենէն և խեղճութենէն ազատելու համար և թէ վերջապէս համեմատ իմ տէրութեանս արդարութեանը՝ նորանց հանգստութիւնը հոգալու համար՝ այսօր իւրեանց հաւանած և ընտրած Մանուէլեան Յակոբ վարդապետ փիսգոպոս (առաջնորդ) դրինք բոլոր հռովմէական հայերի վերայ, որոնք թէ իմ թագաւորանիստ քաղաքի մէջ լինին և թէ ուրիշ իմ իշխած տեղերը գտնուին,— դոքա պէտքէ առաջուց 150,000 ղուրուշ ընծայ (փէշքէշ) տան արքունական գանձին և տարեկան ևս 3 միլիոն երեսունևութը հազար ղուրուշ տուրք տան: Եւ այս պայմանաւը այս հրովարտակը տուի և հրամայեցի, որ այսուհետև Յակոբ վարդապետը հռովմէական հայոց առաջնորդ ասուի և ծէսերուն մէջ նորա հրամաններից դուրս չգան հռովմէական հայքը և ուրիշից կախում չունենան»:

«Համեմատ իւրեանց սովորութեան, իշխանութիւնից ցած գցելու և իշխանութիւն տալու արժանի եղած վարդապետներին, եթէ փիսգոպոսը առաջնորդութիւնից փոխել կամենայ՝ ոչ ոք չխառնուի: Եթէ այս առաջնորդի հրամանը չլինի, վիճակների փոփոխութիւն չըլինի:»

Բացի սորանից այս հրովարտակը բացատրում է ամուսնութեան և պսակի վերաբերութեամբ առաջնորդի ունեցած իրաւունքները. այնուհետև որոշվում են առաջնորդական իրաւունքները անժառանգ մեռնող հոգևորականաց կայից մասին, նաև կտակակատարութեանց վերաբերութեամբ: Նմանապէս իրաւունք է տրվում առաջնորդին նուիրակներ մանածել դրամ ժողովելու դիտաւորութեամբ, որոշվում է նորա իրաւունք-

ները ձի նստելու, գաւազան գործ ածելու, ծառաներ պահելու և նոցա հագուստի ձևի մասին և այլն և այլն: Վերջ ամենայնի հայոց և յունաց պատրիարքներին և առհասարակ ամենեցուն արգելվում է հայ հռովմէականաց առաջնորդի գործերի մէջ խառնուիլը:

Այս այսպէս լինելով՝ աշխարհական գործերի վերաբերութեամբ հռովմէական հայք տէրութեան կողմից նշանակած Քափուքեահիա անուանեալ պաշտօնական իրաւասութեան տակ դրուեցան:

Առաջնորդին հայ հռովմէականները անուանում էին ազգապետ, այն ինչ դերագոյն հոգևոր իշխանութիւն ունեցող եպիսկոպոսը, որի ձեռին էր միմիայն եկեղեցական վարչութիւնը, կոչվում էր նախագահ: Ազգապետը վարում էր ժողովուրդը ազգային խորհուրդի օգնութեամբ, իսկ այդ ժողովը կայացած էր իշխաններից, որոնց մեծ մասը Բարձրագոյն Դրան կամ փաշաների մօտ սարափութեան (սեղանաւորի) պաշտօն էին կատարում: Այդ իշխանների կամ երեսփոխանների թիւը սովորաբար լինում էր 10. դոքա ունէին և մի ատենապետ կամ, ինչպէս իրանք կոչում էին, իշխանապետ: Այս ժողովը ազգապետի հետ միասին պատասխանատու էր տէրութեան առաջ հռովմէական հայոց ամենայն գործողութեանց համար, մինչև անգամ արքունի հարկերի վերաբերութեամբ ժողովը իւր մէջ մասնաժողովներ էր կազմում, կամ թէ այս կամ այն անձանց յանձնարարութիւններ տալիս. օրինակի համար դատաստանական մասնաժողով ունէր չորս անդամներէ բաղկացած. կային մասնաժողովներ կտակների հաստատութեան և օրինաւոր վավերացման համար, աղքատանոցի և հիւանդանոցի պահպանութեան համար և այլն և այլն:

Այս իրաւունքները արդէն բաւական էին, որ հռովմէական հայք 1835 թուին բոլորովին հաւասարութիւն պահանջէին հայլուսաւորչականաց հետ: Այդ հաւասարութիւնը կայանում էր պատրիարքական տիտղոսի մէջ, որ և տրուեցաւ նոյն թուին հռովմէական հայոց:

Իսկ ինչ որ կը վերաբերի Լիբանանու աթոռին, այդ մասին կը խօսեմ Աբդուլ-Ազիզի թագաւորութեան վերայ ճառելիս:

Սուլթան Մահմուտի օրերով երկրորդ կնճռեալի խնդիրը մեր հայոց համար համարելու է Երուսաղէմայ սուրբ տեղերի մասին ծա-

գած վէճը յունաց ազգի հետ։ Հին ժամանակներից սկսած՝ թէ հայք և թէ յոյնք կամ լատինացիք անթիւ հրովարտակներ, բէրաթներ, վկայականներ և այլևայլ տեսակ թուղթեր ունէին ստացած Օսմանեան կայսրներից, նախարարներից կամ փաշաներից։ Այդ թուղթերը միանգամայն շփոթում էին հայոց և միւս քրիստոնեայ դաւանութեանց իրաւունքները սուրբ տեղեաց մասին՝ և վէճերին վերջ չը կար։ Վէճերը և անբաւականութիւնները մեր և յունաց միաբանաց մէջ ծաներացան մանաւանդ մօտ 1810 թուականին, երբ յոյնք ձեռնամուխ եղան գրաւել՝ մեզ պատկանեալ Սուրբ Յակոբայ վանքը։ Խնդիրը Երուսաղէմէն անցաւ Պոլիս, և երկու ազգութիւններն էլ շատ մեծ գումարներ ծախս արին տաճկաց մեծամեծներին կաշառելու համար, յաղթութիւն ձեռք բերելու դիտաւորութեամբ։ Նշանաւոր է այն բանը, որ այս գործի մէջ հայ լուսաւորչականաց հետ սերտ միաբանեցան և այն ժամանակուայ հռոմէական հայք։ Հայոց բողոքի ձայնը հասաւ սուլթանի ականջին, որ հրամայեց, նախագահութեամբ իւրեանց Շէյխ-իւլ-իսլամին, մի դատաստանական ժողով կազմել 9 մահմետական կրօնի փաշաներից, 9 հայ հոգևորական և աշխարհական անձերից և 12 յունաց մեծամեծներից։ Այդ ժողովի նիստերի մէջ հայք գրաւոր ապացոյցներով կարողացան հաստատել, որ Երուսաղէմ վեր առնող մահմետական հրամանատարները իւրեանց հրովարտակով Ս. Յակոբայ վանքը շնորհել են հայոց և այնուհետև Տաճկաց հետևեալ գահակալներից շատերը վերահաստատած են այս իրաւունքը։ Ժողովը վճռեց որ Ս. Յակոբայ վանքը սեպհականութիւն լինի միմիայն հայոց, իսկ Ս. Յննդեան տեղը, ուր մինչև այն օրը հայք ամենևին իրաւունք չունէին պատարագ մատուցանելու, նմանապէս Ս. գերեզմանը, Քրիստոսի բանտը, Աստուածամօր գերեզմանը և այլ ուխտատեղիք հայոց, յունաց և լատինացւոց միասին աղօթելու տեղեր լինին։

Այս վճիռը կայսերական հրամանաւ հաստատուեցաւ և ի գործ դրուեցաւ, վերջ տալով սուրբ տեղեաց փափուկ խնդրոյն։

Թէև նոյն սուլթան Մահմուտի թագաւորութեան օրերում արդէն սկսուեցաւ տարածուել Տաճկաստանի հայոց մէջ բողոքա-

կանութիւնը, բայց տակաւին մի նշանաւոր զարգացումն չունեցաւ։ Այսքան միայն նկատելու է, որ հայոց պատրիարքը, սովորական ղէնքը գործ դնելով, մեր հայերից քանի մի հոգի աքսորեց, դոցա արդէն բողոքականութեամբ խմորուած համարելով, և մինչև անգամ նղովեց լուտերականաց աղանդը. բայց այս վերջին վարմունքը տեղիք տուաց անդղեացւոց դեսպանին տէրութեանը բողոքելու և նղովը վերցուեցաւ։ Ինչպէս իւր տեղը պիտի տեսնենք՝ բողոքականութիւնը սուլթան Աբդիւլ-Մէջիդի օրերում հայոց մէջ շատ շփոթ պատճառեց։

Հռովմէական հայոց հոգևորականք մօտ 1839 թուին աշխատեցան Դամասկոսի և Բերիայի կողմը բնակվող ասորւոց, որոնք մինչև այն ժամանակ մեր պատրիարքի իրաւասութեան տակ էին, իւրեանց ձեռքը դցել, բայց հայք արքունի հրամանաւ վերապահեցին իւրեանց իրաւունքները և աղատեցին ասորւոց՝ կաթողիկաց թակարդից։

Գալով Տաճկաստանցւոց այս միջոցին ունեցած յարաբերութեանը էջմիածնայ կաթողիկոսաց հետ, պէտք է ասել, որ Դանիէլի մահուանից յետոյ թէ Եփրեմը և թէ Յովհաննէսը ընտրուեցան առանց ամենայն մասնակցութեան Պոլսոյ հայոց։ Այնու ամենայնիւ երբ էջմիածինը ռուսաց ձեռքն անցաւ ու 1836 թուին կանոնադրութիւն (պալաժէնիա) գրուեցաւ Ռուսիայի մէջ հայոց եկեղեցւոյ վարչութեան մասին, Տաճկաստանի հայոց ևս որոշեալ ձայն և իրաւունք տրուեցաւ կաթողիկոսական ընտրութեան վերաբերութեամբ։

Պօղոս պատրիարքի օրով, այն է 1819 թուին, Երևան ելաւ հետևեալ խնդիրը, որ նմանապէս ոչ սակաւ շփոթ պատճառեց Պոլսոյ հայոց մէջ։ Սովորաբար Տաճկաստանի մայրաքաղաքի մէջ երբ մի ծխատէր քահանայ էր վախճանում, իսկոյն նորա ժողովուրդը

գտնում էր պատրիարքի սեպհականութիւն, որ ծախում էր նոցա հովուելու իրաւունքը մի այլ քահանայի։ Իսկ վախճանուած քահանայի ունեցած պարտքերը մնում էին նորա այրի կնոջ և որբ երեխայից պատասխանատուութեանը։ Այս սովորութեան դէմ բողոքեցին Պոլսոյ հայ քահանայք և գործը մինչև սուլթանին հասաւ։ Բողոքողները պահանջում էին, որ վախճանած քահանայի ծուխը նոյն իսկ քահանայից մէջ ամուրդի դրուի և ստացած գումարը վախճանածի ժառանգաց սեպհականութիւն հաշվուի։ Սակայն ոչ միայն այս բողոքը նպատակի չը հասաւ, այլ և բողոքողները քանի մի ժամանակով աքսորուեցան։

Ահա այս դրութեան մէջ էին Ցաճկաստանի հայոց ազգային իրաւունքները մինչև սուլթան Աբդիւլ-Մէջիտի գահ նստիլը 1839 թուին *)։

ԱՂԷՔՍԱՆԴՐ ԵՐԻՑԵԱՆՑ

(Շարունակելի)

---

*) Այս յօդուածը գրելիս ինձ նպաստեցին՝

1) Ստեփաննոսի Ասողկայ՝ Պատմութիւն Տիեզերական. Փարիզ. 1859
2) Պատմութիւն Հայոց. Միք. Չամչեան. հատոր գ. Վենետիկ. 1786.
3) Պատմութիւն Հայոց. Աւետ. Պէրպէրեան. Պոլիս. 1871.
4) Կենսագրութիւն Ցարութիւնի Պէշճեան. Պոլիս 1864.
5) Հասունեան քաղաքականութիւն. Յ. Ասկերեանի, Թիֆլիզ 1868.
6) Исторія Турціи 1826—1856 г. г. Розена. Спб. 1872. և այլն։

ԵՒՐՈՊԱՑՈՑ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԻԼԻԿԻԱՑԻ ՀԵՏ ՌՈՒԲԻՆԵԱՆՑ ԺԱՄԱՆԱԿ [1])

Ա.

Միջին դարերում Կիլիկիայի Հայոց վաճառականութիւնը պինդ կապուած էր արևմտեան ազգերի վաճառականութեան հետ Միջերկրական ծովի վերայ: Այն ժամանակներում Միջերկրական ծովը միակ հաղորդակցութեան միջոցն էր, որով Եւրոպացիք թափանցում էին Ասիայի խորերը և Ափրիկէի երկրները: Ովկիանոսը՝ որ ժամանակով պիտի ծաղկուէր Արևմուտքի վաճառականական նաւերով, այն միջոցում նպաստում էր միայն Միջերկրական ծովի վաճառականութեան ծաւալմանը՝ նոյն ժամանակի ծանօթ աշխարհի արևմտեան և հիւսիսային երկրներում:

ԺԲ-րդ և ԺԳ-րդ դարերում Արևմուտքի վաճառականութիւնը գլխաւորապէս հարաւային Եւրոպայի ծովեզերեայ ժողովրդների ձեռքումն էր: Հիւսիսային Եւրոպան, Բրիտանական կղզիները, Ֆրանսիայի և Սպանիայի արևմտեան կողմերը միայն անուղղակի կերպով մասնակցում էին այդ վաճառականութեանը: Խաչակիրների յաջողութիւնները ու ձախորդութիւնները փոփոխակի ազդում էին հարկաւ այն առևտրական յարաբերութիւնների վերայ, որ Արևմուտքը աշխատում էր անընդհատ պահպանել Արևելքի հետ:

---

[1]) Այս յօդուածը քաղելով հանած ենք Վիկտոր Լանգլուա հայագէտ Ֆրանսիացու հետևեալ աշխատութիւնից. Le trésor des Chartes d' Arménie, ou Cartulaire de la chancellerie royale des Roupéniens (Գանձարան հայ Հրովարտակների կամ Հրովատակագիրք Ռուբինեան թագաւորական դիւանատան):

ԺԴ-ՐԴ դարում Միջերկրական ծովի վաճառականութիւնը զգալի կերպով զարգացաւ, և Հայաստանը թէև Մահմէտականների դէմ տուած շարունակ պատերազմների և ներքին երկպառակութիւնների պատճառով նեղ տեղն էր ընկել, այնու ամենայնիւ ենթարկուեցաւ այն զօրաւոր ազդեցութեանը, որ Եւրոպայի ծովային հասարակապետութիւնները ունեցան Արևելքի վաճառականութեան վերայ: Արդարև, եւրոպացի վաճառականները գլխաւորապէս այս դարու ընթացքում յաճախեցան Կիլիկիա, որ մի կողմից Այասու հռչակաւոր նաւահանգստովը առաջնորդում էր նոցա դէպի Տրապիզոն և Կասպից ծովն ու Կովկասը, իսկ հարաւային ճանապարհով դէպի Պարսկական ծոցը: Այսպէսով Այասու նաւահանգիստը ԺԴ-ՐԴ դարում Կիլիկիայի և առհասարակ Արևելքի վաճառականութեան գլխաւոր շտեմարանը դարձաւ և օտարազգի վաճառականների սովորական բնակութեան տեղ: Սորանից երևում է որ Այասու նշանակութիւնը մեծ էր միջին դարում: Ասորոց երկրի և փոքր Ասիայի մէջ գտնուելով, քրիստոնեայ տէրութեան իշխանութեան ներքոյ, Այասը մեծ առաւելութիւն և ապահովութիւն էր տալիս օտարազգի վաճառականներին, որոնք իրանց առևտրական տները հաստատել և բոլոր գործողութիւնները կենտրոնացրել էին այս քաղաքի մէջ: Միով բանիւ Այասը մի ընդարձակ շտեմարան էր, ուր գալիս մթերվում էին Պարսկաստանի և Հնդկաստանի բոլոր արդիւնքները, որովհետև այն միջոցին դեռ չգիտէին թէ կարելի է այդ երկրները հասնել Բարեյուսոյ գլուխը պտըտելով: Այասու այս մեծ նշանակութիւնը միայն այն ժամանակ ընկաւ, երբ Կիլիկիան նուաճուեցաւ Մահմէտականներից, վասն զի արևմտեան վաճառականները այլ ևս չէին վայելում այն արտօնութիւններն ու ապահովութիւնը որ ունէին Ռուբինեան թագաւորութեան ժամանակ:

Ասացինք որ Արևելքի առուտուրը գլխաւորապէս արևմտեան վաճառականների ձեռքին էր, և թէ Ասիան մի ընդարձակ վաճառականութեան ասպարէզ էր դարձել միջին դարերում. այժմ տեսնենք թէ որոնք են այս առևտրական գործունէութեան դրդիչ պատճառները: Խաչակիրք տեղափոխելով Եւրոպայից Ասիա բազմաթիւ ժողովուրդներ, բնական է որ մի նոր ճանապարհ պիտի բանային Արևմուտքի վաճառականութեան համար, որի ներկայացուցիչները նոյն խաչակրաց շնորհքով շուտով սկսան յարաբերութեան մէջ մտնել Պարսկաստանի, Թաթարստանի և Հնդկաստանի բնակիչների հետ. այս պատճառով պէտք է խոստովանել որ միջին դարերում Միջեր-

կրական ծովի վաճառականութիւնը իւր զարգացմամբը պարտական է ըստ մեծի մասին Խաչակրաց արշաւանքներին: Արդարև, քրիստոնէութեան առաջին դարերից արդէն սովորութիւն էր մտել քրիստոնեաների մէջ Սուրբ-Երկիրը ուխտագնացութիւններ յանձն առնել: Արևմտեան կայսերութեան գլխին եկած թշուառութիւնները, որ ե-րդ դարու վերջերից արդէն կերպարանափոխ արին նորա դրութիւնը, չընդհատեցին այդ բարեպաշտ սովորութիւնը: Ընդհակառակն, իրանք աշխարհակալները քրիստոնեայ դառնալով՝ Սուրբ-Երկիրը այցելելու սովորութիւնը ընդունեցին. նոցա յանդուգն ու բախտախնդիր բնաւորութիւնը գործունէութեան մի նոր առիթ էր գտնում այդ տեսակ ուխտագնացութիւնների մէջ: Շուտով բարեպաշտական եռանդը այս հեռաւոր ճանապարհորդութիւնների միակ նպատակը չեղաւ. և որովհետև Ասորոց երկիրն էր այն տեղը ուր առաւելապէս հանդիպում էին միմեանց ծովագնաց ուխտաւորները, կրօնական զգացմունքները կամաց կամաց միացան այնտեղ առևտրական շահերի հետ: Ուխտաւորները տանում էին Ասորոց երկիրը մի քանի եւրոպական արդիւնքներ, և բերում էին այնտեղից արևելեան ապրանքներ: Փիզ յետոյ, Արևմուտքի ծովեզերեայ քաղաքների վաճառականները հաստատեցին առևտրական տներ Ասորոց երկրի նաւահանգիստներում և Պաղեստինի մի քանի քաղաքներում:

Երբ Խաչակիրք հասան Ասորոց երկիրը, ծովագնաց վաճառականները, թէև ուղղակի կերպով չէին մասնակցել Սուրբ-Երկրի արշաւանքներին, այնու ամենայնիւ իրանց նաւերով մօտիկանց հետևում էին այլևայլ զօրաբաժիններին: Առաջին յաջողութեան համբաւն առին թէ չէ, նոքա շտապեցան պաշար ու զէնք հասցնել Ֆրանկներին, որոնք կարօտութեան մէջ էին ընկնում այնպիսի երկրում՝ ուր հունձքերը ոտնակոխ էին լինում միանգամայն թէ յաղթողներից և թէ յաղթուողներից: Իրանց մատուցած ծառայութեան փոխարէն նոքա բարձեցին իրանց նաւերը Ասորոց երկրի քաղաքներում դիպուած ասիական ապրանքներով, որ տանում էին Եւրոպա վաճառելու:

Այնուհետև սկսան սերտ յարաբերութիւններ եւրոպացի վաճառականների և Երուսաղէմի նոր թագաւորութեան մէջ: Ծովագնացները պարզ տեսնելով թէ ինչ մեծ կարևորութիւն է ստանալու վաճառականութիւնը, շինել տուին բազմաթիւ նաւեր, որոնցով տանում էին Սուրբ-Երկիրը մարդիկ, ձիաններ ու զէնքեր նորանոր արշաւանքների համար: Այս առաջին գործողութիւնը կատարելուց

յետոյ, որ մեծ շահերի աղբիւր էր նոցա համար, ծովագնաց վաճառականները վերադառնում էին Եւրոպա իրանց նաւերը բեռնաւորած ասիական ապրանքներով: Այս կերպով առևտրական յարաբերութիւնները հաստատուելուց յետոյ, արևմտեան վաճառականները մտածեցին արտօնութիւններ ձեռք բերել Խաչակիր իշխանների կողմից, որոնց շնորհքով հարաւային Եւրոպացի վաճառականութիւնը, քանի գնաց զարգացաւ և ահագին ընդարձակութիւն ստացաւ: Յայտնի է որ հնութեան դարերում Արևելքի վաճառականներն էին գնում նաւերով Արևմուտք՝ իրանց ճարտարութեան արդիւնքները փոխանակելու եւրոպական արդիւնքների հետ և այնտեղ առևտրական տներ ու գաղթականութիւններ հաստատելու համար: Իսկ միջին դարերում սորա հակառակն է պատահում. Արևմուտքը ուղարկում է իւր նաւերը Միջերկրականի ափերի վերայ գտնուած բոլոր նշանաւոր քաղաքները անհուն հարստութիւններ ժողովելու և յետոյ վաճառականութեան միջնորդութեամբ բոլոր Եւրոպա սփռելու համար:

Խաչակրաց առաջին և երկրորդ արշաւանքների միջոցում, այսինքն մօտ կէս դարու ժամանակամիջոցում, Արևմուտքի վաճառականութիւնը այնքան հաստատուել ու արմատացել էր Արևելքում, որ խաչակիր իշխանները, Ասորոց երկրին տէր դառնալուց յետոյ, ստիպուած գտնուեցան բազմաթիւ արտօնութիւններ շնորհելու Ջենովացոց, Վենետկեցոց, Պիզացոց, Մարսիլիացոց, և այլն: Մի մեծ յեղափոխութիւն ընկաւ Արևմուտքի ծովեղերեայ քաղաքների վաճառականութեան մէջ, որի ներկայացուցիչները թէ իրանց և թէ Արևելքի քրիստոնեայ տէրութիւնների համար անհուն հարստութիւնների աղբիւր բաց արին, որին յետոյ մասնակից պիտի լինէր և Կիլիկիայի Հայոց թագաւորութիւնը: Մինչև խաչակրաց արշաւանքները մի քանի ծովագնացներ թէև թոյլտուութիւն էին ստացել Ասորոց երկրի մի քանի նաւահանգստները մտնել, սակայն միշտ երկիւղի մէջ էին, որովհետև մի սուլթանի, մի էմիրի կամ մինչև անգամ մի պարզ քաղաքագլխի անձնական հաճոյքը կարող էր արգելք դնել նոցա վաճառականութեանը և արտաքսել նոցա. բայց շուտով խաչակիրք միջոց տուին նոցա հաստատուելու եւրոպական զէնքերով նուաճած երկրներում:

Բ.

Ռուբինեանց թագաւորութիւնը, որ իր կազմութեամբը սերտ կապակցութիւն և մեծ նմանութիւն ունէր Ասորոց երկրումը հաս-

տատուած Փրանկների տէրութիւնների հետ, չէր կարող ազատ մնալ արևմտեան ծովագնացների ազդեցութիւնից: Ռուբինեան տան առաջին պսակաւոր թագաւորը՝ Լևոն Բ. և նորա յաջորդները Երուսաղեմի, Անտիոքի և Կիպրոսի թագաւորների օրինակին հետևելով՝ մեծ արտօնութիւններ շնորհեցին նոյն հարաւային Եւրոպայի վաճառականներին: Ցիշատակարանները ցոյց են տալիս արդարև, որ ԺԴ-րդ դարու սկզբներից արդէն Ջենովացիք և Վենետիկեցիք ստացան իրանց առաջին առևտրական առանձնաշնորհութիւնները: Բայց ԺԴ-րդ դարում մանաւանդ, երբ վաճառականութիւնը մեծ ընդարձակութիւն էր ստացել Հայաստանում, տեսնում ենք որ բոլոր ծովագնաց ժողովրդները ստանում են առաւել կամ պակաս ընդարձակ արտօնութիւններ: Բաւական է յիշել Պիզացոց, Ֆլորենցեան սեղանաւորների, Սիկիլիացոց, Կատալանցոց, Պրովանսացոց, Ֆլամանդացոց, Կրէտացոց, Կիպրացոց և մինչև Եգիպտացոց ու Թուրքաց անունները, որ մի ճիշտ գաղափար կազմենք այն յառաջադիմութեան մասին որ վաճառականութիւնը արել էր Հայաստանում նոյն իսկ այն դարում, որի վերջին տարիներում Կիլիկիայի թագաւորութիւնը խորտակուեցաւ Մահմէտականների հարուածների տակ:

Բացի վերևը յիշուած ժողովրդներից, կային նմանապէս ուրիշ արևմտեան քաղաքներ, որ առևտրական յարաբերութեան մէջ էին Կիլիկիայի հետ. բայց որովհետև նոքա այնքան կարևորութիւն չունէին և առանձին արտօնութիւններ չէին ստացել, այլ միայն ժամանակաւորապէս բնակելու և առուտուրով պարապելու թոյլտուութիւն, այս պատճառով նոքա գտնվում էին վերոյիշեալ ազգերի բայլերի (պայլ) կամ հիւպատոսների պաշտպանութեան ներքոյ:

Եւրոպայի ծովեզերեայ քաղաքների վաճառականները իւրեանց ստացած արտօնութիւնների զօրութեամբ՝ ապրանքների մեծ մասի համար սովորական մաքսից պակաս էին հատուցանում հայ մաքսատներին, իսկ մի քանի դէպքերում կատարեալ ազատութիւն էին վայելում իրանց ապրանքները առանց մաքսի ներս բերելու և արտահանելու: Բացի սորանից նոքա սովորական դէպքերում չէին ենթարկվում հայկական դատարաններին, այլ իրանց ազգից նշանակուած դատաւորներին, այնպէս որ համարեա անկախ գաղթականութիւններ էին կազմում հայկական տէրութեան մէջ: Նոքա ունէին իրանց սեպհական թաղերը, եկեղեցիքը, բաղնիսները, խանութները, հրապա-

բակները, վաճառականները և դատարանները, ուր իրանց ազգակից դատաւորները քննում էին նոցա վէճերը և պաշտպանում էին նոցա հայ պաշտօնեաների անիրաւութիւնների դէմ:

Յայտնի չէ որոշ կերպով, թէ երբ սկսան իտալական երկու մեծ հասարակապետութիւնների առաջին յարաբերութիւնները Կիլիկիայի իշխանաւորների հետ: Լեւոն Բ-ի 1201-ին Ջենովացոց ու Վենետկեցոց շնորհած առաջին արտօնագրերը ըստ ինքեան ապացուցանում են, թէ սոքա վաղուց արդէն մտել էին առևտրական յարաբերութիւնների մէջ Հայոց հետ, միայն մինչև այն ժամանակ առանձին իրաւունքներ չէին վայելում: Հաւանական է որ Լեւոն Բ-ի նախորդների օրով, Հայոց և Ցունաց մէջ եղած անընդհատ կռիւների պատճառով, Իտալիայի ծովեզերեայ քաղաքների վաճառականները հարկաւոր չհամարեցին արտօնութիւններ խնդրել իրանց առուտուրի համար Ռուբինեան առաջին իշխաններից և թէ նոքա վայելում էին այն բոլոր իրաւունքները, արտօնութիւնն ու ազատութիւնները, որ շնորհել էին նոցա Բիւզանդիայի կայսերները կայսերութեան բոլոր նահանգներում, մանաւանդ որ մինչև Լեւոն Բ-ի թագաւորութիւնը կարելի էր կարծել որ Կիլիկիան դեռ ևս Ցունաց կայսերութեան մասն էր կազմում, որովհետև այս իշխանի թագդնելովը միայն Հայոց նոր հայրենեաց անկախութիւնը ճանաչուեցաւ Բիւզանդիայի կայսրներից: Կարելի է իրաւամբ կարծել որ Լեւոն Բ-ի յաջորդները, որ շատ քիչ յոյս ունէին հարկաւոր դէպքում օգնութիւն ստանալու Իտալացիներից, չկամեցան շնորհել նոցա այնպիսի իրաւունքներ, որ նոքա վայելում էին Ասորոց երկրումը, ոչ էլ թողնել այն իրաւունքները, որ նոքա բռնի խլել էին Կոստանդնուպօլսի կայսրներից: Ասածիս ապացոյց կարող են լինել այն դաշնադրութիւնները, որ Իտալացիք կապեցին Ռուբինեան թագաւորների հետ, որոնց մէջ հետքն անգամ չէ երևում այն ընդարձակ արտօնութիւնների՝ որ նոքա ստացել էին Ասորոց երկրում և Ցունաստանում:

Ուրքան խաչակիր իշխանների զօրութիւնը նուազում էր Արևելքում, այնքան աւելի աճում էր Մահմէտականների ոյժը. ահա այն ժամանակ Հայոց թագաւորները ստիպուած գտնուեցան ընդարձակ արտօնութիւններ շնորհելու իտալացի վաճառականներին, որոնք հեռանալով կամաց կամաց Ասորոց երկրից՝ եկան հաստատուեցան Կիլիկիայի նաւահանգիստներումն ու քաղաքներումը: Վերջին Ռուբինեանց ժամանակ արևմտեան վաճառականներին տրուած արտօ-

նութիւնները աւելի ևս ընդարձակուեցան, որովհետև Հայերը հարկաւորութիւն էին զգում օտարականների օգնութեանը դիմել Մահմետականների դէմ մաքառելու համար։ Այսպէս ուրեմն, Հայաստանի քաղաքականութիւնը օտարականների վերաբերութեամբ կարող է հետևեալ կերպով ամփոփուիլ. երբ Կիլիկիայի թագաւորները կարիք չունէին արևմտեան ժողովրդների օգնութեանը դիմել, պաշտպանուած զոլով իրանց լեռներով և ամուր քաղաքների պարսպներով, նոցա տուած արտօնութիւնները շատ սահմանափակ էին. իսկ երբ տկարացան և ամէն կողմից անօգնական մնացին, Իտալացոց տրուած իրաւունքները զգալի կերպով աւելացան։ Հրովարտակները և արտօնագրերը ասածիս կենդանի վկայ կարող են լինել։ Դժբախտաբար քրիստոնեայ թագաւորութիւնները Արևելքում տեղի տալով Մահմէտականների զօրութեանը, Հայաստանն էլ պիտի ընկնէր այն հորձանքի մէջ, որ քշեց Ասիայից Խաչի անունով Արևմուտքից եկած բոլոր ժողովրդները։

Գ.

Ջենովացիք Արևմուտքի առաջին ծովագնացներն էին որ պաշտօնական յարաբերութիւնների մէջ մտան Հայաստանի արքունեաց հետ։ 1201-ին Նիկողայոս Դօրիա՝ Ջենովական նաւատորմիղի ծովապետը և Բօդուան դը Բոջերիօ՝ Հատարակապետութեան դեսպանը՝ ստացան Լևոն Բ-ից մի առևտրական արտօնութիւն և մի թոյլտուութիւն, որով իրաւունք էր տրվում Կիլիկիայում հաստատուած Ջենովացոց պարապել վաճառականութեամբ, բերելով Կիլիկիա եւրոպական ճարտարութեան ապրանքներ և արտահանելով տեղական արդիւնքները, կառուցանել Սիս մայրաքաղաքում մի եկեղեցի, մի դատարան և տներ այն գետնի վերայ, որ թագաւորը պարգևեց նոցա։ Մի և նոյն ժամանակ Լևոնը ընծայեց նոցա երկու ուրիշ գետիններ Մամեստիա և Տարսոն քաղաքներում՝ նոյնպէս եկեղեցի, դատարան և տներ կառուցանելու թոյլտուութեամբ։ Մի քանի տարի յետոյ, այն է 1215-ին, Լևոնը նորոգեց Ջենովացոց արտօնութիւնները և թագաւորը որ լաւ էր հասկանում թէ ինչ մեծ օգուտ է քաղում տէրութեան գանձարանը այն առուտուրից, որ օտարականները անում էին իւր երկրի մէջ, մի նոր հրովարտակով պարգևեց նոցա մի փողոց Տարսոնում և մի կտոր գետին, որպէս զի կառուցանեն իրանց համար եկեղեցի, բաղնիս, փուռն և մի պարտէզ շինեն զանազան

բոյսեր մշակելու նպատակով։ Յաջորդ տարին Ջենովացիք Հայոց Թագաւորի միջնորդութեամբ մի արտօնագիր ստացան նորա ազգական Անտիոքի իշխան Բայմոնդ-Ռուբէնից, որով աղատ էին մնում մի քանի հարկեր վճարելուց իւր տէրութեան մէջ։

Երևում է որ Լևոնի յաջորդների և մանաւանդ Հեթում Բ-ի և նորա եղբայրների օրով տեղի ունեցած ներքին և արտաքին պատերազմների պատճառով Ջենովացոց վաճառականութիւնը կորցրեց իր առաջուայ գործունէութիւնը։ Սակայն Ջենովացիք, որ այդ միջոցում զօրաւոր էին ծովի վերայ, կարող էին հեշտութեամբ ձեռք բերել Արևելքի մենավաճառութիւնը։ Մեզ յայտնի է Հեթում պատմիչի մէկ վկայութիւնից՝ որ 1293-ին տասներկու Ջենովական ցեղանաւ պատերազմեցան Այասում երեսուներկու վենետկեան ցեղանաւի դէմ և քսանուչորս նաւ խլեցին նոցանից։ Բայց այս փառքը երկար չտևեց. Ջենովացոց ծովային զօրութիւնը, ինչպէս որ կարելի է նշմարել իտալական ժամանակագրութիւններից, այն ժամանակներից սկսաւ նուազել։ Արդարև, ԺԴ-րդ դարուց արդէն Վենետկեցոց և Պիզացոց վաճառականութիւնը մեծ ընդարձակութիւն ստացաւ Հայաստանում, և յիշատակարանները լռում են Ջենովայի հասարակապետութեան յարաբերութիւնների վերայ Հայոց Թագաւորների հետ։ Սակայն այդ յարաբերութիւնները բոլորովին ընդհատուած չէին, որովհետև Պեգոլոտտին հաստատում է, որ իւր օրով, այսինքն Լևոն Ե-ի Թագաւորութեան վերջին տարիներում, Ջենովացիք, Վենետկեցոց պէս, Հայոց Թագաւորներից ստացած արտօնութիւնների շնորհքով, աղատ էին բերելու և արտահանելու իրանց ապրանքները առանց որևէ մաքս վճարելու։

Ջենովացիք առաջին վաճառական ժողովուրդը լինելով որ արտօնութիւններ է ստացել Հայաստանում, նոցա անունը տրվում էր սովորաբար բոլոր արևմտեան ժողովուրդներին՝ որ գալիս էին Արևելքի վաճառականութեան համար։ Ներկայումս անգամ փոքր Ասիայի, Ասորոց երկրի և առհասարակ բոլոր այն երկրների ժողովրդները, ուր Ջենովական նաւերը խարիսխ էին ձգում երբեմն, սովորութիւն ունին Չինիվիզ քալէսի, այսինքն Ջենովական բերդեր անուանել բոլոր գինուորական բերդերն ու ամրոցները, որ խաչակրաց արշաւանքների միջոցում կաղմուած տէրութիւններից էին կառուցուել։

Թէպէտ Վենետկեցիք Ռուբինեան Թագաւորներից ընդունած

բազմաթիւ արտօնութիւնների պատճառով՝ երկար ժամանակ կարծես իրանց ձեռքին ունէին Կիլիկիայի մենավաճառութիւնը, սակայն ինչպէս երևում է՝ նոցա ստացած կալուածական պարգևները այնքան նշանաւոր չէին՝ որքան Լևոն Բ-ի ջենովացոց շնորհած տեղերը: Այս վերջինները Հայոց հետ մանր առուտուրով էին պարապում, այս պատճառով նոքա ամբողջ թաղեր և խանութներ ունէին Կիլիկիայի գլխաւոր քաղաքներում, այսինքն Սիսում, Մամեստիայում, Կորիկոսում և Տարսոնում, այն ինչ վենետկեցիք մեծ վաճառականութեամբ էին պարապում Արևելքի հետ, և իրանց պահանջած արտօնութիւնները միայն Այասու համար էին, որ Հնդկաստանի ու Պարսկաստանի վաճառականութեան գլխաւոր շտեմարանն էր:

1201-ին վենետկեցիք, ջենովացոց պէս, ստացել էին Մամեստիա քաղաքում մի գետին՝ տներ շինելու համար. բայց ինչպէս երևում է, Լևոն Գ-ի օրերից արդէն թողին հեռացան այդ քաղաքից, որովհետև երբ 1271-ին այս թագաւորից նոր արտօնութիւններ խնդրեցին և Լևոն Բ-ի ու Հեթում Ա-ի արտօնագրերի վերահաստատութիւնը, խօսք անգամ չէ լինում նոցա Մամեստիայում ունեցած կալուածների վերայ, այն ինչ տեսնում ենք որ նոքա խնդրում և ստանում են մի եկեղեցի և մի գետին Այասում: Արդէն Հեթում Ա-ի թագաւորութեան ժամանակ նոքա ստացել էին տներ այդ քաղաքում: Թորոս, Լևոն Դ և Լևոն Ե նորոգեցին այդ արտօնութիւնը: Կիլիկիան, ինչպէս որ կարելի է հեշտութեամբ համոզուել, վենետկեցոց համար մի ժամանակաւոր օթևան էր, ուր ունէին միայն իրանց շտեմարանները, գլխաւորապէս Այաս քաղաքում. իսկ ջենովացոց համար Հայաստանը մի գաղթականութեան երկիր էր, ուր հասարակապետութեան վաճառականները ունէին իրանց առևտրական տները, որոնց մէջ ժողովում էին փոքր Ասիայի արդիւնքները, և նոցա փոխանակ ցրվում էին արևմտեան ճարտարութեան արդիւնքները:

Բացի այն դիւրութիւններից, որ Հայոց թագաւորները տուել էին ջենովացոց ու վենետկեցոց իրանց վաճառականութեան համար, սոքա ժամանակ անցնելուց յետոյ՝ իրաւունք ստացան պարապելու այգեգործութեան, բամբակի, ճիթենու ու թթենու մշակութեան և այդ մշակութիւնից արտադրած բերքերը վաճառելու երկրի մէջ: Ջենովացիք մանաւանդ անձնատուր էին եղել այդ աեսակ

պարապմունքների, որ մեծ օգուտներ էին բերում նոցա։ Վենետկեցիք իրանց կողմից հիմնել էին հիւրանոցներ, պանդոկներ, կաշու, կտաւի և երկաթի գործարաններ։ Բացի սորանից նոքա ոսկու և արծաթի առուտուր ունէին, ինչպէս որ ցոյց են տալիս արքայական արտօնութիւնները։

Մինչև հիմայ ասածներից պարզ երևում է որ Ջենովացոց և Վենետկեցոց վաճառականութեան մէջ մեծ տարբերութիւն կար։ Ջենովացիք պարապում էին մանր առուտուրներով Կիլիկիայի գլխաւոր քաղաքներում, ինչպէս են՝ Սիս, Տարսոն, Մամեստիա և Այաս, ուր նոքա ունէին առևտրական սենեակներ։ Ջենովացի վաճառականները բերում էին այդ քաղաքները գինի, ձէթ, հացհատիկներ, կերպասներ և արտահանում էին կտաւեղէններ, համեմներ և այլն։ Ընդհակառակն, Վենետկեցիք աւելի մեծ առուտուրով էին պարապում, և թողել էին իրանց Տարսոնի և Սիսի առևտրական սենեակները Այասում հաստատուելու համար, ուր նոքա մի բազմամարդ ու ծաղկած թաղ ունէին։ Այս նաւահանգիստը նոցա բոլոր գործողութիւնների կենտրոնն էր. և այն աեղից, ինչպէս և Վենետկից, նոքա օգուտ էին քաղում Միջերկրականի ափերի վերայ գտնուած քաղաքների հարստութիւնից և Արևելքի բարութիւններից։ Իսկ Ջենովացիք հաստատուելով Ցունաստանի քաղաքներում և Սև ծովի նաւահանգիստներում, ոչնչացրել էին նոյն տեղերի Վենետկեցոց վաճառականութիւնը։ Երկու վաճառական հասարակապետութիւնները անդադար հակառակութեան մէջ գտնուելով միմեանց հետ, կարծես համաձայնել էին իրար մէջ բաժանել էին աշխարհը։ Ջենովան Սև ծովի և Աբքիպելագոսի տէր էր դարձել. իսկ Վենետկին Միջերկրական ծովն էր մասն ընկել։ Ուրեմն Ջենովացոց վաճառականութիւնը շատ ծաղկած չէր Կիլիկիայում, ուր Վենետկեցիք իշխում էին իրանց ազդեցութեամբ, և յիրաւի, տեսնում ենք որ ԺԳ-րդ դարու վերջերից նոքա այլ ևս արտօնութիւնների ետևից չեն լինում, մինչդեռ Վենետկեցիք Լևոն Ե-ի թագաւորութեան վերջին տարիներում, այսինքն ԺԴ-րդ դարու կէսին, դեռ արտօնաթղթեր են ստանում Հայոց թագաւորներից։

Ջենովացիներից ու Վենետկեցիներից յետոյ ուշադրութեան արժանի են Պիզացիք, որոնք թէև մեծ արտօնութիւններ չէին վայելում Հայոց թագաւորների կողմից, բայց մի և նոյն ժամանակ շատ էին յաճախում Կիլիկիա, և միայն ժամանակաւոր յարաբերու-

թիւններ ունէին Հայոց հետ։ Այսու ամենայնիւ նոքա ունէին իրանց ներկայացուցիչները Հայոց երկրում, և մինչև անգամ մի հիւպատոս իրանց շահերի պաշտպանութեան համար։ Պեգոլոտտին ասում է՝ թէ Պիզացիք ստացել էին մի քանի դիւրութիւններ իրանց ազգակիցների համար, որոնք Կիլիկիա բերած և այնտեղից հանած ապրանքների համար հարիւրին երկու էին վճարում։

Սիկիլիացիք չունեցան երբէք հաստատ հիմնարկութիւններ Կիլիկիայում, և միայն Լևոն Ե-ի թագաւորութեան օրերից այդ երկրի վաճառականները առանձին ուշադրութիւն դարձրին Կիլիկիայի վերայ. այս բանիս առիթ տուաւ Հայոց թագաւորի ամուսնութիւնը Սիկիլիայի Ֆրիդրիկոս Բ թագաւորի դստեր հետ։ Սկզբումը Սիկիլիացիք բաւական ծանր մաքսեր վճարելու ենթարկուած էին, որոնցից միայն 1330-ին փոքր ինչ թեթևացան։ Այսպէս, յայտնի է Պեգոլոտտիի խօսքերից, որ առանձին արտօնութիւններ չընվայելող ժողովրդները իրանց ներս բերած ու դուրս տարած ապրանքների համար հարիւրին չորս մաքս էին վճարում։ Լևոն Ե որոշեց Սիկիլիացիներից հարիւրին երկու առնել, որի վերայ աւելանում էր հարիւրին մէկ միջնորդութեան համար կամ, ինչպէս հրովարտակը ասում է, սամսարչէք. բացի սորանից, թագաւորը միւս օտարականների պէս նոցա էլ իւր պաշտպանութեան ներքոյ առաւ։ Սակայն նա որոշեց որ իրանց մէջ յարուցուած վէճերի կամ գործած յանցանքների համար՝ Հայաստանում բնակող Սիկիլիացի հպատակները պիտի ենթարկուին արքայական դատարաններին։ Այս պայմանը ցոյց է տալիս որ Սիկիլիացիք հաստատ բնակութիւն չունէին Կիլիկիայում, և թէ նոցա կառավարութիւնը հիւպատոսներ չէր պահում այնտեղ։ Արտօնագրի մէջ որոշվում էր նոյնպէս՝ որ Սիկիլիացու պատճառած վնասները Հայոց տէրութեան կամ մասնաւոր անձերի, պիտի քննուէին արքայական բարձր դատարանում, և եթէ յանցաւորը բացակայ լինէր կամ անկարող վճարելու, երկրում գտնուած Սիկիլիացիք պարտաւոր էին հատուցանելու գանգատաւորների վնասները։

Ֆլորենցիայի Բարդի ասած առևտրական ընկերութիւնը, որ իւր սենեակները ունէր Միջերկրականի գլխաւոր քաղաքներում, 1335-ին ստացաւ նոյն Լևոն Ե-ից մի արտօնագրութիւն, որի զօրութեամբ ընկերութեան նաւերով Կիլիկիա բերուած և այնտեղից հանուած ապրանքները ամեն տեսակ մաքսից ազատ էին։ Այս առանձնաշնորհութիւնը մեկնվում է այն հանգամանքով՝ որ ընկերու-

թիւնը Լեւոնին մի մեծ գումար փոխ էր տուել այնպիսի ժամանակ, երբ արքայական գանձարանը սպառուել էր Մահմէտականների դէմ տուած պատերազմների և վճարած հարկերի պատճառով:

Ֆրանսիայի այժմեան Պրովանս նահանգի առևտրական յարաբերութիւնները Հայոց հետ հաստատվում են պատմական յիշատակարաններով: Պեգոլոտտին յիշում է թէ Նիմի և Մօնպէլիէի բնակիչները մեծ առուտուր ունէին Կիլիկեցոց հետ, և Սանուտօն պրովանսական անուանում Կիլիկիայի նաւահանգիստներից մինը (portus provensalium), ուր աւելի յաճախում էին Պրովանսի նաւերը: Մօնպէլիէի վաճառականները 1314-ին մի արտօնութիւն ստացան Օշին թագաւորից, որով հարիւրին չորսից երկուսի էր իջեցնում նոցա վճարելիք հարկը Այասու մաքսատանը:

Կատալանցիք, որոնց նաւերը ծածկում էին Միջերկական ծովը միջին դարերում, գալիս էին նոյնպէս Կիլիկիա: 1293-ին, Յակոբ Բ Արագոնի թագաւորը իւր դեսպանի միջնորդութեամբ խնդրել էր նախ՝ պակասեցնել իւր հպատակների համար Հայաստանի մաքսատան հարկը, երկրորդ, թոյլ տալ առևտրական սենեակ հաստատել Կիլիկիայում և վերջապէս առանց մաքսի դուրս բերել երկրից չծախուած ապրանքները: Արագոնի դիւանատան յիշատակարանները ցոյց են տալիս որ Կատալանցիք ունէին իրանց հիւպատոսները Կիլիկիայում:

Այասը Կիլիկիայի միակ նաւահանգիստը չէր· պատմական յիշատակարանները ուրիշ շատ տեղերի անուններ են տալիս, ուր արևմտեան ազգերի նաւերը խարիսխ էին ձգում: Բացի Կորիկոսի, Զաֆրայի, Մերսինէի, Կանամէլլայի նաւահանգիստներից, կային ուրիշներն էլ որ կրում էին նոյն վաճառական ժողովրդների անունները· այսպէս են՝ Կիպրացոց, Ջենովացոց, Պրովանսացոց և Լանգոբարդացոց նաւահանգիստները:

Դ·

Վերևը տեսանք որ Այասը և Կիլիկիայի միւս նաւահանգիստները արևմտեան վաճառականներին չէին ծառայում միայն ժամանակաւորապէս խարիսխ ձգելու և շտեմարաններ պահելու բերած և երկրից հանած ապրանքների համար, այլ մի և նոյն ժամանակ մեծ առուտուր ունէին հայ վաճառականների հետ: Այժմ տեսնենք թէ ինչ արդիւնքներ էին բերում նոքա Հայաստան: Արդէն ասացինք որ Ջենովացիք առաւելապէս մանր առուտուրով էին պարապում, որի գլխաւոր տեսակները յիշվում են Լեւոն Գ-ի 1288-ին նոցա շնորհած

արտօնութեան մէջ։ Ջենովացիք բերում էին Կիլիկիա ցորեն, գարի, գինի, ձէթ, մետաքս, եւրոպական զործարանների կտաւեղէններ և մահուդներ, գոյնզգոյն մետաքսեայ հագուստներ, համեմներ, լեղակ, դեղօրայք, կոճապղպեղ, բամբակ, շաքարաւազ, սնդիկ, բուստ, ա-նագ, պղինձ, թանգագին մետաղներ, սապոն և զէնքեր։ Սոքա էին առաջին հարկաւորութեան պիտոյքները որ Արևմուտքը մատակա-րարում էր Կիլիկիային։ 1295-ին մի մարսիլեացի վաճառականի տրուած վկայագրից երևում է որ մի քանի ֆրանսիական ճարտարութեան արդիւնքներ էլ մտնում էին Կիլիկիա, այն է՝ փարիզի գօտիներ, դա-նակներ, հայելիք, կերոններ, և այլն։

Հայոց և Կիլիկիայի ուրիշ բնիկների, այն է Յունաց և Ասորոց վաճառականութիւնը կայանում էր տեղական արդիւնքների և մի քանի օտար ապրանքների ծախուածքում, որոնք կամ Հնդկաստանի և Պարսկաստանի կարաւաններով էին բերվում և կամ արևմտեան վա-ճառականների նաւերով։ Լևոն Գ-ի վերև յիշուած արտօնագիրը ցոյց է տալիս հայկական վաճառականութեան գլխաւոր աղբիւրները, նախ գերեվաճառութիւնը, որ մի քանի պայմանների էր ենթարկ-վում, յետոյ ջորիների, եզների, ոչխարների, կաշիների, հաւերի և ձուաների առուտուրը։ Հայերը փայտի առուտուր էլ էին անում, որ կտրում էին Տաւրոսի անտառներից, և մետաղների առուտուրը՝ որ հանում էին նոյն լերան հանքերից. վերջապէս աղի, հացային և իւղային հատիկների ու բամբակի առուտուրը։ Շատ Հայեր պարա-պում էին թթենու մշակութեամբ և շերամապահութեամբ։ Բայց նոցա ապրուստի գլխաւոր աղբիւրներից մինն էլ էր արևմտեան ապրանք-ները Արևելքի խորերը տարածելը։ Գործունեայ, աշխատասէր և խելացի մարդիկ լինելով՝ նոքա յանձնառու էին լինում Եւրոպացոց հաշուին տանելու կարաւաններով Արևմուտքի բերքերը մինչև Պարս-կաստան և Թաթարստանի ու Հնդկաստանի սահմանները։

Եւրոպացոց Կիլիկիայի հետ ունեցած ընդարձակ վաճառակա-նութեան և նոյն երկրի նաւահանգիստներում արգելուած ապրանք-ների հարկեր մտցնելու դիւրութեան պատճառով, հարկաւոր հա-մարուեցաւ վաղ ժամանակներից մաքսատներ և զանազան վերա-հայեցողութեան իջևաններ սահմանել Կիլիկիայի ծովեզերեայ տեղե-րում և կրճերի ու գետերի անցքերում։ Հայաստանի մաքսատները, ինչպէս և ուրիշ երկրներում, մի ապահովութեան միջոց էին տէ-րութեան համար, որոնցով արգելվում էր արտահանել այն բերքերը

որ միայն երկրի բնակիչների պիտոյքը կարող էին լցուցանել, և միևնոյն ժամանակ մի եկամուտի աղբիւր թագաւորական գանձարանի համար, ուր գնում էին օտար ապրանքների համար առնուած մաքսերը, որոնք անհրաժեշտ հարկաւոր չէին երկրի համար: Օտարականները վաճառում էին անվտիր ներս բերած և դուրս տարած ապրանքների համար՝ հարիւրին չորս. սակայն, ինչպէս արդէն տեսանք, Ջենովացիք, Վենետկեցիք և վերջերը նաև Սիկիլիացիք հարիւրին միայն մէկ էին վճարում: Ուրիշները, ինչպէս են Պրովանսացիք, Կատալանցիք, Պիզացիք և Ֆլորէնցիան Պերոցցի ընկերութիւնը հարիւրին երկու էին հատուցանում: Բացի այս հաստատուն հարկից որ իւրաքանչիւր ազգ, Հայոց թագաւորներից ստացած արտօնութիւնների համեմատ, աւելի կամ պակաս պիտի հատուցանէր, կար մի ուրիշ հարկ էլ որ եւրոպացի վաճառականները պիտի վճարէին մի կարգի ներս բերած ապրանքների համար. այսպէս գինու, ձէթի, կենդանիների, փայտի, երկաթի, մուշտակների, կաշիների, բրդերի և մահուդի համար նոքա վճարում էին մի հարկ, որ բարձվում էր հաստատուն հարկի վերայ:

Հրովարտակների մէջ յիշուած հարկերը բազմաթիւ են և Հայաստանի մաքսատունը մեծ օգուտներ էր քաղում արևմտեան ազգերի վաճառականութիւնից: Ահա գլխաւոր հարկերը որ թագաւորական պաշտօնեաները առնում էին օտարականներից. 1) հարկ ձողաձև ոսկուց ու արծաթից և թանգագին նիւթերից. 2) հարկ միջնորդութեան համար կամ «սամարչէք». 3) երկդրամեան հարկ իւրաքանչիւր խարիսխ ձգող նաւից. 4) հարկ մնդուկներ, հակեր և ճանապարհորդների իրեղէնները գնելու համար. 5) հարկ կրծերը ու կամուրջները անցնելու համար. 6) հարկ պանդոկապետների վերայ, որ իւրաքանչիւր շաբաթ առնվում էր. 7) հարկ մուշտակագործների և կաշիների վերայ. 8) հարկ հակերով բերուած մահուդները չափելու համար. 9) հարկ երաշխաւորութեան՝ պարտքի համար բանտարկուածների պատճառով:

Մաքսատան գլխաւոր բաժինները գտնվում էին Տարսոն և Այաս քաղաքներում, և նոցա կառավարութիւնը յանձնուած էր մի իշխանի՝ պրոքսիմոսի կամ թագաւորական գանձապետի վերահսկողութեան ներքոյ: Բացի այս թագաւորական մաքսատներից կային և մասնաւոր մաքսատներ այն իշխանների կալուածների վերայ, ուր որ գտնվում էր մի կիրճ կամ մի կամուրջ. այսպէս են Կորիկոսի, Կուկլակի, Կա-

պանու և կամարի մաքսատները։ Այս ֆէօդալական մաքսատները ժամանակաւոր էին օտարների համար, որովհետև մենք գիտենք Լևոն Բ-ի մէկ արտօնագրից, որ նոքա պիտի վերանային, երբ մի որևիցէ անժառանգ ֆէօդալ իշխանի մահից յետոյ նորա կալուածները օրէնքի զօրութեամբ թագաւորին վերադառնային։

Ե.

Եթէ Արևելքի վաճառականութիւնը քրիստոնէական թագաւորութիւնների կործանուելուց յետոյ կիսով չափ կորցրել էր իւր նշանակութիւնը, ինչպէս որ ասում է Վիլլանի իտալացին, կարելի է ստուգութեամբ ասել որ Կիլիկիայի վաճառականութիւնը ԺԵ-րդ դարու սկզբից արդէն բոլորովին ոչընչացաւ։ Այասու նաւահանգիստը, որ այնպէս ծաղկած էր Ռուբինեան թագաւորների օրով, Կիլիկիայի նուաճման ժամանակ կործանուել էր. օտարազգի վաճառականները թողել հեռացել էին իրանց տներից, ուր նոքա չէին կարող այլ ևս ապահովութեան մէջ ապրել. վաճառականութիւնը բարձի թողի արած էր, և այն երկիրը որ երբեմն այնքան բազմամարդ և լաւ մշակուած էր, մի ընդարձակ անապատի կերպարանք էր ստացել։ Հարկ էր չորս դար սպասել որ Կիլիկիան բացուած տեսնէր իւր համար մի նոր առևտրական հորիզոնի արշալոյս։ Այս դարու առաջին տարիներից Միջերկրականի ծովեզերայ տեղերը սկսան դարձեալ մատչելի լինել Եւրոպացոց։ Քսան տարու չափ կայ որ գործունեայ վաճառականներ հաստատուեցան Կիլիկիայում, և մասնաւորապէս Մերսինէ քաղաքում, որ նշանակուած է Այասու նաւահանգստի դերը խաղալու։ Իւրաքանչիւր տարի Կիլիկիայ մտնում են մեծ քանակութեամբ եւրոպական ճարտարութեան արդիւնքներ և ուրիշ ապրանքներ առօրեայ պիտոյքի համար, ինչպէս են բրինձ, սուրճ և սապոն։ Բնիկները, որ են Հայք, Յոյնք, Տաճիկներ և Արաբներ, ծախում են Եւրոպացոց իւրեանց մշակութեան արդիւնքները՝ ցորեն, գարի, կնճիթ, բամբակ, վուշ, ծխախոտ, բուրդ, մոմ, սերմեր ներկի և դեղերի համար, շինութեան փայտեր և տզրուկներ։

Հայերը որ բազմաթիւ են Կիլիկիայում՝ պարապում են զլխաւորապէս երկրագործութեամբ. շատ քիչ մարդիկ խանութի առուտուրներին քաղաքներում։ Ուսում ունեցող մարդիկ տէրութեան պաշտօնի մէջ են՝ կամ մաքսատներում և կամ փաշայի մօտ։ Օտար ազգի վաճառականների գործունէութիւնը վերջին ժամանակներումն մեծ ընդարձակութիւն ստացաւ։ Մերսինէն, որ 1850 ին թիւրքմէնների մի խեղճ

զիւղէր, այսօր մի նշանաւոր վաճառատեղի է և ձգտումէ իւրաքանչիւր տարի զարգանալու: Այնտեղ են բնակում եւրոպական տէրութիւնների հիւպատոսները, որոնց վերայ մնում է մի քանի խօսք ասել:

Եւրոպական ազգերի Արևելք հիւպատոսներ ուղարկելու սովորութիւնը խաչակրաց ժամանակներից մնաց: Իտալիայի վաճառական հասարակապետութիւնները և առ. հասարակ Արևմուտքի ծովագնաց ժողովրդները ուղարկում էին իրանց ներկայացուցիչներին նշանաւոր նաւահանգիստները, որոնց պարտքն էր պաշտպանել այն ազգակիցներին՝ որոնք վաճառականութեան պատճառով օտար երկնքի տակ էին գտնվում: Խալիլ բէն-Շահին անունով արաբացի պատմագիրը ասում է. թէ հիւպատոսները միևնոյն ժամանակ թէ դատաւորներ էին և թէ քաղաքական գործակատարներ: «Աղէքսանդրիայում, ասում է նա, պատանդի պէս կան հիւպատոսներ, այսինքն մեծ իշխաններ ֆրանկների զանազան ազգութիւններից: Եթէ նոցանից մէկի ազգը մի որևիցէ վնասակար բան գործէ Իսլամի հակառակ, նորա հիւպատոսից հաշիւ են պահանջում, որ իւր ազգակիցների համար պատասխանատու է»: Առաջին հիւպատոսութիւնները Արևելքում սահմանուեցան Ջենովացիներից և Վենետկեցիներից: 1201-ին Ջենովացիք և Վենետկեցիք Հայոց Թագաւորից իրաւունք էին ստացել դատուելու իրանց ազգի անդամներից կազմուած դատարաններում: Սակայն մինչև 1271 արևմտեան ժողովրդները հիւպատոսներ չունեցան Հայաստանում բառի իսկական նշանակութեամբ, որովհետև մենք տեսնում ենք 1245-ին շնորհուած մի արտօնագրից, որ Վենետկեցիք ունէին Ակր քաղաքում մի հիւպատոս, որ պարապում էր իւր ազգակիցների գործով Հայաստանում: Այս հիւպատոսը ունէր մի գործակատար Այասում, որ պաշտօնական անձն չէր: 1271 ին Վենետկեցիք ուղղակի Այաս նշանակեցին մի դեսպան, որ Կիլիկիայում հաստատուած Վենետկեցոց դատը տեսնում և պահում էր իւր մօտ անկտակ մեռած ազգակիցների ստացուածքը, մինչև որ Վենետկի դուքսը մի կարգադրութիւն անէր: 1288-ին Ջենովացիք ունէին մի հիւպատոս Այասում, որին Լևոն Գ.-ի արտոնագիրը անուանում է «դունց», աղաւաղութիւն լատինական «consul» բառի: Այս հիւպատոսը ունէր իւր օգնականները — «մարդկուք», որոնք իբրև գաղթականութեան ներկայացուցիչներ կանչուած էին հիւպատոսի խորհրդներին մասնակից լինելու: Միւս վաճառական

ժողովրդներից կատալանցիք և Պեզացիք միայն ԺԳ-րդ դարու սկզբում ստացան իրենց հիւպատոսները։

Հիւպատոսութեան հիմնարկութիւնը թէ և շատ հին է Կիլիկիայում, այնու ամենայնիւ Ռուբինեան Թագաւորութեան ժամանակ չէր հասել այն նշանակութեանը որ ստացաւ նա Արևելքում այս դարում և մանաւանդ ներկայումս։ Մեր շրջանից դուրս կը լինէր եւրոպական հիւպատոսների Արևելքում վայելած արտօնութիւնների վերայ խօսել. կասենք միայն որ Ջենովացի, Վենետկեցի, պիզացի և կատալանցի հիւպատոսների տեղը այսօր բռնում են այն ազգերի հիւպատոսները, որոնք իբրև ծովային պետութիւններ՝ յաջորդել են Իտալիայի հասարակապետութիւններին։ Այնտեղ ուր երբեմն բարձրանում էին Սուրբ Մարկոսի դրօշակը և Ջենովայի սպիտակ դրօշը կարմիր խաչանիշով, այժմ ծածանում են Ֆրանսիայի, Անգղիայի, Ռուսաստանի, Աւստրիայի և Իտալիայի դրօշակները։

Զ.

Վերջացնելուց առաջ աւելորդ չենք համարում մի քանի խօսք ասել Ռուբինեան Թագաւորների շնորհած արտօնագրերի արտաքին յատկութիւնների վերայ։

Կիլիկիայի արքայական դիւանատնից դուրս եկած հրովարտակները, արտօնագրերը և վկայագրերը գրվում էին մագաղաթեայ թերթի վերայ, որ Թագաւորի իսկական ստորագրութեամբ և ոսկի կնքով կնքած՝ յանձնվում էր այն անձին կամ այն անձանց՝ որոնց շնորհուած էր արտօնութիւնը։ Բնագիրը յանձնուելուց առաջ՝ պատճէնը հանվում և պահվում էր պալատի դիւանատան մէջ։

Հրովարտակները գրվում էին նախ հայերէն լեզուով, յետոյ թարգմանվում էին լատիներէն կամ ֆրանսերէն՝ թարգմանների ձեռամբ, որոնք ըստ մեծի մասին եւրոպացիք և մասնաւորապէս ֆրանսիացիք էին։ Ռուբինեան Թագաւորների օտարականներին և Կիլիկիայում հաստատուած կրօնական կարգերին շնորհած արտօնութիւնների մեծ մասը լատիներէն կամ ֆրանսերէն լեզուով են գրուած։ Այս երկու լեզուներով են գրուած նոյնպէս Հայոց Թագաւորների ու Եւրոպայի պալատների մէջ տեղի ունեցած թղթակցութիւնները։ Հեթում Ա-ի Թագաւորութիւնից արդէն ֆրանսիական լեզուն սկսաւ գործածական դառնալ հայ դիւանների մէջ, իսկ վերջին Ռուբինեանց ժամանակ բոլորովին լատիներէնի տեղը բռնեց մինչև ԺԴ-րդ դարու վերջերը, երբ իտալական ռամկական լեզուն միակ գործածա-

կան բարբառը դարձաւ Կիլիկիայի նաւահանգստներում օտարական-ների և Ծովեզերայ բնակիչներիհամար: Այս լեզուն է որ ներկայումս էլ դեռ խօսվում է Արևելքի նաւահանգստներում և կոչվում է ֆրանկների լեզու «lingua franca»:

Իսկ Կիլիկիայի հայկական ժողովրդական բարբառը պաշտօնական լեզու էր միայն այն թղթերի համար, որոնք ազգին էին վերաբերում և երկրից դուրս չէին գնում: Միակ հրովարտակները որ հասել են մինչև մեր օրերն են՝ մի առևտրական արտօնութիւն որ Լևոն Գ շնորհել է Ջենովացոց 1288-ին և պահվում է Տուրինի դիւանատան մէջ, մի ուրիշը որ Լևոն Ե տուաւ Սիկիլիացոց 1330-ին, և պահվում է Մեսինա քաղաքի դիւանատան մէջ. վերջապէս երկու արտօնութիւնք որ Օշին և Լևոն Ե շնորհել են Մօնպէլիէի վաճառականներին և պահվում են նոյն քաղաքի դիւանատան մէջ:

Աւելորդ չենք համարում մէջ բերել այստեղ այդ հրովարտակներից մինը, այն է Լևոն Ե-ի Սիկիլիացոց շնորհած արտօնագիրը, որ իւր բովանդակութեամբը և լեզուի ձևերովը, կարծումենք, հետաքրքիր ընթերցողին առանձին բաւականութիւն կը պատճառէ:

Յանուն Հաւր և Որդւոյ և Ճշմարիտ կենդանարար սուրբ Հոգւոյն. ամէն:

Լևոն ի Քրիստոս Աստուած հաւատացեալ շնորհաւքն և ողորմութեամբ նորին թագաւոր ամենայն Հայոց որդի ի Քրիստոս հանգուցեալ արքային Հայոց Աւշնի առաջնոյ, կարող և բարձր, ի պատառ և բարի արմատոյն Ռուբինեանց:

Ծանուցանեմք ձեզ ամենեցուն որք այժմ էք և որք զկնի մեր գալոց էք. քանզի որպէս օրէն և սովորութիւն է թագաւորաց բարեպաշտից 'ի Քրիստոս Աստուած հաւատացեալ երանելի նախնանցն մերոց և մեր, պատուել զամենայն առատաձիր պարգևաւք զաւտարս զընտանիս, յաստուածային առատաձեռնութեան պարգևացն որ տուեալ է մեզ ի վերուստ, այնոցիկ որ խնդիր ելանեն մերոց պարգևացն, նայ ըստ այսմն աւրինակի եկին առաջի մերոյ թագաւորութեանս սիրեցեալ և ականաւոր բնակիչքն Սիծիլոյ և խնդրեցին պարգևս ի շնորհս մերոյ թագաւորութենէս տարածանել յիւրեանքն առ հասարակ. նայ վասն պատառ և երևելի իշխանին՝ շնորհաւքն Աստու-

ծոյ թագաւորին և մեր պանծալի հաւրն Ըռէ Ֆորկայ [1]) սիրոյն և հարկեցն՝ ընդունեցաք զԻւրեանց խնդրուածքն պարտ և արժան համարեցաք առնել իւրեանց շնորհս ըստ յուսոյն իւրեանց զոր խնդրեցին ի մերոյ թագաւորութենէս, և պարգևեցաք ամէն Սիծիլեանոցն, որք են Սիծիլեանք և Սիծիլեանի որդիք, որք են և որք գալոց են, որ ընին սիրածոյ, հարկևորածոյ, պահած ու նախախնամած, իւրեանքն իւրեանց անձներովն ու ըռըզակովն [2]) ի մեր թագաւորութենէս և ի մեր ամենայն հնազանդեցելոցն. և ունան ազատութիւն, որ զինչ ի ծովէն ի յերկիրս մտցնեն, և զինչ որ մեր յերկրէս ի ծովն հանեն ու տանեն, նայ զինչ գնեն ու ծախեն ի մեր ընթանուր աստուածապահս, նայ զայն որ կշեռք մտնէ՝ տան ի հարիւրէն երկու, այլ աւելի իրաւունք չտան. թողաք իրենցն. և զայն իրքն որ կշեռք չմտնէ, գնեն ու ծախեն. ազատ ընի ի յամենայն ազգ հարկաց և իրաւանց. զարդ ի սմնարչէքն որ սմնարչէք մէն տան. ի պաւման [3]) որ աւտար նաւ կամ աւտար դէմնի [4]) մարդ կամ ըռըզակ չառնուն հետ իւրեանցրն որպէս Սիծիլեան՝ խլրսեն. ու թէ գտնվի ով անէ այսպէս, նայ կորցնէ զԻւր ազատութիւնն յաւիտեանս: Ու թէ զալապայ [5]) ընի ի մեր յերկիրս հետ երկու Սծիլեայն, կամ որ մէկն հայ մարդ ընի, կամ ընդ այլ ազգ կամ արիւն, էնոր իրաւունքն և դատաստանն ի մեր դարպան ընի. և թէ Սծիլան պակասութիւն անէ ի մեր երկիրս՝ ժողովրդեան և կամ թախտան [6]), թէ բուրճէս [7]) ընի մեր և կամ բնակիչ երկրիս, որ երթայ զէն կրածն ի դարպասն ու գանգտի և յայտնէ զԻւր զէնն զոր իրն [8]) արած ընին, նա դարպասն կոչէ ի Սիծիլեացն զով գտնու ի մեր երկիրս, որ կենայ ու Սիծիլեանովն հաստատէ զպակասութիւն զոր արել ընին այն մարդուն, յայնժամ Սծիլեան պարտին որ գրեն թուղթ ու յըղըրկեն ի Սծիլեան թէ այս անուն մարդ ի Ֆլան տեղ այս անուն մարդոյ ի Հայոց զէն արար, ու պակասութիւնն այսչափ իրք. ապա տան տարի մի համբերութիւն, կամ ըղըրկեն զէնն զոր արած ընի, կամ զէնին անողն՝ որ գայ վճարէ զոր արած ընի: Ու թէ զէնին անողն մեռեալ ընի, նայ

([1] Լևոն Ե այրի մնալով առաջին կնոջից, որ Կորիկոսի կոմս Օշին իշխանի դուստրն էր, երկրորդ անգամ ամուսնացաւ 1330 ին Ֆրիդրիկոս Ա Սիկիլիայի թագաւորի Կոստանցա դստեր հետ։

[2]) ըռըզակ—բարիք, ապրանք. [3]) պաւման—պայման. [4]) դէմի—նաւ. [5]) զալապայ—աղմուկ կռիւ. [6]) թախտ—գահ, թագաւորութիւն. [7]) բուրճէս—քաղաքացի, լատ. burgenses և ֆրանս. bourgeois. [8]) իրն—իւրեան։

յինչիցն առնուն՝ ողորկեն զենն զինչ արաց ընին. ու թէ յերբ յիմաց ընի իրանց Սծիլեանց ի Սծիլն՝ մինչ ի տարին չղորկէն զենն կամ անաւղն, ինչ Սծիլեացիք կան յերկիրս բռնուին, որ վճարեն զենն զոր արեն ին Սծիլանքն մեր բնակչացն, զոր կեցնվի [1]) ի դարպաս. և իրենք խրեցեալ [2]) բնակիչքն Սծիլանքն, որք են Սծիլեան, Սծիլեանի որդիք, որք են և որք գալոց են, բռնաց ընին, պահել ընդդէմ մեզ հաւատարմութիւն, և յետ մեր ժառանգաւորացն, յիմայ և յայսկից ի յետ ըղորդ և անարատ սէր հաւատարմութիւն իւրեանց ամենայն կարողութեամբն ի ծով և ի ցամաք, մեզ և մեր յերկիրս, ամեն ժողովրդեան յորմ՝տեղ որ գտնվին, իւրեանց ամեն կարողութիւն հաւատարմութեան առանց ամեն աղդ խաբէութեան: Ցայսմ՝հետէ չունի ոք իշխանութիւն ի թագաւորութեանս մերոյ ամենայն հնազանդեցելոցն ի մեծամեծաց մինչ ի փոքունս մերոյ թագաւորական բարձր հրամանիս հակառակ և կամ ընդդիմակաց կալ, կամ փառաւոր սիրեցեալ բնակչացն Սծիլանոցն ուժ և կամ նեղութիւն առնել, կամ իրմէնցնէ աւելի հարկ կամ իրաւունք պահանջել. այլ մնասցէ հաստատուն ամենայն մի ըստ միոջէ որպէս վերոյ էնք շնորհել, առանց հակառակելոյ ումեքէ. վասն որոյ պարգևեցաք իւրեանցն զմեր բարձր շքեղս և շնորհաւոր բրբվլիճս [1]). և յաղագս առաւել հաստատութեան ձեռնագրեցաք մերով թագաւորական բարձր ձեռնագրեաւս, և կընքեցաք արքունական ոսկի վուլովս [2]) ի փառս անեղին Աստուծոյ. ամէն:

Գրեցաւ ի թուականութեան մարդեղենալոյն Քրիստոսի յուսոյն մերոյ ՌԳՃԼ. ի Հայոց մեծաց թուիս 22. ի յընիքտիոնիս Հոռոմոց ԺԵ, և յամսեանն նուեմբերի ԻԳ. ի Ջանլերութեան [3]) Յանէս Իրիցանց և արքայհայրութեան վասլի ծառայի Աստուծոյ և շնորհողի այսմ՝ն վերնոգրեալ պարգևացս:

* Լեւոն, Ներգաւոր ամենայն Հայոց:

Ս. ՊԱԼԱՍԱՆԵԱՆ

---

[1]) կեցնվի—մնայ, պահուի. [2]) խրեցեալ խրել բայից, որ այստեղ ոչինչ իմաստ չունի. գուցէ կարդալու է սիրեցեալ:

[1]) բրվլիջ—արտօնութիւն, լատ. privilegium, ֆրանս. privilége. [2]) վուլովս—կնքովս, լատինական bulla բառից. [3]) Ջանլեր կամ Ջանցլեր—ատենադպիր, լատ. cancellarius, ֆրանս. chancelier:

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Քանի մի տարի կայ, որ մեր պարբերական գրականութիւնը բանակռուի նիւթ է շինել հայոց ազգի իւր եկեղեցու պաշտօնեաների հետ ունեցած յարաբերութիւնը, և այն լրագիրը, որ այս հարցի առաջին արծարծողն է, նայելէ դորա վերայ ոչ պատմութեան և քաղաքականութեան կէտից, որպէս այդ կրպահանջէր առարկայի վսեմ նշանակութիւնը, այլ նայած է այդ խնդրի վերայ միանգամայն այնպիսի հայեացքով, որ կարծես հայոց ազգին չի-վերաբերում իւր ասածները:

Հայոց ազգը իւր քաղաքական ինքնուրոյն գոյութիւնը կորցնելուց յետոյ պահպանելէ իւր ազգութիւնը գլխաւորապէս Սուրբ Գրիգոր Լուսաւորչի հիմնած եկեղեցու շնորհիւ. ով որ պատկանել է այդ եկեղեցուն, համարուելէ և մինչև այժմ էլ համարվումէ հայ, թէ և իրօք նա այլ ծագումից ևս լինէր, և միւս կողմից՝ այն հայը, որ ուրիշ եկեղեցու գիրկն է մտել, դադարելէ իւրեան հայ անուանել, շփոթելով ուրեմն եկեղեցու գաղափարը ազգութեան գաղափարի հետ:

Եկեղեցին է այն կենտրոնատեղը, որի շուրջը համախմբվումէ հայոց ազգը իբրև այնպիսի ազգ, որ վայելումէ մի քանի առանձին իրաւունքներ, և որ կազմումէ մի տեսակ ինքնուրոյն իրաւաբանական միութիւն:

Այս առանձնութիւնը և ինքնուրոյնութիւնը արտայայտվում են առանձին իրաւունքների մէջ, որոնք տրուած են մեր ազգի հոգևորականութեան զանազան պետութեանց մէջ:

Ռուսաստանի հայոց հոգևորականութեան գործունէութեան շրջանը մտնումէ ոչ միայն բուն եկեղեցական՝ գործերը, այլ և թէմական դպրոցների և այլ ուսումնարանների բարեկարգութեան վերայ հսկելը, զանազան աստուածահաճոյ հաստատութեանց

հիմնելը և կառավարելը, եկեղեցական կալուածների կառավարութիւնը, ամուսնութեան վերաբերեալ գործերի վճիռները և քննութիւնները, յօդուտ վանքերի, եկեղեցիների, դպրոցների և աստուածահաճոյ հաստատութիւնների ինքնայօժար նուիրատուութեանց թոյլտուութիւնը: Հայոց հոգևորականութեան պարտաւորութիւնն է նմանապէս կազմել վանքերի, եկեղեցիների, դպրոցների և աստուածահաճոյ հաստատութեանց վիճակագրական ցուցակները, որոշել ինչպէս կուսակրօն և այլ եկեղեցականաց, նոյնպէս և իւրաքանչիւր եկեղեցու ժողովրդականաց թիւը. գննել թէ եկեղեցու հովանաւորութեան տակ գտնուող ուսումնարանների մէջ ինչքան ուսուցիչներ, աշակերտներ ու աղքատներ են ուսանում և խնամվում, և այլն (յօդ. 938, 975, 985, 1002, 1009. հատ. XI մասն քաղաքական օրէնքների):

Անյաղթելի հանգամանքների բերմամբ՝ հայոց թագաւորութիւնը կորցրեց իւր քաղաքական գոյութիւնը և Հայաստանը բաժանուեցաւ երկք տէրութեանց մէջ. այդ ժամանակ հայոց ազգի մի մասը սկսեց գաղթել դէպի Ասիայի և Եւրոպայի զանազան երկիրները:

Կարելի էր կարծել, որ Ազգի միութիւնը կորցրեց իւր իսկական կայունութիւնը: Եւ այդպէս էլ կըլինէր, եթէ հայոց ազգի այդ միութիւնը չըպահպանուէր Սուրբ Գրիգոր Լուսաւորչու եկեղեցու շնորհիւ:

Տեսնենք ուրեմն, թէ ինչով է իրագործվում այդ միութիւնը: Հայոց ամբողջ ազգը ունի ընդհանրական կաթողիկոս: Այս բարձր պաշտօնէի ընտրութեան եղանակը պիտի ցոյց տայ մեզ մեր ազգի բարոյապէս անբաժան լինելը:

Ռուսաց օրինաց մէջ մենք գտնումենք այդ խնդրի վերաբերեալ մի քանի յօդուածներ, որոնք կարող են մեր ասածը հաստատել:

«Երբ ամենայն Հայոց պատրիարք կաթողիկոսի աթոռը թափուր է մնում՝ Էջմիածնայ Սինօդը ուղարկում է այդ մասին շրջաբերականներ բոլոր հայ-լուսաւորչականների վիճակներին թէ Ռուսաստանում և թէ նորա սահմաններից արտաքոյ գտնուող-

---

* Շատ հետաքրքրական է գիտենալ, արդեօք Էջմիածնի Սինօտի գործքերի մէջ կայ Ռուսաստանի հայերի բոլորի թիւի մասին տեղեկութիւն և եթէ կայ, ինչու համար չեն հրատարակում: Բայց այս մասին մի ուրիշ անգամ:

ներին, և նշանակում է մէկ ամբողջ տարի ժամանակամիջոց նոր Կաթողիկոս ընտրելու համար:

«Այդ ծանուցման հետևելով, ամեն մէկ վիճակ նշանակում է երկու պատգամաւոր՝ մէկը հոգևորական, միւսն աշխարհական: Հոգևորական պատգամաւորները պէտք է կամ իրանք վիճակի առաջնորդները լինին, կամ նոցանից ընտրուած մէկ հոգևորական. աշխարհականը ընտրվում է բոլոր մելիքներից, իշխաշներից և այլ պատուաւոր աշխարհական անդամներից, որոնք պատկանում են հայ-լուսաւորչական եկեղեցուն, և որոնք՝ ըստ սովորութեան այդ եկեղեցու՝ կարող են ունենալ իրաւունք այդ ընտրութեան մասնակցելու:

«Ընտրութիւնը լինում է Սուրբ Էջմիածնայ մայր եկեղեցում, ճշտութեամբ կատարելով այն բոլոր ծէսերը, որոնք հաստատուած են ընտրութեան համար հայ-լուսաւորչական եկեղեցու կողմից (յօդ. 915-917):

Այս կէտի մէջ ոչինչ տարաձայնութիւն, կարծում ենք, չի կարող լինել, որ հայոց կաթողիկոսը իւր եկեղեցական պաշտօնով միացնում է բոլոր ազգը, ուր էլ որ գտնվում լինին նորա անդամները:

Այս այսպէս լինելուց յետոյ, մենք կարծում ենք, որ այլ ևս տարակոյս չի մնում, որ արդարև Հայոց կաթողիկոսութիւնը միացնում է մեր ցրուած ազգի բոլոր հատուածներին և նոցա մի ազգային-կրօնական կապով կապում:

Տեսնենք այժմ, հետևելով վերոյիշեալ կանոնադրութեան (պօլօժենիա), թէ ի՞նչ իրաւունքներ ունի Հայոց կաթուղիկոսը, իրաւունքներ, որոնք պատկանում են նորան աւելի իբրև բոլոր ազգի հոգևոր գլխի, քան իբրև սոսկ բարձրաստիճան եկեղեցականի:

«Էջմիածնայ կաթողիկոսը կրում է այն բոլոր տիտղոսները, որոնք գործ էին ածում հին ժամանակից Հայոց ազգի կաթողիկոսները: Հին սովորութեանց համեմատ, կաթողիկոսը, վեհարանից և Էջմիածնայ պարսպից դուրս գալիս, ունի իրաւունք իւր հետ ունենալու Էջմիածնայ վանքին պատկանող Հայերից կազմած պատուաւոր թիկնապահ ուղեկիցներ, մի քանի հոգևորական անդամներ, երկու բարձրաստիճան եպիսկոպոսներ, որոնցից մէկը տանում է կաթողիկոսական դաւազանը, իսկ միւսը խաչվառը: Էջմիածնայ կաթողիկոսը, իբրև ընդհանրական հովիւ Հայոց Ազգի, Ներսէս Շնորհալու օրինակին հետևելով, երբեմն երբեմն

ուղարկում է օրհնութեան թղթերի հետ և կոնդակներ, լուսաւորչական եկեղեցու ամեն կողմի և դասակարգերի հայերին, պատուիրելով նոցա խաղաղ և առաքինի կեանք վարել, և հնազանդ լինել օրինաւոր իշխանութեանց, ըստ կանոնաց Սուրբ Աւետարանի (յոդ. 924, 926, 931)—և սորանով պահել նոցա մէջ ազգային կապն ու միութիւնը:

Մեր յայտնած միտքը հայոց հոգևորականութեան առանձին նշանակութեան վերաբերութեամբ աւելի ակներև է Տաճկաստանում: 18/30 մարտի 1856 թուի փարիզի դաշնադրութեան IX յոդուածի մէջ կարդում ենք հետևեալը. «Նորին Կայսերական Մեծութիւն Սուլթանը իւր հպատակների բարօրութեան վերայ տարած մշտական հոգացողութեամբ, շնորհելով այնպիսի մէկ հրովարտակ (ֆիրման), որով առանց խտրութեան ազգի և դաւանութեան, լաւանում է նոցա վիճակը, և հաստատվում է նորա բարի դիտաւորութիւնները՝ իւր կայսերութեան մէջ բնակող քրիստոնեայ ազգերի վերաբերութեամբ, և կամենալով իւր զգացմանց մի նոր ապացոյց տալ, վճռեց յայտնել դաշնակից պետութեանց իւր ինքնայօժար կամքով տուած ֆիրմանը»:

Այս միջազգային դաշնագրի հետևանքը եղաւ հանգուցեալ սուլթան Աբդուլ Մէջիդի տուած ֆիրմանը, Խաթթի-Հիւմայուն անունով (18 փետր. 1856 թուին), որ իւր մէջ պարունակում է հետևեալ սկզբունքները:

«Բոլոր այն հոգևորական արտօնութիւններն ու առանձնաբաշխութիւնները, որոնք շնորհուած են իմ նախորդներից ի հնուց և հետևեալ ժամանակներում բոլոր քրիստոնեայ ազգերին, որոնք հաստատուած են կայսերութեանս մէջ, կը հաստատուին և կը պահպանուին բարձրագոյն խնամատարութեան ներքոյ: Ամենայն քրիստոնեայ համայնք կը պարտաւորի բարձր կառավարութեան թոյլտուութեամբ և վերահսկողութեամբ մի նշանակեալ ժամանակամիջոցում իւր միջից ընտրած խորհրդի միջնորդութեամբ ձեռնարկել վերաքննելու իրեն տուած արտօնութիւններն ու առանձնաշնորհութիւնները և նոցա քննութեան համեմատ ներկայացնել Բ. Դրան ծրագիր այնպիսի վերանորոգութեանց, որոնք ժամանակի լուսաւորութեան յառաջադիմութիւնը պահանջելիս կը լինի» (les réformes exigées par le progrès des lumières et du temps. Art. 6):

Այս պատմական հիմանց վերայ կազմուեցաւ Հայոց «Ազգային

սահմանադրութիւնը, որի զօրութեամբ «Կոստանդնուպոլսոյ պատ-
« րիարքը բոլոր ազգային ժողովոյ նախագահն է, և անոր գոր-
« ծադիր իշխանութիւնը կը վարէ և մասնաւոր պարագաներու մէջ՝
« տէրութեան հրամանաց գործադրութեան միջնորդն է։ Ուստի
« պէտք է որ պատրիարք ընտրուելու անձը ընդհանուր ազգին
« վստահութեանն ու յարգանացն արժանի ըլլալու համար՝ պատրի-
« արքական աթոռին վայելուչ ամեն յատկութիւններն ու արժա-
« նաւորութիւններն ունենայ»....(յոդ. 1)։

Վերոյիշեալ յօդուածում յայտնուած միտքը, ինչպէս ասա-
ցինք, հիմնվում է ազգային պատմութեան վերայ։ Հայոց պատ-
րիարքին, այո՛, ամենքն ընդունում են և ճանաչում հայոց ազգի
հոգևոր գլուխ։ Ուրեմն հասկանալի է, որ Կոստանդնուպոլսում անց-
եալ մայիս ամսուայ պատահած սօֆթաների շարժողութեան ժա-
մանակ, երբ քրիստոնէից տիրեց մի անհանգստութիւն, յեղափոխ-
ները, կամենալով հանգստացնել հայոց ազգաբնակութիւնը մայրա-
քաղաքում, դարձան դէպի նորա պատրիարքը, ճանաչելով նորան
իբրև գլուխ ամբողջ ազգի։ Միայն այդ իրաւունքով ներկայացաւ
Ներսէս սրբազան պատրիարքը նորահաստատ սուլթան Մէհմէդ Մու-
րադին՝ յայտնելու բոլոր հայ ազգի խնդութիւնը՝ դահի վե-
րայ տեսնել նորին մեծութիւնը, իբրև պաշտպան իրան ստորա-
դրեալ ազգերի։

Եւրոպայում զարթած խնդիրը, թէ եկեղեցին պէտք է բա-
ժան լինի ժողովրդից, մեզ համար, մեր ազգի վերաբերութեամբ,
ինքնասպանութեան հաւասարազօր մի գործ է։ Արևմտեան Եւրոպայի
տէրութեանց մէջ, եկեղեցու բաժանումն տէրութիւնից դուցէ ունի
իւր օրինաւոր պատճառը, որ հիմնուած է՝ մի կողմից կաթոլիկ ե-
կեղեցու և նորա հոգևորականութեան, միւս կողմից ազգերի
պատմութեանց վերայ. բայց մեր մէջ նա չունի ոչ մի օրինաւոր
առիթ։

Օրինակ, ազատուած և միացած Իտալիայում, պապը և կա-
թոլիկ հոգևորականութիւնը անբաւական լինելով այդ միութիւնից,
մինչև այժմ էլ Վիկտոր Էմմանուէլին միացեալ Իտալիայի թագա-
ւոր չեն ճանաչում։ Մի՞թէ երկար պատերազմների և զրկանքների
գնով իւր հայրենեաց անկախութիւնը ձեռք բերող իտալացին, մի՞թէ,
հարցնում ենք մենք, իւր անցեալին ու ներկային ծանօթ իտալացին
կարո՞ղ է գնալ ձեռք ձեռքի տուած իւր հոգևորականութեան հետ,

մինչդեռ վերջինս անիծում է նորա հայրենեաց անկախութիւնը և Գարիբալդուն ու Կաւուրին դժոխքի ծնունդներ է անուանում:

Ժամանակակից Ֆրանսիայում հոգևորականութիւնը խառնեց իւր դրօշը բուրբօնեան միապետութեան և Բօնապարտի կայսերութեան դրօշակների հետ, հերքելով ֆրանսիական յեղափոխութեան սկզբունքները, ազատութեան, հաւասարութեան և եղբայրութեան վեհ սկզբունքները, այն սկզբունքները, որոնք նորոգեցին ընդհանուր մարդկութիւնը, և տուին միլիօնաւոր անձանց իրանց մարդկային իրաւունքները: Կաթոլիկ հոգևորականութեան իշխող մասը միանում էր և միանում է նոցա հետ, որոնք շատ կը ցանկանային ժամանակակից կեանքի բնական ձգտումն յետ դարձնել դէպի ստրկութեան և կոպիտ ուժի տիրապետութեան դարը: Ցիրաւի, միթէ ժամանակակից ֆրանսիացին կարող է զուգընթաց գործել Դիւպանլու և Գիբեր արքեպիսկոպոսաց հետ, որոնք պաշտպաններն են այն բոլորի, որոց դէմ պատերազմել է ֆրանսիական քաղաքակրթութիւնը 18 և 19-երորդ դարերում:

Այսպէս էլ Գերմանիայում հոգևորականութիւնը ժամանակակից գիտութեանց թշնամի հանդիսանալով չի բաւականանում, այլև մի բանակի մէջ է այն անձանց հետ, որոնք հակառակում են հայրենեաց միութեանը:

Եթէ մենք մի կողմ դնենք անցեալ տարուայ մէջ ասած մէկ բարձրաստիճան հոգևորականի օտարոտի ճառը արևմտեան գիտութեան դէմ, կարող ենք համարձակ ասել, որ մեր հոգևորականութիւնը առհասարակ Եւրոպական գիտութեանց ոչ թէ հալածող՝ այլ պաշտպան է եղել: Եւ այլապէս չէր կարելի, քանի որ մեր ուսումնարանները ի սկզբանէ անտի, թէ և գտնուել են հոգևորականութեան բարձր իշխանութեան ներքոյ, բայց միշտ կառավարուել են աշխարհականներից, աշխարհական գիտութեան աղբիւրից են զովացրել իրանց ծարաւը: Չէ՞ որ մի և նոյն ազգային ուսումնարաններն են տալիս մեզ թէ հոգևորականներ և թէ աշխարհականներ.....

Սև կղերականութեան խնդիր յարուցանողներին գուցէ ճնում է ասել, թէ հոգևորականութիւնը և ազգը չեն կարող ի միասին ձեռք ձեռքի տուած գնալ, որովհետև հոգևորականութիւնը կազմելով մի առանձին դասակարգ, բնականապէս պէտք է իւր շահերը առանձնացնէ ազգի շահերից:

Տեսնենք և այս կարծեաց զօրութիւնը:

Հայոց հոգևորականութիւնը լինելով հիմնուած ընտրողական սկզբանց վերայ, սկսեալ ամենայն հայոց կաթուղիկոսից մինչև ծխական քահանայն, և այսպէս ուրեմն դուրս գալով ազգից, ժողովրդից, ազգի հետ ունենալով մի և նոյն ուրախութիւնը և տրտմութիւնը, կարո՞ղ էր արդեօք կազմել իւր համար առանձին ուղղութիւն, ընտրել ազգից անկախ դրութիւն և որոնել առանձին շահեր: (Մենք խօսում ենք ընդհանրութեան և ոչ թէ մասնաւոր երևոյթների մասին): Այս բանն այնքան անբնական է թվում մեզ, ինչքան անբնական ենք համարում այն իրողութիւնը, երբ ընտրեալը հետևում է այն ճանապարհին, որից փախչում է նորա ընտրողը: Չէ՞ որ այս ուղղութիւնը ընտրեալին անդունդքն է տանում....Ազգը չի հետևիլ երբէք այդպիսի պաշտօնեաներին....

Մենք չենք կարող մեր ընթերցողաց ուշադրութիւնը չը դարձնել այն վսեմ աղօթքի վերայ, որ ուղղեց առ Աստուած Ֆիլադէլֆիայի գերապատիւ Հայր Մաղիս Սիմեոն եպիսկոպոսը այս տարուայ 23 ապրիլի (10 մայիս) Ֆիլադէլֆիայի համաշխարհական հանդէսը բացուելիս, համարելով այդ աղօթքի պարունակութիւնը իբրև մի բնական դրօշակ և մեր եկեղեցականի գործունէութեան մէջ:

«Գոհանամք զքէն, ամենակարող Աստուած, զոչեց սրբազան Սիմեոնը, այն ողորմութեան համար, որ ցոյց տուիր մեր հայրերին: Գոհանամք զքէն այն երկրի համար, որ թագուցիր դու հներից և ուր մտցրիր քո ազգը: Դու առաջնորդում էիր մեր հայրերին, երբ նոքա կանգնեցնում էին ազատութեան մեծ շինութիւնը ճշմարտութեան և արդարութեան հիմանց վերայ: Գոհանամք զքէն, որ պարգևեցիր մեզ մեծն Վաշինգտոն և նորա երևելի աջակիցներին: Գոհանամք զքէն հասարակական և քաղաքական յառաջադիմութեան համար, այն բոլոր գիւտերի և միջոցների համար, որոնք դիւրացնում են աշխատանքը և բարւոքում կեանքը: Գոհանամք զքէն ուսումնարանների համար, որոնք լուսոյ նման մատչելի են միլիոնաւոր մանուկ էակների. գրքերի, դիտութեանց և արուեստից համար, դաւանութեան ազատութեան համար, եկեղեցւոյ համար, եկեղեցոյ՝ որ չէ կրում տէրութեան լուծը իւր վերայ.... Թող լինի, ասաց նա, նոր սերունդն առաջուանից աւելի լաւ. թող փայլէ նոցա վերայ փիլիսոփայութեան լոյսը աւելի քան առաջ: Թող ազատուի աշխատանքը, արուեստը թշնամական յարձակմունքներից՝ միջնորդութեամբ

ազատութեան և հաւասարութեան երևելի զկզբունքների։ Ուղարկէր, տէր, Քո օրհնութիւնը Ամերիկայի կանանց վերայ, և թող նոցա եռանդոտ գործունէութեան օրինակը տարածուի ամենուրեք, որպէս զի նոցա հեռաւոր երկրներում բնակուող քոյրերը կարողանան զգալ քրիստոնէական ազատութեան և յառաջընթացութեան երանութիւնը և փառքը։ Կաղդուրի՛ր մեր հանրապետութիւնը և տուր նորան իրագործել իւր կոչումն լինել աշխարհիս երեսին ազատ ազգութիւն՝ ազատ եկեղեցեաւ. այնպիսի մի ազգութիւն, որ ապրում է իւր ընտրեալ վարչութեան պաշտպանութեան ներքոյ։ Ինչպէս որ երկնային կոչումն օգնեց մեր մանուկ հանրապետութեան մեծ որդուն ի մի գումարել Ամերիկայի բաժանեալ մասերը, նոյնպէս և ապագայ Ամերիկան կը կապէ եղբայրութեան և սիրոյ կապերով բոլոր մարդոց»։

Այսպիսի հրաւէրներ դէպի ճշմարտութիւն, արդարասիրութիւն, գիտութիւն և յառաջադիմութիւն, իբրև դէպի միակ փրկութեան ճանապարհ ամենայն ազգաց համար, մեզ շատ անգամ պատահել է լսել Հայաստանեայց Եկեղեցւոյ արժանաւոր ներկայացուցիչներից (Խրիմեան Հայրիկից և ուրիշներից)։

Այսքան խօսելով այս առարկայի մասին, մենք կամեցանք առայժմ ցոյց տալ, թէ ինչ նշանակութիւն է ունեցել հայկական հոգևորականութիւնը մեր ազգի համար և ինչ նշանակութիւն և գործունէութիւն նա պիտի ունենայ։ Այլ հարց է, ի հարկէ, թէ ժամանակակից հայ հոգևորականութիւնը, և մանաւանդ նորա բարձրաստիճան անդամները, ո՞րքան են աշխատում իւրեանց նշանակութիւնը պահպանել վերոյիշեալ հիմանց համեմատ։

Կասկած չկայ, որ յիշեալ հիմունքների հակառակ վարուողները «փորձի» կողմից միշտ ընդդիմութեան և բողոքների կը հանդիպին, և այդ ընդդիմութիւններն ու բողոքները այնքան ուժեղ կը լինին, որքան վսեմ կը համարէ նա այն սկզբունքները, որոնց դէմ կը մեղանչեն, որ կողմից և լինին մեղանչողները։

«Փորձը» չի կարող անտարբեր մնալ, երբ արշաւանք են բացանում եւրոպական գիտութեան դէմ, երբ միայն այդ գիտութիւնն է բոլոր թէ մեծ և թէ փոքր ազգերի դրութիւնը բարւոքողը։ «Փորձը» չի կարող չը խօսել, երբ բարձր եկեղեցական աստիճանների կարժանանան հոգևորականք, թող լինին նոքա արժանի ևս,

բայց ազգի հաճութեան և կամաց հակառակ, խախտելով Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ բուն սովորութիւնքը։

«Փորձը» չի լռիլ և այն հանգամանքներում, երբ ազգի թէ բարոյապէս և թէ նիւթապէս աղքատ դրութիւնը բարձրաձայն աղաղակում է օգնութիւն և երբ այդ օգնութիւնը կարող է հասցնել Սուրբ Էջմիածինը, բայց նա սառնասիրտ է մնում դէպի այդպիսի աղաչանքները, պատճառ բերելով իւր աղքատութիւնը, որի ստուգութեանն ազգը չի կարող կուրօրէն հաւատ ընծայել, քանի որ նորան ճշտիւ յայտնի չէ իւր Մայր Աթոռի տարեկան եկամուտքը։

Յիրաւի, մի՞թէ Սուրբ Էջմիածինը զրկուած է այն միջոցներից, որոնցով նա կարող էր ազգի դրութիւնը մասամբ բարւոքել, հաստատելով և հիմնելով դպրոցներ և զանազան ազգօգուտ հաստատութիւններ, կամ առաջին օգնողը հանդիսանալ այնպիսի ազգային թշուառութեանց մէջ, որոնք քրիստոնէական կարեկցութիւն են պահանջում։

Մտաբերենք, փոքր Ասիայի և Պարսկաստանի սովը կամ Ղզլարու մայիս ամսուայ մէջ պատահած անբախտութիւնը...

ՔԱՆԻ ՄԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

Այն ազգը, որ ամենալաւ ուսումնարաններ ունի, առաջինն ազգն է. եթէ նա առաջինը չէ այսօր, վաղը անշուշտ առաջինը կը լինի։

Jules Simon L' Ecole.

Ահա քանի տարի է, որ խօսվում է Ներսիսեան-Ազգային Ուսումնարանի համար նոր շէնք կառուցանելու մասին, բայց, ինչպէս լսում ենք, մէջ տեղ դրամ չը կայ որ գործն սկսուի...

Թիֆլիզը, Կովկասի ամենաբազմահայ քաղաքը, որ կարողացել է քսաներկու մին քան զմիւսը հոյակապ եկեղեցիք կառուցանել, իւր մի հատիկ ուսումնարանի համար օրինաւոր շէնք կառուցանելու կարողութիւն չի ցոյց տալիս։ Բայց մենք կասենք, որ դա մի այն-

պիսի աղքատութիւն է, որ փողն չը լինելու հետևանք չէ, այլ ծուռ գաղափարի, սխալ դատողութեան, մոլար ուղղութեան հետևանք է: Դարերից հետէ մեր ժողովրդի մէջ տիրապետել է մի սխալ հասկացողութիւն, որով նոքա կարծում են, թէ բաւական է մկրտուած լինել, հայ-քրիստոնէի անուն կրել, եկեղեցի յաճախել, աղօթել, մոմ վառել, պաս պահել և այլն, դոցանով էլ կը վերջանայ նորա բոլոր բարոյական պարտաւորութիւնը: Նա երբէք չի մտածում, որ մարդուս միտքը նոյնպէս ունի իւր առանձին տաճարը, իւր լուսաւորութեան մոմերը, իւր պահեցողութիւնքը և այլն: Ո՞ւր է Եղիշէ, որ բարձրաձայն աղաղակէ, թէ «Հոգւոյ և մարմնոյ միտք են կառավար».....

Ով ինչ կուզի թող ասէ, բայց մենք դարձեալ, կը յիշենք, որ քսաներկու եկեղեցի իւր մէջ, մի նոյնքան էլ դրսերում շինող Թիֆլիզեցին այսօր մի հատիկ բարեկարգ և ապահովուած ուսումնարան չունի, մինչ դեռ նա պիտի ձգտէր մինչև անգամ համալսարան ունենալ, և արդէն պիտի ունենար քանի մի արուեստական ուսումնարան, քանի մի բարձրակարգ օրիորդաց ուսումնարան, իւրաքանչիւր թաղում և եկեղեցու մօտ մի մի հատ տղայոց և աղջկանց ուսումնարան և օրինաւոր վարժապետանոց և այլն: Ո՞վ պիտի արդեօք Թիֆլիզի հային զարթեցնէ իւր խոր քնից, որպէս զի նա ճանաչէ իւր բարձր նշանակութիւնը բոլոր միւս գաւառների վերաբերութեամբ, թէ նա պիտի լինի մայր նոցա համար և իրանից պիտի նոքա սնունդ ստանան, սնունդ բարոյական և մտաւոր, թէ իւր ազգային լուսաւորութեամբը, նախանձելի և օրինակելի պիտի լինի բոլոր գաւառների համար:

Մեր յոյսը Նորին վեհափառութեան վերայ է. նա եթէ կամենայ, կարող է՝ օգնութեամբ նորընտիր առաջնորդի և հոգաբարձուաց՝ Թիֆլիզի ժողովրդի ուշադրութիւնը դարձնել դէպի իւր ազգային պարտաւորութիւնքը, դէպի իւր կատարելիք դերը Ռուսաստանի հայոց մէջ, դէպի իւր մտաւոր զարգացումն ընդհանրապէս և ի մասնաւորի դէպի Ներսիսեան-Ազգային նոր դպրոցի շինութիւնը:

Թիֆլիզի ժողովուրդը շատ անգամ զանազան դէպքերում ապացուցած է, որ նա օգտակար առաջարկութիւնից փախչող չէ. ոչ մի այլ ժողովուրդից նա յետ չի մնալ, այլ ցոյց կը տայ ջերմեռանդութիւն և առատաձեռնութիւն, միայն մի առաջնորդող պէտք է նորան, միայն մի յորդորող. եթէ այդ առաջնորդութիւնն

ու յորդորանքը իւր սիրած անձաւորութեանց կողմից լինի, այնու-հետև նա իւր անձն անգամ չի խնայիլ, ուր հնաց քանի մի մանէթ:

Լսում ենք, որ Նորին Վեհափառութիւնը մտադիր է ներ-կայ ամառս Թիֆլիզումն անցցնել. ահա յարմար ժամանակ Ներ-սիսեան-Ազգային ուսումնարանի հիմքը ձգելու: Պողոսը տնկեց, Թող Ապողոսը ջուր տայ, և Աստուած կաճեցնէ անշուշտ.....

Խօսելով դպրոցի մասին, իսկոյն մեր միտն է ընկնում վար-ժապետներ պատրաստելու խնդիրը, որ ահա քանի տարի է արծաթ-վում է մեր մէջ, և այժմ այդ պահանջն այնքան շօշափելի է դարձել, որ պաշտպանութիւն է գտնում նաև երկար ժամանակ դորա ընդդէմ գրողների կողմից:

Այսօր մեզանում ամեն տեղից վարժապետ են ուզում, և....չը կայ վարժապետ: Ասում են, որ Ներսիսեան դպրոցը կարող էր երկու դասատուն ևս աւելացնել, յատկապէս վարժապետներ պատ-րաստելու համար, բայց դրամ չունի:

—Արդեօք ո՞ւմ համար պիտի պատրաստուին այդ վարժա-պետները.

—Ամեն տեղի համար:

—Եթէ ամեն տեղի համար են այդ վարժապետները, լաւ չի՞ լինիլ ուրեմն, որ ամեն տեղից լինի հոգացողութիւն այդ մասին: Մենք կարծում ենք, որ եթէ մեր կողմերում գտնուած իւրաքան-չիւր միջնակարգ և թէմական դպրոց, ըստ կարողութեան, մի մի ո-րոշեալ քանակութեամբ փող ուղարկեն Ներսիսեան դպրոցին, նա կը տայ նոցա վարժապետներ: Ենթադրենք, որ երկու դասատան վար-ժապետաց ռոճկի և բոլոր միւս ծախուց համար առ առաւելն բա-ւական է հինգ հազար մանէթ: Այս ի՞նչ գումար է, որ մեր ամեն տեղի հոգևոր դպրոցները չը կարողանան տալ միացեալ զօրու-թեամբ: Ղարաբաղու դպրոցը միայնակ կարող է տալ տարեկան հազար մանէթ, Ախալցխայինը՝ նոյնպէս հազար, Ալէքսանդրապօլու երկոքին դպրոցները տղայոց և աղջկանցն ի մասին՝ հազար, Երևանը և Ագուլիսն ի մասին՝ հազար, ինքը Ներսիսեան դպրոցը և՛ բնակա-րան և՛ հազար մանէթ. չենք հաշվում Բագուն, Շամախին, Գան-ձակը, Սղնախը, Ախալքալաքը և այլ բազում տեղեր, որոնք կա-րող էին հարիւրական և յիսնական մանէթ տալ:

Այս միջոցը, որ աւելի հեշտ է մեր կարծիքով, քան թէ նոր ի նորոյ մի առանձին վարժապետանոց կառուցանելը, լաւ կը լինի, որ առ այժմ այս ձևին հետևինք, իսկ յետոյ, երբ ժողովրդի դիտակցութիւնը աւելի կըտրամադրուի դէպի իւր ուսումնարանական վսեմ գործը, այն ժամանակ հեշտ կը լինի առանձին հաստատութիւն ևս ունենալ: Այս էլ պետք է յիշենք, որ երբ և ի՛նչպէս էլ որ գլուխ դայ այս գործը, մեր առաջարկած մէկ պայմանը, այն է՝ բոլոր դպրոցաց միացեալ օգնութիւնը՝ անհրաժեշտ է. վասն զի քանի որ մենք մեր ազգային ուսումնարանների համար չունինք ազգային մնդուկ, որ յանձն առնէր այդպիսի մի շինութիւն կառուցանել և իւր ծախքով պահել, հետևապէս ոչ մի քաղաք միայնակ բոլոր քաղաքներին վերաբերեալ մի գործ կատարել յանձն չի առնիլ իւր ծախքով: Ուրեմն մեզ մնում է դարձեալ դիմել Նորին Վեհափառութեան, որ մեր բոլոր ուսումնարանաց և նոցա արդեանց միակ իշխողն է, կամենայ մեր խոնարհ առաջարկութիւնն իրագործել:

«Վարժապետներ չունինք» ասելով՝ Թանգարանի մեծ փիղը չըպէտք է ուշադրութիւնից փախցնենք: Վարժապետը նորա համար է, որ սորվեցնէ կարդալ, որ պաարաստէ աշակերտներին ինքնակրթուելու գրականութեան օգնութեամբ: Առանց այս վերջին պաշարին՝ վարժապետի տուած օգուտը շատ նուազ կարող է լինել: Մի հատիկ պատմութիւն Ռոբինզոնի աւելի շատ բան՝ կըսորվեցնէ մանուկներին, քան թէ տասը վարժապետ իրանց չոր ու ցամաք քարոզներովը: Սորանից պարզապէս հետևում է, որ ուրեմն իւրաքանչիւր ուսումնարան՝ թէ մեծ և թէ փոքր՝ պիտի ունենայ մանկական ընտիր գրքերի մատենադարան: Մեզ պէտք է ուրեմն դպրոցական ընտիր գրականութիւն, որով միայն կարելի է բեղմնաւոր կացուցանել վարժապետաց աշխատութիւնը: Զը կայ աճուն առանց սնունդի. անջուր պարտէզը միշտ կը չորանայ, որքան էլ որ ճարտար լինի նորա պարտիզպանը:

Այս գործը չի կարելի ժամանակի բերմունքին ձգել, պէտք է մի գիտակցական գործողութիւն:

Գիտակցական գործողութիւն կը լինի միայն այն ժամանակ, երբ որ մեզանում յատկապէս դպրոցական գրականութեան նուիրուած մի խումբ կամ ընկերութիւն կունենանք:

Մեզանում մի և նոյն առարկայի համար շատերն են դասագիրք շինում և դոցանից որը շահվում և որը վնասվում է: Մենք կարծումենք, որ եթէ դոքա իրանց մէջ մի միութիւն կազմեն և միասին անեն, ինչ որ անումեն, դորա հետեւանքը նախ այն կը լինի, որ շինուած գործը աւելի մշակուած դուրս կը գայ և երկրորդ իրանք էլ մեծ շահ կունենան: Մի այսպիսի փոքրիկ գործից սկսելով, մենք յուսով ենք, որ դոքա հետզհետէ կընդարձակեն իրանց գործունէութեան շրջանը, շատացնելով իրանց խմբի անդամների թիւը և աշխատութեանց տեսակները, և մենք վերջապէս կստանանք մեր ուզած տպագրական ընկերութիւնը: Մեր այս առաջարկութիւնը երևակայական տեսութիւն չէ. դորա իրագործութիւնը մենք արդէն տեսնումենք վրացի երիտասարդաց մի խումբի մէջ:

Ինչ էլ որ ասենք, ինչքան լաւ բան էլ որ առաջարկենք, ոչ մէկն առանց դրամի գլուխ չի գալ: Լաւ ուսումնարան պահելու համար լաւ էլ փող է հարկաւոր: Մեր ուսումնարանները, ինչպէս յայտնի է ամենից, գլխաւորապէս եկեղեցեաց արդիւնքներովն են պահպանվում — մոմավաճառութիւնից, խաչահամբուրից, եկեղեցեաց կալուածներից, մի որ և իցէ ուխտատեղուց: Այս աղբիւրները գտնուելով կօնսիստորիաների, հոգևոր կառավարութեանց, ծխական քահանայից և երիցփոխանաց հսկողութեան ներքոյ, դոցա բարեխղճութիւնից է կախուած այդ աղբիւրների առատութիւնն ու նուազութիւնը և մինչև անգամ ցամաքիլը: Եթէ մտնում է հոգևոր կառավարութեան մէջ մի բարեխիղճ և ուսումնասէր յաջորդ կամ առաջնորդ, մէկ էլ ես տեսնում նորանոր արդեանց աղբիւրներ է գտնում, ձեռք է զարկում ուսումնարանաց շինութեան, օրինաւոր վարձով վարժապետներ է հրաւիրում (ինչպէս այդ անում է, օրինակի համար, Սուքիաս Սրբազանը), բայց սորա հակառակ՝ հէնց որ լաւի տեղն անցնում է մի ընչաքաղց և ուսումնատեաց մարդ, յանկարծ ցամաքում են փոքր ինչ առաջ եղած բոլոր աղբիւրները:

Ճշմարիտ է՝ հոգաբարձութիւն կայ բոլոր ուսումնարաններում, բայց այդ հոգաբարձութիւնը երկրորդական դեր է խաղում ուսումնարանի տնտեսական կողմի վերաբերութեամբ: Հոգաբարձութիւնը չի իշխում այդ արդեանց վերայ, նա միայն ստանում է այն, ինչ որ նորան տալիս են հոգևոր կառավարութիւնները, որոնց դրութեան վերայ մենք միայն ողբալ կարող ենք.....

Մենք հաղարերորդը չը գիտենք այն անթիւ անկարգութեանց, ինչ որ քաջապէս յայտնի է մեր վեհափառին: Տարի չի լինում, որ քանի մի քննութիւններ չը լինին և շատ անգամ անհրատարակելի անկարգութիւնք են դուրս բերում այդ քննութիւնները:

Նորին վեհափառութիւնը կարող է ասել, և միշտ էլ ասում է՝ ճար չունիմ, մարդ չունիմ, բայց մենք կասենք, որ մենք բոլոր բեքեանքս էլ նորա մտերիմ որդիքն ենք, եթէ կամենայ՝ կարող է օգուտ քաղել մեր ամենից: Ինչո՞ւ պէտք է աշխարհականի և հոգևորականի խտրութիւն լինի այնպիսի գործակատարութեանց մէջ, որոնք վարչական և տնտեսական գործեր են և ոչ կրօնական: Ինչո՞ւ գոնէ չի պահանջվում, որ հոգևոր կառավարութիւնք տարէցտարի մանրամասն հաշիւ հրատարակեն իրանց կատարած գործերի մասին, որով բաւական կընուաղանային անկարգութիւնները և կառատանային մեր ուսումնարանների եկամուտները: Միթէ ժամանակ չէ՞, որ յարգուի հասարակութեան կարծիքը, որ նա իմանայ, թէ իւր տուած լումաներն ուր են գնում և ում ծառայում:

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱՑԻՑ

Ա.

Փոթի-թիֆլիզեան երկաթուղու Միխայելովո կոչուած կայարանից Բորջոմի ձորի միջով 172 վերստ դէպի հարաւ գնալով, ճանապարհորդը կհանդիպի մի ընդարձակ հովտի՝ շրջապատած մեծ և փոքր լեռներով: Այդ հովտի արևմտեան կողմում մի բարձր ապառաժուտ լեռան վերայ կանգնած է մի հինաւուրց բերդ, որի հարաւային և արևելեան կողմերից օղակաձև հոսում է մի գետ հովտի բուն հիւսիսային ծայրում, մի ձորի մէջ, իսկ արևմտեան կողմում մի լեռնադաշտի վերայ տարածուած են հնաձև և քայքայուած շինութիւններ: Հովտի հարաւային կողմից մի բարձր լեռան կողքերին և ստորոտի վերայ ձգվում են դարձեալ հնաձև շինութիւններ, որոց մէջ, մի ժայռոտ բլրի գագաթի վերայ կան մի փոքրիկ, բայց նորաշէն և փառաւոր եկեղեցի և մի երկայարկ տուն:

Մտնելով հովտի մէջ, ճանապարհորդը կըտեսնէ բազմաթիւ նոր և բաւականին գեղեցիկ, եւրոպական և ասիական ճաշակով շինուած շինութիւններ, ուղղաձիգ, լայն և մաքուր փողոցներով, կանանչազարդ պարտէզներով, բազմաթիւ և քաղցրահամ աղբիւրներով: Այդ գեղեցկադիր փոքրիկ տեսարանը Ախալցխայ քաղաքն է, իսկ այն գետը, որ բերդի երկու կողմերից օղակաձև հոսելով և քաղաքը երկու մաս բաժանելով գնում է ներքև դէպի հիւսիս, փոցխով գետն է, որ իւր սկիզբն առնում է Ցաճկաստանի Փոցփով գաւառում համանուն դիւղի մօտ, Ախալցխայից 25—30 վերստ հեռու: Ախալցխայից 3 վերստ հեռու՝ արևմտեան կողմից՝ հոսում է մի այլ գետ՝ Արտահան, որ նոյնպէս հոսում է դէպի հիւսիս և Ախալցխայից 4 վերստ ներքև, հիւսիսային կողմում, միանալով փոցխով գետի հետ, կազմում է պատմական Կուր գետը:

Ախալցխան հետաքրքրութեան արժանի է թէ իբրև ժամանակակից և թէ իբրև հին պատմական քաղաք *):

Բ.

Ախալցխան իւր գաւառովը մեր ազգային պատմութեան մէջ յայտնի է Տայոց աշխարհ, Տայքաստան և երբեմն լոկ Տայք անուններով և է Հայաստանի Մեծ Հայք կոչուած մասի չերեքտասաներորդ նահանգը: Այստեղ հնախոյզները մինչև այսօր կարող են գտնել շատ հին հայկական յիշատակարաններ:

Տայոց աշխարհը Հայերի ձեռքից առաջին անգամ անցաւ Բիւզանդիոնի կայսերաց ձեռքը, յետոյ 1227 թուականում Վրաց թամար թագուհին տիրեց և հնացած բերդը նորոգելով, անուանեց նորան Ախալ-ցիխէ որ վրացոց լեզուով նշանակում է

---

*) Հայր Ղևոնդ Ալիշանեանը իւր մի հոյակապ աշխատութեան մէջ (Քաղաքական Աշխ. Վենետիկ 1853. եր. 61. ևս և Նշմարք Հայկ. պրակ գ.) Ախալցխան կոչում է «երկիր Մեծխեաց կամ մեսխաց», այսպէս մեկնելով վրաց սամցխէ բառը, որ տրվում էր վրացիներից Ախալցխային: Բայց այդ մեկնութիւնը սխալ է. որովհետև սամցխէ՝ նշանակում է «երեք բերդ» որպէսի անունը տրուեցաւ Թամար թագուհու կողմից, երբ վերջինս տիրեց քաղաքին, որից առաջ տիրել էր Աղխորի (ըստ Խոր. Աղզարդ) և Խրդվիզի (ըստ Խոր. Պարտիզաց-ձոր) բերդերին և նորանց անուանեց Օրցխէ, այսինքն՝ երկու բերդ:

Ծան. Նամակ.

նոր-բերդ, որպիսի անունով կոչուեցաւ յետոյ և մինչև այսօր էլ կոչվում է բուն քաղաքը: Վրացոց ձեռքից 1508 թուականին առաւ Սուլթան Մուրադ Գ, որից յետոյ առան պարսիկները: Այնուհետև 1673 թուականին Սուլթան-Մուրադ Դ յետ առաւ պարսից ձեռքից և օսմանցիք տիրեցին մինչև 1828 թուականը, երբ արդէն անցաւ Ռուսաց իշխանութեան ներքոյ: 1829 թուականին Օսմանցիք Աճառացի Ահմետ-Բէգի առաջնորդութեամբ 18 հազար հոգով յարձակուելով Ախալցխայի վերայ, թէև փորձեցին յետ առնել կրկին ռուսներից, բայց չը յաջողեցան: Մի այդպիսի անյաջող փորձ օսմանցիների կողմից կրկնուեցաւ և 1833 թուականին, երբ տեղական հայ ժողովուրդը առանձին հայկական բանակ կազմելով, սակաւաթիւ ռուս զինուորների հետ ազատեցին դարձեալ քաղաքը, որ ահա 48 տարի է մնում է անփոփոխ ռուսաց իշխանութեան ներքոյ: 1828 թուականի պատերազմի և յաղթութեան յիշատակի համար Ախալցխայից 2 վերստ հեռու, դէպի հիւսիս, կանգնեցրած է մի պղնձաձոյլ արձան: Ռուսաց ձեռքն անցնելուց յետոյ Ախալցխայի կառավարչական ձևը զանազան փոփոխութիւններ կրեց: Այսպէս 1828-ից մինչև 1840 թուականը կոչվում էր Ախալցխայի փաշայութիւն. 1840 ից մինչև 1846 դարձաւ Վրաստանի և Իմերէթի կուսակալութեան գաւառական քաղաք. 1846 ից մինչև 1869 համարվում էր գաւառական քաղաք Քութայիսի նահանգի, իսկ 1869-ից մինչև այսօր՝ է գաւառական քաղաք Թիֆլիզի նահանգի:

Գ.

Օսմանցիների ձեռքում եղած ժամանակը Ախալցխան բաւականին շատ բնակիչներ ունէր, իսկ երբ նա անցաւ ռուսաց ձեռքը, բնակիչներից օսմանցիները բոլորն էլ գաղթեցին Ցաճ կաստան և Ախալցխայում մնացին միմիայն 10 տուն լուսաւորչական, 40-50 տան չափ հռովմէական (կաթոլիկ) հայեր, 200 տան չափ հրէաներ և մի քանի տուն էլ վրացիներ: Ախալցխան բոլորովին ամայի և աւերակ կը դառնար, եթէ 1830 թուականին կարապետ արքեպիսկոպոսի առաջնորդութեամբ Էրզրումի շրջակայ քաղաքներից գաղթող հայ ժողովրդեան մի մասը, 6—7 հազար հոգի, չը դային Ախալցխայում բնակուէին: Այդ գաղթական ժողովրդեան ձեռքով շինուեցաւ այժմեան Ախալցխայի Նոր-քաղաք կոչուած մասը փոցխով պետի

աջ կողմում: Երկար ժամանակ այդ գաղթականները ստիպուած էին տանել զանազան նեղութիւնների և տառապանքների, մինչև հետզհետէ ընտելացան և հաշտուեցան իրանց նոր հայրենիքի հետ: Այսպէս 1831 թուականին Ախալքսացիք ենթարկուեցան խօլերայի, 1838 և 1839 թուականներում ժանտախտի և 1847-ին կրկին խօլերայի: Ախալքխայի այժմեան բնակչաց թիւն է — 1999 տուն. 5516 ար. 4850 իգ. լուսաւորչական և հռոմէական հայեր:

377	»	1057	»	915	»	հրէայ
84	»	184	»	180	»	վրացի
41	»	45	»	35	»	ռուս տեղական
13	»	35	»	22	»	յոյն
4	»	16	»	9	»	օսմանցիք
42	»	115	»	45	»	ազնուականներ և աստիճան.
22	»	24	»	20	»	լուսաւորչ. հայ հոգ.
5	»	9	»	10	»	վրացւոց հոգևորականներ.
10	»	10	»	—		կաթոլիկ հոգևորականներ.
2	»	7	»	7	»	հրէից հոգևորականներ:

2599 տուն 7018 ար. 6093 իգ. ընդամենը.

Դ.

Ախալքխայի բնակիչները մեծաւ մասամբ պարապումեն արհեստներով և վաճառականութեամբ: Ախալքխայում կան այժմ 68 մեծ վաճառական, 125 մանրավաճառ, 107 նպարավաճառ, 50 օղեվաճառ, 80 կօշկակար և մաշկակար, 24 հիւսն, 35 հացաթուխ, 65 երկաթագործ, 23 ոսկերիչ, 62 դերձակ, 22 պղնձագործ, 16 սափրիչ, 15 սրճավաճառ. 10 ներկարար, 8 կաշեգործ, 10 զինագործ, 16 ոստայնագործ. 10 ծխափայտ և ծխափող շինող 28 մետաքսագործ, 10 թամբագործ, համեստագործ և պարկագործ, 1 ծխախոտի գործարան, 2 սանդր շինող, 6 անագագործ, 10 մասվաճառ, 4 մոմավաճառ, 5 կղմինդրի գործարան և 2 օճառի գործարան:

Թէև, վաճառականութիւնը հետզհետէ սկսումէ շատանալ, բայց մտիկ տուած Ախալքխայի ներկայ տնտեսական վիճակին գլխաւոր ճանապարհների անհաղորդակցութեանը, մանրավաճառների

հետզհետէ բազմանալուն, շատ հաւանական է, որ Ախալքսայի վաճառականութիւնը աւելի հարուածուի, քան թէ յառաջ գնայ:

Ախալքսան առևտուր է անում Ռուսաստանի և Տաճկաստանի հետ: Այսպէս Մոսկուայից նա ստանում է թաւիշ, չթեղէն, սպիտակեղէն, քաթան: Թիֆլիզից՝ մահուդ, պարսկական ճոթեղէն, խոզի իւղ (մեծ քանակութեամբ), գինի, նաւթ և զանազան կերակրեղէն՝ ձմերուկ, սպիտ և օղի: Երևանից, Նախիջևանից և Աչէքսանդրապօլուց ալիւր, ոչխար, բրինձ, աղ, զանազան չորացրած մրգեղէններ՝ նուշ, քիշմիշ, չամիչ, լաբլաբու, փշատ. կալաքար, բամբակ և սիսեռ: Պարսկաստանից գորգ, կապերտ, մետաքսեղէն ճոթեր: Ղարաբաղից՝ բուրդ. Վենայից՝ զանազան կերպասներ Օդէսայից ապակեղէն, կահ-կարասիք, ժամացոյց, կոշկի տակի հաստ կաշի, կարի մեքենաներ: Քութայիսից՝ մետաքս, նուռ, տօսախ, մեղր, մեղրամոմ, գինի, օղի, լուբիա, ընկոյզ, շագանակ: Ռոստովից (Դօնի վերայ) երկաթ, թիթեղն և ձկնեղէն: Կ. Պօլսից եւրոպական ճոթեղէններ, շաքարեղէններ, քաղցրաւէնիք: Տրապիզօնից և Սամսօնից՝ ծխախոտ, լիմոն, նարինջ: Էրզուրումից տաճկական (Շամի և Հալապի) ճոթեղէններ: Զլտրից՝ չորքոտանի կենդանիներ, ցորեն, գարի և ալիւր: Արտահանից իւղ, կտաւատ և պանիր: Աճառայից տաշտեր: Ախալքսան իւր միջից արտադրում է կաշի, սեկ, պայտ, գամ, օճառ, շինութեան փայտեր, (Աբասթումանի և գլխաւորապէս Քօբլիանի անտառներից) մետաքսեայ բանուածքներ, սանդր, սնդուկներ, պտուղներ, գլխաւորապէս տանձ և խնձոր մինչև 5000 ր. տարին, զենքեր՝ ատրճանակներ, թուր, դաշոյն, հրացաններ, արծաթեայ գործիքներ և սերվիզներ, երկաթեայ զանազան ամաններ և և կօշիկներ. գաճ, կաւիճ, և ընկոյզենի. բայց այդ արտադրութիւններից ներս եկած փողը գոնէ կիսով չափ չի փոխանակում այն մեծաքանակ գումարներն, որոնք գնում են վերոյիշեալ քաղաքներն: Այսպէս Ախալքսան արտասահմանից ստանում է 119,415 ր. 45 կոպ. ապրանք, իսկ դուրս է ճամբում 15,532 ր. 75 կոպ. ապրանք:

Ե.

Ախալքսայի արհեստները բոլորն էլ գրեթէ նահապետական ձևի մէջ են վերջին ժամանակներումն միմիայն սկսել են կարի մետաքսեայ երիզ գործելու մեքենաներ ձեռք բերել: Ջնայելով այդ բանին, Ախալքսայի արհեստաւորներից Ռուսաստանի և Եւրոպայի

զանազան արուեստահանդէսներում ձայն են ունեցել և պարգևների արժանացել, կաշեգործները, ոսկերիչները, դերձակները, մի տեսակ ոսկեթել բանուածքով, գլխանոցի համար, զենագործները և մետաքսագործները:

Ախալցխայի իւրաքանչիւր արհեստաւորը ունի իւրեան արհեստապետը, իսկ բոլոր արհեստաւորները և արհեստապետները մի գլխաւոր արհեստապետ (շեխ-ուստասի), իւրաքանչիւր արհեստապետ իւր արհեստակիցներին, իսկ գլխաւոր արհեստապետը բոլոր արհեստաւորներին, թէ արհեստից վերաբերեալ և թէ մասնաւոր վէճերը, գանգատները, առտնին կերպով մաքրում են:

Կարևոր դէպքերում գլխաւոր արհեստապետը միւս արհեստապետների հետ կազմում է արհեստաւորաց ժողով: Արհեստաւորաց ժողովը հարցաքննում է խալՁաներին և աշակերտներին և նրանց վարպետութեան իրաւունք է տալիս:

Այդ հանդէսն ունի իւր շատ գեղեցիկ կողմերը: Վարպետ դառնալու պատրաստուող աշակերտը պարտաւոր է մի համեստ նախաճաշիկ տալ արհեստաւորաց ժողովի անդամներին, մի նուէր արհեստաւորաց գանձանակին, որ ունի ամեն արհեստաւոր դաս (համքար). նախաճաշիկից առաջ կատարում են մի քանի, կարելի է ասել կրօնական ծէսեր, օրհնութիւններ, բարեմաղթութիւններ, կարդացվում է և մի աղօթք և ապա սկսվում նախաճաշը: Ահա այդ աղօթքի համառօտութիւնը:

ա) Բարեխօսութիւն ամենայն սրբոց: բ) Սէր և միաբանութիւն և խաղաղութիւն միմեանց հետ: գ) Շնորհակալութիւն, փառք և գովեստ արհեստները հնարող, սուրբ գրքում յիշուած, արհեստագէտ անձանց: դ) Արհեստների օգտակարութիւնը և աստուածային վճիռը աշխատանքի հարկաւորութեան մասին: ե) Վարպետացու աշակերտին զանազան գեղեցիկ խրատներ՝ սէր, հնազանդութիւն, պարկեշտութիւն, արդարութիւն, ճշմարտութիւն, անխաբեփայլութիւն, անխարդախութիւն, աննախանձաւորութիւն և այլն: զ) Բացատրութիւն ընդունուած կարգ ու կանոնների: է) Աղօթք «Հայր մեր»:

Իւրաքանչիւր համքար ունի իւր միջից ընտրած մի գանձապետ, որի պարտքն է ցուցակագրել, թէ իւր արհեստակիցներից ո՞վ, ո՞րքան և ի՞նչ գումարի ապրանք է առնում մի եօթնեկում և համաձայն արհեստաւորի գնած մթերքի գումարին, ստանում է նո-

բանից մի որոշեալ թեթեւ նուէր. մանէթին մի կոպէկից սկսեալ մինչև 5 կոպէկ, նայելով մթերքի արժողութեանը և տեսակին: Այդ նուէրները հաւաքվում են իւրաքանչիւր համքարի առանձին «գանձանակում» և այդ գանձանակադրամներով, յետոյ ըստ տնօրէնութեան և որոշման արհեստաւորաց ժողովին, աղքատ արհեստաւորներին օգնութիւն կլինի, խեղճ արհեստաւորների որբերը կխնամուին, զանդուխտ թշուառներուն միանուագ օժանդակութիւն կլինի, տնանկ և անտէր մեռելները կվերցուին, մատաղներ կլինին, արհեստաւորաց գործոյն վերաբերեալ խնդրագիրներ գրողները կվարձատրուին:

Իւրաքանչիւր համքար ունի նոյնպէս իւր առանձին դրօշակը հայկական նշաններով, որոցմով նրանք ի մի խումբ են հավաքվում որ և իցէ եկեղեցական և կայսերական հանդիսաւոր օրերում: Ափսոս միայն որ Ախալցխայի արհեստաւոր դասի այս գեղեցիկ ազնիւ և պարզ սովորութիւնքը վերջին ժամանակներումս սկսել են հետզհետէ եղծուիլ:

Զ.

Հասարակական կեանքի մասին՝ Ախալցխայի հասարակութիւնը չունի ոչինչ գիտակցական գաղափար ի բաց առնելով արհեստաւորների դասը՝ որոնք իւրեանց գործոց և նախնական սովորութեանց առթիւ, սերտ կապուած են միմեանց հետ, միւսները, մանաւանդ հարուստները, առհասարակ չեզոք դեր են խաղում թէ քաղաքային, թէ Ազգային և թէ ընկերական հարցերում: Նրանք սիրում են ապրել մենակ, եթէ չէր լինիլ իրենց անձնական հաշիւներն, անձնական կրքերն, նորանք գուցէ չհամաձայնէին մինչև անգամ և կենակցել հասարակութեան հետ: Այդ ցաւալի երևոյթի պատճառն այն է որ, ինչպէս ուզում են հաւատացնել, հասարակութիւնը շատ ապերախտ է գտնուել դէպի նորանց անձնանուիրութիւնքը և մեծագործութիւնքը.....

Հասարակական կեանքի մասին հասկացողութիւն չունենալու բնական հետևանքն այն է որ Ախալցխայում չկան որ և իցէ հասարակական զարգացուցիչ տեղեր, ընթերցարաններ, թատրոն և այլն: Թատրոնասէրների երկու խումբ կայ որ երբեմն երբեմն, հանդամանքներին նայելով, տալիս են մեզ ներկայացումներ հայ, վրա-

ցի ռուս լեզուներով: Ունինք չորս հատ հիւրանոցներ «Արարատ», «Լոնտոն», «Կովկաս», «Ռոստով», մի քանի տրախտիրներ, երեք ժողովարաններ քաղաքական, զինուորական և զօրաց, որոնցից առաջինները նշանակուած են ճանապարհորդների համար, որոց թիւը խիստ շատ է լինում յունիս, յուլիս և օգոստոս ամիսներում, երբ Աբասթումանի և Ուռավելի հանքային ջրերի կուրսը բացվում է, իսկ երկրորդներից առաջին երկուսը նշանակուած են զլխաւորապէս թղթախաղի համար: Ախալցխայում կայ նմանապէս մի վայելուչ հասարակաց պարտէզ, բայց իւր փոքրութեան պատճառաւ բաւականութիւն չի տալիս քաղաքի բազմաթիւ ստորին և բարձր զինուորական աստիճանաւորներին և նորանց կանանց, ուստի և առ հասարակ քաղաքի բնակիչքը խորշում են այդ պարտէզից մանաւանդ հայ և հրէայ իգական սեռը:

Ախալցխայի հասարակութեան, նա մանաւանդ հայերի, ամենալաւ հասարակաց տեղերն են քաղաքի շրջապատ պարտէզները, ուր նոքա խմբովին՝ երբեմն և ընտանիքով զնում են և ծառերի շուքների տակ հանգստանում, այնտեղ թուրթ ուտում:

Այդ պարտէզներում միմիայն օտար մարդը կարող է տեսնել, այն ևս կողմնակի կերպով, Ախալցխայի ամբիսած հայկուհուն ճեմելիս կանանչ խոտերի վերայ և ծառերի տակից թուրթ հաւաքելիս և անուշ անելիս: Հասարակաց տեղերի կարգը կարելի է համարել և բաղնիքները, ուր գոնեա 15 օրը միանգամ գնում են անպատճառ մեր կանայք և ամբողջ ժամերով խուռն բազմութեամբ լուացվում: Ամենայն տեսակ նորութիւն, ամեն տեսակ լուր որպատահել է քաղաքի մի որ և իցէ անկիւնում, տարածվում է ամբողջ քաղաքում բաղնիքներում լուացուող կանանց — այդ կենդանի լրագրների—միջոցաւ:

Սովորութիւն է նմանապէս, մանաւանդ ստորին դասակարգերում դրկցութեան երթալն: Մի թաղի կանայք շատ անգամ հաւաքվում են այս կամ այն դրացու տան բակը և՝ այնտեղ թէ ամենայն ոք իւր ձեռքի գործովն՝ օրին. գուրպայ գործելով, թել մանելով, շորեղէններ ձևել—կարելով և այլն, է պարապում, և թէ միմեանց հետ մտքերով փոխանցվում: Նոյն բանը անում են և այր մարդիկ երեկոներին երբ փողոցից վերադառնում են տուն, մանաւանդ ձմեռուայ երկար գիշերները: Այդ գիշերները շատ ուրախ և զուարթ կերպով է անցնում, այստեղ զանազան անմեղ խաղեր են խաղում,

առասպելներ պատմում է այն: Դահվախանաներն մի և նոյն բանն են կատարում ցերեկով մանաւանդ կիւրակէ և տօն օրերում, այն տեղ սաղանդարների և աշուղների քաղցր ձայները և խաղերն հրաւիրում են մեծ բազմութիւն ժողովրդեան, որոնք մեծ ոգևորութեամբ լսում են Շահ-Իսմայիլի, Քեօռ-օղլուի և այլոց առասպելական հերոսների քաջագործութիւնքը: Հետաքրքիր են աշուղների, մանաւանդ նորեկների մի տեսակ հանելուկները (մուհամմէ), որոնք մեծ զուարճութիւն, կարելի է ասել, մի տեսակ լարուած, մտաւոր զբաղմունք են պատճառում հանդիսականներին: Աշուղը իւր մտքում վեր է առնում մի որ և իցէ առարկայի անուն, օրինակի համար փայտ: Մի թղթի վերայ նշանակում է այդ առարկայի մեկնութիւնը այս կերպով 1 վանկ 4 տառ 8, 1, 3, 4 թիւ և սկսում է երգով դրուադել և ներբողել փայտը, ի հարկ է առանց նորա անունը յիշելու, ցոյց տալով նորա օգտակարութիւը, ձևը, գանազան յատկութիւնները և այն և այլն: Հանդիսականներն ամենայն ճիգ թափում են թէ վերոյիշեալ մեկնութիւնից և թէ աշուղի երգած խօսքերից գուշակել առարկան և ով որ գտաւ, հաւաքած փողը որ 15—20 րուբլի է լինում, նա է ստանում, եթէ ոչ՝ ինքը աշուղը:

Է·

Ախալցխայի հասարակութիւնը չընայելով իւր աննախանձելի տնտեսական վիճակին շռայլ է դէպի հրաւէրները: Այսպէս մկրտութեան, թաղման ժամանակ նա անում է հրաւէր, տղայ և աղջիկ նշանելիս հարսնտես, և փեսատես, յետոյ հարսանիք: Վերջապէս տօնախմբութեանց ժամանակ դարձեալ հրաւէր և այն յատկապէս կանանց համար: Շատ ցանկալի կը լինէր, որ այդ հրաւէրների ժամանակ մի քանի աւելորդ և աննպատակ ծախսերը վերցնուէին, մանաւանդ այն մի քանի այլանդակ սովորութիւնքը, որոնք լինում են հարսանիքի ժամանակ, այն է չափազանց օղի գործածելն, կերած խմած եկեղեցի պսակ գնալն, հարսնացուին որպէս մի անզգայ էակ ընկոցի նման այս և այն խանումի, աղայի, կնքահօր, խաչեղբօր և այլոց կշտին երես ծածկած կանգնեցնելը, նորա գուցէ չըկամեցած ժամանակն պարելու հրաւիրելն, հանդիսականաց հետ խօսելու իրաւունք չունենալն և այլն: Թէ հրաւէրների և թէ առանին կենցաղավարութեան ժամանակ իգական սեռը Ախալցխայում առ հասա-

բակ արհամարուած է, թէպէտ նոյելով նորա չարաչար տնական աշխատութեանը, սակաւապէտ և համեստ կենցաղավարութեանը, նա իրաւունք ունէր վայելուչ և բարձր դիրք բռնել մեր ընտանիքում:

Վրացի կանայք Ախալցխայում աւելի ազատ վիճակի մէջ են, բայց նորանք չունին այն տանտիկնութիւնը, ինչ որ ունի մեր հայուհին... Այդ հրաւէրների ժամանակ մեր հասարակութիւնը զուարճացնող գլխաւոր միջոցն է պարը որ լենում է խմբովին: Արք և կանայք և աղջկունք ձեռք ձեռքի տուած, առանց միմեանցից քաշուելու, մի մեծ բոլորակ շրջան են կազմում և սազանդարների ածելու համաձայն տակտով խաղում են: Մինչև 15—20 տեսակ պարեր կան, որոնք թէ և զանազանվում են իւրեանց բաղխումներով, ոտքերի արագ կամ դանդաղ շարժեցնելուց, առաջ և ետք գնալուց ու գալուց, բայց սոքա հասարակ, միաձև են և ձանձրալի: Այդ պարերի ժամանակ սազանդարները ածելիս շատ անգամ երգում են մի որ և իցէ սիրահարական երգ տաճկերէն լեզուով:

Այդ երգերի մէջ կան երբեմն ժողովրդական լաւ բանաստեղծութիւններ: Եւրոպական պարը և երաժշտութիւնը հետզհետէ սկսել է մուտ գործել հարուստ ընտանեաց մէջ: Վրաց հարսանիքներում սազանդարներից ի զատ լենում են նաև իւրեանց կարելի է ասել, ազգային «Ցիմբլիպիտօն» և իւրեանց վրացական պարը: Հայ ժողովրդեան գործ ածած չափազանց օղին այնտեղ փոխարինվում է գինիով: Վրացիների մի վատ սովորութիւնն էս այն է որ նորանք աղջկան հետ բացի բաժինքից փող էլ են տալիս, մինչ դեռ հայերի մէջ փող տալու սովորութիւնը, բարեբաղդաբար, մինչև այսօր դեռ մտած չէ: Հրէաները նոյնպէս գործ են ածում սազանդարներ, խաղում վրացու կէնդ պարը: Մի առանձին սովորութիւն կայ հրէից մէջ որ նոյնպէս պախարակելի է: Պսակուող աղջիկը պարտաւոր է այնքան մենակ պարել, որ մի քանի հասակակից աղջիկ դադարեցնէ, հակառակ դէպքում նա լաւ հարսնայու չէ: Հրէայք աւելի չափազանց կերպով են գործ ածում զանազան եւրոպական խմելիքներ, իրենց ձեռքով շինած արաղներ և գինիներ և տեսակ տեսակ քաղցրաւենիք և շաքարեղէններ: Հրէաները առ հասարակ շատ խիստ են իրենց ազգային առանձնայատկութիւնքը, սովորութիւնքը պահպանելում և թէպէտ նոյնպէս հասարակական կեանք չունին, այնուամենայնիւ իւրեանց վերաբերեալ ամեն մի գործում ամենայն սիրով

ի մի հաւաքուելով վերջացնում են իւրեանց առտնին և հասարակական խնդիրները:

Ը.

Ախալցխայի հայ հասարակութիւնը թէպէտ Տաճկաստանի գաղթականներ են, բայց նրանց բնաւորութեան մէջ ոչինչ նմանութիւն չկայ Պոլսոյ հայերի հետ: Ախալցխացիք ծանրաբարոյ են, բնական առողջ դատողութեան տէր մարդիկ, թէ ծերերի և թէ միջահասակ մարդկանց մէջ շատերը կան: Սորանց խօսակցութիւնը՝ որպէս ասիական ժողովրդեան, լինում է ծանր ու բարակ առակներով և մասալներով:

Ախալցխացու մի որևիցէ թեթև առածի կամ առակի մէջ բովանդակվում են երբեմն շատ երկար և լաւ մտքեր: Ունինք մեզ մինչև հիմայ շատ սուր զուարճախօս և առակախօս պատկառելի ծերեր թէ հոգևորական և թէ աշխարհական դասակարգերից: Իւր ամեն մի ձեռնարկութիւնում Ախալցխացին հաստատամիտ է, եթէ իւր հասկացողութիւնը ըմբռնել է այդ ձեռնարկութեան օգտակարութիւնը: Ցարգանք և պատկառանք դէպի ծերերը, դէպի իշխանաւորները, մանաւանդ դէպի հոգևորականները մի առանձին յատկանիշ է Ախալցխացիների բնաւորութեան և այդ ոչ այնքան տգիտութիւնից է յառաջանում, որքան այն նախնական գեղեցիկ կրթութիւնից, որ ստացել են նոքա ժառանգաբար իւրեանց նախնիքներից: Այդ բանը հաստատվում է նրանով, որ Ախալցխացիք՝ չնայելով այդ իւրեանց հեզահամբոյր և խոնարհ բնաւորութեանը՝ պատրաստ են ամենայն կերպով բացարձակ խայտառակել որևիցէ անհատին, որից առաջ պատկառում էին, և որին շատ պատվում էին, եթէ նրանում տեսնեն կամ նրա մասին լսեն մի որևիցէ անարժան գործ կամ վարմունք: Այդ հանդամանքից օգուտ քաղելով ճարպիկ և վարպետորդի մարդիկ շատ անգամ մոլորեցնում են խեղճ հասարակութեանը և նրան գործիք են շինում իրենց որևիցէ անձնական վրէժը մի ձայն և համարմունք ունեցող անձնից լուծելու: Շատ ջերմեռանդ են դէպի իւրեանց կրօնը և եկեղեցին: Չէ կարելի ասել թէ Ախալցխացիք ուսումը ատում են, ընդ հակառակը շատ էլ սիրում են. դորա համար բացի ուսումնարաններից Ախալցխայում կան բաւականին թուով կանայք և ծեր տիրացուներ, որոնք իւրեանց տներում ամնական 5—10 կոպեկով կարդալ են սովորցնում,

ցաւալին այն է միմիայն, որ նոքա փոքր ինչ խէթ աչքով են մոիկ տալիս այժմեան նոր ուսմունքներին և դիտութեանցը, թէև վերջին տարիներս, պէտք է ճշմարիտն ասել, այդ ևս վերջացած է և բազմաթիւ տղաներ և օրիորդներ, չնայելով ծնողաց թախանձանացը, չեն ընդունվում ուսումնարաններում՝ տեղ չլինելու կամ ժամանակից դուրս լինելու պատճառաւ։ Ախալցխացիք սակաւապէտ և չարքաշ մարդիկ են, արհեստաւոր և ստորին կարգը ամբողջ օրը չարաչար աշխատում է, բաւականանալով ուտիք օրերում մի կտոր հաց ու պանրով, իսկ պաս օրերում լուբիով, սոխով և մի երկու փոքրիկ գաւաթ (ֆինջան) սև դառն ղայֆայով, որի մի գաւաթը արժէ ½ կոպէկ։ Ամբողջ շաբաթ չարաչար աշխատելից յետոյ, նա միմիայն կիւրակէ օրը գնում է առատ միս, եղ և այլն և իւր ընտանիքով շրջապատուած փառաւորապէս ճաշում և ընթրում է. կերակուրներն են սովորաբար կոլոլակ (քիւֆթէ) ե ա հ ն ի, փլաւ, խորոված, մի քանի տեսակ տօլմա, տեսակ տեսակ մրգերից շինած կոմպոստներ ու տեսակ տեսակ ապուրներ, ինչպէս՝ թանապուր, մալեզապուր, կաթնապուր, ոսպնապուր, թթուապուր, դղմաճապուր, չամչապուր, չորթանապուր, մախոս, մոիկ տուած թէ ո՞ր օրուայ և ի՞նչ ժամանակի համար են պատրաստուել դոքա։ Սովորական լաւ ճաշը բաղկանում է չորս հինգ տեսակից, իսկ հրաւէրը՝ 7—8 տեսակից և ընթրիքը շատ համադամ է շինվում սովորաբար քան ճաշը։ Ախալցխացոց լեզուն է փոքր Ասիայի հայերի տաճկախառն բարբառը և շատ կոպիտ։ Ունի մի առանձին մասնիկ՝ կը, որ կպչում է ամէն մի բառի վերջում ապառնի և ներկայ դէպքերում, իսկ այդ դէպքերը դժուարաւ է որոշվում, որովհետև երկուքն էլ Ախալցխացւոց լեզուի մէջ միատեսակ են։ Հնչիւնները և առոգանութիւնը ոչ պօլսեցւոց նման խիստ է և ոչ Հայաստանցւոց նման փափուկ, այլ երկուսի միջին աստիճանը և այդ 'ի հարկէ սխալ է։ Խօսակցութեան ձևն ու իմաստները շատ կոշտ ու կոպիտ է և հայհոյական ու անպատշաճ բառեր գործ ածելն մի սովորական բան է։ Սոսկում է օտար մարդը, երբ փողոցներում շրջելիս լսում է փոքրիկ մանուկների բերանից այնպիսի անվայել հայհոյանքներ, որոնք նոքա արտասանում են անգիտակցաբար և որոնք նոքա սովորում են իրանց մօր կաթը ծծելիս։

Զգեստները մեծ մասով թէ արանցը և թէ կանանցը ասիական տարազով է։ Նորերը հետզհետէ փոխում են այր մարդկանցից։

կանայք դուրս գնալիս փաթաթվում են մի տեսակ լիմնի և նուշի ձևով սպիտակ խայտերով մեծ էշրամով, հագնում են կերպասե և մահուդէ ջուպպաներ, առաջին կարմիր գոգնոց մահուտէ, և ձգում այս զարդերը՝ ոսկեայ մանեակ, ապարանջաններ, գնտեր, կոուց, ղելի ֆլաղ, շերիտ և շատ մատանիներ, որոնք միանգամայն մեռած դրամագլուխ են, և եթէ տրուէր իրանց մարդկանց ձեռքը, նոցա արժէքով կարող էին, անտարակոյս, աւելի լաւ և աւելի յաջողակ կերպով առաջ տանել իրանց առևտրական և արհեստական գործերը: Կանանց նախկին դեղնագոյն մէսփափուճները հետզհետէ փոխվում են մաշիկների և կիսակոշիկների, իսկ արանց եամանիները կոշիկների: Ժամացոյց ոսկի շղթայով գործածելը մեր կանանց համար սկսել է նոյնպէս սովորութիւն դառնալ: Կանայք զլիներին ծածկում են կարմիր ֆէս, առաջի կողմից ծաղկաձև փաթաթած մետաքսեղէն ճոթ, ետքևի կողմից մի մեծ փունջ կապտագոյն մետաքսէ թելեր, գլուխը ոսկեղօծ արծաթով շինած: Ախալցխայի ժողովրդական կողմից հայերը սաստիկ մաքրասէր են տներում, իսկ իրանց հագուստի մաքրութեան մասին անհոգ. վրացիների հագուստը շատ մաքուր են, իսկ տները անմաքուր, հրէայք թէ հագուստի և թէ տան կողմանէ առ հասարակ անմաքրասէր են: Դրանց բնակարաններում միմիայն մի մաքուր սենեակ է լինում. թէպէտ և առ հասարակ երեք ազգն էլ շատ են սիրում տաք ջուրը և շուտ շուտ բաղնիս գնում:

Համեմատելով ուրիշ քաղաքի հասարակութեանց հետ, Ախալցխացիք ընդհանրապէս հանդարտ և երկիւղած ժողովուրդ են: Աւազակութիւն, գողութիւն, թէև պատահում են, բայց շատ նուազ կերպով: Մաքսանենգութիւնը բաւականին արատաւորում է Ախալցխացիների ուրիշ շատ արժանաւոր կողմերը:

Թ.

Ախալցխան ունի հետևեալ տարեկան արդիւնքն ու ծախքն:

Արդիւնք.

Անշարժ կալուածներից	16 կոպ.	12806 ր. 8 կ.
Հասարակաց կշեռքից և կոդից		3063 — »
Գիւղական տուրքերից (земскій сборъ)		3000 — »

Վաճառականներից և այլևայլ խանութպաններից.	2371	— 40
Սպանդանոցից.	1416	— »
Խմիչքների տուրքերից (акцизный сборъ) . . .	1038	— 90
Քաղաքական հողերի վաճառմանից	650	— »
Խոնամարտայ դաշտավայրից	460	— »
Գետի վերայով տարուող դերաններից	231	— 50
Նոտարիուսի միջոցաւ	338	— 64
Աճրդախոսական վաճառքներից	13	— »
գումարն . . .	25,368	— 52

Ծ ա խ ք.

Սատրին աստիճանաւորաց բնակարանի և դիւանատանց	7077	— 34
Զինուորական աստիճանաւորաց բնակարանի . . .	4395	— 65
Ոստիկանարանի ծառայողաց	3900	— »
Ճարտարապետին	650	— »
Տեղական զօրաց	570	— »
Լապտերներուն.	638	— 50
Հաշտարար դատարանին նպաստ	480	— »
Կաթոլիկաց եկեղեցւոյն խոնամարտայի փոխարէն .	300	— »
Վրացւոց օրիորդական ուսումնարանին նպաստ . .	300	— »
Կամուրջներու և ճանապարհներու շինութեան. .	248	— 7
Էտապի (этапъ)	200	— »
Հասարակաց պարտիզին	180	— »
Քաղաքային բանտին	169	— 80
Ջրանցքներու շինութեան	78	— »
Անակնկալ ծախուց համար . . , ...	107	— »
Բլանկներ տպագրելու	31	— 84
գումարն. . .	19,426	— 20

Թէպէտ այս ցուցակից երևում է որ Ախալցխայի իւրաքանչիւր տարուայ արդիւնքը 6000 ռուբլիով չափ աւելի է ծախսից, այնու ամենայնիւ այս բոպէիս Ախալցխան ունի չոր պարտք 22,000 ռ. արքունական գանձարանին, 2800 ռ. շտաբ կվարտիրին. այդ նորանից է որ մենք չունինք օրինաւոր և լիակատար ծախուց ցուցակ: Շատ ծախսեր լինում են կամայաբար, թողայդ, արդէն մեր ցուցակագրած ծախսի ցուցակումն էլ կան մի քանի աւելորդ ծախսեր: փափագելի է, որ մեր ապագայ քաղաքային կառավարութեան առաջին և գլխա-

ւոր գործը լինէր Ախալցխայի արդիւնքների և ծախքերի կանոնաւորելը, մի տեսակ շատ կորցրած արդեանց աղբիւրների դուրս հանելը և մի քանի ապօրինի ծախսերի բոլորովին վերջացնելը: Դա մի երեւելի և քաղաքի համար կենսական հարց է: Հասարակական գումարների հետ պէտք է բարեխղճաբար վարուել և չըվատնել յումպէտս: Մենք չուղեցինք քրքրել Ախալցխայի գոնեայ վերջին 10 տարուայ ֆինանսի հաշիւներն. դրանցից հաւանականաբար, շատ վատ հոտեր պէտք է դուրս գային:

Ախալցխան իւրաքանչիւր տարի վճարում է այս տուրքերը—

Արքունական հարկ.	16,410 ռ.
Առևտրական հարկ.	13,500 ռ.
Ապագայ քաղաքային կառավարութեանը. . . .	5,500 ռ.

Ժ.

—Ախալցխան բուսականութեան կողմից բաւականին հարուստ է և տանձն ու խնոձորը նորա գլխաւոր և շահաւէտ արտադրութիւններն են: Մինչև 30 տեսակ տանձ և 20 տեսակ խնձոր է լինում Ախալցխայում:

Ախալցխայի մէջ կան այս ուսումնարաններն՝ ա) քաղաքային ուսումնարան, ուր կան 141 աշակերտ, 5 ուսուցիչ. բ) Կարապետեան արական, ուր կան 157 աշակերտ և 7 ուսուցիչ. գ) Վարդանեան, արական. ուր կան 184 աշակ. և չորս ուսուցիչ. դ) Եղիսաբէթեան օրիորդ. ուր կան 62 աշակ. և 7 ուսուցիչ ե) Նոր-Արշալոյս, օրիորդ. ուր կան 67 աշակ. և 7 ուսուցիչ: Օրիորդական ուսումնարաններում կան և մի մի ուսուցչուհի:

Հայ կաթոլիկաց. ա) Ս. Յովհաննէսի դպրոց արական, 60 աշ. 2 ուսուց. բ) Վերափոխման Աստուածածնի 25 աշակ. և 2 ուսուց. գ) Զրիավարժ օրիորդական ուսումնարան, 59 աշակ. 3 ուսուց.

Հրէից. վեց առանձին կրթարաններ ուր կան 100 աշ. 5 խախամ:

Ֆելդշերների ուսումնարան, 15—20 աշակ.

Կարապետեան, Վարդանեան, Եղիսաբէթեան և Նոր-Արշալոյս ուսումնարանները կառավարվում են լուսաւորչական հայոց եկեղեցական արդիւնքով: Այդ չորս ուսումնարանաց վերայ եկեղեցին գործ է ածում տարեկան 4700 ռ. Վարդան Վարդանեանցը իւր կառուցած համանուն ուսումնարանին իւրաքանչիւր տարի իւր սեպհականութիւնից

տալիս է 400 ռ. Եղիսաբէթեան և Նոր-Արշալոյս ուսումնարանների հարուստ և միջակ կարողութիւն ունեցող աշակերտուհիներից թոշակ է ստացվում 500 ռ. ուրեմն չորս ուսումնարանների տարեկան ծախքն է ընդամենը 5600 ռ: Կարապետեան ուսումնարանը բացուած է 1844 թուականին, Վարդանեանը՝ 1863-ին, Եղիսաբէթեանը՝ 1870-ին ժողովրդական փողով, հոգատարութեամբ ժողովրդասէր և անձնանուէր Սուքիաս Եպիսկոպոսի Պարղեան: Նոր-Արշալոյս ուսումնարանը 1863-ին, պ. Ռափայէլ Սաղաթէլեանցի աշխատութեամբ, որ առաջինն է եղել Ախալցխայում օրիորդական դպրոց բացող: Հայ-կաթոլիկաց երկու ուսումնարանները կառավարվում են նորանց եկեղեցական գումարով, որոնց երկուքի տարեկան ծախքն է 500 ռ. Վրացոց օրիորդական ձրիավարժ ուսումնարանը հիմնեց ուսումնասէր և գործունեայ տիկին Մուսխելովան, 1873 թուականին, և մինչև 1875 թուականի վերջերը գեղեցիկ անձնանուիրութեամբ թէ ուսումնական և թէ տնտեսական մասը յաջողակ և անսայթաք կերպով յառաջ տարաւ: Այժմ կառավարվում է մի բարեգործական ընկերութեան զոհաբերութեամբ: Այդ ուսումնարանի տարեկան ծախսն է 1100 ռ: Բարեգործական ընկերութեան անդամների թիւը առ այժմ է 51, որոնցից երկուսը, պատուաւոր անդամներ, նուիրում են տարեկան 50-ական ռուբլի. 49 մշտական անդամներ, որոնց իւրաքանչիւրը նուիրում է 10 ռուբլի. իւրաքանչիւր տարի 300 ռուբլի էլ քաղաքի կողմից օժանդակութիւն է լինում այդ ուսումնարանին. Ներկայացումներից գոյանում է նոյնպէս տարեկան մօտ 200 ռ. ցաւալի է միմիայն որ պ. պ. մշտական անդամները չեն վճարում ամենքը իւրեանց խոստացած տարեկան տասնական ռուբլին և այդ պատճառով մինչև հիմա այդ պատուական ուսումնարանը անհաստատ և տարտամ վիճակի մէջ է:

Այսպէս այս տարի 49 մշտական անդամներից փող վճարել են միմիայն 17 հոգի: Մինթէ այդ չվճարող պատուելի անձինք այդ աստիճան սառնասիրտ են դէպի այդ ազնիւ հիմնարկութիւնը և այդ չափ անյարգ են համարում իւրեանց ստորագրութիւնը և գրաւոր խոստումը:

Քաղաքային ուսումնարանը կառավարվում է արքունական փողով և տարեկան ծախքն է 4000 ռուբլի: Հրէից ուսումնարանները կառավարվում են աշակերտներից ստացուած թոշակադրամներով, որոնք ստացվում են սովորականից բոլորովին տարբեր կերպով:

Պէտք է ասած, որ հրէից դասագրքերը կրօնական են և գլխաւորապէս Հին Կտակարանն է մաս առ մաս բաժանուած: Դորա իւրաքանչիւր մասերը կազմում են մի կամ երկու տարուայ կուրս: Առաջին դասագրքերը կարդալ սովորելու համար իւրաքանչիւր աշակերտ պարտաւոր է վճարել խախամ ուսուցչին 8—10 ռուբլի. երկրորդ դասագրքի համար վճարում է 16—20 ռուբլի. երրորդին՝ եռապատիկը այդ գումարի և այդպէս մինչև վերջին դասագիրքը, որի արժէքն է 100 ռ. և երբ աշակերտը աւարտեց և այդ գիրքը, նա արդէն պատրաստվում է խախամ դառնալու: Հրէայք ըստ մեծի մասին դրագէտ են, միայն վրացերէն լեզուով, որով և միշտ խօսում են: Այդ լեզուի գրութիւնը դոքա սովորում են յիշեալ ուսումնարաններում:

Ախալցխայի մէջ երբեմն երբեմն լինում են հրապարակական դասախօսութիւններ ռուսաց լեզուով. զինուորական ժողովարանում, անցեալ տարի միմիայն մի անգամ էլ քաղաքական և զօրաց ժողովարաններում, իսկ հայկական լեզուով՝ Եղիսաբէթեան ուսումնարանում՝ ամենայն կիւրակէ օր (այստարի Զատկից սկսեալ), եթէ գլխաւոր արգելքներ չլինին: Զինուորական ժողովարանում տրվում են երբեմն կոնցերտներ, որին մասնակցում է և գեղեցիկ սեռը:

Ախալցխայում կան հետևեալ եկեղեցիները—

Լուսաւորչական հայոց. ա) Սուրբ Փրկիչ մայր եկեղեցի, շինուած 1837 թուակ. բ) Սուրբ Վարդանանց, 1862 թ. որ շինել է Վարդան Վարդանեանցը իւր սեպհականութիւնից. գ) Սուրբ Ստեփաննոս 1828 թ. դ) Սուրբ Լուսաւորիչ 1832 թ. որ հնութեան պատճառավ այժմ փակուած է:

Ռուսաց. Բերդի մայր եկեղեցին, որ առաջ մզկիթ է եղել կ. Պոլսոյ Այա-Սոփիայ նշանաւոր մզկիթի ձևով:

Հայ կաթոլիկաց. ա) Սուրբ Աստուածածնի վերափոխման եկեղեցի. բ) Սուրբ Մարիամ. գ) Սուրբ Յովհաննէս. դ) Սուրբ Խաչ, Ներսէս Շինող կաթողիկոսից հիմնարկած:

Յունաց եւ Վրացոց՝ Սուրբ Գէորգ, նոր և գեղեցիկ շինութիւն

Հրէից Սինագոգան, նոր և գեղեցիկ շինութիւն, որի մէջ իրաւունք չունի մտնելու հրէից իգական սեռը, այլ պարտաւոր է դրան առաջ կամ պատուհանների կշտերին կանգնել և աղօթել:

ԺԱ.

Ժամանակ անց կացնելու համար, ինչպէս ասում են, Ախալցխայում կան զանազան խաղեր թէ հին և թէ նոր: Հին խաղերը՝ մատանի-խաղ, թուրա, աչքախուփ, լալ-օյին, պուտ-պուտ և այլն իրանց պարզութեամբ և անմեղութեամբ բաւականին զուարճալի և հետաքրքրական խաղեր են, նա մանաւանդ իւրեանց ժողովրդականութեամբ: Դորանցից փոքր ինչ զանազանվում են նարդին, ղույին, դաման, ընկուզախաղ և այլն, որոնք երբեմն շահասիրական նպատակներով են խաղացվում, իսկ թղթախաղը, իւր շատ տեսակներով, միանգամայն մի պարսաւելի և կորոտաբեր սովորութիւն է, որ մտած է ախալցխացիների, մանաւանդ հայկական նոր սերնդի մէջ և իւր զարգացման վերին աստիճանին է հասած: Փոքրիկ մանուկներից, ուսումնարանների աշակերտներից սկսեալ մինչև հասակաւոր և ընտանեաց տէր անձինք ընդհանրապէս վարակուած են այդ ախտով, և առաւել բարեկենդանի օրերում, երբ այդ խրախճանութեան համար նշանակուած օրերը, մեզանում շատ ընտանիքների համար թղթախաղի երեսից, դառնում են վշտերի, դառնութեան և աղքատութեան օրեր: Բացի ժողովարաններից և հիւրանոցներից շատ նկուղներ, շատ կրպակներ և շատ մասնաւոր մարդկանց տները բարեկենդանի օրերում կերպարանափոխվում են թղթախաղի տներ և նրանցում, նա մանաւանդ վերջիններում, մեծամեծ գումարների առ ու ծախս է լինում: Թղթախաղի պատճառաւ երբեմն պատահում են յուսահատ անձնասպանութիւններ:

ԺԲ.

Ախալցխան իւր գաւառով գտնվում է աշխարհագրական լայնութեան 40° և երկայնութեան 41° տակ, քաղաքը ծովի մակերևութից բարձր է, գերմանացի Աբիխ երկրաբանի հաշուով, 3128 ոտնաչափ և ամեն կողմից շրջապատած է բարձր լեռներով, այդ պատճառաւ Ախալցխայի օտարաժինը (կլիմա) խիստ է, բաւականին ցուրտ, եղանակը սաստիկ փոխոխական: Ձմեռը սովորաբար սաստիկ է և ցրտութիւնը անցնում է 25°-ից, ըստ Ռէօմիւրի գարունը անձրևային է և հով, ամառը տաքութիւնը շատ հաղիւ է հասնում Ռ. 30° և այն կարճ, 2—3 շաբաթ ժամանակ, աշունքը չոր է և ախորժ:

Հողմերից տարուայ մեծ մասում փչում են արևմտեան հողմերը ամառը և աշունքը հիւսիսա-արևելեան հողմերը:

Ախալցխայի հողը առհասարակ կաւուտ է, այդ պատճառով բերքը այն ժամանակն է լաւ և առատ լինում համեմատաբար, երբ գարունը անձրևային է լինում:

Հացի բերքն ընդհանրապէս սակաւ է, թէև քաղաքի արտերի մեծ մասը ջրարբի են: Ցանքը երկու մանդամէ կատարվում, գարնանային ցանք և աշնանային ցանք, և երկու անգամուան ցանքն էլ հընձում են ամռան սկզբներում, աշնանայինը 10—15 օր առաջ գարնանային ցանքից: Քաղաքը իւր սահմանական գծի մէջ ունի մօտ 200 արտ որոնցից տարէնն ստանում է երկու անգամուայ ցանքից ի միասին, մօտ 15,000 չետվերտ ցորեն և 800 չետվերտ գարի:

Ախալցխայի ժողովուրդը, որպէս ասիական ժողովուրդ, առհասարակ անուշադիր է դէպի կեանքի առողջապահական կանոնները, որպիսի անյաջող պայմանը միանալով եղանակի յաճախակի և շատ զգալի փոփոխականութեան, բնակարանների անյարմարութեան և ըստ մեծի մասին խնաւութեան և բաղմատեսակ թաց մրդերի չափազանց գործածութեան հետ, տարուայ գրեթէ չորս եղանակումն էլ յառաջացնում են զանազան թեթև և ծանր հիւանդութիւններ, որոնցից գլխաւորներն ու սովորականներն են թոքախտ, տենդ, ոսկրացաւ, ճճիների, գլխաւորապէս սոլիտերի, հիւանդութիւններ, քարացաւ, հարինք կամ ջերմախտ (ըստ տեղացւոց՝ վարցաք), աչքացաւ: Երեք տարուց ի վեր Ախալցխայի երիտասարդները ստէպ ստէպ ենթարկվում են Ատղկան հիւանդութիւններին:

Դէպի բժիշկները և բժշկականութիւնը ախալցխացիք ընդհանրապէս շատ անտարբեր՝ են մասամբ ազքատութիւնից և ըստ մեծի մասին տգիտութիւնից:

Նոր հիւանդացող մարդը նախ և առաջ փոձում է լաւանալ առանին դեղերով, կամ շատ անգամ առանց դեղի, առաւելապէս միջին և ստորին դասակարգերը, յետոյ սափրիչներից, որոնք մեծ գործնականութիւն ունին Ախալցխայում, և վերջ ի վերջոյ երբ, ինչպէս իրանք են ասում, դանակը ոսկորին է հասնում, զիջանում է հիւանդը բժիշկ հրաւիրել, որի և տուած խրատները և գրած դեղերը պահում են և խմում այնպէս և այն չափով, ինչպէս որ իրենց բարի կամքն է:

Բժիշկների խրատները և դեղերը ծաղրելու և նորանց զանց

առնելումը աւելի ընդունակ են կանայք. մի ընդհանուր սովորութիւն է դարձած ախալցխացիների մէջ, առանց մի օրինաւոր պատճառի և առանց բժիշկի նախապէս գիտութեանը և համաձայնութեանը ձեռքերից՝ և ծոծրակից արիւն թողնել:

Բացի բժշկական, առտնին և սափրիչների դեղերից հիւանդները շահվում են նաև, նայելով հիւանդութեան տեսակներին, Ախալցխայի շրջակայքում եղած Աբասթումանի Ուռավէլի, Ասպինջայի և Ծնիբանի հանքային տաք, սառը և դաղջ ջրերով:

Ախալցխայի մէջ կան մի քանի հին և պատուաւոր ընտանիք, որոց անդամները իւրեանց չարքաշ կենցաղավարութեամբ իրանց վարժեցրել են կլիմայի զանազան ազդեցութիւններին, այնպէս որ տարուայ չորս եղանակումն էլ ոմանք մանն են գալիս մի և նոյն սովորական բարակ շորերով առանց վերարկուի, իսկ ոմանք սենեակում տաք վառարանի կշտին նստում են ամբողջ ժամերով մի և նոյն մուշտակով և մորթեայ փափախով, որով շրջում են 20—25° ցրտութեան մէջ փողոցներում:

Կեանքը ախալցխացիների մէջ երկարակեաց չէ, 70—80 տարի հաղիւ ապրողներ կան: Այր մարդկանցից աւելի շուտ մաշվում են կանայք, շատ կանուխ, 14—15 տարեկան հասակում, պսակուելներուն, որդեծնութեամբ հարուստ լինելներուն պատճառով:

Ախալցխայում ստացվում են հետևեալ պարբերական հրատարակութիւնները—Մեղու Հայաստանի՝ 27 օրինակ. Արարատ՝ 26. Մշակ՝ 10. Դպրոց՝ 3. Փորձ՝ 8 (առ այժմ). Кавказъ 13, Тиф. Вѣст. 11, Дроэба 8: Լեհերէն լեզուով հինգ լրագիր են ստացվում, որոնցից իւրաքանչիւրը մի մի ստորագրուող ունի. ռուսաց պարբերական հրատարակութիւններից Русскій Инвалидъ 19 ստորագրուող ունի: Բացի դորանից 57 լրագիր և օրագիր մի-մի կամ երկերկու օրինակ են ստացվում:

Ե. ԴԵՂԱՄԵԱՆՑ

28 մայիսի 1876.
Ախալցխա.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Բոլոր քաղաքական աշխարհի ուշադրութիւնը ներկայումս բացառապէս դարձած է դէպի Արևելքում պատահող անցքերը: Հերցեգովինայի անընդհատ դիմադրութիւնը Օսմանեան կայսերութեան զօրաց դէմ, ապստամբութեան տարածուիլը նաև Բոսնիայում, Բուլղարիայի պատերազմելու դրդռուած տրամադրութիւնը, տաճիկների գործ դրած եղեռնագործութիւնները ապստամբուած գաւառներում, Սալոնիկի մէջ պատահած սպանութիւնները, յեղափոխութիւնը, սուլթան Աբդուլ-Ազիզի գահընկեցութիւնը, Սերբիայի պատերազմ յայտնելը,—ահա այս ամենը թելադրում է շատերին կարծել, որ դուցէ շուտով Արևելեան ահեղ հարցը, որ շարունակ կէս դար անհանգստացնում է Եւրոպային, մի բոլորովին նոր կերպարանք կստանայ: Եւրոպական քաղաքականութիւնը իւր հաշիւներն ունենալով, թէ և դեռ ևս չի կամենում թոյլ տալ, որ Տաճկաստանի կայսերութիւնը բոլորովին հիմնայատակ լինի, այնու ամենայնիւ կրաւորապէս ներկայ է գտնվում նորա քայքայմանը: Բայց Եւրոպան իրաւունք չունի անտարբեր հանդիսատես լինել ճնշուած քրիստոնեաների յուսահատ մաքառումներին:

Թէև մինչև այժմ քիչ արիւն չէ թափուել Հերցեգովինայի սար ու ձորերում, բայց մինչև իրանց վսեմ նպատակին հասնելը, երևի դեռ ևս շատ արեան հեղեղներ պիտի թափուին Դանուբի, Պրուտի, Տիսսի եզերքներում, Բոսֆորի և Արխիպելագի մէջ, և գուցէ նաև Եփրատի և Տիգրիսի ափերում....

Մինչև այժմ եւրոպական դիպլոմատիան շատ քիչ բան է արել այդ վտանգի առաջքն առնելու համար: Թէև Բ. Դուռը շատ անգամ զանազան խոստմունքներ է արել ապահովացնելու իւր քրիստոնեայ հպատակների վիճակը, բայց այդ խոստմունք-

ները նա այնքան վատ է կատարել, ինչքան և իւր դրամական պարտաւորութիւնները:

Հերցեգովինացոց ապստամբութիւնը բորբոքուեցաւ անցեալ ամառը: Հերցեգովինան այս դարու 50 ական թուականից Բոսնիայի մէկ մասն է կազմում:

Տասներրորդ դարում Հերցեգովինան դեռ անկախ էր: Երկար ժամանակ նա ընդդիմանում էր տաճիկներին, բայց երբ ներքին երկպառակութիւնները միանգամայն թուլացրին նորան, այն ժամանակ նա դառաւ տաճիկների ղոհ 1483 թուին:

Ներքին վարչութիւնը մնաց միևնոյնը, բայց Հերցեգովինային ամենասաստիկ հարուածը տուեց նորա մեծամեծներին մահմեդականութեան դարձնելը:

Ուրիշ Սլաւոնական երկիրների պէս Հերցեգովինացոց մեծամեծներին առաջարկեցին ընտրել երկուսից մէկը՝ կամ մահ, կամ մահմեդականութիւն. նոքա նախադասեցին հաւատաղրուժութիւնը և առաջուայ իշխանը դառաւ մահմեդական բէգ: Այնուհետև զիւղացին տէրութեանը վճարում էր խարաջ և մեծ հողավարձ, իսկ իւր կալուածատիրոջը և՝ հարկ էր տալիս և՝ բէգառ քաշում:

Այդ անտանելի դրութիւնն ստիպեց Հերցեգովինացոց զէնք բարձրացնել, և մինչև այսօր նոքա քաջութեամբ պաշպանում են իրանց, չը նայելով բոլոր զրկանքներին, պաշարների պակասութեան, մինչև այն աստիճան, որ տաճկական բանակի զօրագլուխ Մուխտար փաշան շատ անգամ ստիպուած էր լինում յետ դառնալ դէպի իւր բանակի գլխաւոր ապաստանարանը՝ Մօստար:

Նոցա անընդհատ պատերազմը իւրեանց անկախութեան համար և Տաճկաստանի անընդունակութիւնը այդ ապստամբութիւնը դադարեցնելու, անցեալ տարի ստիպեցին եւրոպական տէրութիւններին միջամտել հաշտութիւն ձգելու նպատակով և Աւստրո-Ունգարային յանձնուեցաւ կազմել հաշտութեան պայմանների նախագիծը: Ցիշենք այստեղ համառօտ ձևով, թէ ի՛նչ վերանորոգութիւններ էր անհրաժեշտ համարում Անդրաշին և ի՛նչ էին պահանջում ապստամբները:

Անդրաշիի վերանորոգութեանց հիման վերայ Հերցեգովինացիներին և Բոսնիացիներին առաջարկում էին՝ 1) լիակատար թողութիւն. 2) ապահովութիւն հայրենիք վերադարձող փախստականներին. 3) օգնութիւն եկեղեցիներ և տներ շինելու համար, նաև

սերմ բաժանել ցանքի համար. 4) հողավարձից ազատ պահել մէկ տարի, իսկ միւս հարկերից երկու տարի. 5) դաւանութեանց մէջ հաւասար իրաւունքներ. 6) հարկերի կապալատուութեան վերացումն. 7) հարկերից մէկ մասը ծախսել տեղական պիտոյքների համար. 8) մասնաժողովը, որ պիտի հսկէ այդ վերանորոգութիւնների ճիշտ իրագործութեանը, բաղկացած լինի կիսով չափ քրիստոնեաներից և կիսով չափ մահմետականներից. 9) հողագործների վիճակը բարելաւացնել:

Ապստամբները այդ պայմանախօսութեան ժամանակ յայտնեցին Դալմացիայի Բոդիչ գաւառապետին և Եւրոպացոց տէրութիւնների հիւպատոսներին, որ նոքա չեն կարող ընդունել այդ տեսակ պայմաններ, և առաջարկեցին իւրեանց կողմից հետևեալ պահանջները.

1) Որ Հերցեգովինայի հողերի գոնէ երրորդ մասը ժողովրդի սեփականութիւն լինի.

2) Որ Տաճկի կառավարութիւնը դուրս տանէ իւր զօրքը Հերցեգովինայից, և մշտական կերպով թողնէ միայն քանի մի բանակ հետևեալ տեղերում—Մոստար, Ստոլաց, Տրեբինիէ, Նիկշիչ, Պլեվլա և Ֆոչա.

3) Որ Դուռը վերանորոգի բոլոր քրիստոնեայ ընտանիքների քանդուած տները և եկեղեցիքը, որ գոնեա մէկ ամբողջ տարի ուտելու պաշար տան, որ հասցնեն նոցա երկրագործական գործիքներ, որ նոքա չը վճարեն ոչինչ հարկ երեք տարուայ ընթացքում իրանց հայրենիքը վերադարձած օրից.

4) Որ Հերցոգովինայի քրիստոնեաները վայր չեն դնիլ իւրեանց զէնքը, մինչև որ մի և նոյնը չանեն բոլոր տեղական մահմետականները և մինչև չերագործուին լիովին բոլոր խոստացած վերանորոգութիւնները.

5) Որ Հերցեգովինայի ժողովրդի վերադառնալու օրից, նոցա պատգամաւորները խորհրդակցին տէրութեանց պատգամաւորների հետ՝ տնօրինել այնպիսի վարչութիւն, որ համապատասխանէր Անդրաշիի առաջարկութիւններին, որ այդ վերանորոգութիւնները անմիջապէս գործադրուէին Հերցեգովինայի և Բոսնիայի այն մասերում, որտեղ դեռ չէ ծագել ապստամբութիւն:

6) Որովհետև ապստամբները երկիւղ են կրում, որ չը լինի թէ Հերցեգովինայի քրիստոնեաների համար նշանակած գումարը անցնի

տաճկական ատիճանաւորների ձեռքը. նոքա պահանջում են, որ այդ դումարի կարգադրութիւնը զործ դրուի եւրոպացիներից կազմուած մանաժողովի հսկողութեամբ:

7) Վերջապէս, որ ռուսաց և աւստրիացոց տէրութիւնները թողնեն իրանց ներկայացուցիչներին վերև յիշած վեց քաղաքների մէջ, որպէս զի նոքա հսկողութիւն անեն վերանորոգութիւնների ճիշտ իրագործուելուն:

Ըստ երեւութին ապստամբների այդ պահանջմունքների հիմանց վերայ կայացաւ համաձայնութիւն Բերլինում եւրոպական տէրութեանց մէջ, որոնք պիտի հարկադրեին, որ այդ պայմանները ընդունուին Կոստանդնուպօլսում: Ինչպէս յայտնի է, բոլոր տէրութիւնները համարեա ընդունեցին Բերլինում կայացած այդ խորհրդակցութիւնը, բացի Անգղիայից, որ բոլորովին հրաժարուեցաւ խառնուիլ Տաճկաստանի գործերում: Պօլսոյ մէջ պատահած յեղափոխութիւնը, որի հետեւանքն էր Աբդուլ-Ազիզի գահից ընկնելը, ժամանակաւորապէս, զուցէ և յաւիտեան, արգելք եղաւ դաշնակից տէրութիւններին Տաճկաստանի կառավարութեանը ներկայացնել Բերլինի մէջ կայացած առաջարկութիւնը:

Բոսնիայի եւ Բուլղարիայի ապստամբութիւնը: Ապստամբուած Հերցեգովինացոց հետ միացան Բոսնիայի և Բուլղարիայի Սլաւոնները: Ապստամբութիւնը Բոսնիայում հետզհետէ սկսեց մեծանալ և տարածուեցաւ մինչև արևելեան և հիւսիսային գաւառները, այնպէս որ ապրիլ ամսի սկզբներում ապստամբների թիւը հասաւ մինչև 10 հազարի: Գործի յառաջադիմութիւնը մինչև այդ ժամանակը խանգարվում էր նորանով, որ ապստամբները չունէին կենտրոնական կէտ իւրեանց գործունէութեան համար: Բուլղարիայում շարժողութիւնն սկսուեց Օղլիկ-քէնի գիւղում 32 վերստ հեռաւորութեամբ Փիլիպօպոլից: Այդ ապստամբութեան շարժառիթը ոչխարների վերայ դրուած հարկն էր: Թէ որքան անբնական և անկարելի է դարձնում Բ. Դուռը իւր զոյութիւնը Եւրոպացոց լուսաւորուած տէրութիւնների շարքում, դորա ապացոյց կարող է լինել մահմետականների կատաղի մոլեռանդութիւնը, որ քարոզում է համայն քրիստոնեաների ջնջումն, ինչպէս օրինակ՝ Փիլիպօպոլի շրջակայքում: Միայն Բազարջիղի գաւառում բազմաթիւ քրիստոնեաներ սպանեցին տաճիկների յաղթուելու վրէժն առնելու համար: Նոքա ամբողջապէս ջնջում են քաղաքների բոլոր բնակիչներին, ինչպէս

Պրէդօրում Բուլղարիայի մէջ և տէրութեան գլխաւոր ներկայացուցիչները խրախուսում են այդ բարբարոսութիւնները, ինչպէս, զորօրինակ, վարուեց այդպիսի հանգամանքում տաճիկների զօրագլուխ Սէլիմ-փաշան Բոսնիայում: Բոսնիայում նոյնպէս նոքա գործ դրին Ռուսների մօտ իւրեանց սարսափելի կատաղութիւնը, յարձակուելով անպաշտպան կանանց, մանկանց և ծերերի վերայ, որոնք քանի մի ապստամբների հովանաւորութեան ներքոյ գնում էին դէպի Աւստրիացոց սահմանը: Կոտորուածքը երկար ժամանակ տեւեց. 100 մարդուց հազիւ թէ 10 կենդանի մնացին: Այժմ էս բաշի-բոզուկները շարունակում են անխնայաբար իւրեանց եղեռնագործութիւնները Բուլղարիայում:

Սալոնիկի սպանութիւնները: Վերջապէս մայիսի սկզբում ամբողջ Եւրոպայի մէջ մեծ դղրդոց և շփոթ ձգեց նորա երկու մեծ տէրութեանց հիւպատոսների սպանման լուրը՝ Տաճկաստանի Սալոնիկ քաղաքում: Ֆրանսիայի և Գերմանիայի հիւպատոսների սպանուիլը, որ յառաջացած էր մահմէտականների մոլեռանդութիւնից, որ պատահեց համարեա տեղական կառավարութեան ներկայացուցչի, Տաճկաստանի վալիի աչքի առաջև, և որը չըկարողացաւ ազատել կատաղած ամբոխի ձեռքից երկու հպօր և բարձրագոյն դրան դաշնակից տէրութեանց ներկայացուցիչներին:

Կոստանդինուպօլսի ՂԲԴՈՒՄԸ, Սոֆթաների շարժողութիւնը եւ մայիսի 30-ի յեղափոխութիւնը: Գլխաւոր դրդողները մահմետականութեան շրջանում Սոֆթաներն էին, այսինքն Տաճկաստանի մզկիթների մէջ գտնուած ուսումնարանների աշակերտները կամ ուսանողները, որոնք պատճառ եղան Աբդուլ-Ազիզի նախարարների փոփոխութեանց: Մայիսի 10-ին դոքա խփեցին իւրեանց դրքերը. այդ նշանակում էր թէ նոքա կամենում են պարապել հասարակական գործքերով, ինչպէս առաջ Եէնիչարները, երբ կամենում էին ապստամբել, իսկոյն շուռ էին տալիս իւրեանց թասերը: Յետոյ Սոֆթաները միասին հաւաքուելով, սկսեցին խորհրդածել իւրեանց ուսուցիչների հետ, թէ ինչպէս պէտք է վարուին տէրութեան առաջիկայ սպառնացող վտանգների հետ: Կառավարութիւնը լսելով այդ համբաւը, կարգադրեց կալանաւորել գլխաւոր դրդողներին և դուրս քշել քաղաքից: Մայիսի 11 ին Մեծ Եպարքոս Մահմուդ փաշան վերադարձաւ Կոստանդնուպօլիս իւր Բէբէկ ամարանոցից և գնաց Բարձրագոյն Դուռը: Սոֆթաները չնայելով որ սաս-

տիկ գրուած էին Մեծ Եպարքոսի դէմ, այսու ամենայնիւ երբ նա անցաւ նոցա մօտից, նոքա շատ հանդիստ և անվրդով մնացին: Նախ և առաջ դիմեցին Շէյխ-ուլ-Իսլամի պալատը իբրև իւրեանց զլխաւորին և պատուիրեցին ասելու նորան, որ շատ անբաւական են նորա վարչութիւնից, որ մեղադրում են նորան վաշխառութեան մէջ և պահանջում են, որ անպատճառ նա հրաժարական տայ իւր պաշտօնից: Շէյխ-ուլ-Իսլամը ոչինչ ընդդիմութիւն չը յայտնեց և խոստացաւ իսկոյն տալ իւր հրաժարականը, և առանց յետաձգելու, կատարեց իւր խոստմունքը:

Յետոյ Սօֆթաները դիմեցին Սէրասկէրին, զինուորական նախարարի ապարանքը և յայտնեցին նորան, թէ որովհետև Մահմուդ փաշան ընդունակ չէ տէրութիւնը կառավարելու, ուրեմն խնդրում են, որ նախարարը միջնորդէ սուլթանի մօտ, որ հեռացնէ, դործերից Մահմուդ-փաշային. բացի դորանից նոքա յայտնեցին իւրեանց ցանկութիւնը, որ Մահմուտ փաշայի տեղ նշանակեն Միտհատ-փաշային: Սօֆթաները յայտնեցին նմանապէս սէրասկէրին իւրեանց ա-բած առաջարկութիւնը Շէյխ-ուլ-Իսլամին և ասացին, որ չեն դուրս գնալ զինուորական նախարարի ապարանքից, մինչև որ չմնանան դորա մասին սուլթանի վճիռը և նշանակուող մեծ Եպարքոսի անունը: Մօտ 12 ժամին զինուորական նախարար Արդուլ-Բեարիմը գնաց Դոլմա-Բախչէի պալատը և արդէն երկու ժամին սուլթանի առաջին թիկնապահը գնաց Բ. Դուռը, որ պահանջէ Մահմուտ-փաշայից տէրութեան կնիքը:

Սորանից յետոյ սուլթանը յայտնեց, որ նոր մեծ Եպարքոսի նշանակումը կը որոշուի վաղը:

Նոր նախարարութիւնը կազմուեց մեծ Եպարքոս Մէհմէդ-Ռուշտի փաշայից, Միտհատ-փաշայից, Հուսէին-Ավնի-փաշայից և Բաշիտ-փաշայից:

Զնայելով Մահմուդ-փաշայի անկմանը, Տաճկաստանի գործերը չը լաւացան, որովհետև բարձրագոյն կառավարիչների անբարոյականութիւնը, տէրութեան մնանկութիւնը, սուլթանի շահասիրութիւնը և նորա անհոգութիւնը յառաջ բերին այդ բոլոր հանգամանքները, մայիսի 30-ին պատահած յեղափոխութիւնը, որի հետևանքն էր սուլթան Աբդուլ-Ազիզի գահից ընկնիլը: Դաւաճանութեան դոյութիւնը, որ արդէն վաղուց սկսուել և զարգանում էր, շատերին արդէն յայտնի էր. այդ դաւաճանութեան հոդին էր Միտ-

հաղ-փաշան, բայց ինչպէս նա, նմանապէս և գլխաւոր գործակիցները՝ Մէհմէդ Ռուշդի փաշան և Հուսէյին-Ա֊ֆնի-փաշան լոյս չէին ընկնում, այլ պահում էին իրանց մտադրութիւնը մեծ գաղտնիքի մէջ, որովհետև եթէ չը յաջողէր սկսած գործը, նոքա պիտի ենթարկուէին գլխատման: Ինչ կը վերաբերի Մուրադ-էֆէնդուն, այժմեան Մուրադ Ֆ-ին՝ դա գուցէ պատասխանատուութեան ահից կամ մի ուրիշ պատճառով տատանում էր մասնակցելու դաւաճանութեանը, բայց երբ նորան յայտնեցին, որ եթէ նա կը հրաժարուի, նորա տեղ կառաջարկեն գահը նորա երկրորդ եղբօրը՝ Համիդին: Վերջապէս Մուրադը համաձայնեց և յայտնեց, որ վճռական ժամին նա պատրաստ է յանձնելու իրան դաւաճանների կարգադրութեանը: Մայիսի 29-ին մեծ եպարքոսը և զինուորական նախարարը գնացին սուլթանի մօտ և առաջարկեցին, որ իւր եկամուտների մէկ մասը նուիրէ տէրութեան կարիքներին: Սուլթանի բացասութիւնը սաստիկ զրգռեց նոցա և նոքա վճռեցին յեղափոխութիւնը միւս օրը (մայիսի 30-ին) զլուխ բերել, բայց մէկ անակնկալ դիպուած մէկ քանի ժամով յառաջ մղեց գործը: Դաւաճաններն իմացան, որ սուլթանը հեռագիր էր ուղարկել նախկին մեծ եպարքոս Մահմուդ փաշային· այդ բանը շատ նշանաւոր անցք թուաց դաւաճաններին: Բացի այդ՝ երեկոյեան ժամին սուլթանի թիկնապահը եկաւ Հուսէյին-Ա֊ֆնի-փաշայի մօտ և յայտնեց նորան սուլթանի հրամանը, որ ներկայանայ իսկոյն պալատը, բայց որովհետև նախարարը ուշացնում էր կատարելու այդ հրամանը, եկան երկրորդ և երրորդ թիկնապահները մի և նոյն հրամանը յայտնելու:

Հուսէյին-Ա֊ֆնի-փաշան կարծեց, որ գործը բացուել է, և իսկոյն գնաց Միտհադ փաշայի և մեծ եպարքոսի մօտ: Վճռեցին գործն սկսել իսկոյն, առանց ժամանակ կորցնելու:

Այն զօրապետներին, որոնք դեր պիտի խաղային այդ անցքում, առաւօտեանից յայտնել էին, որ ամբողջ օրը տանից դուրս չը գնան և պատրաստ լինին: Հիւսէյին-Ա֊ֆնի-փաշան գնաց զինուորական դատարանի նախագահ եռտնդոս Բէդրիֆ փաշայի մօտ և հրամայեց նորան՝ առնել երկու բատալիոն Ստամբօլի գարնիզոնից և տանել նոցա ուղղել Դոլմա-Բախչէ, որտեղ նա կգտնի և երրորդ բատալիոնը և այդ զինուորներով շրջապատել, պալատը և նորա բոլոր ելումուտքը, այնպէս որ ոչ ոքի դուրս չը թողնեն, անգամ սուլթանին իրան: Մի և նոյն ժամանակ գլխաւոր զինուորական ուսումնարանի կա-

ռավարիչը հրաման ստացաւ, որ աշակերտների մի ուժեղ խումբը տանէ Դոլմա-Բախչէ: Ծովային նախարար Ահմէդ-Կէյզերլի փաշային հրամայած էր կառավարել «Մէջիդիէ» նաւը:

Կարգադրութիւն էին արած, որ նախարարները չըմասնակցեն դաւաճանութեան և որ տէրութեանց դեսպանները ոչինչ չիմանան այդ մասին ու չարդելեն դաւաճանութիւնը: Բոլոր հեռագրական կայարաններում նստած էին դաւաճանութեանը պատկանող անձինք:

Այդ ժամանակ Բէդիֆ-փաշան դիմեց իւր զօրքերով դէպի Դոլմա-Բախչէն Գալաթայի և Բէրայի միջով: Գիշերուայ երկու ժամն էր, բայց որովհետև վերջին ամիսները շատ էր պատահում որ Հէրցէգովինայի ապստամբութեան պատճառաւ զինուորական գնդեր էին անց ու դարձ անում գիշերուայ միջոցին այդ տեղերով, ոչոք ոչինչ նշանակութիւն չտուեց այդ բանին: Մուրադ էֆէնդին, որին դաւաճանների այդ գիշերուայ կարգադրութեանց մասին ոչինչ յայտնի չէր, սկսեց սաստիկ վախենալ, տեսնելով այդ զինուորական պատրաստութիւնները: Ցանկարծ յայտնեցին նորան զինուորական նախարարի գալուստը: Մտաւ Հիւսէին-Ավնի-փաշան՝ ձեռին բռնած մի լեքն ատրճանակ և ասաց որ հասել է վճռողական րոպէն և որ նա պիտի հետևի նորան իսկոյն:

Մուրադը տատանում էր, Հիւսէյին-Ավնի-փաշան ստիպում էր. վերջապէս Մուրադը համաձայնեց. առաւ նախարարի ձեռքից ատրճանակը և ճանապարհ ընկաւ. նորա առաջ քայլում էր իւր հաւատարիմ ծառայն, իսկ յետևից Հիւսէն-Ավնի-փաշան: Այդպէս դոքա հասան մինչև ծովեզերը ուր սպասում էր արդէն տասը թիաւոր նաւակ, և ուղևորուեցին դէպի Ստամբօլ: Այդտեղ եղերքում կանգնած էր զինուորական նախարարի կառքը, որ և տարաւ դոցա Սէրասկէրատը (զինուորական նախարարութեան տունը), որտեղ դիմաւորեցին Մուրադին մեծ եպարքոսը և Միհրհատ-փաշան:

Նորան իսկոյն ստիպեցին ստորագրել «Իրադէն», որով Մուրադը հրամայում էր նախկին սուլթան Աբդուլ-Ազիզին թողնել իսկոյն Դոլմա-Բախչէի պալատը բոլոր իւր ընտանիքով և հեռանալ Հին-Սէրալը: Այդ թուղթը տուին զինուորական նախարարի թիկնապահին, որ նա յանձնէ Բեդիֆ-փաշային: Զօրապետը իսկոյն շրջապատեց զինուորական տշակերտների դնտով պալատի, այն մասը որտեղ բնակվում են տղամարդիկը, իսկ ինքը բախեց հանրէմի դուռը: Երևաց շեմքում ներքինապետը սաստիկ

բարկացած և հարցրեց թէ ո՞վ է այդ յանդուգնը, որ համարձակու�է այդպիսի վարմունքով խախտել հարէմի գիշերուան խաղաղութիւնը: Զօրապետը պատասխանեց որ դա Բէդիֆ-փաշան է, և որ եկել է, բանտարկելու Սուլթանին: Ներքինին սասափիկ ծիծաղեց, ասելով որ Բէդիֆ փաշան գժուել է: Բէդիֆ փաշան մտաւ հարէմը. նորան հետևումէին զինուորական ուսումնարանի աշակերտները: Ներքինիներից մէկ քանիսը փորձեցին ընդդիմանալ, բայց նոցա ոսքերը և ձեռները կապելով գետին գցեցին և գնացին դէպի Սուլթանի ննջարանը: Աբդուլ Ազիզը յանկարծ զարթելով վեր թռաւ տեղից: Բէդիֆ փաշան ցոյց տալով Մուրադի ստորագրած իրադրէն, առաջարկեց իւր առաջուայ հրամանատարին՝ հաղնուիլ շուտով և ճանապարհ ընկնել:

Աբդուլ-Ազիզը սասափիկ կատաղեց. սկսեց ոտները թափ տալ, դէս ու դէն ընկնել և բղաւել. նորա մայրը, սուլթանուհի Վալիդէն, լսելով պատահած անցքը, տուն ընկաւ որդու սենեակը և սկսեց ամենաանվայել յիշոցներ դուրս թափել բերանից:

Բէդիֆ փաշան նկատեց, որ այստեղ մահու և կեանքի խնդիր կայ, այդ ժամանակ սուլթանի մայրը դուրս նայեց պատուհանից, և երբ տեսաւ տունը շրջապատած զինուորներով, հասկացաւ բանի էութիւնը և իմացաւ որ հանաքի ժամանակ չէ: Աբդուլ-Ազիզը ճարահատեալ համաձայնեց գնալ ընտանիքով իւր բնակութեան համար որոշուած ապարանքը: Սուլթանին բոլոր իւր ընտանիքով նաև նստացրին և ուղարկեցին Հին-Սերալի քեօշկերից մէկը:

Այսպէս տան և հինգ տարուայ շարունակ թշուառ թագաւորութիւնը սարսափելի վախճան ունեցաւ: Այդ յեղափոխութիւնը, որ Սուլթանին գահից ձգեց, ժողովուրդը ընդունեց ամենամեծ համակրութեամբ:

Տասնհինգ կամ տասանի տէրութեան յեղափոխութիւնը չէր կարող զարմացնել Եւրոպային: Հատել էր մարդկային համբերութեան չափը, մինչև անգամ արևելցու, որ առհասարակ չափից դուրս համբերատար է: Սուլթանի վերայ վաղուց արդէն նշմարվումէր խելագարութեան նշաններ, որ անհրաժեշտ հետևանք էր ոչնչով չսահմանափակուած իշխանութեան: Թալեաթների այդ ժառանգի վերջին օրերը նման էին հին ասիական բռնանալների վախճանին: Դա հաւաքումէր ոսկի, գերփոքումէր ոչ միայն իւր հպատակներին, այլ և ամենքին, ում կարող էր. յետ չը դարձնելով ոչ ոքի իւր

առաջը, տարածում էր աղքատութիւն, չքաւորութիւն. միայն իւր մասին էր հոգս քաշում և բոլոր միւս մարդկանց վերայ նայում էր, որպէս արհամարեալ ամբոխի վերայ, որ կողոպտուելու համար է միայն պիտանի:

Յայտնի է, որ սուլթանն անդադար տեղափոխում է իւր աստիճանաւորներին, որովհետև այդպիսի փոփոխութեան համար նա ստանում է բաշխիշ:

Միլիոնների դուրս ծծելը ձգում էր սուլթանին անսանձ շռայլութեան խորխորատը: Ահագին գումար գործ էին տրվում առիւծների, վագրների, թութակների և հարէմական անչափ ծախքերի վերայ:

Այս դրութեանը հասցրին սուլթանին հարէմը և մանաւանդ նորա մօր ունեցած ազդեցութիւնը: Սուլթանի մայր Վալիդէն ստրուկ էր, ինչպէս սուլթանուհիների մեծագոյն մասը: Կոստանդնուպօլսում ստրուկ աղջկերանց առևտուր կայ: Սովորաբար ինքեանք ծնողները, գլխաւորապէս չէրքէզները ծախում են իրանց մատաղ աղջիկներին, բայց ի հարկէ հրապարակների վերայ չեն անում այդ. թօփխանէում տներ կան, ուր կարելի է նոցա տեսնել:

Գունած աղջկերքը զանազան նպատակների են ծառայում. տգեղներին գործ են ածում տնային աշխատանքի համար՝ իբրև աղախիններ հարէմներում, իսկ նոքա՝ որոնք ժամանակով գեղեցիկ կանայք պէտք է դառնան, առանձին հոգացողութեամբ են խնամատարվում. նոցա ուսուցանում են երգ, պար, երաժշտութիւն, փոքր ինչ կարդալ և գրել, լաւ հագնուելու և դուր գալու արուեստ:

Այս օրիորդների ձեռքով կարելի էր կարողութիւն ձեռք բերել կամ յառաջ գնալ՝ օգուտով կրկին ծախելով սոցա կամ նուիրելով՝ օրինակ՝ սուլթանուհի Վալիդէին, որ ընծայում էր դոցա իւր որդկերանցը: Այս Սուլթանուհին ուրիշ ստրուկներից աւելի աչքի էր ընկնում իւր փոքր ինչ հրաճուասէր բնաւորութեամբ, շահասիրութեամբ և իշխանասիրութեամբ:

Economist Franeais շաբաթաթերթը շատ հետաքրքրական մանրամասնութիւններ է հաղորդում սուլթանի և նորա դերդաստանի ծախսերի մասին. հաղորդենք մի քանի թուանշաններ:

Աբդուլ-Ազիզը 21 պալատի տէր էր, որոնց պահպանելը արքունական գանձարանին նստում էր 358,915 ֆրանկ, 409 մարդ վերակացութիւն էին անում դոցա: Միայն գլխաւոր պալատում

Դոլմա-Բախչէ այրվում էր տարեկան 520,000 ֆրանկի փայտ և 140,000 ֆրանկի քարածուխ: Սուլթանը իւր գերդաստանով և տանեցոց հետ, որոնք թուով 6500 հոգի էին, տարեկան, ի միջի այլոց, ուտում էր 400,000 ոչխար, 10,000 գառը, 1,085,600 ֆրանկի արժողութեամբ, և 400,000 ֆրանկի շաքար: Նորա ծառաների վերայ մսխվում էր ընդ ամենը 10,359,000 ֆրանկ: Նախընթաց սուլթանների ժամանակ ժողովուած թանգագին քարերը Աբդուլ-Ազիզը վաղուց արդէն իւր հարէմի կանանց պճնաղարդութեան էր գործադրել:

Հարէմի ներքինիների վերայ տարեկան ծախսվում էր 13,542,000 ֆրանկ. իսկ սուլթանի գերդաստանի վերայ, չհաշուելով նորա արու զաւակներին, մօտ կէս միլիոն ֆրանկ. Սուլթանուհի Վալիդէին նշանակած էր տարին 72,000 ֆրանկ: Մուրադ-էֆէնդին, այժմեան սուլթանը, ստանում էր 12,000 ֆրանկ. նորա մայրը՝ 2400:

Պալատի հօֆմարշալը ստանում էր 333,500 ֆրանկ. գլխաւոր դանձապահը 82,000 ֆրանկ: Գլխաւոր ներքինին 110,400 ֆրանկ. Հարէմում ընդամենը 712 ստրուկ և 148 ներքինի կային: Ընդհանուր պալատական ծախսերը հասնում էին 41 միլիոն ու կէս ֆրանկի, եթէ սորան աւելացնենք այն 180 միլիոն ֆրանկը կամ միջին հաշուով տարին 12 միլիոն (15 տարուայ), որ սուլթանը գործ է դրել պալատների շինութեան վերայ, այն ժամանակ ընդհանուր թիւը կը հասնի 53½ միլիոն ֆրանկի, այն ինչ պաշտօնապէս այս թիւը 31 միլիոն էր ցոյց տրվում:

Գահավիժած սուլթանին վիճակուած չէր խաղաղութեամբ անցցնել իւր վերջին օրերը հեռու կառավարութեան ծանրութիւնից: Յեղափոխութիւնից չորս օր յետոյ՝ ըստ պաշտօնական տեղեկութեանց, Աբդուլ-Ազիզը սպանեց իւրեան: 19 բժիշկի ստորագրած արձանագրութեան մէջ յայտնուած է, որ նորա մահը ինքնասպանութեան հետևանք է. որ արնաքամուել է մկրատով կտրելով իւր բազկամիջի երակները:

Աւելի հաւանական է, որ Աբդուլ-Ազիզին սպանած լինին նոր սուլթանի կառավարութեան հրամանով: Հանգուցեալ սուլթանի մարմինը ամենայն շքեղութեամբ թաղուեցաւ իւր հօր՝ սուլթան Մահմուդի շիրմի մօտ:

Արտասահմանի տերութեանց մօտ գտնուող Բ. Դրան ներկայացուցիչները յայտարարութիւն ստացան Կոստանդնուպոլսում պատահած անցքերի մասին հետևեալ շրջաբերականով, որ մի և

նոյն ժամանակ նոր սուլթանի նախագիծը կարող է համարուել։ Նորին կայսերական մեծութիւն Սուլթան Մուրադ V իւր հռչակաւոր նախորդների գահը նստելով, իւր խնամատարութեան յանձնուած հպատակ ազգերի բարեկեցութեան համար նոր դատագլուխ է բացանում։ Մեր Օգոստափառ կայսրը ցանկութիւն յայտնեց հետևելու խաղաղ քաղաքականութեան և բարեկամական յարաբերութիւններ պահպանել այն տէրութիւնների հետ, որ դաշնակից և բարեկամ են կայսերութեան։ Այն կայսերական խաթթիի մէջ, որ ուղղած է նորին վսեմափայլութիւն մեծ եպարքոսին և որ հանդիսաւոր կերպով յայտնած է այսօր Բ Դրանը, Նորին Մեծութիւնը հաստատում է այն արտօնութիւնները և առանձնաբաշխութիւնները, որ շնորհել են նորա նախորդները. նա հրամայում է բոլորեցուն ազատութիւնը ապահովացնել, վերակազմել տէրութեան խորհուրդը և արդարութեան նախարարութիւնը, ազգային լուսաւորութիւնը և կառարութեան ուրիշ ճիւղերը։ Սուլթանի անձնական ծախսերը 60,000 քսակով պակասեցնել, տէրութեան բոլոր կալուածները Ֆինանսների նախարարի կառավարութեան յանձնել, վերջապէս կայսերութիւնը վերանորոգած հիմունքների վերայ հաստատել երկրի պահանջներին և մեր ժամանակի սկզբունքների համաձայն։

Ահա այս էր նոր սուլթանի նախագիծը, որով իւր հպատակ ազգերին խոստանում էր բարօրութեան նոր շրջան բաց անել։ Նոր կառավարութիւնը առանձին համակրութիւն գտաւ անգղիական տէրութեան կողմից, որին արդէն մասնակից էին համարում մայիսի երեսունի յեղափոխութեան մէջ։ Բայց ընդհանրապէս խօսելով՝ նոր սուլթանի այս նախագիծը բաւական անտարբեր կերպով ընդունուեցաւ Եւրոպայի միւս տէրութեանց կողմից։ Տաճկահպատակ ազգերը չէին կարող մեծ հաւատ ընծայել Սուլթանի խոստմունքներին։

Աբդուլ-Մէջիդի խաթթի-Հիւմայունի հնտեանքը և Աբդուլ-Ազիզի ազատամիտ ձեռնարկութիւնները բաւականաչափ ապացուցել էին քրիստոնեայ հպատակներին, թէ որքան հաւատ կարելի է ընծայել այդ խոստմունքներին։

Մուրատ V-ի կառավարութիւնը բաղկացած էր մայիսի 30-ի յեղափոխութեան մասնակիցներից։ Մեծ վէզիրը Մեհմէտ Ռուշդի փաշան էր։ Միդհադ փաշան նշանակուեցաւ գլխաւոր խորհրդի նախագահ, նորան յանձնուեցաւ կազմել նոր սահմանադրութեան նախագիծ, որի գլխաւոր սկզբունքները պէտք է լինէին հետևեալները—

ա) Ազգային ժողովին է յանձնվում ֆինանսների կարգաւորելը. նա պէտք է քննէ և որոշէ վերջնական կերպով բիւջէի քանակութիւնը: բ) Վերահասու լինել վարչութեան գործերին և արդարադատութեան գործադրութեանը, հովանաւորութեան և պաշտպանութեան տակ առնել արուեստները, վաճառականութիւնը և երկրագործութիւնը: գ) Նախարարները պատասխանատու են ժողովին. ժողովը պէտք է բաղկացած լինի մօտաւորապէս հարիւր անդամից, որովհետև իւրաքանչիւր վիլայէթ չորս պատգամաւոր է ընտրելու: Տաճկաստանի բոլոր հպատակները, առանց խտրութեան և կրօնի, ազգութեան ընտրելու և ընտրուելու իրաւունք ունին: դ) Ազգային ժողովը կքննէ նահանգներին վերաբերեալ բոլոր ծախսերը: ե) Ազգային ժողովը իրաւունք ունի ընդդիմանալու սուլթանի այն հարկադրութեանցը, որոնք հակառակ կը լինին եղած օրէնքներին: Նոյն ժողովն է որոշում իւրաքանչիւր տարի գլխաւոր բիւջէտը և սուլթանի ռոճիկը: Տաճկաստանի բոլոր հպատակները առանց, խտրութեան կրօնի և ազգութեան, հաւասար իրաւունքներ և պարտաւորութիւններ ունին: զ) Քրէական գործերի վճիռների համար սահմանէ երդուեալների դատաստան, իսկ երդուեալ լինել կարող են Տաճկաստանի բոլոր հպատակները: Մամուլի ազատութիւն է տրվում, որի մանրամասնութիւնքը կը յայտնուին առանձին օրէնքներով:

Միտհադ փաշայի այս նախագիծը մեծ հակառակութիւն գտաւ հին տաճկական կառավարութեան կողմից, որի ներկայացուցիչը հանդիսանում էր պատերազմական նախարարը՝ Հիւսէին Ավնի-փաշան:

Մուրադի թագաւորութիւնը սկսուեցաւ տխրալի նշաններով: Նոյն օրը՝ երբ նշանակուած էր նոր սուլթանի գահ նստելու հանդէսը, Հէրքէղ Հասանը նոյն իսկ նախարարների նստի ժամանակ սէրասկէր Հիւսէին-Աֆնի-փաշային և արտաքին գործոց նախարար Բաշիդ փաշային. ծովային նախարարը վիրաւորուեցաւ. սպանուեցան նաև մի քանի ծառաներ:

Միւս օրը կախ տուին մարդասպանին, բայց այս արիւնահեղ գործի դրդիչ պատճառները մինչև այժմ մութն են: Մեղադրում են Միտհադ փաշային, իբրև մանուկ Տաճկաստանի ներկայացուցչի:

Այն ողբերգութեան վախճանը, որ ամբողջ տարի օր քան զօր սաստկանում է, Տաճկա-Սլաւոնական պատերազմն է: Սերբերը, Ղարա-

դաղցիները Տաճկաստանի դէմ պատերազմելուց երկար զսպում էին իւրեանց: Բայց չնայելով մեծ Տէրութիւնների ազդեցութեանը, հասարակական, կարծիքը յաղթող հանդիսացաւ:

Սերբիայի Միլան իշխանը պատերազմ յայտնեց Բ. Դռան....

ՆՈՒԲԱՐ ՓԱՇԱ ԵՒ ԵԳԻՊՏՈՍ

(Գործ Մաքս Շլէզինդէրի) *

Բովանդակութիւն.—Նուբար փաշան:—Իմ ընդունուիլը նորա տան մէջ:—Նորա անձնաւորութիւնը:—Նորա մտքերը Եգիպտոսի և նորա ապագայի մասին:—Եգիպտոսի տկար կողմը և առողջանալու հնարը:—Տեղեկութիւններ Ֆէլլահների վիճակի և Նուբար փաշայի դրութեան մասին:—Կայիրոյից բաժանուիլս:

Դեկտեմբերի կիսին.

Շնորհակալութեամբ եմ յիշում ես այն բարեկամութեան ապացոյցները, որ ես վայելեցի Եգիպտոսի հողի վերայ գտնուած ժամանակս. շնորհակալութեամբ եմ յիշում այն սիրալիր ընդունելութիւնը, որ ցոյց տուին ինձ ոչ միայն ամենանշանաւոր կառավարչական անձինքը, այլ և Անգլիայի, Գերմանիայի և Աւստրիայի պաշտօնական ներկայացուցիչները. շնորհակալութեամբ եմ մտաբերում այն անկեղծ բարեսրտութիւնը, որով ինձ ընդունեցին հայրենակիցներիցս շատերը, որոնք Եգիպտոսում հաստատ բնակութիւն են հիմնել և քաղցրացրին իմ այդ երկրում անց կացրած օրերս: Բայց ամենից աւելի երախտապարտ եմ արտաքին գործերի և վաճառականութեան նախարար Նուբար փաշային, ոչ միայն այն պատճառով, որ նա ինձ ներկայացրեց իւր տիրոջը և միջոց տուեց ինձ շատ բան ուսումնասիրելու և տեսնելու, որ մի օտարականի համար դժուար, և մինչև անգամ հաղիւ կարելի կը լինէր, այլ և այն ջերմ համակրութեան համար, որով նա ընդունեց ինձ իւր ընտանեկան շըր-

---

*) Eine Reise ins Blaue von Max Schlesinger. Kölnische Zeitung, 28 April 1876.

ջանի մէջ, և թող տուէց ինձ մնել իւր տունը՝, իբրև մի բարեկամի տուն: Այն ժամերը, որ ես անց կացրի այս սիրարժան շրջանում, պատկանում են իմ ճանապարհորդութեան ամենագեղեցիկ յիշատակութիւններին:

Նուբար փաշան 1825 թուին ծնաւ Զմիւռնիա քաղաքում՝ հայ ծնողներից. իւր կրթութիւնն ստացաւ Զմիւռնիայում և Ֆրանսիայում. տասն և եօթը տարեկան հասակում նա եկաւ Եգիպտոս ծառայեց դեռ Մեհէմեդ Ալիի ժամանակ, այնուհետև փոփոխակի կերպով վարեց տերութեան ամենաբարձր պաշտօնները, և այնպէս է սիրում այդ երկիրը, ինչպէս դորա հարազատ որդիքներից մինը: Նորա տարիքը նոր են անցել յիսունից, հասակը միջակ է, կերպարանքը վերին աստիճանի դրաւիչ և այնպիսի աչքեր ունի, որոնց մէջ հեզութիւն է արտափայլում նորա սրտի ուրախ ժամանակը, որոնք զարհուրելի կերպով են փայլատակում այն միջոցին, երբ մի բան խռովում է նորա ներսը: Զգուշութիւնն ու ձևապաշտութիւնը նա շատ լաւ է հասկանում, երբ այդ պահանջվում է. բայց երբ այդպիսի մի պահանջ չը կայ, նա ամենաազատ, ասող-խօսող, ամենաքաղցր բարեկամ և տանուտէր է, որի մէջ խորամիտ ծանրութիւնն ու հեգնական ծիծաղը բուն են դրել միմեանցից շատ մօտ: Բայց թէ կատակներ անելիս և թէ ամենածանր առարկաների մասին նա այնպէս սուր, ընտիր և համոզիչ կերպով է խօսում, ինչպէս ես ոչ ոքին եմ տեսել խօսելիս: Նորա բազմակողմանի գիտութիւնը փորձառու կեանքը և շատ լեզուներ գիտենալը շատ օգնում են նորան այդ բանում: Իւր ասածը պարզ և հասկանալի անելու համար՝ նա շատ անգամ օրինակներ ու ապացոյցներ է բերում պատմութեան ու բնագիտութեան ամենահեռաւոր ծայրերից և զարմանալի ճարտարութեամբ գործ է ածում Ֆրանսերէն խօսելիս անգլիական կամ գերմանական դարձուածներ, երբ սոցա համապատասխանող Ֆրանսերէն ոճերը նորա կարծիքով բաւական պարզ չեն արտայայտում նորա միտքը: Նա ասում է, թէ երբէք լրագիրներ չէ կարդում, բայց մի և նոյն ժամանակ հիանալի վճիռներ է տալիս աշխարհիս երեսին պատահած ամեն մի քաղաքական հարցի մասին: Նա հաւատացնում է. թէ պարապութիւնը նորա ամենասիրելի զբաղմունքն է, բայց գործում է աւելի, քան թէ տասներկու շատ գործունեայ միասին վեր առած: Նա հաւատացնում է, թէ աւելի ուրախ կը լիներ խաղաղ ու հանգիստ կերպով իւր կալուածները

կառավարել, քան թէ աղմկի և փառահեղութեան մէջ աշխարհիս ամենամեծ տէրութիւնը կառավարել, բայց մի և նոյն ժամանակ հալումաշ է լինում անուան և պատուասիրութեան համար: Նա երդվում է, թէ իւր տանը նա ամենաանտանելի բռնակալ է, բայց ընդհակառակն, շատ սիրարժան ամուսին ու հայր է:

Հէնց առաջին տեսութեան ժամանակ—ես իսկապէս չը գիտեմ, թէ ինչով արժանացայ այդ բանին—նա ինձ անկեղծ մտերմութիւն ցոյց տուեց: «Զգուշացէք», ասաց նա ինձ, որ ձեր ժամանակը չը կորցնէք: Այս երկրում ամենքը այնպէս զբաղուած (affairés) են, որ օրինաւոր աշխատանքի համար անգամ ժամանակ չեն գտնում և միւսներին ևս խանգարում են գործի մէջ: Որքան անցնում էին օրերս Կայիրոյում, այնքան զգում էի ես այդ խօսքերի ճշմարտութիւնը և աշխատում էի օգուտ քաղել դոցանից, բայց հէնց որ զանց էի առնում, սենեակս լցվում էր այցելուներով, որոնք ամենքն էլ չափազանց «զբաղուած» էին, բայց այնու ամենայնիւ այնքան ազատ ժամանակ ունէին, որ կարող էին ամբողջ ժամերով զրոյց անել, ծխաքարշների օրինաւոր խուրձեր սպառել և սև սուրճի անհամար բաժակներ դատարկել:

Իմ երկրորդ այցելութեան ժամանակ Նուբար փաշան ներկայացրեց ինձ իւր կնոջը և երկու աղջկերանցը: «Այժմ, երբ դուք արդէն մուտ գործեցիք իմ տաճարը», նկատեց նա, «ձեզանից է կախուած, թէ օրը քանի անգամ աղօթք կանէք այստեղ: Մեր նախաճաշը լինում է 12 ու կէս ժամին, ճաշում ենք հինգից կէս ժամանց: Դուք միշտ պատրաստ կը գտնէք ձեր բաժինը իմ տիրուհու կողքին: Եկէք առանց քաշուելու, և որքան կարող էք՝ շուտ շուտ: Սկզբում ես ամաչում էի ընդունել այդպիսի մի անսահման հիւրասիրութիւն: Բայց թէ յետոյ ինչպէս ի չարը գործ դրի ես այդ, մինչև այսօր ես կարմրելով եմ մտաբերում, թէև առանց զղջման և խղճի խայթի: Եթէ ես ուրիշ տեղ հրաւիրուած չէի լինում, այդ ժամանակ կանոնաւոր կերպով, տան կատուի նման, գընում էի նախաճաշիկին և ճաշին, մինչև անգամ ուշ, երեկոյեան թէյին: Եթէ ես երկու օր իրար վերայ չէի գնում, կարող էի հաւատացած լինել, որ տան տէրն ինձ կընդունէր մի նախատական կատակով իմ «անհաւատարմութեան և անառակ կեանքիս» մասին: Բայց տան տիկինը շատ քաղաքավարի և քաղցր էր վարվում, իսկ աղջկերքը շատ բարի և նազելի էին: Ճաշից յետոյ երևում էին

սովորաբար մի քանի աղգականներ երբեմն մի հազուագիւտ օտար այցելու։ Ճաշից յետոյ երբեմն գնում էինք զբօսնելու տան այգին (այդ միջոցին Դեկտեմբերի երկրորդ կէսն էր), յետոյ մատաղահաս օրիորդները ընդհանուրի խնդրքով ածում էին Բէթհովենի, Մենդելսօնի, Շումանի կամ Շուբերտի երաժշտութիւնները (և մեծ ճարտարութեամբ էին ածում), գրդռիչ խօսակցութիւնը երբէք չէր ընդհատվում. ինչ լաւ կլինէր եթէ իրաւունք ունենայի մի քանի բան հաղորդել։ Ես ոչ մի տեղ աւելի գեղեցիկ երեկոներ չեմ անց կացրել, քան թէ այս սիրարժան շրջանում, և այն միտքը, թէ նոքա տեղի ունէին Աֆրիկայի հողի վերայ, աւելացնում էր նոցա զբաղութիւնը։ Միայն ափսոս, որ տան տէրը միշտ չէր կարողանում այդ երեկոները մեզ հետ վայելել և իւր ներկայութեամբ աւելի կեանք տալ նոցա։ Շատ անգամ նա ստիպուած էր ճաշից յետոյ Խրդիվի մօտ գնալ, որ սովորութիւն ունի մինչև կէս գիշեր իւր նախարարների և այլ մարդկանց հետ խորհուրդ անել։

«Միշտ զբաղուած էք, ձերդ պայծառափայլութիւնը», սովորաբար հարցնում էի ես, ակնարկելով նորա տուած խորհրդին։

«Այո՛, միշտ զբաղուած, ոչինչ չանելով զբաղուած, ինչպէս ես ձեզ ասել եմ» պատասխանում էր նա ժպտալով և դուրս էր գնում մթնումը։

Նուբար փաշայի տան այս համառօտ նկարագրութեամբ պէտք է բաւականանայ այս ճանապարհորդական նամակներիս ընթերցողը։ Աւելի ընդարձակել նորան, կը նշանակէր անցնել համեստութեան սահմանից։ Որովհետև, որքան նուրբ դգացմունքի ու բարձր լուսաւորութեան տէր է մի ընտանիք, այնքան առաւել անախորժ է թվում նորա անդամներին, երբ նոցա պատկերը իբրև մի վաճառք դուրս է բերվում աշխարհի առաջը տպագրական սև մրով։ Ինքը փաշան, իբրև հրապարակական մարդ անտարակոյս պէտք է հաշտուի տպագրողի և տպագրական մուրի հետ։ Ուրիշ բան է, նորա գործունէութիւնը, իբրև պետութեան նախարարի, բացարձակ քննել, բայց նոյն մարդուս մասին դատել այն խօսքերի հիման վերայ, որ նա վստահութեամբ ասել է մի օտարական հիւրի իւր հարազատ շրջանում,—յարգանքն ու զգուշութիւնը կրկնապատիկ արգելում են ինձ այդ անել։ Այս պատճառով ես միայն կը բերեմ նորա առաջնորդող մտքերից մի քանիսը Եգիպտոսի դրութեան մասին։ Ես ունիմ այդ իրաւունքը, որովհետև դոքա այնպիսի մտքեր են, որոնց նա ոչոքից չի ծածկում

և աւելի մանրամասն բացատրել է մի քանի բարեկամ տէրութիւն-ներին ուղղած թղթերի մէջ։

Նորա կարծիքով, Եգիպտոսը կոչուած է մի մեծ դեր խա-ղալու ընդհանուր պատմութեան մէջ։ Եգիպտոսը նշանակում է Աֆրիկա. նորա դրութեան նշանակութիւնը Եւրոպայի և Ասիայի մէջ տեղը, ընդունել են բոլոր մեծ, քաղաքագէտ երևելի անձինք Ալէք-սանդր Մակեդոնացուց սկսած մինչև Նապոլէօն առաջինը։ Բայց թէ ինչ կերպով կը կատարէ Եգիպտոսը իւր ապագայ դերը, արդեօք իբրև անկախ պետութիւն մահմետականութեան հիմանց վերայ, թէ մի ուրիշ ձևով, այդ կախուած կը լինի մասամբ արևելեան հարցի վախճանից, այսինքն Թիւրքիայի վիճակից, և մասամբ (գուցէ աւելի ևս կախուած կը լինի այն ընթացքից, կը բռնէ որ Եգիպտոսի կառավարու-թիւնը։ Եւրոպական սկզբունքների վերայ հիմնուած կառավարու-թիւնը, ամենալաւ օրինակով բարեկարգած դատաստանատները նա համարում է ամենահաստատ և մինչև անգամ միակ միջոց երկրի համար գեղեցիկ ապագայ պատրաստելու։

Բայց ինչ որ արել են, կամ ցանկանում էին անել այժմեան փոխարքան և սորա անմիջական նախորդները, մանաւանդ Մէհէմէդ Ալին, այդ բոլորի մասին նա խօսում է մեծ եռանդով, առանց կեղծ համեստութեամբ ծածկելու և իւր սեփական ծառայութիւն-ները, որոնք չեն կարող հերքուիլ մինչև անգամ նորա հակառա-կորդների կողմից։ Իսկ ինչ որ վերաբերում է այն յանդիմանու-թեան, որ անում են խրդիվին, թէ նա շտապով քանդում և շի-նում է, փաշան կարողանում է դորա համար շատ մեղմացնող պատճառներ բերել, որոնք մի կէտի են դալիս, թէ արևելեան անձ-նաւորութիւնները և արևելեան հանգամանքները չի կարելի չափել եւրոպական չափով, և թէ ազնիւ ու բարի ցանկութեամբ կարելի է անցեալ չարիքը կրկին ուղղել։

Այդ չարիքը բացարձակ խոստովանել իւր և ամբողջ աշխար-հի առաջը, այդ—նորա կարծիքով—առաջին քայլն է ուղիղ ճանա-պարհ դուրս գալու։ Եթէ չեմ սխալվում, նա այդ հիման վերայ է ամբողջ տարիք աշխատել՝ Եգիպտոսը ազատել Նապոլէօն III-ի ժա-մանակ զօրացած ու նորա վերայ ծանրացած ֆրանսիական ազդե-ցութիւնից, որպէս զի նորա տեղը զարթեցնի եւրոպական տէրու-թիւնների ընդհանուր համակրութիւնը։ Նոյն հիման վերայ նա ա-տում է ամեն աշխարհակալական քաղաքականութիւն Եգիպտոսի

հարաւում և հարաւ-արևելքում, և չափազանց գրգռվում է, երբ նորան ուզում են սնպհականացնել այն միտքը, թէ պէտք է Հաբէշստանի իշխանութիւններից մինը միացնել Եգիպտոսի հետ, կամ Հաբէշստանին մի վրէժխնդրութեան պատերազմ յայտնել այն տեղ ուղարկուած վերջին եգիպտական գնդի կորստեան համար: «Ի սէր Աստուծոյ, մի՛ խօսէք ինձ հետ աշխարհակալութիւնների, պատերազմի կախարդութիւնների, վրէժխնդրութեան արիւնահեղ պատերազմների մասին: Դորանով մենք միշտ ժահրոտ վէրքեր կը յարուցանենք մեր մարմնի վերայ: Մենք առանց այդ էլ շատ վէրքեր ունինք առողջացնելու»: Այդ խօսքերն ասելու ժամանակ այդ դիւրազրգիռ մարդու աչքերը կայծեր էին արձակում, և երեսի ամեն մի մկանը դողդողում էր: Նոյն վերոյիշեալ հիման վերայ նա երբէք չէր ծածկում Եգիպտոսի դատարանների վատութիւնը, ինչպէս այդ անում են արևելեան տէրութիւնների մեծ մասում՝ զօրեղների հաճոյքը կատարելով: Նոյն հիման վերայ նա ցանկանում էր, որ իբրև խորհրդատու կանչուած սէր Ստեփան Կէվէյից ոչինչ բան չը ծածկուէր Ֆինանսների դրութեան մասին: «Պատճառ» ասում է նա, «ինչ որ մենք նորան չենք ասիլ, նա կարող է ուրիշներից իմանալ. և նա մի չափազանց յիմար մարդ պիտի լինի, եթէ ինքը չկարողանայ հասկանալ այն, ինչ որ պարզ է ամեն մի Ալէքսանդրիացի վաճառականի համար»:

Նորա սիրելի մտքերից մինն էլ այս է. եթէ մի մարդ կամ մի պետութիւն, որի մէջ կենսական ոյժ կայ, մի հիւանդութիւն է ստանում, նա չըպէտք է աշխատի լաւացնել այդ մի ուրիշ հիւանդութեամբ: Եգիպտոսը ունի մի շատ նշանաւոր կենսական ոյժ. նա ունի ամենապտղաբեր հող, բարեհոգի, հեզ ժողովուրդ, կարիք չունի պատերազմելու դժգոհ ազգութիւնների դէմ, ինչպէս Տաճկաստանը, և Անգլիացիք Հնդկաստանում. կարող է ժամանակով մի ճշմարիտ դրախտանման երկիր դառնալ: Իրաւ է, նա ունի մի քանի հիւանդութիւններ, բայց որովհետև թէ՛ այդ հիւանդութիւնները և թէ՛ նոցա բժշկելու հնարները ակներև յայտնի են, այս պատճառով չը պէտք է յուսահատուիլ»:

Բայց ինչո՞ւմն է կայանում այժմեան Եգիպտոսի հիւանդութիւնը:

Եթէ ես ճիշտ եմ ըմբռնել Նուբար փաշայի մտքերը, նորա արմատը պէտք է որոնել ոչ թէ Ֆինանսների անկարգ դրութեան մէջ, որ գուցէ կուղղուի խելացի չափաւորութեամբ ու խնայո-

ղութեամբ և կանոնաւոր արդիւնագործութեամբ, այլ աւելի ընդ-
հանուր կառավարութեան պակասութիւնների, և մանաւանդ, ֆէլ-
լահների *) դրութեան մէջ:

Այն տեղեկութիւնները, որ նորին պայծառափայլութիւնը բա-
րեհաճեց ինձ հաղորդել երկու վերջին կէտերի մասին, ես իրաւունք
չեմ տալիս ինձ հրապարակաւ յայտնել: Բայց ինչ որ ես տեղե-
կացայ ֆէլլահների դրութեան մասին՝ մի քանի անգամ այցելու-
թիւն անելով մերձակայ և հեռաւոր գիւղերին և ստոյգ վկաների
յայտնած կարծիքները լսելով, այդ ես բերում եմ այստեղ մի քանի
խօսքով: Իրաւ է, որ կառավարութիւնը ֆէլլահի վերայ մեծ հար-
կեր է դնում, բայց սխալ կլինի կարծել, թէ նա չի կարող տանել հար-
կերի այդ ծանրութիւնը, նա կարող էր տանել այդ և մի և նոյն ժամանակ
շատ հանգիստ ապրել: Նորան ծանրողը ոչ հարկերի ծանրութիւնն է,
ոչ դաշտերի ոռոգելու աշխատանքը, որ նա ձրի պէտք է կատարէ
կառավարութեան (այս վերջինս օգուտ է բերում և նորա սեփա-
կան դաշտերին), այլ այն ծառայութիւնը, որ անկանոն, ապօրինի
կերպով, առանց որևիցէ հիման ստիպում են նորան անել երկրի
զօրեղները: Դորանով նա կորցնում է իւր միակ ստացուածքը, այն է
իւր սեփական դաշտերը մշակելու ժամանակը. դորանով է նա խեղ-
ճանում, թշուառանում, տխրութեան և համարեա թէ յուսա-
հատութեան մէջ ընկնում: Դորանով է բանն այնտեղը հասել, որ
շատ ֆէլլահներ՝ իւրեանց աղատ հողը վաճառում են, որ հարուստ փա-
շաների մօտ կապալառուներ դառնան. դորանով, եթէ գործ չը
դրուին ազգու միջոցներ, կարող է բանն այնտեղը հասնել, որ պտղա-
բեր հողերը, աշխատող ձեռքերի պակասութեան պատճառով,
անապատներ կը դառնան:

Ապօրինի անուանեցի ես այն ծառայութիւնը, որ պահան-
ջում են ֆէլլահից, և նա, յիրաւի, ապօրինի է: Բայց ինչպէս կա-
րող է մի խեղճ ֆէլլահ այնքան համարձակութիւն ունենալ, որ
դանգատուի իրան ծանրող փաշայի դէմ, որովհետև դորանով նա
միայն մի զօրեղ թշնամի կստեղծէր իւր համար, իսկ արդար դա-
տաստանի նա երբէք կարող չէ յոյս ունենալ. որովհետև Արևելեան
դատարանների վճիռները սովորաբար յօգուտ նոցա են լինում, որոնք

*) Ֆէլլահ է կոչվում Եգիպտոսի բնիկ ժողովուրդը:

ոյժ ունին երկրի մէջ, իսկ խեղճին արդէն հեռուից դատապարտում է նորա անզօրութիւնը:

Երկրի գլխաւոր հիւանդութեան պատճառը համարելով կառավարութեան պակասութիւնները, Նուբար փաշան դորանով ակնարկում է գլխաւորապէս անաչառ դատաստանի պակասութիւնը: Որովհետև ոչ միայն ֆելլահը, այլև աւելի բարձր ծագումն ունեցող բնակիչը փախչում է զօրեղ իշխանների դէմ գանգատ տալուց, ամենափոքր վստահութիւն անգամ չունի դատաստանի անաչառութեան վերայ, իւր սեփականութիւնը երբէք ապահով չի համարում: Բայց թէ այդպիսի համոզմունքը որքան վնասակար է մի երկրի անտեսական դրութեան և բնակիչների բնաւորութեան համար, այդ ամենքին հասկանալի է: Կատարեալ զարգացումն այդպիսի հանգամանքներում անհնարին է:

Դատաստանների լաւացնելը, գանգատների հրապարակաւ քննելը, ամենքին հաւասար իրաւունքներ տալը — ահա այն միջոցները, որոնք Նուբար փաշայի կարծիքով միակ միջոցներն են այն հիւանդութեանը յաղթելու, որ քամել է երկրի ծուծը: Նոր դատաստանական կազմակերպութիւնը, որ պիտի գործադրուի 1876 թուի յունուարի 1-ից, նա համարում է առաջին քայլը դէպի բժշկութիւն, և թէ քանի՞ տարի նա ծանր աշխատանքի ու կռիւների է տարել այդ առաջին քայլը գլուխ բերելու, այդ յայտնի է ամեն մարդու, որին հետաքրքրել է այդ հարցը, այդ յայտնի է շատ եւրոպական կաբինետների: Իրաւ է, այդ նոր, գլխաւորապէս եւրոպական իրաւաբաններից բաղկացած, դատարաններում կը քննուին միայն եւրոպացոց, կամ սոցա ու բնիկների մէջ ծագած վէճերը, բայց միայն դորանով ևս — այդ Նուբար փաշայի հաստատ համոզմունքն է — մի սեպ կը ցցուի մինչև այժմ եղած անկարգութեան ամրացած շինութեան մէջ, որ փոքր առ փոքր կը խորտակի նորան: Հէնց որ բնիկները, ասում է նա, կը տեղեկանան, թէ եւրոպական դատաւորները, առանց ուշադրութիւն դարձնելու դատախազների դրութեան և աստիճանի վերայ, արդար վճիռ են տալիս, ժամանակով նոքա միմեանց մէջ ոչ մի պայման չեն կապիլ, առանց պարզապէս որոշելու, որ նոցա մէջ ծագելի բոլոր վէճերը յանձնուին նոր եւրոպական դատարանների քննութեանը (երկու բնիկի մէջ ծագած վէճի վերաբերութեամբ այն բանը թոյլ է տուած այն ժամանակ, երբ երկու վիճող կողմերն էլ համաձայն են այդ բանին): Այդ կերպով փոքր

առ փոքր կը կազմուի արդարադատութեան գաղափարը և ապահովութեան զգացմունքը, որոնցից ոչ մինը դեռ ևս չը կայ, և առանց որոնց անհերևակայելի է թէ պետութեան հաստատութիւնը և թէ երկրի դրամական ու տնտեսական ուժերի կատարեալ զարգացումը:

Այս տեղ անկարելի է աւելի մանրամասն բացատրել այս հանգամանքը: Բայց մեր ասածից արդէն իւրաքանչիւր մարդ կարողէ տեսնել, որ Նուբար փաշան այնպիսի վերանորոգութիւններ է ցանկանում, որոնք չարիքը արմատից հանէին, որոնք կեանքի և մահու պատերազմ յայտնէին մահամետականների հասկացողութեանը իրաւունքի և իրաւագիտութեան մասին, այն հասկացողութեանը, որ զարմանալի կերպով կապուած է Ղօրանի հետ, բայց այդ ի հարկէ սպառնում է երկիրի զօրեղների շահերին: Այս պատճառով կասկածելի է, թէ արդեօք Նուբար փաշան իւր բոլոր ազդեցութեամբ և գործունէութեամբ, կամ առհասարակ Եգիպտոսի այժմեան նախարարներից մինը կարո՞ղ է այդպիսի մի խաղաղ յեղափոխութիւն գլուխ բերել: Այդ կընշանակէր բոլոր մահմէտական իրաւագիտութիւնը ոչնչացնել, փաշաների կամայականութեանը սահման դնել, Եգիպտոսը մի բռնակալ տէրութիւնից դարձնել իրաւունքի և արդարութեան վերայ հիմնուած պետութիւն: Միայն մի մարդ կայ, որ ահագին յեղափոխութիւնը կարողէ խաղաղութեամբ և շուտով գլուխ բերել: Այդ մինը փոխարքան է: Որովհետև ամեն բանի վերջնական վճիռ տուողը նորա կամքն է: Եթէ նա, տէրութեան ամենահարուստ կալուածատէրը, կը կամենայ ազատել խեղճ ֆէլլահին կամայական նորա վերայ դրած ծառայութիւնից, և եւրոպական քաղաքակրթութեան տարրերից շատերը ընդունելուց յետոյ, կը կամենայ նոցա դատաստանական և կառավարչական սիստեմներն ևս ընդունել, այն ժամանակը կը լռեն բոլոր դիմադրութիւնները, որոնք թէ բացարձակ և թէ գաղտնի կերպով սկսել են գործել Նուբար փաշայի դէմ, նորան վայր գցելու նպատակով: Դորանով, այո՛, ամենամեծ ղոհաբերութիւնը խէդիվն ինքը պէտք է անէ. բայց նա այնպիսի մարդ է, որ ընդունակ է այդ անելու, և պէտք է յուսալ, որ նա վաղ թէ ուշ կը վճռի այդ անել յօգուտ իւր տէրութեան:

Առ այժմ կազմվում են Նուբար փաշայի դէմ անվերջ խարդախութիւններ: Արդեօք նա յաղթո՞ղ դուրս կըգայ դոցա միջից: Ես չեմ կարող այդ հարցին դրական պատասխան տալ, և նորանից չի

ծածկում իմ այն կասկածը, թէ նա, դեռ գարունը չսկսուած, ստիպուած կը լինի իւր սեփական կալուածները կառավարել:

«Ինչ որ լինելու է, թող լինի» պատասխանեց նա լրջօրէն: Եւ յետոյ խսկոյն աւելացրեց հանաքով. «Դուք շատ էք տանջում ձեզ չար կասկածներով, աղնիւ բարեկամ, դեռ երեկ յայտնում էիք իմ կնոջը ծանր կասկածներ իմ գետնախնձոր և ծնեբէկ մշակելու փորձերի մասին: Ես ձեզ հանգստացնում եմ: Ամենից առաջ ես Լօնդօն կուղարկեմ ձեզ համար իմ նոր գետնախնձորներից մի պարկ»:

«Կամ ինքներդ կը բերէք, եթէ իմ չար կասկածները սխալ չը դուրս գան»:

«Կամ ինքս կը բերեմ», պատասխանեց նա ժպտալով: «Ուրեմն, թէ այսպէս և թէ այնպէս՝ դուք գետնախնձորները կստանաք և ես կսպասեմ ձեր գրաւոր կարծիքին նոցա մասին»:

Այսպէս բաժանուեցանք: Այդ իմ վերջին այցելութիւնն էր Նուբարի տանը, և առհասարակ վերջին այցելութիւնը, որ ես արի Կայիրոյում: Միւս առաւօտը ես վերադարձայ Ալէքսանդրիա, կրկին Եւրոպա նաւելու նպատակով *):

---

*) Մեծապատիւ Մաքս Շլէզինգէրի վերոյիշեալ կասկածը, թէ Նուբար փաշան երկար չի կարող դիմանալ, շատ շուտով արդարացաւ: Մի քանի շաբաթից յետոյ նա ստիպուած էր իւր հրաժարականը տալ Խեդիվի ծառայութիւնից:

Թան. խմբ.

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

BIBLIOGRAPHIA CAUCASICA ET TRANSCAUCASICA

Опытъ справочнаго и систематическаго каталога печатнымъ сочиненіямъ о Кавказѣ, Закавказьи и племенахъ, эти края населяющихъ. Составилъ М. Міансаровъ, состоящій по армейской кавалеріи маіоръ, дѣйствительный членъ И. Русскаго Географическаго Общества, кандидатъ правъ И. Московскаго Университета. Томъ I, Отдѣлы I и II. С.-Петербургъ. 1874—1876.

(*Փորձ Կովկասի, Անդրկովկասի և դոցա մէջ բնակող ցեղերի մասին տպագրուած հեղինակութեանց առ ձեռն սիստեմատիքական ցուցակի։ Յօրինեց Մ. Միանսարեան, հեծելազօր զօրքի մէջ հաշվուող մայոր, ներդործական անդամ Կ. Ռուսաց Աշխարհագրական Ընկերութեան, կանդիդատ իրաւաբանութեան Կ. Համալսարանին Մոսկուայի։ Հատոր I, մասն I և II. 804 երես մատենախօսութիւն, 42 երես յառաջաբանութիւն ու ցուցիչ, 6 երես վերնագրեր ու նուիրումն։ Ս.-Պետերբուրգ. 1874—1876*)։

Ներկայումս արդէն բաւականաչափ նիւթ է հաւաքուել, որ կարելի լինի կազմել մի ընդարձակ մատենացուցակ այն բոլոր գրքերի և յօդուածների, որոնք Կովկասի նկարագրութեանն են նուիրուած։ Արդէն կան յատկապէս Կովկասին վերաբերող մատենագրութեանց ցուցակներ։ Պ. Դուբրովինի «Очеркъ Кавказа и народовъ его населяющихъ» (Նկարագիր Կովկասի և նորա բնակիչների) աշխատութեան մէջ մի ամբողջ հատորը նուիրուած է բաւականին մանրամասն մատենախօսութեան՝ Կովկասի մասին գրուած այն շարադրութեանց և յօդուածների, որոնք կամ ռուսաց լեզուով են գրուած,

կամ դոյն լեզուով թարգմանած։ Պ. Դուբրովինի աշխատութիւնը տպագրուած է 1871 թուին։ 1873 թուին Ս. Պետերբուրգի կայս. հասարակական գրադարանը հրատարակեց իւր մէջ եղած օտար լեզուներով Ռուսաստանի մասին գրուած շարադրութեանց ցուցակը («Catalogue de la section des Russica ou ècrits sur la Russie en langues étrangères»)։ Այդ գրացուցակի մի մեծ մասը նուիրուած է և Կովկասեան մատենախօսութեան։ Կան և ուրիշ այլևայլ գրացուցակներ, դարձեալ Կովկասի վերաբերութեամբ։ Կովկասի ժամանակակից մատենացուցակ կազմողի գործը այն պիտի լինի, որ ինչքան կարելի է՝ աշխատէ մի ամբողջութիւն կազմել մեր արդէն ունեցած մատենախօսական նիւթերից, մտցնել նորա մէջ այն շարադրութեանց ցուցակը, որոնք լոյս են տեսել վերջին ժամանակներում, դասաւորելով նշանակած նիւթերը նպատակայարմար կերպով և որ այդ աշխատանքը իւր դիրքով ու մեծութեամբ՝ ապա ուրեմն և իւր արժողութեամբ՝ մատչելի լինի, որքան կարելի է շատ այնպիսի մարդկանց, որոնք հետաքրքրում են այդ երկիրը, կամ նորա առանձին մասերը։

Այդպիսի մի աշխատութիւն յանձն է առել կատարելու պ. Միանսարեանցը։ Նա խնդիրքով դիմել է զինուորական վարչութեան, որ իրան նպաստամատոյց լինի այդ աշխատութեան մէջ։ Զինուորական վարչութիւնը, որ ընդհանրապէս համակրում է ամեն օգտաւէտ ձեռնարկութեան, ոչ մի օգնութիւն չի խնայել պ. Միանսարեանցից։ Նա, ի թիւս այլոց, յանձնել է պ. Միանսարեանցի տնօրէնութեանը դեներալ ադիւտանտ Դ. Ա. Միլիւտինի և հանգուցեալ դեներալ Դ. Խ. Բուշէնի աշխատութիւններով յօրինած Կովկասի աղգագրութեան և նորա նոր պատմութեան նիւթերի մատենագրական ժողովածուն, և պ. Միանսարեանցին փող է տուել, որ նա իւր «Մատենախօսութիւնը» հրատարակէ (տես եր. I, II, VII, VIII, Bibliographia Caucasica et Transcaucasica)։ Պ. Միանսարեանցը շտապեց տպագրել այս տարի իւր աշխատութեան առաջին հատորը այն նպատակաւ, որ ներկայացնէ նորան արևելագէտների քննութեանը, որոնց ժողովը պիտի կայանայ Պետերբուրգում այս տարուայ օգոստոս ամսին (տես եր. IV, XI)։ Լոյս տեսած հատորը բովանդակում է իւր մէջ ընդ ամենը 852 երես. գինն է 10 բուբլի։ Երկրորդ հատորը, երևի իւր դիրքով յետ չի մնալ առաջինից, և այդպէսով բոլոր հրատարակութիւնը կը վաճառուի 20 բուբլիով. այդ գումարով կարելի էր

ձեռք բերել Կովկասի մասին գրուած շարադրութեանց բոլոր ցուցակները: Ուրեմն եթէ պ. Միանսարեանցի աշխատութիւնը պիտի վաճառուի, ապա հարկաւոր էր անշուշտ, որ նա իւր ներքին արժանաւորութեամբ գերազանցէր այն բոլոր մատենագրական ցուցակներից, որոնք վերաբերում են կովկասագրութեան: Պ. Միանսարեանցի մատենախօսութեան ինչ արժանաւորութիւն ունենալու մասին խօսելուց առաջ, փնտրենք այն պատճառները, որոնցով այդ գործը այնպիսի մի պատկառելի ծաւալ է ստացել, որ ակամայ յարգանք է գրաւում դէպի ինքը:

Նախ և առաջ պ. Միանսարեանցի աշխատութիւնը սխալմամբ է մատենախօսութիւն անուանուած, որովհետև նորա մէջ պատահում են շատ բաներ, որոնք մատենախօսութեան նիւթ չեն ամենևին: Այսպէս օրինակ՝ պ. Միանսարեանցը իւր մատենացուցակի մէջ տեղ է տուել ժամանակագրական աղիւսակներին, որոնք գրեթէ գրքի 1/7 մասն են բռնում: Այդ աղիւսակներից մէկը «Ցուցակ նշանաւոր անցքերի և կառավարութեան կարգադրութեանց», որ ամբողջապէս դուրս է հանած Կովկասի օրացուցից, 87 երես է բռնում (588—675 եր.) այլ և պ. Միանսարեանցը աշխատել է զանազան մատենագրական և պատմական տեղեկութիւններ յայտնելով՝ կենդանութիւն տալ իւր գրացուցակին: Մենք նորա աշխատութիւնից, ի թիւս այլոց, իմանում ենք, որ (տես եր. 550) Անդրէյ Եակովլևիչ Խալենսկին, ներգործական քաղաքական խորհրդականի աստիճան ունէր և միևնոյն ժամանակ արքունի սենեկապետ էր. իմանում ենք, որ Իշխան Մովսէս Զաքարիա Երկայնաբազուկ Արղութեանցը հայերից առաջինը արժանացաւ գեներալ-ադիւտանտի կոչման, 797—798-ը երեսում կարդում ենք հետևեալը:—Ղորղանով Յովսէփ Իվանովիչը մեռաւ փետրվ. 18-ին 1872 թ. կեանքի 57-րդ տարում: Ղորղանովը Կովկասեան զօրագնդի ամենատաղանտաւոր օֆիցերներից մէկն էր, մերձ ի մահ վիրաւորուած Կիտուրի մօտ՝ Գեներալ-Լեյտենանտ Վրէվսկին իւր հրամանատարութիւնը և յետ քաշուիլը յանձնեց պօլկովնիկ Ղորղանովին, մի կողմ թողնելով դոյն զօրքի մօտ գտնուող զօրապետներին, համոզուած լինելով, որ ոչոք Ղորղանովի պէս լաւ չէր կարող այնպէս պատուով յետ քաշուիլ և ուղղել այն սխալները, որոնք յառաջացել էին զօրքերի սարերի խորքերում ուղևորելիս: Երբեմն գաւառապետ պ. Ղորղանովի կարգադրութեանը և անվեհերութեանն ենք պարտական

Հաջի Մուրադի կալանաւորուիլը, որ փախել էր մեզանից, առանձին ոստիկանի հսկողութեան տակից»: Ի սէր Աստուծոյ... միթէ դա մատենախօսութիւն է: Ընթերցողաց ծանօթացնելու համար թէ ինչպիսի կենսագիր է պ. Միանսարեանը, բերենք այստեղ Զամչեանի կենսագրութեան մի փոքրիկ կտորը, որ ամփոփուած է մեր քննութեան ենթակայ առ ձեռն գրացուցակում: Ա.Հաւասիկ (եր. 493) «Միքայէլ Զամչեանը (որ Զամիչ էլ է ասվում) ծնուել է Կոստանդնուպօլսում 1738 և մեռել է նոյն տեղը 18(30) նոյեմբ. 1823 թուին 86 տարեկան հասակում: Փոքր ժամանակը նորան տուել էին ոսկերչի մօտ. այդ արհեստը նա շատ ուշ սկսեց սովորել. 23 տարեկան հասակում մտաւ վանք: Հասակի մեծութեան պատճառով Մխիթարեաններից դժուարութեամբ ընդունուելով նոցա վանքը և ուսումնարանը, այստեղ նա շուտով իւր յառաջադիմութեամբ գերազանցեց միւս աշակերտներին. շատ գեղեցիկ կերպով սովորեց հայոց լեզուն, որի հետ նա ծանօթ էր գրականապէս և առաջուց... Օտար լեզուներ չիմանալը և հետևապէս եւրոպական գրուածքներ ուսումնասիրելու անկարելիութիւնը շատ վնասեցին նրա զարմանալի ընդունակութեանը և աշխատասիրութեանը». (Ինչ ցանցառաբանութիւն): Պ. Միանսարեանցի կենսագրական և պատմական նկարագրութիւններով լցուած են «Исторія» մակագրեալ գրքի երկրորդ կէսը:

Երկրորդ՝ պ. Միանսարեանցը իւր «Մատենախօսութեան» ծաւալը մեծացնելու համար արտատպել է ամբողջապէս բազմաթիւ գրեանց բովանդակութեան դասաւորութիւնը: Այդպիսի մի գրականական ձև ընդունելն է պատճառը, որ միայն Զամչեանի «Հայոց Պատմութեան» բովանդակութիւնը 25 երես է բռնել (468—492): Արդեօք բարբարոսութիւն չէ՞ այդ բանը գրացուցակում: Նկատենք հարևանցի, որ յիշեալ գրքի, ինչպէս և միւս շատ գրքերի բովանդակութիւնը ամբողջապէս տպագրուած է Հայոց լեզուով, և ուրեմն անհասկանալի ընթերցողաց մեծ մասի համար: Բայց նա անօգուտ է հայ ընթերցողի համար ևս: «Մատենախօսութեան» մէջ տպագրուած է ամբողջապէս «Կովկասեան հնագիտական յանձնաժողովի հրատարակած արձանագրութիւնների» (акты) գլխների և յօդուածների ընդարձակ ձևը, ցոյց տալով (բացառութեամբ վերջին հատորի) և այն երեսները, որ բռնում են իւրաքանչիւր գլուխը և յօդուածը (իսկ դոցա թիւը բաւականին մեծ

է)։ Արձանագրութեանց աւելացրած են և այն յատուկ անունց ցուցակները, որոնք գտնվում են նորանց մէջ։ Այդ յօդուածների մէջ հաշուած են մի առ մի ոչ միայն երեսները, որոնց վերայ խօսվում է, որ և իցէ անձի մասին, այլ մինչև անգամ և այն երեսները, որտեղ նոցա մասին հարևանցի կերպով ակնարկութիւն է լինում։ Պ. Միանսարեանցի դրացուցակի մէջ, տեսնում ենք արտատպած այդպիսի ցուցմունքներ։ Օրին. «Մատենախօսութեան» 719 երեսում զօրապետ Պօրտնեագինի անուան մօտ գտնում ենք 50-ից աւելի այդ տեսակ ցուցմունք, իսկ զօրապետ Նէսվէտայէվի մօտ 100-ից աւելի։ Ի՞նչ միտք ունի դա դրացուցակի մէջ։ Եթէ գտնուի էլ այնպիսի հետաքրքիր ընթերցող, որ կամենայ, աչքէ անցցնել «արձանագրութեանց» այն բոլոր երեսները, որոնց մէջ յիշվում է Նեսվէտայէվ զօրապետի անունը, այն ժամանակ նա անմիջապէս կըդիմէ բուն արձանագրութեանցը և ոչ թէ պ. Միանսարեանցի մատենախօսութեանը, որ սոյն դէպքում բոլորովին անօգուտ կգտնուէր։

Խօսելով մատենախօսութեան ծաւալի մասին, մենք պիտի ուշադրութիւն դարձնենք նորա մէկ առանձնութեան վերայ ևս։ Պ. Միանսարեանցը հատուածների, գլխների վերնագիրը, ինչպէս և յատուկ անունները և առհասարակ հեշտ թարգմանելի տեղերը, գաղղերէն այսպէս է թարգմանում — Шамиль — Schamyl, Турки — Turcs Армяне — Les Armèniens, Ботаника — Botanique, предисловіе — prèface, человѣкъ — l'homme և այլն, և այլն, և այլն։ Նկատենք ի դէպ, որ պ. Միանսարեանցի թարգմանութիւնները ամեն ժամանակ ճիշտ չեն լինում, այսպէս օրին. XIII երեսում գտնում ենք. «Земля» — «la nature»։ Հարց. ո՞ւմ համար է պ. Միանսարեանը վարժուել Ֆրանսիերէն թարգմանութեանց մէջ։ Թողնելով այդ հարցի վճիռը նոյն իսկ Bibliographia Caucasica et Transcaucasica աշխատասիրողին, մենք աւելորդ չենք համարում նկատել, որ թարգմանութիւնները Ֆրանսիացւոց համար չեն արած, որովհետև Ֆրանսիերէն գլխագրերի տակ տեղաւորուած են ռուսաց լեզուով տպած գրեանց անունները, առանց վերնագրերի գաղղերէն թարգմանութեան։ Մինչև անգամ կարճավանկ բառերի թարգմանութիւնը միւս տողումն է տպուած բնագրից բաւականաչափ հեռաւորութեամբ։ Տպագրութիւնը չափից դուրս խոշորատառ է։ Պ. Միանսարեանի փափագը կատարուած է։ «Մատենախօսութեան» առաջին հատորը բռնել է, ինչպէս ասացինք, 852 երես և պ. Միանսարեանցի գործն ստացել է մի պատկառելի ծաւալ։

Մենք մինչև հիմա խօսեցինք այն բաների վերայ, որոնք մի գրացուցակի համար միանգամայն օտար նիւթեր են: Այժմ մի քանի խօսք ասենք զուտ մատենախօսական նիւթերի վերայ, որոնք ամփոփուած են պ. Միանսարեանցի ցուցակի մէջ: Այդ գրացուցակը շատ թէ քիչ յաջողակ քաղուածք է արդէն եղած մատենախօսական ցուցակներից: Այդպիսի մի քաղուածանելով, պ. Միանսարեանցը պէտք է լրացնէր մատենախօսական նիւթը, որ պարունակվում էր արդէն կազմած գրացուցակների մէջ, այն հեղինակութիւնների և յօդուածների անուններով, որոնք երևացել են վերջին ժամանակներս, բայց, տարաբախտաբար, նա չէ արել այդ: Իւրեան արդարացնելու համար պ. Միանսարեանցը առաջ է բերում այն հանգամանքը, որ իւրեան յայտնի գրադարաններում չկայ անգամ մի հաւաքածու բոլոր Հայոց և Վրաց տպած ընդհանուր և պարբերական հրատարակութիւնների: Այն էլ է խոստովանում պ. Միանսարեանցը (տես եր. VI), որ նորա գրացուցակում չկայ տեղեկութիւններ եւրոպական արդի պարբերական գրականութեան մասին. էլ չէ խոստովանում բոլորովին, որ իւր գրացուցակում չկան տեղեկութիւններ և ռուսաց պարբերական գրականութեան մասին: Եթէ պ. Միանսարեանցը աշխատութիւն կրած լինէր նայելու «Извѣстія Кавк. Отд. Географ. Общества», իսկ նոցա մէջ «մատենագրական ցուցակները» այն ժամանակ, շատ կարելի է, որ նա այլ ևս չէր գանգատուիլ «զանազան մատենագրութեանց տեղեկութեանց չլինելու մասին:» Ինչպէս երևում է «Առձեռն գրացուցակից», պ. Միանսարեանցը ուշադրութեամբ չէ քննել ոչ «Сборникъ свѣдѣній о Кавказскихъ Горцахъ» ոչ «Записки Кавк. Отд. Географ. Общест.», ոչ Կովկասի միւս ուսումնական հրատարակութիւնքը, բայց և այնպէս՝ ձեռնարկել է կազմել «Կովկասեան և Անդրկովկասեան Մատենախօսութիւն» (!): Գուցէ ընթերցողը կասէ. կարելի է պ. Միանսարեանցը ներկայացրել է մի լիակատար ցուցակ այն մատենագրական նիւթերի, որոնք անցեալ ժամանակին են վերաբերում: Որպէս զի ընթերցողը այդպէս չկարծէ, առաջարկում ենք նորան աչքէ անցցնել «Մատենախօսութեան» այն մասը, որի վերնագիրն է «պատմութիւն» և և որ բռնում է գրքի համարեա կէսը: Այս մասում յառաջ են բերվում համարեա բացառապէս միայն Հայոց և Վրաց պատմութեան վերաբերեալ շարադրութիւններն ու նկարագրութիւնները, և Ռուսաց Կովկասի (հիւսիսային) և Անդրկովկասի հետ ունեցած յարա-

բերութեան պատմութեան վերաբերութեամբ եղածները։ Ցիրաւի, յիշեալ մասի սկզբում գտնում ենք այս գլուխը։ «Հին աւանդութիւններ Կովկասի մասին ընդհանրապէս՝ և նորա բնակչաց». բայց այս չափազանց նիհար գլուխը ցոյց է տալիս առձեռն «Մատենախօսութիւն» կազմողի շատ թոյլ ծանօթութիւնը Կովկասի պատմական նկարագրութեանց հետ։ Ըստ երևութին՝ աւելի ընդարձակ են դրուած այն մատենագրական ծանօթութիւնները, որոնք վերաբերում են Հայաստանին, ինչպէս օրինակ երրորդ բաժանմունքը «պատմութեան» մասնի, որ բռնում է 380 երես, նուիրուած են Հայոց պատմութեան վերաբերող մատենագրութեան (434—562 եր.) Վերջինի յարաբերութիւնը ամբողջ մասնի հետ աւելի ևս ճիշտ որոշելու համար, պէտք է դուրս հանել մի կողմից համարեա 100 երես Վրաց և Նորագոյն պատմութեանց ժամանակագրական ցուցակից, իսկ միւս կողմից Հայոց պատմութեան նոյնպիսի մի ցուցակից միայն 27 երես։ Բայց առհասարակ, ինչպէս պ. Միանսարեանցը խոստովանում է, նորա աշխատութիւնը լիակատարութիւնից դեռ շատ հեռու է (եր. V). նա շտապել է նորան վերջացնել, որ հասցնէ արևելագէտների ժողովին (եր. IV)։ Մատենախօսական նիւթը պ. Միանսարեանցը կամեցել է դասաւորել սիստեմատիքական կարգով։ Սիստիմատիքական դրացուցակները, յիրաւի նախադասելի են այն մատենախօսութիւններից, որոնց մէջ գրքերի անունները դասաւորուած են միայն այբուբենական կարգով, բայց որպէս զի այսպիսի մատենագրութիւնները յարմար լինին հետազօտութեանց համար, անհրաժեշտ է, որ նորանց մէջ մատենագրական նիւթը դասաւորած լինի խիստ-սիստեմատիքական կարգով։ Քննելով պ. Միանսարեանցի «մատենագրութիւնը», մենք շատ ցաւեցինք, որ նա մատենագրական նիւթը այբուբենական կարգով չի դասաւորել։ Պ. Միանսարեանցը բաժանել է իւր աշխատութիւնը 3 մասն։ Այդ մասերն են ա) Երկիր — la nature, բ) Մարդ և բնութիւն — l'homme et la nature, այսպէս է անուանում պ. Միանսարեանցը աղգագրական մասն) և գ) փոխադարձ ներգործութիւնը բնութեան և մարդու — influence de la nature sur l'homme et vice versa։ Մասները բաժանուած են գլխների։ Աչքէ անցցնելով բաժանմունքը, մենք բոլորովին զարմացած մնացինք։ Երևակայեցէք, ընթերցող այն գլուխը, որի մէջ խօսվում է ժամագրքի և եկեղեցական ձայնագրութեան վերայ, տեղաւորուած է երրորդ մասնումը։ Ի սէր Աստուծոյ, ա-

սացէք, պ. Միանսարեան, ի՞նչ ազդեցութիւն կարող են ունենալ բնութեան վերայ ժամադրքերն ու շարականների խաղերը: Գլխների դասաւորութեան կարգն էլ մի ուրիշ կերպ է, այսպէս օրինակ «Բուսաբանութիւն և կենդանաբանութիւն» գլխին հետևում է «Հանքային ջրեր ու ցեխեր», իսկ հանքային ջրերից յետոյ գալիս է «Օդերևութաբանութիւն»: «Ճանապարհների հաղորդակցութիւնից երկաթուղիներից ու շէնքերից» յետոյ գալիս է «բանասիրութիւն»: Բացի դորանից՝ երկրի զանազան մասների նկարագրութեանց ցուցակները տեղաւորուած են ըստ գաւառների ու նահանգների: Նահանգները, գաւառները և այլ կողմերը — դոքա կառավարչական միութիւններ են, որոնք ըստ մեծի մասին չեն համապատասխանում աշխարհագրականներին, և յաճախակի փոփոխվում են, այդ պատճառով աշխարհագրական նիւթերի մատենախօսութեան մէջ ըստ նահանգների դասաւորելը մեծ սխալ է: Պ. Միանսարեանցի գրքի մէջ օտարոտի է և կովկասեան ցեղերի կարգադասութիւնը, իմերէլները դուրիացիք ջոկ ջոկ ազգեր են համարվում. նա կարծում է թէ՝ կարաչաևցիք աբխազաց ցեղին են պատկանում (!?):

Պ. Միանսարեանցի մատենագրական ցուցմունքները շատ խառնաշփոթ են: Օրինակ, այն մասի մէջ, որի վերնագիրը «Nature» է, մոցրած են հետևեալ ռուսերէն շարադրութիւնները՝ «Քաղաքային ինքնակառավարութեան գործունէութիւնը Թիֆլիսում ֆինանսների վերաբերութեամբ և քաղաքի բարեկարգութիւնը 1866 թուից մինչև 1872 թիւը (եր. 87)». «Թիֆլիսը ազգագրութեան և պատմութեան նկատմամբ (եր. 86)», «Գեանջա — ցանկ պատմական տեղեկութեանց, նորա հիմնարկութիւնը մինչև 1864 թ. (եր. 90)», «Նուխի քաղաքի ազգագրական նկարագիրը (եր. 91)», «Փոթի — քաղաքային շինութիւնները, վաճառականութիւնը (եր. 96)», «Մի հատուած ճանապարհորդութիւնից ի Մինգրէլիա — ճանապարհները, կանանց հագուստները, երգերը.....(եր. 96)» և այլն և այլն: Իսկ ազգագրական մասնում պատահում են այնպիսի շարադրութիւններ, որոնք բոլորովին ազգագրութեան չեն վերաբերում, ինչպէս օրինակ «Notice sur la carte générale des Pachaliks de Bagdad, Orfa et Hhaleb et sur le plan d' Hhaleb (եր. 235)», «Einige Orte Kurdistans nach ihrer Längen-Breiten und Höhen-Lage (եր. 239)»: Միթէ աշխարհագրական քարտէզները, յատակագծերը, յայտնի տեղերի բարձրութիւնները և աստղաբաշխական դրութիւնները ազգագրութեան

են վերաբերում։ Պ. Միանսարեանցը սիրում է անակնկալ պարգևներ առաջարկել. զորօրինակ, այն ընթերցողը, որ հետաքրքրում է «ճանապարհորդութեան, voyage» գլուխը, հասնելով մինչև 388 եր. և կարդալով «Նայիր նաև voir encore եր. p. p. 233—245» 234 երեսում գտնում է հետևեալը «Garzoni, Grammatica e Vacabulario della lingua Kurda»

Մի՞թէ քերականութիւններն ու բառարանները ճանապարհորդութեանց կարգին են պատկանում։ Ով որ հետաքրքրվում է կովկասցիների պատերազմական քաջագործութիւններով, 798 երեսի սկզբում կարդալով մի քանի տող, որոնց մէջ խօսվում է Հաջի-Մուրադի կալանաւորութեան վերայ հանդուցեալ Յովս. Յովհ. Ղորղանեանի ձեռքով, պատահում է հետևեալին. «Юбилейный праздникъ 50 лѣтней службы Іосифа Ивановича Ходзько, дарованные ему рескрипты и поднесенные адресы (за заслуги по картографіи Кавказа)։ Ինչո՞ւ պարոն Միանսարեանը կողք կողքի է դրել այս անձանց. ինչ կապ ունի Հաջի-Մուրադի կալանաւորութիւնը և քարտիզագրութեանը։ Ջննելով «Համակարգական ցուցակը», մենք տեսնում ենք, որ 588 երեսից սկսվում է այն մասը, որի վերնագիրն է՝ «Ռուսաց յարաբերութեանց պատմութիւնը Կովկասի և Անդրկովկասի հետ և Ռուսաց տիրապետութեան տարածումն երկրի մէջ»։ Գտնում ենք 588 երեսը և այնտեղ կարդում ենք հետևեալը՝ «Ժամանակագրական ցուցակ նշանաւոր անցքերի և կառավարութեան կարգադրութիւնների», և իսկոյն դորա տակը տպագրած է. «Տիեզերական Ջրհեղեղը։ Նոյեան տապանը կանգնում է մեծ Արարատի գլխին և այլն»։ Հարց. որի՞ն վերաբերենք այս անցքը։ Արդեօք Ռուսաց յարաբերութեան պատմութեանը Կովկասի հետ, թէ կառավարութեան կարգադրութեանց։ Ա. հասարակ շատ դժուար է պ. Միանսարեանի ցրացուցակի մէջ գտնել կամեցած տեղեկութիւնը, այն պատճառով, որ շատ յաճախ գրքերի վերնագրերը չեն գտնվում այն մասի մէջ, որտեղ որ նրանց պատշաճ էր լինել, և այս մականունը «սիստեմատիքական», որ պ. Միանսարեանը սեփականացրել է իւր գրացուցակին, մի չար կատակ է այդ բառի բուն նշանակութեան վերայ։ Որպէս զի գործը որքան և իցէ թեթևանայ այն անձանց համար, որոնք պ. Միանսարեանցի մատենացուցակի առաջնորդութեամբ ցանկացած տեղեկութիւններ են հաւաքում, հարկաւոր է I հատորի վերջում կցել շարադրութեանց և նոցա հեղինակների այբբե-

նական ցուցակը: Ճշմարիտ է, թէև այն ժամանակն էլ բոլորովին չեն անհետանալ այլ դժուարութիւնքը, որոնք ներկայանում են գրեանց անունները փնտրելու ժամանակ, որոնց վերայ համարներ չեն դրուած, բայց և այնպէս առաջարկած միջոցը որքան և իցէ կը թեթևացնի գործը: Պ. Միանսարեանցի մատենացուցակը տակաւին լիակատար չէ: Մատենացուցակի կազմողը խոստանում է նորան լրացնել: Ի սրտէ ցանկանում ենք նորան յաջողութիւն այդ բանի մէջ:

Հարկաւոր ենք համարում պ. Միանսարեանցի ուշադրութիւնը դարձնել և մի այլ հանգամանքի վերայ: Պ. Միանսարեանցը, ինչպէս երևում է գրքի սկզբում իւր ամբողջութեամբ յառաջ բերած տիտղոսից, մատենախօս չէ: Նորա առաջուայ հրատարակութիւնները, որոնք նոյնպէս ամբողջութեամբ տպագրած են նորա «մատենացուցակի» կազմի երեսին, պարզ ցոյց են տալիս, որ պ. Միանսարեանցը առաջ ևս չի պարապել մատենագրութեամբ: Մենք կարծում ենք, որ այնպիսի գրուածքներ, ինչպէս են «Ցողացանցեր», «Հայերէն գեղագրութեան վարժութիւններ», «Իւր կնոջ ժառանգութիւնը ձեռք բերելու համար բաց արած դատեր, որոնք սկսուել են 1866 թուից և այժմ էլ շարունակվում են», դոքա ոչ մի նմանութիւն չունին մատենախօսութեան հետ: Թէ պ. Միանսարեանցը մատենախօս չէ, այդ ցոյց է տալիս և մեր քննած «Սիստեմատիքական մատենացուցակը»: Միով բանիւ, պ. Միանսարեանցը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մատենախօսասէր: Աչքի առաջ ունենալով այս հանգամանքը, մենք բարեկամաբար խորհուրդ կը տայինք նորան զգուշանալ դատավճիռներ տալուց մի քանի շարադրութեանց վերայ. հաւատացէք, որ այդ պ. Միանսարեանցի գործը չէ: Պ. Միանսարեանը պէտք է զգուշանայ այլև այլ շարադրութիւնների մասին իւր կարծիքը յայտնել նաև այն պատճառով, որ ինչպէս մենք լսվին համոզուեցանք նորա մատենախօսութիւնից, նա անում է այդ ոչ թէ իւր ընթերցողներին մի գրքի հետ ծանօթացնելու համար, այլ իւր անձնական հաշիւները տեսնելու այն մարդկանց հետ, որոնք նորան հաճելի չեն: «Կովկասեան և Անդր-Կովկասեան մատենախօսութեան» մէջ իւր անձնական հաշիւներ տեսնելը պ. Միանսարեանցը երբեմն չափազանցութեան է հասցնում: Սորանից տասնուհինգ տարի առաջ պ. Եղեանը հրատարակեց մի շարադրութիւն հետևեալ վերնագրով. «Внутренній бытъ древней Арменіи»: Պ. Եղեանի այդ աշխատասիրութիւնը, որ Ռուսաց հասարակութեանը բաւականին հանգամանօրէն ծանօ-

թացնում է Հին Հայաստանի դրութեան հետ, իւր հայրենակիցների մեծ ևս յարգանք լի ընդունելութիւն գտաւ, որի ապացոյց կարող է լինել պ. Եղեանի շարադրութեան հայերէն թարգմանութիւնը*)։ Ահա՛ ինչ է ասում պ. Միանսարեանցը այդ աշխատութեան մասին (եր. 399). «Եղեանի շարադրութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի քաղուած է. Ղուկաս Ինճիճեանի գործից՝ «Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի», աւելացնելով մի քանի բաներ Դէլատրի Էմինի, Նազարեանցի, Լանգլուայի և Բրոսսէի շարադրութիւններից։ Նոյն իսկ աղբիւրները, որոնց մատնացոյց է անում պ. Եղեանը, յայտնի են նորան ոչ բնագրներից, այլ շնորհիւ յիշեալ մատենագիրների»։ Եթէ և պ. Միանսարեանցի խօսքերը ճշմարտութիւն համարենք, պէտք է նկատենք, որ սա «քաղուած» բառի վերայ շատ խառնաշփոթ հասկացողութիւն ունի. ապա թէ ոչ, նա քաղուած չէր անուանիլ յիշեալ աշխատութիւնը, որ մի սեղմուած, ըստ բովանդակութեան ձոխ, հայոց հին կեանքի նկարագրութիւն է հանդիսանում՝ քննադատութեամբ բաղդատուած հիմանց վերայ. դա ծաղկաքաղ անողի աշխատանք չէ, որ շատ անգամ չափազանցութեան հասնելով, ամմոդջութեամբ և բոլորովին մեքենայաբար արտագրում է, ինչպէս որ այդ անում է ինքը պ. Միանսարեանցը, ամբողջ հատուածներ արտատպելով այլ և այլ գրքերից։ Բայց այդ չէ բանը։ Հարցնում ենք. ի՞նչ հիման վերայ է պ. Միանսարեանցը հաստատում, որ պ. Եղեանցը մատնացոյց է անում այն աղբիւրներին, որոնք նա չի կարդացել։ Ի՞նչ հիման վերայ է պ. Միանսարեանցը վստահանում մեղադրել առանց ապացուցանելու դրականական անբարեխղճութեան մէջ այնպիսի մի անձի, որ, ինչպէս յայտնի է, ընդհանուր յարգանք է վայելում։ Այդպիսի ամբաստանութիւնը բնաւ չպիտի տեղի ունենայ այնպիսի լուրջ հրատարակութիւններում, ինչպէս «Մատենախօսութիւնն» է։ Մի՞թէ նորա համար է զենուորական կառավարութիւնը փող տուել պ. Միանսարեանցին «Կովկասի և Անդր-Կովկասի մատենախօսութիւն» տպելու համար, որ նա մտցնէ, նորա մէջ իր անձնական հաշիւները։ Մատենախօսութիւն կազմելը, ինչպէս էլ որ լինի, ուսումնական գործ է, այնպիսի մի գործ, որ չունի և ոչ մի

---

*) Եղեանց Կարապետ. Ներքին կեանք Հին Հայաստանի, թարգմ. Պերճ Պռոշեանցի։ Շուշի. 1864, in 8, եր. 199.

յարաբերութիւն, օրինակ՝ պատերի հետ, և մատենագրութեան մէջ յիշոցներ մտցնելը կը նշանակէ գիտութիւնն անպատուել։ Թող այստեղ յիշեցնենք պ. Միանսարեանցին մի ռուսումնասիրանի ասած խօսքերը. «Ով որ կամենում է մտնել Գիտութեան տաճարը, թող նորա շէմքում մի կողմը ձգի իւր բոլոր մանր կրքերը, որպէս զի կարողանայ խորին պատկառանօք երկրպագել մեծ, սուրբ — սուրբ ճշմարտութեան»։ Խորհուրդ ենք տալիս պ. Միանսարեանցին խելամուտ լինել այս խօսքերին և լաւ դրոշմել իւր սրտի խորքում։

Պ. Միանսարեանցի պակասութիւնները ցոյց տալուց յետոյ, պէտք է յայտնենք, որ մենք բոլորովին համակարծիք չենք այն անձանց հետ, որոնք յանդիմանում են պ. Միանսարեանցին նորա համար, որ նա ձեռնարկել է մատենացուցակ կազմել։ Առաջին որ մատենացուցակ կազմելը մի մեծ խմաստութիւն չէ, երկրորդ որ այս պարապմունքը արժանի է յարգանաց, և հաղար անգամ լաւ է մատենացուցակներ կազմել, քան թէ պարապել բամբասանքներով և բծախնդրութիւններով. երրորդ՝ թէև պ. Միանսարեանցի գործը իւր արժէքով և անկատարելութեան կողմանէ մի մատենագրական հաղուագիւտ բան է նոյն իսկ իւր լոյս տեսնելու օրից, այսուամենայնիւ այդ գիրքը այնպիսի մի նիւթ է, որից կարող է օգուտ քաղել ապագայ մատենախօսը։ Բայի դորանից, մենք վստահանում ենք ասել, որ եթէ պ. Միանսարեանցը իւր «Մատենախօսութիւնը» կազմելու ժամանակ չուզենար աչքակապութիւն անել, չշտապէր ներկայացնելու արևելագէտների ժողովին, չը մտածէր իւր անձնական հաշիւները նորա մէջ մտցնել, և առ հասարակ աւելի բարեխղճաբար վերաբերէր իւր գործին, մենք չէինք գրիչ նորա գրքի մասին այն, ինչ որ հիմա ասացինք։

ՅԱԿՈԲ ԷՐԼԻԽ. վէպ մանուկների և պատանիների համար։ (Գործ Ֆրանց Հոֆման գերմանացի մատենագրի), թարգ. Աղեքսանդր Հ. Քալանթարեանց։ Բազու. 1874. in 16, 107 երես. գինն է 30 կ.

Կան անձինք, որոնք կարծում են թէ աշխարհիս երեսին հայերէն թարգմանութիւններ անելուց հետո բան չկայ։

Նոքա համոզուած են, թէ բաւական է միայն փոքրի շատէ տեղեակ լինել մի օտար լեզուի, իսկ հայերէն գիտենալը տեղերդ է. չէ՞ որ հայերէն ով ասես կարող է գրել ինչպէս ուզենայ... իսկ տպագրելու համար ստորագրութիւն բանալ, ազգասէրների կոպէկները ժողովել, չստորագրողներին յետադէմ, նաև ազգատեաց անուանել։ Իսկ յետո՞յ.... յետոյ, եթէ գիրքը չըծախուի— այդ բանի մէջ ազգի անտարբերութիւնը տեսնի, իսկ եթէ ծախսը դուրս գայ, ուրիշ մի դորա նման գիրք էլ հրատարակէ և ի հարկէ երկու դէպքում էս իւրեան ազգի բարերար համարէ։

Մեր առաջը դրած է ահա մի գիրք, որի թարգմանիչը կարող է այս տեսակ անձինքների տիպը համարուիլ։ Այս գիրքը գերմանացի-մատենագիր Ֆրանց Հոֆմանի գործն է։

Վեր առնենք թարգմանութիւնը և համեմատենք բնագրի հետ։

Հոֆմանն ասում է «Ամառը համարեա թէ անցել էր։ Քալանթարեանը թարգմանել է. «Ամառը արդէն սկսուած էր». (եր. 98)։

Հեղինակն ասում է «Յակովբը եօթը տարի աշակերտութիւն պէտք է անէր». թարգմանիչը շատ համարելով այդ, բաւականանում է վեց տարով։

Շատ տեղեր ամբողջ նախադասութիւններ են դուրս թողած. չեն թարգմանած բոլորովին 55, 56, 57, 58, 59, 60 և 61 երեսները։ Այդքան էլ անհերեսութիւն կը լինի, կը հարցնի զուցէ զարմացած ընթերցողը։ Մի՞թէ հայն այդքան անհերես կարող է լինել, ես էլ մտածեցի, և կրկին թերթելուց յետոյ, գտայ....ցնծա՛, հայ ընթերցող.... որ անհերեսը ռուսն է։ Պարոնը թարգմանել է ռուսերէնից. ես կարծում եմ, որ ռուսը ճիշտ չէ թարգմանել. ես հաստատ չեմ ասում այդ, որովհետև 30 կոպ. հայերէն թարգմանութեան, 25 կ. գերմաներէն բնագրի համար վճարելուց յետոյ, ես աւելորդ համարեցի ձեռք բերել ռուսաց թարգմանութիւնը։

Շարունակենք համեմատութիւնը։

Գերմաններէն բնագրում Յակոբի հայրը սովորութիւն ունէր լատինական B տառով նշանակել խարիսխ, ռուսը ռուսացրել է այդ և նորանում Б գիրը նշանակում է бочка водки, իսկ մեր Բենը, մեր անմեղ Բ տառը ներկայացնում է նոյնպէս մի տակառ օղի։

Յակոբի հայրը գերմաններէն բնագրում սովորութիւն ունէր ասել «Միւս անգամ աւելի լաւ կերթայ բանը». ռուսը թարգմանել է միանգամայն իրաւացի «перемелится, мука будетъ». իսկ պ. Քալանթարեանը—«Կաղացուի, ալիւր կըդառնայ»։

Որպէս զի ընթերցողը մի գաղափար կարողանայ կազմել գրքի լեզուի մասին, յառաջ ենք բերում միայն հետևեալը—

«Երբ որ պատիժը վերջացաւ և վարժապետները հեռացան Բառնաբասը բարկացած մօտիկացաւ Յակոբին, մօտիկացրաւ նորա երեսին բուռը (իւմբրուղ)»...կամ այս տեղը—

«Նորանից յետոյ բոլոր նա իւր ջանքը գործ դրաւ յաղթելու իւր վատ սովորութեանը և շուտ էլ կարողացաւ յաղթելու»։

Մենք էս կը ցանկանանք, որ պ. թարգմանիչը աշխատէ յաղթելու իւր վատ թարգմանելու սովորութեանը։

Գիրքը տառասխալներով լիքն է. կէտադրութիւն ասած բանը անյայտ է պարոնին։

Այս գրքի երևելի թարգմանիչը պ. Աղէքսանդր Քալանթարեանն է. նուիրուած է Թոմաս Մարգարեանին։ Գրքից տեղեկանում ենք, որ առաջինի հօր անունը Հայրապետ է, երկրորդինը՝ Մկրտիչ։ Գիրքը տպուած է Ն. Մալաքեանի տպարանում։ Մեզ համար անհասկանալի է, թէ ինչո՞ւ Մալաքեանի հօր անունը չէ յիշուած....

ԽՄԲԱԳԻՐ—ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

,,ՓՈՐՁ,,

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ԵՌԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍ

,,Փորձը,, հրատարակվում է 1876 թուի յուլիսից սկսած երեք ամիսը մի անգամ: Տարեկան բաժանորդագինը ամեն տեղ տասը մանէթ է: Ստորագրուիլ կարելի է Տփխիսում՝ ,,Փորձի,, խմբագրատանը, Հ. Էնֆիաճեանցի ծխախոտի խանութում, Тифлисскій Вѣстникъի խմբագրատանը և Կովկասեան Գրավաճառանոցում: Օտար քաղաքացիք կարող են դիմել խմբագրութեանը հետևեալ հասցէով—Тифлисъ. Въ Редакцію Армянскаго Журнала ,,ПОРДЗЪ,, իսկ արտասահմանից— Tiflis. Redaction du jurnal armènien ,,PHORDZ,,.

ՑՈՒՑԱԿ

№	Հայերէն գրքերի, որոնք վաճառվում են Գրավաճառանոցում (Զաքարիա Գրիգորեան և ընկ.)	ռ.	կ.
	ԴԱՍԱԳՐՔԵՐ		
1	Աղայեանց. Ուսումն Մայրենի լեզուի, գրել և կարդալ . . .	—	20
2	— — — — ծնողաց և ուսուցչաց համար.	—	20
3	Տէր Ղևոնդեանց. Մայրենի լեզու մասն ա. դ. տիպ. . . .	—	35
4	— — — — մասն բ. բ. տիպ. . .	—	35
5	Տէր Ցակոբեանց. Դասագիրք Ռուսաց լեզուի ե. տպ. . .	—	60
6	— Աղօթագիրք հայոց դպրոցների համար բ. տպ.	—	7
7	Ընթերցարան մասն առաջին բ. տպ.	—	25
8	Ղուկասեանց. Ընթերցարան — —	—	45
9	Պալասանեան. Գործնական քերականութիւն մ. ա. բ. տպ. .	1	—
10	— — — մ. բ. բ. . .	—	65
11	— Քերականութիւն Մայրենի լեզուի, (աշխարհաբար)	—	50
12	Սիմոնեանց. Սրբազան պատմութիւն հին կտակ. գ. տպ. .	—	60
13	— — — նոր կտակ. բ. տպ. .	—	60
14	Օրբելի. Նախաշաւիղ կրօնագիտութեան մասն ա. բ. տպ. .	—	30
15	— Հին և նոր կտակարանի համառօտ պատ. — — .	—	30
16	— Դասագիրք եկեղեցական պատմութեան — — .	—	90
17	Մանդինեանց. Եկեղեցական պատմութիւն — — .	1	—
18	Մանկական աշխարհ. թարգ. Տէր Դաւթեանցի մ. բ. — — .	—	80
19	Եւտուշևսկի. թուաբանական խնդիրներ թարգ Ս. Սիմոնեանց մասն ա. բ. տպ.	—	40
20	— — մասն բ. բ. տպ. — — — .	—	50
21	Աբովեանց. Գ. Հայոց պատմութիւն -- — — .	—	75
22	Տէր Սարգսեան. Համառօտ ձեռնարկ գծագրութեան — . .	—	60
23	Բուրգեր. Համառօտ ձեռնարկ աշխարհագրութեան Թ. Ս. Սաֆրազ	—	25

Վերոյիշեալ գրքերը վաճառվում են ամբողջապէս մեր գրատանը։

ԸՆԹԵՐՑԱՆԵԼԻ ԵՒ ԴԱՍԱԿԱՆ ԳՐՔԵՐ

1	Տէր Աբրահամեան. Հայոց պատմութիւն	—	40
2	Պալասանեան. Ֆրանսերէն այբբենարան.	—	30
3	Միանսարեանց. Քնար Հայկական	1	25
4	— Կոմբի. խնամատարութիւն մանկանց . . .	—	60
5	— Լարուլէ. աղգային կրթութիւն	—	40
6	— Գրութեան վարժութիւններ 5 №	—	20
7	— Տօղացանցեր 4 №	—	10
8	Սոխակ Հայաստանի Մասն ա. և բ. իւրաքանչիւրը . . .	1	—

9	Խուդեանց. Մուղայք Հայաստանի	—	50
10	Բարխուդարեանց. Վիլհելմ Տէլ ընտիր թղթի վերայ . . .	1	20
11	— — նոյնը հասարակ թղթի վերայ	1	—
12	Աղայեանց. Հայկական հնչիւնների մասին	—	25
13	— Երկու քոյր. վէպ գիւղական կեանքից . . .	—	50
14	Ս. Մանդինեանց. Ուսման նախագիծ	—	60
15	— Դպրոցական Սահմանադրութիւն	—	25
16	— Մանկավարժական Տարակուսանքներ մեր մէջ	—	50
17	Մսէր. Հաւատապատում	—	25
18	— Հրահանգ քրիստոնէական հաւատոյ	—	75
19	— Քրիստոսապատում	—	50
20	— Մանր ուսմունք Սրբազան պատմութեան . .	—	40
21	— Մանր ուսմունք եկեղեցական պատմութեան .	—	25
22	Բաֆֆի (Մելիք Յակոբեանց). Փունջ մ. ա. և բ. իւրաքանչիւրը	1	50
23	Հօֆման. Բարեկամութեան զոհեր թարգ. Լալայեանցի . .	—	60
24	— Յակոբ Էրլիխ. թարգ. Ա. Քալանթարեանցի . .	—	30
25	Քալանթարեանց. Ցնոտես	—	70
26	— Ոստայնանկ Գրէյթ	—	15
27	Ֆրանկլին. Փորձառու Ռիչարի խրատները, կամ հարստանալու միջոց. թարգ. Ղ. Ափեանցի	—	10
28	Բժիշկ Բօկ. Գործնական խրատներ. թարգ. Արասխանեանցի.	—	30
29	Պատկանեան. Քաջ Վարդան Մամիկոնեան	—	40
30	— Շաւարշ երկրորդ	—	30
31	— Ռոբինզոն Կրուզո	—	65
32	Խ. Աբովեան. Վէրք Հայաստանի	1	25
33	Փիլոսեանց Սօփերք	—	30
34	Վիլհելմ Տէլ. թարգ. Բուդաղեանցի	—	40
35	Վէքֆիլդի երէց. թարգ. Բուդաղեանցի	—	50
36	Մինչնավէպք Հայոց ազգի պատմութիւնից	—	40
37	— Նիկոլ —	1	—
38	Աշտանի ընտանիք (զուարճալի պատմութիւն)	—	25
39	Միրիմանեան. Մարդակազմութիւն, պատկերազարդ . . .	—	60
40	Մաղաթեանց. Կերակուր մարդոյ.	—	25
41	Առաքելեան. Ճանապարհորդութիւն Դաւրիժից Նախիջևան .	—	15
42	Ղուկասեանց. Համառօտ հայեացք Մայր. լեզուի	—	10
43	Գերմանական ազգային առածներ	—	30
44	Մեծ մարդերի պատմութիւն թարգ. Տէր Մ. Ս.	—	25
45	Նարեկ մեծադիր կաշեկազմ և պատկերազարդ	1	50
46	Եղիշէ. տպագր. Մոսկվայի	—	90
47	— տպագր. Զմիւռնիայի	—	50
48	Աւետարան կաշեկազմ	—	75
49	Սաղմոս կաշեկազմ	—	35

50	Սաղմոս առաջին կանոն.	—	15
51	Աստուածաշունչ կաշեկազմ	3	—
52	Աղօթագիրք ընդարձակ 8, կազմած և պատկերազարդ. . .	—	50

ԸՆԹԵՐՑԱՆԵԼԻ ԳՐՔԵՐ, ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԶՄԻՒՌՆԻԱՑԻ

1	Աղէքսանդր Դիւմայ. Կօմս Մոնտէ Քրիստոյ 6 հատոր. . .	6	40
2	— — Երկք հրացանակիրք 3 հ.	3	—
3	— — Քսան տարի ետքը 4 հ.	4	—
4	— — Պրաժլոն Դերկօմս 12 հ.	10	—
5	— — Ամօրի	1	50
6	— — Բօլին	—	80
7	— — Քաթերին Հօուարդ	—	60
8	— — Ժօզէֆ Պալսամօ բժշկի մը յիշատ. 6 հ.	7	—
9	Լամարթին. Ռաֆայէլ—Քսանամեայ հասակի վէպ . . .	1	—
10	— Կրացիէլլա	—	65
11	Ալֆրետ Տը Միւսէ. Դարուս մէկ զաւակին խոստովանանքը .	1	50
12	Աշար. Հեռվիճի երդումն	—	40
13	Աբբայ. Անիծեալն 4 հատոր	3	30
14	Տէտէեան. Ումպք գրասիրութեան	—	60
15	Պատկանեան. Մահ պարէտի պատկերազարդ	—	80
16	— Անուշաւան	—	70
17	Ապէ Բրէվօ. Մանօն Լէսքօ	—	90
18	Էօժէնս Սիւ. Գաղտնիք Փարիզի 8 հատոր	8	25
19	— — Նոյնը Թատերգութիւն	—	60
20	— — Մաթիլտ—Նորատի կնոջ մը յիշատակները 4 հ.	5	50
21	Աբրիպէ Վալերիա և Մօլիէր—Լը պարպուլէի կատակերգութիւն.	—	40
22	Ժէօրժ Սան. Օրիորդ Լագէնթինի	1	25
23	— — Ֆլավի	—	60
24	— — Լէօն Լէօնի	—	90
25	Մարվէլ. Ամուրի մը երազները	—	60
26	Կէօթէ Վերթէր	—	75
27	Մոլիէր. Ագահն կատակերգութիւն.	—	35
28	— — Սէրը բժիշկ է. կատակերգութիւն	—	30
29	Լուի Ժի Իր կեանքը, հոգեվարքը և մահը	—	85
30	Նշան Միրզա. Տօրա—Սիրային վէպ մը	1	50
31	Այտա Ողբերգութիւն	—	30
32	Միրզա-Վանանդեցի. Վիկտորիա Անգղիոյ թագուհոյն Արշակունի հայ թագաւորներէ սերիլը	—	90
33	Վիկտոր Հիւկօ թշուառներ 10 հատոր	12	—
34	— — Նոդր-տամ Փարիզի 3 հատոր.	3	25
35	— — Անճէլլօ	—	35
36	Վոլդէ. Բմիքրօ—մեղաս, ճերմակ ու սև	—	35

37	Վոլթը-Աքոթ. Իվանոէ 3 հատոր	2	50
38	Վրոյը. Հայկական նամականի	1	20
39	Ֆէոյէ. Աղքատ երիտասարդի մը վէպը	—	80
40	Շմիտ Ադնէս. կամ փոքրիկ վանահայր աղջիկը	—	45
41	Ժէնրվիէվ	—	40
42	Քարլօ Կոնտոն. Առաքինութիւն Բամելայի. կատակերգութիւն	—	50
43	Շմիտ. Գէորգ Ուաշինգթն	—	50
44	Օնդարօ. Ճերմակ վարդը	—	60
45	Անգեղա. Քաճիօլի կամ նախախնամութեան գաղտնիքը . .	—	20
46	Հասկաքաղ աղջիկ—թատերական խաղ	—	20
47	Ապաստանարան սիրոյ	—	25
48	Երկասիրութիւն երկուց ընկերակցաց	—	45
49	Հազար ու մէկ դիշերներ 6 հատոր	6	50
50	Հերքումն կարծեաց.	—	20
51	Ճոնսոն. Հռասելասայ պատմութիւնը	—	60
52	Շաղրը. Մարդ—իրանց գործերու զաւակները	—	30
53	Ծաղրաբանութիւնք Նասրէտտին Խօջայի	—	25
54	Փայտեայ Խաչը—Բարոյական վէպ	—	25
55	Լաքրրթէլի Լէօ կամ ափիոն ծխողի մը սէրը	—	60
56	Մուսայք Ս. Մէսրոպեան վարժարանին Զմիւռնիոյ . . .	—	65
57	Սվաճեան Դրախտահարս Մարի տայեան	—	25
58	Ժիլ-Վէրն. Աշխարհի շրջանը ութսուն օրուայ մէջ . . .	1	20
59	Լաբուլէ. Բարիզն յԱմերիկայ.	1	—
60	Կոստանեան. գործնական տօմարակալութիւն բ. տպ. . . .	2	—

Ծանօթութիւն։ Դասական գրքերից մեծ քանակութեամբ առնողներին զիջումն կը լինի. իսկ ընթերցանելի գրքերը վաճառվում են առանց զիջողութեան. բացի այս և օտար քաղաքացիք պէտք է ուղարկեն գրքերի արժողութեան հետ և ճանապարհի ծախք մօտաւորապէս 10 % աւել, եթէ գրքերը արժեն մինչև 5 ռ.—8%—եթէ արժէն մինչև 10 ռ. և 5% եթէ 10 ռ. աւելի է։

Խնդրվում է ուսումնարանների վարչութիւններից ուշադրութիւն դարձնել առաջին բաժնում տպագրուած դասական գրքերի վերայ, որոնք բացառապէս վաճառվում են մեր գրատնում։

Ռուսաց լեզուով դասագրքերի ցուցակ ցանկացողները կարող են գիտել մեր գրատունը, որի մէջ, ինչպէս կը տեսնէ ընթերցողը, գրքերի մեծ մասի գները նշանակուած են նոյն իսկ տպագրականը, իսկ մէկ մասի վերայ աւելացրած է միայն 10%, համեմատաբար արժան անցեալ տարիներից 5%—10% ով։

Օտար քաղաքացւոց պահանջները կատարվում են արագ և շատ ճշտութեամբ։ Առանց փողի պահանջները անկատար են մնում։ Պահանջները ուղղվում են «Кавказская Книжная торговля» З. Григорова и К-°. Въ Тифлисѣ.

Дозволено цензурою. Тифлисъ. 4 іюля 1876 г.

Типогр. А. Энфіаджіанцъ и К-°.

50
20
80
45
40
50
50
60
20
20
25
45
50
20
60
30
25
25
60
65
25
1 20
1 —
2 —